Universitäts- und Landesbibliothek Bonn

Warkh eu wkajabanouthiunkh srboç

hatęntir khałealkh i čaṙęntraç

1874

urn:nbn:de:hbz:5:1-9996

Visual Library

~~Bibl. Goussen~~ ~~3045~~

Goussen 3045 (2)

124 f
126 f
127

266 ff

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽՆԵԱՑ

2

ՎԱՐՔ ԵՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ ՍՐԲՈՑ

ՅԻՇԱՏԱԿ

ՄԱՂԱՔԵԱՆ

ՏՈՀՄԻՆ

ՎԱՐՔ

ԵՒ

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ

ՍՐԲՈՑ

ՀԱՏԸՆՏԻՐ ՔԱՂԵԱԼՔ Ի ՃԱՌԸՆՏՐԱՑ

ՀԱՏՈՐ Բ

2

ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՑԱՄԻ – 1874 – ՌՅԻԳ

EX BIBLIOTHECA DR. M. GOUBBEN • BONNAE (BIBL. UNIV.)

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ ՍՐԲՈՑ

Վկայաբանութիւն Սրբոյն Մամասայ։

Ի ժամանակս Աւրեղիանոսի կայսեր, յորժամ կռոցն մոլորութիւնն[1] յօրանայր, պատանի մի՝ որում անուն էր Մամաս, հրաժարեալ 'ի բազմամբոխ քաղաքաց, 'ի լերինս ունէր զբնակութիւն իւր. յաղօթս և յօրհնութիւնս և 'ի պահս պարապեալ 'ի մանկութենէ. մրգով միայն շատացեալ 'ի դարմանս մարմնոյն։ Եւ զամենայն փոյթ 'ի մէջ առնոյր, զի բարեպաշտ հաւատոյն և զգաստութեանն առաքինութիւն ուղղեսցի 'ի նմա։ Լի էր իմաստութեամբ և բարի խորհրդովք, և ընթերցուածովք աստուածային գրոց անպակաս. ունէր և ձայն զարմանալի, որ իբրև զբազմաբարբառ քնար հաճոյական ամենեցուն, իբրև զԴաւիթն. քանզի 'ի սաղմոսելն՝ հալածէր զչարութեան ոգիս, և զցաւս մարմնոյ խաղաղացուցանէր. և էր որպէս զանմարմինս ոք յերկրի, երկնային կրօնիւքն վարժեալ[2]։ Տեսանէր տեսիլ աստուածեղէն. լսէր ձայն որ ասէր ցնա. Ժամանակ պատերազմի, ժամանակ խաղաղութեան, ժամանակ արհամարհելոյ զառժամանակեայս, և բուռն հարկանելոյ զյաւիտենական կենացն։ Եւ նորա լուեալ զայն՝ պնդէր զխորհուրդս իւր, և զերկիւղ մահուն 'ի բաց ընկեցեալ առանց զանգիտելոյ այնուհետև ցուցանէր զինքն ամենեցուն։

Եւ տեսեալ զնա հեթանոսական հովուաց որք 'ի լերինն[1] էին, և զվայրենի անասունսն՝ զոր ձեռասուն էր արարեալ, իջին 'ի քաղաքն և պատմեցին ամենեցուն. և բազումք ելանէին առ նա և տեսանէին զսքանչելիսն, մանաւանդ զեղջերուսն հանդերձ եղամբք իւրեւ իջևանս ինչ առնէին առ նա. Նախ վասն աղբերացն որ անդ էին, դարձեալ և 'ի գազանացն փախուցեալք իբրև յամուրս ինչ անդր ապաստանէին. զոր ընտանեցուցեալ նորա բազում անգամ և կթէր, քանզի շուրջ զնորա յարկաւն ծնանէին զորթսն։

---

[1] Մի օր. կռամոլութիւնն։

[2] Մի օր. վարեալ։

Եհաս համբաւն մինչև 'ի պիղծ հեթանոսս, և յոյժ խոցեաց զլսելիսն նոցա. քանզի բազումք վարդապետութեամբ նորա դառնային յԱստուած Ճշմարիտ. որում ոչ կարացին համբերել պաշտօնեայք կռոցն, երթեալ առաջի իշխանին ասէին. Եթէ կախարդ ոմն է 'ի լերինն[2], և կախարդէ զեղջերուսն, և զբազումս մոլորեցուցանէ յիմարութեամբ[3]. և ասէ, թէ չեն աստուածք որ զամենայն յօրինեն, այլ մի Տէր Յիսուս Քրիստոս է Աստուած, և զամենայն ինչ նա յօրինէ. զորմէ Հրեայք ասեն եթէ մոլորեցուցիչ է, վասն այնորիկ խաչեցին զնա։ Եւ լուեալ զայս իշխանն Աղեքսանդրոս՝ հրամայեաց վաղվաղակի ըմբռնել զՄամաս և ածել։ Եւ դահճացն երթեալ գտին զնա զի յաղօթըս կայր և երգէր զերգս հոգևորս. և զարմացեալ ընդ սքանչելի տեսիլ նորա՝ ոչ իշխէին բուռն ինչ գործել առ նմա[4]. այլ ողոքական բանիւք ողջագուրեալ աղաչէին զնա տանել առ իշխանն։ Եւ նորա ուրախ եղեալ հաւանեցաւ երթալ, եթէ նախ կատարեսցի առ նոսա օտարսիրութեանն գործն։ Եւ նոյնժամայն եդ առաջի նոցա միրգ և պանիրս եղանց. և նոցա կերեալ և արբեալ՝ անկանէին 'ի ճանապարհ հանդերձ նովաւ։

Եւ եկեալ առ իշխանն կացուցին առաջի զերանելին Մամաս։ Եւ իշխանն ասէ ցնա. Որո՞յ բաղդի ես, յառաջ քան զտանջանսն խոստովանեա զխաբէութիւնս քո։ Մամաս ասէ. Ես զՔրիստոս ունիմ, ոչ կախարդ եմ և ոչ խաբեբայ. քանզի այնպիսիքն կռոց պաշտօնեայք են. այլ զմեզ Քրիստոս յամենայնէ փրկեաց վասն հաւատոց մերոց որ 'ի նա. զամենայն ինչ հնազանդեաց մեզ, զցամաքայինս և զջրայինս, զընտանի և զվայրենի. այլ զկախարդութիւն և ըսել անգամ գարշիմք։ Դատաւորն ասէ. Մի՛ բազում բանիւք խաբէր զամբոխդ. այլ յառաջ քան զտանջանսն ասա զի՞նչ գործէիր։ Մամաս ասէ. Կարծես սպառնալեօք զարհուրեցուցանել զիս. այլ իմ ամենայն փոյթ է զճշմարիտն ասել. քանզի ստութիւն հրաժարեալ է 'ի ծառայից Աստուծոյ. արդ լուր զհաւատս մեր. եթէ կամեսցիս հաւատալ՝ շահիս զայս կեանս և զհանդերձեալսն։ Մի Աստուած խոստովանիմք, որ զամենայն ինչ արար. և վասն զի բարերար է՝ երևեցաւ մարմնով, զաստուածութիւնն համապատուելով մեզ, զոր թողեալ մարդիկ՝ զփայտ և զքարինս պաշտեցին. յայնցանէ փրկեալս զմեզ 'ի բարեպաշտութիւնս էած, թէ պարտ է նմա միայն երկիր պագանել. ցոյց և մեզ թէ որպիսի՛ իրօք կեցեալք հաճոյ լիցուք Աստուծոյ։ Դատաւորն ասէ. Զի՞րդ սպանաւ խաչեալն իբրև զկախարդ։ Մամաս ասէ. Չէ այն կախարդութեան, այլ մարդասիրութեան. քանզի պարտ էր նմա չարչարակից մեզ եղանիլ, և զյարութիւն ցուցանել, և զճանապարհս որ յերկինս. և եթէ միւսանգամ եկեսցէ դատել զկենդանիս և զմեռեալս։ Դատաւորն ասէ. Զի՞ երկայնաբանես՝ զանձն խաբելով. եթէ Աստուած էր նա, առանց անարգութեան արդեօք յարուցեալ էր զմեռեալս, բանիւ միայն և ոչ մարմնով վարեալ։ Այլ զայդ ամենայն 'ի բաց թողեալ՝ զոհեա աստուածոցն, և զկախարդութեան վնասն թողից քեզ. զարմացեալ ընդ արեգակն՝ առանց որոյ կեալ անհնար է և երկիր պագանել[1]։ Մամաս ասէ. Չէ բարւոք արեգական երկիր պագանել, որ վասն մեր զաշխարհաւ շրջի[2]։ Դատաւորն ասէ. Իսկ երկնի զոհեա, որ զամենայն ինչ ընդ ինքեամբ ունի։ Մամաս ասէ։ Եւ նա արարած է Աստուծոյ, որում զոհ կենդանի զանձինս մեր պարտ է մատուցանել։ Դատաւորն ասէ. Մի՛ հարկեցուցանէր զիս այլազգ ինչ մատչել 'ի քեզ, այլ վաղվաղակի զոհեա աստուածոցն, որոց և ինքնակալն զոհէ. եթէ ոչ՝ պատահեսցիս անհնարին չարեաց, և յետ տանջանացն ունիս ապաշաւել։ Մամաս ասաց. Եթէ իմաստութեամբ հաւանեցուցանէիր զիս՝ տայի արդեօք պատասխանի առ հարցումդ. ապա եթէ անմտութեամբ զբռնութիւն 'ի վար արկանես, յաղթեալ լինիս յուղիղ բանէն. արա զոր ինչ կամիս. ոչ ամպարիշտ թագաւորաց հնազանդիմ, և ոչ անօրէն օրինաց հաւանիմ, և ոչ զոհեմ պիղծ և գարշելի կռոց։ Դատաւորն ասէ. Հաւանեա պարգևաց թագաւորին, որ շնորհէ քեզ պատիւ և փրկութիւն և մեծութիւն, և լեր կենակից մեր։ Մամաս ասէ. Այդ է որ մոլորեցուցանէ զձեզ և ապստամբել տայ յԱստուծոյ, զոր մեք արհամարհեցաք և ընկեցաք իբրև զխափանիչ առաքինութեանց և արգելիչ փրկութեան. և դուք եթէ այդիւ համարիք զձեզ բախտաւորս, յետ մահուան ձերոյ չիք ինչ քան զձեզ թշուառական։ Եւ շրջեալ դատաւորն յանսպառ բարկութիւն՝ հրամայեաց կախել զնա, և քերել այնչափ մինչև յաղխն մերձենալ քերանացն։ Եւ քարոզն աղաղակէր. Տանջեսցի դա որ ոչ կամեցաւ զոհել աստուածոցն։ Ասէ ցնա դատաւորն. Զոհեա, թշուառական, զի մի և 'ի հոգւոյդ զրկեսցիս։ Մամաս ասէ. Հաւատա ինձ, ով դատաւոր, զի դու թերևս տանջես զոգիդ շարժեալ 'ի բարկութիւն. այլ յիս ամենևին ցաւ ոչ մերձենայ, Աստուծոյ իմոյ մարդասիրի 'ի բաց առեալ յինէն, զոր օրհնեմ հոգւով և փառաւորեմ յամենայն զօրութենէ. զի արժանի արար զիս զտառապեալս վասն իւր զայս չարչարանս կրել։ Դատաւորն ասէ. Յայտնի երեւեցար ամենեցուն թէ կախարդ ես, վասն որոյ և հանից զքեզ 'ի քաղցր կենացս։ Եւ ցդահիճսն ասէ. Մինչև 'ի ներքին անդամսն մերձեցուցանել զքերանսն և երկաթով զձեռսն գելուլ։ Իսկ նորա առնէին ըզհրամայեալսն. և բռնութեամբ զբազուկս նորա յօդախաղացս առնէին, և զկողսն մազեղէն խորգով շփէին, դարձեալ և աղիւ. զի աղն 'ի վէրսն հասեալ՝ առաւել ևս մորմոքեսցի 'ի տանջանացն։ Իսկ երանելւոյն ձայն բարձեալ 'ի լուր ամենայն ռամկին. Օրհնեալ ես Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ ոչինչ զգայութիւն տանջանացս արար յիս: Եւ լուեալ զայս դատաւորին 'ի բարկութիւն գրգռեալ, և 'ի վաղիւն հրամայէր գազանաց արկանել զսուրբն: Մամաս ասէ. Ոչ երևեսցին ինչ գազանքն վայրենագոյն քան զձեզ[1]: Դատաւորն ասէ. Վստահ ես, ա՛յ թշուառական, յանօրէն մենքենայսն քո. այլ ես լուծից զամենայն մենքենաւոր զօրութիւնս քո: Եւ 'ի միւսում աւուր ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ ամենայն բազմութեամբն երթայր 'ի տեսարանն. և բազումք 'ի հրէից և 'ի հեթանոսաց ժողովեալ էին անդր: Եւ իբրև ածին զնա կապեալ, արձակեցին նմա արջ մի դժնդակ, որում բազում մարդ սպանեալ էր գազանն. և նորա երթեալ մերձ 'ի սուրբն, և ակնածեալ յաստուածեղէն երեսացն՝ դիմեաց 'ի գառագիղն: Դարձեալ արձակեցին խոզ մի, և նորա երթեալ հեզիկ առ սուրբն՝ զվէրսն լեզոյր և սրբէր իբրև սպունգով. և զայն արարեալ՝ դարձեալ 'ի գառագիղն դիմեաց: Իսկ դատաւորն կատաղէր, և ամենայն ամբոխն աղաղակէր՝ զի առիւծ արձակեսցեն նմա: Եւ իբրև արձակեցին՝ ել առիւծն գոչելով. և թողեալ զսուրբն դիմեաց յամբոխն: Եւ դատաւորին տեսեալ զայն առաւել ևս զայրանայր, և խորհէր թէ որով մահու սպանցէ զսուրբն: Մամաս ասէ. Աստուածատեաց և մարդատեաց և թշնամի ամենայն արդարութեան, զի՞ յապաղես, արա յիս զհրամանս հօր քո սատանայի: Եւ դատաւորն լուեալ զայն՝ հրամայեաց գազանամարտկացն զի գրգռեսցեն զամբոխն զի քարկոծ արասցեն զսուրբն: Եւ բազմութեանն կրձտեալ զատամունսն՝ քարաձիգ լինէին 'ի սուրբն Աստուծոյ. և նա զաչս յերկինս համբարձեալ փառաւորէր զԱստուած: Եւ կացեալ յաղօթս իբրև ժամ մի 'ի քարկոծելն, և ասացեալ զամէնն, մինչդեռ հայէր յերկինս՝ աւանդեաց զհոգին 'ի ձեռս Աստուծոյ սուրբն Մամաս, բարի խոստովանութեամբ 'ի Հայր և յՈրդի և 'ի սուրբ Հոգին. որում փառք յաւիտեանս:

---

[1] Մի օր. լեռինն։
[2] Մի օր. լեռինն։
[3] Մի օր. գիտութեամբն։
[4] Մի օր. գործել նմա։

---

[1] Մի օր. Երկիր պագ նմա, զի առանց նորա անհնար է կեալ երկրի։

[2] Մի օր. որ վասն մեր անդադար ընթացիւ շրջի։

---

[1] Մի օր. ոչ երևեսցին ինչ... միաբանգամ պահելով զնա: տան զարքունաւորեալս միայն զօ. Քրիստոսի

Այլ վկայաբանութիւն Սրբոյն Մամասայ։

Յամս Աւրելիանոսի ամպարիշտ արքային՝ այր ոմն քրիստոնեայ 'ի գաւառին պափղագոնացւոց, 'ի քաղաքին Գանգրեայ, և անուն նորա Թէոդոտոս, բարեպաշտ ամուսնաւ իւրով որոյ անուն էր Ռուփինա։ Եւ վասն զի ոչ զոհեցին կռոցն և ոչ ուրացան զՔրիստոս՝ առաքեաց զնոսա իշխան քաղաքին կապանօք 'ի Կեսարիա, առ դատաւորն Աղեքսանդրոս. և էր Ռուփինա յղի։ Եւ հարցեալ քննէր զնոսա դատաւորն. և նոցա համարձակութեամբ խոստովանելով զանունն Քրիստոսի, և հրամայեաց արգելուլ զնոսա 'ի բանտ։ Իսկ երանելին Թէոդոտոս հիւանդացաւ 'ի բանտին. և վախճանեցաւ բարի խոստովանութեամբ։ Եւ բարեպաշտին Ռուփինայ լցան աւուրք յղութեան, և ծնաւ 'ի բանտին արու մանուկ, որ և վախճանեցաւ նա ուղիղ դաւանութեամբ. և հանեալ թաղեցին զնա առ առն իւրում։ Եւ կին մի քրիստոնեայ և անուն նորա Մատրոնիա, հրամանաւ հրեշտակի առեալ զմանուկն 'ի բանտէն, և սնոյց քրիստոսական հաւատով։ Եւ յորժամ տարեկան եղև, 'ի գիրկս իւր ունելով համբուրեաց զնա Մատրոնիա. և ձայնեալ տղային ասէ. Մամա. և անուանեցին զնա 'ի մկրտութեանն Մամաս։ Եւ մինչ զարգացաւ մանուկն՝ ետ զնա 'ի դպրոց և ուսաւ գիր. և ուսուցանէր Մամաս զդպրոցակից մանկունսն, 'ի բաց կալ 'ի սնոտի կռապաշտամանցն և հաւատալ յԱստուած կենդանի որ յերկինան է։ Եւ լուեալ Դիմիկրատոն իշխանն՝ կոչեաց զՄամաս և հարցանէր թէ իցէ՞ քրիստոնեայ. և նա խոստովանեցաւ յայտնապէս զՔրիստոս, և էր ամաց մետասանից։ Եւ առաքեաց զնա առ Արիոս դատաւորն Եգեսացւոց քաղաքին, և ձաղկեցին զերանելին դահիճքն և այրեցին հրով զմարմինն, և տարան 'ի ծովն. և կապեցին ծանր կապար 'ի պարանոց նորա, և կամեցան ընկղմել զնա 'ի ծովն։ Եւ հրեշտակ Տեառն կորզեաց զՄամաս 'ի դահճացն, եհան զնա 'ի մերձակայ լեառն Կեսարու. և արարեալ անդ աւուրս քառասուն աղօթելով, և երևեցաւ նմա գաւազան յերկնից, և ձայն որ ասէր. Ընկալ զգաւազանսն, և զոր ինչ և խնդրեսցես յԱստուծոյ՝ տացի։ Եւ առեալ զգաւազանն հարկանէր զերկիր. և գտեալ առաջի իւր աւետարան և առեալ համբուրեաց. և շինեաց 'ի տեղւոջն յայնմիկ սեղան։ Եւ ժողովէին առ նա երէվայրիք. և յորժամ ընթեռնոյր զաւետարանն՝ երկիր պագանէին ամենայն կենդանիքն։ Եւ կթէր զեղունան, և առնէր պանիր և բաշխէր աղքատաց և սրբոց հրամանաւ Աստուծոյ։ Եւ եկն առ նա առիւծ մի մեծ, և երկիր եպագ նմա, և ասէ ցառիւծն երանելին Մամաս. Եթէ հանդերձեալ են ածել զքեզ 'ի հանդիսի 'ի վերայ իմ։ Մատնեցին զսուրբն դատաւորին Աղեքսանդրոսի, եթէ կախարդ է, և մոգութեամբ ժողովէ առ ինքն զերէվայրիս։ Եւ հրամայեաց իջուցանել զնա 'ի լեռնէն։ Եւ յորժամ տարան զնա առաջի նորա՝ հարին զնա ուժգին և արկին 'ի բանտ. և աղաւնի մի բերէր նմա կերակուր, և նա տայր և այլ կապելոցն 'ի բանտին։ Եւ ապա արկին զսուրբն Մամաս 'ի հուր հընոցի, և ոչ մերձեցաւ 'ի նա հուր. քանզի հրեշտակք երևեցան 'ի հնոցն և հանին զնա 'ի հրոյն։ Եւ արձակեցին 'ի նա արջ և մատակ առիւծ մի ահաւոր, զնոյն՝ որ մինչդեռ 'ի լեառն էր՝ գնաց առ նա. և տեսեալ առիւծուն՝ ծանեաւ զերանելին, և երթեալ երկիր եպագ նմա. և խօսեցաւ մարդկային բարբառով, և յանդիմանեաց զամպարշտութիւն դատաւորին, և զբազումս 'ի կռապաշտիցն սատակեաց. և ինքն գնաց 'ի տեղի իւր։ Եւ ժողովեցան բազումք յամպարշտաց անտի 'ի վերայ սրբոյն հրամանաւ դատաւորին՝ քարկոծ առնել զնա. և ըմբիշ մի երեքժանի սուսերաւ եհար զսուրբն. և երանելւոյն ելեալ 'ի քաղաքէն կեսարու արտաքս ասպարէզս երկուս, և հեղոյր 'ի մարմնոյ նորա արիւն որպէս յաղբիւրէ։ Եւ ելեալ 'ի վերայ վիմի օրհնեաց զԱստուած. և նոյնժամայն ձայն եղև 'ի Տեառնէ, և կոչեաց զնա յարքայութիւն երկնից. և այնպէս աւանդեաց զհոգին 'ի[1]...։ կատարեցաւ սուրբ վկայն Քրիստոսի Մամաս յամսեանն սեպտեմբերի երկու։

---

[1] Աստ թերի մնայ օրինակն։

Վկայաբանութիւն Սրբոյն Մարկոսի Արեթուսայ եպիսկոպոսին, և Կիւրղի սարկաւագին և որք ընդ նոսա վկայեցին։

Ի ժամանակս յորում թագաւորեաց անօրէնն Յուլիանոս և սկսաւ մաքառել ընդդէմ քրիստոնէութեան հաւատոյն, և զամենայն փոյթ յօժարութեան իւրոյ 'ի մնոտի կռապաշտութիւն հեթանոսական պղծութիւնսն դարձուցանէր. իսկ իբրև գտին իւրեանց դիպող համարձակութիւն անաստուած պաշտամանն հելլենացիքն, և անկասկածք լինէին յերկիւղէ աստուածասէր թագաւորին Կոստանդիանոսի, և գտին արբանեակ իւրեանց չար խորհրդեանն զյանցաւորս զայս Յուլիանոս։ Այնուհետև համարձակեալ յայտնեցին զպատրուակեալ չարութեանն թոյնս դառնութեան իւրեանց, և սփռեալ հեղուին 'ի վերայ հօտին Քրիստոսի. և շինէին յայտնապէս բագինս և տաճար կռոցն, և կանգնելով 'ի նոսա անդրիս և պատկերս դիւացն անուանեալ աստուածոցն. և շաղախէին միւսանգամ զերկիր արեամբ զոհիցն, և պղծէին զօդս ճենճերօք և ճարպով ողջակիզաց ծոնեցելոց 'ի դիւանուէր քրմացն. և զհաւատացեալսն 'ի Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ միւսանգամ անարգէին և անգոսնէին և թշնամանէին և այպն առնէին. ըդնոյն առնէին և քրիստոնեայքն ընդ անաստուած հեթանոսսն։ Եւ իբրև ոչ կարէին հանդուրժել նախատանացն՝ յարուցանէին մարտ պատերազմի 'ի վերայ նոցա. և էր այնուհետև խուճապ տագնապի 'ի մէջ նոցա և խռովութիւն անհնարին։ Իսկ անօրէն հե-

Թանուքն խրախուսեալք 'ի Թագաւորէն օգնականութիւնն, սկսան այնուհետեւ նեղել և կափահարել և ձաղել զպաշտօնեայս քրիստոնական հաւատոյն: Ընդ բաղում կալանաւորսն ըմբռնեցին և զերանելի եպիսկոպոսն Մարկոս, որում 'ի խնդիր իսկ էին իբրև չըքնաղ մարգարտի, վասն զի համբաւ նորա եհաս 'ի լսելիս անօրինին, վասն որոյ գործեաց նա յաւուրսն Մեծին Կոստանդիանոսի ընդ պաշտօնեայս անուանեալ դիցն և ընդ մեհեանս նոցա: Իսկ երանելւոյն իմացեալ զխորհուրդ չարութեան նոցա՝ խոյս տուեալ փախեաւ յանապատ տեղիս, զի մի՛ ըմբռնեսցի յանօրինացն: Յայնժամ անաստուած Հելլենացիքն զայլ ոմանս կալան փոխանակ նորա, զի տանջեալք սպանցին: Եւ երանելւոյ եպիսկոպոսին լուեալ զայն՝ թէ փոխանակ նորա այլք ըմբռնեցան և մատնեցան 'ի ձեռս անօրէն դատաւորացն, յարուցեալ ինքնայօժար կամօքն եկն առ նոսա. և նոքա իբրև կատաղի շունք և իբրև զարիւնարբու գազանս զայրագնեալք, կալան զնա, և կրճտէին զատամունս իւրեանց 'ի վերայ նորա, ոչ պատկառելով 'ի մեծաշուք ծերութենէ նորա: Մերկացուցին զնա և սաստիկ տանջանօք չարչարեցին և երկաթի բևեռօք հեղուսին 'ի վերայ փայտի, և օծին մեղու զմարմինս նորա և զայլոց վկայիցն և 'ի տօթաժամուն 'ի տապոյ արեգականակէզ միջօրէին կախեցին 'ի բարձրաւանդակ ապարանիցն: Եւ յայնժամ ժողովեցան 'ի վերայ նոցա ամենայն շիթող պիծակք և մեղուք և գռուիք և շանաճանճք, և կեղեքեցին և քանցեցին զանդամս նոցա, և մինչև յոսկերս հասցանէին զվէրս ցաւոց տանջանացն և մորմոքեցուցանէին զնոսա:

Յայնժամ սկսան սուրբքն աղօթել և ասել այսպէս. Տէր Աստուած արարիչ ամենայն արարածոց, որ վասն անուանդ քո մեծի և ահաւորի՝ սուրբ վկայքն ետուն զանձինս իւրեանց 'ի մահ զանազան և դառն տանջանաց, և կատարեցին զընթացս իւրեանց համբերութեամբ, և արժանի եղեն ժառանգորդ լինել երկնային պսակացն. դու նոյն ինքն Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս, արժանի արա և զմեզ նոցին բարեխօսութեամբ՝ հաղորդս լինել անմահական բաժակիդ, և նոցին համբերութեան և ժառանգութեանն երկնային ուրախութեանցդ, և ընդ նոսին փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ, յաւիտեանս, ամէն: Եւ ասացեալ զամէնն սրբոց վկայիցն հանդերձ երանելի եպիսկոպոսիւն, յայնժամ հրամայեաց դատաւորն, և ընդ յերկարս մահակօք տանջեցին զերանելին. ապա հրամայեաց իջուցանել զնա 'ի կախաղանէն, և պահանջել 'ի նմանէ զսակ ոսկւոյ և արծաթոյ, զի շինեսցեն զաւերեալ բագինս մեհենից կռոցն առ 'ի նմանէ: Իսկ նա ոչ ինչ ունէր զի տացէ պահանջողացն. պատասխանի ետ և ասէ ցնոսա. Փոխանակ ոսկւոյ և արծաթոյ զանձն իմ տաց ձեզ, զի այլ ոչ ինչ ունիմ և ոչ ինչ պարտիմ հատուցանել: Ասէ ցնա դատաւորն. Դու էիր որ առ Կոստանդնիւ կայսեր կործանէիր զպատկերս աստուածոյն, և քակէիր զբագինս նոցա և այրէիր, և եկեղեցիս և մատրանոցս շինէիր, և արդ յուրաստ կաս և խաղ առնես, և չհատուցանես զպարտսն ըստ հրամանաց քաջարանցն Յուլիանոսի: Պատասխանի ետ երանելին և ասէ ցդատաւորն. Վասն աւերելոյ զբագինսն և խորտակելոյ զանուանեալ պատկեր աստուածոյն՝ խոստովան լինիմ թէ արարի և ոչ ուրանամ. զի աստուածասիրին հրամանաւն ոչ միայն ես գործէի զայն գործ, այլ և յոլովք վնոյն առնէին. որ իշխանութիւն ունէր և ոչ ցասեաւ, և ոչ աստուածքն ձեր կարացին հատուցանել չար փոխանակ չարի: Եւ արդ ընդ ձեր անմտութիւնդ յոյժ զարմացեալ եմ, զի կռոց վրէժխնդիր ամբարձայք, զի աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն 'ի ներքոյ երկնից:

Բռնաւորն ասէ. Եթէ ոչ անկեալ երկիր պագանիցէք մեծի աստուծոյն Հերակղեայ, և զոհեցէք որպէս ինքնակալն, և ոչ ամենեքեան որ 'ի խորհրդական ողջակիզացն ճաշակիցէք, չարաչար և դառն տանջանաց մատնեցից: Սուրբն ասէ. Որպէս առեր հրամանն և որպէս կամիս՝ տանջեա զիս, և վաղվաղակի առաքեա զիս առ այն որում ցանկացեալ եմ, և վարձս տացես վասն իմ 'ի Տեառնէ, զի ոչ եմ լսելոց քեզ: Յայնժամ հրամայեաց դատաւորն իջուցանել զնա 'ի կախաղանէն, և դնել 'ի ներքում բանտին, և զոտս պնդել 'ի կոճեղ, և խնուլ զլուսանցոյց բանտին՝ զի զլոյս մի՛ տեսցեն և փակել զգուշութեամբ։

Եւ յետ բազում աւուրց անսուաղ մնալոյ նոցա 'ի բանտին, հրամայեաց անօրէնն հանել զնոսա 'ի բանտէն և բերել զառաջեաւ. և դարձեալ հարցեալ զնոսա թէ զոհե՞ն. և իբրև ոչ հաւանեցան՝ որք արգելեալք էին ընդ երանելւոյ եպիսկոպոսին՝ մանկունքն որք 'ի դպրոցացն ժողովեցին, և այլ քրիստոնեայք, և հրամայեաց ծովակուր առնել զնոսա 'ի խորս ջուրցն. և այնպէս վկայեցին նոքա 'ի Քրիստոս, որ օր քսան էր յունուարի ամսոյ. և բռնաւորն զարմացեալ էր ընդ համբերութիւն սրբոց վկայիցն և ընդ մեծ յոյս քրիստոնէից։ Յայնժամ բռնաւորն Յուլիանոս դարձեալ հարցեալ զնա և ընդ բազում չարչարանօք արկեալ, յետ այնորիկ իբրև ետես զանփոփոխելի և զանպարտելի միտս սրբոյ վկային, և իմացեալ եթէ ոչ ինչ օգտի և ոչինչ է լսելոց նմա, տարասահման արար զնա 'ի հեռաւոր կղզիս արևմտական ծովու, և անդ կորուսանել զնոսա, զի մի՛ ոք տեսեալ զհամբերութիւն սրբոյ վկային և նախանձաւոր լիցի գործոց առաքինութեան նորա. դարձեալ ասէ, զի մի՛ գուցէ Գալիլիացիքն տարցեն 'ի պատիւ զնշխարս ոսկերաց նորա։ Եւ անդ կատարեցաւ բարի խոստովանութեամբ 'ի Քրիստոս։ Այլ և զայլս բազումս 'ի քրիստոնէից զեպիսկոպոսունս և զքահանայս և զսարկաւագունս, և զարս և զկանայս զխոստովանողս՝ չարչարեցին և խորասոյզ արարին. և էր զոր կենդանւոյն այրէին, և զազանաց մատնէին, և զանազան չարչարանօք զվճիռ մահու ընդունէին. զոր ոչ ոք է բաւական ասել բանիւք, կամ ընդ գրով արկանել զոր ինչ գործեցաւ, և զինչ անցք անցին ընդ սիրելի վկայսն Քրիստոսի. որ առաւել ևս սաստիկ էր քան զառաջին թագաւորացն, որք հալածեցին զեկեղեցին Աստուծոյ, Մաքսիմիանոս և Դիոկղետիանոս, և այլոց հալածչաց ամպարշտաց։

Իսկ զերանելի սարկաւագն Կիւրղոս, փոքր 'ի շատէ յիշատակեսցուք և վասն վկայութեան նորա և յօժարական մարտի նահատակութեանն. այն որ 'ի ժամանակս նորին սրբոյն Կոստանդիանոսի երևեցաւ յերկրէն Փիւնիկեցւոց, և աստուածային նախանձու վառեալ՝ 'ի հրամանէ աստուածասէր Թագաւորին, բազում տաճարս կռոց քակեաց և զբագինս խորտակեաց։ Զայն յուշ առնէին աստուածամարտին Յուլիանոսի անօրէն Հելլենացիքն, և բողոքէին իբրև զհրատ բոցոյ 'ի վերայ սրբոյն. և առաքեաց անօրէնն զինուորս, և հրամայեաց բերել զնա. և մատնեաց զսուրբն ամպարիշտն Յուլիանոս 'ի ձեռս անաստուած քրմացն։ Եւ ամպարիշտքն ըմբռնեալ զնա և զանազան և պէսպէս չարչարանօք լլկէին զերանելին, և յիշեցուցանէին որ ինչ գործեաց նա ընդ նոսա և ընդ պաշտամունս նոցա յաւուրս Կոստանդիանոսի. և ստիպէին զնա ուրանալ 'ի հաւատոց անտի և զոհել, և ազատանալ յառաջին գործոցն զոր արար նա ընդ աստուածս նոցա. զի այսպէս հրաման ետ արանց քաջ արքայն Յուլիանոս։ Եւ երանելին ասէ ցնոսա. Մեք, ով անաստուած Հելլենացիք, զապականացու և զանաստուած Թագաւորի զհրամանս ոչ կատարեմք, մանաւանդ զուրացողի, և որ զտարերս աստուած համարի. այլ զանմահ Թագաւորին փութամք պահել զհրամանս և զպատուիրանս, որ ասէ, Թէ՝ Որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինսն է։ Ասեն ցնա անօրէնքն. Եւ արդ ո՞չ կամիս առնել զկամս արքային մերոյ։ Սուրբն ասէ. Ո՛չ։ Ասեն ցնա. Արդ վասն յամառութեանդ քո դառնագոյն տանջանս պատրաստեմք քեզ։ Երանելին ասէ. Թէպէտ և 'ի տանջանաց ձերոց մեռանիմք զառժամանակեայ մահս, այլ անստուերին հասանեմք լուսոյ, և յաւիտենական և անվախճան կենացն լինիմք ժառանգորդք, զոր խոստացաւ Աստուած սիրելեաց իւրոց։

Զայս լուեալ անօրէն քրմացն և Հելլենացւոցն և սրտմտեալ, արկին զնա 'ի հասարակաց բանտն, և հրամայեցին պահել զգուշութեամբ։ Եւ յետ սակաւ աւուրց հրամայեցին բերել զառաջեաւ զերանելին, և ասեն ցնա. Բազում ներողութիւն Թագաւորին մերոյ որ առ քեզ եղև՝ ոչ ածին զքեզ յուղղութիւն, և ոչ դարձար 'ի նանիր խորհրդոց քոց. արդ այսուհետև յաճախեմք 'ի վերայ քո նեղութիւն, և մատնեմք 'ի չարաչար տանջանս՝ որպէս արժանի իսկ ես։ Սուրբն ասէ. Գրեալ է 'ի սրբում աւետարանին, թէ՝ Մի՛ երկնչիք յայնցանէ որ սպանանեն զմարմին, և զոգին ոչ կարեն սպանանել. այլ երկերուք յայնմանէ որ զոգի և զմարմին արկանէ 'ի գեհենի. արդ մերձ է փրկութիւն մեր, և ոչ եմք հնազանդելոց ձերոց խաւարասէր կրօնիցդ, և մատնել անշէջ հրոյն տանջանաց, և կերակուր լինել անքուն որդանցն. զի պարտ է մեզ չարչարիլ վասն նորա, որ վասն մեր համբերեաց մահու չափ և մահու խաչի, զի և փառաց նորա հաղորդ լիցուք:

Յայնժամ անօրէնքն զարմացեալ 'ի վերայ նորա, և կրճտէին զատամունս իւրեանց և զայրանային յոյժ. և հարցանէին ցբռնաւորն թէ որո՞վ մահու սպանցուք զնա, զի աստուածամարտ է և քակիչ անմահից աստուածոցն: Իսկ նա հրամայէր պատառել զորովայն սրբոյն, և զլեարդն արտաքս հանել, և ամենեցուն հաղորդել 'ի լերդէ սրբոյն: Եւ նոյնժամայն աքանչելիք մեծամեծք եղեն, զոր և ամենեքեան որ շուրջ ժողովեալ կային՝ տեսին, զի նոյնժամայն թափեցան ատամունք նոցա 'ի բերանոց իւրեանց, և կուրացան բիբք աչաց նոցա, և սկսան աղաղակել և յայտնել զզօրութիւն քրիստոնէից: Եւ նոյնժամայն երանելին Կիւրղոս 'ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ, թէ՝ Տէր Յիսուս, ընկալ զոգի իմ. և աւանդեաց զոգին: Եւ 'ի քաղաքին Ասկաղոնացւոց և Գազացւոց և 'ի Պաղեստին 'ի քաղաքսն՝ բնակեալ էին բազում բարեպաշտ քահանայք և անապատական միայնակեացք, և կանայք կուսակրօնք և աշխարհականք, զորս կալեալ հրամանաւ անօրինին Յուլիանոսի՝ զանազան և պէսպէս չարչարանօք նեղէին զերանելիսն, և տանջէին քըքովք և քերանօք և դառն տանջանօք և կըտտանօք. յետոյ հերձուլին զորովայնս նոցա, և գարի արկանէին, և զկինձս և զխոզս արձակէին 'ի վերայ սուրբ մարմնոցն և այնու կերակրէին: Եւ քաղաքին Սեբաստացւոց և մերձ 'ի Սամարիա 'ի կողմանս Գալիլիացւոց 'ի Պաղեստինէ, հրամայեաց անօրէն թագաւորն բանալ զգերեզմանս սրբոյն Յովհաննու Մկրտչի և Կարապետի, և զմնացորդս նշխարաց նորա արտաքս հանել և այրել հրով, և զփոշին՝ հողմոց ցրուել[1] յօդս։ Մի ոմն 'ի պատուաւորաց պալատանն՝ Արտեմիս անուն կոչեցեալ, այր իմաստուն և հանճարեղ, որ 'ի ժամանակս Մեծին Կոստանդիանոսի՝ դուքս և օգոստալիոս լեալ էր յԵգիպտոս, կատարեալ 'ի հաւատս քրիստոնէութեան, որ և նորա բազում կուռս խորտակեալ էր, և զտաճար պիղծ զոհողացն այրեալ, զսա ընկենոյր 'ի պատուոյ իշխանութենէն անօրէնն Յուլիանոս, և բազում և չարչարանս ընդ նա անցուցանէր, և զվճիռ մահու ընդունէր 'ի նմանէ. զոր զնորայն զամենայն կիրս ճգնութեան՝ յիւրմէ պատմութենէն ծանիցեն, որք կամիցին ստուգապէս ընթեռնուլ։

Եւ զԵմեղիանոս զքաջ զօրականն հրով այրեցին. և ոմն մի երիտասարդ և զօրական թագաւորին Թէոդոտոս անուն, երթայր ընդ մէջ հրապարակին և ասէր 'ի ձայն բարձր բարբառոյ զերգս մարգարէին Դաւթայ, և ըստ իւրաքանչիւր տան սաղմոսին ասէր. Յամօթ լիցին ամենեքեան որ պաշտեն զկուռս հեթանոսաց, ալէլուիա։ Դարձցին յետս և ամաչեսցեն որք աստուածս անուանեն զնոսա, ալէլուիա։ Աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին, կորիցեն 'ի ներքոյ երկնից, ալէլուիա։ Նման նոցա եղիցին ամենայն յուսացեալքն 'ի նոսա, ալէլուիա։ Եւ կալեալ զնա 'ի մէջ հրապարակին, և արջառաջլօք զթիկունս նորա հարին յանխնայ, և զկողս նորա քերեցին երկաթի եղնգամբ, և զբոլոր օրն այնպէս թողին զնա 'ի կախաղանին։ Եւ իբրև երեկոյ եղև՝ իջուցին և կապեցին շղթայիւք, և արկին 'ի բանտ։ Եւ իբրև առաւօտ եղև, ասէ ամպարիշտն Յուլիանոս. Զարմանալի է համբերութիւն քրիստոնէից, զի մեծաւ ուրախութեամբ և յօժարութեամբ ընդունին չարչարանս և պարծին 'ի տանջանս։ Եւ հրամայեաց և արձակեցին զսուրբ վկայն 'ի կապանաց և 'ի բանտէն առանց պատուհասի, որ և զխոստովանողական անուն ժառանգեաց. և ամս բազումս կենդանի մնաց նա բնակելով յանապատս մեծաւ ճգնութեամբ։ Հարցանէին ամենեքեան ըզսուրբ վկայն և ասէին. Եթէ՝ Ի ժամու չարչարելոյն զքեզ՝ զգայի՞ր սաստիկ ցաւոց տանջանացն. և ասէ. Ի սկզբան հարուածոցն 'ի ժամու հանդէս մտանելոյն, փոքր ինչ զգայի, իսկ յետ այնորիկ ընդարմանայր անձն իմ, և իբրև 'ի քուն թմբրեալ կայի։

---

[1] Օր. ցրուել։

Յայնժամ թագաւորն Յուլիանոս ժողովէր զամենայն զօրս իւր, և դիմեալ երթայր ընդդէմ Պարսից՝ 'ի մարտն. և նա ոչ գտեալ զբան խաղաղութեան, և ելեալ արքայն Պարսից ամենայն ուժով ընդդէմ Յուլիանոսի և զօրաց նորա 'ի պատերազմ, և եղև պատերազմ սաստիկ, և պարտեցան զօրքն Յուլիանոսի և 'ի փախուստ դարձան։ Իսկ Յուլիանոս առընթեր կալով, արգելոյր զզօրն, և քաջալերէր յաղթել հմայիցն յուսով։ Յայնժամ յաներեւութից գայ սուր սրեալ և հարկանէ զսիրտն, և անդէն սատակեցաւ. զայս հաւաստեաւ ոչ ունիմ ասել, եթէ 'ի մարդոյ և եթէ 'ի պահանջող հրեշտակէ Աստուծոյ։ Բայց Կալիստին ոմն 'ի զինուորաց նորա՝ 'ի դիւէ հարեալ զնորա մահն ասէր. զի և էր իսկ դիւապաշտ, յորոց և զարժան փոխարինի ընկալաւ 'ի դիւաց, ըստ Քրիստոսի վրէժխնդրութեանն. և այնպէս չարն չարաւ բարձաւ 'ի միջոյ, որ սպառնայր յետ դարձին՝ չար անցս անցուցանել ընդ քրիստոնեայսն. բայց ոչ որպէս նայն կամէր, այլ որպէս Աստուծոյ էր կամք՝ եղև։ Մեռաւ երեսուն և մի ամաց. հինգ ամ կայսր լեալ, երկու ամ թագաւորեալ։ Իսկ զորայս անցք անցից՝ զոր 'ի սակաւ ժամանակս անցոյց ընդ քրիստոնեայս, ոչ ոք կարէ ընդ գրով բովանդակել։

Եւ կատարեցան սուրբ վկայքն 'ի փառս Քրիստոսի Աստուծոյ. զի Աստուած զփառաւորիչս իւր փառաւորէ յայսմ աշխարհիս և 'ի հանդերձեալ յաւիտենին. վասն որոյ և մեք ընդ նոսին արժանի լիցուք փառաւորել զանսկիզբն և զհամագոյ տէրութիւնն Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն. այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

Պատմութիւն վարուց Երանելւոյն Մարութայի։

Ո՛վ եղբարք և հարք, լուարուք զպատմութիւն երանելւոյն Մարութայի, որ ինչ 'ի ձեռն նորա երևեցոյց Տէր սքանչելիս յերկրի. զի կոչեցաւ յորդեգրութեան շնորհս, և եղև հովիւ հօտին Քրիստոսի, որ գահավիժեալ էր 'ի դիւաց յարօտս մահաբերս և 'ի վիհս կորստեան. և սովաւ հաճեցաւ Աստուած դարձուցանել զկորուսեալս մերոյ աշխարհի։ Եւ ես ըստ իմում կարի ճառեցից. Թէպէտ և ընդ աղօտ է միտքըս և անարուեստ բանս առ 'ի յասել զսքանչելիս առնն Աստուծոյ, որ զօրութեամբ Քրիստոսի երևելի ցուցաւ, և ոչ կարօտանայ արուեստաւոր բանից։ Արդ ունկնդիր լերուք ճշմարտեալք սիրով և հաւատով ճշմարիտ հովուին՝ որ հրաւիրեաց զմեզ 'ի Քրիստոսի յարքայութիւնն. և դուք ծարաւիք ծարաւմամբ հոգևոր խրատուն և սքանչելեացն աստուածայնոց, արբէք 'ի քաղցր ճաշակացն որ 'ի ձեռն երանելւոյն շնորհեցաւ մեզ 'ի Քրիստոսէ, զոր 'ի բազմացն սակաւ ինչ ճառեսցուք։

Աշխարհս dieses այս ըմբռնեալ էր 'ի կռապաշտութիւն դիւաց verführen հրապուրանաց. և verehren պաշտէին զոհիւք զարարածս և ոչ զարարիչն՝ որ է օրհնեալ յաւիտեանս։ Եւ որպէս 'ի գիշերամարտութեան ըմբռնեալ և խառնափնդորեալ 'ի զանազան չարիս, որ ոչ ծագէ լոյս աստուածգիտութեան 'ի խաւարեալ պէսպէս մեզս[1]։

---

[1] Մի օր. 'ի պէսպէս մեղս։

Իսկ յորժամ կամեցաւ Աստուած ապրեցուցանել զաշխարհս զայս և դարձուցանել 'ի մոլորութենէ յաստուածգիտութիւն, յաւուրս երանելւոյն Յակոբայ Մծբնայ եպիսկոպոսին, սքանչելւոյ առնն Աստուծոյ, կին ոմն անուն Մարիամ դուստր Նախարարաց Հայոց տուեալ եղև կին Ոտայեցւոց¹ քրմապետի, որ էր տէր այսմ աշխարհի. և 'ի ձեռն կնոջ այնմ Մարիամու² երևեցաւ քրիստոնէութիւն յայսմ աշխարհիս, և շինեաց եկեղեցի³ և վանս ուխտից. և կացոյց քահանայս և պաշտօնեայս, որք զհանապազորդ զփառաբանութիւն Աստուծոյ նուիրէին. և ինքն ըզպէտս պաշտօնէիցն անպակաս շնորհէր, և կրօնից հրպատակ քրիստոնէից զանձն յարդարէր առաջի Աստուծոյ և մարդկան. և զայրն հաւանեցուցանէր 'ի քրիստոնէութիւն, զի թողցէ զանօտի պաշտամանց զսպասաւորութիւնն, և պաշտեսցէ զԱստուած երկնի և երկրի. և ըստ բարոյ խորհրդակցութեան իւրոյ և հանապազորդ աղօթից որ վասն առնն առնէր, նորա հաւանեալ կամացն Մարիամու՝ հաւատաց յԱստուած ճշմարիտ, և մկրտեցաւ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, և կոչեցաւ անուն նորա Մարութա, որ թարգմանի տէր աշխարհիս, վասն զի էր իսկ տէր երկրին այնորիկ. և ոչ սակաւ ուրախութիւն լինէր 'ի վերայ եղելոցն՝ առնն և կնոջ 'ի փառս Աստուծոյ մերոյ: Իսկ յետ սակաւ ժամանակի եղև վախճան Մարութայի առնն Մարիամու. և թողու երիս որդիս ծնեալ 'ի Մարիամայ հաւատացեալ յԱստուած ամենակալ: Մին 'ի նոցանէ տէր էր աշխարհին կացեալ, և երկուքն զօրավարք թագաւորացն երևելիք և փառաւորք առ ամենեսեան. և ճշմարտեալ հաւատով և յուսով Մարիամ՝ զթաղումն առնն յօրինէր որպէս և վայելէր քրիստոնէից. և գոհանալով օրհնէր զԱստուած՝ որ հաւատացեալ յԱստուած ետես վախճանեալ զայրն: Եւ յետ այսորիկ կամեցաւ ելանել յԵրուսաղէմ, և պտղաբերել 'ի սուրբ եկեղեցիսն, և աղքատաց ինչս բաշխել⁴ և սպասաւորացն եկեղեցեացն, վասն փըր-

---

1. Մի օր. Ոտայցի:
2. Երկ. օր. կնոջն Մարիամու:
3. Երկ. օր. շինեաց եկեղեցիս... Աստուծոյ ընծայեցուցանէին... անծախադէս մատակարարէր:
4. Մի օր. դարմանս բաշխէր:

կուսութեան կենաց որդւոց իւրոց[1]. զի այնպէս մեծախորհուրդ էր կինն և բարեպաշտօն և երկիւղած յԱստուծոյ, և աղաչէր զԱստուած հանապազ զի արժանի արասցէ 'ի ծննդոց իւրոց քահանայանալ Աստուծոյ. զի զառաջին սպասաւորութիւն կռոց առն իւրում զմեղաց զպղծն ջնջեսցէ՝ Քրիստոսի քահանայապետութեամբն[2]. և փառաւորի ամենասուրբ Երրորդութիւնն 'ի նորա զարմիցն հանապազ:

Եւ դարձաւ յԵրուսաղեմէ յԱնտիոք Ասորեստանի, և օթևանս առնէ 'ի վկայարանի սրբոյն Եղիազարու և Շմաւոնի Շամունեայ[3], և որդւոց նորա եօթանեցունց որ վկայեցին. և հանէր 'ի գլուխ յաղօթս Աստուծոյ զգիշերն ամենայն. բազում աղաչանօք և արտասուօք խնդրէր յամենեցունց Տեառնէն բարեխօսութեամբ սրբոցն կատարել զխնդրուածսն որում ցանկայրն՝ որպէս նախ ասացաւ: Եւ տեսանէ 'ի տեսլեան զհրեշտակ Աստուծոյ, զի ասէր ցնա. Քաջալերեաց, ով կին դու, զի լսելի եղեն աղօթք քո առաջի Աստուծոյ, և զոր ինչ խնդրեցեր յԱստուծոյ՝ եղիցի քեզ բարեխօսութեամբ սրբոցդ յոր ապաւինեցարդ. և ահիւ և խնդութեամբ խառնեալ գոհանայր զԱստուծոյ, և փառս մատուցանէր. և հաւատաց ասացելոցն 'ի հրեշտակէն: Եւ իբրև եհաս 'ի տուն իւր եղև թոռն յորդւոյ իւրոյ՝[4] որ էր տէր աշխարհին, և զուարթացաւ սիրտ նորա. և տայր օրհնութիւն Աստուծոյ ամենակալի, և մկրտեաց զնա 'ի ձեռն աստուածասէր քահանային Մարմարայի, և անուանեաց զնա յանուն պապուն[5] իւրոյ Մարութա. և եդ 'ի մտի իւրում թէ նուէր առնէ Աստուած այցելութիւն աշխարհիս այսորիկ, զի երեւումն շնորհաց էր 'ի վերայ մանկանն: Եւ յետ հինգ ամի[6] ետ զնա յուսումն յաստուածասէր քահանայն Մարմարա. և ուսոյց նմա դպրութիւն և զճանապարհս իմաստութեան վարուց և հաւատոց արդարութեան. և 'ի չափ հասեալ ըստ կատարմանն Քրիստոսի, և ամենաշնորհ երևեալ և հաճոյ Աստուծոյ և մարդկան, կոչեն զնա 'ի սարկաւագութիւն, և յետ այնորիկ 'ի քահանայութիւն եկեղեցւոյն Աստուծոյ, որ 'ի հանոյն իւրոյ Մարիամայ շինեցաւ, և իմացաւ և ծանեաւ եթէ մօտ է կենցաղս. և ընտրեաց զճանապարհս սրբութեան և արդարութեան, և արհամարհեաց զվարս աշխարհիս[1]. և երթալով երթայր և յառաջանայր 'ի բարեպաշտութեան ջանս ճգնողական հանդիսիւք 'ի Քրիստոս:

---

[1] Երկ. օր. Հաւան քրիստոնէութեան հաւատոյ առն իւրոյ, և արդարութեամբ կենաց որդեկացն:

[2] Երկ. օր. քահանայագործութեամբն:

[3] Մի օր. Շմունէի: Միւս օր. Եղիազարու և Շամունեայ:

[4] Մի օր. Եղև նմա թոռն յորդւոյն իւրմէ:

[5] Մի օր. պապոյ:

[6] Մի օր. եօթն ամ:

Յայտնիկ խնդութեամբ ճոյր Մարիամ, քանզի ետես յոր հաւատացն զթոռն իւր ամենայն բարեկարգութեամբ յարդարեալ, և ցնծայր և օրհնէր զԱստուած, և եղանէ 'ի վանս իւր զոր յառաջագոյն շինեալ էր և անդ կրօնաւորէր բազում խստամբերութեամբ. զամենայն աւուրս կենացն իւրոց 'ի փառս Աստուծոյ կատարէր: Եւ ապա լինէր վախճան Մարիամու կատարեալ աւուրբք, և ամենայն առաքինութեամբ փոխեալ 'ի Քրիստոս, և գեղեցկապէս յօրինեաց զթաղումն նորա Մարութա. և ինքն Մարութա՝ առաւել ևս յառաջանայր յառաքինութեան ասպարէզս. աղօթիւք և պահօք կրթէր զինքն հանդերձ ամենայն մաքրութեամբ, ոչ խորհրդով դըրդուեալ և ոչ բանիւ և ոչ գործովք, այլ և զոչ ինչ ունել յաշխարհի մինչ հող տանէր[2]. և յամենայնի հռչակաւոր և ականաւոր եղեալ 'ի մրցմունս առաքինութեան, վերակոչեն զնա յեպիսկոպոսութեան շնորհս ըստ լիութեան շնորհին որ երևէր 'ի նմա: Զի լուսաւորեցաւ անձն նորա շնորհօք և գիտութեամբ աստուածայնոք, և յառաջանայր մինչ յաւելուածով առաքինութեանն՝ տպաւորելով յինքեան. և գնաց զճանապարհս Քրիստոսի առաքելական քարոզութեամբ, դարձուցանել զմոլորեալս 'ի գիտութիւն ճշմարտութեան. և շինէր եկեղեցիս և կարգէր քահանայս և պաշտօնեայս փառաբանիչս ամենասուրբ Երրորդութեանն, և զվանորայս որ 'ի հանոյն իւրոյ շինեցան՝ բազմացուցանէր ճգնաւորօք, և հաստատէր 'ի հաւատս ուղիղս և 'ի կարգս աստուածային կրօնից, ըստ առաջնոց սրբոց հարցն. և զբնակիչս աշխարհի զայս և զկանայս վերստին ըստ պատկերի Աստուծոյ նորոգէր, սուրբ վարուք և լուսաւոր վարդապետութեամբ և մեծամեծ սքանչելեօք. և յանհանճար աղանդիցն և 'ի բազմաստուած մոլորութենէն մաքրէր, և առաջնորդէր ամենեցուն յարդարութիւն. զի յայտնեցաւ որպէս զղամբար լուսաւոր, որք նստէին 'ի խաւարի և 'ի ստուերս մահու, հալածեաց զխաւարն անգիտութեան յայսմ աշխարհէ. վանեաց զձախակողման գունդս[1] զօրութեամբն Քրիստոսի, և զաջակողման դասս հրեշտակաց հաւատաց լինել պահապան հաւատացելոցն 'ի Քրիստոս. սրբեալ սիրտ նորա 'ի չար խորհրդոց աստուածային շնորհին ընդունակ, ճըշմարտեալ սիրով և բաղձանօք առաքինասէր վարուք, և լեզու նորա զիրաւունս բարբառէր, և զօրութիւն աւետարանէր հանապազ ամենայն աշխարհի. ձրի առեալ և ձրի տուեալ զպարգևս արարչին: Եւ ամենեքեան իբրև լսէին զբանս Աստուծոյ 'ի սրբոյ եպիսկոպոսէն, դառնային յԱստուած ճշմարիտ 'ի կռոցն պաշտամանց, զի աղօթիւք սրբոյն զմոլորական միտս մարդկան ածէր յուղղութիւն, և զպատկերս աստուածոցն կործանէին, և շինէին վանորայս և եկեղեցիս, և խափանեցան քրմացն սպասաւորութեան պաշտամունքն, և փոխանակեցին զսպասաւորութիւն բագնաց յեկեղեցիս Աստուծոյ և առ նորուն հաճութիւն: Իբրև ետես զայս ամենայն թշնամին արդարութեան՝ յաղթահարեալ զինքն 'ի սրբոյն 'ի հոգևոր պատերազմին, ճչեաց մեծաձայն յամենեցունց լսելիս, և ասէ. Վա՛յ ինձ, և վա՛յ իմոցն, զի հալածեալ եղաք 'ի մերմէ բնակութենէս, և 'ի ծառայէն Քրիստոսի Մարութայէ, և ոչ գիտեմք ուր երթիցուք. զի փառքն Քրիստոսի լցին զտիեզերս ամենայն, և անդէն որպէս ըղծուխ 'ի հողմոյ՝ 'ի միջոյ 'ի բաց բարձեալ եղաք:

---

[1] Մի օր. յաւելու, և որ 'ի սմա զբօսանս աշխարհահաճութեան են:

[2] Մի օր. այլ և ոչինչ ունելով յաշխարհէս՝ մինչ անհոգ գտանէր:

Եւ երանելին Մարութա կնքէր զհօտն՝ որ հաւատացաւ նմա՝ խաչիւն Քրիստոսի, և զի այլ մի ևս մերձեւցի հրապուրել զնոսա. զի որպէս աշխատասէր հոգեւոր մշակ խլեալ զփուշս ամենեցունց յանդոց և 'ի սրտից, և սերմանեաց զարդարութիւն և զսրբութիւն 'ի փառս Աստուծոյ. զի որք մարգարէիցն ոչ լուան և առաքելոցն քարոզութեան ոչ անսացին, կամեցաւ Աստուած 'ի ձեռն Մարութայի դարձուցանել զմոլորեալս 'ի գիտութիւն ճշմարտութեան, աղօթիւք և բարեխօսութեամբ ամենայն սրբոց անդ ժողովելոց։ Զի հօտ էր առանց հովուի, գահավիժեալ 'ի դաշանաց չար դիւաց. և 'ի ձեռն երանելւոյս այսորիկ՝ Քրիստոս հովիւ քաջ որ ետ զանձն յաղագս ոչխարացն, հովուական գաւազանաւն՝ կենսատու խաչիւն իւրով հալածեաց զգեւս, և սովաւ ժողովեաց 'ի միաբանութիւն հաւատոց և 'ի գիտութիւն ամենասուրբ Երրորդութեանն փառաց, 'ի վայրի դալարւոջ արածելով և 'ի ջուրս մկրտութեամբն լուանալ զաղտ հոգւոց և մարմնոց և լուսաւորեալ, յաստուածային փարախն ժողովեալ որ է եկեղեցի Աստուծոյ. և զկորուսեալսն եգիտ, և զցրուեալսն ժողովեաց, զհիւանդս բժշկեաց, զի արասցէ վերստին ծննդեամբն և հոգեւոր աւազանաւն և կենդանարար մարմնովն և արեամբ Փրկչին, որդիս Աստուծոյ Հօր և ժառանգակիցս Քրիստոսի որ ետ զինքն 'ի մահ վասն փրկութեան աշխարհի, և արար այցելութիւն հեռաւորաց և մերձաւորաց, և այժմ աշխարհի լոյս ծագեալ 'ի ձեռն երանելւոյն Մարութայի։ Նմանեալ սա Մովսէսի որ փրկեաց զԻսրայէլ յեգիպտոսական ծառայութենէ, և սեամբ հրոյ և ամպոյ առաջնորդեաց յերկիրն աւետեաց. ապա և Պօղոսի քաջութեանն և նախանձուն, որ յառաջանայր քան զնախ առաքեալսն և նշանօք և արուեստիւք, մանաւանդ ամենաշնորհ թղթովքն, որ տիեզերաց եղև քարոզ և առաքեալ. նոյնպէս և երանելին Մարութա լինէր այն աշխարհին քարոզ և վարդապետ, որ ամենայն առաքինութեամբ առլցեալ, և կատարելապէս և բազում նշանօք աճեցուցանէր օր ըստ օրէ զհօտ իւր. և Տէր ձեռնկալու էր նմա յամենայնի, և ցանկայր զամենեսեան ընդունակ լինել երանութեանցն որ վարդապետեցաւ 'ի Տեառնէ. երանելով զառաքեալսն՝ և որք բաղձան կցորդ լինել նորա. և այնպէս ճշմարտեալ սիրով և հնազանդեալ աւետարանական քարոզութեան, մերժէր 'ի նոցանէ զսատանայական մտածմունս և զչար խորհուրդս, և ոչ յումեքէ դրդուեալք 'ի ճշմարտութենէն որ նոցա աւանդեցաւ կարգք և կրօնք հոգևորք: Եւ ինքն առաւել քան զառաւել ճգնէր նահատակելով յամենայն վարս. և սիրեաց զԱստուած յամենայն սրտէ և յամենայն զօրութենէ, և կատարեաց զարդարութիւնս ամենայն, զոր չեմ բաւական պատմել զզօրութիւն և զսքանչելիսն զոր Տէր եցոյց նովաւ յամենայն աշխարհի: Եւ եղև այս յերեք հարիւր և 'ի չորս թուականութեան Յունաց[1], 'ի ժամանակս փոքր Թէոդոսի Հոռոմոց թագաւորին: Ի վերայ այնպիսի պարգևատու շնորհացն Աստուծոյ, ազդեցութեամբ Հոգւոյն սրբոյ երթայր յԱսորեստան, զի և անտի խլեսցէ զչար սովորութեանցն զանօրէնութիւն զօրութեամբն Քրիստոսի. և նորոգեսցէ զհաւատացեալ ժողովուրդն որ 'ի մոգուցն բռնութենէ խաւարամածեալ[2] ունէր զեկեղեցի Աստուծոյ. և նա որպէս ճառագայթ փայլեալ յԱստուծոյ շնորհացն՝ լուսաւորեաց զհաւատացեալսն, և յամօթ արար զմոլութիւն մոգուցն, և յայտնեցաւ յաղթութիւն ճշմարտութեան, և պայծառացան եկեղեցիք Աստուծոյ հանապազորդ պաշտօնէիւքն:

---

[1] Մի օր. գունդս դիւաց:

Եւ համբաւ սքանչելեաց սրբոյ եպիսկոպոսին եհաս առ թագաւորն Պարսից Յազկերտ՝ որ հալածիչ էր քրիստոնէից և կոչեցեալ եղև 'ի նմանէ: Մինչ դեռ գայր՝ ընդ առաջ եղև սրբոյ եպիսկոպոսին թագաւորն նախարարօքն հանդերձ. և ետես շնորհք աստուածային 'ի վերայ սրբոյն, և խոնարհեալ երկիր եպագ նմա առաջի մեծամեծաց իւրոց. սոյնպէս և սուրբն Աստուծոյ թագաւորին երկրպագէ և տայ ողջոյն. և խօսեցաւ բանս բարի, և սիրեաց թագաւորն զսուրբն Աստուծոյ յամենայն սրտէ. 'ի վերին ազդեցութենէ շնորհացն, զի կամեցաւ Աստուած այցելութիւն առնել ծառայից իւրոց՝ յաղագս սիրոյ արքային զսուրբն: Զի էր Յազկերտ հալածիչ քրիստոնէից ընդ ամենայն երկիրն իշխանութեան իւրոյ, 'ի ձեռն գործակալաց իւրոց և մոգուց և մոգպետաց. և բազում չարչարանօք նեղէին զքրիստոնեայսն, երկիր պագանել արեգական և կրակի. բազումք եղեն վկայք Քրիստոսի որ ոչ հնազանդեցան հրամանի արքային. և էր նեղութիւն մեծ քրիստոնէից, և օգնութիւն ոչ ուստեք, և 'ի ձեռն երանելւոյն եղև այցելութիւն 'ի Տեառնէ քրիստոնէից. և այսպէս արգել հալածանաց, և զերծ 'ի բանտից և կապանաց: Էր որդի մի Թագաւորին գեղեցիկ յոյժ, և սիրուն էր նորա քան զամենայն որդիսն, և էր ըկեալ 'ի դիւէ չարաչար. և ոչ 'ի մոգուց և 'ի դիւթից և 'ի քաւդէից[1], և կամ այլ ուստեք բժշկութիւն գտեալ, և լինէր այս վտանգ 'ի նախախնամութենէ Աստուծոյ, պահեալ առ 'ի փրկութիւն ժողովրդեանն 'ի Տէր հաւատացելոց. զի ճշմարտութիւն Աստուծոյ գիտութեան[2] ցուցցի, և Աստուած փառաւորեսցի, և եղջիւր եկեղեցւոյ բարձրասցի: Եւ ասէ արքայ ցՄարութա. Է որդի մի ինձ սիրելի՝ որ չարաչար տանջի 'ի դիւէ և ոչ ուստեք գըտեալ բժշկութիւն, և տրտմութիւն յոյժ է ինձ վասն նորա. և արդ խնդրեմ 'ի քէն, ծառայ Աստուծոյ բարձրելոյ, զի խնդրեսցես դու յԱստուծոյ և բժշկեսցի մանուկն իմ, և ելցէ դևն 'ի նմանէ և առողջասցի և կեցցէ: Եւ ասէ սուրբն. Եկեսցէ որդին քո և տեսից զնա: Եւ իբրև ածին առաջի ամենեցուն, ճչեաց դևն 'ի մանկանն և ասէ. Զի՞ կայ իմ և քոյ, ծառայ Քրիստոսի խաչելոյն, եկիր յաշխարհէ հեռաստանէ հանել զիս 'ի բնակութենէ իմմէ. և զարկոյց զմանուկն զգետնի, և կայր 'ի վտանգի, և քաղէին ոտիք նորա. և էր տեսիլ նորա ողորմելի և ողբոց արժանի, և ահ կալաւ զամենեսեան: Էր և այլ ոմն սուրբ եպիսկոպոս ընդ երանելւոյն Մարութայի. և անկեալ 'ի վերայ երեսաց իւրոց յերկիր, և կային յաղօթս առ Տէր և ասէին. Տէր Աստուած ամենազօր, որ լը-

---

[1] Մի օր. և եղև այս 'ի ԼԳ թուականին Յունաց, 'ի ժամանակս Թէոդոսի Հռոմայ թագաւորին:

Միւս օր. և եղև այս յութսուն և երեք փոքրին Յունաց. 'ի տասն ամի փոքր Թէոդոսի բարեպաշտ թագաւորին Հռոմոց: Անծանօթ է մեզ այսպիսի թուական, թերևս Կոստանդինուպօլսի շինութեանն իցէ:

[2] Երկ. օր. խաւար մածեալ ունէր:

Contd
document
[illegible]
page

---

[1] Մի օր. քաղդէից:

[2] Երկ. օր. աստուածգիտութեան:

ւոր քանանուհւոյ կնոջն որ աղաղակէր առ քեզ, և գթացար 'ի նա, և հաներ զդեւն 'ի դստերէ նորա, և բժշկեցեր 'ի վտանգէ դիւին զնա, և զլեգէոնն խոզիւք 'ի ծովն ընկղմեցեր, որ և զայլ դևս բազում հաներ 'ի մարդկանէ, զոմանս քև և զոմանս 'ի ձեռն աշակերտացն քոց. որոց ողորմեցար և արարեր այցելութիւն 'ի ձեռն նոցա. և այժմ, Տէր զօրութեանց, սաստեա յայսս չար՝ որ 'ի մանուկս յայս, և հալածեսցի 'ի նմանէ ամենազօր անուամբ քո, և ծանիցեն ամենեքեան եթէ դու միայն ես ճշմարիտ Աստուած, և լիցի դադարումն հալածանաց հօտի քո՝ 'ի ձեռն սորա առողջութեան. զի դու կարող ես յամենայնի, և 'ի քո փառս կատարի ամենայն ինչ արարածոց. այժմ և յաւիտեանս: Եւ ասացեալ զամէնն որ իւրքն էին, և չարժլեաց դևն և ճչեաց մեծաձայն և ասէ. Վա՜յ ինձ, վա՜յ ինձ, յո՜րքան փառաւոր բնակութենէ հալածեցայ: Եւ սթափեալ և զգաստացեալ մանկանն, և յարուցեալ տայր փառս Աստուծոյ:

Զայս տեսեալ արքային ուրախ եղև և ասէ. Արդարև մեծ է Աստուածն քրիստոնէից քան զամենայն աստուածս ազգաց. զի որպէս լուաք՝ սոյնպէս տեսաք զմեծ սքանչելիս 'ի ձեռն ծառային նորա. և ասէ արքայ. Արդ խնդրեա յինէն որ ինչ պիտոյ է քեզ և տաց: Եւ ասէ երանելին Մարութա. Ոչ ինչ պիտոյ է ինձ 'ի քէն, բայց միայն արձակեսցես զքրիստոնեայսն 'ի բանտից և կապանաց, և 'ի չարաչար տանջանաց. և համարձակ լինիցին պաշտել զԱստուածն իւրեանց, և նորոգեսցին եկեղեցիք փառաբանութեան անուանն Աստուծոյ՝ 'ի քում իշխանութեանդ. այլ և արա սէր ընդ Թէոդոսի Թագաւորին Յունաց, և լիցի խաղաղութիւն ընդ ամենայն տիեզերս 'ի ձեռն քո. և ընկալաւ արքայն 'ի նմանէ զասացեալսն, և կատարեաց զամենայն խնդրուածս նորա:

Եւ ել առեալ հրովարտակօք ընդ աշխարհ 'ի Թագաւորէն, զի կապեալքն արձակեսցին 'ի բանտիցն և 'ի չարչարանաց, և նորոգեսցին եկեղեցիքն, և համարձակ պաշտեսցեն զԱստուածն իւրեանց, և որք հալածէին և նեղէին զնոսա՝ կրեսցեն պատուհաս յարքունուստ. և եղև սուգ մեծ մոգուցն, և հաւատացելոցն

Քրիստոսի ուրախութիւն մեծ ’ի փառս և ’ի գոհութիւնս Աստուծոյ· և արձակեցան ’ի բանտիցն կալանաւորք որ վասն Քրիստոսի կապեցան, և նախարարք Հայոց· և եղև խաղաղութիւն մեծ ընդ ամենայն իշխանութիւն արքային, և համարձակեցան քրիստոնեայքն ’ի նորոգել զեկեղեցիս Աստուծոյ, և պաշտել զԱստուած համարձակ։

Եւ այսոցիկ այսպէս եղելոց՝ դարձեալ խնդրեաց ’ի Թագաւորէն արձակել զինքն, և ետ պարգևս բազումս և Թուղթս խաղաղականս և արձակեաց առ Թագաւորն Յունաց· և եկեալ երանելւոյն առ բարեպաշտն Թէոդոս և ետ ողջոյն, և մատոյց զհրովարտակ արքային Պարսից· և ընթերցեալ ուրախ եղև ընդ սիրոյ և խաղաղութեան որ առ քրիստոնեայսն· և եհարց ընդ սուրբն զամենայն ինչ և նա պատմեաց զեղելսն յանուն Տեառն զսքանչելիսն, և զհալածմանացն զդադարումն· և նա ետ փառս Աստուծոյ, որ արար փրկութիւն ’ի ձեռն ողորմութեան իւրոյ աղօթիւք սրբոյն, և սիրեաց զնա առաւել քան զամենայն հայրապետսն իւր· և գոհանայր և օրհնէր զԱստուած բարեպաշտն Թէոդոս, և հարցանէր և ուսանէր ’ի նմանէ որպէս ’ի սրբոյ և յարժանաւորէ։ Եւ ապա խնդրեալ ’ի նմանէ զինչ և կամեսցի· և խնդրեաց այրն Աստուծոյ ’ի Թագաւորէն ամրացուցանել զքաղաքն Ծոփաց ամրագոյն պարսպաւ, շինել և տաճար փառացն Աստուծոյ ’ի մէջ քաղաքին՝ յորում պատարագն Քրիստոսի և օրհնութիւնք Աստուծոյ միշտ կատարեսցին ’ի նմա· և անդր ժողովեսցից յամենայն սրբոց մասն ինչ, և անուանեսցից Մարտիրոսաց քաղաք։ Եւ ասէ Թագաւորն· Բարի է բանդ և Աստուծոյ հաճոյ իմացմունքդ· արդ արա որպէս և կամիս· և յինէն եղիցի շինուածոց ծախք՝ որքան պիտոյ է։ Եւ տայ գանձս ոսկւոյ և արծաթոյ, և ճարտարս ’ի Յունաց աշխարհէն, և գործակալս և գործաւորս որքան պիտոյ էր· և դարձեալ յուղարկեաց զնա ամենայնիւ և խաղաղասէր պատասխանեաւ գրոյ առ արքայն Պարսից։

Եւ եկեալ ’ի քաղաքն Ծոփաց սկիզբն առնէր շինութեան պարսպին, և կարգեալ զգործաւորս ’ի գործ և գործակալս 'ի վերայ նոցա, և ինքն գնաց 'ի Պարս, և այլ եպիսկոպոսունք ընդ նմա։ Եւ տեսեալ արքային՝ պատուով ընկալաւ զնա և զամենեսեան որք ընդ նմայն էին, բայց զՄարութա առաւել մեծաւ պատուով սիրէր. և տայր զհրովարտակն Թէոդոսի թագաւորի, և ոչ սակաւ ուրախացաւ ընդ թուղթն և ընդ բան պատգամին. և եղև խաղաղութիւն և սէր ընդ երկոսին թագաւորսն մինչև 'ի վախճան իւրեանց։ Եւ ունէր ցաւ զգլուխ արքային 'ի վաղնջուց հետէ, և ոչ ինչ օգտեալ 'ի բժշկաց, և պատմեաց Մարութայի. և նորա աղօթս արարեալ եդ զաջն իւր 'ի վերայ գլխոյ արքային և առժամայն բժշկեալ եղև անուամբն Քրիստոսի. և այլ ոչ ևս վատնէր ցաւ զգլուխ արքային[1]. և յաւել ևս 'ի սէր և 'ի մեծարանս սրբոյն. զի ծանեաւ ճշմարտապէս թէ Աստուած ընդ նմա է։

Եւ մոգուցն 'ի նախանձ մտեալ խորհեցան որոգայթըս դնել առնն Աստուծոյ, որպէս զի 'ի սիրոյ արքային մերժել կարասցեն. և խորամանկեալ ըստ նըմանութեան՝ որ առ Դանիէլիւն Բաբելացիքն որ առ թագաւորն Դարեհ, սոյնպէս և արարին գետնափոր տուն[2] 'ի ներքոյ կլակարանին. և կացուցին այր մի 'ի ներքս և ուսուցին նմա ասել թագաւորին[3], թէ ոչ ընդունիմ զքո երկրպագութիւնդ, զի սիրեցեր զքահանայն[4] քրիստոնէից՝ որ արհամարհել ուսուցանէ զպաշտօնեայս իմ։ Եւ իբրև եկն թագաւորն ըստ սովորութեան իւրում յերկրպագութիւն կրակին, և արգելեալ այրն մեծաձայն բարբառով անարգեաց զթագաւորն. և որպէս 'ի կրակէն թուեցեալ նմա բարբառն և ասէ. Ո՛վ աստի ամպարշտեալ, զի չընդունիմ զքո երկրպագութիւնդ, զի յարեցար 'ի քրիստոնեայսն՝ որ հրապուրէ զքեզ 'ի պաշտօն խաչելոյն, և զի անարգել ուսուցանէ զպաշտօնեայս իմ[5]։ Եւ լուեալ թագաւորին զարհուրեցաւ և ել արտաքս, և կայր տրտմեալ և տարակուսեալ. և պղտորեցաւ 'ի խորհուրդս իւր. և ակն ածէր 'ի սրբոյն ասել ինչ։ Եւ գիտացեալ երանելին Մարութա՝ զխորամանկութիւն նոցա՝ ազդեցութեամբ Հոգւոյն սրբոյ, և մատուցեալ ասէ. Արքայ, դարձիր յերկրպագութիւն կրակին. և ուստի ձայնն լսի՝ բա՛ց զտեղին, և գտցես զխաբէութիւն մոգուցն: Եւ դարձաւ անդրէն. և լուաւ զնոյն ձայն, և հրամայեաց քանալ զտեղին ուստի զձայնն լսեալ. բացին և հանին զայրն 'ի տեղւոջէն, և նա պատմեաց արքային զայն որք խորամանկեցին, և ըսպան զնոսա: Եւ մնացեալքն առաւել ևս չարացան, և արարին հոտոյ գարշութիւն յաթոռ թագաւորին. և եհարց զմոգսն, և նոքա զՄարութա պարտաւորէին, և զորս ընդ նմա եպիսկոպոսունքն. և քննեալ արքայ ստուգեաց որք արարին, և զնոսա ևս մահու մատնէր: Եւ այլ ևս յաւելան մախանք չարութեան մոգպետացն և նախարարացն Պարսից. և խորհեցան սպանանել իսկ զարքայ և զՄարութա: Եւ որ էր երկրորդ թագաւորին և սիրելի և երևելի և հզօր քան զամենայն նախարարս Պարսից, իբրև ետես զմահ մոգուցն՝ կամեցաւ վրէժխնդիր լինել կրակի պաշտօնէիցն. փորեաց 'ի տան իւրում հոր խորին[1], և ցցեալ 'ի նոսա սուսերս սուրս[2], և արար 'ի վերայ նորա մահիճս և բազմոց թագաւորին 'ի պատուական և յերեւելի և 'ի պայծառ հանդերձից, զի բազմեալ 'ի վերայ՝ անկցի 'ի ներքս և խոցեալ 'ի սրոյն՝ մեռցի. և հրաւիրեաց զարքայ և զՄարութա յընթրիսն: Եւ յայտնեաց Աստուած զխորհուրդն չարին՝ սրբոյն Մարութայի. և մատեաւ սուրբն առ արքայն 'ի ծածուկ և ասէ. Որովհետև գտի շնորհս առաջի քո, և արարեր ողորմութիւն քրիստոնէից, արա այցելութիւն անձին քում. և 'ի միտ առ զոր ասեմ, զոր Տէր եցոյց ինձ. այրն որ հրաւիրեաց զքեզ յընթրիս՝ որոգայթ մահու պատրաստեալ է քեզ 'ի ներքոյ բազմականին խորխորատ, և 'ի ներքս ցցեալ սուրս. զի յորժամ բազմեսցիս 'ի նա՝ անկցիս 'ի ներքս և մեռցիս: Զայս լըւեալ արքայի՝ զարհուրեցաւ և ասէ. Անհաւատալի թուի ասացեալդ. զիա՞րդ խորհի նա ինձ մահ, այնքան սիրեցեալն և մեծարեալն յինէն առաւել քան զամենեսեան։ Ասէ Մարութա. Մի՛ երթար յընթրիսըն յայն. ապա թէ երթաս, զնա բազմեցո՛ 'ի քում բազմականին, զոր քեզն է պատրաստեալ։ Եւ ասէ արքայ. Եղիցի այդպէս։ Եւ եկն այրն երեւելի, և կոչեաց զարքայ և զՄարութա բազում աղաչանօք. և նոքա գնացին և մտին, որպէս պատրաստեալ էր զբազմական արքային։ Եւ հրամայեաց նմա արքայ բազմել յիւրում տեղին։ Եւ նա ասէ. Զիա՞րդ ծառայս բազմեսցի յարքային տեղին։ Եւ արքայ ստիպէր. և նա լայր և աղաչէր 'ի գուճ կալով. և ոչ լինէր լսելի աղաչանք նորա. և հրաման տայր զինուորացն զի առեալ ընկեսցեն զնա 'ի բազմականն. և իբրև ընկեցին զնա 'ի վերայ բազմականին, անկեալ 'ի խորխորատն 'ի վերայ սրոցն և մեռաւ։ Եւ տեսեալ արքային զեղեալսն, և ճշմարտեալ զասացեալսն 'ի սրբոյն, աղաղակեաց 'ի ձայն մեծ և ասէ. Մեծ է Աստուած քրիստոնէից՝ որ յայտնէ զծածուկս սիրողաց իւրոց։ Եւ 'ի վերայ այսոցիկ առաւել սիրեցաւ և մեծարեցաւ երանելին յարքայէն. և հաւատաց արքայ յԱստուած ճշմարիտ, և յօժարութեամբ լսէր սրբոյն. բայց երկնչէր 'ի նախարարացն յայտնել զհաւատն, զի մի՛ յարուցեալ 'ի վերայ նորա Պարսիցն սպանցեն զնա, և առցեն զթագաւորութիւն նորա։ Եւ 'ի վաղիւն կոչեաց արքայ զամենայն երեւելի նախարարսն իւր, և պատմեաց զամենայն եղեալսն, և թէ որպէս ապրեցաւ 'ի ձեռն երանելւոյն Մարութայի, որ յառաջագոյն ազդեցոյց նմա զորոգայթն մահու։ Եւ ասեն ամենեքեան. Պատուեսցի և մեծարեսցի, և պարգեւաց մեծամեծաց արժանի եղիցի յարքայէ և յամենայն նախարարացս։ Եւ ասէ. Այդպէս եղիցի՝ որպէս ասէքդ։ Եւ ել յարքայէ հրաման զի զամենայն զոր ինչ կամիցի Մարութա առնել յիւրում իշխանութեանն՝ եղիցի նմա։ Եւ օրհնեաց երանելին Մարութա զԱստուած և ասէ. Օրհնեալ տէր Աստուած որ ապրեցոյց զարքայ յորոգայթագիր մահուանէ. և արդ եղիցի խաղաղութիւն և սէր առ քրիստոնեայսն և առ թագաւորն Յունաց[1] միշտ և հանապազ։ Եւ ձգեալ զգաւազանն ոսկի առ սուրբն առաջի մեծամեծաց իւրոց և ասէ. Որ ինչ և կամիս՝ եղիցի քեզ: Եւ երկիր եպագ արքային. և ել յերեսաց նորա գոհանալով և օրհնելով զԱստուած:

---

[1] Մի օր. և այլ ոչ ևս եղև գլխոյն արքային։

[2] Մի օր. ծածկագոյն տուն։

[3] Երկ. օր. և եդին բանս 'ի բերան նորա՝ ասել նմա թէ չընդունիմ։

[4] Մի օր. զքահանայսն։

[5] Երկ. օր. և զիս անարգել... և զպաշտօնեայս իմ։

---

[1] Մի օր. խորխորատ:

[2] Երկ. օր. սուսերս երկաթս...:

---

[1] Մի օր. առ թագաւորն Պարսից։

Եւ ժողովեաց զնշխարս վկայիցն Քրիստոսի որք 'ի մոգուցն և յարքայէ կատարեցան. և ամփոփեաց ուրեք ուրեք 'ի հանգստարանս մեծաւ պատուով, հրամանաւ արքային. և մի մասն ինչ առեալ յամենեցունց նշխարացն՝ ընդ իւր տանէր 'ի քաղաքն Մարտիրոսաց: Եւ հրաժարեալ 'ի թագաւորէն խաղաղասէր թըղթով և բազում պարգևօք. և բաժակ մի ոսկի ա՛ռ 'ի յիշատակ արքայի լի ոսկւով՝ 'ի նիւթ շինուածոյ տաճարին որ 'ի քաղաքին շինեցաւ յանուն վկայիցն Աստուծոյ. և տեսեալ զաջողութիւն գործոյ քաղաքին և եկեղեցւոյն Աստուծոյ՝ օրհնէր զԱստուած: Եւ դարձեալ գայ և առ բարեպաշտն Թէոդոս. և պատմեաց զսիրոյ և զխաղաղութեան առ թագաւորն, և զդադարումն հալածմանց և զնորոգումն եկեղեցեացն Աստուծոյ, և զհաւաքումն նշխարացն 'ի հանգստարանսն, և զբերեալ մասունսն 'ի քաղաքն Մարտիրոսաց. և զոր ինչ արար Տէր 'ի ձեռն նորա սքանչելիս, և ապրեցոյց զարքայն 'ի մահուանէ. զոր գրեալ իսկ էր արքայն Պարսից առ արքայն Յունաց Թէոդոս. և ընթերցեալ ուրախ եղև, և գոհանալով օրհնէր զԱստուած ամենակալ՝ 'ի վերայ մեծամեծ սքանչելեացն և այցելութեան Աստուծոյ՝ իւրոց հաւատացելոց որ նովաւ ցուցաւ: Եւ մեծարեաց և պատուեաց առաւել քան զառաջինն զերանելին Մարութա: Եւ խընդրեաց 'ի թագաւորէն՝ զի տացէ հրաման ինքեան ժողովել 'ի նշխարաց ամենայն սրբոց որ յիշխանութեան նորա՝ մասունս, և տանել 'ի քաղաքն Մարտիրոսաց, որպէս նախ ինքն ասացեալ էր. և առնու հըրաման առնել որ ինչ կամ է նորա: Եւ ելեալ 'ի Հըռոմ և յամենայն քաղաքսն և 'ի գաւառսն և 'ի գիւղսըն և 'ի վանորայս ճգնաւորացն, և ժողովեաց մասունս ըստ յաջողելոյն Աստուծոյ. և դառնայ առ բարեպաշտն Թէոդոս. և ոչ սակաւ ուրախութիւն լինէր թագաւորին. և ետ պարգևս բազումս և գիւղս և ագարակս և այգիս և ձիթենիս ամենայն պտղաբերօք՝ եկեղեցեացն Աստուծոյ և մարտիրոսացն որ 'ի քաղաքին ժողովեցան[1]. և յուղարկեաց զնա լի ուրախութեամբ որպէս և կամեցաւ երանելին։

Եւ եկեալ 'ի յաշխարհն իւր 'ի քաղաքն Ծոփաց՝ զուարճացեալ սրտիւն օրհնէր զԱստուած. և շինեցաւ քաղաքն և եկեղեցիքն Աստուծոյ հրաշալի յօրինուածովք. և արարեալ յորմս տանն Աստուծոյ խորանս, և դնէ տապանակաւ 'ի նոսա գեղեցկայարմար իմաստիւք կարգեալ զնոսա. 'ի Հռովմայեցւոց իշխանութենէն հարիւր և քսան հազար[2], և յԱսորեստանեայց քսան հազար, և յիշխանութենէն Պարսից ութսուն հազար, և յիշխանութենէս մերմէ վաթսուն հազար. միահամուռ ընդ ամենայն նշխարս բերեալ սրբոցն՝ երկերիւր և ութսուն հազար։ Թողում ասել որ յետ այնորիկ ժողովեցան, և կամ կատարեցան 'ի նոյն քաղաքի սուրբ վկայք, և կան անդէն։ Որոց բարեխօսութեամբն մեզ ողորմեսցի Տէր, որք թարգմանեցաք յասորոյ 'ի հայ զվկայութիւնս, ես Գագիկ[3] և Գրիգոր սարկաւագ իմ որ ընդ իս. որոց լիցի ամենեցուն հաւատացելոց՝ արժանաւոր լինել մասին ժառանգութեան սրբոցն՝ որ ժողովեցան անդ։ Եւ այսպիսի ցանկութեամբ և մեծաւ յօժարութեամբ ժողովեաց Մարութա զնշխարս մարտիրոսացն 'ի Նփրկերտ քաղաք[4]. որոց անուանքն գրեալ են 'ի դպրութեան կենաց։ Եւ յաւուրս երանելւոյն արար Տէր խաղաղութիւն երկու թագաւորաց՝ Յունաց և Պարսից, և դադարումն հալածանաց, և նորոգումն եկեղեցւոյ, 'ի փառս անուան իւրում սրբոյ։

Յետ այսր ամենայնի լինի վախճան երանելւոյն Մարութայի, յունիս ամսոյ, որ օր մի էր[5], 'ի Մարտիրոսաց քաղաքին։ Եւ պատուեալ մեծարեցաւ ընդ ամենայն սրբոց նշխարսն՝ յամենայն սուրբ հարանցն և 'ի հաւատացեալ ժողովրդոցն. վասն զի նովաւ արար Աստուած փրկութիւն ամենայն աշխարհի, և դարձոյց յանաստուածութենէ յաստուածգիտութիւն ճշմարիտ, և յամբարշտութենէ՝ յարդարութիւն։ Արդ մի՛ զանց արասցուք զաւանդեալն յերանելի Հօրէն յաղագս ուղղափառ հաւատոյ՝ որ 'ի Հայր և յՈրդի և 'ի Հոգին սուրբ, և որ յաղագս տնտեսութեան Որդւոյն է բան հաւատոյ. որ միացաւ 'ի մարմնի և կատարեաց զարդարութիւնս ամենայն, անապականաբար նորոգելով զմարմին խոնարհութեան մերոյ՝ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց, աստուածային տնօրէնութեամբն. և որ յաղագս առաքինութեան ասացաւ, սրբութեան և ամենայն ճգնութեան վարուց. զի հոգւով վարեսցուք և զցանկութիւն մարմնոյ արհամարհեսցուք. զի հասցուք մասին ժառանգութեան նմա, և ամենայն սրբոց անդր ժողովելոց, 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն։

---

[1] Մի օր. և Մարտիրոսաց քաղաքին։

[2] Մի օր. 'ի Հռովմայեցւոց իշխանութենէն ճ և ԻՌ։

[3] Երկ. օր. հայր Գագիկ։

[4] Մի օր. Նէփրկերտ։

[5] Մի օր. 'ի յունուարի ամսոյ որ օր ԻԱ էր։
Միւս օր. 'ի տասն և մին յունիս ամսոյ։

Եւ եղև յետ վախճանելոյ Թագաւորացն, Կաւատ թոռն Յազկերտի ժողովեաց զզօրս իւր և եկն 'ի սահմանս Յունաց 'ի քաղաքն Նփրկերտ, առնուլ զնա. և նեղեցան բնակիչք քաղաքին, և յաղագս վտանգին որ 'ի վերայ կայր՝ կամեցան տանել զբաժակն ոսկի՝ լի ոսկւով վասն փրկութեան քաղաքին, զայն զոր տուեալ էր պապն իւր 'ի պարգևս[1] երանելւոյն Մարութայի։ Եւ իբրև մատուցաւ առաջի արքային, և կարդաց զանուն իւրոյ պապուն որ գրեալ կայր 'ի վերայ բաժակին, արտասուեաց, և ասէ. Քաւ լիցի ինձ առնուլ զյիշատակ հարց իմոց, կամ առնել չար քաղաքիս այսմիկ. այլ լիցի սէր և խաղաղութիւն ընդ իս և ընդ քաղաքս յաւուրս կենաց իմոց։ Եւ դարձաւ խաղաղութեամբ յաշխարհն իւր. և զերծեալ ապրեցաւ քաղաքն և աշխարհն ամենայն 'ի վտանգիցն նորա. և ծանեան և գիտացին եթէ 'ի ձեռն սրբոց բարեխօսութեան անդր ժողովելոց և երանելւոյն Մարութայի՝ արար Տէր փրկութիւն քաղաքին և աշխարհին։ Եւ նմա փառք, որ փրկէ և ապրեցուցանէ զյուսացեալ և զապաւինեալս իւր. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

[1] Մի օր. այն որ տուեալ էր Յազկերտէ պապոյ նորա պարգևս։

Վկայաբանութիւն Սրբոյն Մելեսի եպիսկոպոսի։

Ի ժամանակս Որմզդի Պարսից արքայի էր այր մի 'ի զօրաց նորա, զարդարեալ ամենայն առաքինութեամբ և սուրբ վարուք՝ որում անուն էր Մելէս, որ 'ի ծածուկ յառաջ ունէր զհաւատս քրիստոնէութեան, և ապա հրաժարէր 'ի զինուորութենէ և յամենայն աշխարհազգեօս կենցաղոյս. զմիանձնական վարս ողջունէր, յանապատս բնակէր՝ պահօք և աղօթիւք, տքնութեամբ և արտասուօք և գետնախշտի անկողնօք, աղաչելով զԱստուած 'ի տուէ և 'ի գիշերի վասն փրկութեան անձին իւրոյ։ Յետ այնորիկ գնայր նա 'ի Մելէպօլիս ուր Դանիէլ մարգարէ զտեսիլն ետես և անդ 'ի բնակչաց երկրին հարկաւորեալ ձեռնադրեցաւ եպիսկոպոս Բիթբաղակոյ քաղաքին 'ի Բիթբաղաթայ եպիսկոպոսապետէ։ Եւ երթեալ անդ՝ ոչ ընկալան զնա քաղաքացիքն այն, քանզի հրոյ և արեգական սպաս տանէին։ Եւ հալածեալ նորա անտի անէծ զքաղաքն, ոչ վասն հալածմանց իւրոց, այլ վասն ոչ հաւանելոյ աւետարանական քարոզութեան նորա և հաւատոյն Քրիստոսի։ Եւ յետ սակաւ աւուրց բարկացեալ թագաւորն Պարսից քաղաքացեացն, և հրամայեաց այրել զքաղաք նոցա. երեք հարիւր փղովք առաքեաց զօրս յատակել 'ի հիմանց։

Persepolis

Իսկ երանելի եպիսկոպոսն Մելէս գնաց յԵրուսաղէմ. և անտի իջեալ յԱղէքսանդրիա քաղաք և յԵգիպտոս, և ետես զմեծն Անտոնիոս զանապատականն, և ոչ ինչ բարձեալ ունէր նա ընդ ինքեան բայց միայն աւետարան մի և գաւազան։ Եւ հրամանաւ Անտոնի երանելւոյ դարձաւ միւսանգամ 'ի Պարսիկս։ Եւ 'ի ճանապարհի մինչդեռ գնայր յանապատ ուրեմն, յայրի եհաս նման օթեվանս, յորում կայր բնակեալ միայնակեաց մի անապատաւոր. և էր անդ վիշապ մի որջացեալ։ Իսկ երանելի եպիսկոպոսն աղօթիւք սատակեաց զնա, և վաղվաղակի նոյնժամայն հերձաւ վիշապն։ Եւ ասէ անապատական միայնակեացն. Բազում ժամանակ է զի 'ի միասին բնակեաք ես և գազանդ յայրի աստ, և ոչ ինչ վնասեաց ինձ։ Եւ ասէ ցնա երանելին Մելէս. Թշնամութիւն եդ Աստուած՝ նորա և մարդոյն, և ոչ էր պարտ բնակակից լինել քեզ թշնամւոյ քո։ Եւ փոխեաց զնա 'ի տեղւոջէն յայնմանէ, և ինքն եկեալ հասանէր [1] առ երանելի սքանչելագործ եպիսկոպոսն Յակոբ։ Եւ սուրբն Յակոբ մարգարէացաւ նմա եթէ մարտիրոսութեամբ վախճանելոց ես։ Եւ տեսեալ զսուրբն Յակոբ զի եկեղեցի շինէր, քանզի առաջինն փոքր էր, և 'ի բազմանալ հաւատացելոցն խորհեցաւ մեծացուցանել զտաճարն Աստուծոյ որպէս և հրաման առ 'ի Տեառնէ 'ի ձեռն հրեշտակի սրբոյ. և զի ոչ ինչ ունէր ընդ ինքեան սուրբն Մելէս բայց միայն զաւետարանն, և փոխ առեալ 'ի վաճառականացն որ յերկրէ իւրմէ էին՝ երեք հարիւր դենարս, և ետ օգնութիւն վասն շինութեան եկեղեցւոյն։

Եւ զկնի այնորիկ ելեալ առ սուրբն Մարուդէ 'ի վանս նորա՝ ողջոյն տալ նմա և եղբարցն և դառնալ յաթոռ իւր։ Եւ յելանել սրբոյն անտի՝ ժողովեցան եղբարքն ամենայն և ողջոյն ետուն միմեանց։ Եւ յորժամ ողջունեցին զմիմեանս՝ ասէ սուրբն Մարուդէ. Ո՛վ այր Աստուծոյ, որ դու երբէք մարդկան ակն ոչ առնուս, ահա գնաս դու յերկիրն Արևելից և յանդիմանես անդ զՓիլիպպոս, որ նստեալ է պատրիարք յանձնէ իւրմէ վասն ամենայն չարեաց իւրոց, քանզի ոչ ընդունի նա սիրով զխրատ քո և դու նզովես զնա չարաչար, և գօսանայ մի կողմ նորա։ Յայնժամ սուրբըն Մելէս պատասխանի ետ և ասէ. Ողջոյն քեզ, ծեր հոգևոր, որ տեսեր զօձն անիծեալ և զծնունդ նորա, և զպատակումն իւր և զկորուստ ծննդեան նորա։ Յայնժամ ասէ սուրբն Մարուգէ. Ուստի՞ եղև քեզ այդ, եղբայր, թէ տեսի ես զայդ։ Ասէ սուրբն Մելէս. Որ յայտնեաց զիմն քեզ, նա յայտնեաց ըզքոյն ինձ։ Ասէ ցնա սուրբն Մարուգէ. Երանի է քեզ, եղբայր իմ Մելէս, զի մերձեալ է ժամանակ մարտիրոսութեան քո, նմանապէս Պօղոսի որ պսակեցաւ 'ի ձեռաց Ներոնի ամպարշտի, յանդիմանես զանօրէնս և վկայես վասն Տեառն քո, և առնուս պսակ փառաց։ Եւ իբրև եկաց առ մեզ աւուրս երկուս՝ ողջոյն տուեալ ծերոյն առ հասարակ ամենայն եղբարցն և յուղարկեցաք զնա արտաքոյ վանացն։ Եւ ասէ ցմեզ. Աղօթս արարէք, զի արժանի արասցէ զմիմեանս տեսանել առաջի Աստուծոյ, քանզի յայսմ կեանս ոչ եմք հանդերձեալ տեսանել զմիմեանս։

---

[1] Միւս օր. հասանէր 'ի Մծբին քաղաք։

Եւ իջեալ 'ի Տիքսիփոն որ է Տիսփոն, և գտանէր բազմութիւն եպիսկոպոսաց ժողովեալ զի վիճէին ընդ եպիսկոպոսապետին։ Եւ ծանեաւ սուրբն Մելէս զի անիրաւութեամբ և ամբարտաւանութեամբ վիճէր եպիսկոպոսապետն ընդ եպիսկոպոսունս իւր. և յանդիմանեաց զնա սուրբն Մելէս գրովք և աստուածային վարդապետութեամբ։ Եւ ասէ անուանեալ եպիսկոպոսապետն ցՄելէս. Ո՛վ յիմար, դու ուսուցանես զիս զոր գիտեմ։

Եւ երանելւոյն Մելէսի[1] բացեալ զաւետարանն ասէ. Սա ուսուցանէ և ոչ ես։ Եւ եդեալ եպիսկոպոսապետն այն զձեռն 'ի վերայ աւետարանին՝ ասէ. Ասա մեզ, աւետարան, զինչ ասելոց ես՝ ասա։ Իսկ երանելին Մելէս համբուրեաց միւսանգամ զաւետարանն և եդ 'ի մախաղ իւր, և ասէ ցեպիսկոպոսն ցայն. Որովհետև անարգեցեր զբան Տեառն քո՝ դատ արասցէ քեզ Աստուած։

Յայնժամ եղև որոտումն մեծ և եկն կայծակն հրացայտ փայլատակմամբ, և անկաւ 'ի վերայ նորա, և չորացաւ աջոյ կողմն նորա։ Եւ յանցանելն երանելւոյն ընդ մէջ քաղաքին՝ բազում հիւանդս աղօթիւք բըժըշկեաց, և բազումք հաւատացին 'ի Քրիստոս և եղեն քրիստոնեայք։ Եւ զոմն մի ստեռունն[1] բանիւք բորոտեցոյց։

---

[1] Միւս օր. Մէլքոսի։

Եւ հասեալ 'ի գետ մի անհնարին խորութեամբ, և տեառնագրեալ նշանաւ խաչին անց 'ի վերայ գետոյն խոնաւութեան ջուրցն հողաթափօքն իբրև 'ի վերայ ցամաքի. և գնաց 'ի քաղաքն Մեղեկերտ, և արգելեալ զմարդիկ երկիր պագանել արեգական և զոհել հրոյ։ Եւ իշխան քաղաքին այնմիկ որոյ անուն էր Միտափարէս լուաւ վասն նորա, և բարկացեալ յոյժ հրամայեաց կոչել զնա։ Եւ երթեալ կալան զնա և կապանօք ածին առաջի նորա պարաւանդեալ ձեռօք և ոտիւք։ Եւ բարկացեալ իշխանն, և ինքն յարուցեալ՝ իւրով սուսերաւն եհար զկուրծս սրբոյ եպիսկոպոսին։ Նոյնժամայն և Իքաս եղբայր իշխանին եհար սուսերաւ զսիրտ նորա։ Եւ երանելին ասէ ցնոսա. Եթէ վաղիւն յայսմ ժամու և դուք սատակելոց էք 'ի ձեռաց միմեանց։ Եւ եղև որպէս ասաց երանելին. 'ի վաղիւն հեծեալ էին երկոքին յերիվարս իւրեանց որսոց ինչ, և ահա այծեամն մի երևեալ առաջի նոցա, և ընթացեալ մին ընդ մի կողմն այծեմանն և միւսն ընդ մի, և լարեալ զաղեղունս ձգեն զնետս. և այծեմանն ոչ ինչ վնասեալ, և հարեալ զմիմեանս սատակէին, և անկեալք յերիվարացն մեռան չարաչար։ Եւ կատարեցաւ առ նոսա բան մարգարէին, որ ասէ, թէ՝ Սուրք նոցա մտցեն 'ի սիրտս նոցա և աղեղունք նոցա փշրեսցին։ Եւ զսուրբն Մելէս թաղեցին աշակերտք իւր մեծաւ պատուով, և ընկալաւ սուրբն զանթառամ և զանապական պսակն ըստ բանին Մարուգէի, զոր յառաջ մարգարէացաւ։

Իսկ զՆերսէս զեղբայր սրբոյն և զերկոսին զաշակերտս նորա զքահանայն Եբբօրի և զՇինու[2] սարկաւագն՝ քարկոծեցին. և նոքա բարի խոստովանութեամբ կատարեցան, և եդին զնշխարս նոցա հաւատացեալք ոմանք 'ի քաղաքին Մեղկանա, յորում բազուամ նշանք լինէին, և ոչ ևս թշնամիք յարձակեսցին 'ի քաղաքն յայն և 'ի գաւառն:

---

[1] Այսպէս յօր. Թուի ապերասան։

[2] Միւս օր. Շէնու։

Կատարեցաւ սուրբ եպիսկոպոսն յամսեանն նոյեմբերի երկոտասան: Սա է զոր յիշատակեն 'ի կատարածի ճառին Յակոբայ Մծբնայ եպիսկոպոսին, որ և արժանի իսկ եղև զանեղծութեան պսակն ընդունել 'ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ: Վերին քաղաքին քաղաքացին, որ բազում և զանազանս եցոյց Աստուած 'ի ձեռն աղօթից նորա նշանս 'ի կենդանութեան, և յետ կենաց 'ի ձեռն սուրբ նշխարաց սորա, որ կուսութեամբ և աղօթիւք և արեամբ և ճգնաւոր ժուժկալութեամբ նահատակեցաւ և փառաւորեցաւ: Զի Աստուած զփառաւորիչս իւր փառաւորէ յայսմ աշխարհիս և 'ի հանդերձելումն, որ միշտ երկրպագի և փառաւորի, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Վկայաբանութիւն Սրբոյն Մեռինոսի քահանայի։

Ի յերրորդում ամի անթիւպատութեանն Անդիպատրոսի յաշխարհին աքայեցւոց լինէր հալածումն մեծ. և ժողովլ բազմութեան ազգին Հելլենացւոց 'ի մեհեանս աստուածոցն։ Եւ զկնի անցելոց հնդետասան աւուրց՝ գայր հասանէր տօն ծննդեանն Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ ծնաւ 'ի սուրբ կուսէն Մարիամայ, յաղագս փրկութեան մերոյ տնօրինաբար մարմնանալոյն, զոր տօնեն ամենայն հաւատացեալք փառաւորապէս. և լինէր տօնն այն սուրբ և երանելի և պայծառ և լուսաւոր 'ի ժողովս քրիստոնէից։ Յայնժամ զչարեալ անօրէնին անթիւպատոսի՝ երթեալ մտանէր բռնաբար յեկեղեցին Աստուծոյ, կամեցեալ առնէր զհաւատացեալ քրիստոնեայսն, զի հաւանեցուսցէ զնոսա բազում տանջանօք զոհել աստուածոցն։ Զայս ջանիւք կամէր կատարել անօրէնն և ամպարիշտն։

Յառաջ մատուցեալ մի ոմն 'ի քահանայիցն որում անուն էր Մեռինոս, ազգաւ երևելի և մեծատուն, հանճարեղ և իմաստուն յոյժ, երկիւղած և աստուածասէր յամենայնի, ասէ ցանթիւպատոսն. Ա՛յ վայրենի շուն և գազան չարիմաց, գտիչ և որսորդ չար, ընդէ՞ր ջանաս խափանել զեկեղեցիդ Աստուծոյ։ Եւ դարձաւ 'ի ժողովուրդն, սկսաւ քաջալերել և յորդորել զամենեսեան ասելով. Ո՛վ արք իմաստունք և աստուածասէրք, հաստատուն եղերուք ապաւինելով 'ի վէմ կենդանի՝ որ է Քրիստոս, փութացարուք մրցել յաղագս հաւատոյն ջանի, զի նա է որ շնորհիցէ ամենեցուն որք կայցեն բարեպաշտութեամբ, ժառանգեն զերկնից արքայութիւնն։ Արդ եղերուք քաջք, մնալով անփոփոխելի 'ի հաւատս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. անկցուք առաջի նորա և աղաղակեսցուք. Տէր, ապաւէն եղեր մեր ազգէ յազգ, մինչ չև լերինք հաստատեալ էին, մինչ չև ստեղծեր զերկինս և զտիեզերս. քանզի դու ես յոյս մեր յաւիտենից. փրկեա զմեզ, զի 'ի քեզ յուսացան անձինք մեր։ Զայս լուեալ 'ի մեծէ և յաստուածասէր քահանայէն Մեռինոսէ՝ ամենեքին հաստատէին 'ի հաւատս և 'ի գիտութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Յայնժամ լցեալ ցասմամբ մեծաւ անթիպատոսըն, ելեալ նստէր վաղվաղակի 'ի տեղւոջն որ կոչի Փաւռ, մերձ առ մեհեանս կռոցն որ կոչի Գիմնիսի։ Եւ հրամայէր ըմբռնել զերանելին և ածել զառաջեաւ իւր, ոչ իբրև զսիրելի, այլ իբրև զդատախազ և զթշնամի. քանզի յառաջագոյն բարեկամ և սիրելի էր յոյժ անթիպատոսին։ Արդ իբրև ածին կացուցին առաջի անթիպատոսին, ասէ ցնա անթիպատոսըն. Փութա զոհեա աստուածոյն Գիմնիսեայ, զի բազում բարեպաշտութեամբ զոհք քո ընծայեսցին աստուածոցն 'ի դատաւորութեանս մերում։ Ասէ ցնա սուրբ վկայն Քրիստոսի. Ո՛վ անթիպատէ, ես դիւաց ոչ զոհեմ, այլ բազում բարեպաշտութեամբ և ջանիւ ակն ունիմ Թագաւորին իմոյ ամենակալի, այնմ որ բնակեալն է յերկինս. և նմա միայնոյ երկիր պագանեմ և խնդրեմ զփրկութիւն անձին իմոյ։ Այլ դու, ով անթիպատէ, կռոցդ երկրպագելով՝ չարաչար մահուամբ և դառն տանջանօք 'ի կենացս սատակեսցիս։

Եւ բարկացեալ յոյժ անթիպատոսն, հրամայեաց կախել զնա և քերել։ Եւ մինչդեռ քերէին զկողս սըրբոյն, ասէ ցնա անթիպատոսն. Զոհեա Գիմնիսեայ։ Պատասխանի ետ սուրբն և ասէ. Ոչ զոհեմ, քանզի քրիստոնեայ եմ։ Իսկ դահիճքն ձանձրացեալ լինէին յոյժ 'ի քերելոյ զկողս սրբոյն. և նա առ ոչինչ համարելով զայն՝ յաղօթս կայր և ասէր. Պահեա զիս, Տէր, յորոգայթէ որ թաքուցաւ ինձ 'ի գայթակղութենէ որսողին. քանզի ես պատրաստ եմ 'ի չարչարանս և 'ի նեղութիւնս որ գան 'ի վերայ իմ, վասն անուանդ քո սրբոյ մեծի և ահաւորի, Տէր իմ և Աստուած իմ: Եւ զայս իբրև ասաց՝ հրամայեաց անթիւպատոսն բորբոքել զհնոցն, մինչև եղև իբրև զհուր, և սպասաւորացն կատարեալ զհրամանն՝ եւ առաւել բորբոքէին զհուրն ձիթով և որթով և ձիթենի պտղաբերոք. մինչև բարձրացեալ վերանայր բոցն իբրև կանգունս յիսուն: Զոր եկեալ ետես անթիւպատոսն զբորբոքեալ բոց հրոյն, և յոյժ զահի հարեալ զարհուրեցաւ, և նստեալ 'ի տեղւոջն՝ հրամայեաց բերել զերանելին և արկանել 'ի հնոցն. և իբրև եկն՝ տեսեալ զհուր հնոցին՝ հայեցաւ յերկինս, աղաղակեաց 'ի ձայն մեծ և ասէ. Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր, և հաներ զմեզ 'ի հանգիստ քո, Տէր:

Եւ արկեալ զերանելին Մեռինոս 'ի հուր հնոցին մինչդեռ փառաւորէր զԱստուած. և նա շրջէր 'ի մէջ հնոցին իբրև 'ի թագաւորական առագաստի: Քանզի տեսանէին բազումք զի արք երկու փառաւորագոյնք շրջէին ընդ նմա և պահէին զնա 'ի հրոյն, և ոչ տային վնասել նմա. և երանելին աղօթէր 'ի մէջ հնոցին և ասէր. Փառք քեզ Աստուած, փառք քեզ թագաւոր յաւիտենական, որ առնես զսքանչելիս մեծամեծս միայն, զի յաւիտեան է ողորմութիւն քո. դու ես որ խնկզւանէ ստեղծեր զնախահայրն Ադամ, և եդիր զնա 'ի դրախտին փափկութեան. դու և զաղօթսն Նինուէացւոցն ընկալար, և դարձուցեր 'ի նոցանէն զվճիռ մահուն. դու և 'ի Բաբելոնի հնոցին փրկեցեր զերիս մանկունսն իջանելով քո առ նոսա, և ցրուեցեր զհուր հնոցին կիզելով զքաղդէացիսն. վասն որոյ այժմ աղաչեմ զքեզ Աստուած, որ եսդ յառաջ քան զյաւիտեանս, դու ցրուեա զհուր հնոցիս 'ի թշնամիս քո՝ հրկէզ առնելով զնոսա, զի փառաւորեսցի անուն քո յաւիտեան:

Եւ 'ի նմին ժամու ցոլացեալ հուրն 'ի հնոցէ անտի, կիզեաց զբազումս 'ի հելլենացւոց անտի, արս թուով իբրև հարիւր և յիսուն. իսկ անթիւպատոսն իբրև ետես զեղեալ սքանչելիսն, յարուցեալ վաղվաղակի փախստական լինէր 'ի տեղւոջէ անտի, և հայեցեալ յետս տեսանէր զսուրբն Մեռինոս 'ի մէջ հրոյն պարելով որպէս յառագաստի։ Եւ արք երկու լուսեղէնք ընդ նմա, որոց կերպարանքն պայծառագոյնք փայլէին որպէս զճառագայթս արեգականն, ընդ որ հիացեալ յոյժ և զարհուրեալ անթիւպատոսն, հրամայեաց սպասաւորացն զի երթեալ հանցեն զսուրբն և տարցեն 'ի բանտ. և ինքն խորհուրդ արարեալ ընդ խորհըրդակիցսն չարեաց, թէ որպէս կորուսցեն զերանելին դառն տանջանօք։ Իսկ չարին պաշտօնեայք և խորհըրդակիցք՝ յորդորմամբ բանսարկուին պատասխանի տուեալ ասեն. Հրամայեսցէ քո քաջութիւնդ զի հանցեն փոխս զմորթ մարմնոյ նորա։ Եւ դատաւորին հաճոյ թուեցեալ բանք խորհրդակցացն, նստէր դարձեալ 'ի տեղի ատենին. և հրամայեաց ածել զմեծ նահատակն Քրիստոսի զսուրբն Մեռինոս, իբրև զապստամբ և զանհնազանդ եղեալ հրամանաց թագաւորին։

Եւ մինչդեռ բերէին՝ սուրբն սաղմոսէր և ասէր. Լուր ինձ Տէր, զի քաղցր է ողորմութիւն քո, ըստ բազում գթութեան քո խնայեա յիս և մի դարձուցանես զերեսս քո 'ի ծառայէ քումմէ. զի նեղեալ եմ ես, վաղվաղակի լուր ինձ, Տէր, և իրաւ արա ինձ 'ի փրկութեան քում։ Եւ եկեալ 'ի տեղին ուր նստէր անթիւպատոսն, տեսին զերեսս նորա ամենեքեան պայծառացեալ, որ փայլէր իբրև զարեգակն։ Այլ ասէ ցնա. Դո՞ւ իցես Մեռինոսն, որ կախարդութեամբ քով զհուրն շիջուցեր, և զբոց հրոյն ցրեցեր և զբազումս կորուսեր կիզմամբ հրոյ։ Սուրբն Մեռինոս ասէ. Այո ես իցեմ, որ յանուն Աստուծոյ և Քրիստոսի նորա, զմեքենայս հօրն քո սատանայի ցրուեալ կործանեցի։ Ասէ ցնա անթիւպատոսն. Արդ յայսմհետէ ոչ ներեցից քեզ, այլ հրամայեմ զի զմորթս մարմնոյ քո փոխս հանեալ՝ ձևացուսցեն իբրև զլարս, զի յայտնի լիցի ամենեցուն արուեստ կախարդութեան քո։ Պատասխանի ետ Մեռինոս և ասէ. Արա զոր ինչ հաճոյ թուեսցի կամաց քոց. քանզի և հայրն քո սատանայ այսպիսի արիւնարբութեամբ հարստանայ։

Յայնժամ անթիւպատոսն զայրացեալ յոյժ, հրամայեաց լարահատացն՝ զի հանցեն զմորթ մարմնոյ երանելւոյն։ Եւ մատուցեալ անօրինացն պատառեցին զմորթն իբրև զփոկս, սկսեալ 'ի թիկանց երանելւոյն մինչև ցգարշապարս սուրբ ոտիցն։ Իսկ սուրբն և առաւել սուրբն, ոչինչ փոյթ առնէր զայնմանէ. այլ իբրև օտար մարմնով ընկալեալ զչարչարանսն, յաղօթըս կայր և ասէր. Համբերելով համբերի Տեառն, հայեցաւ առ իս և լուաւ ձայնի աղօթից իմոց. Եհան զիս 'ի գբոյ տառապանաց 'ի կաւոյ և 'ի տղմոյ. հաստատեաց 'ի վերայ վիմի զոտս իմ, և ուղղեաց զգնացս իմ։ Եւ կատարեալ զաղօթսն՝ գոհանայր զՏեառնէ. և այնպէս անհնարին դառն տանջանաց համբերեալ քաջ և արիագոյն նահատակն Քրիստոսի սուրբն Մեռինոս, մինչև ամենայն բազմութիւն ժողովրդեանն զարհուրեալ յոյժ։ Եւ նա տարեալ համբերութեամբ ամենայնի, իբրև զանմարմին 'ի մարմնի գոլով փառաւորէր զԱստուած։

Եւ ձգեալ զձեռն իւր երանելին՝ առ զմի 'ի լարից մարմնոյն իւրոյ, և հար զերեսս դատաւորին ասելով. Ո՛վ անօրէն և ամպարիշտ և թշնամի ամենայն արդարութեան, ո՞րպէս խրոխտալով նստեալ դատիս ըզմարդ՝ մարմնաւոր իբրև զքեզ, և հրամայես լարս հանել իբրև զմորթս անասնոց, և պերճացեալ ցնծաս 'ի վերայ հեղման արեան մարմնոյ իմոյ. ո՞չ գիտես, եթէ այսմ ամենայնի համբերեմ վասն յուսոյն Աստուծոյ, և կրեմ զչարչարանս՝ զի առից զպսակն կենաց ընդ հաճոյացեալսն և ընդ կամարարս սուրբ անուան նորա։ Այլ դու մի՛ ակն ունիցիս ապրել 'ի ձեռացն Աստուծոյ, ո՛վ անօրէն և անիմաստ և անպիտան Աստուծոյ և մարդկան. վասն որոյ առեալ զմորթ մարմնոյ իմոյ պահեսցես, որ բերելոց է քեզ զտանջանս և զչարչարանս յաւիտենականս, որում ոչ կարասցես համբերել բարկութեանն Աստուծոյ։

Յայնժամ անթիւպատոսն բարկացեալ հրամայեաց ձգել ճանկս երկաթիս և քարշել զմիս մարմնոյ սրբոյ վկային արտաքս յոսկերացն, մինչև քանցեալ ելցեն և ոսկերքն ընդ նմին։ Եւ դահճացն կատարեալ զհրամանն, անողորմաբար տանջէին։ Իսկ երիցս երանելին բազում համարձակութեամբ և անխափան մօք զաչս յերկինս համբարձեալ՝ ասէր այսպէս. Որ Թագաւորդ ես և Աստուած յաւիտենական, որ փառաւորեալդ ես յամենայն զօրաց երկնաւորաց, որ շնորհես քաւութիւն ամենեցուն որք անխարդախ սրտիւ և հաւատով խոստովանին զանուն քո սուրբ. դու Տէր Աստուած իմ, հաճեաց ընդ տառապանս իմ, և արա զիս արժանի ժառանգել զփառս քո զանվախճան։ Եւ 'ի նմին ժամու ձայն եղեւ յերկնից՝ որ ասէր. Ահա փառաւորեցար յերկինս աստուածային սուրբ փառօքն, և պատրաստեցաւ քեզ տեղի յարքայութեանն Աստուծոյ, որով լինիցիս 'ի բազում խաղաղութեան. զի զընթացս նահատակութեան քո բարւոք կատարեցեր։ Եւ լսելի եղեւ ձայնս այս ամենեցուն առ հասարակ, ոմանք ասէին՝ Հրեշտակ խօսեցաւ ընդ նմա. այլք ասէին՝ Գործով կախարդութեան ափշեցուցանէ զամենեսեան. այլք ապա այլ ինչ խօսէին։ Իսկ անթիւպատոսն բնաւին կախարդութիւն համարէր զեղեալ ձայնն, և ասէր ցերանելին Մեռինոս. Գաղարեա այսուհետև 'ի կախարդութեանց քոց և զոհեա աստուածոց, մանաւանդ մեծին Դիոնիսեայ, ապա թէ ոչ զոհեսցես՝ գիտասջիր թէ գազանաց կերակուր տամ արկանել զմարմինդ քո։ Սուրբն Մեռինոս ասէ. Արա զոր ինչ հաճոյ թուիցի քեզ, ահաւասիկ կամ առաջի քո. բայց գիտասջիր զի ես քրիստոնեայ եմ և զիւաց ոչ զոհեմ։

Յայնժամ հրամայեաց անթիւպատոսն տանել զնա 'ի բանտ, և 'ի վաղիւն կազմել զթէատրոնն զի զսուրբըն գազանակուր արասցեն։ Արդ 'ի վաղիւն ժողովեալ զամենայն բազմութիւն ամբոխին, ոչ միայն տեսանել զչարչարանս սրբոյն Մեռինոսի, այլ զմարգարէութիւնն Աստուծոյ որ լինելոց էր 'ի վերայ նորա։ Իսկ իբրև ածին զերանելին 'ի թէատրոնն, տեսանէին ամենեքեան զի անարատ և ամբողջ մարմնով, և զուարթերես կայր իբրև զառաջինն, որպէս զի ոչ ճանաչել ումեք՝ եթէ կրեալ իցէ բնաւ զչարչարանս։ Եւ իբրև եկն եմուտ յազպարէս թէատրոնին և եկաց 'ի մէջ ամբոխին, արարեալ զնշան խաչին Քրիստոսի 'ի վերայ երեսաց իւրոց, և սկսաւ ասել այսպէս. Զայնիւ իմով ես առ Տէր կարդացի, ձայնիւ իմով զՏէրն աղաչեցի, և նա եղև ինձ 'ի փրկութիւն։ Եւ զայս ասացեալ մատուցին 'ի հարցափորձութիւն առաջի անթիւպատոսին։ Ասէ ցնա անթիւպատոսն. Մեծ են կախարդութիւնք քո, Մեռինոս։ Սուրբն Մեռինոս ասէ. Մեծագոյնք են դատաստանքն Քրիստոսի։ Եւ նոյնժամայն հրամայեաց անթիւպատոսն՝ արձակել նմա արջ մի դժնդակ և գիշախանձ, որ ըսպանեալ էր զբազում 'ի մահապարտացն։ Եւ իբրև ածին արձակեցին նմա զգազանն, մռնչեաց իբրև զառիւծ, և ընթացեալ եկաց 'ի մէջ թէատրոնին իբրև ժամս երկուս և ոչ բնաւ մերձեցաւ 'ի սուրբն, այլ դարձաւ եմուտ 'ի գառագիղն իւր։

Դարձեալ հրամայեաց դատաւորն զի արձակեսցեն նմա առիւծ մի որ ևս մեծագոյն էր քան զամենայն, զոր ոչ ոք երբէք էր տեսեալ այնպիսի. քանզի յահէ դժնդակութեանն նորա բազումք զարհուրեալ մեռան։ Որոյ ընթացեալ եկն առաջի սրբոյն, և խոնարհեցուցեալ զծունկսն՝ եդ զգլուխն 'ի գետնի, և երկիր եպագ սրբոյն գոչելով և մռնչելով. և դարձեալ 'ի վեր հայեցեալ տեսանէր զամբոխն հանդերձ անթիւպատոսիւն և մռնչելով զարհուրեցուցանէր զամենեսեան. և դառնայր առ կապանս սրբոյն՝ զոր կապեալ էին երկաթի կապանօք, և ատամամբք կտրեալ 'ի բաց ընկենոյր 'ի նմանէ վաղվաղակի. և սկսաւ խօսել մարդկօրէն բարբառով և ասէ ցանթիւպատոսն. Ահա յանուն ահաւորին և անապականին Աստուծոյ՝ յանդիմանին և կշտամբին անասուն բնութիւնք քո. քանզի հուրն և ամենայն տեսակ տանջանաց և բնութիւնք գազանաց վայրենեաց ճանաչեցին զամենեցունցն Աստուած, զնորոգօղն և զստեղծիչն. և հրամանաւ նորա հնազանդին այնոցիկ՝ որ կատարեն զընթացս իւրեանց վկայութեամբ մարտիրոսութեանն՝ յաղագս հաւատոցն և սիրոյ նորա, օգնական ունելով զզօրս երկնային հրեշտակացն, որպէս և կան բազումք առընթեր սրբոյս այսորիկ. վասն որոյ և ես յանդիման առեալ 'ի Տեառնէ՝ յանդիմանեմ զքեզ այսօր. զի ահա յայսմհետէ դառն տանջանօք և չարաչար մահուամբ սատակեսցիս 'ի կենացս։

Եւ նոյնժամայն որոտմունք եղեալ և ճայթմունք մեծամեծք, մինչ զի ամենեքեան որք էին 'ի թէատրոնին զարհուրեալք և դողացեալք գոչէին մեծաձայն իբրև ընդ մի բերան և ասէին. Մեծ է Աստուածըն քրիստոնէից որ օգնական եղև մարդոյս այսմիկ. զի ահաւասիկ գիտացաք և ծանեաք ամենեքեան, թէ ոչ գործովք կախարդութեան կամ մոգութեան՝ սանձին զօրութիւնք հրոյ և կամ հնազանդին բնութիւնք գազանաց և կամ խափանին տեսակք տանջանաց և չարչարանաց։ Արդ, ով անթիւպատէ, արձակեա զարդարդ զայդ, զոր և գազանք վայրենիք պատուեալ պատկառեն 'ի դմանէ, և կեցո զանձն քո յայսմհետէ։ Եւ այսպիսի ձայնիւ մեծաւ աղաղակեալ ամենեցուն յաղագս փրկութեան արդարոյն։ Իսկ անթիւպատոսն պատասխանի տուեալ ասէ. Ոչ կարեմ արձակել զդա, այլ առաքեմ յաքսորս 'ի կղզին Կիզիկոն ըստ հրամանի ինքնակալին։

Յայնժամ սուրբն Մեռինոս աղաղակեաց 'ի ձայն մեծ, մինչդեռ կայր առիւծն մերձ առ նմա և ասէ. Օրհնեալ է Տէր և փառաւորեալ յաւիտեան, որ ետ յաղթութիւն աղքատութեանս իմոյ, և զբազում չարչարանս անօրինացն յամօթ արար. և համբերութեամբ զսիրելիս իւր պսակեաց Հոգւովն սրբով։ Դու նոյն ինքն Տէր և Աստուած իմ, որ յամենայն տեղիս խնդրիս և վաղվաղակի գտանիս, և այժմ վաղվաղակի թափանցիկ լուսով Հոգւոյդ սրբոյ ընկալ զհոգի ծառայիս քո, զի գտից զհանգիստն մշտնջենաւոր 'ի բարերարութենէդ քումմէ, և հանդերձ խաղաղութեամբ և յուսով մեծաւ։ Եւ զայս ասացեալ երանելոյն, տեսանէին զի լայր առիւծն առաջի ամենեցուն, և երկրպագեալ սրբոյն մատնէր 'ի գառագիղն իւր։ Իսկ անթիւպատոսն յարուցեալ կամէր գնալ 'ի տեղւոջէ անտի, և ելեալ նստէր 'ի կառսն. և նոյնժամայն հասանէր բարկութիւն յԱստուծոյ 'ի վերայ նորա, և չարաչար կատաղմամբ զայրացեալ սկսաւ ատամամբք իւրովք ուտել զմարմին իւր, և յարձակեալ առ զսուսերն և սպան զանձն իւր. այսպէս բարձաւ չարն չարաւ 'ի միջոյ։

Յայնժամ սպասաւորք դատաւորին առեալ տանէին զերանելին և զսուրբ վկայն Քրիստոսի Մեռինոս 'ի կղզին Կիզիկոն, զի կատարեսցէ անդ զընթացս մարտիրոսութեանն իւրոյ նախախնամութեամբն Աստուծոյ։ Եւ մատուցին զսուրբ վկայն առաջի այնմ անթիւպատոսին՝ որ էր իշխան կղզւոյն այնորիկ. և նորա տեղեկացեալ և ստուգեալ զամենայն որ ինչ եղեն, հրամայեաց ընդ սրոյ պատուհասիւ արկանել զսուրբըն, գրեալ վճիռ 'ի վերայ նորա այսպիսի օրինակաւ. Զայրս զայս աստուածոցն անհնազանդ եղեալ և հրամանաց ինքնակալ թագաւորացն ոչ հաւանեալ՝ յետ բազում ժամանակաց տանջանաց և հարուածոց հրամայեն օրէնքն սրով սպանանել։ Եւ ինքն յարուցեալ գնաց։

Եւ առեալ տանէին զսուրբ վկայն Քրիստոսի և զերիցս երանեալ քահանայն զՄեռինոս 'ի տեղի կատարմանն. և նորա ծունր կրկնեալ յաղօթս եկաց և ասէ. Արեգակն արդարութեան Քրիստոս, որ զշնորհըս Հոգւոյդ սրբոյ պարգևեցեր առաքելոց քոց, ընկալ և զիս խաղաղութեամբ վասն անուանդ քո մեծի և ահաւորի. զի եկեալ ընկալայց 'ի քէն զխոստացեալ պարգևսն։ Եւ ձայն եղեալ յերկնից առ նա՝ որ ասէր. Եկեսցես և հանգիցես խաղաղութեամբ, զի ահաւասիկ բացան քեզ դրունք արքայութեանն երկնից, յոր մտեալ վայելեսցես և առցես զխոստացեալ պարգևսն։ Եւ ձայնս այս լսելի եղեալ ամենեցուն. վաղվաղակի յառաջ մատուցեալ խոնարհեցուցեալ զպարանոցս իւր առաջի սրոյն, և ձգեալ դահճին զսուրն՝ հատանէր զգլուխ մեծի նահատակին և արիագոյն մարտիրոսին և վկային Քրիստոսի։

Կատարեցաւ մեծ քահանայն Մեռինոս յառաջ քան զտասն և չորս կաղանդացն սեպտեմբերի ամսոյ. 'ի թագաւորութեանն Դեկոսի ամպարշտի, և յանթիւպատութեանն Անդիպատրոսի յԱքայիա, և 'ի միւսում անթիւպատութեանն իշխանի կղզւոյն Կիզիկոնի։ Իսկ 'ի մեզ՝ 'ի թագաւորելոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում փառք և պատիւ ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն սուրբ և ճգնազգեաց վկային Քրիստոսի Մերկուրիոսի։

Ի ժամանակս թագաւորութեան Դեկոսի և Վաղերիանոսի[1] 'ի Հռովմ քաղաք, հասարակաց հրամանս առաքեցին զոհել և խնկել աստուածոցն։ Կոչեցեալ ապա զամենայն սինկղիտոսն՝ ծանուցին նոցա զզուգաձայնապէս առ 'ի նոցանէ զօրինադրեալ հրամանսն, և գտին զնոսա համախորհուրդս եղեալ կամաց իւրեանց, ուրախ եղեն յոյժ։ Իսկ և իսկ ապա զթագաւորական գրաւորական և զսինկղիտոսին հասարակաց զհրամանն առաջի դնել հրամայեցին, և առաջադրեցաւ 'ի տաճարին՝ ունելով օրինակ զայս.

Թագաւորք ինքնակալք քաջք և յաղթողք, պաշտօնատարք և բարենշանք, Դեկոս և Վաղենտիանոս հանդերձ սինկղիտոսաւս առ 'ի համաձայն կամաց զբարեգործութիւնս աստուածոցն և զպարգևս ուսեալ միանգամայն և վայելեալ յաղթութեանն որ հակառակ ազգաց 'ի ձեռն նոցա մեզ շնորհեցաւ։ Եւ ոչ միայն այս, այլ և սակս զփարթամ պարգևս, և զանազան պտղոց երկրի և զհամեղութիւն ընկալեալք, բարեգործս զնոսա եղեալք և յաղագս հասարակաց խաղաղութեան. վասն այնորիկ օրինադրեմք միով հրամանաւ, որպէս զի բոլորից հասարակաց՝ ազատից և ծառայից, զինուորեցելոց և գեղջկից բարեմտութեամբ զոհս աստուածոցն մատուցանել առաջի անկեալ և աղաչել։ Իսկ եթէ կամիցի ոք զաստուածեղէն մեր գրաւորութիւնս արհամարհել զհամաձայնաբար առ 'ի մէնջ ստորագրեալ, զայնպիսին հրամայեմք կապանօք արգելեալ լինել, և այնպէս ընդ զանազան տանջանօք արկանել. ապա եթէ հաւանեսցի՝ զպատիւս ոչ սակաւս առ 'ի մէնջ ընկալեալ։ Իսկ եթէ ընդդիմակաց լիցի՝ բազում տանջանօք 'ի ձեռն որոյ կրել զչարչարանս. կամ 'ի խորս ընկենուլ, կամ հաւուց և շանց տալ կերակուր, և առաւել ևս եթէ 'ի քրիստոնէից կրօնս ումանք իցեն՝ պատժիցին. ապա եթէ աստուածայնոց մերոց հաւանել աւանդութեանց, պատուոյ և պարգևաց արժանասցին բարի գործելով։

---

[1] Յօր. ուրեք ուրեք Վաղենտիանոսի։

Իսկ առաջինն գրեցելոց թագաւորական գրոյ՝ ամենայն քաղաքք խռովութեամբ լցաւ. յամենայն քաղաքս զանաստուած զգիրն զայն բերեալ առ հասարակ խռովէին։ Դէպ եղև ըստ այնմ ժամանակի պատերազմ յառնել 'ի վերայ Հռովմայեցւոցն առ 'ի բարբարոսաց. պատրաստել զինքեանց զինուորութիւնս թագաւորացն Ճակատել նոցա հրամայեաց, որոց ամենայն քաղաք նստելոց դրօշուց առ 'ի մարտակցութիւն հասանել։ Եւ ապա իւրաքանչիւր քաղաքաց և գաւառաց հասեալ յայնպիսի պատերազմի կազմութիւն, եհաս և ապա ասացելոցն Մարտինոսացւոցն թիւ

Martensis

եղելոցն ընդ Առաջին Հայոց ընդ Տրիբունաւն՝ որոյ անուն Սատուռնելիոս։ Ելանելով ապա Դեկաւ 'ի պա-

Saturninus

տերազմ, Վաղերիանոս պարծիւր 'ի Հռովմ հասանել. և պատերազմին գումարեցելոց բարբարոսաց և Հռովմայեցւոց յարձակեցաւ. ապա ժամանակս բազում յամելով նոցա։ Ապա 'ի դաշտին տեսիլ երևեցաւ ումեմն որ էր 'ի թուոյ Մարտինոսացւոյ որոց եղելոց ընդ Առաջին Հայոց. այր ոմն լուսաւոր և գերամեծար երևէր նմա, յաջոյ ձեռինն սուսեր ունելով, ասելով նմա. Մեռկուրիէ, մի երկիցես և մի զանգիտիցես. քանզի առաքեցայ օգնել քեզ և յաղթող զքեզ ցուցանել. ընկալ ապա զսուրս զայս և մուտ հակառակ բարբարոսաց. և 'ի յաղթելն մի մոռանար զՏէր Աստուած քո։ Իսկ նա 'ի զարմացմանն եղեալ՝ զմի առ յիշխանացն գումարելոցն կարծեաց. և ընկալեալ նորա՝

սրտեալ յարձակեցաւ 'ի վերայ բարբարոսացն. և հարեալ նովաւ զցեղապետն նոցա սպան, և զայլս բազումս կոտորեաց. որպէս զի յոյժ վաստակել բազկի նորա և առ 'ի յարենէն մածնուլ սրոյն 'ի ձեռս նորա. և այնպէս փախեան բարբարոսք՝ իբրև հարան 'ի Հռովմայեցւոց։

Յայնժամ Դեկոսի ուսեալ զմենամարտութիւն առնն, կոչեալ զնա ետ նմա պատիւ ստրատելատութեան՝ կարգեալ զնա իշխան զօրուն։ Եւ կարծեալ Դեկոսի 'ի ձեռն նախախնամութեան աստուածոցն՝ պատերազմին յաղթեալ, բազումս 'ի զօրականացն առաքեալ յիւրաքանչիւր տեղիս. իսկ ինքն 'ի քաղաքն շրջելով պատուասիրեալս լինէր յամենեցունց մեծապէս, զճանապարհն ունելով դէպ 'ի Հռովմ։ Եւ 'ի միում գիշերի ննջելով ստրատելատին, մերձ եկաց առ նմա հրեշտակն Տեառն ըստ ձևոյ առաջնոյն, և խթեալ 'ի կողս նորա զարթոյց զնա. յերկիւղի եղեալ մնաց հիացեալ. և ասէ ցնա հրեշտակն. Մեռկուրիէ, յիշեա զոր ինչ ասացաւ քեզ 'ի գումարել պատերազմին, թէ մի մոռանար զՏէր Աստուած քո. քանզի պարտ է քեզ յաղագս նորա օրինօք ճգնել և պսակ յաղթութեան ընդունել 'ի փառաւորեալ յարքայութեանն ընդ ամենայն սուրբս։ Եւ զայս ասացեալ 'ի բաց եկաց 'ի նմանէ հրեշտակն։

Իսկ նորա եկեալ յինքն և յիշեալ՝ գոհացաւ զԱստուծոյ, քանզի գիտէր 'ի նախնեացն զհաւատս քրիստոնէից։ Եւ հայր նորա Գորդիանոս պռիմիկիւռոս գոլով նորուն դրօշու, ասէր բազում անգամ, թէ՝ Երանի որ զինուորեսցի երկնաւոր թագաւորին, քանզի պարգևի նմա արքայութիւնն երկնից. քանզի թագաւորն այն բոլորակերտեաց բանիւ զամենայն արարածս, և նա է որ հանդերձեալ է գալ դատել զկենդանիս և զմեռեալս, և հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործոց իւրոց։ Յինքն ապա բերեալ զբանս հօրն և զտեսութիւնն որ ինքեան երևեալ, սրտացաւ 'ի Հոգւոյն սրբոյ, սկսաւ արտասուել, խոստովանել և ասել այսպէս. Վա՜յ ինձ մեղաւորիս, քանզի 'ի բարւոյ արմատոյ ծառոյ շառաւեղ գոլով՝ եղէ ցամաքեալ, ոչ ունելով պտուղ զգիտութիւն Աստուծոյ։ Եւ յասել նորա զայս՝

առաքեցաւ առ 'ի Թագաւորէն Սեղէնտրիոս հանդերձ եւ այլովք բազմովք կոչել զնա առ Թագաւորն: Իսկ նորա հրաժարելով՝ ժամադրութիւն արար Թագաւորն ժողովոցն. և 'ի վաղիւ անդր դարձեալ կոչէ զնա. եկաւորեալ ապա նմա և ժողովոցն ընլով, ասէ ցնոսա Թագաւորն. Երթիցուք ամենեքեան առ 'ի յարտեմեան տաճարն և զոհս մատուսցուք բոլորից աստուածոյն: Ապա ժողովելով առ Թագաւորն՝ և Մեռկուրիոս կոչեցեալ երթայր առ Թագաւորն 'ի հրապարակն: Եւ ոմն 'ի մեծամեծացն չարախօսէր զնմանէ առ Թագաւորն, ասելով. Ո՛վ մեծ Թագաւոր, քաջ յաղթող ընտրեալ առ 'ի յաստուածոցն, զԹագաւորութիւն ունելով խաղաղութեամբ, լսելի եղև որ պատուիրեալ առաջի ձերոյ ինքնակալ աջոյդ և փառաւորեալ խաղաղարար մատակարարեալ 'ի Թագաւորէդ զհռովմայեցւոց իրս, սա ոչ եկն ըստ աստուածեան ձերոյ հրամանի 'ի տաճար մեծի աստուծոյն Արտեմեայ, զոհս մատուցանելով յաղագս ձերոյ զօրութեանդ:

Թագաւորն ասէ. Ո՞վ է սա: Կատեղոս հիպարքոս ասէ. Մեռկուրիոս է, զոր պայծառացուցիք և մեծացուցիք յառաջ քան զայլս զանազան պատուով. նա և զայլս յերկուացուցանէ ոչ պաշտելով զաստուածսն, ծանուցանէ ձեզ զրաւ նորա որ ձեզ պատասխանէ: Դեկոս ասաց. Թերևս մախանօք ըմբռնեալ յայրն՝ բարբառեցար զայսպիսիս. այլ ոչ լսեմ քեզ եթէ ոչ ես ինձէն ծանեայց զճշմարիտն, քանզի արժանի հաւատալոյ աչս է քան զականջս. լռեա, մի՛ ապա չար ինչ ունէիր առ այրն. և որպէս ասացաք, եթէ չարակամ իւիք խորհրդով գրգռեալ բարբառեցար զայսպիսիս, վրէժս տացես ոչ սակաւս. իսկ եթէ ճշմարիտ է որ 'ի քէն ասացաւդ՝ պարգևս և պատիւս ընկալցիս յինէն որպէս բարեմտաբար և միամտութեամբ առ աստուածսն: Եւ հրամայեաց նմա գալ առ ինքն պատշաճ պատուով: Որոյ եկեալ ասաց Թագաւորն առ նա. Մեռկուրիէ, ո՞չ ես զքեզ պատուեցի մեծաւ պատուովդ այդուիկ, զօրավար կացուցի զքեզ ամենայն զօրացն, սակս որ առ 'ի քէն կամաւ աստուածոցն լինելով զյաղթութիւն պատերազմին. և զիա՞րդ արհամարհեալ զիմ պատիւն՝ օրինակ լինչ չարաբարութեամբ առընկալար, և զպատիւս իմ արհամարհել կամիս, ոչ երկիր պագանելով աստուածոցն, որպէս ահա լուայ յոմանց:

Իսկ հզօր և քաջ զինուորն Քրիստոսի 'ի բաց մերկացեալ ըստ Առաքելոյ, զհին մարդն հանդերձ գործովք իւրովք և ցանկութեամբք, և զգեցարուք զնորն ըստ Աստուծոյն ստացեալ մկրտութեամբ, և վստահացեալ 'ի Քրիստոս՝ ձայնիւ մեծաւ ասաց առ նա. Ա՛ռ զպատիւս քո զայս յինէն, քանզի ես ըստ պարտեաց Աստուծոյ յայս եկի և յաղթեցի սատանայի, որպէս յաղթեցի բարբարոսացն 'ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. համայն ընկալ զառ 'ի քէնդ՝ որպէս ասացերդ՝ ինձ պարգեւեալ պատիւ. քանզի մերկ ելի յորովայնէ մօր իմոյ և մերկ դարձեալ յայն աշխարհն երթամ: Եւ 'ի բաց մերկացեալ զքղամիդն և լուծեալ զգօտին՝ ընկեաց յոտս թագաւորին աղաղակելով և ասելով. Քրիստոնեայ եմ ես. և ամենեցուն լուեալ թէ քրիստոնեայ է: Յայնժամ Դեկոս բարկացեալ միանգամայն և զարմացեալ ընդ համարձակութիւն նորա, և ընդ գեղեցկութիւն և ընդ մեծութիւն նորա հիացեալ, հրամայեաց արկանել զնա 'ի բանտ, ասելով. Այրս այս ոչ իմացաւ զպատիւն, գոնեա զանպատուութիւն զգասցի. կարծելով այնու հաւանեցուցանել զնա և փոխել 'ի բարեպաշտ խորհրդոյն: Երթալով վկային 'ի բանտն՝ գոհանայր և ցնծայր փառաւորելով զԱստուած:

Եւ 'ի գիշերին յայնմիկ առաքեցաւ նմա հրեշտակ 'ի Տեառնէ ասելով. Քաջալերեա, Մեռկուրիէ, և մի զանգիտեր, հաւատա 'ի Քրիստոս զոր խոստովանեցար Տէր, քանզի զօրաւոր է առ 'ի փրկել զքեզ յամենայն նեղութեանց. և սուրբ վկայն Քրիստոսի տեսլեամբ հրեշտակին առաւել զօրացաւ: Եւ 'ի վաղիւն նստաւ Դեկոս 'ի վերայ բեմին, հրամայեաց ածել զնա և յանդիման կացուցանել. ասէ ցնա. Այդպէս քեզ վայելէ պատիւ՝ վասն չար բարուցդ: Սուրբ վկայն ասէ. Այո, այսպէս վայելէ ինձ պատիւս այս. քանզի զանցաւորս առեր, իսկ որ յաւիտենականն է՝ մնայ. փոխանակ այդոցիկ որ 'ի քէն՝ 'ի Քրիստոսէ ընդունիմ։ Թագաւորն ասէ. Ասա դու ինձ զազգն քո և զհայրենիսն։ Իսկ նա ասէ. Զճշմարիտ հայրենիսն իմ ես ասեմ քեզ. հայր իմ Գորգիանոս կոչիւր, սկիւթացի յազգէ, զինուորեալ 'ի գրոշու Մարտինոսացւոց. իսկ հայրենիքն իմ յոր փութամ՝ երկնաւորն Երուսաղէմ, որ է քաղաք երկնաւոր Թագաւորին։ Թագաւորն ասէ. Անունդ այդ 'ի ծնողաց կոչեցաւ թէ 'ի զինուորութեանդ։ Սուրբն ասաց. Ի զինուորութեանն, 'ի տիրոնէէն կոչեցայ Մեռկուրիոս։ Թագաւորն ասէ. Զինչ ապա ասես ըստ հրամանաց տուելոյ[1] ամենայն մարդկան. երկիր պագանես աստուածոցն՝ առընդունելով քո զառաջին պատիւն, եթէ մանաւանդ հաճոյ է տանջանօք մեռանել. ասա վաղվաղակի, գիտելով թէ վասն այնորիկ կոչեցար։ Մեռկուրիոս ասաց. Հաճեալ եմ ընդ տանջանս որ վասն Քրիստոսի, որպէս ասացեր, և յայս եկաւորիմ՝ զի յաղթեցից քեզ և բանսարկուին գտողի ամենայն չարեաց. և պսակ յաղթութեան առից առ 'ի մարտադրէն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Մի յապաղեր և մի յամեր, այլ կատարեա զհաճոյսն քո, քանզի առի ես զպատուազինութիւն հաւատոյ և զվահանն Աստուծոյ՝ որով յաղթեցից ամենայն հնարաւորութեան շարժելոց հակառակ ինձ։ Յայնժամ Թագաւորն սրտմտեալ և բարկութեամբ լըցեալ՝ ասէ. Վասն զի ասացեր՝ զէն և ասպար ունելով, մերկ գոլով հրամայեմ քեզ ձգիլ 'ի չորս հեղոյս և բարձրանալ յերկրէ։ Այսոցիկ եղելոց տանջանաց՝ ասէ ցնա Թագաւորն. Երդուեալ 'ի գլխն, զի մեծապէս ձգեցար։ Իսկ սուրբն Մեռկուրիոս հայեցեալ յերկինս ասաց. Տէր Յիսուս Քրիստոս, օգնեա ինձ ծառայի քո։ Եւ Թագաւորն հրամայեաց սուր դանակաւ հատանել և կտրել զմարմին նորա, և յետ այսորիկ 'ի վերայ հրոյ տարածանել. և յաճախութեամբ արեանն հուրըն շիջանէր և սուրբն հզօրապէս ժուժկալեալ տեսեալ այնպիսի տանջանացն։ Իսկ Դեկոս հրամայեաց լուծանել զնա զի մի վաղվաղակի մեռցի, և ուրեք 'ի խաւարային տան արգելուլ զնա զգուշութեամբ։ Բարձեալ այնուհետև ընկեցին զնա 'ի տուն, սուղ

---

1. Յօր. տանելոյ։

ինչ վերջնչումն ունելով, կարծեցեալ յետ սուղ ինչ մեռանել:

Իսկ 'ի գիշերին յայնմիկ երեւեալ նմա հրեշտակն Տեառն ասելով առ նա. Խաղաղութիւն ընդ քեզ, հըզօր ճգնաւոր. և մերձեցեալ 'ի նա՝ արար զնա ողջ, բժշկեալ զվէրս մարմնոյն. որպէս զի յառնել նմա և փառս վերառաքել Աստուծոյ երեւեցելոյն նմա: Լուեալ ապա Դեկոսի թէ կենդանի է երանելին՝ հրամայեաց ածել և յանդիման կացուցանել զնա իւր. և տեսեալ զնա ասէր. Մեռեալդ և բարձեալդ առ 'ի մէնջ՝ ո՞րպէս այժմ զգնայ, թերեւս ոչ սպի ունի 'ի մարմնի իւրում. և հրամայեաց զինուորացն մերկացուցանել զնա և շօշափել. և նոքա ասեն ցնա. Երդուեալ 'ի մեծութիւնդ քո բարեյաղթ, որպէս ոչ առնլով ապտակ՝ այնպէս մարմին նորա փափուկ, ամենեւին վէրս ոչ ունելով: Թագաւորն ասէ. Ամենայն իրօք ունի ասել թէ Քրիստոսն իմ բժշկեաց զիս. միթէ զոք 'ի ներքս ածի՞ք առ 'ի մխիթարութիւն նորա բանտի: Իսկ նոքա ասեն ցնա. Երդուեալ առ 'ի ձեր զօրութիւնդ՝ որ մատակարարէ զամենայն զտիեզերս, ոչ ոք ետես զնա. քանզի ակն ունէաք եթէ հանդերձեալ է մեռանել, բայց թէ ո՛րպէս առողջացեալ յանդիման կայ՝ ոչ գիտեմք: Թագաւորն ասէ. Տեսէք զմոգութիւն քրիստոնէիցդ՝ թէ որպիսի՛ է, զիա՛րդ յառաջ քան զայս մեռեալ կարծիւր, իսկ այժմ առողջացեալ յանդիման կայ:

Եւ սրտմտեալ թագաւորն ասէ ցնա. Ո՞վ է որ բժշկեաց զքեզ, ասա համարձակ ամենայն ճշմարտութեամբ. քանզի առանց կախարդութեան ոչ կարծեմ ողջանալ քեզ: Սուրբն Մերկուրիոս ասաց. Որպէս յառաջագոյն ասացի, Տէր իմ Յիսուս Քրիստոս որ ճշմարիտ բժիշկն է հոգւոց և մարմնոց. բայց զկախարդս և զդիւթս և զխորասուզեալս և զկռապաշտս 'ի բաց տրոհէ Քրիստոս, և անլուծանելի կապանօք կապեալ 'ի հուրն գեհենին առաքէ, փոխանակ զի ոչ ծանեան զճշմարտութիւն Աստուծոյ որ արար զնոսա: Թագաւորն ասէ. Դարձեալ զմարմինդ քո ծախեցից տանջանօք, և տեսցուք թէ բժշկէ՞ զքեզ Քրիստոս որդին Աստուծոյ որ ասես: Մերկուրիոս ասաց. Հաւատամ 'ի Տէր Յիսուս Քրիստոս 'ի Ճշմարիտ Աստուած, եթէ որչափ ածես 'ի վերայ իմ զանազան տանջանս՝ ոչ ինչ կարես յաղթել ինձ. քանզի ինքն ասաց Տէրն իմ Յիսուս Քրիստոս. Մի՛ երկնչիք 'ի սպանողաց ըզմարմին և զոգի ոչ կարողաց սպանանել. այլ երկերուք, ասէ, մանաւանդ յայնմանէ՝ որ կարող է զոգի և զմարմին կորուսանել 'ի գեհենի. Նա է որ յետ մահուանն դարձեալ յարուցանէ զիս՝ ահաւոր և արդար դատաւորութեամբն իւրով։

Զայս լուեալ Թագաւորին՝ հրամայեաց բերել շամփուրս և դնել 'ի վերայ նորա։ Այսոցիկ այսպէս եղելոց՝ գոլորշի անուշահոտութեան որպէս 'ի խնկոյ 'ի մարմնոյն շնչեալ 'ի մերձակայսն, և զարմանային 'ի վերայ հրաշափառ սքանչելեացն այնոցիկ։ Իսկ Մեռկուրիոս ոչ յոգւոց հանելով 'ի վերայ այնպիսի տանջանացն՝ կայր անվեհեր։ Դեկոս ասէ. Ո՞ւր է բժիշկն քո, եկեսցէ այժմ և բժշկեսցէ զքեզ, քանզի ասացեր թէ և 'ի մահուանէ կարող է յարուցանել զիս։ Սուրբն Մեռկուրիոս ասաց. Զի՞ ընդունայն աշխատիս. այլ զի՞նչ կամիս. իշխանութիւն մարմնոյ իմոյ ունելով ունիս, քանզի անձին իմոյ Աստուած իշխէ. զի որչափ և մարմինս իմ ապականի, նոյնչափ և ոգի իմ անապականանայ։ Եւ սրտմտեալ Թագաւորն հրամայեաց զնա կախել, որպէս զի հերձեալ 'ի քարէն՝ դժնդակ տանջանօքն զհոգին հանցէ։ Իսկ Աստուծոյ զօրացուցանելով զինքեան վկայն՝ ոչինչ դժնդակ զոր իմացաւ Դեկոս՝ կրեաց սուրբն, այլ գոհանայր զԱստուծոյ ասելով այսպէս. Ի նեղութեան կարդացի առ քեզ և լուար ինձ յանդորր։ Մնաց յայնպիսի տանջանս ժամս բազումս։ Տեսեալ ապա Դեկեայ եթէ հզօրապէս համբերէ եկելոցն 'ի վերայ նորա, և ոչինչ 'ի դժնդակագունիցն մերձենայր առ նա՝ հրամայեաց լուծանել. և կոչեցեալ առ ինքն փորձել զնա բանիւք փաղաքշանօք, հաւանեցուցանել կամելով։ Իսկ նորա ոչինչ հաւանեալ ամենևին բանից նորա՝ դժնդակապէս և անհնարին հակառակ կացեալ նմա։ Թագաւորն զայրացեալ հրամայեաց հարկանել զնա պղնձի գաւազանօք այնքան՝ մինչ զի արիւնն նորա զերկիրն ելից։ Իսկ ստուգապէս անպարտելի վկայն կրեաց զամենայն նեղութիւնս գոհանալով զԱստուծոյ և ասելով. Փառք քեզ, Տէր, զի և զիս արժանացուցեր վասն անուանդ քո այսչափ չարչարիլ:

Յայնժամ ծանուցեալ թագաւորին Դեկեայ թէ անփոփոխելի ունի զխորհուրդն և ոչ հաւանիլ նմա, խորհուրդ արարեալ, քանզի փութայր երթալ 'ի Հռովմ, եհատ նմա վճիռ սրոյ վախճանի, ասելով. Մեռկուրիոս՝ որ զաստուածսն անարգեաց և զբարեզարդութիւնս մերոյ քաղցրութեան ոչինչ համարեցաւ, հրամայէ զօրութիւնս մեր 'ի գաւառն Կապպադովկացւոց տանել, և անդ զգլուխն հատանել առ 'ի ցոյցս բազմաց. քանզի որ ոք թագաւորի հակառակ գործէ՝ պատուհասեալ և կոծեալ 'ի նմանէ, յետ բազում տանջանացն 'ի ձեռն սրոյ կրեսցէ զվախճան մահու: Եւ առեալ զնա որոց հրամայեալ էր զինուորք՝ տարան եդին 'ի վերայ գրաստու կապեալ: Իսկ երանելւոյ մարտիրոսին լուծելոյ 'ի գերառաւել տանջանացն՝ համբերելով մեծաւ հանդարտութեամբ. եդեալ զնա 'ի վերայ գրաստու այնպէս գնացին՝ մինչև հասանէին 'ի քաղաքն Կեսարացւոց: Եւ 'ի վերայ կացեալ նմա Տէր՝ ասաց. Մեռկուրիէ, ե՛կ այսուհետև հանգիր, զի զընթացսն կատարեցեր, զհաւատսն պահեցեր, արդ ընկալ զպսակն ճգնութեան քո. քանզի աստ վիճակեցաւ քեզ մեռանելով կատարել: Եւ վկայն Տեառն զօրութեանց՝ հոգւով սրբով ցնծայր տեսլեամբն զոր ետես, յաղագս հրամանաց Տեառն: Յայնժամ ասէ սուրբն որոց ընդ նմա զօրականացն. Եկայք, եղբարք, կատարեցէք այսուհետև զհրամայեալսն ձեզ. իսկ Տէրն իմ որ զամենայն մարդ կամի կեցուցանել՝ և զձեզ արժանի արասցէ շնորհաց իւրոց, և տացէ ձեզ մասն ընդ արդարսն իւր: Իսկ նոքա առեալ հանին զնա արտաքոյ քաղաքին, և նա գոհանայր և օրհնէր զԱստուած: Եւ ձգեալ երանելւոյն զպարանոցն՝ հատին զգլուխն նորա, կատարել զվկայութիւն Փրկչին մերոյ Աստուծոյ, յամսեանն նոյեմբերի, որ օր քսան և հինգ էր, և հրաշափառապէս սքանչելիք եղեն, զոր արժան է յիշատակել:

Քանզի յետ կատարման նորա՝ մարմին մարտիրոսին եղև սպիտակ իբրև զձիւն, բուրելով հոտ իւղոյ և խնկոց անուշահոտութեան. և վասն նշանիս այսորիկ բազումք հաւատացին յԱստուած. և եդին զսուրբն Աստուծոյ 'ի տեղւոջն յորում կատարեցաւ. որ և բժշկութիւնք բազումք կատարէին 'ի փառս Աստուծոյ և Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, հանդերձ ամենասուրբ Հոգւոյն. որում փառք և պատիւ և զօրութիւն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Վկայաբանութիւն Սրբոյն Մինասայ եգիպտացւոյ։

Յամն թագաւորութեանն Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի էր հալածումն սաստիկ հաւատացելոց՝ 'ի հրամանաց նոցա, յամենայն աշխարհս և 'ի գաւառս որ ընդ իւրեանց իշխանութեամբ. որք բազում խոշտանգանօք և տանջանօք նեղէին զքրիստոնեայս, արբանեակք չարին. այլ քաջքն և առաքինիքըն վկայէին, առ ոչինչ համարելով զտանջանս և զմահ. իսկ թոյլքն և երկմիտքն արտաքոյ նորին հանդիսին լինէին։ Յորս երևեցաւ և երանելին Մինաս սուրբ և ճշմարիտ, անպարտ զօրականն Քրիստոսի. որպէս լուսաւոր աստղ 'ի մէջ աստեղաց՝ որ լուսաւոր առնէ զխաւար, այսպէս սուրբն 'ի մէջ սրբոց պայծառ և երևելի երևեալ առաքինութեամբն։ Զի՞նչ և Մինաս. ազգաւ եգիպտացի, զինուորեալ 'ի զօրս թագաւորաց. իբրև լուէր զհրամանս ամպարշտացն՝ խորհեցաւ 'ի բաց կալ 'ի զինուորութենէն և բնակել յանապատս, զի էր ամպարշտացն հրաման հրովարտակին օրինակ այս. Թագաւորք յաղթողք, որք փնչան յաղթութեանն զգեցեալք՝ Դիոկղետիանոս և Մաքսիմիանոս, ամենեցուն որ ընդ մեր օրէնս էք՝ ողջոյն, բազում լիութիւն և առատութիւն ձեզ յաստուածոյն տացի։ Վասն որոյ լաւ համարեցաք մեք զպաշտօն նոցա ամենայն փութով կատարել անխափան 'ի բագինս նոցա, և ամենեքեան յամենայն տեղիս իշխանք և քաղաքապետք այսու օրինակաւ 'ի պաշտօն աստուածոցն յօրինեսջիք, ամենեքումբ հանդերձ յամենայն տեղիս, արամբ և կանամբ և որդւովք՝ զպատիւ և ըզզոհ աստուածոցն անխափան կատարեցէք. և որ ոք դիմադարձ մերոց հրամանաց լինիցի՝ հրամայէ մեր քաջութիւնս ամենայն տանջանօք և չարչարանօք 'ի կենացս բառնալ:

Եւ այսպէս հրամանն ընդ ամենայն տեղիս քարոզեալ լինէր. և 'ի բազում խռովութենէն և 'ի սաստիկ ահէն հալածեալ լինէին ուր ուրեք զանձինս կարիցեն ապրեցուցանել: Զայս տեսեալ երանելւոյն Մինասայ և լուեալ զհրամանս ամպարշտացն՝ գնաց յանապատ տեղիս, և անդադար փառաբանութեամբ օրհնէր զԱստուած զցայգ և զցերեկ: Իբրև անցին ամք երեք՝ խորհեցաւ իջանել 'ի տեսարանն, զօրութեամբ և շնորհօքն Քրիստոսի, և այնպէս իջանէր 'ի քաղաքն՝ յորում ժողովեալ էին ամպարշտութեանն ժողովքն. և ջերմութեամբ Հոգւոյն սրբոյ և պինդ հաւատով եմուտ 'ի ժողովարանն՝ յորում էր ամպարիշտ բռնաւորն. աղաղակեաց և ասէ. Յայտնի եղէ այնոցիկ որ զիս ոչ խնդրէին, գտայ այնոցիկ որ զինէն ոչ հարցանէին: Եւ լռեաց ամենայն թատրն, և զարմացեալ հիացեալ կային վասն համարձակութեան առնն. քանզի տեսանէին զնա 'ի կերպարանս միայնակեցի: Հարցանէր զնա իշխանն. Ո՞վ ես դու կամ վասն է՞ր աղաղակես: Պատասխանի ետ սուրբն և ասէ. Ծառայ եմ ես Քրիստոսի թագաւորին անմահի, արարողին զերկինս և զերկիր և որ 'ի նոսա արարածք իցեն երևելիք և աներևոյթք, և եկի քարոզել զճշմարտութիւնն և վկայել վասն սուրբ անուան նորա: Եհարց իշխանն զբազմամբոխ ժողովսն. իսկ առաջաւորքն ասեն. Գիտեմք զդա յառաջագոյն քան զերիս ամս 'ի զինուորութեանն կարգի՝ ըստ Փիամիանոս զօրագլխի. իսկ այժմ այսու կերպարանօք զայս բարբառեալ՝ ոչ գիտեմք: Ասէ իշխանն. Այր դու, թէ արդարև այդ այդպէ՞ս իցէ: Մինաս ասէ. Այո՛ այդպէս իցէ. բայց իբրև լուայ ես զհրամանս անօրէն թագաւորացն՝ 'ի բաց եղէ 'ի պատուոյն և 'ի զինուորութենէն, վասն զի ընտրեցի ընդ աղբ գալ 'ի տան Աստուծոյ յանապատըս, քան բնակել յարկս մեղաւորաց. և այնպէս զերիս ամս կրօնաւորեալ՝ աղաչեցի զԱստուած զի արժանի արասցէ զիս առանց երկիւղի քարոզել զսուրբ անուն իւր առաջի թագաւորաց և իշխանաց, և մեռանել վասն սուրբ անուան նորա, զի այնպէս հաղորդեցայց 'ի մասն սրբոցն։ Ասէ իշխանն. Զի՞արդ ոչ զարհուրիս 'ի տանջանաց՝ որ ըստ հրամանի թագաւորաց, որպէս լուարն, և ո՞րպէս զքեզ քրիստոնեայ ասես։ Մինաս ասէ. Տէր է իմ օգնական և ես ոչ երկեայց, զի՞նչ արասցէ ինձ մարդ. և քրիստոնեայ էի և եմ և եղէց, զի մի՛ հաւասարեցայց պիղծ իսկ պաշտամանց ձերոց և անօրէնութեան գործոց, որոց խաւարեալ են միտք և օտարացեալ էք 'ի կենաց անտի վասն տըգիտութեան սրտից ձերոց, որ ոչ ծանեայք զարարիչըն երկնի և երկրի։ Յայնժամ իշխանն հրամայեաց կապել զսուրբն և տանել 'ի տուն կապելոցն, զի մի՛ խափանեսցի թատրն և խաղ բազմութեանն։

Եւ միւսում աւուրն նստեալ իշխանն յատենի՝ հրամայեաց ածել զերանելին Մինաս զառաջեաւ և ասէ. Զի՞արդ իշխեցեր երեկ մտանել 'ի թատրն և խափանել զխաղն և արհամարհել զամենակալ աստուածսն և զթագաւորն, մանաւանդ զի անուանեցեր ես զքեզ քրիստոնեայ աներկիւղ համարձակութեամբ։ Ասէ երանելին Մինաս. Խնդրեցի յԱստուծոյ որ տայ առատապէս ինձ համարձակութիւն՝ վասն անուան նորա վկայել առաջի հեթանոսաց և ամպարշտաց. վասն զի սիրեցի ես զերկնաւոր թագաւորն և զինուորեցայ նմա, և 'ի բաց եղէ յառժամանակեայ զինուորութենէս, լաւ համարելով զմահ քան զկեանս խղճիւ. և խնդրեցի 'ի նմանէ մի՛ կորուսանել ընդ ամպարիշտս զանձն իմ, և մի՛ ընդ արս արիւնահեղս զկեանս իմ առնել. և այնպէս հրաժարեալ յամենայն կենցաղականացս՝ ետու զիս Աստուծոյ և մահու, վասն սուրբ անուան նորա։ Ասէ ցնա իշխանն. Ի բաց թող զայդպիսի յախուռն և յանդուգն բանս, և պաշտեա զդիքըն զոր թագաւորքն պաշտեն, և թողցին քեզ յանցանքն զոր համարձակեցար առաջի բազմաց հայհոյել. և զերծցիս 'ի տանջանաց, և զզինուորական պատիւն առաւել ընկալցիս 'ի թագաւորացն, և մեծասցիս ընդ իշխանս աշխարհիս։ Ասէ երանելին Մինաս. Ես ցանկամ հաճոյ լինել Թագաւորին յաւիտենից, և ընդունել զանապական պսակն և զանմահական կեանսն. և դու մի՛ ակն ունիր ինձ յայսմ յուսոյ յայդ խոնարհել ՚ի յանցաւոր պատիւս, որ այսօր են և վաղիւ կորնչին՝ պատիւն և որք զպատիւն տան. Նա և զամենայն տանջանս քո արհամարհեմ՝ զոր ածելոց ես ՚ի վերայ իմ, վասն սիրոյն Քրիստոսի. զի նա տայ ինձ ոյժ և զօրութիւն, և յամօթ առնէ զայնոսիկ որք ոչ հաւատան ՚ի նա: Յայնժամ բարկացեալ իշխանն հրամայեաց պըրկել զնա և հարկանել արջառաջլօք սաստիկ յոյժ, մինչև արիւնն ոռոգանէր զերկիրն ամենայն, և սուրբըն գոհանայր զՏեառնէ և խնդրէր ժուժկալութիւն համբերել տանջանացն. և սպասաւորք բռնաւորին ստիպէին զսուրբն հաւանել կամաց դատաւորին: Իսկ սուրբն Աստուծոյ ոչ առնոյր յանձն թողուլ զԱստուած և պաշտել զկուռս, և ասէր. Ունիմ ես օգնական զԱստուած՝ որ կարող է զտանջանս զայս թեթեւացուցանել, և զիշխանն ձեօք հանդերձ յամօթ առնել, որ ստիպէք զծառայն Աստուծոյ հեռանալ յԱստուծոյ և դառնալ ՚ի պաշտօն դիցն մոլորեաց իբրև զձեզ, և կորստեան ճանապարհին ուղևորս լինել ընդ ձեզ, որ տանի ՚ի կորուստն յաւիտենից: Ասէ իշխանն. Եթէ արդարև ո՞չ զգացեր այդպիսի դառն և անողորմ տանջանացդ: Ասէ երանելին Մինաս. Մի՛ ակն ունիր ՚ի ձեռն դառն տանջանաց յաղթել իմոց իմաստուն խորհրդոյս, զի ոյժ և զօրութիւն մեծի Թագաւորին մերձ է առ իս, և զօրագոյն առ ամենայն տանջանս պահէ զիս:

Յայնժամ հրամայեաց իշխանն զսուրբն կախել ըզփայտէ և քերել յերկար. և քարոզն աղաղակէր և ասէր. Մի՛ Թագաւոր զայլ ոք խոստովանիր հակառակ մերոյ Թագաւորացն: Ասէ երանելին Մինաս. Մի՛ հայհոյէք զերկնաւոր և զանմահ Թագաւորն ընդ մահկանացուի հաւասարել. Նա է Թագաւոր մեծ ՚ի վերայ ամենայն երկրի, Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ ունի իշխանութիւն սկզբանց և իշխանութեանց: Իշխանն ասէ. Ո՞ր է Աստուած մեծ զոր ասես՝ թէ նա ետ զիշխանութիւն Թագաւորաց, և նա է որ զամենայն աշխարհս իշխանութեամբ ունի: Ասէ երանելին

Մինաս. Տէր մեր Յիսուս Քրիստոս, որդին Աստուծոյ կենդանւոյ, որ առաքեցաւ 'ի Հօրէ և 'ի Հոգւոյ, և ետ մեզ աւետիս բարեաց, որում երկրպագութիւն կրկնեսցի երկնաւորաց և երկրաւորաց, և ամենայն ազգ խոստովան լիցի եթէ Տէր է Յիսուս Քրիստոս 'ի փառս Աստուծոյ Հօր և սուրբ Հոգւոյն։ Իսկ իշխանն ասէ. Զգիտեմ զինչ խօսիս վասն աներևութից, և երևելեացս անհասանելի, բայց զի հրամանք թագաւորացն անողորմ բարկութեամբ զքեզ 'ի կենացս բառնայ։ Ասէ երանելին. Զայդ Դաւիթ յառաջագոյն ես մարգարէանայ ասելով. Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք, որ նստի 'ի քերովբէս, սասանեցաւ երկիր։ Եւ այսոքիկ վասն անօրէնութեանն են ասացեալքս՝ զոր ոչ կարես իմանալ, խաւարեալդ մտօք։ Զի ճառք սրբոյ աւետարանին՝ կորուսելոցդ յիմարութիւն է, իսկ մեզ փրկելոցս՝ նորոգութիւն կենաց 'ի կեանս. Քանզի ո՞վ մեկնեսցէ զմեզ 'ի սիրոյն Քրիստոսի, ըստ Պաւղոսի, նեղութիւնք, թէ անձկութիւնք, թէ հալածանք թէ սով, թէ սուր, և որ այլ ինչ վտանգք և պէսպէս տանջանք՝ ոչ յաղթեսցեն ծառայից Աստուծոյ։

Յայնժամ իշխանն հրամայեաց աղ ցանել 'ի վերայ վիրաց նորա և մազեղէն քրձիւ շփել։ Իսկ սուրբն Աստուծոյ զմիտսն առ Աստուած ունելով և ցանկութեամբ բարեպաշտութեանն անպարտելի լեալ օրհնէր զԱստուած։ Եւ ամենայն տեսողքն հանդերձ իշխանաւն հիացեալ զարմացեալ կային ընդ ժուժկալութիւն սրբոյ վկային։ Ասէ իշխանն. Զի՞րդ այդպէս յամառեալ և պնդեալ կաս 'ի տանջանս անզգայաբար։ Ասէ երանելին Մինաս. Թագաւորն իմ և Աստուած՝ նա տայ ինձ ոյժ և զօրութիւն յաղթել քոց ամենաչար հնարիցդ, զի արժանի եղէց անսուտ խոստմանցն՝ զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։ Եւս առաւել բարկացեալ իշխանն հրամայեաց հրով այրել ըզծառայն Աստուծոյ։ Եւ այնպէս այրեցին և խորովեցին կայծականբք զմարմին սրբոյն. իսկ սուրբն ոչինչ տայր պատասխանի, այլ իմանալեօքն աղաչէր զԱստուած զօրացուցանել զնա 'ի չարաչար և 'ի դառն տանջանսն։

Իշխանն ասէ. Ո՛վ թշուառական և վայրենաբարոյ, զի՞նչ ունիս բնութիւն արտաքոյ մարդկային բնութեանս։ Ասէ երանելին Մինաս. Աստուած է որ զօրացուցանէ զիս և տայ զօրութիւն մարգարէին ասացեալ. Թէ անցանիցես ընդ հուր՝ մի այրեսցիս, և բոց նորա զքեզ մի կիզցէ. և դարձեալ Տէրն մեր ասէ. Մի երկնչիք յայնցանէ որ սպանանեն զմարմինն, և զոգի ոչ կարեն սպանանել. այլ երկերուք յայնմանէ որ կարող է յետ սպանանելոյն արկանել 'ի հուրն յաւիտենից՝ զոր պատրաստեալ է սատանայի և կամաւորաց նորա։ Եւ զարմացեալ իշխանն ոչ կարէր տալ պատասխանի իմաստուն և զօրաւոր բանիցն, և կամ զարհուրեցուցանել տանջանօքն զոր ած 'ի վերայ սրբոյն, և ասէ. Կամի՞ս զի թողից զքեզ աւուրս ինչ, որպէս զի խորհելով զվարս կենցաղոյս եկեսցես 'ի լաւութիւն, և փոխեսցիս յայդպիսի կամացդ, և արասցես զհրամանս թագաւորացն։ Ասէ երանելին. Խորհեցայ բազում անգամ և ծանեայ զճշմարտութիւնն, պաշտել զԱստուած կենդանի և գնալ 'ի ճանապարհս նորա, և ոչ պաշտօն մատուցանել դիւաց, և կամ հաւանել հրամանաց թագաւորաց՝ որք և մերժեն յԱստուծոյ կենդանւոյ։ Եւ սրտմտեալ իշխանն հրամայեաց բրօք հարկանել սաստիկ և արկանել տատասկ երկաթի և շրջշրջել 'ի վերայ նորա. և այնպէս արիւնն ոռոգանէր զերկիրն։ Իսկ սուրբն ոչինչ տայր պատասխանի, այլ գոհանայր և օրհնէր զԱստուած։

Եղիոդորոս ոմն դեսպանապետ ասէ ցիշխանն Պիւրոս. Ո՞չ գիտես եթէ հպարտ է ազգ քրիստոնէից և քաղցր է նոցա մահ որ վասն աստուծոյն իւրեանց քան զկեանս. տուր սմա այսուհետև վճիռ ըստ փոխելութեան դորա, և սպան զդա որպէս զմահապարտ՝ զի արհամարհեաց զաստուածսն և զթագաւորն։ Իսկ իշխանն ողոքական բանիւք հրապուրէր զսուրբն Աստուծոյ և խոստանայր նմա պարգևս և պատիւ։ Իսկ երանելին Մինաս ասէ. Պարգևք քո քեզ լիցի և հօրն քո սատանայի՝ որ հրապուրէն քև զիս, որ շարժեաց զթագաւորն և զքեզ 'ի վերայ ծառայից Աստուծոյ. այլ ես փութամ 'ի պատիւն անանց թագաւորին յաւիտենից Քրիստոսի, զոր խոստացաւ սրբոց իւրոց.

քանզի այս պատիւս անցաւոր է, իսկ այն յաւիտենական, զի անանց լուսոյն և կենացն յաւիտենից ժառանգորդս զմեզ կացուցանէ ընդ ամենայն սուրբս։ Իսկ իբրև ետես իշխանն զանշարժ հաւատսն որ 'ի Քրիստոս և զանփոփոխ միտսն, հրամայեաց զերանելին սրով սպանանել։ Իսկ սուրբն զուարթ երեսօք և հաստատուն մտօք ցանկայր ելանել 'ի մարմնոյս և մըտանել առ Աստուած՝ առ որ անձկացեալն էր. և ամբարձեալ զաչս իւր յերկինս և տարածեալ զձեռսն իւր՝ ասէ. Գոհանամ զքէն, Տէր, որ արժանի արարեր զիս մեռանել վասն անուանդ քո սրբոյ, և ոչ թողեր զիս զծառայ քո՝ 'ի զօրութենէ քումմէ, և ոչ հեռացաւ յինէն պարգևք շնորհաց քոց. այլ ետուր ժուժկալութիւն պնդութեան 'ի պէսպէս տանջանս՝ զոր ածին 'ի վերայ իմ, և հաստատուն և անշարժ պահեցեր զմիտս իմ և զխորհուրդս 'ի սէր աստուածութեանդ քո. և արդ, Տէր, մի թողուր 'ի զօրութենէ քումմէ և 'ի շնորհաց, զի կատարեցից զընթացս իմ քաջութեամբ և ճշմարիտ խոստովանութեամբ, և արժանի եղէց ընդ վկայս քո ժառանգել զանպատում զկեանսդ, և փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, այժմ և յաւիտեանս։ Եւ խոնարհեցուցեալ ծունր՝ վաղվաղակի հատին զգլուխ երանելւոյն Մինասայ, ըստ հրամանի բռնաւորին։ Եւ այսպէս կատարեցաւ սուրբն Մինաս եգիպտացի, յամսեանն Նոյեմբերի մետասան, 'ի փառս և 'ի գովութիւն Աստուծոյ։ Եւ հրամայեաց անօրէն իշխանն այրել զմարմին սըրբոյն. և զմնացեալ նշխարսն 'ի հրոյն՝ ժողովեալ հաւատացելոցն 'ի ծածուկ տեղւոջ պատսպարեցին, անմոռաց յիշատակաւ մինչև դադարեաց հալածումն և շինեցաւ վկայարան յանուն սրբոյ վկային. յորում տեղւոջ բժշկութիւնք լինին բարեխօսութեամբ սըրբոյն, 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն, Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն. այժմ և միշտ և յաւիտեանս։

Վկայաբանութիւն Սրբոյն Մինասայ, Երմոգինեայ և Գրաքոսի։

Ի ժամանակս ամպարիշտ արքային Մաքսիմիանոսի՝ եղև խռովութիւն 'ի մէջ քաղաքին Աղեքսանդրացւոց առ իշխանն. վասն որոյ առաքեաց թագաւորն այր մի իմաստուն և հանճարեղ, Աթենացւոց ուսմամբքն ձոխացեալ, որոյ անուն էր Մինաս, առ 'ի խաղաղացուցանել զխռովութիւն Աղեքսանդրացւոց որ առ միմեանս, և գալ սիրով 'ի միաբանութիւն։ Եւ տեսեալ զվարս քրիստոնէիցն որ անդ՝ հաճեցաւ ընդ այն և եղև քրիստոնեայ։ Եւ էր փոյթ 'ի բարեպաշտութիւն, բաշխէր զինչս իւր կարօտելոց, և աղօթիւք ողջացուցանէր զամենայն հիւանդս։ Զայս լուեալ թագաւորն՝ բարկացաւ յոյժ, և առաքեաց զեպարքոսն զԵրմոգինէս անուն, և սա ևս աթենացի գոլով, զի դարձուսցէն զՄինաս 'ի քրիստոնէական հաւատոյն։ Որ եկեալ յԱղեքսանդրիա և նստաւ յատենի հրապարակաւ. և կոչեաց զՄինաս առաջի իւր, և խօսեցան ընդ միմեանս յառաւօտէ մինչև ցեօթներրորդ ժամն. և աստուածեղէն իմաստութեամբն յաղթեաց սուրբն Մինաս եպարքոսին։ Եւ նա բարկացեալ ետ կորել զլեզուն և զթաթ ոտիցն Մինասայ, և զաչս հանել. և այնպէս արարեալ արկին 'ի բանտն։ Եւ յերրորդ պահու գիշերոյն երևեցաւ Տէրն 'ի բանտին և ողջացոյց զՄինաս։ Իսկ եպարքոսն Երմոգինէս զղջացաւ ընդ չարչարանս Մինասայ, քանզի ուսումնակից և սիրելի էր նմա 'ի վաղուց հետէ, վասն որոյ զամենայն գիշերն արթուն եղեւ, լայր անմխիթար զՄինաս։ Եւ ընդառաւօտն առաքեաց 'ի բանտն բերել զմարմին սըրբոյն Մինասայ, զի լացցէ 'ի վերայ նորա և օրհնօք թաղեսցէ։ Եւ գնացեալ զինուորացն՝ տեսին զնա ողջացեալ ամենայն անդամօքն, զի ոտիւքն գնայր և աչօքն տեսանէր և լեզուաւն խօսէր արագ, ևս առաւել քան զոր յառաջն էր։ Եւ առեալ բերին առաջի եպարքոսին ողջացեալ անդամօք. զոր տեսեալ՝ և հաւատաց 'ի Քրիստոս Երմոգինէս, և առաջի ամենայն ժողովրդեանն խոստովան եղև զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Յայնժամ հրամայեաց Մինաս դպրին իւրոյ Գրաբոսի կոչել զքահանայս և զեպիսկոպոսունսն. որք եկեալ հեղին ջուր մկրտութեան 'ի վերայ գլխոյն Երմոգինեայ, և ասէին. Փառաւոր եպարքոսն Երմոգինէս մկրտի շնորհօքն Քրիստոսի, վերստին ծննդեամբն 'ի թողութիւն մեղաց և 'ի յարութիւն կենացն յաւիտենից, և ընկալցի զպսակն յաղթութեան նահատակաց յանուն Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն։ Եւ յետ աւուրց ինչ պատրիարգն Աղեքսանդրոս ձեռնադրեաց զԵրմոգինէս եպիսկոպոս. և ուրախացեալ ամենայն հաւատացեալքն՝ խորտակեցին զամենայն բագինս կռոցն յամենայն սահմանս քաղաքին։ Այլ և ինքն եպիսկոպոսն Երմոգինէս շըրջէր յամենայն տեղիս, զկուռսն կործանէր և զՔրիստոսի աստուածութիւն քարոզէր. զոր լուեալ արքայն Մաքսիմիանոս և ելեալ ինքն գնաց յԱղեքսանդրիա, և տասն հազար հեծելազօրք ընդ նմա։ Եւ կացուցեալ յատենի զսուրբն Մինաս և զԵրմոգինէս՝ և հարցանէր զնոսա բարկութեամբ. յայնժամ սուրբ եպիսկոպոսն Երմոգինէս պատասխանեալ արքային զեղեալ սքանչելիսն առ սուրբն Մինաս։ Եւ մինչդեռ պատմէին զբանն Աստուծոյ՝ հրեշտակ Տեառն երևեալ նոցա և զարհուրեցոյց զնոսա. և հրամայեաց արքայն, և զսրբոյն Երմոգինեսի պատառեցին զորովայն, հատին և զձեռնն և զոտսն և ընկեցին 'ի գետըն, և զմնացեալ մարմինն այրեցին հրով։ Եւ զսուրբն Մինաս կախեցին 'ի խաւարային բանտի զմի ոտանէ, և վէմ մի մեծ կապեցին զմիոյ ձեռանէն։ Եւ 'ի գիշերին յայնմիկ հրեշտակ Տեառն ժողովեալ զամենայն մանրեալ և զայրեցեալ անդամս Երմոգինեայ, և հանեալ 'ի գետոյն՝ կենդանացոյց զնա հրամանաւն Աստուծոյ։ Եւ զսուրբն Մինաս իջուցեալ 'ի կախաղանէն և հանեալ 'ի բանտէն հրեշտակն Աստուծոյ, և տարաւ առ Երմոգինէս։ Եւ 'ի վաղիւն կացեալ առաջի արքային և յանդիմանեցին զանաստուած մոլորութիւն նորա։ Եւ ասէ Գրաբոս երագագիր դպիրն Մինասայ ցթագաւորն. Ընդէ՞ր այնքան տկարանաս, ով արքայ. քանզի եկիր գոչմամբ որպէս զառիւծ, և եղեր նկուն իբրև զաղուէս. եկիր շառաչմամբ որպէս զարծիւ, և դարձար անզօր իբրև զչղջիկան։ Եւ սրտմտեալ թագաւորն ընդ համարձակութիւնն Գրաբոսի՝ յարեաւ յաթոռոյն և իւրովի ձեռամբն սպան զնա։ Նոյնպէս հրամայեաց զսուրբն Մինաս և զԵրմոգինէս սպանանել։ Եւ այնպէս կատարեցան 'ի Քրիստոս, 'ի դեկտեմբերի ամսոյ 'ի տասն։ Եւ սուրբն Մինաս խնդրեաց յԱստուծոյ՝ զի մարմինք նոցա երթիցեն 'ի Բիւզանդիա։ Եւ եղև զի յետ կատարման նոցա հրամայեաց թագաւորն դնել զնոսա յերկաթի տապանին և ընկենուլ 'ի ծով։ Եւ հրեշտակ Տեառն առաջնորդեաց տապանին, և տարեալ եհան 'ի Բիւզանդիա, 'ի դուռն քաղաքին որ ընդդէմ Քաղկեդոնի է։ Եւ 'ի մէջ գիշերին երևեալ հրեշտակ Աստուծոյ եպիսկոպոսին Մետրոփանոսի և ասաց նմա վասն սրբոցն. և նա յարուցեալ գնաց 'ի ծովեզերն, հանդերձ խնկօք և մոմեղինօք, ամենայն ուխտիւն, և տեսեալ զտապանն սրբոցն, և սիւն լուսեղէն ամպոյ 'ի վերայ տապանին. և էած 'ի քաղաքն և պահեաց 'ի թագըստեան, մինչև 'ի հրեշտակէ Աստուծոյ խոցեալ եղև Մաքսիմիանոս բռնաւորն և սատակեցաւ չարաչար։ Եւ ապա եդին զնշխարս սրբոցն յեզր ծովուն՝ յորում ել տապանն. և շինեցին 'ի վերայ վկայարան, 'ի պահպանութիւն քաղաքին, 'ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Սքանչելիք սրբոյն Մինասայ.

von Theophilus I Patriarc
v. Alex

Արդ լուարուք զսքանչելիսն՝ զոր արար Աստուած 'ի ձեռն վկային իւրոյ սրբոյն Մինասայ։ Այր ոմն յոյժ մեծատուն՝ եկեալ 'ի քաղաքն Աղեքսանդրիա 'ի պէտս վաճառականութեան. և լուաւ զսքանչելիսն զոր առնէր սուրբն Մինաս, և կամեցաւ երթալ 'ի տաճարն սուրբ վկային ընծայիւք։ Եւ յարուցեալ եառ ընդ իւր զքսակն ոսկւոյն, և մտեալ 'ի նաւ՝ անց յայնկոյս ծովուն։ Եւ հասեալ 'ի պանդոկ մի և խնդրեաց օթևանս, վասն զի ընդ երեկս էր։ Ասէ պանդոկապանն. Մուտ, եղբայր. և տարեալ 'ի տունն՝ եդ առաջի նորա սեղան և կերակրեաց զվաճառականն։ Եւ իբրև ննջեաց՝ ետես պանդոկապանն զքսակն լի գանձով. և եմուտ 'ի նա սատանայ և յարուցեալ սպան զայրն և առ զքսակն ամենայն գանձիւն։ Եւ ասէ ընդ միտս իւր. Զի՞նչ արարից զմարմինն սորա. արդ կտրատեցից զսա անդամ անդամ և եդից 'ի կողով մի և արկից 'ի լիճն։ Եւ մինչդեռ արար այնպէս, և կախեալ զկողովն՝ որպէս զի ընկեսցէ 'ի լիճն, զայս կամեցաւ կատարել, ծագեաց արեգակն և երկեաւ ընկենուլ 'ի լիճն։ Եւ առեալ զգլուխն զի մանրեսցէ և արկցէ 'ի կողովն. և ահա սուրբ վկայն Մինաս եհաս ձիընթաց բազում հեծելօք, որպէս թէ 'ի թագաւորէ առաքեալ։ Եւ տեսեալ պանդոկապանն՝ երկեաւ և ոչ գիտէր թէ զի՞նչ առնէր. և փութանակի շտապով կախեաց զգլուխն 'ի մէջ պանդոկին։ Եւ հասեալ սուրբն Մինաս, կալաւ զպանդոկապանն և ասէ. Ասա ինձ, ո՞ւր է այրն որ օթեցաւ առ քեզ 'ի գիշերիս։ Եւ նա 'ի դողման լեալ՝ ասէ. Ոչ ոք օթեցաւ առ իս։ Ասէ սուրբն. Թէ դու ոչ խոստովանիս վասն առն, ես գտից զնա։ Եւ տարեալ զձեռն՝ առ զսակառին, և եգիտ 'ի նմա զմարմին մարդոյն կտրատեալ և առ զգլուխն։ Յայնժամ մեծաւ տագնապաւ աղաչէր պանդոկապանն զսուրբն Մինաս և զզօրականս, ոչ գիտելով թէ ո՛վ ոք իցէ. քանզի այսպէս կարծէր թէ 'ի թագաւորէն առաքեցան։ Եւ ասէր թէ խոստովանիմ առաջի Աստուծոյ և առաջի ձեր զանօրէնութեան գործս իմ, քանզի յորժամ տեսի զգանձն սորա՝ լցաւ սիրտ եղկելւոյս յիմարութեամբ. և սպասեցի սմա մինչև ննջեաց, և յարուցեալ սպանի զսա, զի ժառանգեցից զգանձն։ Արդ ահաւասիկ քսակ սորա լի գանձիւն իւրով, տաց քեզ և հարիւր դահեկան յիմոց գանձուց, միայն ազատեա զիս 'ի սպանմանէս։ Ասէ սուրբն. Զղջացիր, և և ես թողում քեզ։ Եւ նա ասէ. Որպէս հրամայես տէր իմ՝ առնեմ. և թէ փրկիմ յայսմ որոգայթէս՝ զի մի սպանցէ զիս թագաւորն, երթամ՝ 'ի սուրբն Մինաս և ապաշխարեմ։ Իսկ իբրև ետես սուրբն Մինաս զզղջումն առն այնորիկ, ասէ ցնա. Դիր 'ի միջի առաջի իմ զսակաւիդ, զի յայտնի լիցին փառքն Աստուծոյ 'ի սուրբսն իւր։ Յայնժամ եդեալ զկողովն լի անդամօքն սպանեալ մարդոյն առաջի սրբոյն. և սուրբն Մինաս ծունր կրկնեալ աղօթեալ առ Աստուած, զի յարիցէ սպանեալն։ Եւ դարձեալ յաղօթիցն՝ ասէ ցկոտորատեալ մարմինն. Քեզ ասեմ յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, արի և կաց կենդանի հաստատութեամբ ամենայն անդամօքդ քոյ։ Եւ նոյնժամայն յարեաւ այրն ողջանդամ կենդանի, որպէս և էրն յառաջագոյն, և անկեալ երկիր պագանէր սրբոյն Մինասայ և գոհանայր զԱստուծոյ։ Իսկ սուրբն Մինաս օրհնեաց զնոսա, և եղև 'ի նոցանէ աներևոյթ զօրօքն իւրովք։ Եւ առեալ պանդոկապանն զդահեկանն և վաճառականն զքսակն իւր և յարուցեալ գնացին 'ի վանս սրբոյն Մինասայ, և ետուն զնուէրսն զոր խոստացեալ էին։ Եւ ապա խոստովանեցաւ պանդոկապանն առաջի ամենայն ժողովրդեանն՝ զոր ինչ գործեաց առ վաճառականն, և թէ որպէս սուրբն յարոյց զնա աղօթիւքն։ Եւ ամենեքեան որք լսէին՝ փառս ետուն Աստուծոյ. հիանայր և վաճառականն եթէ որպէս սուրբն յարոյց աղօթիւք զնա. և դարձեալ զարմանայր թէ սպանաւ և յարեաւ. և տայր փառս Աստուծոյ մեծաւ գոհութեամբ։ Եւ կեցեալ անդ պանդոկապանն մեծաւ ճգնութեամբ և առաքինի վարուք ամս հինգ՝ և փոխեցաւ առ Քրիստոս ընդունելի աղօթիւք։ Իսկ վաճառականն դարձաւ ուրախութեամբ և պատմեաց յամենայն Աղեքսանդրիա զփառսն Աստուծոյ և զսքանչելագործութիւն սրբոյն Մինասայ. վասն որոյ բազումք 'ի հեթանոսաց հաւատացին 'ի Քրիստոս և 'ի սուրբ վկայն նորա Մինաս։

Պատմեցից միւս այլ ևս սքանչելիս չնաչ 'ի սրբոյն Մինասայ.

Այր ոմն անուն Ազապիոս խորհեցաւ ընդ միտս իւր և ասէ. վասն զի Աստուած ցոյց զիս բարութեամբ պարգևօք իւրովք և ունիմ ինչս բազումս, արդ արարից երկու սկիհս արծաթի, զմինն տաց 'ի տաճարն սրբոյն Մինասայ, և զմիւսն կալայց ինձ 'ի սպասու։ Եւ ասաց արծաթագործին առնել զերկուսն միաչափ, և ետ գրել 'ի մինն զիւր անուն և 'ի միւսն սրբոյն Մինասայ։ Եւ սրբոյն Մինասայ գեղեցիկ հանդիպեցաւ քան զմիւսն. և տեսեալ զայն Ազապիոս՝ ցանկացաւ անօթոյ սրբոյն. և ասէ ընդ միտս իւր. Երթայց 'ի սուրբն Մինաս և տաց նմա զսկիհն իմ և զսրբոյն կալայց առ իս. և յետ մահուան իմոյ զայն ևս տաց 'ի տաճարն սրբոյն։ Եւ մտեալ 'ի նաւն գնաց. և իբրև եղև ժամ ճաշոյն՝ եկն ծառայ նորա և եդ սեղան, եդ և զսկիհ սրբոյն՝ առն իւրում. և յետ ճաշոյն էառ ծառայն զսկիհն և գնաց լուանալ 'ի ծովն, և հարեալ ալեացն զսկիհն 'ի ձեռաց ծառային։ Եւ երկուցեալ ծառային եթէ արկցէ զնա տէրն իւր 'ի տանջանս, ձգեաց և զինքն 'ի ծովն զհետ սկւոյն։ Իբրև գիտաց այրն զիրսն որ եղեն՝ տրտմեցաւ յոյժ և ասէ. Վա՜յ է ինձ, զի մեղայ առաջի Տեառն Աստուծոյ, և նախանձեցայ ընդ սկիհն սրբոյն, վասն որոյ և կորուսի զծառայն իմ, և եղէ ամօթալի յԱստուծոյ և 'ի մարդկանէ. զի լաւ էր ինձ ընդ միոյն երիս տալ, և ոչ անկանել յայսպիսի ամօթ և 'ի նախատինս, և կորուսանել զծառայն իմ աղնիւ, և մատնեալ այնպիսի մահուամբ։ Արդ միայն եթէ գտից զմարմինն և թաղեցից, տաց զերկրորդ սկիհն 'ի տաճար սրբոյն Մինասայ, և զկորուսեալ սկուտեղի զգինն։ Եւ մինչ նա այսպիսի բանիւք և թախանձանօք կշտամբէր զանձն իւր և լայր, եհաս նաւն 'ի հանգիստն. և նա հայեցեալ յեզր ծովուն նկատէր և զննէր յայսկոյս և յայնկոյս, վստահացեալ թէ ալիքն ձգեալ իցէ և հանեալ 'ի ցամաք զմարմինն նորա։ Ասեն ցնա նաւավարքն. Զի՞նչ է այդ անմտութիւն քո, զի երկու աւուրք անցեալ է՝ յորմէհետէ անկաւ ծառայն քո 'ի ծով, և մօտ որոնես։ Ասէ ցնոսա Առապլիոս. Թողութիւն արարէք ինձ, եղբարք, և մի՛ մեղադրէք. յուսամ 'ի Քրիստոս և 'ի սուրբ վկայն նորա Մինաս, որ կորատեալ մարդոյն կեանս ետ, գոնէ և զմարմին ծառային իմոյ ցուցցէ ինձ զի թաղեցից։ Եւ զայս նորա ասացեալ, ահա ծառայն նորա գայր, ունելով զսկիհն 'ի ձեռին, և քննեալ որոնէր զնաւուն վասն տեառն իւրոյ. և տեսեալ նաւավարացն զծառայն՝ ձգեցին զլարն, և նորա քարշեալ ելին 'ի ցամաքն։ Եւ գիրկս արկեալ համբուրէր տէր ծառային և ասէր. Ահա ծառայն իմ, արդարև մեռեալ և յարուցեալ. ուրախ եղէց և ցընծացայց հոգւով, զի ողորմեցաւ ինձ Աստուած բարեխօսութեամբ սրբոյն Մինասայ։ Ո՞ւմ ոչ պատմեցից զայս ամենայն, սուրբդ Աստուծոյ, զքանչելիսն և ըզնշանս զոր ցուցեր առ իս։ Եւ արդ, որդեակ իմ, պատմեա ինձ, թէ զիա՞րդ անկար 'ի ծովն իբրև հասեր 'ի ջուրն, և ո՞րպէս ապրեցար։ Ասէ պատանին. Տէր իմ, իբրև ելի լուանալ զսկիհն 'ի ծովն, հար ալիքն և ձգեաց զայն 'ի ծովն 'ի ձեռաց իմոց. և երկուցեալ 'ի քէն՝ ընկեցի զիս 'ի ծովն. իբրև հասի 'ի ջուրն՝ տեսի այր մի լուսաւոր և այլ ևս երկու արք ընդ նմա պայծառ տեսլեամբ, և ասէր ցնոսա այրն լուսաւոր, թէ՝ Կալարուք զդա և մի՛ թողուցուք՝ մինչև հանիցէք զդա 'ի ցամաք. և 'ի ժամէն յայնմանէ ոչ բաժանեցան յինէն, մինչև հասի 'ի ցամաք։ Եւ որք լուան՝ փառս ետուն Աստուծոյ և արագահաս վկային իւրոյ սրբոյն Մինասայ։ Եւ գնացեալ 'ի տաճարն սրբոյ վկային՝ ետ անդ զերկու սկիհսն, և զծառայն 'ի սպասաւորութիւն եկեղեցւոյն, և ինքն դարձաւ 'ի տունն իւր՝ փառաւորելով զՔրիստոս Աստուած, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

Դարձեալ միւս այլ սքանչելիս պատմեմ ձեզ,
սիրելիք, եղեալ 'ի սրբոյն Մինասայ.

Հրեայ ոմն էր յԱղէքսանդրիա վաճառական, և բնակէր մերձ առ ումեմն քրիստոնէի, և էին միմեանց սիրելի և բարեկամք. և եղև Հրէին գնալ 'ի վաճառականութիւն. և տարեալ զքսակն իւր գանձիւն, կնքեալ մատանեաւն իւրով ետ 'ի պահեստի 'ի քրիստոնեայն: Եւ իբրև դարձաւ 'ի ճանապարհէն՝ առաքեաց քրիստոնէին ազնիւ պաշար. և առեալ քրիստոնէին զպաշարն՝ ծիծաղեցաւ ընդ միտս իւր և ասաց. Ես զպաշարս առի, և թէ խնդրեսցէ զիւրն՝ առացէ և ոչինչ: Եւ ասէ ցկինն. Ո՛վ կին, եթէ հնար է արասցուք զքսակն Հրէին, և երդումն տաց, մեզ զինչ վնաս է, զի Հրեայ է: Եւ այսպէս ուրացաւ սուտ քրիստոնեայն զքսակ Հրէին, և ընդ միմեանս մարտնչէին, մինչև գիտացեալ ամենայն քաղաքն: Ապա ասէ Հրեայն. Ե՛կ, եղբայր, երդուիր ինձ 'ի սուրբն Մինաս, զի լուեալ է իմ զփառս նորա, եթէ ոչ ինչ ետու ցքեզ, և դու գնա խաղաղութեամբ. և յարուցեալ գնացին 'ի տաճար սրբոյն Մինասայ: Եւ ասէ Հրեայն ցքրիստոնեայն. Երկի՛ր և վախեցի՛ր դու յԱստուծոյ, ընկեր, և ողորմեա անձին քում. որչափ և կամիս՝ 'ի գանձէն առ քեզ, և զմնացորդն տուր ինձ, և մի՛ երդնուցուս սուտ: Իսկ եղկելի և սուտ քրիստոնեայն ոչ կամեցաւ լսել նմա: Եւ կրկնեալ Հրեայն ծունր յարտաքին սրահ եկեղեցւոյն, և արտասուօք աղօթեաց առ Աստուած և ասաց. Աստուած Աբրահամու, Սահակայ և Յակոբայ, որ արժանի արարեր զիս մտանել 'ի տաճար սուրբ վկային Մինասայ. դու լեր միջնորդ ինձ և քրիստոնէիս 'ի ժամուս յայսմիկ: Եւ դարձեալ աղաղակեաց 'ի ձայն բարձր և ասաց. Սուրբդ Մինաս, թէպէտ և չեմ արժանի կոչել զանուն քո, ցոյց ինձ այսօր զսքանչելիս քո: Եւ մտեալ քրիստոնէին ոչ ունելով զերկիւղն Աստուծոյ 'ի մտի՝ երդուաւ. և Հրեայն նայէր թէ լինիցի՛ ինչ նշան վասն երդմանն. սակայն երկայնամտեաց նմա սուրբն Աստուծոյ։ Եւ իբրև կատարեցաւ երդումն՝ դարձան անդրէն երկոքին և գնացին 'ի ճանապարհս իւրեանց։ Իբրև չոգան մղոնք երեք՝ յանկարծակի 'ի վեր վազեաց ձին քրիստոնէին և ընկէց զնա 'ի գետինն, և անկաւ 'ի նմանէ մատանին և բանալին յորում էր քսակ Հրրէին։ Իբրև որոնեաց քրիստոնեայն զմատանին և ոչ եգիտ՝ խնդաց յոյժ, զի անկեալ 'ի ձիոյն և յարեաւ ողջանդամ, համարելով թէ այն եղև հատուցումն երդմանն իւրոյ։ Եւ երթային երկոքեանն 'ի միասին. և հասեալ 'ի ջուր ինչ նստան զի ճաշ կերիցեն. և Հրեայն զղջացաւ ընդ միտս իւր և ասէ. Ընդէ՞ր հաւատացի օրինացն Քրիստոսի և կրօնից քրիստոնէիցն. զի զսքանչելիս զոր լուեալ էի, և ոչ մի ինչ տեսեալ 'ի նոցանէ. զի թէ չէր երդմնեցուցեալ իմ զնա, յետ աւուրց ինչ տուեալ էր ինձ ինչ արդեօք յիմոցն։ Եւ արտասուելով ասէր. Ի զուր կորուսի զամենայն, ի՞նչ արարից ոչ գիտեմ։ Եւ գոհացեալ զԱստուծոյ ասէր. Ընկենում, Տէր, զհոգի իմ 'ի քեզ և 'ի սուրբ վկայն քո Մինաս։ Եւ մինչդեռ նստէին նոքա երկոքեանն և հաց ուտէին, ահա գայր ծառայն քրիստոնէին և ունէր 'ի ձեռինն գանձով զքսակ Հրէին. զոր տեսեալ սքանչացան երկոքեանն. և քրիստոնեայն յոյժ զարհուրեցաւ և ասէ ցծառայն. Ուստի՞ գաս և կամ զի՞նչ է այդ զոր ունիդ։ Պատասխանի ետ ծառայն և ասէ. Եկի վասն որոյ առաքեցեր, տէր իմ, կատարել զհրամանս քո։ Եւ նա ասաց. Զի՞ առաքեցի, և դու զո՞ր հրաման եկիր կատարել։ Եւ նա ասէ. Տէր իմ, այսօր եկն առ տիկինն իմ ձիաւոր մի յոյժ բարձր և ահաւոր, և ունէր զմատանին քո և զբանալին յորում եդեալ էր քո զգանձն։ Եւ ասէ ցտիկինն. Ճանաչե՞ս զայս, այր քո առաքեաց զիս և աղաչեաց զքեզ ասելով, տուր զքսակ Հրէին 'ի ձեռն ծառային իմոյ, զի տանջիմ չարաչար 'ի սուրբ վկայէն. վասն որոյ տիկինն իմ փութացոյց զիս, և ես ընթացայ և բերի զքսակս, ահաւասիկ մատանին քո և բանալի գանձուցդ։ Եւ յարուցեալ Հրեայն ած յինքն զքսակն իւր նովին կնքովն, և ուրախութեամբ աղաղակէր ասելով. Մեծ է Աստուածն քրիստոնէից և սուրբ վկայն իւր Մինաս։ Եւ նոյնժամայն յարուցեալ դարձաւ 'ի վանք սրբոյն

Մինասայ, և զմի մասն գանձուցն ետ եկեղեցւոյն սրբոյն Մինասայ, և ասաց. Դու գիտես, սուրբդ Աստուծոյ, զի առաջի քո ասացի ցնա, թէ որչափ և կամիս առ քեզ և զայլ տուր ցիս, և նա ոչ կամեցաւ. արդտաց զայն քում սրբութեանդ։ Եւ հրաժարեալ 'ի պաշտմանէ հրէութեան՝ մկրտեցաւ ինքն, և ամենայն տուն իւր հաւատացին 'ի Քրիստոս. և քրիստոնեայն գնաց մեծաւ ամօթով և տրտմութեամբ 'ի տուն իւր։ Եւ յայնմ օրէ ոչ ոք իշխէր երդնուլ 'ի սուրբն Մինաս և ոչ 'ի տաճար նորա, ոչ սուտ և ոչ իրաւ։ Եւ առեալ քրիստոնէին զկէս ընչիցն իւր և գնաց մատոյց սրբոյն Մինասայ. և կեցեալ անդ ապաշխարեաց զյանցանս իւր, և ոչ մեկնեցաւ 'ի տաճարէն, մինչև յայտնեցաւ նմա ընդունելի ապաշխարութիւն նորա. 'ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Վկայաբանութիւն Սրբոյն Մովկիմայ քահանայի։

Յամի չորրորդի անթիւպատութեանն Լաւոդիկեայ 'ի կողմանս Ովերայ, էր մոլեգնութիւն բազում հեթանոսացն. յամենայն քաղաքս և 'ի գեօղս և յամենայն աշխարհս՝ բազում միաբանութիւն լինէր 'ի կռուոցն տօնսն։ Արդ յԱմփիպօլիս մոլեգնեալք պարէին Դիոնիսեայ, զդիւական մոլորութեանն կատարել ըզպաշտօն։ Իսկ Մովկիմոսն ողջախոհութեան վարդապետն երեց լեալ յԱմփիպօլիս՝ սուրբ և կաթողիկէ եկեղեցւոյ, ցուցանել կամեցեալ ամենեցուն զինքն, վասն զի բազում ժամանակք էին զի ուսուցանէր ըզբանն փրկական, պատուիրելով և ասելով. Նայեցարուք և փախերուք 'ի կռոցն մոլեգնութենէ, և դարձարուք առ Տէր Աստուած, որ միածնիւ Որդւովն իւրով ծագեաց զլոյս արդարութեան և լուսաւորեաց զմեզ. զանզգայիցն տօն առ ոտն հարկանելով, և զօրհանապազ զգործն Աստուծոյ 'ի քաղաքին կատարելով։ Արդ հասեալ մոլեգնութեանս այսորիկ՝ ամենեքեան առհասարակ պարէին, լուծեալք և սակմեալք Դիոնիսեայ պարմամբք։

Իսկ 'ի հինգերորդ ամսեան՝ Լաւոդիկոս անթիւպատոսն եկն յԱպողոնիա յԱմփիպօլիս, զի և նա պարեսցէ Դիոնիսեայ. և ընդ առաւօտն ասէն նմա վասն զինուորին Քրիստոսի Մովկիմայ, եթէ դարձուցանէ զբազումս 'ի պաշտամանէ Դիոնիսեայ, ընդունայն և խաբող վարդապետութիւնս ուսուցանելով՝ դառնաւ 'ի յԱստուած իմ խաչեալ և թաղեալ. և նմա հաւատացեալ բազումք դարձան 'ի գիտութիւն իմ քարոզելով սոցա. արդ եթէ նմա թողացուցես՝ ամենեքեան հաւատան 'ի նա և ընդունայն արասցեն զմեր զողջակէզսն: Իսկ Լաւոդիկոս անթիւպատոսն իբրև լուաւ զայս՝ նստաւ 'ի բարձր բեմի յատենի, և հրամայեաց զկնուորացն զի կալցեն զՄովկիմոս և ածցեն յատենին: Արդ եկեալ զօրականին Քրիստոսի՝ զուարթերես կայր առաջի: Ասէ ցնա անթիւպատոսն. Ընդէ՞ր ոչ զոհես աստուածոցն, և որք զոհենն դարձուցանես ընդունայն խաբէութեամբ: Մովկիմոս ասէ. Անգիտութեամբ մի հարցանէր, այլ զգիտութիւն 'ի խորհուրդս քո հաստատեա, և ուսիր զճշմարտութիւնն. իսկ, ով անթիւպատոս, իմ կեալս Քրիստոսիւ է, վասն որոյ փութամ զամենեսեան ածել 'ի գիտութիւն ճշմարտութեան. վասն զի ուսեալ 'ի սքանչելի գրոց խրատեցայ՝ եթէ կուռք հեթանոսաց դևք են և զօրութիւն նոցա է մոլեգնութիւն: Լաւոդիկոս ասէ. Շատախօսութիւն ուսեալ ես: Մովկիմոս ասէ. Ոչ շատ խօսիմ, այլ զճշմարիտն ասեմ քեզ, զի դևք են և կուռք անշունչք: Լաւոդիկոս ասէ. Շահ արասցես քեզ եթէ զոհես, զերծցիս 'ի տանջանացն: Մովկիմոս ասէ. Ի տանջանացն Աստուծոյ զերծանիմ և 'ի դատաստանացն՝ եթէ ոչ զոհեմ: Լաւոդիկոս ասէ. Շահեա զանձըն քո և զոհեա: Մովկիմոս ասէ. Ոչ զոհեմ, վասն զի մահաբեր է ինձ յաւիտենական առաջի Աստուծոյ: Լաւոդիկոս ասէ. Կախեցէք զդա և քերեցէք յականողեաց մինչև 'ի ծնօտս դորա՝ մինչև մերկասցի ոսկրըն 'ի մարմնոյն, զի խրատեսցին ամենեքեան դովաւ՝ ոչ հայհոյել զաստուածսն, այլ զոհել յստակամտութեամբ: Արդ մինչդեռ քերէին զնա դահիճքն՝ քաջ նահատակն Քրիստոսի 'ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Որ թագաւորդ ես յաւիտեան, Աստուած, որ արդարութեան ճառագայթիւքդ լուսաւորեցեր և զխաւար մարդասպանացն ցրուեցեր, որ անդողանալի գանձուց և անմահութեանց տուօղդ ես, ծանիր զծառայս քո, փութապէս զընթացս որ վասն քո ճշմարտութեանդ կատարեմ: և տուր ինձ անխափան հանդիպել քոյոյ խոստովանութեանդ:

Արդ մինչդեռ նա զայս ասէր՝ դահիճքն քերէին զնա և մինչ յոսկերն հասուցանէին զվէրսն. և իբրև տկարացան սպասաւորքն և ոչ կարէին չարչարել զնա, աստուածատեացն Լաւոդիկոս հրամայեաց իջուցանել զնա. և իբրև իջուցին՝ եկաց առաջի դատաւորին. իսկ Լաւոդիկոս ասէ. Զոհեա աստուածոցն Դիոնիսեայ, և փրկեա զքեզ 'ի բազում տանջանացդ: Իսկ սուրբն Մովկիմոս լուռ եւեթ կայր. և յետ այսորիկ ասէ. Աստուածք որ արուեստիւ մարդկան լեալ են՝ փայտ անձայն և անշարժ կացեալ, ասես եթէ զոհեա. ոչ երբէք կարես հաւանեցուցանել զիս զոհել դոցա՝ որք ոչ են Աստուածք, անամօթ և ամենևիմբ հնազանդեալ բանսարկուին. ո՞չ տեսանես զի ամենևին ոչ այլայլեալ մարմին իմ 'ի տանջանացդ, և ոչ մերձենայ յիս ցաւք չարչարանացդ, վասն զի տկար և անժոյժ են չարչարանքդ քո: Արդ լուեալ զայս Լաւոդիկեայ՝ ասէ. Ո՛չ եթէ օգնութիւն քո յԱստուծոյ քումմէ, այլ կախարդութեամբ զամենեսեան խաբես. բայց արդ հրամայեմ հրոյ ծախել զքեզ, զի ամենայն ցաւք մարմնոյ քո խմորեսցին և 'ի հող ցրուեսցին:

Եւ հրամայեաց հնոց լուցանել, ձիթով և որթով և վշով զնա տոչորել, մինչև ելանէր բոցն շուրջ զհնոցաւն իբրև կանգունս վաթսուն: Եւ իբրև ետես զբոցըն Լաւոդիկոս զի սաստիկ էր՝ հրամայեաց ածել զերանելին Մովկիմոս, հարցանէր զնա և ասէր. Զոհե՞ս Դիոնիսեայ եթէ ոչ. իսկ նա լուռ կայր. դարձեալ ասէ Լաւոդիկոս. Ըստ չար խորհրդոյդ զպատրաստեալ տանջանսդ՝ ահա տեսանես. իսկ զմեծին աստուծոյ Դիոնիսեայ զպայծառութիւն քաջապէս ծանիցես և զառ 'ի քեզ զաստուածառաք օգնականութիւն նորա՝ որ 'ի նմանէ լինիցին, և 'ի փառս հասանիցես. արդ զոհեա աստուծոյն Դիոնիսեայ: Մովկիմոս ասէ. Ասացի, անթիւպատէ, եթէ ոչ զոհեմ խլից և կուրից և համրից, որ կորուսանեն զհոգիս մոլորս մարդկան. բայց դու կամիս ճանաչել, զոր դու աստուածս անուանես, ոչ է Աստուած՝ այլ կռածոյ և քերածոյ: Լաւոդիկոս ասաց. Ա՛յ չարագլուխ. և քերածո՞յ է այն՝ որ զօրութեամբն Աստուած լեալ է, զի որ 'ի նոսա զօրութիւնքն բնակեալ են՝ զառ 'ի մէնջ ողջակէզսն ընդունին և կեանս մեզ շնորհեն։ Մովկիմոս ասէ. կամի՞ս դու, պայծառդ և վայելուչդ, զի մուծից և զոհեցից դիցն՝ իմով ողջակիզօք, և ճանաչիցէք ամենեքեան զզօրութիւն Դիոնիսեայ։ Լաւոդիկոս ասէ. Մուտ և զոհեա՝ զի ծանիցուք զզօրութիւն մեծ աստուծոյն Դիոնիսեայ։

Եւ հրաման առեալ երանելւոյն մտանել. և արարեալ զնշանն Քրիստոսի 'ի ճակատն իւր, զգէնն Յիսուսի ընդդէմ բանսարկուին զգեցեալ, վազեաց 'ի ներքս 'ի տաճարն և կացեալ առ պատկերին Դիոնիսեայ՝ ասաց. Աստուած ամենակալ, որ զամենայն ինչ փառօք Քրիստոսի ստեղծեր, որ զօտարացեալս 'ի քումմէ աստուածութենէդ յամօթ արարեր, և պարկեշտ երկիւղիւ պատուիրանաւդ զծառայսն քո վառեցեր, որ զանձայն և զանշարժ կուռսն Բաբելացւոց փշրեցեր, և զհաստատութիւն ճշմարտութեան և արդարութեան քո Դանիէլի յայտնեցեր, որ զօտարսն և զքրիստոսատեացսն 'ի ձեռն աստուածազգեաց փառացըն ջնջեցեր, որ առ երից մանկանցն զբարձրացուցեալ բոցն ցրուեցեր, և զալէկոծեալ և զտոչորեալ սրտմտութիւնն Փարաւոնի և զընտրելոց նորա՝ յանդունդսըն ընկղմեցեր, և զխայտառակող բռնութիւն խափանեցեր, որ ակնարկելով արդարոյ ձայնին լուար, և գաւազանաւն 'ի վիմէն աղբիւր բղխեցուցեր, և կեանս ժողովրդեան որ զքեզ ճանաչէին՝ շնորհեցեր։ Զքեզ որ եսդ յառաջ քան զյաւիտեանս, վասն փառաց թագաւորին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ աղաչեմ և պաղատիմ, լուր և եկ ինձ յօգնականութիւն, և ցոյց այնոցիկ որ զճշմարտութիւնն իբրև զստութիւն համարին։ Վասն զի դու ես որ յաւիտեանս կեաս և մնաս. և 'ի ձեռն քո լոյս անթառամ ծագեաց. զմոլորութիւն դիւացն 'ի բաց արարեր և զպիղծ կռոցն։ Եւ զայս ասացեալ 'ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Անպտուղ կոյր և անկատար խուլ, անշարժ Դիոնիսիէ, քեզ ասեմ վասն անուանն Աստուծոյ ահաւորի և փառաւորի որ 'ի բարձունս բնակեալ է, անկիր 'ի մեհենէդ 'ի գետին. վասն զի 'ի ծածուկ մոլորութեան կաս այսր և 'ի զայթակղութիւն անմտաց։

Եւ առժամայն եղև որոտումն մեծ, և անկեալ Դիոնիսիոս մանրեցաւ և եղև իբրև զփոշի, մինչև ամենեքեան որ տեսին՝ փախեան և զարմացան ընդ եղեալ իրսն։ Ասէ երանելին Մովկիմոս ցՂաւոդիկոս. Տեսե՞ր զմոլորութիւնդ որով զանմեղաց զխորհուրդս արգելելով 'ի մահ ածէիր. արդ իջեալ ժողովեա զմոխիր դորա, և իմացիր թէ յորպիսի չարիս էք մոլորեալք։

Յայնժամ խռովեալ Ղաւոդիկոս վասն պատկերին Դիոնիսեայ, հրամայեաց արկանել 'ի հնոցի բորբոքեալ. և իբրև արկին զնա 'ի հնոցն, տեսանէր զինքըն 'ի մէջ հնոցին՝ զի էր չորրորդ, իսկ միւսոցն կերպարանքն էին իբրև զՃառագայթս արեգական գերազանցեալ քան զլուսոյն պայծառութիւնն։ Եւ բացեալ երանելւոյն զբերան իւր ասաց. Փառք քեզ Աստուած, փառք քեզ փառք քեզ թագաւոր յաւիտենական. փառք քեզ, լուսաւորիչ անապական, պայծառութիւն օրհնեալ յաւիտեանս. գոհանամ զքէն Տէր Աստուած հարցն մերոց, զի բանիդ քո ամենայն ինչ հնազանդեալ է. օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց, որ 'ի զօրաց քոց երկնաւորաց երկրպագիս, գովիս օրհնիս և փառաւորիս 'ի բերանոյ սրբոց քոց հրեշտակապետացս, որ են ընդ իս 'ի հնոցի աստ. ցրուեա, Տէր, զբոց հրոյս այսորիկ, և երևեցո զփառս քո, և այրեա զայնոսիկ որ յանզգայութեան անթիւպատոսին, և ածին 'ի վերայ իմ զգաւինս զայսոսիկ և զանիրաւ սպառնալիս. զի ամենեքեան ծանիցեն թէ դու միայն ես Ճշմարիտ Աստուած յաւիտեանս. ամէն։

Եւ առ ժամայն ցրուեցաւ բոցն յանթիւպատոսն կոյս, և այրեաց զնա պիղծ ընկերօքն և սպասաւորօքն Դիոնիսեայ, մինչև ոչ կարացին զմարմինս իւրեանց ժողովել, վասն զի Աստուծոյ սպառնալիք էին 'ի վերայ սպանման նոցա։ Արդ լեալ այսպիսւոյ՝ ամենեքին 'ի դողումն եղեալ, և երանելւոյն Մովկիմոսի ելեալ 'ի հնոցէն, ոչինչ ամենևին կարացեալ տիրել 'ի վերայ նորա հրոյն։ Իսկ Թաղիոս ոմն զօրագլուխ անթիւպատոսին արկ զնա 'ի բանտ։ Իսկ իբրև անցին աւուրք քսան և վեց՝ եկն 'ի տեղի նորա այլ անթիւպատոս. և նորա լուեալ 'ի զինուորացն վասն երանելւոյն Մովկիմայ քաջութեանն անթիւպատոսին, զայրացաւ վասն նորա դառնապէս, և զառաջին օրն խորհուրդ առեալ ընդ պիղծսն եթէ որպիսի օրինակաւ զարդարն կորուսցեն. և էր երանելին Մովկիմոս 'ի բանտին օրհնելով զԱստուած և փառաւորելով: Իսկ յերկրորդ աւուրն եկեալ անթիւպատոսն և կորուսանել զնա կամեցեալ, և նստեալ 'ի բարձր տեղւոջ ուրեմն որ կոչէր Փորոս, հրամայեաց ածել զերանելին Մովկիմոս. և ասէ ցնա անթիւպատոսն. Ասա ինձ, զինչ անուն է քո: Ասէ ցնա երանելին. Զանուանէ իմմէ հարցանես, լուր անթիւպատէ. պատուական հայրն իմ Եփրատէս, և գովելի իմաստութեամբ մայրն իմ Եւստաթիա՝ ընծայեցուցին զիս Քրիստոսի, և կոչեցին ինձ անուն Մովկիմոս. և աճեցեալ մնայ 'ի նոցանէ իբրև զՃշմարիտ որդի: Եւ լուեալ զայս անթիւպատոսն՝ ասէ. Յորմէ՞ ազգէ ես, և կամ զինչ են կեանք քո: Մովկիմոս ասէ. Հայրն իմ դիոկանդիդիմ վախճանեցաւ 'ի մեծըն Հռովմ, իսկ մայրն իմ անթիւպատեայ Ղեմպու էր դուստր Ոսկղարայ: Անթիւպատոսն ասէ. Իսկ զի՞արդ այդպիսւոյ ազգի՝ յարձակեալ մանրեցեր զքաջն Դիոնիսիոս, և զսիրելին ինքնակալ թագաւորին հրոյ մատնեցեր, և զօրինադրութիւն ողջակիզացն խափանեցեր: Մովկիմոս ասէ. Ես, ով անթիւպատէ, կարծեմ թէ աստուածս ոչ մանրեցի, և ոչ զսիրելի ինքնակալին հրով այրեցի, և ոչ զպարկեշտ ողջակիզաց թըշնամանեալ այպանեցի. այլ երկիւղիւ մեծին Աստուծոյ յերկինս նայեցեալ՝ զկուռս խուլս և զքերածոյս և ըղձնակութիւն սատանայի խորտակեցի, և զսիրելին բանսարկուին և զթշնամին արդարութեան հրոյ ծախեցի, և զպիղծ ողջակէզս մարդասպանին ցրուեցի և ծաղր արարի, և զծոց բարիատեցին պարկեշտ աղօթիւք ունայն երևեցուցի. բոլորով սրտիւ կացեալ 'ի խոստովանութիւնս վկայութեամբ: Մաքսիմիանոս ասէ: Քաջ զքեզ գիտես այդպիսի չարաբարս լեալ: Մովկիմոս ասէ. Վասն երկիւղին զոր ունիմ առ Աստուած՝ քաջ էի 'ի կործանումն կռոց ձերոց: Մաքսիմիանոս ասէ. Մոռացիր զբազում յիմարութիւնդ քո, և մատուցեալ զոհեա Ապողոնի՝ զի մի չարաչար կորիցես: Մովկիմոս ասէ. Զարաչար մեռանիմ, ով անթիւպատէ, եթէ մոռացայց զբարերարութիւնն Աստուծոյ և զօգնակամութիւն Ճշմարտին Աստուծոյ. և մերձեցայց 'ի դոսա որք ոչդ են և ոչ լեալ են երբէք։ Մաքսիմիանոս ասէ. Արդ թէպէտ և վասն մոլեգնութեանդ քո պղծ աստուածն Դիոնիսիոս մանրեցեր անզգամութեամբ, և վասն համբերելոյ նորա գտեր թողութիւն, բայց առեալ միտս դիւցազանական մարդոյ՝ զոհեա Ապողոնի։ Մովկիմոս ասէ. Մի մոլեգնակից լինիր բանսարկուին, ով անթիւպատէ, և մի յիշեր ըզվատամտութիւն Լաւոդիկեայ, որ զօրութեամբն Աստուծոյ վատնեցաւ, վասն բարկացուցանելոյն իւրոյ. այլ յիշեա և նայեա յօգնականութիւնն Աստուծոյ՝ որ յիս կատարեցան, և փախիր յայսպիսի պատուհասէ. զի մի և դու չարաչար պատուհասեալ ելցես 'ի կենացս յայսցանէ։

Իսկ Մաքսիմիանոս լուեալ զայս՝ ոչ երկեաւ յԱստուծոյ, ամբարտաւանական մտօք. հրամայեաց պրկել զնա 'ի վերայ երկուց անուոց, զի 'ի հոլովել անուոցն քակտեսցին անդամք նորա։ Իսկ նա յահագին ցաւոցն ծանրացեալ՝ ասէր. Տանջանքդ քո և չարխորհրդութիւնդ՝ ինձ փրկութիւն ողւոյ գործեն առ Աստուած։ Արդ ընդէր ոչ փութաս զկարօտութիւնս իմ լնուլ և զկամս հօրն քո սատանայի կատարել. ինձ կեանք Քրիստոս է և մեռանելն շահ 'ի խոստովանութիւնս յայս։ Արդ 'ի հոլովել անուոցն ջախջախէին անդամք սրբոյն, բայց սակայն ոչ տիրէին նմա տանջանքն. իսկ իջուցին արեան 'ի մարմնոյն՝ 'ի վերայ ոտանցն ցայտէին և ընդ անիւսն 'ի բաց հոսէր։ Իսկ մեծ իմաստունն բացեալ զբերան իւր ասէր. Որ պարկեշտ գիտութեան տուօղ ես, Աստուած օգնական և ապաւէն և փրկիչ, գոհանամ զքէն, զի զիս զանարժանս արժանիս արարեր ընդունելոյ զհանդէս ընդդէմ բանսարկուին. վասն զի դու ես Աստուած, որ քակես զիմաստութիւն նորա, մի տիրեսցեն ինձ խորհուրդք աղտեղիք՝ որ 'ի քէն ոչ սիրեցաւ, վասն զի մեծ է անուն քո 'ի վերայ երկիւղածաց քոց։ Եւ վաղվաղակի ննջնակմեալ[1] անիւն՝ և ել արդարն. և տեսեալ ամենեքեան զնորա վկայութիւնն, և Մաքսիմիանոս տրտմեալ վասն զի և նա յաղթեցաւ 'ի նմանէ՝ եդ զնա 'ի բանտի։ Եւ երանելին Մովկիմոս 'ի բանտին փառաւորէր զԱստուած։

---

[1] Յօր. այսպէս։

Եւ յետ երից աւուրց հրամայեաց զի արկցեն զնա վայրենի գազանացն. և իբրև ժողովեցան ամենայն բազմութիւնն 'ի թէատրոնն՝ հանդերձ անթիւպատոսիւն, հրամայեաց Մաքսիմիանոս մտանել 'ի թէատրոնն. և մտեալ զինուորն Քրիստոսի 'ի թէատրոնն առողջ մարմնով, մինչև ամենեցուն զարմանալ և ասել զնմանէ, թէ՝ Չէ սա այն որ ընդ տանջանօք անկեալ էր. վասն զի տեսին զնա յոյժ զուարթ։ Արդ իբրև ժողովեցաւ բազմութիւնն, վերացոյց թև մի զգառագղին՝ որ գարմանիչն էր գազանացն, և եհանէր մատակ առիւծ մի մեծ յոյժ սաստկապէս, և ընթացեալ անկանէր առաջի ոտից նորա, և լիզէր զոտնատեղիս սրբոյն. և իբրև ժամ մի անց՝ զտեղի առ մատակ առիւծն վայր մի, և ապա ընթացեալ վաղվաղակի գիրկս արկանէր զնովաւ և լիզէր զքիրտն մարմնոյ նորա։ Եկին երկու գազանաբոյծք և շողոքորթէին նմա, զի մտցէ անդրէն 'ի գառագիղն իւր. և նա ընթացեալ սպան զմի 'ի նոցանէ, և դարձեալ 'ի սուրբն համբուրեաց զնա, և ապա եմուտ 'ի գառագիղն։ Եւ յետ այսորիկ վերացուցեալ զթև այլոց գազանաց գառագղին և զանազան մարտկացն, և եհանէր առիւծ մի՝ որ ոչ էր կերեալ զաւուրս երիս. և ընթացեալ գիրկս արկանէր երանելւոյն Մովկիմայ, և զագին տատանէր, ողորմութիւն խնդրէր 'ի նմանէ. և համբուրելով զմարմին սրբոյն՝ ընդ բազմութիւնն այսր անդր հայէր։ Իսկ բազմութիւնն աղաղակէր ասելով. Արձակեա զարդարդ, զերանելիդ Մովկիմոս, զոր և գազանքն սիրեն, և Աստուած՝ բարեպաշտութեան նորա ողորմի։ Արդ մինչդեռ ամբոխն աղաղակէր՝ վազեաց առիւծն և անկեալ առ ոտս երանելւոյն թաւալէր։

Իսկ Մաքսիմիանոս լուեալ զձայն ամբոխին՝ հրամայեաց առաքել զսուրբն առ Փիլիպպոս եպարքոս, 'ի Հերակլէ Պերինթացւոց, գրեալ վասն նորա։ Եւ եկն 'ի Հերակլէ. և եղև 'ի բանտին զաւուրս ութ. հրամայեաց եպարքոսն տանել 'ի Բիւզանդիոն, և անդ հարցանել. և հանեալ 'ի Բիւզանդիա, մուծին զնա առաջի խորհրդական դատաւորացն: Պատմէր զամենայն զոր ինչ արար յանուն Յիսուսի Քրիստոսի. անղեկացեալ առնն վասն ամենայնի զոր ինչ արար առաջի անթիւպատոսին. և իբրև հարցեալ լինէր երանելին Մովկիմոս 'ի դատաւորացն՝ պատմէր նոցա զսքանչելիսն Աստուծոյ: Արդ իբրև ասաց նա զայս՝ արարին նմա վճիռ զի հատցի գլուխ նորա սրով: Իսկ մինչդեռ հանդերձեալ էր զկատարումն վկայութեան ընդունել, համբարձ զձեռս իւր, յաղօթս եկաց և ասէ. Լոյսդ 'ի քեզ հաւատացելոց, Աստուած, օրհնեալ ես, Տէր, որ զյաւիտեանս հաստատեցեր, որ փառաւորեալդ ես 'ի սուրբս և հրեշտակաց Տէրդ ես. մի թաքուցաներ զխորհուրդս 'ի սրբոց. և ընկալ զիս խաղաղութեամբ. զի քեզ վայելէ փառք յաւիտեանս. ամէն: Եւ զայս ասացեալ, հատին զգլուխ երանելւոյն սրով. և վախճանեցաւ երանելին Մովկիմոս քաջ նահատակն Քրիստոսի. և առ ժամայն ձայն եղև յերկնից և ասէ. Ուրախ լեր բարեյաղթ Մովկիմոս, նահատակ Քրիստոսի, քանզի յոյժ յաղթեցեր բռնաւորին, և զզօրութիւն նորա կոխան արարեր: Եկ համարձակ, և մուտ յարքայութիւն երկնից, և ուրախ լեր ընդ հարսն որ աշխատեցան յերկրի, արդ վայելեն յարքայութեանս: Եւ իբրև լուեալ լինէր ձայնս այս՝ առեալ վկայն Քրիստոսի զյաղթական պսակն վերին կոչմանն, և կատարեցաւ երանելին Մովկիմոս 'ի մետասաներորդի մայիս ամսոյ. զորոյ զվայելուչ և զսուրբ նշխարսն թաղեցին Փիլիպպոս և Դաղմասիոս և Կիւրակոս եպիսկոպոս, հանդերձ ամենայն եպիսկոպոսօքն. շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ պսակեաց զերանելին Մովկիմոս ընդ ամենայն քրիստոսասէրսն, և որք կատարեն զյիշատակս նորա խնդութեամբ. զի նորա բարեխօսութեամբ և մեզ ողորմեսցի սուրբ Երրորդութիւնն. որում փառք և պատիւ և զօրութիւն յաւիտեանս. ամէն:

Վկայաբանութիւն Սրբոյն Յակովբայ Մծբնայ հայրապետին։

Մովսէս աստուածային օրէնսդիրն՝ որ եհերձ զկարմիր ծովն, և եհան զժողովուրդն յանապատ անջրդի, և արար այլ սքանչելիս մեծամեծս, զոր գրեալ է մի ըստ միոջէ, յորժամ էառ 'ի պատմել զվարս սըրբոց առաջնոցն, ոչ աւանդութեամբ զոր ընկալաւ յԵգիպտացւոցն, այլ ծագմամբ շնորհացն Աստուծոյ՝ որ տուաւ նմա յայնմ ժամանակի. իսկ ես ուստի՞ կարիցեմ պատմել զայլ սրբոցն զվարս, զառաքինութենէն Հաբելի, կամ զաստուածպաշտութենէն Ենովքայ[1], կամ զարդարութենէն Նոյի, կամ զհաւատոցն Աբրահամու և զընդունելի պատարագէ նորա. արդ կարճ 'ի կարճոյ ասացի ձեզ զվարս սրբոցն և զշնորհացն որ 'ի նոսա էր, և նշանակեցի զանուանս սրբոցն, զի թերևս օժանդակեսցեն ինձ, և տարցեն զիս 'ի նաւահանգիստ ճառիս սրբոյն Յակովբայ։

Մծբին քաղաք էր եդեալ ընդ սահմանօք Հռոմոց և Պարսից, քանզի նախ ընդ Հռոմոց իշխանութեամբըն էր քաղաքն. և երանելին Յակովբ անդ նախ ըզմիայնակեցութիւն յանձն ընկալեալ էր և յանապատի միայն բնակէր, և 'ի գլուխ լերանցն էր բնակութիւն նորա. գարուն և ամառն և աշուն անյարկ կայր, բայց միայն հովանի ինչ նմա յերկնից լինէր. և միայն 'ի ձմերայնի ժամանակի բնակութիւն նորա էր յայրի միում փոքրիկ՝ որ լոկ իւր մարմնոյն[1] բաւական էր միայն 'ի ներքս կալոյ. և կերակրէր ոչ մարմնականօք՝ որով սովոր են մարդիկ բուծանել, այլ 'ի շնորհաց Հոգւոյն սրբոյ կերակրէր. ժողովէր զպտուղս ծառոցն որ 'ի լերինն, և այնու շատանայր. քանզի հրաժարեալ էր 'ի մարմնական սպասաւորութենէ հրոյ, և վերարկու այծէս զգենոյր: Քանզի այնպէս ճնշէր զմարմինն իւր խստամբերութեամբ, զանազան և պէսպէս տանջանօք. և զհանդերձեալսն առաջի աչաց ունելով միշտ, որպէս բանն Պաւղոսի ասէ. Իբրև ընդ հայելի օրինակաւ տեսանեմք: Եւ աղօթք նորա միշտ և հանապազ յաստուածայինն խոկայր, և կերպարանք նորա փայլեալ փոխէր փառաց 'ի փառս, որպէս Տեառն Հոգւով[2]. և 'ի հրաշալի վարուցն բազում նշանք լինէին 'ի ձեռն նորա. և զոր ինչ խնդրէր յԱստուծոյ՝ անյապաղ տայր նմա. և շնորհք մարգարէականք տուան նմա, և յառաջ քան զլինել խորհրդոյն՝ պատմէր. ընկալաւ նա 'ի շնորհաց Հոգւոյն սրբոյ նշանս առնել և բժշկութիւնս կատարել. զոր սակաւուք գրեցից զնշանսն զոր առնէր, և զվարս ճգնութեան նորա յայտնի արարից այնոցիկ որք ոչն գիտեն:

---

[1] Այլ օր. Ենովքայ։

Ի ժամանակին յայնմիկ ննջեաց եպիսկոպոսն Մըծբընայ, և եղև ընտրութիւն 'ի քաղաքին[3], թէ ո՛ արժանի իցէ աթոռոյ եպիսկոպոսութեան. և էին արք հինգ, զորս ասէին ոմանք արժանի լինել. և բազում հակառակութիւն էր 'ի քաղաքին վասն արանցն այնոցիկ թէ ո՛վ 'ի նոցանէ յառաջ մատչիցի յաթոռ հայրապետութեանն. զի ոմն զայս անուն ասէր և ոմն զայն. և 'ի տրտմութենէն 'ի միաբանութիւն ոչ եկին: Յայնժամ խորհեցան արք քաղաքին որք գլխաւորքն էին՝ երթալ առ սուրբն Մարուգէ՝ յանապատ նորա, տեսանել թէ զի՛նչ հրամայեսցէ. և իբրև գնացին նոքա 'ի դուրս խցին, սուրբն Մարուգէ ըստ սովորութեանն իւրում էր յաղօթս: Յայնժամ աշակերտն եկեալ ասէ. Գնացէք 'ի գաւիթս եկեղեցւոյն մինչև կատարեացէ զաղօթսն և եկեսցէ առ ձեզ։ Իսկ սուրբն Յակովբ եկեալ էր յառաջ քան զերիս աւուրս առ սուրբն Մարուգէ. նա մարգարէացաւ նմա և ասէ. Այսօր համբուրեմ զքեզ որպէս միայնակեաց, և վաղիւն համբուրեսցիս զքեզ որպէս զառաջնորդ և զհովիւ հօտի քո։ Ասէ ցնա սուրբն Յակովբ. Թող տուր, եղբայր, զի չեմ բաւական այդմ բանի զոր ասեսդ։ Եւ ելեալ սուրբն Մարուգէ 'ի ժողովն՝ ետես զնոսա խռովեալս, և դասս դասս նստեալ 'ի գաւթին։ Իբրև տեսին զերանելին՝ յարեան ընդ առաջ նորա, զի էր տեսիլ նորա իբրև զհրեշտակի. և նա ակնարկէր ամբոխին լռել[1] մինչև ինքն աղօթեսցէ յեկեղեցին։ Եւ զկնի աղօթելոյն՝ ժողովեցան առ երանելին. և նա կայր հաստատեալ 'ի վերայ գաւազանին 'ի միջի նոցա, և ամբոխին համբուրէր զոտս և զձեռս նորա. և հրամայեաց նոցա նստել և ունկն դնել բանից նորա, և ասէ ցնոսա. Վասն է՞ր իրիք ժողովեալ եկեալ էք աստ։ Եւ նոքա ասեն. Վասն խնդրոյ եպիսկոպոսութեան։ Իսկ նա ասէ. Զո՞ կամիք եթէ նստցի յաթոռ եպիսկոպոսութեան. և ոմանք զայս անուն ասէին և ոմանք զայն, և էր հակառակութիւն 'ի մէջ նոցա։ Նա խաղաղացոյց զնոսա և ասէ. Գիտեմ զի տրտմեալ էք ընդ մահ առաջնորդին ձերոյ, և յարանցն զորս ընտրեցիք՝ չեն արժանի եպիսկոպոսութեան. այլ արի՛ք ելէք յԱմիթ[2], զի անդ ժողով է եպիսկոպոսաց, և գայ անդ պատրիարքն Անտիոքայ, և անդ յայտնէ Հոգին սուրբ 'ի ձեռն նորա[3] զայն՝ որ հանդերձեալ է նստել յաթոռ եպիսկոպոսութեան։ Եւ նոցա ընկալեալ զբանս նորա որպէս 'ի հրեշտակէ Աստուծոյ՝ յարուցեալ գնացին 'ի քաղաքն իւրեանց։

---

[1] Մի օր. որ լոկ թէ մարմնոյն:

[2] Երկ. օր. որպէս 'ի Տեառնէ և 'ի Հոգւոյն սրբոյ:

[3] Մի օր. Մծբնի... ընտրութիւն քահանայիցն:

Եւ յետ աւուրց ինչ գնացին 'ի ժողով եպիսկոպոսացն, և տուեալ նոցա ողջոյն՝ նստան։ Հարցին ցնոսա և ասեն. Զո՞ խնդրէք առաջնորդ. և նոքա ծանուցին նոցա զբանն զոր ասաց սուրբն Մարուգէ, թէ՝ Հոգին սուրբ տացէ ձեզ առաջնորդ. և նոքա առին զբանն 'ի մտի և ասեն. Մատուցանեմք այսօր աղօթս առ Աստուած, որ յայտնէ մեզ զարժանին աթոռոյն։ Եւ 'ի մէջ գիշերին ամենայն բազմութիւնն հանդերձ կաթուղիկոսաւն[1] սկսան աղօթել սաղմոսիւք և օրհնութեամբ և երգովք հոգևորօք. հանդերձ արտասուօք պաղատանս առ Աստուած մատուցանէին վասն խընդրոյն այնորիկ։ Այլ որ զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր և աղօթից նոցա լսէ, ընկէց ափշութիւն 'ի վերայ կաթուղիկոսին որպէս թէ 'ի քուն ինչ, և տեսեալ գեղեցիկ երիտասարդ մի որ ասէր. Սուրբն Յակովբ է այրն այն. և ցուցեալ նմա զտեղին՝ յորում բնակեալ էր, զի էր միայնակեաց սքանչելագործ։ Եւ ընդ համբառնալ հրեշտակին՝ զարթեաւ կաթուղիկոսըն. և յարուցեալ գոհանայր զԱստուծոյ, զի սովոր էր նա զհոգևոր տեսիլն տեսանել։ Եւ վաղվաղակի յարուցեալ իջանէ յեկեղեցին. և առաքեալ կոչեաց զեպիսկոպոսն և զեկեալսն 'ի Մծբնայ. և պատմեաց նոցա զտեսիլ հրեշտակին՝ որ ասաց նմա զանուն սրբոյն Յակովբայ։ Եւ յարուցեալ միաբան ամենեքեան իջին 'ի Մծբին, և գրեցին թուղթ՝ միաբան ժողով եպիսկոպոսացն. և առաքեցին առ հաւատարիմս, և կոչեցին զնա 'ի ժողովն։

---

[1] Երկ. օր. նստել։
[2] Երկ. օր. յԵմիթ։
[3] Երկ. օր. 'ի ձեռն նոցա։

Իբրև եկին առ նոսա՝ ծանուցանեն նմա վասն խընդրոյն այնորիկ. և սուրբն յառաջագոյն տեղեկացեալ և գիտէր զգալուստ հայրապետացն 'ի Մծբին, քանզի Հոգւոյն սրբոյ յայտնեալ էր նմա. և նա պատկառէր ընդդէմ կալ պատուիրանացն Քրիստոսի. և զի բազում անգամ լուեալ էր 'ի սրբոյն Մարուգէէ՝ եթէ հանդերձեալ ես առնուլ զաստիճան առաքելական. և ազդեալ նմա 'ի Հոգւոյն սրբոյ իջանել 'ի ժողովն, քանզի անդ էին ժողովեալ բազմութիւն քաղաքին, և մնային գալստեան սրբոյն, զի ամենեքեան գիտէին զվարս սրբոյն։ Իբրև եկն 'ի մէջ հայրապետացն՝ ողջոյն ետ նոցա. և հրամայեաց նստուցանել զնա կաթուղիկոսն։ Ասէ ցնոսա սուրբն. Վասն էր իրիք կոչեցէք զիս աստ։ Եւ նոքա ասեն. Ի Տեառնէ յայտնեցաւ որ արժանի ես ունել զաթոռ եպիսկոպոսութեան 'ի քաղաքիս։ Եւ նա ասէ ցնոսա. Չեմ բաւական այդմ

---

1. Մի օր. ամենայն բազմութեանն և պարբերքն։

բանի. և ժողովուրդն փութացուցանէր զհայրապետն, և առաւել չտային նմա բազմացուցանել զխօսսն: Եւ վաղվաղակի յարուցեալ հայրապետն առեալ զՅակովբ՝ մտին յեկեղեցին, և կատարեցին 'ի վերայ նորա զկարգ եպիսկոպոսութեանն: Եւ իբրև ձեռնադրեցին զսուրբն Յակովբ եպիսկոպոս՝ եղև ուրախութիւն մեծ 'ի քաղաքին, և տային օրհնութիւն և փառս Տեառն Աստուծոյ, որ կացոյց նոցա հովիւ և առաջնորդ զսուրբն Յակովբ:

Իսկ իբրև անցին աւուրք ինչ՝ իջեալ սուրբն Մարուգէ յաւուր կիւրակէի բազում եղբարբք իւրովք՝ ողջոյն տալ սուրբ եպիսկոպոսին Յակովբայ և օրհնել 'ի նմանէ. և իբրև ողջունեցին զմիմեանս, սկսաւ սուրբն Մարուգէ օրհնել զԱստուած, որ հաստատեաց եկեղեցւոյ իւրում հովիւ զուարթուն: Յաւուր յայնմիկ անդամալոյծ մի գօսացեալ անկեալ կայր 'ի դաւիթս եկեղեցւոյն՝ ամաց հնգետասանից, և լուծեալ էին ամենայն անդամք նորա: Իբրև իջանէին 'ի խորհրդոյն՝ Տէր Յակովբ և սուրբն Մարուգէ՝ ամոլք սրբութեան, տեսեալ զայրն անդամալոյծ որ անկեալ կայր, ասէ սուրբն Մարուգէ ցՏէր Յակովբ. Եկ աղօթեսցուք վասն անդամալուծիս այս, զի ողորմեսցի Տէր և բժշկեսցէ զսա: Յայնժամ հրամայեցին սարկաւագացն դարձուցանել զերեսս նորա յարևելս, և խոնարհեցուցեալ ծունր եդին արտասուօք, և ասէին այսպէս. Տէր Աստուած զօրութեանց, որ արժանի արարեր զքաղաքս զայս քարոզութեան անուանդ քում սրբոյ 'ի մէջ հրէից և կռապաշտից, և ծանեան թէ դու միայն ես ճշմարիտ Աստուած, և հաւատան յանուն Որդւոյ քո սիրելւոյ Տեառն Յիսուսի Քրիստոսի. արդ զոր արարեր 'ի ձեռն սրբոց քոց առաքելոց նշանս՝ արա և այժմ 'ի ձեռն նուաստ ծառայիցս քոց. զի զօրութիւն քո քարոզեսցի և անուն քո փառաւորեսցի, և բարձրանայ զօրութիւն սուրբ խաչի քո. և որպէս ետուր յայտնապէս զնշան քո յԵրուսաղէմ 'ի ձեռն սրբոց քոց առաքելոցն՝ յորում հրեայքն հծծէին ընդ միմեանս և ասէին. Ահա է նշան որ լինի 'ի քաղաքիս յայսմիկ և նոքա յամօթ լինէին, և աւետարան քո զուարճանայր, և սուրբ խաչ քո պայծառանայր, և եղ-

Ջիւր սուրբ եկեղեցւոյ քո բարձրանայր 'ի փառս քո։ Եւ արդ, Տէր բարերար, լուր աղաչանաց ծառայից քո, և բժշկեա զանդամալոյծս զայս, և կարկեա զբերանս այնոցիկ՝ որ նախատեն զսուրբ խաչ քո, որ է պարծանք եկեղեցւոյ քում սրբոյ, և արա առ մեզ զնշան քո բարի՝ զի տեսցեն ատելիք քո և ամաչեսցեն և յամօթ լիցին։ Եւ իբրև կատարեցին զաղօթսն, ասէ սուրբն Մաշուգէ ցՏէր Յակովբ. Մերձեցիր և տեառնագրեա 'ի վերայ անդամոց դորա։ Եւ նա ասէ. Դու մատիր։ Ասէ սուրբն Մարուգէ. Քեզ է պարտ և արժան դմա ձեռն դնել[1] և աղօթս մատուցանել, զի պատիւ եպիսկոպոսութեան ունիս։ Յայնժամ ասէ Տէր Յակովբ. Ես ընդ աջմէ և դու յահեկէ։ Եւ բուռն հարեալ զնմանէ՝ ասեն. Այր դու, արի կաց յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. և նոյնժամայն յարեաւ և կանգնեցաւ 'ի վերայ ոտից իւրոց, և հաստատեցան անդամք նորա. տարածեաց զձեռս իւր 'ի վեր և փառաւոր առնէր զԱստուած։ Եւ ժողովուրդքն իբրև տեսին զսքանչելիսն՝ անկանէին և երկիր պագանէին Տեառն, և բարձր ձայնիւ օրհնէին զԱստուած և ասէին. Օրհնեալ ես դու Քրիստոս, որ յամենայն ժամ լսես այնոցիկ՝ որ հաճոյ են քեզ, և 'ի ձեռն ծառայից քոց առնես սքանչելիս, զի բարձրասցի և փառաւորեսցի անուն քո սուրբ. զի դու միայն ես Տէր Աստուած, և քեզ փառք յաւիտեանս. ամէն։ Յայնժամ ասէ սուրբն Մարուգէ ցանդամալոյծն. Արի, զգեցիր զպատմուճան քո, և պնդեա զմէջ քո, և քարոզեա զզօրութիւն Աստուծոյ՝ որ 'ի ձեռն ծառայից իւրոց եղև քեզ։ Իսկ Հրեայքն իբրև լուան՝ զարմանային ընդ սքանչելիսն որ եղև զօրութեամբն Աստուծոյ 'ի ձեռն սրբոյն Յակովբայ, հակառակելով ընդ հաւատացեալսն՝ որք զԱստուած փառաւորէին վասն սքանչելեացն որ եղև 'ի միջի նոցա։ Յետ այսր ամենայնի երևեցաւ այր մի անուն Կեդրոն[2], որ ունէր զկարգն Մարկիոնի կախարդի, և կայր հակառակ ընդդէմ քրիստոնէից, և էր յերկրէն Պոնտացւոց, և յայտնի էր առաջի թագաւորին Կոստանդիանոսի. և էր եղբայր նորա զինուորեալ 'ի գունդն արքունի, և հաճոյ էր արքային։ Եւ ասէ ցնա արքայ. Տեսիլ երեսաց քոց գեղեցիկ է, և դու յոյժ պիտանի. մի ինչ պակաս է 'ի քէն՝ զի զԱստուած ոչ ճանաչես, որ արար զերկինս և զերկիր և որ 'ի նոսա արարածք իցեն. և արդ ծանիր զճշմարիտն Աստուած և ընկալ զկնիքն Քրիստոսի, և եղիցիս երևելի և պատուական, և արարից զքեզ իշխան, և տաց զքեզ 'ի Միջագետս 'ի Մծբին քաղաք։ Պատասխանի ետ այրն և ասէ. Հաւատամ յԱստուած զոր դուն քարոզեցեր և ծանուցեր ինձ։ Եւ 'ի խնդութեան եղեալ արքային՝ հրամայեաց վաղվաղակի մկրտել զնա, և մեծարեաց զնա մեծաւ պատուով, և առաքեաց զնա 'ի Մծբին քաղաք մեծաւ պատուով։ Եւ եղբայր նորա քանզի էր երևելի և մեծատուն 'ի քաղաքին, և երկիր պագանէր կռոց և պիղծ դիւաց, և էր կազմեալ զտուն իւր յոսկւոյ և յարծաթոյ և յականց պատուականաց։ Եւ երանելին Կոստանդիանոս բազում անգամ խնդիր էր արարեալ Կեդրոնի՝ եղբօր եպարքոսին՝ զի մկրտեսցէ զնա, և ոչ կամեցաւ երթալ, զի խմորեալ էր յաղանդն Մարկիոնի կախարդի. և էր որդի Կեդրոնի անդամալոյծ[1] 'ի ծնէ. և պատառէին ոտք նորա իբրև զփոկ զմիմեամբք 'ի թաթէ ոտիցն մինչև ցծունկսն. և գօսացեալ էին անդամք նորա, և անկեալ դնէր 'ի մահիճս, և էր պատկերաւ գեղեցկատեսիլ և գանգրահեր և զուարթատեսիլ երեսօք. Եւ լուաւ Կեդրոն եթէ անդամալոյծն որ անկեալ դնէր 'ի գաւիթս եկեղեցւոյն՝ բժշկեցաւ 'ի ձեռն սուրբ հայրապետին Յակովբայ. և առաքեալ կոչեաց զայրն բժշկեալ՝ զի 'ի նմանէ ստուգեսցէ զճըշմարիտն։ Եւ իբրև ածին զնա առաջի Կեդրոնի, եհարց զնա և ասէ. Ո՞վ բժշկեաց զքեզ։ Եւ նա ասէ. Հնդետասան ամ է որ եղէ անդամալոյծ, զոր դուք քաջ գիտէք, և բժշկեցին զիս ծառայքն Աստուծոյ։ Եւ ասէ Կեդրոն. Ո՞յր անուամբ արարին զգարմանալիսդ։ Եւ նա ասէ. Յիսուսի Նազովրեցւոյն։

---

[1] Մի օր. դմա խաչ հանել։

[2] Մի օր. Կէրդոն։

Իբրև լուաւ զայն Մարկիոն լի եղև սրտմտութեամբ և ասէ. Ասեմ քեզ սաստելով, զայդ քեզ քրիստո-

---

1. Մի օր. անդամախեղ.

նեայքն ուսուցին. չէիր անդամալոյծ, սուտ ես։ Զայս իբրև լուաւ անդամալոյծն 'ի դառնութիւն եղեալ լի ցասմամբ և ասէ. Խաբեբայ և անօրէն, սուտ դու ես, և աղանդ քո կախարդութեանդ՝ անուամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի խափանեսցի, և հայրն քո սատանայ յամօթ լիցի, և դու չարամահ կորիցես. և եթէ ոչ էր սրբոյն պատուիրեալ քարոզել՝ դու ոչ էիր ամենևին պատասխանւոյ արժանի, բայց զհրամայեալս 'ի սրբոյն պատմեմ այնոցիկ որ լսեն և 'ի միտ առնուն։

Եւ Կեդրոն ունկն դնէր և ախորժելով լսէր զասացեալսն։ Յայնժամ դարձեալ 'ի Մարկիոն՝[1] ասէ. Ես գիտեմ զի բարի և իմաստուն եղբայրդ եպարքոսին որ խնդրեաց զիս աստ, ստուգել կամի զճշմարտութիւնն՝ վասն բժշկութեան որդւոյն իւրոյ. զի յորժամ ճանաչէ զճշմարտութիւնն և զմոլորութիւն խաւարին գնացից[2] ձեր՝ ընդունի զաւետարանն փրկութեան, որ հանդերձեալ է հալածել զմոլորութիւն ձեր 'ի քաղաքէս յայսմանէ։ Եւ դարձուցեալ զերեսս 'ի կախարդէն՝ ասէ ցԿեդրոն. Լուր, տէր իմ Կեդրոն, զի վասն կամաց քոց կոչեցայ ես 'ի տան քում, և արժանի է ինձ քարոզել զարքայութիւնն Քրիստոսի. ես ճշմարտապէս անդամալոյծ էի, որպէս բազում անգամ տեսեալ էք զիս 'ի գաւթին 'ի սաստիկ ցաւս անդամալուծութեան՝ որպէս ասացի. և, տէր Կեդրոն, եթէ հաւատաս յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ որ ծնաւ 'ի սուրբ Կուսէն Մարիամայ, և մերձենաս առ ծառայս նորա, յայնժամ բժշկի որդին քո 'ի ձեռն նոցա։ Իբրև լուաւ զայս յանդամալուծէն՝ սքանչացաւ և յերկուս խորհուրդս եղև. իսկ ապա բարի 'ի միտ արկեալ, դարձոյց զխորհուրդս իւր 'ի Մարկիոնէ կախարդէ, և ցանկայր աւետարանին Քրիստոսի, և ասէր 'ի խորհուրդս իւր. Որ երևեցուցէ զբժշկութիւն որդեկին իմոյ՝ նա է Աստուած ճշմարիտ։

Յայնժամ ասէ Մարկիոն կախարդ. Ընդէ՞ր երկմըտեցաւ սիրտ քո 'ի հաւատոյն զոր ունէիր 'ի մանկութենէ, և արդ զանուղայս բարբառիս։ Յայնժամ ծիծաղեցաւ Կեդրոն և անարգեաց զբանս կախարդին, և ասէ. Այսուհետև կամիմ ստուգել զճշմարտութիւնն, և զստութիւն 'ի բաց թողուլ։ Եւ նոյնժամայն յարուցեալ գնաց յեկեղեցին հանդերձ տամբ իւրով։ Եւ մտեալ պատմեցին սրբոյն Յակովբայ և Մարուգէի և ասեն. Կեդրոն եղբայր եպարքոսին կայ 'ի դուրս ձեր և կամի տեսանել զձեզ։ Յայնժամ հրամայեցին նմա մտանել 'ի խաղաղութիւն. և անդ էր եղբայր նորա եպարքոսն։ Իբրև եմուտ Կեդրոն առաջի սրբոցն՝ խոնարհեալ ողջունեաց զնոսա սիրով, քանզի հեռացեալ էին միտքն յառաջին սովորութենէն[1]. և տուեալ ողջոյն՝ կայր կանգնեալ առաջի նոցա, և ասէ ցնոսա բարձր ձայնիւ. Ես մինչև ցայսօր, ով տեարք, կարծէի եթէ ճշմարտութիւն ունէի և ոչ զմոլորութիւն, և բազում անգամ զիս 'ի պատուոյ թագաւորին արգելեալ, զի մի՛ մկրտեսցէ զիս Կոստանդիանոս թագաւորն՝ որպէս զեղբայրդ իմ, և յերկուս շաւիղս երթան միտք իմ և խորհուրդք, և զուղիղ ճանապարհն ոչ գիտեմ. յոյս ունիմ 'ի բժշկութիւն անդամալուծին, թէ որպէս նա բժշկեցաւ 'ի ձեռն աղօթից ձերոց՝ բժշկեսցի որդեակն իմ, և միտք իմ հաստատեսցին 'ի հաւատս ճշմարիտս. և Մարկիոն՝ որ ասէ թէ՝ Ոչ զգեցեալ մարմին Քրիստոս և ոչ ծնեալ 'ի սուրբ կուսէն և չիք յարութիւն՝ յամօթ լիցի. և թէ այսպէս՝ որպէս ասեն, Նազովրեցին[2] ծնեալ 'ի կուսէն, խաչեալ և թաղեալ, և յերիր աւուր յարուցեալ, և հաստատեալ զյոյս յարութեան մեռելոց։ Այսուհետև տարակուսեալ եմ և ոչ ունիմ այլ ինչ նշան, բայց զբժշկութիւն որդեկին իմոյ. որ զայն գօսացեալ մարմինն բժշկէ՝ նա է ճշմարիտ Աստուած, և զհետ այնորիկ բժշկեսցի մարմին իմ և հոգի։

---

[1] Մի օր. ասէ ցՄարկիանոս։ Միւս օր. ասէ ցՄարկիոն։

[2] Մի օր. ճշմարիտ – նոյնա զմոլորութիւն և զխաւարային գնացս։

Եւ Մարկիոնի ժողովեալ զաշակերտսն իւր լսէր զոր ինչ ասէր Կեդրոն. և 'ի ցասումն եղեալ՝ ասէ. Մի՛ լսեր Գալիլեացւոցդ, ոչ զկաղ բժշկել կարեն և ոչ զանդամալոյծս առողջացուցանել։ Յայնժամ ասէ սուրբն Յակոբ առաջի ամենայն ժողովրդեանն. Մեք անօգուտ բանս ոչ խօսիմք, այլ յանուն Տեառն մերոյ որ ծնաւ 'ի սուրբ կուսէն Մարիամայ, և մերձեցաւ 'ի չարչարանս խաչին վասն փրկութեան մերոյ, էջ 'ի գերեզմանն և արար Ադամայ լոյս յարութեան և ամենայն ծննդոց նորա, և խորտակեաց զմահ և փշրեաց զզօրութիւն նորա, և յերրորդ աւուր յարուցեալ 'ի մեռելոց, և յարոյց ընդ իւր զբնութիւնս մեր. շրջեցաւ ընդ աշակերտս իւր աւուրս քառասուն, և ասէ ցնոսա, եթէ՝ Երթամ պատրաստել ձեզ տեղի. և սաստէր նոցա յԵրուսաղեմէ մի մեկնել մինչև ընդունիցին զՀոգին սուրբ. և հրամայեաց նոցա աշակերտել զամենայն հեթանոսս և մկրտել զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. որ հաւատայ կեցցէ և որ ոչ հաւատայ դատապարտեսցի. և ասաց թէ՝ Որ հաւատայ յիս՝ զգործսն զոր ես գործեմ և նա գործեսցէ. և մեք հաւատամք և հաւատացեալ եմք 'ի նա, և զամենայն զոր ինչ խնդրեմք 'ի նմանէ՝ տայ մեզ, և անուամբ նորա զգլուխ վիշապին աներկիւղ կոխեմք։ Եւ դարձեալ ասէ ցքուրմսն. Դուք, ով քուրմք, եթէ հաւատս ունիք 'ի կուռս ձեր՝ կարդացէք առ չաստուածս ձեր, թէ ունիցին զօրութիւն՝ լուիցեն ձեզ, և բժշկեսցեն զմանուկս զայս, և եթէ ոչ բժշկեսցեն՝ ապա յայնժամ հանդիպեսցի ձեզ որպէս Սիմոնի կախարդին 'ի Հռովմ։ Արդ մեք ակն ունիմք առաջի Աստուծոյ և խնդրեմք զբժշկութիւն մանկանս այսորիկ, ոչ վասն մեր՝ այլ վասն ժողովրդեանս այսմիկ որ հաւատան յանուն նորա։ Ասէ Մարկիոն բեկ սրտիւ և ցած ձայնիւ. Ոչ մեք կարեմք բժշկել և ոչ դու։

---

[1] Երկ. օր. յառաջին մոլորութենէն։

[2] Երկ. օր. որպէս ասեն Նազովրեցին՝ ծնեալ 'ի Մարիամայ։

Իսկ սուրբն Մարուգէ ծիծաղելով զնովաւ ասէ. Ես յուսացեալ եմ յԱստուած Ճշմարիտ և 'ի յՈրդին համագոյ և 'ի սուրբ Հոգին, որ զինչ և խնդրեմք՝ անյապաղ կատարէ զամենայն. յուսացեալ եմ յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի յորժամ մկրտեսցէ զդա սուրբ հայրապետս Յակոբ, բժշկեալ ելանէ յաւազանէ անտի։ Քանզի վստահ էին ամենքն սրբութեան 'ի Տէրն իւրեանց, որպէս և սուրբ առաքեալքն։ Յայնժամ պատասխանի ետ Կեդրոն և ասէ.

Ի մի ժամ կամէի ես մկրտել ամենայն տամբ իմով, բայց մկրտեցէք յառաջ զորդեակն իմ, և ապա ես և տուն իմ: Ասէ սուրբն Մարուգէ ցՏէր Յակովբ. Հրամայեա մի 'ի քահանայից որ պատրաստեն զաւազանն: Եւ Կեդրոն ոչ կամեցաւ, այլ ասէ ցսուրբսն. Այլ ոք մի՛ մկրտեսցէ զորդեակն իմ՝ բայց միայն սըրբութիւնդ ձեր: Եւ կազմեցին զաւազանն, և յարուցեալ սուրբքն եդին ծունր և մատուցին աղօթս, մի յաջմէ կողմանէ և միւսն յահեկէ աւազանին և ասեն. Տէր Աստուած արարիչ ամենայնի և Տէր ամենեցուն, որ կամիս զկեանս որդւոց մարդկան, լուր ձայնի աղաչանաց ծառայիցս քոց, նայեաց յաղօթս մեր և արա առ մեզ զնշան քո բարի, և բարձրացո զանուն քո'ի մէջ Հրէից և հեթանոսաց՝ 'ի քաղաքիս յայսմիկ, և ծանիցեն զքեզ՝ զի դու միայն ես Աստուած զօրութեանց, և քեզ վայելէ փառք յաւիտեանս. ամէն:

Եւ կանգնեալ յաղօթիցն՝ հրամայեցին իջուցանել յաւազանն զմանուկն, և էր ամաց ութից. և առեալ զձէթն սուրբ՝ օծին զամենայն մարմին նորա, և մկըրտեալ զնա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. և բարձեալ սարկաւագացն հանին յաւազանէն. և հրամայեաց սուրբն Յակովբ տարածել և բաժանել զոտսըն 'ի միմեանց, և կալեալ զձեռանէ մանկանն կանգնեաց զնա և հրամայեաց գնալ: Եւ ժողովուրդն իբրև տեսին զի գնայր մանուկն՝ սկսան փառս տալ և գոհանալ զԱստուծոյ 'ի վերայ սքանչելեացն որ եղև 'ի ձեռն սուրբ հայրապետին Յակովբայ. զի Աստուած զփառաւորիչս իւր փառաւոր առնէ: Իսկ Մարկիոն իբրև ետես զեղեալսն 'ի ձեռն Քրիստոսի՝ անկաւ ահ 'ի վերայ նորա. և ժողովուրդն նեղէին զմիմեանս տեսանել զմանուկն: Յայնժամ Մարկիոն և աղանդակիցքըն իւր այլանշանեալ[1] զինքեանս ելին ընդ ամբոխն և փախեան 'ի քաղաքէն. և հետամուտ եղեալ խընդրեցին զնոսա և ոչ գտին: Եւ 'ի վաղիւն մկրտեալ ըզԿեդրոն և զամենայն ժողովուրդն. և էին որք մկրտեցան յաւուր յայնմիկ ոգիք երեք հազարք և երեք հարիւր: Իսկ սուրբն Մարուգէ գնաց 'ի վանս իւր մեծաւ ուրախութեամբ և օրհնէր զԱստուած 'ի վերայ անպատում սքանչելեացն։

---

[1] Մի օր. այլափոխեալ:

Եւ արար ուրախութիւն մեծ յաւուր յայնմիկ Կեդրոն, եկեալ 'ի տուն իւր խաչիւ և ջահիւք լուցելովք, ինքն և ամենայն ժողովուրդն՝ որ եկեալ էին 'ի մկրտութիւն։ Եւ զի էր գնացեալ սուրբն Մարուգէ 'ի վանս իւր, յապաշաւ եղեալ Կեդրոն արձակեալ կոչեաց զնա. և մտեալ 'ի տուն նորա ասէ սուրբն Մարուգէ. Բերէք զգիրս կախարդութեանն Մարկիոնի, և արարին զհրամայեալսն 'ի նմանէ, և եդին հուր առ 'ի յայրել զնոսա։

Եւ բազումք գային առ սուրբն Յակոբ զօրհանապազ աշակերտել Տեառն. և յայնմհետէ խորհեցաւ սուրբն Յակոբ շինել եկեղեցի մեծ. քանզի յայնմ ժամանակի քրիստոնեայքն սակաւք էին և եկեղեցին փոքր։ Եւ ապա սուրբն Մարուգէ կամեցաւ ելանել 'ի վանս իւր. ասէ ցնա Պաւղոս որ էր յառաջ կոչեցեալ Կեդրոն, զի այսպէս անուանեցաւ 'ի մկրտութեանն, Կեդրոնի՝ Պաւղոս, և որդւոյ նորա՝ Յովհաննէս. Տէր, երբ եկեսցուք 'ի վանս քո, զի օրհնեսցուք յեղբայրութենէն։ Իսկ նա ասէ. Ոչ ոք արգելու զձեզ, յամենայն ժամ որք կամիցին գալ՝ եկեսցեն։ Եւ եղև յետ այնորիկ իբրև աւուրք տասն անցին՝ յարուցեալ Պաւղոս հանդերձ տամբ և ծառայիւք իւրեանց և կնաւ իւրով՝ որ կոչեցաւ Մարիամ, և որդւով իւրով, ելանէ 'ի Մարուգէի վանսն, զի օրհնեսցին 'ի նմանէ և յեղբայրութենէն։ Եւ յայնմ գիշերի եղև հանդիպել մանկանն ցաւոյ մահաբերի, որ յայնմ ժամանակի անուանեցաւ ցաւն այն՝ ցաւ Յակոբեայ. և իսկոյն հրամայեաց արկանել 'ի վերայ գրաստու զամենայն զոր ինչ պատրաստեալն էր, և ասէ. Գնացէք դուք զճանապարհդ, և ես և կին իմ մնամք տեսանել զինչ լինիցի մանուկս։ Եւ արարին ծառայքն զհրամայեալսն 'ի նմանէ. և ցաւն եւս քան զեւս սաստկանայր 'ի վերայ պատանւոյն։ Իսկ Պաւղոս 'ի միտս իւր ասէ. Այս մարտ և հակառակութիւն դիւաց է, և կամի զմեզ խափանել 'ի գնալոյ առ սուրբսն. ապա առեալ ըզպատանին եդին 'ի վերայ գրաստու, և ինքեանք հեծեալ յերիվարս իւրեանց և չուեալ գնացին։ Իսկ հայրն իբրև ետես զպատանին զի մերձ էր 'ի վախճանել, գոհացաւ զԱստուծոյ և ասէ. Եթէ կեայ՝ Տէառն կեայ, և եթէ մեռանի՝ Տէառն մեռանի. և հրամայեաց ծառայիցն երթալ փութանակի մինչ չև էր մեռեալ մանուկն: Իբրև գնացին հանդէպ վանացն՝ մերձեցաւ փոխիլ 'ի կենցաղոյս մանուկն, և խնդրեաց ջուր և ոչ կարաց ըմպել, զի յոյժ հեղձեալ էին փողք նորա, և նոյնժամայն աւանդեաց զհոգին: Եւ էին ոմանք որ ասէին՝ 'ի կախարդաց եղեալ գործն այն. և ոմանք ասէին թէ գինի արբ 'ի գիշերի և թոյնք իժի կայր 'ի նմա. և եթէ այսպէս և եթէ այնպէս ոչ գիտեմ՝ գործ սատանայի գործեցաւ[1]. և ծառայքն ակն ունէին վաղվաղակի դառնալ 'ի քաղաքն զի թաղեսցեն զմանուկն: Իսկ հայր նորա ասէ. Մինչ ոչ եմ տեսեալ զսուրբն Մարուգէ և զեղբարսն՝ ոչ դարձայց: Եւ իջին Պաւղոս և կին նորա յերիվարացն, գնացին հետեւակք. և հրամայեաց միումն 'ի ծառայիցն բառնալ զմանուկն 'ի վերայ բազկաց իւրոց, և տարեալ եդին առաջի սրբոյն Մարուգէի, և ասեն. Ահա չեղաք արժանի գալ առ ձեզ ուրախութեամբ՝ հանդերձ մանկամբս մերով, բայց այժմ տուեալ եմք զդա 'ի ձեռս ձեր և գիտեմք եթէ զամենայն զոր ինչ հայցէք յԱստուծոյ՝ շնորհէ ձեզ: Իսկ սուրբն Մարուգէ ոչինչ տուեալ պատասխանի, քանզի եկն նմա տրտմութիւն վասն նոր խոստովանողացն, զի դարձեալ տեղի եղև չարին և հերձողաց այլազգեացն, և անօրէն կախարդին Մարկիոնի:

Յայնժամ յղեաց սուրբն Մարուգէ առ երանելին Յակովբ, զի եկեսցէ 'ի վանս նորա վասն բժշկութեան մանկանն, զի նմա տուեալ էր յԱստուծոյ շնորհք բըժշկութեան այնր ցաւոց: Իսկ սուրբն Յակովբ իբրև լուաւ վասն մանկանն՝ յարուցեալ գնաց վաղվաղակի հանդերձ եպարքոսիւն որ էր իշխան քաղաքին և եղբայր Պաւղոսի, նա և այլ մեծամեծք քաղաքին վասն առ 'ի թաղել զմանուկն: Իբրև եկն սուրբն Յակովբ՝ հրամայեաց ժամ հարկանել և ժողովել զկրօնաւորսն, և առեալ զմանուկն 'ի վերայ սուրբ բազկաց իւրոց եդզնա 'ի վերայ աշտիճանի բեմին, և ինքն խոնարհեալ եդ ծունր՝ կայր յաղօթս և ասէր. Տէր Յիսուս, բըժիշկ բարի և ողջացուցիչ հիւանդացեալ բնութեանս մերում, որ անկեալ կայաք 'ի մահիճս մահու՝ կանգնեցեր զմեզ 'ի գլորմանէ և խոստացար տալ մեզ ըզկեանս անմահականս. ձայնս արձակեցեր 'ի գերեզմանն Ղազարու և հրամայեցեր մահու դարձուցանել զչորեքօրեայն 'ի մեռելոց և կենդանացուցեր զնա. այս, Տէր, լուր պաղատանաց ծառայի քո նուաստի՝ այսօր, դարձո 'ի կենդանութիւն զպատանիս զայս. և զոր արարեր 'ի ձեռն Եղիսէի և Եղիայի, շնորհեա այսօր մեզ. ոչ վասն արժանեաց մերոց, այլ վասն սուրբ անուան քո՝ զի փառաւորեսցի, և եկեղեցի քո բարձրասցի, և սուրբ խաչ քո պայծառասցի քարոզութեամբ ընդ ամենայն ազգս և ազինս և լեզուս. զի ծանիցեն ամենեքեան որ մոլորեալ են և թիւրեալ են՝ եթէ դու ես Աստուած Ճշմարիտ, որ սպանանես և կեցուցանես, իջուցանես 'ի դժոխս և հանես. ապրեցո այսօր զպատանիս զայս և կեցո. Տէր Աստուած, լուր պաղատանաց ծառայի քո։

---

[1] Մի օր. գործն կատարեցաւ:

Եւ իբրև կատարեաց զաղօթսն՝ բղխեաց արտասուս յաչաց սրբոյն, մինչև զգետինն թանալ առաջի սրբոյ սեղանոյն. և առեալ զկաւն որ յարտասուացն եղև՝ եդ 'ի վերայ փողից պատանւոյն և շարժեաց մանուկն զձեռն իւր 'ի վերայ կրծից իւրոց։ Եւ սուրբն Յակովբ բուռն հարեալ զձեռանէ մանկանն՝ ասելով. Յովհաննէս որդեակ, արի՛ կաց յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ նոյնժամայն բացեալ մանկանն զաչս իւր, և տեսանէր զսուրբն և զժողովուրդն. և նստոյց զնա 'ի վերայ աշտիճանին. և ինքն ուրախալից սրտիւ օրհնէր զԱստուած, և գոհանայր և փառաւորէր ըզպարգևատուն այնպիսի շնորհացն։ Իսկ եպարքոսն և ամենայն ժողովուրդն իբրև տեսին զեղեալսն, յահի մեծի եղեալ պատկառէին 'ի տեսլենէ սրբոյն, քանզի ոչ տեսանէին իբրև զմարդ՝ այլ իբրև զհրեշտակ Աստուծոյ. աղաղակեցին միաբան ձայնիւ և ասեն. Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց, լի է ամենայն երկիր փառօք քո։ Եւ կալեալ զձեռանէ մանկանն ետ զնա հօր և մօր իւրում. և նոքա աղաչէին զի կալցի զմանուէն առ իւր։ Իսկ նա ասէ. Զէ պարտ թողուլ զմանուկդ առ իս զի տղայ է, ուսցի դա և 'ի չափ երիտասարդութեան հասցէ։ Եւ արարին յաւուր յայնմիկ տօն մեծ և ուրախութիւն բազում, և պահեցին զօրն ողջոյն ոչինչ ճաշակելով. և վաղիւն մտեալ յեկեղեցին մատուցին պատարագ, և բաշխեցին զփրկական խորհուրդն. և յետ պատարագին հրամայեաց սուրբն Յակովբ ճաշակել միայն աղ և հաց. քանզի ոչ անկանէր 'ի մտաց նոցա սքանչելիքն զոր տեսին։ Յայնժամ օրհնեցան 'ի սրբոյն Մարուգէէ և յեղբարցն նորա Պաւղոս և կինն իւր և որդի նոցա, զոր յարոյց Տէր 'ի մեռելոց 'ի ձեռն սրբոյն Յակովբայ։

Եւ յարուցեալ սուրբն Յակովբ և եպարքոսն համադերձ ժողովրդեամբն՝ գնացին 'ի քաղաքն։ Ազդ եղև վասն սքանչելեացն և յարութեան պատմութիւն ընդ ամենայն կողմանս գաւառացն որ շուրջ զքաղաքաւն էին, և որք 'ի բացեայ էին լուեալք՝ մատուցանէին օրհնութիւն Աստուծոյ, տուողին այնպիսի շնորհաց։ Եւ 'ի մերձենալ նորա 'ի քաղաքն՝ ելին ընդ առաջ նորա միահամուռ արք և կանայք, ծերք և տղայք գային առ նա դասս դասս գունդք գունդք, և 'ի հիւանդաց պէսպէս ցաւօք անկանէին առ ոտս նորա և բժշկէր զամենեսեան։ Քանի՛ միակողմանիք բժշկեցան և քանի՛ ախտաժէտք բժշկեցան 'ի ցաւոց իւրեանց, զի անյապաղ առնէր զբժշկութիւնսն. և զի զանուանս ամենեցուն ոչ գիտեմ, վասն այնորիկ աւելորդ համարեցայ գրել 'ի ճառիս, և ոչ մի ըստ միոջէ ընդ գրով արկանել զսքանչելիսն և զանպատմելի զվարս և զխոստամբերութիւն ընտրելոյն Աստուծոյ։

Իսկ եպարքոսն գրեաց առ բարեպաշտ թագաւորն Կոստանդիանոս զնշանսն և զսքանչելի զգործսն՝ որ եղեն 'ի ձեռն սրբոյն Յակովբայ զօրութեամբն Քրիստոսի և սուրբ Հոգւոյն, և զյարութիւն եղբօրորդւոյն իւրոյ. և մեծն Կոստանդիանոս առեալ ընթերցաւ զթուղթն և գոհացաւ զԱստուծոյ, և գրեաց պատասխանի այսպէս առ եպարքոսն. Երեք են որ փայլեն յաշխարհի 'ի ժամանակս մեր, ընտրեալ ծառայք Աստուծոյ կենդանւոյ, և որպէս 'ի սիւն հաստատութեան կայ աշխարհս նոքօք, և որպէս զջահս լուսաւոորս փայլեցին ընդ տիեզերս, լուսաւորեցին զխաւարեալ միտս մարդկան, և սրբեցին զորոմն զոր սերմանեաց մշակն չար, և սերմանեցին սերմն բարի զվարդապետութիւն Քրիստոսի. սոքա են պանդուխտք և աղքատք և օտարք յաշխարհի և բազմաց պարգևս ստացան. Անտոն յերկրին Եգիպտացւոց, և Սեղբեստրոս 'ի Հռովմ 'ի յերկրիս մերում, և Յակոբ 'ի Մծբին քաղաք՝ որ է 'ի Միջագետս. յիշատակ նոցա օրհնութեամբ եղիցի, և աղօթք նոցա 'ի վերայ ամենայն արարածոց։ Արդ աղաչեմ զդոսա և խնդրեմ զի աղօթս արասցեն վասն մեր և խնդրեսցեն 'ի Տեառնէ, զի ընդ հովանեաւ ողորմութեան իւրոյ պահպանեսցէ զիշխանութիւն թագաւորութեանս մերոյ. և յաւուրն յետնում յորում ծագի ողորմութիւն Քրիստոսի՝ արժանի արասցէ զմեզ ընդ նոսին փառս մատուցանել ամենասուրբ Երրորդութեանն։

Եւ յետ այսր ամենայնի եղեալ սուրբն Յակոբ 'ի վիճակեալսն՝ շրջէր տեսանել զտունկ քրիստոնէութեան, և քարոզէր նոցա զաւետարանն արքայութեան, և հաստատէր 'ի հաւատս ճշմարիտս։ Եւ ետես յաղբեր միում աղջկունս որ լուանային հանդերձս. իբրև տեսին զերանելին՝ ոչ պատկառեցան 'ի փառաց երեսաց նորա, և ոչ ծածկեցին զսրունս և զգլուխս իւրեանց, այլ անամօթաբար ընդ երեսս նորա հայէին։ Եւ այս՝ լրբութիւն թուեցաւ սրբոյն, և կամեցաւ խրատել զնոսա. անէծ զաղբիւրն և վաղվաղակի ցամաքեցաւ, և զհերս նոցա դարձոյց 'ի սպիտակութիւն։ Իբրև տեսին զաղբիւրն ցամաքեալ և զհերս իւրեանց սպիտակացեալ՝ ընթացեալ զհետ սրբոյն անկանէին յոտս նորա, և աղաչէին դառնալ յաղբերն և հանել զջուրն. և նա դարձաւ աղօթեաց, և բղխեաց ջուրն իբրև զառաջինն. բայց զհերս աղջկանցն ոչ դարձոյց 'ի սևութիւն, զի տեսանելով զայն՝ զԱստուած մի՛ մոռասցեն։

Եւ երթեալ 'ի քաղաք մի՝ տեսանէ զի առնէր դատաւորն զդատաստանն անիրաւութեամբ վասն բաժանելոյ երկուց եղբարց. կամեցաւ յանդիմանել զանիրաւութիւն նորա. անէծ զվէմն որ կայր հանդէպ նորա, և վաղվաղակի անկեալ փշրեցաւ առաջի նորա. և անկաւ ահ 'ի վերայ ամենեցուն որ անդ կային. և դատաւորն զայն տեսեալ՝ արար զդատաստանն ուղիղ: Եւ այսու Տեառն իւրում նմանեաց սուրբն Յակովբ. ոչ անէծ Տէր մեր զխաչահանուսն, այլ զթզենին անէծ չբերել թուզ, և այսու ուսոյց զաշակերտսն իւր. և սուրբն Յակովբ այսու նմանեաց Տեառն իւրում, ոչ անէծ զդատաւորն անիրաւութեան՝ այլ փշրելով վիմին յիրաւունս դարձուցանէր զդատաւորն:

Եւ յօրէ յորմէ կոչեցաւ յեպիսկոպոսութիւն, ոչ զկերակուր իւր փոխեաց և ոչ զհանդերձս. զերկիր փոխեաց և զվարս իւր ոչ փոխեաց: Զհետ այսորիկ երթեալ 'ի քաղաք մի և կային անդ աղքատք, և կերպարանեցին զմին մեռեալ, և եկեալ աղաչէին զնա տալ նոցա ինչ զի թաղեսցեն զնա. և եդեալ զձեռն 'ի վերայ նորա և խնդրեաց զթողութիւն մեղաց նորա. և իբրև սակաւ մի հեռացաւ 'ի նոցանէ տէր Յակովբ, ձայնեցին ընկերին որ անկեալ կայր, և տեսին զնա մեռեալ. և ընթացան զհետ սրբոյն և աղաչէին զնա դարձուցանել զոգի նորա, և ասէին. Վասն աղքատութեան արարաք, թողութիւն արա մեզ. իսկ նա դարձաւ աղօթեաց և յարոյց զմեռեալն: Այս սքանչելիք նմանեալ Պետրոսի առաքելոյ զոր արար առ Անանիա և Սափիրա, յորժամ գողացան զլումայսն և ստեցին. եկն 'ի վերայ նոցա պատիժ մահուն: Նոյնպէս և երանելիս այս զաղքատն՝ որ զճշմարիտ կեանս իւր 'ի մահ փոխարկեաց. բայց երանելւոյն Պետրոսի ազդ եղև 'ի Հոգւոյն սրբոյ մահու վճիռ հանդէս առնել 'ի վերայ նոցա. իսկ երանելիս այս քանզի ոչ գիտէր զխորհուրդս նոցա՝ աղօթս արարեալ առ Աստուած վասն քաւութեան մեղաց նորա, և ոչ իմացաւ զմահ նորա. իսկ Աստուած զաղօթս նորա արդիւնացոյց, մահ ածելով 'ի վերայ կենդանւոյն, և ոչ ստեաց պաղատանաց նորա. իսկ երանելի առաքեալն որ զմահու վճիռն եդ 'ի վերայ նոցա, քանզի ահ առնել պիտանի էր 'ի սկզբան քարոզութեան նոցա, և այս երանելիս նմանեալ Տեառն իւրում փոխադրեաց զնա 'ի կեանս:

Ընթանամ այսուհետև յայլ սքանչելի գործս նորա, և համառօտ ասացից և պատմեցից: Արիոս գլուխ հերեսիովտաց, որ եղև նա հայր հայհոյութեան, և հայհոյեաց զՄիածինն և զՀոգին սուրբ, և սրեաց զլեզու իւր անարգել զԱստուած, և պղտորեաց նա զԵգիպտոս չար և դառն վարդապետութեամբ իւրով. իսկ Կոստանդիանոս թագաւորն հաւատացեալ նման Զօրաբաբելի առաջնոյ, յիշատակ նորա օրհնութեամբ եղիցի. զի նա 'ի ժամանակին յայնմիկ դարձոյց զգերութիւն հաւատացելոց 'ի յօտարութենէն, և շինեաց զտաճարն՝ որ քակեալն էր յայլազգեաց։ Սա հրամայեաց եպիսկոպոսացն ժողովել, և առաջնորդեաց եկեղեցւոյ 'ի քաղաքն Նիկիա, երեք հարիւր և տասնևութ հայրապետաց վասն կործանմանն Արիոսի. պատահեցաւ ընդ նոսա երանելին տէր Յակովբ։ Կային անդ ոմանք 'ի ժողովն որ ունէին յաղանդոյն Արիոսի, այնր աղագաւ աղաչէին զԱքիլաս և զԱղէքսանդրոս վասն Արիոսի լուծանել 'ի կապանացն։ Եւ սրբոյն Յակովբայ խորհուրդ արարեալ ընդ այլսն կալ 'ի պահս աւուրս եօթն, նշան ինչ խնդրելով վասն Արիոսի. և երանելին Յակովբ իբրև զնաւավար էր ժողովոյն. և յաւուր կիւրակէի մատուցին պատարագ և նշան մեծ երևեցաւ յԱստուծոյ. խնդրեալ Արիոսի տեղի ուր վճարէր զպէտս մարմնոյ իւրոյ, և ընդ աղբոյն աղիքն 'ի վայր վայթեցաւ, և մեռաւ այն գարշելի 'ի գարշ տեղւոջ, քանզի խնդրուածք երանելի հայրապետին ազդեաց. և ամենեքին գնացին 'ի տեղիս իւրեանց։

Իբրև դարձաւ սուրբն Յակովբ 'ի ժողովոյն, ետես զի բազմացեալ է տունկ քրիստոնէութեան, խորհեցաւ եկեղեցի շինել. և եկեալ առ սուրբն Մարուգէ յանապատն. և տուեալ ողջոյն միմեանց՝ ասէ սուրբն Յակովբ. Խորհուրդ ունիմ եկեղեցի շինել, եթէ Տէր կամեսցի. արդ արիք որ իջանեմք տեսանել զտեղին սրբութեան։ Եւ ասէ սուրբն Մարուգէ. Արժան է իջանել զի եօթներեակս մերձեցեալ է. արի էջ, և առաքէ Տէր զհրեշտակ իւր և ցուցանէ քեզ զտեղին՝ ուր պարտ է շինել, զի տեղի կռոց լեալ է և երգ անօրէնութեան 'ի նմա. արդ փոխանակ այնր երգոց՝ երգ աստուածայինք երգեսցին անդ, և պատարագեսցի 'ի նմա մարմին և արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Ասէ սուրբն Յակովբ. Աղօթք ձեր եղիցին 'ի վերայ մեր որպէս և ասացէք. և յարուցեալ իջանէ 'ի քաղաքն, և ժողովէ զմեծամեծս և զգլխաւորս քաղաքին, և ասէ ցնոսա. Ո՞ւր հրամայեցէք շինել եկեղեցի. և նոքա ցուցին նմա տեղիս երիս կամ չորս: Իսկ սուրբն Յակովբ լռեալ մինչև ցգիշերն. իբրև եղև երրորդ ժամ գիշերոյն, յարուցեալ ա՛ռ զշիշ իւղոյն և ել արտաքս 'ի խրճթէն իւրմէ, և հրեշտակ Տեառն երևեցաւ նմա, և մատուցեալ ողջունեաց զնա. և սուրբըն Յակովբ հարցանէր զնա և ասէր. Ո՞վ ես դու: Եւ ասէ ցնա հրեշտակն. Ես եմ որ առաքեցայ 'ի Տեառնէ ցուցանել զտեղի եկեղեցւոյն և զչափ նորա: Եւ ոչ զարհուրեցաւ երանելին ընդ տեսիլ հրեշտակին, զի բազում անգամ սովոր էր տեսանել զտեսիլ Աստուծոյ. և գնաց ընդ նմա հրեշտակն մինչև ցտեղին՝ որ էր լեալ տեղի կռոց Անտիոքայ արքայի, և ասէ. Այս է տեղի եկեղեցւոյն. և եցոյց նմա զչափ նորա: Յայնժամ եկեալ սուրբն Մելէս[1] եպիսկոպոս յԵրուսաղէմէ, և տեսեալ զսուրբն Յակովբ զի սկսեալ էր եկեղեցի շինել՝ ուրախացաւ ուրախութիւն ոչ սակաւ: Եւ առեալ փոխ 'ի վաճառականացն որ յերկրէ նորա էին՝ երեքհարիւր դահեկան, և ետ օգնականութիւն եկեղեցւոյն, զի ոչ ինչ ունէր ընդ իւր բայց միայն գաւազան և աւետարան:

Զկնի այսորիկ ել առ սուրբն Մարուգէ ողջոյն տալ նմա և դառնալ 'ի յաթոռ իւր. և 'ի գնալ սրբոյն՝ ժողովեցան ամենայն եղբայրութիւնն և ողջոյն ետուն նմա. և յորժամ ողջունեցին զմիմեանս, ասէ սուրբն Մարուգէ. Ո՛ այրդ Աստուծոյ, որ ակն ոչ առնուս. ահա գնաս դու յերկիրն արևելեան, և յանդիմանես անդ զՓիլիպպոս[2] որ նստեալ է անդ պատրիարք յանձնէ, և վասն զի ոչ ընդունի զխրատ քո՝ նզովես զնա չարաչար և գօսանայ մի կողմն նորա: Յայնժամ պատասխանի ետ նմա սուրբն Մելէս եպիսկոպոսն և ասէ ցնա. Ողջոյն քեզ, ծեր սքանչելագործ, որ տեսեր զօձն անիծեալ և զծնունդ նորա և զսատակումն նորա և զկորուստ ծննդոց նորա: Յայնժամ ասէ ցնա Մարուդէ. Ուստի՞ եղեւ քեզ այդ, եղբայր, եթէ տեսի զայդ: Ասէ սուրբն Մելէս. Որ յայտնեաց զիմն քեզ, նա յայտնեաց զքոյն ինձ: Ասէ սուրբն Մարուդէ. Երանելի ես, եղբայր իմ Մելէս, մերձեալ է ժամանակ մարտիրոսութեան քո, նման Պաւղոսի որ վկայեաց 'ի ձեռն Ներոնի անօրինի, յանդիմանես և դու զանօրէնս, և վկայես վասն Տեառն քո, և առնուս զպսակն փառաց: Եւ կացեալ առ մեզ աւուրս երկուս[1], յետ այնր տուեալ ողջոյն եղբարցն առ հասարակ՝ յուղարկեցաք զնա արտաքոյ վանացն, և ասէ ցմեզ. Աղօթս արարէք, զի արժանի եղիցուք տեսանել զմիմեանս առաջի Տեառն, քանզի յայս կեանս ոչ եմք հանդերձեալ տեսանել զմիմեանս:

---

[1] Մի օր. Մէլիտոս, որպէս և զկնի.

[2] Մի օր. Փէտրոս, որպէս զկնի:

Իբրև էջ Մելէս 'ի քաղաքն Արեմացւոց, և անդ յանդիմանեաց զՓիլիպպոս վասն իրիք ինչ, զի ոչ առաջնորդէր բարւոք. իսկ Փիլիպպոս ասէ ցնա. Ուստի՞ ասես զայդ ամենայն ցիս: Ասէ ցնա սուրբն Մելէս. Ընթերցիր զաւետարանն սուրբ և նա ուսուսցէ քեզ: Եւ նորա առեալ զաւետարանն 'ի ձեռն՝ ասէ խիզախելով. Խօսեա, աւետարան, խօսեա: Յայնժամ ասէ ցնա սուրբն Մելէս սաստելով. Ո՛վ այր դու, զՏէր քո անարգես. և նզովեաց զնա, և գօսացաւ աջ ձեռն նորա կողմամբքն հանդերձ, ըստ բանին Մարուդէի, և այլ ոչ ընկալաւ զբժշկութիւն: Եւ սուրբն Մելէս եւ գնաց յերկիր իւր, և աշակերտէին նմա բազումք, և բժշկութիւնս բազումս առնէր Տէր 'ի ձեռն նորա. և իբրև եկն նա յաթոռ իւր՝ չարախօսեցին զնմանէ առաջի իշխանին և ասեն. Ահա սա մկրտեաց զամենայն երկիր մեր: Յայնժամ հրամայեաց թագաւորն կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք առաջի իւր ածել և ամենայն հրապարակին: Իբրև ածին զերանելին առաջի դատաւորին՝ սկսան ամբաստանել զնմանէ և ասել. Ահա այս կախարդս մկրտէ զուստերս և զդստերս մեր, և դարձուցանէ զամենեսեան 'ի հաւատն իւր: Եհարց զնա դատաւորն և ասէ. Ո՞յր հրամանաւ մկրտես դու զհրեայս և զմոգս: Ասէ ցնա երանելին. Ես ոչ զոք բռնադատեմ, այլ զվարդապետութիւն Քրիստոսի քարոզեմք, և նոքա կամօք իւրեանց մկրտին։ Իբրև լուաւ զայս իշխանն՝ ոչ կարաց համբերել, այլ լի եղև ցասմամբ, և սրտմտութեամբ զայրացեալ՝ կանգնեցաւ 'ի վերայ ոտից իւրոց, և հանեալ զսուրն՝ զարկեալ զթիկամբն հերձեալ ճեղքեալ և 'ի բաց եհան զաջոյ կողմն նորա. և նոյնժամայն յարուցեալ եղբայր իշխանին յարձակեցաւ գազանաբար, և հարեալ զձախոյ կողմն թիկամբն 'ի բաց ընկէց։ Եւ ասէ սուրբն Մելէս. Ի ձեռաց միմեանց սատակելոց էք սրով ձեր 'ի ժամուս յայսմիկ յորում զիս սպանէք. և եղև որպէս ասաց երանելին։ Ի վաղիւն հեծեալ երկոքեան յերիվարս իւրեանց որսալ ինչ, և ահա այծեամն մի երևեցաւ առաջի, և ընթացեալ մի ընդ աջմէ կողմանէ այծեմանն և միւսն ընդ ձախմէ հանդէպ միմեանց ընդդէմ, և լարեալ զաղեղունս իւրեանց ձգեն նետս, և այծեմանն ոչ ինչ վնասեալ՝ հարեալ զմիմեանս սատակեցին, և անկեալ յերիվարացն մեռան չարաչար։ Եւ կատարեցաւ առ նոսա բան մարգարէին որ ասէ. Սուրք նոցա մտցեն 'ի սիրտ նոցա, և աղեղունք նոցա փշրեսցին։ Եւ զսուրբն Մելէս թաղեցին մեծաւ պատուով, և ըստ բանին Մարուգէի՝ զոր յառաջագոյն մարգարէացաւ, ընկալաւ զանթառամ փառաց պսակըն 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր. յիշատակ նոցա օրհնութեամբ և աղօթք նոցա 'ի վերայ ամենայն հաւատացելոց։

---

[1] Մի օր. աւուրս երիս:

Արժան է մեզ և զայլսն պատմել զգործսն և զսքանչելիսն սրբոյն Յակովբայ և ոչ ծուլանալ։ Յայնմ ժամանակի խորհուրդ 'ի մտի եդեալ սուրբն Յակովբ գնալ ուր հանգեաւ տապանն՝ 'ի լերինն Արարատ, աղօթս առնէր հանապազ և խնդրէր 'ի Տեառնէ՝ զի ցուցցէ նմա զտապանն, որ եղև նորոգումն յերկրի նովաւ. և եկեալ առ սուրբն Մարուգէ հաւանեցուցանել զնա գնալ ընդ իւր, և նա ոչ առնոյր յանձն, ասելով նմա վասն ծերութեան և անկարութեան մարմնոյն և ասէ ցսուրբն Յակովբ. Դու մի՛ խափաներ զխորհուրդդ և մի՛ ծուլանար. լինի քեզ որպէս և կամիս, առաքէ առ քեզ Տէր զհրեշտակ իւր և նա ցուցանէ քեզ որ ինչ կամք են Տեառն. մերձեցուցանէ հրեշտակն զձեռն իւր 'ի ծոց երկրի, և հանէ քեզ տախտակ մի մասն վասն աշխատութեան քո։ Իսկ սուրբն Յակովբ անյապաղ առնէր զգնալն 'ի լեառնն. և իբրև եհաս 'ի ստորոտ լերինն՝ հրեշտակ Տեառն առաջնորդէր նմա. և աշխատեալ սրբոյն աւուրս ինչ յաղօթս և ննջեաց[1]. և առեալ հրեշտակ Տեառն տախտակ մի, և բերեալ եդ ընդ սնարօք սրբոյն, և ասէ 'ի տեսլեան. Ոչ է պարտ ումեք տեսանել զտապանն, ա՛ռ զտախտակդ ըստ փափաքմանց քոց և գնա 'ի տուն քո։ Եւ իբրև զարթեաւ 'ի քնոյն՝ առեալ զտախտակն մեծաւ ուրախութեամբ գոհանայր զԱստուծոյ. և յուղի անկեալ գայ 'ի տուն իւր. և եկեալ առ սուրբն Մարուգէ 'ի փապարն ուր բնակեալն էր, և պատմեաց նմա զլեառնէն ուր էր տապանն. և առեալ զտախտակն 'ի ձեռս իւր՝ համբուրէր, և օրհնէր զԱստուած և զերկայնմտութիւն[2] նորա և ասէր. Զսա արար մեզ 'ի քարոզ, զի տեսանիցեն և դարձցին 'ի չարեաց իւրեանց։ Իսկ սուրբն Յակովբ առեալ զտախտակն գնաց 'ի քաղաքն իւր, և շինեաց վանս և եդ զտախտակն 'ի նմա։

Ընդ այն ժամանակս մեծն և հրաշալին Կոստանդիանոս փոխեցաւ յաշխարհէս, և յաջորդեն զաթոռ թագաւորութեան նորա որդիք իւր։ Իսկ Շապուհ արքայն Պարսից նշկահեաց զորդիս թագաւորին, ասելով, ոչ կարեն նոքա լինել որպէս զհայրն իւրեանց։ Եւ եկեալ գայ յերկիրն Միջագետաց 'ի Մծբին քաղաք՝ բազում զօրօք և հեծելօք, և փղօք բազմօք տալ պատերազմ. և բաժանեաց զզօրս իւր ընդ չորս և պատեաց զքաղաքն. և բազմահնար խորամանկութեամբ ջանայր առնուլ զքաղաքն յաւարի, և զբնակիչսն կամէր սրով վատնել, և գերի վարել զմանկունսն և զկանայսն. շինեաց աշտարակ և հանեալ 'ի նմա աղեղնաւորս և վահանաւորս, և ձգէին նետս բազում 'ի քաղաքն և վիրաւորէին զմարդիկն. և ոչ կարաց հնարս գտանել, զի զոր խորհէր Շապուհ արքայ՝ 'ի ձեռն սրբոյն Յակովբայ լուծանէր ամենայն խորհուրդ նորա։ Դարձեալ հնարս խնդրէր թէ որով օրինակաւ կարասցէ պաշարել զքաղաքն. և հրաման ետ զօրաց իւրոց կապել զգետն և անցուցանել շուրջ զպարսպաւ քաղաքին. և արարին որպէս հրամայեաց. և անցեալ ջուրն շուրջ զպարսպաւ քաղաքին, և սկսաւ խախտել զհիմն պարսպին, և տեղի տեղի անկաւ 'ի պարսպէն. և սկսան աղաղակել զօրքն Պարսից թէ յաղթեցաք. և 'ի մեծի վտանգի և 'ի տարակուսի էր քաղաքն: Իսկ սուրբն Յակովբ իբրև ետես զյանդգնութիւնն Շապհոյ և զզօրաց իւրոց, ոչ կարաց հանդուրժել. եկաց յաղօթս առ Աստուած, և խնդրէր հնարս զի թերևս ապրել կարասցեն 'ի ձեռաց անօրինացն. և լուաւ Աստուած աղաչանաց նորա, և նզովեաց Յակովբ զՇապուհ և զզօրս նորա. և յանկարծակի եկն 'ի վերայ նոցա խառնիճ և պիծակ և գոռոխ և մժեխ. նա աղօթեաց, և Աստուած որպէս Մովսիսի լուեաց. և երիվարք նոցա և փիղք ոչ կարէին զտեղի ունել 'ի բազմութենէ պիծակացն և գոռոխիցն, մինչ՚և բազում երիվարաց մեռանել, և այլոցն թափել զպախուցն՝ վազս առնելով այսր անդր ընթանային. և 'ի բազում վտանգի կայր բանակն յաստուածառաք հարուածոցըն՝ որ եկն 'ի վերայ նոցա: Յայնժամ այրն Աստուծոյ Յակովբ ելեալ շրջէր 'ի վերայ պարսպին. և եկեալ դէմ յանդիման Շապհոյ նստաւ, և զտախտակն առեալ 'ի գլխոյ իւրոյ, և երևեցաւ Շապհոյ իբրև զթագաւոր զգեցեալ ծիրանիս, և զօրք հրեշտակաց իբրև զզօրս մարդկան շուրջ զնովաւ երևէին: Եւ տեսեալ Շապուհ արքայն՝ յոյժ խռովեցաւ յոգի իւր և յերկիւղ մեծ եղեալ և 'ի դողման, և լցեալ սրտմտութեամբ և բարկութեամբ՝ հրամայեաց կոչել զայնոսիկ որք առաջնորդք եղեն նորա գալստեանն, և եհատ 'ի վերայ նոցա վճիռ մահու, և ինքն փութանակի զօրօքն հանդերձ խաղայր գնայր յերկիր իւր:

---

[1] Մի օր. աւուրս ինչ յաղօթս եկաց և ննջեաց։

[2] Մի օր. համբուրէր, և օրհնէր զերկայնմտութիւնն Աստուծոյ։

Եւ Մանաճիհր Ռուշտունի առեալ գերի յերիցանց և 'ի սարկաւագաց գեղջէիցն որ շուրջ զքաղաքաւն էին, և տարեալ զնոսա 'ի բերդն որ է մերձ 'ի սահմանս Ռուշտունեաց՝ որ կոչի Մանազկերտ: Եւ զայս սքանչելիս զոր եցոյց Աստուած 'ի ձեռն երկրորդ Եղեկիայի[1], զի որպէս նա աղօթիւք իւրովք փրկեաց զԵրուսաղեմ 'ի ձեռաց արքային Ասորեստանեայց, նոյնպէս սուրբն Յակովբ աղօթիւք իւրովք ապրեցոյց զքաղաքն 'ի ձեռաց արքային Պարսից։ Եւ ես ասեմ իսկ գեր 'ի վերոյ քան զնա. զի բռնաւորն և ամպարիշտն՝ որ փքացեալն էր ամբարտաւանութեամբ, բազմահընար մեքենայիւքն իւրովք ոչ կարաց յաղթել և կործանել զպարիսպ նորա 'ի միջոյ անտի. և էր այլովք զարմանալի, զի անէծք նորա անյապաղ կատարէր. ոչ խնդրեաց հուր արկանել 'ի վերայ նոցա որպէս Եղիասըն. զի լուեալ էր 'ի Տեառնէ, որ ասէր ցՅակովբոս և ցՅովհաննէս, յորժամ խնդրեցին նոյնպէս հուր յերկնից, ասէ ցնոսա Տէրն. Զգիտէք որոյ հոգւոյ էք դուք. վասն այնորիկ չսատակեաց զբանակն անօրինաց, այլ անզօր ձանձիւքն խոցոտեաց փախոյց զնոսա։ Յետ այսր ամենայնի յարուցեալ գնայր զհետ չարին Մանաձիհրի իշխանին Ռուշտունեաց, և խնդրէր զերիցունս և զսարկաւագունսն և զայլսն։ Իսկ նա ոչ առնոյր յանձն կատարել զխնդրուածս նորա, այլ ըստ ամենաչար բարուցն իւրոց պիղծն և թշնամին արդարութեան՝ հրաման ետ զօրաց իւրոց 'ի պտոյտս ջուրց ծովահեղձոյցս առնել զերիցունսն և զսարկաւագունսըն։ Իսկ սուրբն Յակովբ տեսեալ զչարին արկածսն, խռովեցաւ և ել գնաց տրտմութեամբ և լի ցասմամբ յերկրէն Մանաձիհրի. և գայր հասանէր մերձ 'ի գաւառն Աղձնեաց 'ի ձորն Երկաթահատայ, և անդ հանգեաւ. և ծարաւեալ՝ վասն զի ժամանակ ամարայնոյ էր, և արեգակն տապով իւրով խարշէր զամենայն ինչ, և հանեալ ջուր 'ի զովացումն իւր և որք ընդ նմա էին. և ելեալ 'ի բարձրաւանդակ տեղի մի և տեսանէ զերկիրն Ռուշտունեաց, անէծ զՄանաձիհր և զերկիր նորա և զզօրս նորա, վասն արանցն զոր ծովահեղձոյցն արար։

---

[1] Միւս օր. Եզէկիէլ:

Եւ ինքն չուեալ գնաց յերկիր իւր և անդ լինէր. և բազում ձգանց և աշխատութեանց համբերեալ տէր Յակովբ և բազում նշանս արարեալ, և այսպիսի վարուք կացեալ զամենայն աւուրս կենաց իւրոց, յետ սակաւ աւուրց ննջեաց և փոխեցաւ յաշխարհէս յայսմանէ 'ի հանդերձեալ աշխարհն յօթևանսն փափաքելի։ Եւ յետ մահուան Յակովբայ պակասեաց զօրք

Հռովմայեցւոց 'ի քաղաքէ անտի, և եկեալ արքայն Պարսից առնու զքաղաքն ոչ պատերազմաւ՝ այլ սիրով։ Իսկ երկիրն Ռուշտունեաց զոր անէծ սուրբն՝ մեծաւ հարուածով տանջեալ լինէր յԱստուծոյ, զի հերձեալ պատառէր հող երկրին առ 'ի չբուսուցանել զբոյս դալարոյ առ 'ի պէտս մարդկան և անասնոց, և տունկք այգեստանեացն փոխանակ խաղողոյ փուշ պտղաբերէին։

Յետ այսորիկ ազդ եղև 'ի Հոգւոյն սրբոյ արանց խարազնազգեստից, եթէ ոչ է հնար օրհնիլ երկրին Ռուշտունեաց, եթէ ոչ երթեալ բերիցեն մասն ինչ 'ի նշխարաց սրբոյն Յակովբայ. և նոքա եկեալ պատմեցին մեզ զամենայն որ ինչ եղեալ էր յերկրին իւրեանց. և մեք ողորմութիւն արարաք վասն պատմելոյ զանցս անցիցն որ ընդ նոսա անցանէր։ Եւ առեալ 'ի նշխարացն մասն ինչ տուաք նոցա. և նոքա առեալ մեծաւ ուրախութեամբ գնացին յաշխարհն իւրեանց, 'ի տեղի՝ որ է մերձ յաշխարհն Աղձնեաց. և անդ կան նշխարք նորա մինչև ցայսօր ժամանակի, և բազում բժշկութիւնք լինին նովաւ 'ի փառս Աստուծոյ։ Զայս պատմեցի վասն առն Աստուծոյ սրբոյն Յակովբայ. և նշանագրեցի վասն սրբոյն Մարուգէի և վասն Մելէսի եպիսկոպոսի, զի աղօթք նոցա և օրհնութիւն մեզ յօգնութիւն հասցէ։ Կատարեցաւ վարք և սքանչելագործութիւնք առաքելաշնորհ առնն Աստուծոյ սրբոյն Յակովբայ Մծբնայ հայրապետին, ընդ նմին և սուրբ հօրն Մարուգէի խարազնազգեաց կրօնաւորի, և սրբոյն Մելէսի եպիսկոպոսի Պարսից. 'ի փառս Աստուծոյ յաւիտեանս յաւիտենից։

Վկայաբանութիւն Սրբոյն Յակովկայ։

Եղև յերկրորդում ամի Վռամայ որդւոյ Յազկերտի արքայից արքայի Պարսից, երևեցաւ այր մի աստուածապաշտ, անուն Յակովիկ, Թագաւորազն, 'ի Բեթլապատ քաղաքէն, յոյժ երկիւղած 'ի Քրիստոսէ ինքն և ամուսին իւր. ըստ բարեպաշտ ծնողաց իւրոց ջերմեռանդն հաւատոյն զոր ունէին առ Քրիստոս, յոյժ երևելի 'ի դրան արքունի, և բազում համարձակութիւն ունէր առաջի Թագաւորին Վռամայ։ Եւ յաւուրս հօր նորա Յազկերտի արքայի Պարսից՝ պարգևս և պատիւս ընդունէր 'ի Թագաւորէն Յազկերտէ, վասն բազում սիրոյն զոր ունէր ընդ նմա։ Եւ ջանայր Թագաւորն 'ի բազում ժամս դարձուցանել զնա 'ի քրիստոսական հաւատոյն՝ զոր ունէր նա 'ի ծնողաց իւրոց, և դարձուցանել զնա յետս 'ի սուրբ Երրորդութենէն. զոր հնազանդեցաւ առնել զկամս Թագաւորին, մինչև մոռանալ նմա զսուրբ հաւատն զոր ունէր։

Զայս լուեալ մօր նորա աստուածասիրի և քրիստոսասիրի ամուսնոյ նորա, եթէ 'ի ճշմարիտ հաւատոյն զոր ունէր՝ 'ի բաց եկաց վասն անձնահաճոյ կամաց Թագաւորին, և սիրեաց զառժամանակեայ կեանքս առաւել քան զյաւիտենականն, քանզի 'ի դրան արքունի էր երանելին. և գրեալ երանելւոյ մօր նորա և քրիստոսասիրի ամուսնոյ նորա թուղթ՝ առաքեցին առ նա, որ ունէր օրինակ զայս. Լուայ եթէ դու վասն առժամանակեայ կենացս և վասն մարդկան հաճութեան և անցաւոր պարգևաց մահկանացու Թագաւորի, 'ի միոյ Աստուծոյ՝ որ է Ճշմարիտ Աստուած բան կենդանի 'ի կենդանւոյ Աստուծոյ յետս դարձար և ուրացող եղեր։ Արդ ո՞ր է Թագաւորն քո՝ զորոյ զկամսն կատարեցեր. ո՛չ ապաքէն իբրև զմի 'ի մեռելոց 'ի գերեզմանի անկեալ դնի, ակն ունելով յաւիտենից տանջանացն. ոչ պարգևք նորա կարեն օգնել քեզ և ոչ պատիւք նորա կարեն փրկել զքեզ յանշէջ հրոյն։ Արդ այսուհետև գիտութիւն լիցի քեզ, եթէ ոչ դառնաս 'ի մոլորութենէդ յորում կաս, և ուրանաս զանօրէն օրէնսդ Մազդեզանց, և դառնաս յԱստուած Ճշմարիտ և յՈրդի նորա Միածին և 'ի համագոյ սուրբ Հոգին, դատաստանք կան և մահ Թագաւորին քում սիրելւոյ, և քեզ նմին գործակցի հասանելոց է։ Բայց մեք այսուհետև օտարացեալ եմք 'ի քէն, մասն լծակցութեան և սիրոյ ոչ ունիս ընդ մեզ։

Եւ իբրև զայս Թուղթ ընկալեալ երանելւոյն Յակովկի, զղջումն մեծ անկաւ 'ի սիրտ նորա, և 'ի միտս իւր եկեալ ասէ, արտասուելով զանձն իւր. Եթէ մայր իմ և ամուսին իմ որ են յայսմ աշխարհիս՝ Ճշմարտիւ երդուան և ուրացան զինէն, յորմէ յետ կացի 'ի սուրբ հաւատոյն որ 'ի Քրիստոս և Ճշմարտութեանն ստեցի, առաւել Աստուած դարձուցանէ զերեսս իւր յինէն յաւուրն յետնումն, և յաշխարհին յայնմիկ վրէժխնդրութիւն հատուցանէ ինձ։ Եւ նոյնժամայն յարուցեալ գնաց 'ի տուն իւր, զսուրբ Թուղթ ունելով 'ի ձեռին իւրում. և առեալ զեկեղեցական գիրսն ընթեռնոյր, և բանիւք սուրբ գրոց մխիթարէր զանձն իւր, և յուսովն յաւիտենից հաստատէր զսիրտ իւր. և եկեալ 'ի զարհուրումն՝ շքեղացան դէմք երեսացն, և մեռելութիւն նորա 'ի կենդանութիւն փոխեցաւ։

Սկսանէր այնուհետև ընդ անձին իւրում կռուել, և ասէր այսպէս. Ո՛վ անձն ողորմելի, ուրեմն եթէ մայրն իմ որ ծնաւ զիս՝ այսպէս եգայ ընդ կորուստ անձին իմոյ. և ամուսին իմ այսպէս ամօթալից եղեալ կորացաւ վասն նախատանաց իմոց՝ որ է յաշխարհիս յայսմիկ, և ամենայն սիրելիք իմ և ծանօթք իմ այսպէս ուրացեալ մերժեցան զինէն, վասն զիպելոյ ինձ այսմ ամենայնի, և յաւուր յորում լիցի խնդութիւն ամենայն աստուածապաշտից, յորժամ ընդունիցին արդարքն զհատուցումն ըստ վաստակոց իւրեանց և ուրացողք զտանջանսն յաւիտենից, յորում բաժնի լինիցիմ ես, վասն զի փոխանակեցի զճշմարտութիւնն ընդ ստութեան. բայց արդ գիտեմ զոր դիւրութիւն խնդրեցից անձին իմոյ, զի մի կորեայց. այլ ընդ որ ելի ես դուռն՝ զնոյն դուռն յաճախեցից բախել. զի գիտեմ եթէ բարերար է Տէրն, և նոյնժամայն բանայ ինձ և մուծանէ զիս։

Եւ մինչդեռ նա զմտաւ ածէր, ոմանք յուրացողաց անտի իբրև լուան զբանս նորա, և տեսին զի կարդայր զգիրս քրիստոնէից, փութապէս 'ի ձեռն մերձաւորաց զեկուցին զայս ամենայն թագաւորին։ Եւ յորժամ լուաւ թագաւորն զհամբաւ նահատակին Քրիստոսի, նոյնժամայն հրամայեաց մուծանել առաջի իւր։ Իբրև եմուտ երանելին Յակովբիկ առաջի նորա, ասէ ցնա թագաւորն. Քրիստոնեա՞յ ես, Յակովբիկ։ Սուրբն Յակովբիկ ասաց. Այո։ Թագաւորն ասէ. Ո՞չ մոգ էիր։ Ասէ ցնա երանելին Յակովբիկ. Ոչ։ Թագաւորն ասէ. Ո՞չ պարգևս և պատիւս ընկալար յառաջագոյն 'ի հօրէն իմմէ վասն մոգութեան։ Սուրբն Յակովբիկ ասէ. Արդ ո՞ւր է հայրն քո՝ յորմէ զպատիւն ընկալայ։ Առ այս յոյժ բարկացեալ թագաւորին խորհէր զանազան տանջանս ածել 'ի վերայ նորա։ Կրկնեալ թագաւորին դարձեալ ասէ ցնա. Մի՛ կարծեր եթէ փոքր մահուամբ կորուսանեմ զքեզ, թէ ոչ դառնաս 'ի ճանապարհէդ յորում կաս։

Հայեցեալ 'ի նա երանելւոյն Յակովբկայ ասէ. Մի՛ աշխատ առներ զանձն իմ, տէր իմ արքայ, և բազում բանիւք երկեցուցաներ զիս առանց գործոց։ Քանզի ոչ անկանի 'ի միտս իմ զոր ասեսդ. այլ որպէս հողմ զի հարկանէ զհաստատուն վէմ, նոյնպէս և բանք քո յականջս իմ։ Ասէ ցնա թագաւորն. Յաւուրս հարց իմոց՝ պաշտօնակիցք քո այդպէս հաստատուն կային և դառն մահուամբ սպառեցան. քանզի ոչ կամեցան ունկնդիր լինել թագաւորաց։ Սուրբն Յակովբիկ ասէ. Զայս աղօթս յամենայն ժամ մատուցանեմ Աստուծոյ, զի արժանի եղէց ժառանգել զմահս նոցա, և վախճան իմ եղիցի իբրև զվախճան նոցա։ Ասէ ցնա Թագաւորն. Մի՛ կար 'ի յիմարութեանդ և հակառակ ընդդէմ Թագաւորութեանս իմոյ, զի մի՛ մեռցիս։ Սուրբն Յակովիկ ասէ. Մահս այս համարեալ՝ չէ մահ, այլ որպէս քուն, իբրև թէ ննջիցէ ոք և յառնիցէ։ Ասէ ցնա Թագաւորն. Մի՛ մոլորեցուցեն զքեզ քրիստոնեայք՝ որք կոչեն զմահս քուն, եթէ մի՛ երկիցես. զի ահա Թագաւորք և բռնաւորք՝ որք երկեան 'ի մահուանէ։ Ասէ ցնա երանելին Յակովիկ. Ամենայն Թագաւորք և բռնաւորք յիրաւի երկնչին 'ի մահուանէ, քանզի զայն գործեցին զոր Աստուած ոչ հրամայեաց նոցա. քանզի գրեալ է, եթէ՝ Մեռաւ ամպարիշտն և կորեաւ յոյս նորա. և դարձեալ ասէ. Յոյս ամպարշտաց շիջցի։ Ասէ ցնա Թագաւորն. Հեթանո՞ս համարիք զմեզ, ո՛վ քրիստոնեայք, և իբրև զձեզ մոլորեալս, քանզի ոչ գիտէք զաստուածս և ոչ արեգական երկիր պագանէք, և ոչ լուսնի և ոչ հրոյ և ոչ ջրոյ, որ են որդիք Աստուծոյ։

Իսկ երանելին Յակովիկ ասէ. Ոչ քեզ մեղադրեմ, ո՛վ արքայ, քանզի գրեալ է վասն մեր, և վասն այնոցիկ որք արժանի եղեն մտանել այսպէս յայս պատերազմ, եթէ՝ Եկեսցէ ժամանակ զի ամենայն որ սպանանիցէ զձեզ՝ համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ։ Այլ գիտասջիք զի ըստ մոլորութեանդ ձերոյ կարծէք թէ դուք միայն գիտէք զԱստուած. և փոխանակ արարչին՝ արարածոց երկիր պագանէք, խլից և կուրաց, և կոչէք զնոսա աստուածս որ չեն աստուած. և բարկացուցանէք զնա որ ետ ձեզ զթագաւորութիւնդ, և լինիք սիրելի այնոցիկ որ ոչ բարիս ինչ կարեն առնել և ոչ չար։

Յայնժամ Թագաւորն լցեալ բարկութեամբ և սրտմտութեամբ իբրև զհուր վառեալ, և հրամայեաց կոչել զամենայն իմաստունս և զխորհրդականս իւր, եթէ ո՛րպէս տայցեն հրաման վասն մահուան նորա, ըստ յամառութեան նորա. քանզի ոչ կամեցաւ առնել զհրամանս Թագաւորին։ Եւ խորհրդականք Թագաւորին հանդերձ մոգուքն մտին 'ի խորհուրդ՝ թէ որպէս արժան իցէ դառն մահուամբ մեռանել վկային։ Իսկ մի ոմն 'ի նոցանէն չարախորհուրդ և անօրէն՝ զայս խրատ ետ նոցա և ասէ. Ոչ է արժան այդպիսւոյդ առնել միով հարուածով կամ երկուք կամ երիւք կամ հնգիւք, այլ պրկեսցի 'ի ձեռաց և յոտից իւրոց, և կտրեսցի մի մի մասն տասն մատունք ձեռաց նորա, և մի մի մասն տասն մատունք ոտից նորա, և լուծցին մի մի յարմկանէ դաստակք ձեռաց նորա, և ճեղքեսցին յուսոյ երկոքին թիկունք նորա, և լուծցին 'ի ծնկաց երկոքին ոտք նորա, և խորտակեսցին երկոքին բարձք նորա. և յետ այսր ամենայնի հատցի և գլուխ նորա։

Իբրև ել հրամանս այս խիստ յերեսաց արքային, քարշեցին զսուրբն Յակովբիկ մոլեգնաբար և տարան զնա 'ի տեղի տանջանացն ուր վկայելոցն էր։ Եւ նոյնժամայն իբրև լուան ամենայն քաղաքն զհրամանս թագաւորին՝ դիմեցին ամենեքեան հանդերձ զօրականօքն զհետ երանելւոյն, 'ի տեղին՝ ուր պսակելոցն էր. և բազումք 'ի հաւատացելոցն իբրև լուան զմահ երանելւոյն՝ անկեալ յերեսս իւրեանց հանդերձ արտասուօք աղաչէին զԱստուած և ասէին. Օրհնեալ ես Աստուած և Տէր զօրութեանց, որ տաս համբերութիւն յուսացելոց 'ի քեզ, և զօրացուցանես զտկարս, որ եկիր 'ի փրկել զկորուսեալս. զօրացո, Տէր, զծառայն քո զՅակովբիկ՝ ըստ բազում ողորմութեան քում, զի ելցէ յաղթող 'ի պատերազմէս. քանզի քեզ բարերարիդ վայել է յաղթութիւն. զի դու ես գլուխ ամենայն յաղթութեանց, Քրիստոս, որդի Աստուծոյ, փրկիչ ամենայն աշխարհաց։

Եւ յորժամ մերձեցաւ ելանել սուրբն 'ի տեղի տանջանացն՝ խնդրեաց 'ի սպանողացն զի թողացուսցեն նմա ժամ մի գոհանալ զՔրիստոսէ, վասն որոյ չարչարելոցն էր։ Եւ կացեալ յարևելս կոյս՝ եդ ծունր, և զսիրտն համբարձեալ յերկինս 'ի բարձունս առ Տէր Աստուած իւր՝ որ բնակեալ է յերկինս, և յաղօթեն իւրում ասաց այսպէս. Լուր, Տէր, աղօթից ծառայի քում Յակովբկայ, և փրկեա զորդի աղախնոյ քո, որ գոչեմ առ քեզ 'ի ժամուս յայսմիկ, և արա առ իս նշան բարութեան, զի եղէց օրինակ բարի սիրելեաց անուան քում. և այնոցիկ որ հալածեցան և հալածեսցին վասն անուան քում սրբոյ, զի յաղթեցից դառն մահուանս զօրութեամբդ քո մեծաւ, և ընկալոյս զպսակն անեղծութեան ընդ կատարեալս քո, որք սիրեցին զքեզ, Տէր, և պսակեցան 'ի քէն. զի տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն, զի դու, Տէր, օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս: Յայնժամ մատուցեալ պրկեցին զնա 'ի չորից կողմանց 'ի ձեռաց և յոտից նորա անողորմ, և սկսան ասել ցնա դահիճքն. Տես, զինչ գործելոց ես, քանզի ահաւասիկ հասեալ կամք կոտրել զամենայն մարմինս քո, որպէս ել հրաման 'ի թագաւորէն: Դարձեալ ասեն ցնա. Տես և խորհեաց 'ի միտս քո, և ընտրեա զկեանս քան զմահ. զի միով բանիւ կարես ապրել 'ի տանջանացդ որ կան առաջի քո, ապա թէ կայցես 'ի նմին յամառութեան՝ կրելոց ես զայդ ահագին և ամենայն դառն չարչարանս:

Եւ լային բազումք յամպարշտաց անտի որք դիպեցան անդ յաւուր յայնմիկ, վասն պայծառութեան գեղոյ նորա և շքեղութեան հասակի նորա, որ էր պատուական. և ամենեքեան իբրև ընդ մի բերան ասացին ցնա. Մի՛ կորուսաներ զայդպիսի գեղեցկութիւն քո ընդունայն, այլ կատարեա զկամս թագաւորին և կեցցես, և յետ այնորիկ արա զկամս քո: Բացեալ զբերան իւր երանելին ասէ ցնոսա. Մի՛ լայք 'ի վերայ իմ, այլ լացէք 'ի վերայ անձանց ձերոց, որ վայր մի փափկանայք 'ի վայելչութիւն աշխարհիս այսորիկ, և յետ այնորիկ ժառանգէք զտանջանսն յաւիտենականս, ոչ միայն դուք այլ և դևօքն խաւարելովք՝ որոց երկիր պագանէքն. այլ ես այսուհետև փոքր մահուամբս յուսացեալ եմ 'ի Քրիստոս՝ զի ըզկեանսն յաւիտենականս ժառանգեցից. և կոտորումն անդամոցս իմոց յաճախէ ինձ վարձս 'ի Տեառնէ իմմէ. քանզի ամենայն ոք ըստ վաստակոց իւրոց առնու զհատուցումն յԱստուծոյ իւրմէ, և ոչ արգելու 'ի նմանէ:

Ասէ դահճապետն ցհաւատարիմ թագաւորին, որոյ առեալ էր զհրաման սպանմանն նորա. Զի՞ անցեալ կաս հեղգացեալ, հրամայեա կատարել զհրամանս թագաւորին վաղվաղակի: Եւ սկսան այնուհետև կոտորել զմատունս ձեռաց նորա. իբրև կտրեցին զաջոյ ձեռին նորա զբոյթն, բացեալ զբերան իւր երանելին Յակովիկ սկսաւ ասել այսպէս. Փրկիչ ամենայն յուսացելոյ 'ի քեզ, ընկալ ոստ 'ի ծառոյս զոր տնկեցեր ողորմութեամբ քո. վասն զի որչափ հատանեն ձեռք կտրողացս, գայ գարունն և նորոգէ և պայծառանայ պտղալից: Սկսաւ լալ հաւատարիմ Թագաւորին՝ որոյ առեալ էր զհրաման սպանման նորա, և ասէ ցերանելին Յակովիկ. Շատ է քեզ զի հատաւ մի մասն ձեռաց քոց, եթէ կամիս դիւրին է բժշկել զգա դեղովք, զի մի՛ ապականեսցին մարմինք քո փափուկք. քանզի ունիս ոսկի և արծաթ բազում, բաշխեա կարօտելոց, զի կեցցէ անձն քո և մի՛ մեռցիս չարաչար: Բացեալ զբերանն սրբոյն Յակովկայ ասէ ցնա. Ի բարունակէ ո՞չ ուսար, զի յորժամ մերձ 'ի ձմեռն լինի՝ անկանի վաղվաղակի վարսաւոր գեղեցկութիւն նորա և մերկանայ, իսկ յորժամ գայ գարունն՝ առաւել պայծառանայ՝ արձակելով զպտղալից շառաւիղս իւր. զի թէ առժամանակեայ բարունակին այնմիկ այնպէս նորոգումն լինի, որչափ ևս առաւել մարդ հաւատացեալ յԱստուած և տնկեալ 'ի Ճշմարիտ յայգւոջն՝ առաւել ծաղկի և պտղալից լինի, 'ի ձեռն Քրիստոսի Ճշմարիտ մշակին:

Եւ իբրև կտրեցին զերկրորդ մատն նորա՝ գոչեաց երանելին մեծաձայն և ասէ. Ցնծասցէ անձն իմ 'ի Տէր, և ուրախ եղիցի սիրտ իմ 'ի փրկութեան նորա: Եւ յաւելեալ 'ի գոհութիւնս իւր ասէ. Ընկալ, Տէր, զերկրորդ ոստ 'ի ծառոյ՝ զոր տնկեցեր հրամանաւ քով: Խնդայր և ուրախ էր 'ի ժամուն յայնմիկ, և 'ի փառս Տեառն իւրոյ խոկայր: Եւ իբրև կտրեցին զերրորդ մատն նորա՝ աղաղակեաց սուրբ նահատակն Քրիստոսի և ասէ. Ընկալ, Տէր, ընդ երիս մանկունսն որ օրհնէին զքեզ 'ի մէջ հնոցին. զի ես արժանի եղէց ընդ նոսա փառաւորել զքեզ, և ընդ գունդս մարտիրոսաց սաղմոսեցից անուան քում բարձրելոյ: Եւ իբրև կտրեցին զչորրորդ մատն նորա, գոչեաց երանելին և ասէ. Քանզի յերկոտասան որդիսն Յակովբայ 'ի վերայ չորրորդին հանգեաւ օրհնութիւն Աստուծոյ, և ես չորրորդ ոստով մատուցից օրհնութիւն անուան Տեառն Աստուծոյ. քանզի օրհնութիւն նորա փրկութիւն եղիցի ամենայն հաւատացելոց: Իբրև կտրեցին զհինգերորդ մատն նորա, բացեալ երանելին զբերան իւր օրհնութեամբ և ասէ. Հինգերորդ մատամբ թաթի աջոյ իմոյ մատուցից տնկողիդ ծառոյ իմոյ՝ զպտուղ իմ:

Իբրև մատեան 'ի ձախու ձեռն նորա կտրել զմատունս նորա, ասէ ցնա իշխանն որ ունէր զհրաման սպանման նորա. Յակովիկ, մարթ է քեզ և արդ կեալ եթէ արասցես զհրամանս թագաւորին, զի բազումք են 'ի մարդկանէ որոց կտրեալ է մի ձեռնն և կեան յաշխարհի, և դու խնայեա յանձն քո զի մի կտրեսցին փափուկ անդամք քո առաջի աչաց քոց. քանզի ահա որքան կտրին անդամք քո՝ ընդ միոյ միոյ առնուս զմորմոքումն վիրաց քոց: Պատասխանի ետ երանելին և ասէ. Քանզի և զոչխար յորժամ կամիցին կտրել և առնուլ զբոլոր գեղմն նորա, ոչ եթէ զաջոյ կողմն կտրեն և զձախոյն թողուն. զի ոչխարն որ է անասուն և այպանելի՝ այնպէս զգուշութեամբ կտարեն զի մի ոչխարն այպանեսցի, և կտրողքն 'ի գործ Ճարտարութեան իւրեանց թերակատարք երևեսցին. քանզի ես ոչխար 'ի հօտէն Քրիստոսի եմ, և զիս որ տրուպս եմ՝ արժանի արար 'ի ձեռն կտրողացս լինել զոհ կենդանի, որպէս և ինքն իսկ 'ի մէջ խաչահանուացն: Վասն որոյ այսօր պատարագեմ Տեառն Աստուծոյ 'ի հոտ անուշից զանազան տանջանօքս:

Իբրև կտրեցին զբոյթն նորա որ է վերջին մատն, սկսաւ համարձակութեամբ ասել երանելին Յակովիկ. Տրուպ[1] եմ ես առաջի մեծիդ, որ փոքրկացուցեր զանձն քո, և զբազում տկարս իբրև զիս արժանի արարեր պատարագել. որպէս և դու եղեր պատարագ փոխանակ ամենայն արարածոց, և վասն այսորիկ ցընծամ և ուրախ եմ, և մատնեմ զանձն իմ և զմարմին իմ, զի դու, Տէր, 'ի ժամու իւրում կանգնես զիս և նորոգես հաստատութեամբ: Եւ իբրև կտրեցին զեօթներորդ մատն նորա, առաւել ես վառեալ Հոգւովն Աստուծոյ՝ ասաց. Եօթն անգամ եօթներորդ մատամբ բրս օրհնեցից զՀայր և զՈրդի և զՀոգին սուրբ: Իբրև կտրեցին զութերորդ մատն նորա՝ այսպէս ասաց. Յութերորդ աւուր թլփատեցան որդիք Եբրայեցւոցն, և մերժեցան և հեռացան յանթլփատիցն, արժանի արա և զիս զծառայս քո այսօր մերժել և հեռանալ յանթլփատից սրտիւք և յամպարշտացս. Տէր Աստուած իմ, առ քեզ ծարաւի է անձն իմ, երբ եկից և երևեցայց երեսաց քոց:

---

[1] Յօր. փրուպէփ:

Իբրև կտրեցին զիններորդ մատն նորա, եբաց զբերան իւր և ասէ. Յիններորդ ժամու տարածեցեր զձեռս քո 'ի վերայ խաչափայտին վասն մեր մեղաւորացս, և արդ իններորդ մատամբս գոհանամ զքէն, Տէր Աստուած իմ. արա զիս զանարժան ծառայս քո տարածել զոստս մատանց մարմնոյ իմոյ զկոտորեալս վասն անուանդ քո սրբոյ: Իբրև կտրեցին զտասներորդ մատն նորա՝ գոհացեալ ասէր. Յովտ մի գիր՝ որ է նշանախեց մի, ըստ զամենայն զբանս և զթիւս, և 'ի ձեռն Յիսուսի եղև փրկութիւն ամենայն արարածոց. և վասն այնորիկ ես տրուպ մի անարժան՝ տասնաղեաւ քնարաւ երգեցից Աստուծոյ իմոյ զերգս օրհնութեան նորա և փառաւորեալ մեծութեան նորա, որ արժանի արար զիս այսօր լինել պատարագ 'ի հոտ անուշից. և փոխանակ տասնաղւոյն՝ տասն մատամբ քնարաւ հոգւոյ իմոյ գոհացայց զնմանէ և բարի սաղմոս ասացից անուան ամենասուրբ Երրորդութեանն, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ սկսան ասել դարձեալ մեծամեծքն ցնա. Եթէ կամիս այսուհետև՝ գոյ քեզ հնար ապրել, թէպէտ և տասն մատունք ձեռաց քոց կտրեցան. են աստ բժիշկք ճարտարք արքունականք, որք կարեն բժշկել զվէրս. միայն արա զկամս թագաւորին զի մի՛ մեռցիս և ելցես 'ի փափաքելի աշխարհէս. զի այր թագաւորազն ես, կարող ես դարմանել և տեսանել զվէրս քո. եթէ աղքատ էիր՝ պարտ էր քեզ յայնժամ հոգալ և ասել, թէ՝ Որովհետև տասն մատունք ձեռաց իմոց կտրեցան, զի՞նչ օգուտ է ինձ աշխարհս այս, զի վաստակել և դարմանել զանձն իմ ոչ կարեմ: Բայց մեք գիտեմք զի այր մեծատուն ես դու, և կարող ես դարմանել զանձն քո 'ի մեծութենէ քումմէ և 'ի գանձուց թագաւորին զոր պարգևէ քեզ. և հայիս 'ի գեղեցկութիւն ամուսնոյ քո, և մխիթարես գեղով նորա զանձն քո, քանզի ինքն դուստր մեծատան է և յեբնելի ազգէ, նոյնպէս և դու Թագաւորազն ես. ընդէ՞ր կամեցար կորուսանել զանձն քո, զի ոչ ել բան մի 'ի բերանոյ քումմէ ըստ կամաց Թագաւորին, որով նոյնժամայն հնար էր քեզ դառնալ 'ի կեանս քո:

Հայեցեալ 'ի նոսա երանելւոյն Յակովկայ և ասէ. Հնա՞ր ինչ իցէ երկուց տերանց ծառայել, կամ միով ձեռամբ երկուս գործս գործել. դնել զձեռս 'ի վերայ մաճոյ հերկոյն և դառնալ յետս՝ միթէ յաջողեսցի՞ արքայութիւնն Աստուծոյ: Ոչ եթէ մայրն իմ և ամուսինն իմ պատուականագոյն է քան զՏէր Աստուած մեր, և մանաւանդ որպէս ասէն իսկ, թէ՝ Ամենայն որ կորուսանէ զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա. և որ ոչ թողու զհայր և զմայր, զքոյր և զեղբայր, զկին և զորդիս և զամենայն ինչ զոր և տիրէ յաշխարհիս յայսմիկ, և առցէ զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ՝ չէ ինձ արժանի. և՝ Որ ոք թողցէ և եկեսցէ զհետ իմ՝ տաց նմա զկեանս յաւիտենականս, և յոյսն յաւիտենից որ ոչ անցանէ: Այլ ինձ ոչ ինչ պիտոյ են ձեր շողոքորթանքդ, և բանքդ զոր խօսիքդ. քանզի ինձ վնաս է և ձեզ առիթ կորստեան, այլ վաղվաղակի կատարեցէք զհրամայեալսն ձեզ և մի՛ խնայէք:

Յայնժամ մատեան դահիճքն արիւնարբուք յաջոյ ոտն նորա. իբրև կտրեցին զկոճ բութի նորա, և բացեալ սրբոյն Յակովկայ զբերանն ասաց. Փառք քեզ, Յիսուս Քրիստոս, որդի Աստուծոյ կենդանւոյ, որ զգեցար զմարմին տկարութեանս մերոյ և խոցեցին զկողս քո 'ի վերայ խաչին, և թացաւ ոտն քո յարենէ քումմէ, որ եղև փրկութիւն արարածոց քոց բոլորեցունց. վասն որոյ և ես անարժան ծառայս քո խնդութեամբ ընդունիմ զտանջանս զայսոսիկ 'ի մարմնի իմում հանդերձ սենեկուլս [1]:

Եւ իբրև կտրեցին զերկրորդ մատն նորա, սկսաւ երանելին ասել. Մեծ է օրս այս քան զամենայն աւուրս կենաց իմոց. քանզի մինչչև մտեալ էր իմ 'ի պատերազմս յայս՝ փոքր 'ի շատէ օրհնէի զԱստուած իմ, քանզի 'ի հոգս և 'ի զբաղմունս աշխարհիս յապաղէր սիրտ իմ, և բազում անգամ խափանէր զիս յաղօթից իմոյ վասն սիրոյ աշխարհիս այսորիկ· սակայն թէպէտ և կայի յաղօթս՝ միտք իմ անպտուղ էին, և ոչ էին աղօթք իմ սուրբ առաջի Աստուծոյ իմոյ· մարմին իմ յեկեղեցւոջ լինէր, իսկ խորհուրդք իմ ելանէին յերկինս և իջանէին յանդունդս· իսկ առեալ իմ այսօր փոխեցի զխորհուրդս յաշխարհէս յայսմանէ՝ բոլորով սրտիւ իմով յամենայն փափաքանաց սորա, և փութացայ յառաջիկայ յաշխարհն յայն· և որչափ կոտորին անդամք մարմնոյ իմոյ՝ խնդութեամբ փառաւորեցից զամենասուրբ զԵրրորդութիւնն, որ արժանի արար զիս այսօր տանջանաց:

---

[1] Այսպէս յօրինակին:

Իբրև կտրեցին զերրորդ մասն նորա և ընկեցին առաջի նորա, տեսեալ երանելւոյն ծիծաղեցաւ և ասէ ցմասն իւր· Երթ և դու, ո՛վ երրորդ մասն, զհետ ընկերաց քոց և մի ինչ տրտմիր· քանզի և հատն ցորենոյ 'ի ժամանակի յորժամ բողբոջք առաքեսցին և բոյսքն ծաղկեսցին, առեալ ածցեն զընկերակիցսն իւրեանց ընդ ինքեանս· սոյնպէս և դու յական թօթափել յառնել ունիս յընկերսդ յայդոսիկ:

Եւ իբրև կտրեցին զչորրորդ մասն նորա, սկսաւ ասել յանձն իւր· Ընդէ՞ր վհատիս, ո՛վ անձն իմ, կամ ընդէ՞ր ես խռովեալ, յուսա յԱստուած, գոհացիր զնմանէ քանզի փրկիչ երեսաց իմոց Աստուած է: Իբրև կտրեցին զհինգերորդ մասն նորա, ասէ երանելին· Այժմ սկսայ խօսել առաջի Տեառն իմում որ սիրեաց զիս՝ մտանել յասպարէզս յայս և զօրացոյց զիս և հաստատեաց զիս:

Եւ մատուցեալ 'ի ձախու նորա՝ կտրեցին զբոյթ ոտին նորա: Ասէ երանելին ցբոյթն իւր· Մի՛ երկնչիր, փոքրիկ մատնիկ, քանզի փոքուն և մեծին մի յարութիւն լինելոց է· որպէս զի մազ մի ոչ կորիցէ 'ի գլըխոյ, նոյնպէս և դու ոչ պակասիս 'ի թուոյ ընկերաց քոց:

Եւ իբրև կտրեցին զեօթներորդ մասն նորա, սկսաւ ասել երանելին խնդութեամբ, քանզի ցնծայր 'ի Տէր· Քակեցէք, քակեցէք զխախտեալ տունս, քանզի գալոց է Ճարտարապետն և պայծառագոյն ևս քան զայս նորոգէ:

Եւ իբրև կտրեցին զութերորդ մասն նորա, ասէ ցնոսա երանելւոյն. Գիտէք զսալ դարբնաց, որչափ գանելով գանի՝ ինքն ինչ ոչ վնասի, այլ գործն կատարի. նոյնպէս և մարմին իմ, թէպէտ և տանջելով տանջի՝ այլ հոգի իմ ցնծայ 'ի Տէր: Իբրև կտրեցին զիններորդ մատն նորա, բացեալ երանելւոյն զբերանն ասաց. Օրհնեալ Տէր, որ զիս 'ի պատերազմիս զօրացոյց, որ յաղթողն է յամենայնի, յոր յուսացեալ եմ յաղթել նովաւ, և փառաւորէ նա զհոգի իմ: Եւ իբրև կտրեցին զտասներորդ մատն նորա, իբրև 'ի քնոյ զարթուցեալ երանելւոյն՝ ասաց. Դատեա, Տէր Աստուած իմ, զդատաստանս իմ, և խնդրեա զվրէժս յամպարշտացս և 'ի դառն գազանէս յայսմանէ, քանզի ոչ խնայեցին 'ի գործս ձեռաց քոց գայլքն ապականիչք: Տէր Աստուած իմ, զօրացո զիս զի յաղթեցից հակառակամարտից, և կատարեալ զխոստովանութիւն անուանդ քո՝ փառաւորեցից զամենասուրբ զԵրրորդութիւնդ, զՀայր և զՈրդի և զՀոգին սուրբ, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Տեսեալ զայս ամենայն ազգի ազգի տանջանս և ըզհամբերութիւն վկային Քրիստոսի՝ անօրինացն և ամպարշտացն, սկսան հարցանել ցմիմեանս երիտասարդք և տղայքն, և ասեն ցծերքն. Լուեա՞լ է ձեր կամ տեսեալ յաւուրս ձեր, կամ յաւուրս հարցն ձերոց՝ եթէ մարտիրոսացաւ ոք այսպէս կամ կրեաց ոք այսպիսի տանջանս դառն: Եւ առաւելեալ սրբոյն քաջակորութեամբ՝ ասէ ցդահիճսն. Ընդէ՞ր հեղգայք իջուցանել զոտս 'ի ծառոյս և կտրել զսա, քանզի ցնծայ հոգի իմ 'ի Տէր և բարձրանայ սիրտ իմ յայն՝ որ զխոնարհս սիրէ:

Եւ բարկացեալ դահիճքն՝ կրճտեցին զատամունս իւրեանց և մատուցեալ անողորմ՝ լուծին զծունկն աջոյ ոտին: Ասէ ցնոսա երանելւոյն. Ամենայն անդամք իմ կատարեցան յինէն, և իբրև զպատարագ մատուցան առաջի Աստուծոյ: Եւ իբրև լուծին զծունկ ձախու ոտին նորա, ասէ երանելւոյն. Լուր ինձ, Տէր, զի քաղցր ես և անպատում են շնորհք քո առ ամենեսեան որ կարդան առ քեզ: Եւ իբրև լուծին յարմըկանէ զաջոյ ձեռին նորա զդաստակ, ասէ երանելւոյն. Բազմացան շնորհք Տեառն իմոյ 'ի վերայ իմ, և փըրկեցեր, Աստուած, զանձն իմ 'ի դժոխոց 'ի ներքնոց։ Եւ իբրև լուծին յարմկանէ զձախու ձեռին նորա զգաստակ, ասէ երանելին. Ահա և մեռելոց առնես զսքանչելիս քո, Տէր։ Եւ մատուցեալ իբրև արիւնարբու գազանք խզեցին յուսոյ զաջոյ բազուկ նորա, յաւելեալ 'ի ձայն իւր ասէ. Օրհնեցից զՏէր 'ի կեանս իմ, սաղմոս ասացից Աստուծոյ իմոյ մինչև եմ ես. քաղցր եղիցի նմա օրհնութիւն իմ, և ես ուրախ եղէց 'ի Տէր. պակասեսցեն մեղաւորք յերկրէ և ամպարիշտք մի՛ ևս գտցին 'ի նմա. օրհնեսցէ անձն իմ զՏէր։ Եւ իբրև կտրեցին յուսոյ զձախոյ բազուկ նորա, ասէ երանելին. Բարձրացաւ անձն իմ 'ի վերայ թշնամեաց իմոց որք պաշարեցին զիս. զօրութիւն և օգնութիւն իմ Տէր է, և եղև ինձ 'ի փրկութիւն։

Եւ մատուցեալ՝ 'ի բաց լուծին զաջոյ բարձ նորա յերանաց նորա։ Եւ յայսմ ամենայնի տանջանաց ոչ ինչ զանգիտեաց երանելին Յակովիկ, այլ լի էր բերան նորա օրհնութեամբ, և յաւելեալ 'ի գոհութիւնս իւր ասէր. Տէր Յիսուս Քրիստոս, օգնեա ինձ և փրկեա զիս, զի պատեցին զիս երկունք մահու։ Ասեն ցնա դահիճքն. Ո՞չ յառաջագոյն ասացաք քեզ՝ եթէ դառն և անողորմ տանջանք գան 'ի վերայ քո։ Ասէ ցնոսա սուրբ վկայն. Եւ ես վասն այնորիկ զամենայն ինչ փորձեցի, զի ծանեայց եթէ մարմին զգեցեալ եմ, և առաւել չարչարեսցայց վասն Տեառն Աստուծոյ իմոյ. և զանողորմ տանջանս զոր ածէք 'ի վերայ իմ՝ ոչ զգացի, քանզի առ Տէրն իմ Յիսուս Քրիստոս յափշտակեալ էր սիրտն իմ բոլորովին։ Եւ յաւելեալ երանելին ասէ ցնոսա. Ընդէ՞ր հեղգայք և ափշեալ էք, կատարեցէք վաղվաղակի զհրամայեալն ձեզ։ Եւ լքան դահիճքն կտորել զանդամս սրբոյն, բայց նա առաւել զօրանայր 'ի սէր Տեառն իւրոյ։ Եւ մատուցեալ այնուհետև լուծին և զմիւս բարձ նորա յերանաց նորա։ Իբրև կտրեցին զամենայն անդամս նորա, և ոչ ևս մնաց 'ի նմա անդամս ողջ՝ բայց միայն գլուխն և լանջքն և որովայնն. քանզի նման էր երանելին անուշահոտ լիբանան ծառոյ, որոյ զոստսն կոտորեալ իցէ և ստեղն միայն կայցէ։

Եւ իբրև յօշեցին զամենայն անդամս նորա, անկեալ դնէր երանելին յերկիր իբրև կոճղ կիսամահ, և առեալ ոյժ 'ի Հոգւոյն սրբոյ՝ սկսաւ աղօթել և ասել այսպէս. Տէր Աստուած իմ, գթած և ողորմած, խնդրեմ 'ի քէն և աղաչեմ, լուր խնդրուածոց ծառայի քում, քանզի ահա անկեալ դնիմ 'ի գետնի օտարացեալ յամենայն յանդամոց իմոց։ Ոչ կայ իմ մատունք՝ եթէ աղաչէցից զքեզ, Տէր, նոքօք, և ոչ բազուկք՝ եթէ տարածեցից զնոսա առ քեզ, Տէր, և ոչ ոտք՝ եթէ կրկնեցից ծունր և փառաւորեցից զքեզ, Տէր. քանզի ահա լուծեալ քակտեցին զբարձաբերձ աշտարակ մարմնոյ իմոյ, և խախտեցաւ գեղեցկութիւն շինուածոյս իմոյ, և եղէ ստուերացեալ՝ որպէս մնացէ սակաւ նշմար յաւերածի։ Արդ խնդրեմ 'ի քէն, հան 'ի բանտէ զանձն իմ, գոհանամ զանուանէդ քումմէ. և 'ի կարդալս իմում և յաղաչելս՝ դադարեացէ սրտմտութիւն քո, և եղիցի ողորմութիւն քո 'ի վերայ աշխարհի հանդերձ սուրբ վկայիւքն, այն որ յառաջն հաճոյ եղեն առաջի քո, և 'ի վերայ ժողովրդեան քո հալածելոյ վասն անուան քո սրբոյ. և եղիցի խաղաղութիւն և օրհնութիւն 'ի ձեռն քաղցրութեան քո, և ժողովեսցին ամենայն ցրուեալ անդամք իմ առ միմեանս. և ես ծառայ քո տրուպ և անարժան՝ օրհնեցից և գոհացայց զքէն 'ի ժամուս յայսմիկ, և մատուցանեմ փառս և պաղատանս հանդերձ ամենայն սուրբ վկայիւք և խոստովանողօք, որ են յարևելս և յարևմուտս, 'ի հիւսիսի և 'ի հարաւ, քեզ Տեառն Աստուծոյ ամենակալի և Միածնի որդւոյ քում Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և կենդանարար Հոգւոյդ սրբոյ, փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Իբրև կատարեաց զաղօթսն և առաքեաց զամէնն, մատուցեալ մի ոմն դահճաց անտի դանակաւ եհատ զգլուխ նորա, և աւանդեաց զոգին երանելի սուրբ վկայն 'ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ այսպէս վկայեցաւ սուրբն Յակովիկ խաղաղութեամբ պսակեալ 'ի Քրիստոսէ անեղծ պսակաւն, 'ի լուսաբնակ[1] կամարն վերնոյ քաղաքին և մշտապայծառ խորանին, ընդ կամարարս և հաճեցուցիչս ամենասուրբ Երրորդութեանն, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:

---

[1] Յօր. լուսոյ բնակ։

Կատարեցաւ սուրբ և մեծ վկայն Քրիստոսի Յակովիկ, որ օր քսան և եօթն էր քաղոց ամսոյ, յաւուր շաբաթու, յերրորդ ամի Վռամայ որդւոյ Յազկերտի Պարսից արքայի: Իսկ մարմին սրբոյն կայր այնպէս ընկեցեալ յերկրի, և էին ցրուեալ ամենայն անդամք նորա: Եւ ժողովեալ ամենայն հաւատացելոյն՝ գանձ բազում մատուցին դահճացն, որպէս զի առցեն զնշխարս երանելւոյն, և ոչ կամեցան: Իսկ յիններորդ ժամուն գնացին ամպարիշտքն, և եկեալ քրիստոնէիցըն ամփոփեցին զմարմին երանելւոյն և թաղեցին, և ինքեանք մնացին անդէն դաղտաբար մինչև 'ի գալ գիշերոյն, վասն ժողովելոյ զցրուեալ անդամս երանելւոյն: Եւ իբրև երեկոյ եղև՝ ժողովեցին զցրուեալ անդամս նորա զամենայն՝ զմեծ և զմանր, զոտիցն և զձեռաց նորա, որ էին թուով քսան և ութ, և ժողովեալ միանգամայն անդամս և զմարմին նորա՝ եդին 'ի միում տեղւոջ 'ի թաղստեան: Բայց արիւն երանելւոյն՝ որ էր հեղեալ 'ի վերայ խոտոյ և 'ի վերայ երկրի, առաւօտուն մինչդեռ ժողովեալք մեք հաւատացեալքս և զայս սաղմոս ասէաք. Ողորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում: յանկարծակի եղև նշան ահաւոր, քանզի էջ հուր յերկնից և պատեաց զմեզ 'ի տեղւոջն ուր հեղաւ արիւն երանելւոյն և սրբեաց զնա. և մեր տեսեալ զայն յահի և 'ի դողման եղեալ, անկեալ յերեսս մեր 'ի վերայ երկրի՝ եղեաք իբրև զմեռեալս, մինչև կարմրանալ մարմնոյ մերոյ իբրև զվարդ 'ի սաստիկ ջերմութենէն: Եւ իբրև վերացաւ հուրն 'ի մէնջ՝ դիմեալ մեր առ հասարակ ուր կայր նշխարք երանելւոյն, և աղաչէաք բարեխօսել առ Տէր Աստուած վասն մեր, քանզի կարծէաք ցասումն ինչ լինել 'ի վերայ մեր. և յորժամ ծանուցեալ մեր զշնորհսն Աստուծոյ՝ յաղօթս նորա ապաւինեալք օրհնեցաք զմի Աստուած, որ արժանի արար զմեզ այսպիսի տեսլեան. քանզի կարծէաք մեք զառաջինն թէ վասն տանջանաց ամպարըշտաց երևեցաւ այս, բայց ապա ծանուցեալ մեր զիտացաք եթէ 'ի պատիւ և 'ի փառս սրբոյն եղև այս նշան։ Եւ դարձեալ հանեալ մեր զնշխարս երանելւոյն Յակովկայ անտի գաղտաբար, և օծեալ իւղովք անուշիւք և պատեալ սուրբ կտաւօք, եդաք 'ի պատուական տեղւոջ, որպէս վայել էր երանելւոյն. և փառաւորեցաք հանդերձ նոքօք զՀայր և զՈրդի և զսուրբ զՀոգին, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Յիզտիբուզտեայ։

Ընդ ժամանակս թագաւորութեանն Խոսրովու որդւոյ Կաւատայ արքային Պարսից՝ առաւել զայրացեալ լինէր խոստովանութիւնն որ առ Քրիստոս, և ոչ սակաւք նահատակեցան յաշխարհին Պարսից և 'ի դրան արքունի։ Յորում ժամանակի այր ոմն Մախոշ մոգ՝ 'ի նորին աշխարհէ, 'ի գաւառէն որ կոչի Բերշապուհ, 'ի գեղջէ որոյ անուն Քունարաստան, որոյ ծնողքն պաշտօնեայք էին կրակի, և ինքն 'ի մանկութենէ մոգութեամբ վարժեալ. և էր զօրաւոր խրատու և գիտութեամբ հրապաշտիցն և խորհրդով իմաստուն։ Սա 'ի դիպուածոյ իմեքէ 'ի բանակս Թագաւորին հասանէր, և պատահէր չարչարանաց սուրբ վկայի ուրումն՝ որում անուն էր Գրիգորիոս։ Հրաշացեալ ընդ համարձակութիւն նահատակին, և զհաւատոյ բարւոք նախանձն նախանձեալ՝ ասէ 'ի սրտի իւրում. Տէր Աստուած քրիստոնէից, նայեաց յիս և ցոյց ինձ ճանապարհ որով գնացից, և բաց ինձ դուռն ողորմութեան ընդ նահատակի քում, զի արժանի եղէց արքայութեան քում, որ Տէրդ ես երկնի և երկրի։ Իսկ 'ի նմին գիշերի տեսիլ սքանչելի երևէր նմա, որպէս թէ լինէր ինքն 'ի սուրբ եկեղեցւոջ, և այր ոմն սպիտակազգեստ երևեալ նմա ասէ. Երանելի ես դու, զի այսպիսի լուսաւոր եկեղեցւոյ եղեր արժանի. և հաւատասցես յայսմհետէ յԱստուած յարարիչն երկնի և երկնի և յՈրդին համագոր և 'ի Հոգին համագործ, և ուսցիս զայդ յաւանդութենէ սրբոյ աւետարանին։ Եւ զարթուցեալ իմացաւ զտեսիլն, և հաւատաց բոլորով սրտիւ և ասէ. Աստուածն քրիստոնէից է ճշմարիտ Աստուած։ Եւ յայնմհետէ զզղջմամբ ունէր զմոգութիւնն։

Գայր անտի յաշխարհն Սինեաց, պարապելով յունկնդրութիւն գրոց սրբոց. և լեալ անդ սակաւամիս հասանէ 'ի Հայս. և եկեալ յԱյրարատ գաւառ՝ բնակէր յոստանին Հայոց 'ի Դուին, յարեալ 'ի մոգու ուրումն Հայոց համակարի, որում անուն էր Խոսրով Պերոզ. և արհամարհանօք զմոգութիւնն անցուցանէր։ Եւ լինէր 'ի ձմերային ժամանակի, 'ի մեհեկանին՝ ըստ Պարսկաց ամսոյ սկիզբն, և ըստ սովորութեանն իւրեանց զոհս աղտեղ մատուցանէին հրոյն յապարանս համակարին։ Եւ երանելին Մախոժ կայր ընդ նոսա յաւակի, պնդեալ զբերանն։ Եւ բարձրացեալ բոցն 'ի ճարպոյն, հասանէր 'ի դարաւանդակ տանն և բորբոքէր։ Իսկ մոգուցն ժողովեալ զզոհելն՝ զհուրն փութացան շիջուցանել, և ոչ կարացին. և արտաքս ընթացեալ պատմէին զիրսն։ Եւ որ հազարապետն էր Հայոց՝ իբրև լուաւ զձայն ամբոխին, փութապէս հասանէր 'ի դուռն եկեղեցւոյն, ստիպէր ըզպաշտօնեայսն առնուլ զսուրբ խաչն և բերել յապարանսն, զի թերևս մերժեսցի հուրն, որ առ նեղութեանն ակամայ հաւատայր։ Եւ սպասաւորացն առեալ զնշանս սուրբ խաչին՝ արագ հասանէին 'ի տեղին. և հասեալ յանդիման ապարանիցն սուրբ խաչն՝ և բոցն տարածեալ շիջանէր առ հասարակ։ Այս մեծ նշան եղև պատուական սուրբ խաչիւն յաշխարհիս Հայոց՝ 'ի խնդութիւն բարեպաշտից և յամօթ կռապաշտութեան։ Եւ տեսեալ կնոջ համակարին՝ մեծ գոհութիւն առաքէ սպասաւորաց սքանչելագործ սուրբ խաչին։ Իսկ երանելին Մախոժ իմացեալ զայսպիսի սքանչելիս, զուռն որովք հրամայէր՝ ջարդեալ 'ի բաց ընկենոյր, նոյնպէս և զբերանակապն. և մատուցեալ առնոյր զբուրվառն 'ի ձեռաց սարկաւագին՝ և արկանէր խունկս առաջի սրբոյ խաչին, և յայտնէր զհաւատսն զոր ունէր 'ի Քրիստոս. և յուղարկելով զսպասաւորս խաչին ասէր. Խնդրէք յԱստուծոյ վասն իմ, զի և ես քրիստոնեայ եմ։ Եւ տեսեալ մոգուցն՝ ասեն ցնա. Ընդէ՞ր զայդ իշխեցեր առնել։ Ասէ երանելին. Ես 'ի բազում ժամանակաց հաւատացի քրիստոնէից, և խղճիւ մոգէի, բայց արդ յայտնապէս քարոզեմ զհաւատս որ 'ի Քրիստոս, և այլ ոչ ևս սպասաւորեցից հրոյ, զայդ ամենայն զարմանալիս տեսեալ։

Ի վաղիւ անդր երթեալ մոգուցն առաջի Հայոց իշխանին՝ որ կոչէր Նիխորական, և ամբաստանէին զերանելոյն։ Եւ ածեալ զնա առաջի՝ ասէ դատաւորն. Ա՛յ Թշուառական, ընդէ՞ր զհայրենի մոգութիւնն թողուս, և յիմար և ուխտակորոյս լինիս։ Պատասխանի ետ երանելին և ասէ. Ճշմարտիւ ասեմ, ո՛վ դատաւոր, վասն իմ, զի քսան և հինգ ամ ունիմ, որով ընդ վայր աղանդաւորեցայ. իսկ այժմ ծանուցեալ զճշմարիտն Աստուած՝ 'ի հայրենի բազմաստուածութենէն հրաժարեցի։ Վասն որոյ ոչ այսուհետև կենցաղոյս պատրանք յայսց հաւատոց անջատեսցեն զիս, քանզի հանդերձեալ եմ տանել հասելոց տանջանաց։ Եւ զայրացեալ իշխանն՝ հրամայեաց հարկանել զերանելին երկոտասան կրկին, և կտրեալ զմօրուսն և զհերս, և գրեալ զհարցումն՝ կապէր զոտս և զձեռս և տայր 'ի բանտ։ Եւ գտանէր սուրբն իւր վշտակից զոմն 'ի բանտին, որում անուն էր Ներսէս, որ 'ի բազում ժամանակաց էր կապեալ 'ի բանտին վասն Աստուծոյ։ Եւ ուսանէր 'ի նմանէ երանելին զուղղ հաւատս և զսաղմոսս քան, և այսպէս անդադար պաշտէր զԱստուած և աղօթէր։

Յետ սակաւ ժամանակի փոխանորդէ զկնի Նիխորականին Նախապետն անուանեալ. և նստեալ յատենի՝ ածին զերանելին Մախոշ առաջի նորա։ Ասէ Նախապետն. Զիա՞րդ իշխեցեր զհայրենի աստուածն թողուլ և հաւատայցեր անծանօթին Քրիստոսի։ Ասէ երանելին. Մի է Աստուած՝ հասարակաց արարիչ, որ ունի զմտաց ամենայն բարեգործաց. որոյ տեսեալ զմիտս իմ թուլացեալ 'ի բազմաստուածոցն երկրպագութենէ՝ առաջնորդեաց ինձ 'ի ճշմարիտ աստուածգիտութիւն։ Եւ սրտմտեալ Նախապետին՝ հրամայեաց գան հարկանել զնա սաստիկ, և կապեալ նորին երկաթուղք տարան 'ի բանտ։ Եւ լեալ 'ի բանտին այլ ևս ամս երիս՝ հայցէր 'ի քահանայէն առնուլ զտէրունական կնիքն զի անուանեսցէ զնա Յիզտիբուզիտ, որ թարգմանի Աստուածատուր, այսինքն է յԱստուծոյ փրկեալ, զոր և Հոգին սուրբ կենդանագրէր. որ և զօրացեալ լինէր 'ի բանտին հոգւոյն, և հանեալ տայր զհանդերձս իւր կարօտելոց, և ինքն զգենոյր այծեայս և հողաթափս։ Եւ այսպէս պահովք և աղօթիւք հսկէր սաղմոսելով անդադար գեղեցիկ կրօնաւորութեամբ։

Եւ 'ի լնուլ այլ ևս երից ամացն՝ յաջորդէր զնախապետն որում Քնարիկն ասէին։ Դպիր ումն սորա երթեալ 'ի բանտն՝ հնարէր պատրել զերանելին. ասէ ցնա. Քեզ միայն Արեաց աշխարհն չեղև բաւական, զի մոլորեալ ես 'ի մոգութենէ, անձամբ զքեզ գերի վարելով առ հասարակ յաշխարհէ և 'ի դենէ մոլորեալ։ Պատասխանի տուեալ սրբոյն ասէ. Ամենայն անծանօթք ճարտարաց բնութեամբ սպասաւորին, և կենդանիքս 'ի ստացողէն ստրկացան. այսպէս և մարդիկ իւրեանց արարչին պարտին ծառայել միայն Աստուծոյ. վասն որոյ և ես յանտեսութեան իմում նանրութեան ծառայեցի. իսկ յորժամ գթացաւ յիս Աստուած, կալեալ զմտածութենէ իմմէ կապեաց 'ի սէր պատուիրանաց իւրոց՝ ներկեալ լուսով շնորհի իւրոյ, զոր ոչ կարասցեն կենցաղոյս փորձութիւնքս փոփոխել։ Եւ լուեալ զայս ատենադպրին՝ յոտն յարեաւ ցասմամբ, և սկսաւ հարկանել զնա բրով անողորմ։ Եւ այլ ևս բազում ազգի ազգի տանջանս հասուցանէր երանելւոյն, զի հաւանեսցի ունել զմոգութիւնն։

Յայնմ ժամանակի լուեալ թագաւորն զբազում բռնութիւն և զտառապանս զոր հասուցանէին աշխարհին Հայոց գործակալքն, առաքէր երիս իշխանս հաւատարիմս այց առնել երկրին, անուն միումն Նատոյ՝ որ կոչի Դրովանդական, և երկրորդին Պերոզ՝ որ էր Ռէոյ գաւառին մոգպետ, և երրորդին Խոյապ՝ որ էր սպասաւոր արքային. որք եկեալ 'ի Հայս բազում ուղղութիւնս արարին։ Եւ յաւուր միում հրապարակաժողով արարեալ՝ նստէին յատենի յաղագս հրամանին արքունի։ Ի նմին ժամու արք ամպարիշտք զգացուցին իշխանացն և ասեն. Են արք երեք 'ի բանտի, որոց զմեր պաշտօնն թողեալ և զքրիստոնէութիւն են յանձն առեալ, Ներսէս ան՟ Ռաժիկ, և Սահակ ան՟ յԱտրպատականէ, և Յիզտիբուզիտ Պարսիկ: Եւ հրամայեցին ածել զնոսա: Ասէ մոգպետն ցՆերսէս. Ընդէ՞ր եղեր քրիստոնեայ: Ասէ երանելին. Մայր իմ քրիստոնեայ էր, և 'ի տղայութեանն էի հաւատացեալ 'ի Քրիստոս, չգիտեմ բնաւ զձեր դենդ: Հարցեալ և ընդ Սահակ. և նա ասէ. Ի տղայութեանն լեալ էի քրիստոնեայ: Իսկ երանելին Յիզտիբուզիտ կայր յետոյ, և նուաղ ձայնիւ սաղմոսէր զվեցերորդ սաղմոսն. Տէր, մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի բարկութեամբ քով խրատեր զիս: Եւ զատուցեալ զնոսա՝ ասէ ցՅիզտիբուզիտ. Ա՛յ թշուառական, ընդէ՞ր զլուսաւոր դենն թողեր և նսեմաւոր քրիստոնէութեան հաւատացեր, և դարձեալ ստիպելով զոհեալ քո հրոյ: Ասէ սուրբն. Ա՛յո, զոհեալ, և զմոգութիւն առաւել գիտեմ քան զքեզ. և եթէ հրամայես ասել և յայտ առնել, ծանիցես որքան լաւ է քրիստոնէութիւն քան զամենայն պաշտամունս, զոր ես քննեալ և հաւաստեաւ ծանուցեալ, քրիստոնէութեան միայն է կարողութիւն փրկել յահագին 'ի մահուանէն: Եւ լուեալ մոգպետին՝ հրամայեր սպասաւորացն պատառեալ զպարեգօտս նորա և հանել զկնգուղն. Հարկանէին զգլուխ երանելւոյն և զմօրուսն խլեալ արմատաքի: Եւ դարձեալ զերեսեան երանելւոն հրամայեցին պահել զերիս աւուրս. և յետ այնորիկ ածեալ զնոսա՝ ոչ կարէին հաւանեցուցանել. ապա արգելին զնոսա 'ի տան միում անկերակուր: Եւ հրամայեաց մոգպետն արկանել ծուխ զգիշերն ամենայն: Վտանգեալ սուրբքն՝ աղաղակէին և ասէին. Աստուած, յօգնել մեզ նայեաց, և Տէր, յընկերել մեզ փութա: Եւ այսպէս անդադար սաղմոսէին մինչև ցառաւօտն. և լեալ 'ի բանտին աւուրս տասն: Եւ 'ի գիշերի միում յաւուր կիւրակէի, յորում հանդերձեալ էր Յիզտիբուզիտ վկայել, տեսութիւն երևէր նմա. այր ոմն ունէր 'ի ձեռին վարոց, և հասուցեալ 'ի գլուխ նորա՝ և հոսէր արիւնն 'ի միջէ աչաց նորա: Եւ երևեալ երից լուսազգեաց արանց՝ 'ի բաց մերժեցին զայրն որ եհարն, և բերեալ պսակ յընտիր մարգարտէ՝ դնէին 'ի գլուխ նորա: Եւ զարթուցեալ պատմեաց ընկերացն, և գիտացին եթէ հասեալ է ժամ նորա: Եւ 'ի վաղիւն եկեալ հաւատարիմքն երթեալ 'ի բանտն ածել զսուրբսն. և եկեալ դահճապետն 'ի բանտն՝ տանել, և նա հրաժարեալ յեղբարցն գնայր. և յերթալն սաղմոսէր զչորրորդ սաղմոսն, սկսեալ 'ի բանտէն մինչև 'ի տեղի ատենին. Ի կարդալ իմում լուար ինձ ըստ արդարութեան, 'ի նեղութենէ ինձ անդորր արարեր. և կատարեալ զսաղմոսն՝ հասանէր 'ի տեղի ատենին: Եւ լուեալ քրիստոնէիցն՝ առ հասարակ դիմեցին անդր տեսանել զնահատակութիւն սրբոյն: Եւ սուրբն Յիզտիբուզիտ կայր առաջի չորից դատաւորացն, և կազմեալ երիս փայտս մահապարտաց. զոր բերեալ առաջի՝ ասէ մոգպետն ցսուրբն. Տեսանե՞ս զփայտդ՝ յորում հանդերձեալ ես մեռանել. խնայեա 'ի քեզ, և մի 'ի նմին յամառութեան կար: Պատասխանի ետ սուրբն և ասէ. Առաւել ես հաստատեալ եմ 'ի Քրիստոս, որ է յոյսն իմ. բայց դու զհրամայեալսն քեզ վասն իմ՝ կատարեա: Եւ հրամայեաց տանել 'ի փայտն. և սուրբն յօժարութեամբ սրտիւ և զուարթ մտօք երթայր 'ի փայտն. և հանեալ 'ի նմանէ 'ի բաց զերծուցին զհանդերձիկն զոր ունէր: Ասէ երանելին. Յիրաւի է այս այսպէս, զի իմ տէառնորդին 'ի կամաւոր խաչելութեանն Միածինն փրկիչ՝ մերկ 'ի խաչին բևեռեցաւ, զի զնախահօրն մերոյ զմերկութիւնն զգեցուսցէ, որ և զիս զօրացուսցէ, զի պարտեցից զսատանայական խորամանկութիւնս 'ի մարմնի իմում: Եւ տարածեալ զինքն 'ի վերայ փայտին՝ սկսաւ ասել զքառասներորդ երրորդ սաղմոսն. Արի, Տէր, օգնեա մեզ և փրկեա զմեզ վասն անուանդ քո. Համարեցաք որպէս զոչխար 'ի զենումն: Եւ 'ի կանգնել զփայտն՝ յղէ առ նա մոգպետն, զի թերևս դարձցի: Եւ արհամարհեալ չտայր պատասխանի. կայր 'ի փայտին պնդեալ 'ի բազմամբոխ ատենին, և խոցէին նետիւք զկողս նորա: Դիպեցաւ 'ի նմին աւուր հանել 'ի փայտ երկուս մահապարտս, զորս և հանին իսկ ընդ նոսա. մինն էր 'ի ժողովոյն Խուժկաց, զոր ածեալ 'ի փայտն՝ համբուրէր զոտս սուրբ վկային, և առեալ հող արիւնախառն որ 'ի կաթուածոց վըկային՝ ընկենոյր 'ի ծոց իւր։ Եւ դահճապետն կափելով զգլուխ նորա, հանէին ընդ աջմէ վկային 'ի փայտն, և 'ի նա ձգեալ զնետն և այնպէս աւանդեաց զոգին։ Իսկ միւսն Հրեայ էր. իբրև ածին 'ի փայտն, բողոքեաց առ դատաւորսն. Մի՛ կորուսանէք, զմոգութիւն յանձն առնում. և չկալեալ միտ դատաւորացն՝ հանէին զնա 'ի փայտն յահեկէ սրբոյն։ Եւ երանելին 'ի մէջ երկուց մահապարտացն 'ի բարձր տեղւոջ ողջակիզեալ յանդիման արեգականն և ամենայն ժողովըրդոցն։ Որ ունէր խորհուրդ զարմանալի. որ և յիշատակեալ 'ի նա տէրունեան բան՝ ըստ ճշմարիտ խոստմանն, թէ՝ Որ հաւատայ յիս՝ զգործն զոր ես գործեմ և նա գործեսցէ, և մեծամեծ ևս քան զնոյնս։ Եւ առաքեալ ասէ. Զորս յառաջն ճանաչէր՝ յառաջագոյն հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի որդւոյ իւրոյ։

Եւ այսպէս քաջութեամբ վկայեաց սուրբն Յիզտիբուզիտ 'ի քսաներորդի երրորդի ամին Խոսրովու Թագաւորի, որ օր երկու էր քաղոց ամսոյ, յաւուր կիւրակէի յերրորդ ժամու. և հրամայեաց պահել զմարմին երանելւոյն 'ի վերայ փայտին։ Իսկ հաւատացելոցն ըստ յաջողելոյն Աստուծոյ առեալ զմարմին սրբոյն՝ և պատուական հանդերձիւք պատեալ, իջուցին 'ի հանգիստ պայծառ պատուով, տօն կատարելով մեծաւ ուրախութեամբ. յորում այսպէս լոյս փայլեալ զուարճացոյց զանձինս ուղղափառ հաւատացելոց։ Վասն զի ամենափրկչին Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ, հանդերձ Հօր ամենակալի և Հոգւոյն սրբոյ՝ վայելէ փառք պատիւ, այժմ և միշտ։

Պատմութիւն վարուց
Սրբոյն Յովհաննու Ոսկեբերան վարդապետին։

Բազում են խօսք վարդապետութեան և մեկնութեան սուրբ Գրոց՝ զոր եթող երանելին տէր Յովհան Ոսկեբերան, Կոստանդնու եպիսկոպոսն, 'ի խրատ և յուսումն մանկանց ուխտի եկեղեցւոյ սրբոյ. որ են ընդ ամենայն՝ երկոտասան հազար ճառ 'ի գիրս հաւաքեալ, վասն որոյ Ոսկեբերան կոչեցաւ։ Բայց վասն զի անաչառութեամբ յանդիմանէր զոչ եկեալսն յուղղութիւն, աւելի անիրաւաց լինէր, և գլխովին իսկ թագուհւոյն, քանզի չարացուցին զնա ասելով, թէ առ քեզ է բանն, զոր նա առ հասարակ առ կանայս ճառեաց։ Եւ եղև 'ի ժամանակի՝ զայգի ուրումն հանեալ թագուհւոյն անիրաւութեամբ իշխանութեան աղագաւ, իսկ այրւոյն թախանձեալ զերանելին Յովհան, և նա խրատէր զթագուհին դարձուցանել զայգին. և ասէր ցթագուհին, թէ՝ Յաղագս այսպիսի իրաց կրեաց զբարկութիւն յանբարկանալոյն Աստուծոյ՝ Յեզաբէլ։ Ընդ որ առաւել բարկացեալ թագուհւոյն՝ խորհեցաւ զսուրբն ընկենուլ յաթոռոյն. և առ ձեռն եգիտ զԱկակ Ասորւոց եպիսկոպոսն, զի ոխայր ընդ երանելին Յովհան վասն հռչակաւոր անուանն. և այլ ևս չարախորհուրդս գտեալ յազդմանէ չարին, զՍևեռ Անտիոքու եպիսկոպոսն և այլ ևս յուխտաւորաց և 'ի ժառանգաւորաց, զապիրատս և զորոշեալս վասն յանցանաց իւրեք։

Դնեն զանուղղայս ինչ 'ի վերայ սրբոյն Յովհաննու.

նաև պալատան քահանայն՝ զոր աքսորեալ էր սրբոյն Յովհաննու, միաբանեալ էր բազում անիրաւօք՝ զզօրավարս և զներքինապետս թագուհւոյն: Արտաքսել խորհեցան զերանելին հանդերձ թագաւորաւն. և առ ինքեանս համարէին զբանն, զոր նա 'ի բեմասացութեանն վասն մարմնոյ և արեան Տեառն զգուշացուցանէր զամենեսեան առ հասարակ, զառաջնորդս եկեղեցւոյ և զթագաւորս և զզօրավարս և զգլխաւորս, ասէր. Զգո՛յշ լեր որ այդ խորհրդոյդ տէր ես. եթէ թագաւոր ես, եթէ զօրավար, եթէ այլ ոք անարժանութեամբ մերձենայ, արգել, զի մեծ քան զնորայն ունի իշխանութիւն. և ոչ պարեգօտս սպիտակս՝ զորս կոկեալ յղկեալ փերևետեալ շրջիք: Եւ այս ամենայն ոչ գային 'ի տիեզերական եկեղեցին՝ ուր էր Յովհան. այլ 'ի պալատան եկեղեցւոջն հաղորդեալք մարմնոյ և արեան Տեառն. և խնդային ընդ լուսաւոր կերպս վարդապետութեան առն Աստուծոյ. զի որպէս հոսանս գետոյ շնորհօք Հոգւոյն սրբոյ զեղոյր առ հեռաւորս և մերձաւորս: Եւ յղեալ յԱնտիոք ուսանել զվարս մանկութեանն, թերևս գտցեն սխալանս ինչ, կամ բիծ կամ արատ. զի էր որդի հօր Որեկենթոսեայ, և առ հօրաքեռն իւրում մնեալ, որ էր կին յոյժ բարեպաշտօն և երկիւղած յԱստուծոյ. և խրատեալ և վարժեալ ըստ երկնային կոչմանն և աւետարանին Քրիստոսի, և յիմաստնական յուսմանն խոկայր 'ի տուէ և 'ի գիշերի: Ի մանկութենէ հասակի եռայր հոգւովն, յութ և 'ի տասնամենիցն 'ի բաց կացեալ 'ի վարժիցն, աստուածայնոյն պարապեալ գրոց. և ընտիր և անուանի լեալ, 'ի Զենոնէ եպիսկոպոսէ երուսաղեմացւոյ, և 'ի Մելիտոսէ Անտիոքու հայրապետէ՝ ընթերցող նորին եկեղեցւոջ կարգեալ զերիս ամս, տեսեալ զյառաջադիմութիւնն. և յետ երից ամաց 'ի լեառն փութայր, սիրել զկրօնաւորութեան վարս, և աշակերտեցաւ լուսաւոր կարգաց և կրօնից ճգնաւոր միաբանակեցաց. և էր նոցա հնազանդ յամենայն ճգունս կրօնից յօժարամիտ, որ ոչ երբէք դադարէր 'ի բարի վաստակոց: Եւ յետ այսորիկ յայրի ուրեմն վաստակէր փորձեալ առանձնանայր ամս եօթն, և զմի ամն անքուն անցուցանելով յոտնկացութեամբն. և բազում մարտ և կռիւ ընդ թշնամւոյն արդարութեան մարտնչէր և յաղթէր փորձողին՝ պահօք և աղօթիւք, տքնութեամբ և արտասուօք, ցրտով և մերկութեամբ. և տաժանմունս բազումս վասն անուան Տեառն յանձին իւրում կրէր, զի զհոգին ազատեսցէ յաշխարհէ աստի չարէ:

Եւ դառնայր անդրէն յեկեղեցին Անտիոքացւոց 'ի տեսչութենէ Աստուծոյ. և 'ի հայրապետէն Մելիտոսէ ձեռնադրեալ սարկաւագ, որպէս կամքն Աստուծոյ հրամայեցին. որպէս զի զամենայն աստիճանս ընկալցի և հասցէ մեծագոյն աթոռոյն. և երիս ամս կալեալ զսարկաւագութիւն լուսաւոր վարդապետութեամբն՝ լուսաւորէր զամենեսեան շնորհօք բանին որ ելանէր 'ի բերանոյ նորա. վասն որոյ Ոսկեբերան կոչէին զերանելին Յովհան, յաղագս առաւելութեան շնորհացն: Դարձեալ օծմամբ և հոգւով կոչեցեալ 'ի քահանայութեան շնորհս և յաստիճանս. և առաւել յորդորէր վարդապետութիւն իւր, որպէս զհոսանս ինչ զեղեալ. այլ 'ի վերայ այլոյ՝ բնախօսութեամբ և աստուածային գրոց մեկնութեամբ և յորդորանօք վասն ամենայն բարեպաշտ վարուց առաքինութեան որ զհոգի և զմարմինն լուսաւորէ, և Քրիստոսի մերձ կացուցանէ, զարս և զկանայս, զծերս և զտղայս և ըզմանկունս որք 'ի քաղաքս, ամենասփիւռ վարդապետութեամբ իւրով զամենեսեան լուսաւորէր, տուեցելոյ նմա 'ի վերուստ 'ի Հոգւոյն սրբոյ:

Եւ ո՛վ ոք կարասցէ զառաւելութիւն շնորհացն և զլուսաւորութիւն բանից նորա պատմել: Եւ ամենայն կարգօք քահանայութեան կացեալ, հռչակաւոր և անուանի լեալ առաւել քան զառաւել. և յաղագս առաւելութեան շնորհաց նորա մեծաւ ցանկութեամբ կոչէին զնա յեպիսկոպոսութեան պատիւ. բռնութեամբ հրամանի թագաւորին և սինկղիտոսին, հանդերձ եպիսկոպոսօք և ժառանգաւորօք եկեղեցւոյն, ձեռնադրեն եպիսկոպոս Կոստանդնուպօլսի, 'ի քառասուն ամին երանելւոյն Յովհաննու. և բազում ուրախութիւն լինէր որք ընդ ձեռամբ նորա վիճակեալք էին. իսկ մեզ յոյժ տրտմութիւն է՝ որ զրկեցաք 'ի նորա վարդապետութենէ: Զայս լուեալ Թագուհւոյն յԱնտիոքացն՝ հանդերձ չար միաբանելովքն՝ ոչ ինչ գտեալ զնոսա, խորհեցան այլովք դաւաճանութեամբ արտաքսել զսուրբն յաթոռոյն, և ընկենուլ 'ի մետաղս, զի համարձակ լիցին գործել զանօրէնութիւնս և ոչ յումեքէ յանդիմանել. և համբաւ սուտ 'ի սուտակապասիցն՝ որ համբաւէին զայս ինչ կամ զայն, և եթէ զՈրոգինէին ուսուցանէ և մուծանէ յեկեղեցիս հաւատացելոց։

Եւ ժողովս արարեալ, զհամախորհն անօրէնութեան զԹէոփիլոս զԱղեքսանդրացւոց եպիսկոպոսն՝ զոր հաւանեցոյց թագուհին 'ի կամս իւր, նաև զմեծըն Եպիփան կոչէին 'ի ժողովն ստիպով։ Թէպէտ և ոչ կամէր և ոչ հաւանէր չար ժողովոյն, 'ի սադրելոյ չարին և 'ի համոզել՝ 'ի բաց յուղարկեն, և կարծիս ետուն միաբան լինել ընդ իւրեանս զԵպիփան։ Առ որս պատասխանի առնէր երանելին Յովհան և ասէր. Ո՛վ երանելիդ Եպիփան, թէ արդարև միաբանեալ ընդ գոռոզսն՝ որ ոչ հասցէ յաթոռ իւր։ Եւ լուեալ մեծն Եպիփան ասէ. Թէ արդարև նահատակն Քրիստոսի կարծիս բերելով, և նա ոչ հասցէ յաթոռ իւր։ Դարձեալ երկոցունց բանք կատարեցան սրբոցն։

Եւ ժողովն ամբաստան եղեալ գրով առ թագաւորն, թէ ոչ եկն Յովհան 'ի ժողովն վասն իւր փասուն. և ինքեանք ցրուեցան յիւրաքանչիւր տեղիս. և Յովհան աքսորեցաւ 'ի թագաւորական հրամանէն, և 'ի սադրելոյ թագուհւոյն 'ի կղզի ինչ. և ոչ դադարէր 'ի գրելոյ զմեկնութիւն 'ի սուրբ Գրոց 'ի չնորհաց բարձրելոյն։ Եւ իսկոյն սքանչելիս երևեալ՝ մահ մեծամեծաց անկաւ 'ի քաղաքին և յարքունական ապարանսըն. ընդ որս զարհուրեալ թագուհւոյն՝ հաւանեցոյց զայր իւր դարձուցանել զՅովհան յաթոռ իւր. և ոչ կամեցաւ գնալ։ Եւս բռնադատէին զնա երթալ մեծաւ աղաչանօք՝ մինչև հաւանէր դառնալ։ Եւ եկեալ երանելին Յովհան 'ի քաղաքն՝ պայծառացուցանէր ըզլուսափայլ վարդապետութիւնն, և զհակառակորդսն կշտամբէր գալ յուղղութիւն ճշմարտութեան աւանդին։ Սակայն չարն անդրէն բորբոքէր, մախացեալ ընդ առն ճշմարտի և ողջախոհի և լուսաւոր վարդապետի և խորհողի զօրէնս Տեառն։ Դարձեալ չարժէր 'ի բարկութիւն զԹագուհին, այսպիսի պատճառաւ. կանգնէր անդրի արծաթի 'ի վերայ ծիրանի սեանն՝ 'ի զբօսանս իւր և 'ի մերձաւորացն և խաղ ռամկացն. զոր խրատէր երանելին 'ի բաց կալ ամենեւին 'ի խաղուցն: Ատելի է Աստուծոյ, ասէ, որ հեղու ըմպարկեշտութեան հաստատութիւն անձանց: Ընդ որոյ չարացեալ Թագուհւոյն՝ խորհէր չար վասն Յովհաննու. զոր իմացեալ՝ 'ի բեմասացութեան ճառին ասէ. Դարձեալ մոլեգնի Հերովդիադա, կորել զգլուխըն Յովհաննու անիրաւութեամբ՝ յաղագս ճշմարտութեան:

Եւ զայս լուեալ Թագուհւոյն՝ յղէ առ Թէոփիլոս Աղեքսանդրացւոց եպիսկոպոսն, կրկին ժողով առնել վասն անկմանն Յովհաննու Ոսկեբերանին. և նա անյապաղ կատարէր: Փութով առաքէ եպիսկոպոսս, և տայ տանել կանոնս արիանոսացն, որ էր գրեալ ընդդէմ Աթանասի կանոնացն, թէ՝ Զեպիսկոպոս աքսորեալ, թէպէտ իրաւ թէպէտ անիրաւ, առանց ժողովոյ ընկալեալ, դարձեալ մերժել արժան է: Զայս ուղիղ կարծելով՝ դարձեալ մերժեն զՅովհան կրկին անգամ. և արարեալ ժողով Թէոփիլոսեանքն, երեսուն և վեց, և արդարախորհ.քն Յովհաննու քառասուն, և կոչէին զՅովհան Թէոփիլոսեանքն, և ոչ թողլին քառասունքն. քանզի ասէին թէ մեք առաւելագոյն եմք ըստ կանոնաց. միանգամայն 'ի դժրանաց երկուցեալ, գիտելով զչարութիւն Թագուհւոյն, և ամբաստան եղեն թէ ոչ եկն 'ի ժողովն: Դարձեալ աքսորեն զՅովհան Ոսկեբերան հրամանաւ արքունի:

Եւ յափշտակեալ զերանելին զինուորացն բռնութեամբ 'ի միջոյ ժողովոյն, և եդեալ 'ի նաւ յուղարկեցին զսուրբն 'ի հեռաւոր աշխարհն: Եւ իսկոյն սքանչելիք եղեն յԱստուծոյ 'ի վերայ քաղաքին. հուր երևեալ 'ի վերայ աթոռոյն՝ յորում և նստէր երանելին և վարդապետէր զբանն կենաց. և ձայն լսելի եղև որ ասէր. Ո՞ւր ես պատմող բանին ճշմարտութեան. և հուր ցոլացեալ 'ի վերայ երթևեկացն խորանաձև, և զտուն սինկղիտոսին այրեաց, բայց մարդոյ ոչ մեղաւ. և եղև կարկուտ սաստիկ յոյժ 'ի քաղաքին: Եւ ահիւ ըմբռնեալք ամենեքեան՝ ևս առաւել վրէժխնդրութիւն անկմանն առն Աստուծոյ համարեալ յերկիւղէն՝[1] վախճանէր յետ երից աւուրց. և Բաղկեդոնի եպիսկոպոսն՝ որ նախատէր զերանելին Յովհան 'ի ժողովըն Թէոփիլեանցն՝ չարամահ սատակեցաւ. այս նշան եղև յանկմանն Յովհաննու։

Իսկ զերանելին տարան 'ի Կոկիսոն 'ի քաղաքն Հռոմայեցւոց. և նորա լուսաւոր վարդապետութեամբն աղբերաբար բղխեալ զճառս աստուածահրաշս, և հաւաքէր 'ի գիրս և զբազումս աշակերտէր։ Զոր լուեալ չարակամաց նորա չարակնեցին. և տան փոխել յԱրաբիսոն. և առաւել յորդէր զհոսանս վտակաց արբուցանելով զիմանալիս աստուածասիրաց անձանց։ Եւ համբաւ հռչակեալ յատելիս նորա, վասն որոյ կամեցան յանբնակ տեղիս տանել։ Եւ պատահեալ 'ի գիւղ մի յԱղեքսանդրիա՝ օթևանի. և երևեալ վըկայ տեղւոյն Բասիլիոս, ասէ. Ո՛վ երանելի Յովհան, լուսաւոր վարդապետութեամբ քո լուսաւորեցեր զազգըս մարդկան, և ամբարեցեր քեզ գանձս երկնայինս՝ որ կան և մնան. արդ եկ և հանգիր ընդ մեզ։ Եւ ասէ Բասիլիոս ցընկերն իւր Ղուկիոս մարտիրոս և քահանայ. Պատրաստեա տեղի տեառն Յովհաննու, զի վաղուն գայ առ մեզ։

Եւ 'ի վաղուն երանելին Յովհան զգեցաւ նոր հանդերձս և կօշիկս, և զհինն տուեալ մերձաւորացն, և մատուցեալ պատարագ՝ ճաշակէր զմարմին և զարիւն Տեառն. և ասացեալ զվերջին աղօթսն, և ասացեալ ամենեցուն՝ զամէնն, աւանդեաց զհոգին 'ի փառս Աստուծոյ։ Եւ թաղեցին զնա առ սրբոյն Բասիլիոսի. և որպէս յԱստուծոյ առաք հրաման՝ զոր հանգստեան նորա 'ի մարերի ութևտասան կատարեն։ Եւ փոխանորդէ զաթոռ նորա այլ յայլմէ. մինչև յերանելին Պրոկղոս, որ եկեալ յետ երեսուն և հինգ ամի մահուան նորա, տանի 'ի Կոստանդինուպօլիս և նստուցանէ յաթոռ իւր։ Եւ էր մարմին նորա անապական մնացեալ յետ այնչափ ամաց. և որպէս կենդանւոյն ձայն լսելի եղև որ ասէր. Խաղաղութիւն ընդ ձեզ։ Եւ լուեալ զայս՝ տային օրհնութիւն Աստուծոյ։

---

[1] Պակաս թուի։

Յորժամ[1] աքսորեցին զՅովհաննէս՝ տանէին զնա անողորմաբար աշխատութեամբ ընդ դժուարին ճանապարհս, յաւուրս ձմերայնոյ սառնամանեաց, 'ի Կոկիսոն Հայոց. հասանէ 'ի Կոմանիս գեօղն. եմուտ յեկեղեցին յորում էին նշխարք սրբոյ վկային Բասիլիսկոսի. աղօթեալ և գոհացաւ զԱստուծոյ. և երևեցաւ 'ի տեսլեան սուրբ վկայն Բասիլիոս Յովհաննու Ոսկեբերանին և ասէ. Զօրացիր, եղբայր իմ Յովհաննէս, քանզի վաղիւն 'ի միասին լինիմք առաջի Աստուծոյ. և երևեցաւ սպասաւորի նշխարացն և ասէ. Պատրաստեա տեղի մեծի ճգնաւորիդ Յովհաննու, զի գալոց է առ իս. և յարուցեալ Յոհաննէս զգեցաւ սպիտակ պատմուճան քահանայութեան, և մատոյց զանարիւն պատարագն Քրիստոսի, և հաղորդեցաւ 'ի պատուական մարմնոյ և արեան Որդւոյն Աստուծոյ։ Եւ ասաց զսովորական բանն իւր. Փառք քեզ Աստուած յաղագս ամենայնի. և ողջունեալ զամենեսեան յեկեղեցւոջն, աւանդեաց զհոգին իւր 'ի ձեռն հրեշտակաց. և թաղեցին մերձ առ տապանին Բասիլիսկոսի։ Եւ զչարախօսքն զՈսկեբերանին՝ Աստուած չարաչար մահուամբ սատակեաց. ոմանց նեխեալք բերանքն և որդնալից լեալ լեզուացն՝ կորեան. ոմանք 'ի խելաց թափեցան, և այլ ընդ այլ խօսելով մեռան. ոմանք 'ի պէսպէս անբժշկելի ցաւս և յանբուժելի ախտս անկեալք սատակեցան։ Իսկ Թէոփիլոս Աղէքսանդրու պատրիարքն բազում աւուրս յոդեվարի լեալ՝ հոգին ոչ ելանէր, աղաղակէր ցաւագին վշտօք և ասէր. Տեսանեմ զտէրն իմ Յովհաննէս՝ զի արգելու զհոգի իմ յելանելոյ, և չտայ թոյլ երթալ առ Աստուած. քանզի բազում համարձակութիւն ունի առ Քրիստոս. և այնպէս խոստովանելով զոր մեղաւն առ Յովհաննէս, և ապա աւանդեաց զհոգին։

Եւ զերեսուն և զերիս ամս Եւդոքսեայ տապանն երերէր և շարժէր անդադար, յաղագս այնորիկ որ զՈսկեբերանն աքսորեաց. մինչև առաքեաց որդի նորա փոքր Թէոդոս Թագաւորն 'ի Կոմանի, զի բերցեն զպատուական մարմին սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի հայրապետին. որ և հոգեկան զաւակ էր նորա Թէոդոս, քանզի 'ի մկրտութեան կնքահայր էր Յովհաննէս Թէոդոս թագաւորին։ Եւ երթեալքն հնարս ոչ գտանէին հանել 'ի տապանէն, վասն զի սուրբն ոչ կամեցաւ. ապա գրեաց Թէոդոս հրովարտակ արտասուօք ձեռամբ իւրով բազում պաղատանօք, և հրամայեաց կարդալ 'ի վերայ գերեզմանին, որպէս և առ կենդանի։ Եւ յորժամ տարան և ընթերցան՝ առժամայն թոյլ ետ սուրբն, և բացաւ տապանն. և գտին զՈսկեբերանն ամբողջ, որ և մազ 'ի գլխոյ նորա ոչ էր պակասեալ, և ոչ մարմինն թարշամեալ, և ոչ երեսն այլագունեալ, այլ որպէս կենդանի 'ի քուն. և բուրէր հոտ անուշութեան 'ի սուրբ մարմնոյն։ Եդին 'ի փայտէ տապանն, և պաշտամամբ և մոմեղինօք և խնկօք տարան մերձ 'ի Կոստանդնուպօլիս յայնկոյս ծովուն։ Եւ առաքեաց թագաւորն երկոտասան նաւս 'ի պատիւ սուրբ հայրապետին. և զնաւն յորում էր տապանն՝ տարաւ ծովն մինչև յայգի այրւոյն՝ որով թշնամութիւն եղև Եւդոքսէի ընդ Յովհաննու. և անտի գնացին 'ի նաւահանգիստն Սոփիայ 'ի սուրբ Թովմայի առաքելոյ եկեղեցին. և գնաց թագաւորն ընդ առաջ ամենայն իշխանօքն և ժողովրդօքն, մոմեղինօք և խնկօք։ Եւ բացեալ տեսին զմարմինն Յովհաննու ամբողջ որպէս կենդանի 'ի քուն, և բուրէր հոտ անմահութեան. զահի հարեալ փառս ետուն Աստուծոյ, և բարձեալ անտի զտապան սրբոյն՝ տարան յեկեղեցին սրբուհւոյն Իրինեայ, յորում Ոսկեբերանն պատրիարքարանն էր. և նստուցին յաթոռ իւր 'ի վերայ աստիճանաց բեմին։ Եւ եղև մեծ սքանչելիք 'ի ժամուն յայնմիկ. մարմինն առանց հոգւոյ կանգնեցաւ 'ի վերայ պատուանդանի աթոռոյն, և աջովն իւրով խաչ եհան 'ի վերայ ժողովրդեանն, և ասաց մեծաւ բարբառով. Խաղաղութիւն ընդ ամենեսեան։ Եւ ասացին ժողովուրդքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Եւ մարմինն որպէս կենդանի առանց մարդոյ նստաւ յաթոռն. և միաբան ամենայն ժողովուրդքն գոհութեամբ փառս ետուն Աստուծոյ, որ արար սքանչելիս մեծս։ Եւ ապա միաբանեցան ամենայն եպիսկոպոսունքն և ժողովուրդքն՝ որ հերձան 'ի միմեանց վասն մնկմանն և աքսորանաց

---

[1] Աստի և անդր այլոյ և յետնոյ պատմչի են բանք։

Ոսկեբերանին։ Եւ անտի առեալ տարան յեկեղեցի սրբոց Առաքելոցն, յորում էր տապանն Եւդոքսեայ թագուհւոյն, և նոյն ժամայն դադարեաց յերերմանէն. և հանգուցին զսուրբ մարմին հայրապետին Յովհաննու Ոսկեբերանի՝ 'ի ներքս 'ի խորանին 'ի ձախակողմն բեմին։

Եւ ապա խորհուրդ արարեալ թագաւորն և սուրբքն Պրոկղոս պատրիարքն և այլ եպիսկոպոսքն, և միաբան աղաչեցին զԱստուած և խնդրեցին 'ի նմանէ զի երևեցուսցէ նոցա թէ յո՛ր փառս է 'ի հանգիստ իցէ աշխարհապատում վարդապետն. և երևեցաւ սրբոյն Պրոկղի պատրիարքին և միւս այլ ճգնաւոր կրօնաւորի, որոյ անունն էր Մարկոս. և տեսին լուսաւոր տաճար մեծ և զարմանալի, յորում ամենայն հայրապետքն փառօք նստեալ յաթոռս հանգստեան, և զԵպիփան զԿիպրոսի արքեպիսկոպոսն. իսկ զՅովհաննէս զցանկալին զոր փափաքէին՝ ոչ տեսին, և յոյժ տրտմեցան։ Եւ այր մի լուսազգեաց հարցանէր թէ զո՞վ խնդրէք։ Եւ նոքա ասեն. Զտէր մեր զՅովհաննէս։ Ասէ լուսաւոր այրն. ԶՄկրտի՞չն խնդրէք թէ զԱւետարանիչն։ Ասէ Եպիփան. ԶՅովհաննէս կամին տեսանել զՈսկեբերանն, զԿոստանդնուպօլսոյ հայրապետն։ Ասէ լուսաւոր այրն. ԶՅովհաննէս խնդրէք զապաշխարութեան վարդապետն. զնա ոչ ոք 'ի մարդկանէ կարէ տեսանել, քանզի ընդ սերովբէսն է և ընդ քերովբէսն՝ առաջի աթոռոյն Աստուծոյ։ Նոյնպէս և 'ի կոմանիս յորժամ հանգեաւ Ոսկեբերանն, ետես եպիսկոպոսն զնոյն տեսիլն. և այլ ոմանք ճգնաւորք և երկիւղածք յԱստուծոյ տեսին զՈսկեբերանն ընդ Մկրտչին և ընդ Աւետարանչին դասեալ։ Դարձեալ հանգուցին զմարմին նորա յեկեղեցւոջ սրբոց Առաքելոցն, յունվարի քսան և եօթն, և տօնեն ամ յամէ 'ի փառս Աստուծոյ՝ որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյ կուսին Յուլիանեայ:

Յինքնակալութեանն Մաքսիմիանոսի ամպարշտի Հռովմայեցւոց 'ի գեղեցկագոյն քաղաքի Նիկոմիդացւոց՝ որ է 'ի նահանգին Բիւթանացւոց, 'ի ժամանակի հալածանացն մերոց, այր ոմն երեւելի 'ի նմին քաղաքի, որում անուն Եղեւսիոս կոչիւր, յոյժ խորհրդակից ինքնակալին Մաքսիմիանոսի և ընդ սիրելի բարեկամս համարեալ. այլ առաւել եւս ջատագով և հաւատարմագոյն դիցն պաշտամանց, հարսն առնու իւր զաղջիկ ոմն պայծառ և գեղեցիկ և չքնաղ կերպարանօք զարդարեալ: Ազգաւ էր երեւելի, յեղանակաւ գովելի և պարաբարձող առաքինասէր ողջախոհութեամբ. սա ոչ սակաւ ունելով զբարեացն յիշատակացն համեմատութիւն, զոր և զարդ անձին իւրում ստացեալ՝ նովաւ մեծապէս 'ի կատարեալ ճոխութիւնսն ձգտէր, և առ բարեպաշտութիւնս քրիստոսադիր հաւատոյն ձգտեցուցանէր զմիտս իւր հանապազօր. ունելով առաջնորդ և զօրացուցիչ՝ զաստուածային Հոգւոյն նախախնամութիւնն. զի ոչ պատճառս բարեաց ինչ ունէր 'ի ծնողաց՝ կոյս այս: Քանզի հայր նորին 'ի կռապաշտութիւնն պանծալի գոյր, և ամենեւին բարեկամ Հելլենացւոցն գտանիւր, նա և քրիստոնէից անմարտնչելի թշնամի եւս եղեալ. իսկ մայրն կիսասահման էր Հելլենացւոց միանգամայն և բարեպաշտութեանն, ոչ մի քան զմի առաւելագոյն համարեալ:

Այլ ամենապարկեշտ աղջիկն Յուլիանէ՝ ոչ այնպիսի ինչ խորհրդովք այսր անդր ոտնառութեամբ թափիւր. ըստ բարի բուսոյ բնութեան՝ 'ի բարիսն խորհրդածէր տեսութիւնս. տեսանելով զերկին և զերկիր, զօդ և զծով, զջուր և զհողմ, զլոյս և զխաւար, զշրջան երկնային լուսաւորացն, և զփոփոխումն եղանակաց, և զզօրութիւնսն զամենայն որ կրին 'ի նոսա. և 'ի խոյզ անկեալ խոհեմական իմաստութեամբ՝ խնդրէր զգոյացուցիչն նոցա. վասն զի զօրութիւն ամենիմաստին Աստուծոյ, և ճարտարապետին ամենեցուն Հոգւոյն սրբոյ՝ համբառնայր զմիտս նորա նկատել ըղգերակայիցն տեսարանսն, և զշարժողն և զխնամողն երևելի եղականացս, թէ յորպիսի էութենէ այս ամենայն կառավարեալ կան: Եւ յայտ հանճարեղապէս իմացեալ լինէր, և 'ի վերայ հասանէր ներգործական խորհրդոցն Աստուծոյ, և զխորհրդածութիւն անեղ Երրորդութեանն գիտութեան, որ վերագրէ յիւրում աստուածաբանական մատենին ասելով, թէ՝ Երևելի արարածովս աշխարհիս զաներևոյթն իմացեալ տեսանեմք: Եւ այս բան միշտ և հանապազ լինէր արմատացեալ 'ի միտս մարգարտագունին Յուլիանեայ. և սէր աստուածային զնովաւ շրջապատեալ, մի Աստուած խոստովանէր, և արարիչ երկնի և երկնի ասէր լինել զայն՝ որ զամենայն տեսակս գոյութեանց շարժեալ ունի. և ասէր յինքեան՝ նմա երկիր պագանել. և զայլսն, ասէր, ոչ երբէք արդեօք Յուլիանէ առ աստուածս կալցի, և ոչ պաշտօնս և պատիւս մատուցանել է նոցունց:

Զայսոսիկ ասէր բանիւք և համանգամայն արդեամբք զգործն կատարէր: Վասն զի առաւօտ լուսոյ ծագեալ էր 'ի նմա 'ի վերին օգնականութենէ, և գըրգայր 'ի վերայ նորա Հոգին Ճշմարտութեան. և յերևելի զգայութեանցս համբարձեալ զմտութիւն նորա՝ անճառիցն առնէր հանդիսակից. և զիղձս բաղձանաց վերին երանութեանն յոգի նորա տրամադրէր, և յամենայն երկրական պատաղմանցս իրաց փախուցեալ երևէր: Եւ յերկս յայս զիւր բաշխէր զկենցաղն. հետևեալ անդադար 'ի տաճարն Աստուծոյ՝ առ 'ի յաղօթս յարաժամս և յընթերցումն աստուածային գրոց, և այսպէս հանդերձ պահօք անցուցանէր զժամանակն. և հասու լինէր ամենայն անօրինական խորհրդոցն Աստուծոյ բանին: Լսէր գրոց և ուսանէր 'ի վարդապետացն՝ որ 'ի ժողովուրդսն քաղաքին, զիջումն 'ի հայրական ծոցոյ, և զծնունդն 'ի Մարիամայ, զմկրտութիւն 'ի Յովհաննէ առ 'ի Յորդանան գետ, զաստուածագործ նշանսն որ առ Եբրայեցիսն, զհանդէս մահուն և զկենսացուցիչ չարչարանսն՝ որ վասն արարածոց, զխորհուրդ խաչին և զլուծումն բնութեան սատանայի՝ որ 'ի ձեռն մահու նորա գործեցաւ, զթաղումն երեքօրեայ, և զյարութիւնն հրաշափառ, զհամբարձումն աստուածապէս, և զամենայն տնտեսութիւն մարդեղութեանն գիտացեալ ճշմարտապէս. և իմացեալ զծածուկս աստուածային խորհրդոյն, թէ որպէս կարգք եկեղեցւոյ յառաջ եկեալ եղեն, և արմատ հաւատոյ հաստատեցաւ 'ի ձեռն առաքելական քարոզութեանն: Այլ և ծանեաւ զհանդերձեալ երանութեանցն բրաբիոնն. և զփառսն անճառ՝ զոր պատրաստեալ պահի հետևելոցն զկնի օրինացն Աստուծոյ. զյարութիւն համաշխարհական և զարհաւիրս ահեղ միւսանգամ գալստեանն. զանճառելի տանջանացն տեսիլն՝ որ առ մեղաւորացն երամն, և զանսահման թագաւորութիւնն արդարոցն յանվախճան յաւիտեանսն: Այսու ամենայնիւ պարունակեալ պարսպէր զանձն իւր սրբուհի կոյսն. և ամրապատ վահանօք Հոգւոյն աղխէր զգայարանսն իւր ընդդէմ դիմամարտ չարին. և տենչայր ծարաւի ոգւով 'ի հաճոյս երկնաւոր փեսային գտանիլ:

Այլ քանզի և Ելևսիոս 'ի հարսանիս փութայր, իսկ հոգեհրաշ իսկուհիս այս և ջերմեռանդն բաղձանօք ցանկացող Յիսուսի՝ 'ի բաց դարձուցանել հնարաւորէր զառաքեալսն առ նա, ասելով. Մի՛ փութար առ 'ի առնել զհարսանիսդ. գիտեա զայս ըստուգապէս, եթէ ոչ է հ՞նար հաւանել քեզ ինձ, եթէ ոչ յառաջագոյն զեպարքոսական իշխանութիւնն առցես 'ի թագաւորէն: Զայս ասելով 'ի խորհուրդս իւր, այնպէս ունելով զդիտաւորութիւն իւր՝ իբրև թէ նա իսկ հաւանեսցի, և թերևս ոչ կարասցէ ձեռնարկել յիրն յայն, և պատճառ լիցի առ 'ի մերժել զամուսնութիւնն Եղևսիոսի. ապա եթէ ասցէ զայն ինչ զոր եղեալ է առաջի՝ հնարաւորեալ ինչ և ունէր երկբորդ պատճառ. զոր եթէ հաւանեսցի առնել և զայն՝ որոշեսցի, և զանձն իւր ոչ կորուսցէ. և կամ ոչ կարասցէ առնել, ապա և զմտածմունս նորա որ յամուսնութեան՝ կորուսցէ անյիշելի: Եւ ծածկեալ ունէր 'ի սիրտ իւր զխորհուրդս զայս մեծահռչակ աղջիկն:

Այլ զի Եղևսիոս սաստիկ սիրով հարեալ էր յաղջիկն, զի յոյժ պարկեշտ և անհամեմատ գեղեցկութեամբ հաճոյացեալ էր յաչս ամենեցուն. իսկ Եղևսիոս բղջախոհական ցանկութեամբ օրիորդին մաշեալ, շարժեալ զքաղաքն և զմեծամեծս թագաւորական պալատանն, բազում ոսկւով և արծաթով գնել զխնամութիւնն զայն. և արձակեալ առ աղջիկն ազդ առնելով նմա զգերապայծառ ձոխութիւն փեսայացելոյն իւրոյ. այլ և պահանջէր 'ի նմանէ զհարսանիս 'ի նմին ժամու կատարել: Իսկ երանելի կոյսն հարկաւորապէս յայտնէ զխորհուրդն նմա, և պատասխանի առնէ եկելոցն առ նա այսպէս. Երթայք ասացէք Եղևսիոսի եպարքոսի՝ այսպէս. Թէ այդոքիկ բաւական են պատճառք բարւոյ մեզ այսմ կենացս լինել. այլ թէ դու իմոյն ոչ երկիր պագանիցես Աստուծոյն, և խոստովան լինիցիս այնմ զոր ես պաշտեմ, խնդրեա դու քեզ զայլ ոք ամուսին. քանզի Յուլիանուհի ոչ հաւանի բնակակից լինել այնմիկ՝ որ ոչ իցէ գտեալ 'ի քրիստոնէական հաւատս. և եթէ զայս, ասէ, ոչ արասցէ, գնասցէ ընդ այլ ումեք զուգեսցի:

Իսկ առաքեալքն գնացին պատմեցին զբանս զայս Եղևսիոսի եպարքոսի. և նա 'ի տագնապի եղեալ տրտմութեամբ՝ կոչէր զհայր նորա և պատմէր զամենայն. և ընդ բանսն խառնէր սպառնալիս մեծամեծս: Իսկ նորա լուեալ և 'ի դողումն հարեալ, և 'ի տրտմութենէն զարհուրեալ, և անգիտանալ զինչ այնր իրի խոստովանէր. քանզի և նա 'ի հելլենական կրօնսն յոյժ էր բարգաւաճեալ, սիրելի աստուածոցն և նորա հաւատար մոլեալ. դառնայր 'ի տուն իւր սրտաբեկեալ և թախծեալ անձամբ, և վաղվաղակի ոչ դառնութեամբ և ոչ բարկութեամբ կաճառէր ընդ կոյսն, կասկածելով զի մի յանկարծակի գրգռեսցէ, և ներկեալ այսպիսի բանիւք գտանիցի անզեղջ։ Յայնժամ յաւէտ և հեշտաբար հայրական խնամածութեամբ մերձ կոչէր առ ինքն, գիրկս արկեալ զպարանոցաւն՝ համբուրէր և ասէր. Ասա ինձ, դուստր իմ սիրելի և լոյս խնդալի աչաց իմոց, սակս որո՞յ իրի 'ի հարսանիս ոչ յօժարանաս և զեպարքոսն մերժես։

Իսկ բանքն այն իբրև զթոյնս օձի եհաս 'ի լսելիս կուսին, և ասէ. Դադարեա, հայր իմ, յայդմ բանէ. քանզի երդնում 'ի յոյսն իմ 'ի Տէր Յիսուս Քրիստոս, եթէ ոչ նախ պաշտաման իմոյ հաւատասցէ, և ոչ ամուսնութեան իմոյ լինիցի հաղորդ։ Քանզի որպիսի իցէ այն՝ եթէ մարմնով շարամերձեալ իցեմք և հոգւով իցեմք թշնամիք։ Յայնժամ ցասուամբ մեծ և սաստիկ ըմբռնեալ զայրն, և անտանելի վշտով լցեալ՝ ասէ. Ո՛վ դու յիմարեալդ և 'ի ներքոյ անկեալդ դիւական պատրանաց, ցանկացող տանջանաց և ամենայն սաստից մահու. երդուեալ իմ յանմահ և 'ի մեծագոյն աստուածսն՝ յԱպողոն և յԱրտեմիս, զի զազանաց և շանց զմարմինդ քո տացեմ կերակուր։ Իսկ երանելի վկայուհին ասէ. Եւ զի՞ յապաղես. եկեսցեն շունք, բերցին գազանք, և ամենայն տեսակք տանջանաց մահու, փոխանակ միոյ բազումք. զի ես ուրախ եմ բազում անգամ մեռանել վասն Աստուծոյն իմոյ, և բազում փոխարինաց ակն ունել 'ի նմանէ։

Դարձեալ աչագինն այն և նենգաբարուն՝ ընդ նահատակաւն զրոյց իմն առնէր զբանն զայն. զահեղութիւն և զխոշորութիւն սրտին վաղվաղակի 'ի բաց թողոյր, և յառաջին գայր հնարս. քանզի հայրենական փափագն և կրօնիցն ցասուամբ՝ յերկուս բաժանէին զնա, և զանազան առնէին զընութիւնն։ Վասն որոյ հաւանական սուտակասպասութեամբ և գրգանօք աղետական սիրով փութայր ածել զնա 'ի կամս իւր։ Իսկ բարունակն աստուածային և մեծ մարտիրոսուհին՝ բարբառ իմն այսպիսի լի համարձակութեամբ արձակէր ասելով. Միթէ և դու քոյոց նմանես աստուածոցն. զի ականջս ունելով ոչ լսես, աչս ունելով ոչ տեսանես. քանզի գիտես եթէ երդմամբ զբանն հաստատեցի՝ եթէ ոչ ինչ է իմ Եղեսիոս՝ եթէ ոչ հաւանեալ երկիր պագանէ Քրիստոսին իմոյ։

Արդ զայսոսիկ ասելով նահատակուհին, լուաւ հայրն և մատնեաց զնա 'ի բանտ։ Եւ 'ի գիշերի դարձեալ եբեր զնա առ ինքն, զի փորձեսցէ եթէ թողացաւ 'ի մտաց անտի իւրոց եթէ ոչ։ Իսկ երանելի նահատակն աղաղակէր առ նա ասելով. Ոչ զոհեցից կռոց և ոչ երկիր պագից դրօշելոց. ոչ եղէց սպասաւոր և պաշտօնատար դիւաց. զՔրիստոս միայն պաշտեմ, և նմա միայն երկիր պագանեմ, որ արարիչն է երևելեաց և աներևութից, և տուիչ հոգւոց ամենայն մսեղեաց։

Արդ իբրև գիտաց հայր նորա եթէ հաստատ խափանեցաւ առ նմա սուտակասպասութիւնն և սպառնալիքն, մրրկեալ խորհրդով չարին և ծարաւի արեամբ նորա եղեալ՝ իբրև զգազան չար, 'ի բաց մերկացաւ զհայրենի ողորմութեան գութն. և այնչափ անհնարին գանս էարկ զմարմնով կուսին՝ մինչև զարմանալ ամենեցուն ընդ տևել ոգւոյ նորա 'ի նմա։ Եւ ապա մատնէր զնա 'ի ձեռն եպարքոսին Եղևսիոսի՝ որում և խօսեալն էր իսկ, զի որպէս և կամեսցի արասցէ ընդ նմա։ Արդ քանզի արհամարհեալ փեսայն 'ի նմանէ, զարհամարհող հարսն դատել հրամայէր, քանզի զիշխանութիւն թագաւորական հրամանաց ունէր. որ և բորբոքէր սաստմամբ, և կրճտէր զատամունս, ոչ վասն նորօրէն հաւատոյն, այլ և վասն անարգանացն որ 'ի նմանէ։

Արդ իբրև ածին մուծին զնա յատեան դատաստանին, և կացուցին առաջի նորա, գեղեցկութիւն և չքնաղ կուսին կերպարանք զաչս ամենեցուն շլացուցանէր. ևս առաւել բեկանէր զսիրտ իշխանին, գթայր և նորա բարքն 'ի կերպարանէն. շիջանէր ցասումն, զգօնանայր և յանդգնութիւնն, ցածնոյր և ամբարհաւաճութիւնն. ընտանեցուցանէր զթշնամանողն իւրոյ մեծութեանն, և քաղցրագոյն և կակղագոյն խոնարհութեամբ ընդ նմա գտանիլ հնարաւորէր։ Զբուցատրութեամբ հրճուողական 'ի մէջ բերեալ ասէր պակշոտական ցանկութեամբ. Հաւանեաց ինձ, ով գեղեցկագոյնդ և հանճարեղդ 'ի կանայս, և մի զայդպիսի հրաշատեսիլ տիպ պատկերաց տար յապականութիւն մահու. և եթէ աստուածոցն ոչ կամիցիս զոհել, և ոչ մեք 'ի վերայ քո հաստուցանեմք բռնութիւն. լուր միայն ինձ, զամուսնութիւն խոստացիր, և ոչինչ նուազ արարից զքեզ երկրական փառացն այնոցիկ՝ որ կայսերական թագիւ զուգաւորեալ են ընդ ինքնակալ թագաւորին:

Առ այսոսիկ ետ պատասխանի սուրբ վկայուհին և ասէ. Ոչ փառք և ոչ մեծութիւն բոլոր աշխարհիս հրապուրէ զիս ընդ առն ամպարշտի լինել. ոչ բանտ և ոչ տանջանք և ոչ նոյն իսկ մահ՝ հաւանեցուցանէ զիս շարամերձիլ ընդ քեզ, եթէ ոչ 'ի միասին ընդ Քրիստոսին իմ եղիցիս և աստուածային մկրտութեամբն կատարեալ գտցիս: Առ այսոսիկ ետ պատասխանի Եղևսիոս եպարքոս և ասէ. Եւ զայդ ինչ արդեօք կատարէի, ով սիրեցեալդ 'ի կանայս, եթէ ոչ անհնարին վիշտք և սպառնալիք կային 'ի վերայ. զի եթէ այդպիսի բան հասանէ յունկն թագաւորին, ոչ-միայն 'ի պատուոյ զրկիցիմ, այլ և դառն պատուհասիւ և անողորմ մահուամբ ելցեմ 'ի կենցաղոյս յայս:

Ետ պատասխանի կոյսն ազնուական և ցանկալի և ասէ. Եթէ դու յառժամանակեայ և 'ի մահկանացու թագաւորացս՝ որ մարմնոյ միայն ունին իշխանութիւն և ոչ հոգւոց՝ այդպէս սոսկաս և զարհուրիս երկիւղիւ, ես զանմահ և զբոլորից թագաւորն ևզտէրն ամենայն շնչոց և հոգւոց՝ 'ի բա՞ց դիցեմ, և անարգողացն զնա և ուրացողացն՝ յամուսնութիւն ածեա՞լ լինիցիմ: Ո՞չ թուեսցի քեզ անարգանս բազում, եթէ որ անցեալ 'ի ծառայից քոց՝ առ թշնամիսն քո սիրելութիւն ստասցի, և յամուսնութիւնս և 'ի զուգաբնակութիւնս շարամերձեսցի: Այսուհետև մի պատրիր, և մի պաշարեսցիս զիս բանիւք հաւանեցուցանել, զոր անհնարին է լինել. այլ թէ ախորժես զիս քեզ կենակից լինել, մատիր առ Աստուածն իմ և հաղորդ լեր հաւատոյս իմոյ. ապա թէ ոչ՝ աւասիկ եմ պատրաստ 'ի հուր, 'ի սուր, 'ի քերանս, 'ի յօշումն անդամոց, և զոր այլ ինչ ածես 'ի վերայ իմ՝ զայն ոչ փախեմ և ոչ վհատիմ: սպան որպէս և կամիս, ցրեա տանջանօք, մասնեա գազանաց. 'ի կիր արկ յիս զամենայն մեքենայս զինչ և առ միտս քո նկատեսցի, զի դու ինձ գարչէլի ես, և ամուսնութիւն քո իբրև զգժոխս համարեալ կայ, իբրև զգերեզման բռեալ առաջի աչաց իմոց։

Զայսոսիկ լուեալ եպարքոսն՝ հուր առ հուր յաւելեալ զցասումն սաստկացուցանէր, և բոլորովին արտաքոյ բնութեանն լեալ՝ զվայրենական գազանացն բերէր զնմանութիւն. և փոխանակ եղծանելի անձկալի տրփման՝ բորբոքէր առաւել տրտմութիւնն, և հնարէր դժուարին և անհանդուրժելի հասուցանել զնահատակուհւոյն տանջանսն։ Նախ և առաջին հրամայէր չարագոյն դահճացն լարիւք իմն քառակոյս տարածեալ 'ի վերայ տրամի երկրին, և կարծրագոյն արջառաջլօք և վարոցիւք դալարօք առ յերկար հարկանել։ Արդ իբրև լքան վաստակեցան դահիճքն, և նա 'ի հաստատութեան միտս կայր կազմ, և զոր ինչ հարցանէին վաղվաղակի տայր պատասխանի. և այնպէս յերկարէր զտանջանսն՝ մինչև մատաղ մարմին նորա խառնեալ ընդ արեան առոգանէր զվայրսն ամենայն։ Եւ երանելին Յուլիանէ այնչափ վառեալ սիրովն երկնային՝ մոռանայր զամօթ իգական պատկառանաց, այլ առնաբար քաջութեամբ բարբառ արձակէր՝ ասելով.

Որ բնակեալդ ես 'ի բարձունս, բոլորից արարիչ, և անքուն ակն քո հայի յամենայն ճանապարհս որդւոց մարդկան, որ քննես զսիրտս և զերիկամունս, տեսանես զյայտնիս և զգաղտնիս ամենեցուն. աղաչեմ և խնդրեմ 'ի քէն, անքնին և ամենազօր յամենայնի, հայեաց 'ի նուաստութիւն մարմնոյս իմոյ, և առաքեա զաներևոյթ զօրութիւն Հոգւոյդ սրբոյ 'ի յօգնութիւն պատրաստեալ անձին իմոյ. զի որովհետև արժանի արարեր զանարժանութիւնս իմ հասանել անսահման մեծութեանս այսորիկ, և գրել 'ի գիր վըկայիցն որք հրաւիրեալք են յընթրիս անմահ փեսայիդ, շնորհեա զարիւն իմ լինել աւազան մկրտութեան, և զամենայն հնար մեքենայից բանսարկուին հերքեա 'ի մտաց իմոց, և արժանի արա անարատութեամբ յանդիման լինել երեսացդ Աստուծոյ։ Որովհետև կալար զձեռանէ իմմէ և զերծուցեր 'ի ցանկութենէ խաւարասէր աշխարհիս, այժմ անմոլար պահեա 'ի ճշմարտութեան ճանապարհի քում, և աներկիւղ 'ի լեռնացեալ բարձրացեալ կոհակաց ծածուկ ծովուս փորձութեան՝ յորում տարաբերեալ ծփիմ։ Ակնարկեա յիս, նաւապետ բարի, յանբաւ գերակայութենէդ քումմէ, և տուր ինձ անվրդով անցանել յանքոյթ նաւահանգիստ։ Վասն զի քեզ ամենայն ինչ կարելի է, անմահ և անմահից թագաւոր. և քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Արդ մինչդեռ նա զայս աղօթս մատուցանէր, և ձեռք դահճացն վերացեալ 'ի սրբոյն՝ դեռ ևս ոչ դադարէին 'ի հարկանելոյ զամենամաքուր մարմինն, յայնժամ հրամայեաց եպարքոսն դահճացն՝ դադարեցուցանել զտանջանսն. և ասէ ցվկայուհին. Լուր ինձ, ով Յուլիանէ, և իմացիր ճշմարտութեամբ. քանզի այդ սկսմունք են և նախերգանք առ զանազանութիւն պատուհասիցն որ կան առաջի քո. արդ մատիր առ մեծն Արտեմիս, և զոհելով կարդա առ Ապողոն՝ զի թողցէ զյանցանս քո. խոնարհեա առ Աթենաս՝ զի հաշտեսցի ընդ քեզ. երկիր պագ Արամազդայ՝ զի առցէ զքեզ 'ի սպաս պաշտաման իւրոյ, և լցցիս քահանայուհի անմահիցն և մեծամեծ աստուածոցն, որովք կեան և կրեն ամենայն արարածք զկենդանութիւն։ Իսկ եթէ տակաւին յամառեսցիս կալ 'ի քո անբարեսէր միտդ՝ հասանեն քեզ այլ ևս անհնարին վիշտք, որում ոչ կարես համբերել, և ծաղր լինիս բազմամբոխ ատենիս. և արհամարհեալ յամենայն հեթենական նահանգէս, զի ոչ ևս լինի քեզ հնար կալ և զարև տեսանել։

Առ այսոսիկ ետ պատասխանի ամենազօր վկայուհին և ասէ. Արա զոր ինչ կամիս, ով յիմար հաւատի և անմիտ, որչափ հայրն քո սատանայ հնարաւորէ 'ի սիրտ քո՝ զամենայն մեքենայս տանջանաց գործել, և անողորմ և զանամանաքարու բնութիւն քո շրջել, և հրապուրել ջանայ քև զիս՝ յանստուեր լուսոյն շիջուցանել. նոյնպէս և հայրն իմ երկնաւոր՝ կարծր և ադամանդեայ ևս զհաւատս իմ հաստատեաց. և իբրև երազք զարթուցելոց մահու տարեալ ինձ զցաւսն որ վասն անուանն իւրոյ մեծի. և ամենայն եկեալքն 'ի վերայ իմ 'ի քումմէ բռնութենէդ՝

առիթ լինին մեծի փառացն որ յայտնելոցն է 'ի մեզ՝ յահեղ և 'ի միւսանգամ գալստեան մեծի, յորժամ նորոգէ զամենայն եղականքս. և հնարաւոր մեքենայս դառն պատուհասիցդ՝ որով զմարմինս իմ կամիս ըմբռնել, բանայ ինձ զգանձս երկնայինս, և զաւանդս աներևոյթս յայտնէ, որում ծարաւի եմ յոյժ. զորոյ զտեսութիւն ոչ արժէ ամենայն տեսութիւն բոլոր արարածոցս, որում ցանկամ իսկ. և յոյժ ուրախ եմ եթէ հասուցանիցես զիս այնմ պարգևի:

Զայսոսիկ լուեալ անբարեսէր եպարքոսն Եղևսիոս, 'ի ցասումն մեծ դրդեալ՝ հրամայեաց կախել զնա ըզհերաց գլխոյ նորա, և կեալ այնպէս մինչև առցէ ըզչափ զօրութեան իւրոյ: Արդ մինչև տարամերժեալ օրն անցանէր և մերձ լինէր առ երեկոյն, և նա կախեալ կայր այնպէս տարաբերեալ ոգւով, ոչ համդուրժէր բնութիւն մարմնոյն, զի մազ գլխոյն համդերձ մորթովն 'ի բաց լինէր, և աչացն շփոթումն եղեալ, և այնչափ յօնիցն ձգտեալ՝ մինչ զի վերագոյն քան զճակատն երևեալ. և ապա հրաման տայր իջուցանել զնա, և տանել կապանօք 'ի բանտ, և զգուշագոյն պահել: Քանզի յետ այսր ամենայնի դեռ ևս խորհէր 'ի միտս իւր հասանել մոլեկան ցանկութեանցըն, և օրինօք կնութեան առնուլ զնա առ ինքն:

Արդ յետ աւուրց ինչ անցանելոյ՝ հրաման ետ ածել զկոյսն առաջի՛ իւր, և յետ այնչափ չարագոյն պատուհասիցն եկելոցն 'ի վերայ նորա, դարձեալ բանս մատուցանէր զցանկութեան իւրոյ և ասէր. Հաւանեա ինձ, ո՛վ Յուլիանէ, և լեր երանելի քան զամենայն կանայս Յունաց աշխարհիս. և մի՛ լինիր ինձ մեղադիր յաղագս անաչառ պատուհասիցն որ ածի 'ի վերայ քո, զի օրէնք թագաւորացն և իրաւունք աստուածոցըն պահանջէին զայն. բայց ցաւ մեծ և աղէտ անձին իմոյ հասանէին: Արդ փոխանակ այնորիկ բիւր բարիս առաւելապէս յինէն տեսանել ունիցիս. և այնպէս ամենայն մեծութեամբ և բարեվայելչութեամբ աշխարհիս պայծառացուցից զքեզ, որպէս զի ոչ ումեք եղեալ իցէ 'ի վերայ երկրի՝ առն ամուսնոյ իւրոյ այնպիսի հպատակութիւն սիրոյ ցուցանել. վասն զի տէր իսկ և անձին իմոյ արարից, և հրամանատար ամենայն կայսերական պալատանն։ Արդ մի՛ դարձեալ թշուառացուցաներ զանձն իմ, և մի՛ զայդպիսի գեղեցկութիւն կորուսաներ, և մի՛ զրկիր 'ի քաղցր լուսոյ կենաց աշխարհիս այսորիկ, և դարձեալ զալիս հօր և մօր քո կենդանւոյն իջուցաներ 'ի դժոխս։ Եւ որպէս ասացի յառաջագոյն՝ զուգաւորեա ընդ. իս օրինաւոր ամուսնութեամբ, որպէս և խօսեալ իսկ ես 'ի մանկութենէ քումմէ, և զայլ ամենայն պաշտամունս քո թողացուցից 'ի կամս քո։

Արդ յորժամ զայս ամենայն մեկուսի 'ի բազմացն խօսեցաւ ընդ նմա, և այլ եւս բազում սոցին նմանս, ետ պատասխանի սուրբ վկայուհին և ասէ. Մի՛ հնարաւորիր ամենևին՝ թէ մեքենայական բանիւքդ քո կարասցես պատրել զմիտս իմ, կամ իջուցանել յանբաւ բարձրութենէ գերակայիցն՝ զորմէ գիրկս արկեալ եմ. քանզի ստացայ ինձ զայն մեծութիւն, որ թէ բոլոր տեսակք արարածոց շրջին 'ի բնութիւն ոսկւոյ և արծաթոյ, առ այնու իբրև մէտ մի փոշւոյ համարեալ է։ Հրաժարեցայ յայն փառսն՝ որ բնաւին լոյս եղականացս իբրև զխաւար է առաջի նորա. խառնեցայ 'ի դասն յայն՝ զորոյ զտեսութիւն միայն 'ի նոցանէ ոչ կարէ կրել ամենայն արարածք. գտի և զայն փեսայ՝ որոյ զանուն ոչ բաւանդակեն ունել երկինք և երկիր։ Վասն որոյ ասեմ քեզ համառօտաբար, զի դիւրին է վիմաց ապառաժաց խօսել, և կամ մանրից քարեղինաց գնալ 'ի վերայ ծովու, և թռչել ձրկանց ընդ ամպս երկնից, քան բանից քոց հպել 'ի լսելիս իմ. քանզի պինդ են յաչս իմ և իբրև զգազանս վայրենիս համարեալ են ամենայն կուռք հեթանոսաց, և ամենայն պաշտօնատարք նոցին. և ծանր գոյ հայելն առ նոսա առաւել քան զմերձենալն իժից և քարբից, թող թէ խօսակից և բարեկամ նոցա լինել։

Արդ լուեալ զայսոսիկ եպարքոսին և հատեալ ամենայն յոյս փրկութեան նորա, և զամենայն չարութիւն բանսարկուին առ ինքն գրաւեալ, մռնչեալ իբրև զառիւծ, յարուցեալ իբրև զհեղեղատ սաստիկ՝ տագնապէր վարանէր յոգի իւր. և ըստ չարութեան մտացն հնարաւորէր կենդանւոյն կլանել զնա։ Յանժամ հրամայէր ձոյլս երկաթոց բերել և եռացուցանել զնոսա 'ի բովս դարբնաց. և մինչդեռ հրացեալ լինէին շանթքն, ետ առնուլ ունելեօք և դնել յանթըս կողի նորա աստի և անտի, և զբազուկսն պրկել 'ի վերայ նորա. և այլ երկաթս հրացեալս վարել ընդմէջ անդամոց նորա և պնդել ուժգնապէս, և թողուլ այնպէս մինչև արձակեսցէ զոգին. և ետ տանել 'ի բանտն նովին կապանօք, և զդուրսն կնքեալ, զի, ասէ, լիցի գերեզման նորա:

Իսկ մեծ վկայուհին այն՝ այսմ անտանելի տանջանացս համբերեալ 'ի բանտին. վասն զի զօրութիւն աստուածային մերձ կալով պահէր զհոգին անշփոթ 'ի նմա. քանզի չէր հնար 'ի հողեղինացս կրել զայն և ապրել՝ եթէ ոչ նախախնամութիւնն Աստուծոյ պահէր զնա կենդանի: Արդ մինչդեռ նա անկեալ կայր 'ի վերայ երեսաց իւրոց 'ի տան բանտին, և այսպէս ասէր. Տէր Աստուած ամենակալ, հզօր և փառաւորեալ, անքնին և անսահման մեծութիւն, զոր ոչ քննութիւնք արարածոց տանին, և ոչ հոգիք հրեղինացն նկատեն զանակնարկելի կայանս աստուածութեանդ քո. չիք սահման գթութեան քո, և ողորմութեան քո ոչ գոյ բաւ. վասն զի տէր ես ամենայնի, որ 'ի բարձրութիւնս ես և 'ի խորութիւնս մեծաց և փոքունց. և նախախնամական ողորմութիւն քո հասանէ յարժանաւորս և յանարժանս: Ոչինչ է որ 'ի միտս մարդկան նկարի և կամ հրամանաւ քո գոյացեալ է՝ արտաքս մնալ 'ի քո տեսչութենէդ, զի քոյով հրամանաւդ կառավարին երկինք և երկիր. և ամենայն որ 'ի նոսա արարածք իցեն՝ քոյով ակնարկութեամբդ խնամարկին և կան 'ի կայանի իւրեանց: Վասն որոյ և ես անարժանս ոչ անյոյս եղեալ 'ի յիմմէ փրկութենէ, և ոչ վհատի սիրտ իմ յամենագութ ողորմութենէդ. զի փոխանակ ամենայն կենցաղական մեծութեանս՝ գրգանաց և փափկութեանց և ամենայն ինչ որ ընդ արեգակամբս բերին կենցաղական հեշտութեանցս՝ զքեզ սիրեցի, զքեզ ընտրեցի, 'ի քեզ հաճեցայ. և անձկալի փափագանօք և բաղձանօք յօժարեցի հասանել անմահ բարեաց քոց: Վասն զի դու իսկ եղեր առաջնորդ ճանապարհիս այսորիկ, և բացեր զխաւարեալ աչս հոգւոյս նկատել զանդունդս անքնին շաւղաց քոց. և ծանուցեր զծածկեալ աստուածութիւնդ՝ ստորինջելոցս 'ի դժոխս. զի 'ի ժամիս չարութեան վիշապին կայր ըմբռնեալ կռապաշտութեամբ 'ի վիհն յաւիտենական: Արդ որովհետև զանկեալս վերածեր 'ի կեանս անմահս, և ձգեցեր զիս 'ի հանդէս մարտիրոսական ասպարիսիս, արդ մի բացեայ առնիր յինէն, և մի տար ապականիչ գայլոյն մուտ առ անդաստանս հոգւոյ իմոյ. զրահիւք Հոգւոյն զինեա զմարմինս իմ, զի նետք մուխք չարին արգելցին յինէն. և իգական բնութեանս տուր կարողութիւն հարկանել զզօրութիւն սպառազինութեան թշնամւոյն, վասն զի զօրութիւն քո 'ի տկարութեան կատարի: Թէպէտ և չեմ արժանի չարչարակից լինել քեզ, անհասանելի զօրութիւն Հօր, այլ դու անարգամեծար ես և մարդասէր. և այնչափ զօրացեալ եղև սէր քո յառարածս՝ մինչև զանեզրական և զանսահման աստուածութիւնդ իջուցեր 'ի կերպարանս մահու: Եւ արդ ընկալ, Տէր, զկամաւոր պատարագս հօտի քո, և շնորհեա ինձ զամենայն անդամս մարմնոյ իմոյ ողջակիզել առաջի քո՝ փոխանակ սիրոյ քո առ մեզ հեղեալ. զի ձեռքդ այդ որ արար զերկիր և պարզեաց զհաստատութիւն երկնի՝ ընկալաւ զհարուածս բևեռացն, և խոցումն գեղարդեանն կրեալ եղև 'ի կող կենարարիդ. ապա որչափ ևս առաւել իմոյ մեղասէր բնութեանս պարտ է հրասուզիլ, բազկաց և կողից և անդամոց գանալի վիրօք լինել. և հասո զիս անարատ արդարութեամբ զկատարումն բարեաց գտանել: Եւ օրհնեալ է անուն քո յաւիտեանս:

Եւ մինչդեռ այս աղօթք'ի բերան սրբուհւոյն կայր, եկն առ նա ամենեցուն թշնամին և պատերազմողն սատանայ 'ի կերպարանս հրեշտակի Աստուծոյ. և իբրև զբարեկամ և զսիրելի յունկնն նորա մատուցեալ ասէր. Գիտե՞ս, ով Յուլիանէ, զի յոյժ չարաչար և անհանդուրժելի կազմեաց քեզ գործիս տանջանաց եպարքոսն Եղևսիոս. այլ դու լուր խրատու իմոյ. յորժամ հանեն զքեզ 'ի բանտէդ, ընթացեալ վաղվաղակի անկիր առ ոտս աստուածոցն, և զոհեա փութապէս առ ժամանակ մի, և զկնի առուրց ինչ որպէս *կամք քո սիրեն՝ այնպէս կալ զպաշտօնս քո. քանզի ոչ հանդուրժես անհնարին և դառնատեսիլ պատուհասի որ կայ և պահի քեզ։ Իսկ երանելի կոյսն ասէ ցնա. Ո՞վ ես դու։ Դևն ասէ. Հրեշտակ եմ ես Աստուծոյն երկնաւորի, զի փոյթ եղև նմա վասն քո յոյժ, և արձակեաց զիս ազդել քեզ՝ հաւանել հրամանի իշխանին, զի մի բազում տանջանօքն իսպառ ապականեսցի մարմին քո. զի ներեաց քեզ՝ մարդասէր գոլով վասն տկարութեան մարմնոյ քո, զի 'ի դրունս մահու հասեալ կաս, և ոչ է քեզ համարեալ 'ի յանցումն ինչ՝ այլ յարդարութիւն, զի հրամանակատար Աստուծոյ լինիցիս։*

Յայնժամ խռովութեամբ լի լինէր, և ահ և դողումն ըմբռնէր զմարմին նորա. քանզի երևեալն՝ էր 'ի կերպարանս հրեշտակի Աստուծոյ, և խորհուրդք և բանք նորա իբրև զթշնամւոյ արդարութեան։ Յայնժամ մեծապէս հեծեծանօք և դառն արտասուօք լցեալ զաչս իւր, հայեցաւ յերկինս և ասէ. Տէր Աստուած, արարիչ երևելեաց և աներևութից, զոր ամենայն զօրութիւնք օրհնեն և փառաւորեն և երկիր պագանեն. յորմէ և օդային դիւացն սարսեն բազմութիւնք, և յահէ քումմէ դողան տագնապաւ. հաս յօգնականութիւն վշտագնեալ անձին իմոյ, և յայտնեա թէ ո՛ ոք է որ խօսի ընդ իս զայսոսիկ։ Եւ մինչդեռ զայս ասէր երանելի կոյսն, վաղվաղակի լուաւ ձայն 'ի յերկնից որ ասէր. Քաջալերեա, քաջալերեա Յուլիանէ, զի ես ընդ քեզ եմ, և աջ իմ անմեկնելի ունի զձեռանէ քումմէ. այլ դու զայդմանէ բուռն հար որ կայ և խօսի ընդ քեզ, քանզի տուեալ եմ քեզ իշխանութիւն և զօրութիւն 'ի վերայ դորա. այլ իմացիր եթէ ո՛ իցէ։

Եւ ապա զկնի երանաւէտ ձայնին՝ հրեշտակքն հասանէին, վասն զի անձառ լուսով լցեալ լինէր բանտն. և վաղվաղակի լուծեալ լինէին երկաթն որ եդեալ էր 'ի կողմն և յայլ անդամսն՝ և 'ի բաց անկանէին. և վէրք մարմնոյն ողջանային, և նա յարուցեալ 'ի գետնոյն՝ գոհանայր զամենապարգև ողորմութենէ բարձրելոյն։ Յայնժամ զօրութիւն աստուածային՝ կարողն յամենայնի, որում անհնարք 'ի մարդկանէ հնարա-

ւորք են, անհնարելի տէրութիւն նորա կապեալ ըղբանսարկու թշնամին կացոյց առաջի կուսին. զոր և մեծ վկայուհին ըմբռնեալ արիապէս՝ իբրև զծառայ չար և ստամբակ, ասէ. Ո՞ ոք ես դու և ուստի՞։ Իսկ աներևոյթ զօրութիւնն փութացուցանէր զնա ասել զճշմարիտն. թէպէտ և էր ամենևին ստասէր, սակայն խոշտանգեալ 'ի հրեշտակաց՝ ասաց առ սրբուհին այն, թէ՝ Իշխան եմ զօրու դիւացն, և սատանայ է անուն իմ։ Ես եմ որ ապստամբեցի յարարչէն, և ելի 'ի գերապայծառ բնակութենէ իմմէ. ես էի որ եղէ բերան օձին, պատրեցի զԵւա, խաբեցի զԱդամ և ետու անցանել զպատուիրանաւ բարձրելոյն. վասն իմ անէծք 'ի վերայ երկրի պատրաստեցան։ Ես ուսուցի Կայենի եղբայրասպանութիւն, և զտեսիլ զանազան մեղաց ես սերմանեցի յերկիր. յիմմէ արկուածից եկն ջրհեղեղն և եբարձ զամենեսին։ Ետու ազգին առաջնոյ շինել աշտարակ. և յորդորեցի զամենեսին 'ի կռապաշտութիւն, և ածի 'ի միտս Նաբուգոդոնոսորայ կանգնել զպատկեր։ Ես շարժեցի զԻսրայէլ 'ի վերայ Ահարոնի, և ձուլեցի 'ի կերպարանս որթու զզարդ կանանց նոցա, ետու և Հերովդէի առնել ըղմանկասպանութիւնն, և Յուդայի զմատնութիւնն, ապա և զխեղդումն։ Քանզի բնաւ ես գրգռեցի զամբոխն Եբրայեցւոց, և հաւանեցուցի զմիտս Պիղատոսի խաչել զՔրիստոս. հալածանս յարուցի 'ի վերայ եկեղեցեաց, և քարկոծել զՍտեփանոս ուսուցի։ Յարուցի 'ի վերայ Պետրոսի և Պաւղոսի զքաջ զինուորըն իմ զՆերոն. և զամենայն արիւն արդար հեղեալ յերկիր։ Տնկեցի հերձուած 'ի մէջ հաւատացելոց. և ոչինչ եղև չար 'ի վերայ երկրի՝ առանց իմոյ գիտակցութեան։ Վասն զի այն իսկ է կեանք և կերակուր անձին իմոյ. զի սիրեմ զմեղս, և զկորուստ աշխարհի՝ մեծութիւն և փառս անձին համարիմ։

Զայսոսիկ լուեալ սրբոյ կուսին, առնէր և այլ ինչ հրաշափառագոյն. զի ընդ գանիւք իսկ զնա արկանէր. զի որ ընդ անփախչելի կապանօք էած զնա աստուածային զօրութիւնն, և ձեռամբ ըմբռնեալ պատրաստեաց, ոչինչ է անհաւատալի թէ և առ 'ի սրբոյն գանից զգայութիւն լինէր նմա։ Վասն զի անհնարինք 'ի մարդկանէ հնարաւորք են Աստուծոյ. որպէս այնոցիկ հաւատարմագոյնք են աներևութից բարբառքն, որք աղաղակէին ընդդէմ կենարարին ասելով, թէ՝ Մի՛ յառաջ քան զժամանակն տանջեր զմեզ. քանզի կերպարան աներևութին Աստուծոյ է որ գործէ զամենայն։ Եւ մինչդեռ տանջէր անօրէն իշխանն չարաչար առաջի սրբոյն, աղաչէր լուծանել 'ի կապանացն և 'ի գանիցն գտանել թողութիւն. քանզի ոչ լուծանէր 'ի պատահարացն. ողբայր ասելով. Վա՛յ ինձ եղկելւոյս, զի՞նչ լինիցիմ, ո՞ւր փախիցիմ, զի փառքն Յիսուսի լցին զերկիր. զի թէպէտ և բազմաց եղէ պատրումն, և նեղութիւնս ահագինս հասուցի, և բազմաց եղէ չարի պատճառ՝ բանտից, կապանաց, հրապուրանաց, գանից, այրեցմանց, արտասահմանութեանց, երդմանց, խռովութեանց, պատերազմաց, հեղձմանց, ուրացութեանց, ստութեանց, չարահնարութեանց, անդարձ 'ի վախճանի և դառն մահու, և անզղջանալի տանջանաց 'ի ներքոյ երկնից, և ոչ ոք ամենևին յաղթող եղև ինձ. այլ և սա իբրև զծառայ ընդ կապանօք էարկ զիս, և գանս տարածեաց 'ի վերայ իմ, և աւասիկ ըմբռնեալ ունի. զիա՞րդ ոչ գիտացի զհանդերձեալ պատահումնս, և կամ զիա՞րդ ոչ ծանեայ զընդդիմամարտ չարս. զի յաղթողս ամենայնի՝ 'ի նմանէ յաղթեալ գտայ։

Արդ մինչդեռ նա յայսմ տարակուսի տարաբերեալ կայր, եկին հասին սպասաւորք եպարքոսին 'ի բանտ անդր, զի տարցեն զՅուլիանէ յատեան հրապարակին. և իբրև տեսին զնա ողջացեալ 'ի վիրացն, և զդուրս բանտին նովին կնքովն՝ զարհուրեցան յոյժ. և առեալ տարան զնա մուծին 'ի տեսարանն, և կացուցին առաջի եպարքոսին. յոր պշուցեալ իշխանն՝ հայէր և հիանայր, և զառաջին գեղեցկութիւն պատկերին յինքն նկարագրեալ ունէր. այնպէս երևելով որպէս թէ ոչ ինչ 'ի դժուարագունիցն կրեալ, կամ յաղջամղջին բանտին պարփակեալ կապանօք, որպէս յառագաստի գոլով և բազում փափկութեանց արժանացեալ։ Վասն որոյ և 'ի զարմացման եղեալ եպարքոսին՝ ասէ ցնա. Ասա ինձ զհաւաստին ճշմարտութեամբ, Յուլիանէ, ե՞րբ և կամ ուստի՞ և կամ յորմէ՞ կարգէ տուեալ եղև քեզ այդպիսի պայծառութիւն. և եթէ արուեստիւ զանըմբերելի տանջանս արհամարհեցեր, որ և ոչ ևս հետք վիրաց երևին 'ի քեզ: Եւ պատասխանի երանելի կոյսն և ասէ. Այս ոչ է 'ի ձեռն մարդոյ, և ոչ արուեստիւ ինչ յիս անօրինեալ եղև, այլ աստուածային անձառելի զօրութեամբ, որ ոչ միայն զքեզ այլ և զհայրն քո սատանայ յամօթ արար. և զիս երկոցունցդ վերագոյն կացոյց, քոյոցդ մոլորութեան և նորա չար արուեստաւորութեանն, զի ամենազօր անյաղթ զօրութիւնն Քրիստոսի տկարացոյց զքեզ, և զօրացոյց զտկարութիւն աղախնոյ իւրոյ և եբաց ինձ զդրունս երկնային առագաստին, և հրաւիրեաց 'ի հարսանիս Միածնի որդւոյ իւրոյ. այն որ անհաս է յէութեան, և ակնարկումն նորա յոչէից յանէից 'ի մէջ ածէ զամենեսեան, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան. ոչ երևելիք և ոչ աներևոյթք կարեն կրել և կամ ունել, և կամ հետազօտել անհետազօտելի էութիւն նորա. այն որ սիրելեաց անուան իւրոյ և երկրպագուաց Միածնին և փառաւորչաց Հոգւոյն, զանեղծ և զանթառամ հիւսեսցէ պսակ. և պատրաստեաց օթևանս անձառս մերձ յանմերձենալի տէրութիւնն. և քեզ և հօրն քում և ամենայն երկրպագուաց դիւաձոյլ պատկերացդ և սնոտի կըռոցդ՝ զանդարամետականն բանալ վիհ, և զանշէջ գեհենին պատրաստել հրահոսան եռանդմունսն, զխաւարն շօշափելի և զորդն անքուն, որ ոչ մտօք իմանալի է և ոչ բանիւք ձառելի. զի յաւիտենական սատակմանն այնմ արար զձեզ ժառանգորդ մեղքն ձեր, և անաստուած պաշտամունքդ դիւական, որ և նոքին իսկ լինին հրաւիրողք ձերոյ կորստեանդ. և դահիճքդ երկանան 'ի մէջ անսահման խաւարանիւթ հրեղէն ծովուն:

Զայսոսիկ լուեալ եպարքոսին լի եղև սրտմտութեամբ. ասէ ցկոյսն. Վասն զի դու զպարգևս աստուածոցն անշնորհակալի համարիս, այն որ դարձեալ ետուն քեզ զկենդանութիւն, և յառաջին գեղն հասին կերպարանքդ քո. զի և սիրեցին այդպիսի անձին ոչ արտաքոյ լինել պաշտաման նոցա, և դու փոխանակ զոհելոյ և կնդրուկ մատուցանելոյ՝ թշնամանս դնես անմահիցն, և զհրաշս սքանչելեաց նոցա՝ այլոյ ուրումն վարկանիս գոլ, որ և ոչ անձին իւրում կարաց հնարս գտանել զերծանելոյ 'ի ձեռաց Եբրայեցւոցն. և կամ փրկել զինքն 'ի չարագործաց մահուանէն, այլ և սպառնաս մեզ նովաւ տանջանս, և հրաւիրակ լինիս մեզ յաւիտենական հրոյն. արդ ես աստէն շիջանուտ հրով փորձեցից զմարմին քո, և տեսցուք թէ խաչեալն քեզ ի՞նչ արասցէ: Եւ ետ բերել փայտս բազումս, և զամենայն խուիւս որ դիւրածախք են 'ի յայրումն հրոյ. և զօրեղապէս և ահագին բարբառեալ 'ի մէջ տեսարանին, յորում և անթիւք ժողովեալք դիզեալք մի զմիմեամբք կուտէին 'ի տեսանել զկատարած վկայուհւոյն. և առիգածեալ ածին զնա մերձ առ բորբոքեալ հուրն: Զոր տեսեալ սրբուհւոյն և մեծահռչակ վկային, տարածեալ զձեռս իւր 'ի նմանութիւն խաչին, հայեցաւ յերկինս և ասէ.

Տէր Աստուած, անճառ լոյս և անստուեր ճառագայթ, որ արարիչդ ես ամենայն տարրական նիւթոց, և կառավար համօրէն եղելոցս, ըստ քում ամենիմաստ խորհրդոցն՝ և ոչինչ 'ի ստեղծուածոց քոց արտաքոյ կամաց քոց ընթացեալ լինի. վասն զի առաջի քո կայ խոնարհեալ երկինք երկնից, և խորութիւնք անդնդոց ոչ ծածկի 'ի տեսութենէ քումմէ. որ 'ի մէջ անբաւութեան ջուրց կնքես զհուր անշիջանելի, և շրջես 'ի բնութիւն ցօղոյ զտոչորումն հրոյ. հանես յամուլ արգանդէ վիմաց վտակս աղբերաց, և դարձուցանես զխաւար առ լոյս. և ըստ կամաց քոց յեղաշրջին ամենայն տարրականացս նիւթք. որ 'ի բարձունս ես և 'ի խոնարհ. որ անկշռելի է անչափ զօրութիւն քո 'ի հրեղինաց և 'ի հողեղինաց. որ հերձեր զծովն Կարմիր, և աջովդ քո բարձրացեալ անցուցեր ընդ մէջ նորա զազգն աբրահամեան տոհմին. և զՅորդանան յետս նահանջեցեր, և զերկաթակարծր պարիսպն Երիքովի իբրև զջուր հեղեր. որ զբաբելոնական հուրն շիջուցեր, և զերիս մանկունսն 'ի նմանէ անկեզ պահեցեր. փրկեցեր զՇուշան 'ի ծերոցն, և զԴանիէլ յառիւծուցն բռնութենէ, նա և զաղախին քո Թեկղ արձակեցեր ազատ, և կապեցեր զբռնութիւն հրոյն անհպելի լինել 'ի մաքրագոյն մարմինն: Եւ զհրաշս անքնին աստուածութեան քո եղեալս 'ի վերայ երկրի ոչ բնութիւնք արարածոց կարէ պատմել. և դու նոյն Աստուած ես և փառք և զօրութիւն քո ոչ պակասի։ Արդ հայեաց յերկնից 'ի սրբութենէ քումմէ և օգնեա տկարութեանս իմոյ, և տուր համբերութիւն և զօրացո ամենազօր զօրութեամբդ. անվրդով և աներկեան հաւատով անցանել ընդ ասպարէզ չարահնարիս այսորիկ. և արա ինձ կամուրջ փրկութեան, զի 'ի ձեռն սորա անցից ընդ հրեղէն գետոյն յորձանսն, և փրկեցայց 'ի հանդերձեալ սատակմանէն որ գալոց է 'ի վերայ որդւոց մարդկան։ Եւ արդ, Տէր Աստուած ամենազօր, աջ քո պահեսցէ զիս, և մերձ կացեալ առ իս պահպանիչ Հոգիդ, և 'ի կամս քո կատարեսցին ընթացք իմ. և քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Եւ ասացեալ զամէնն, կնքեաց զինքն նշանաւ սուրբ խաչին. և տարածեալ ձեռամբ եմուտ իբրև յառագաստ 'ի մէջ հնոցին. և անդ հրեշտակական պարակցութեամբ երգակցեալ ընդ զուարթունս երկնից հրճուալի ձայնիւ օրհնէր զԱստուած. զոր և տեսիլ իմն ահեղ երևեալ ամենայն բազմութեանն որ 'ի տեսարանն յամառեալ կային. զի հուրն խորանաձև առագաստէր զմարմնով սրբուհւոյն և պարփակէր և արտօսր յաչաց նորա հեղեալ իբրև զվտակս յորդահոս աղբերաց՝ շիջուցանէր զտոչորումն ահագին հրոյն. ընդ որ հիացեալ զարմանային տեսողք ամենայն, և ահիւ ըմբռնեալ բոլոր հանդէս Նիկոմիդացւոցն՝ կային պշշուցեալ։ Յայնժամ՛ արք թուով իբրև հինգ հարիւր միով ձայնիւ աղաղակէին և ասէին. Տէր է Աստուածն քրիստոնէից. մի է ամենազօր, զոր մարտիրոսուհին Յուլիանէ պաշտէ. զնա խոստովանիմք և 'ի նա հաւատամք և նմա երկիր պագանեմք. և զՀելլենացւոցն յետս դարձուցանեմք զանաստուած պաշտամունսն։ Եկեսցէ 'ի վերայ մեր հուր, սուր և ամենայն տեսիլք տանջանաց. զի անհնարին է մեզ մեկնիլ 'ի քրիստոնէական հաւատոյն՝ զոր բարեպաշտուհին Յուլիանէ քարոզէ։

Յայնժամ՛ 'ի ցասումն բարկութեան դրդեալ եպարքոսն, զի իբրև հրով բորբոքէր զսիրտ նորա թշնամին արդարութեան. և հրամայէր զկնուորացն ըմբռնել զնոսա. զոր և ինքեանք իսկ կամաւ յօժարեցին 'ի մահ, ոչ հայելով յինչս և 'ի ստացուածս, ոչ 'ի սիրելի բարեկամս, և ոչ առ որդիս և առ կանայս, և ոչ յայլ ինչ մարմնական պատաղմունս. այլ միաձայն բարբառով աղաղակէին և ասէին. Քրիստոնեայք եմք, և զկուռս համերս և անշունչս ոչ պաշտեմք: Զորս հրամայեր եպարքոսն 'ի մի վայր ժողովել, և սուր 'ի վերայ եդեալ կոտորեցին, և ոչ մնաց 'ի նոցանէ և ոչ մի. որոց ասացեալ միաբան. Տէր ընկալ զհոգիս մեր ընդ կատարեալ վկայիցն: Եւ այսպէս սպառազինեալ առին զերաբինն յուսոյ կենացն յաւիտենից, 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր. յորում տեղւոջ նշանք ահեղք և բժշկութիւնք անբաւք լինին մինչև ցայսօր:

Յայնժամ յարեան 'ի հանդիսէն կանայք թուով իբրև հարիւր և երեսուն, և ոչ նուազ քան զարսն երևեցան 'ի նահատակութիւնսն, այլ ասէին միաբան. Հաւատամք յԱստուածն Յուլիանեայ[1], և երկիր պագանեմք խաչելոյն Քրիստոսի, և անմեկնելի լինիմք 'ի սիրոյն նորա: Զոր և կամեցաւ եպարքոսն ցածուցանել զնոսա 'ի խորհրդոյն յայն. և սպառնալիս զանազան տանջանաց եդեալ առաջի նոցա, զոր և ոչ միոյ ուրուք եղև հնար փոխել զբարբառ իւր, այլ առաւել յորդորէին 'ի հաւատսն, և թշնամանէին զդիսն և զթագաւորն. զոր ոչ հանդուրժեալ արիւնառուշտ գազանն այն, հատանէր վճիռ մահու 'ի վերայ նոցա. և զանազան տանջանօք առին զկատարումն սուրբ կանայքն 'ի ձեռաց դահճացն անօրինաց. ողջագուրեալ 'ի հրեշտակաց՝ աւանդեցին զհոգիս իւրեանց. և ենթադրեալք եղեն 'ի բանակս անմահիցն:

Արդ յայսմ աւուր կատարեցան 'ի Նիկոմիդացւոց քաղաքին Բիւթանացւոց վեց հարիւր և երեսուն բարեյաղթ նահատակք, 'ի ձեռաց Եղեսիոսի եպարքոսի. առեալ զյաղթանակն 'ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. որում փառք յաւիտեանս. ամէն:

Յետ այսր ամենայնի մինչդեռ եռայր սրտմտութիւն բարկութեան անօրինին յաղագս սրբուհւոյն Յուլիանեայ, և հնարէր ընդ անհնարին տանջանօք արկանել զնա, և ցանկայր զհուր բորբոքեալ սրտին շիջուցանել արեամբ նորա. յայնժամ հրամայեաց բերել սան մեծ պղնձի, և արկանել 'ի նա ձիւթ և ձէթ, և զճարպ զոհիցն հեղուլ 'ի ներքս, և կապար և հրատ սաստիկ արկանել 'ի ներքոյ և եռացուցանել զնա ուժգնակի։ Եւ մինչդեռ կուտակք եռանդանն մի զմիով դիզանէր, յոր և սպասաւորքն ոչ կարէին մերձենալ, ետ բերել զամենազօր վկայուհին, և հրամայեաց կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք ընկենուլ 'ի սանն, մինչև ձենձերեսցի առաջի իմ, զի մթութիւն սրտիս և ցնդումն գլխոյս 'ի բաց փարատեսցի։

---

[1] Յոյ. Յուլիանէ:

Արդ մինչդեռ կայր որոջն Քրիստոսի առիգածեալ առաջի դատաւորին և բազմաժողով ռամկին, հայցէր յիշխանէն զի արձակ ոտիւք և ձեռօք ելցէ 'ի տապակն. և դնեալ ներումն թողութեան, և կնքեալ զինքն նշանաւ սուրբ խաչին, արտասուալից աչօք հայեցեալ յերկինս՝ յոգւոց եհան և ասէ. Ով հայրդ ես որբոց և դատաւոր այրեաց, յոյս անյուսից և պատսպարան սարտուցելոց. որովհետև անսահման ողորմութիւն քո գթացաւ յիս և զերծուցեր զիս 'ի կապանաց բանսարկուին, և յամենայն կենցաղական պատրանաց ազատս պահեցեր զիս, և ածեր անարատութեամբ յօրս յայս՝ որ մեծ է քան զամենայն ժամանակս կենաց իմոց. արդ ընկալ, բարերար Տէր, և արա զսա ինձ աւազան մկրտութեան լինել. և դու ինքնին լեր քահանայապետ խոստովանութեան իմոյ, և կնքեա ամենազօր աջովդ զզգայարանս մարմնոյս և զխորհուրդս մտացս, և պարփակեա զիս անպարագրելի աստուածութեամբդ 'ի բանակս երկնաւորաց ընդ ամենայն սուրբս քո։ Փառք պատիւ և երկրպագութիւն յերկնաւորաց և յերկրաւորաց, յերևելեաց և յաներևութից, և յիմմէ նուաստութենէս, Տէր իմ Աստուած Յիսուս Քրիստոս։

Եւ ասացեալ զայս՝ դարձեալ կնքեալ զինքն նշանաւ սուրբ խաչին և ասէ. Աստուած իմ, Աստուած իմ և Տէր բոլորից, 'ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ։ Եւ ել 'ի տապակն, տարածեաց զձեռս իւր ընդ երկինս. և սպասաւորք սնդարամետականին այնորիկ սաստկացուցանէին զտոչորումն հրոյն. և սուրբ վկկայուհին կայր 'ի վերայ եռանդան տապակին իբրև 'ի գահոյս ինչ փափկութեան, կամ առ ծաղկաւէտ վայրս բուրաստանաց հրճուելոյ. զի ոչ հպէր 'ի մարմին նորա կայլակք եռանդան տապակին, զի աստուածային շնորհօքն իբրև 'ի լուացումն աւազանի շրջէր 'ի վերայ նորա ժամս բազումս անվթար տեսլեամբ, վասն զի նմա հովանի էր բազուկն որ պարզեցաւ 'ի վերայ խաչին: Եւ յանկարծակի պատառեցաւ կաթսայն, և շուրջանակի հեղեալ իբրև հրատք 'ի շանթից թափեալ ճարակէր զամենեսեան որ շուրջ կային հրաշափառապէս, և կորոյս զբազումս յանզգամացն. և այնպէս դահճացն սատակեալ դասք, և անկէզ մնայր սուրբ կոյսն յանտանելի տանջանացն:

Իսկ եպարքոսն ոչ տեւէր պատահմանն, ոչ ներէր բնաւ ինչ արեանցն եկելոցն 'ի վերայ, այլ յոյժ տրտմէր, տառապէր, թախծէր յոգի իւր, զի միոյ աղջկան ոչ հնարաւորէր յաղթել. և յանչափ տագնապէ սրտին պայթման խելագարեալ, մինչև պատառէր զհանդերձս իւր և հարկանէր զերեսն, և բազում բանս հայհոյութեան ասացեալ ընդդէմ աստուածոց իւրոց տրտմութեամբ մեծաւ: Արդ իբրև ետես թէ պատուհասն ոչինչ վճարէ սուրբ կուսին, այլ մանաւանդ յոլովագոյն զչարն 'ի վերայ իւր տեսանէր դիզեալ, յայնժամ հատանէր 'ի վերայ նորա վճիռ մահու այսպէս.

ԶՅուլիանէ կոյս՝ Հելլենացի գոլով ազգաւ և տոհմիւ և գեղեցկութեամբ մարմնոյ, և զկերպարանս հրաշատեսիլս զգեցեալս յամենազօր աստուածոցն և ստամբակեալ նոցին, և արտաքոյ օրինաց հռովմայեցւոց եղեալ՝ պաշտէ զխաչեալ ոմն զոր Յիսուս անուանեն. զոր և ոչ միոյ իրիք հնարիւք կարացի զմիտս նորա խախտել և շրջել յաստուածոցն բարերարութիւն. ոչ ամենայն մեծութեամբ աշխարհիս, և ոչ բնաւ համօրէն ամենայն տանջանօք զոր ածի 'ի վերայ նորա. քանզի կախարդութեամբ իմն լուծանէր զամենայն, և պատճառ կորստեան բազմաց եղև. վասն որոյ սրով հրամայեմ բառնալ զգլուխ նորա:

Իսկ բանսարկուն սատանայ կացեալ 'ի հեռաստանէ ուրախանայր ընդ մահ նորա, և զդահիճսն գրգռեալ

Ջանայր 'ի սպանումն։ Իսկ բարեյաղթ վկայուհին Յուլիանէ՝ երթայր ոչ իբրև 'ի մահ, այլ իբրև 'ի քաւումն մահու և յազատութիւն աշխատութեանց։ Խնդալից դիմօք և պայծառացեալ աչօք, 'ի դահճացն ածեալ լինէր 'ի տեղի կատարմանն. գնալով ընդ նմա բազմութիւն ժողովրդեանն զրուցատրութեամբ ընդ նմա, և հաւանեցուցանէր զնոսա. Ոչ գոյ մի ինչ յերկնայինսն կամ յերկրայինս՝ քան զզօրականսն որ առ Քրիստոս իցեն։ Եւ զայս ասացեալ կնքեաց զբանն. քանզի հասին 'ի տեղին յորում պարտ էր ընդունել զվախճանն։ Եւ նա լի Հոգւով սրբով հայեցաւ յերկինս, եկաց յաղօթս և ասէ. Գոհանամ զքէն, Տէր Յիսուս, ստեղծիչ և փրկիչ աշխարհի, որ վասն յանցանաց բանական բնութեանս առաքեցար 'ի հայրական ծոցոյ՝ մեզ մոլորելոցս 'ի խնդիր, և զամենազօր աստուածութիւնդ խոնարհեցուցեր ընդ լծով մահու և զաշխարհակեցոյց բազուկս տարածեցեր 'ի վերայ խաչին. և ոչ դարձուցեր զթիկունս քո 'ի հարուածոց եղեգանն. և ոչ զկերպարանդ Հօր 'ի թքոյն և յապտակէն. արբեր զքացախ խառնեալ ընդ լեղի. և բացեր զկողահոս աղբիւր աստուածային արեանդ. լուացեր զվէրս Ադամայ և զմուրհակս ամենայն պարտեաց մարդկան պատառեցեր 'ի վերայ խաչին, և մահուամբդ քո փրկեցեր զմեզ 'ի մեռելութենէ մեղաց։ Եւ եթէ անքան և անսահման աստուածութիւնդ կրեաց վասն մեր զայս ամենայն, ապա ո՞րչափ ես առաւել հողեղինի և ընդ մեղօք անկեալ բնութեանս հեղուլ զարիւն վասն աստուածային արեանդ, և պատարագիլ առ 'ի պատարագելոյդ Հօր, ես առաւել իմոյ նուաստութեանս։ Որ թէ և ամենայն բոլոր արարածոց վիշտք և չարչարանք կրէր 'ի մարմնի իմում, առաւել ես պիտոյ է յաղագս անբաւ բարերարութեան քո առ իս եղելոյ. և թէ բարբառ երկնայնոցն զօրութեանց 'ի բերան իմում կայր, ե՞րբ կարէի այնու ամենայնիւ պատմել զանճառ ողորմութիւն քո, կամ գոհութիւն և օրհնութիւն ամենօրհնեալ աստուածութեանդ քո հատուցանել. զի յո՛րքան խորութենէ հաներ զիս և յանբաւ բարձրութիւն ածեր, և յո՛րպիսի մեղաց ձգեցեր զիս յանստուեր և ծայրագոյն լոյս քո. և ոչ ինչ է ստացուած երեւելի կամ աներեւոյթ մեծութիւն 'ի վերայ երկրի լաւ համարել քան զանձկալի սէր քո. զի քաղցրանայ 'ի մարմնի իմում վիշտք և նեղութիւնք եկեալ 'ի վերայ իմ վասն տեսլեան տենչմանդ աստուածային՝ առաւել քան զտէրութիւն ծովու և ցամաքի: Արդ օրհնեսցեն փոխանակ բերանոյ իմոյ անիմանալի զօրութիւնքն. և բարեբանեսցեն երեւելի և աներեւոյթ արարածք անեղ բնութեանդ՝ զանիմանալի բնութիւնդ Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ: Եւ այժմ, Տէր Աստուած անբաւելի, անձառելի, անպատմելի, անիմանալի, որ 'ի վերդ ես քան զամենայն ըզգայութիւն երկնաւորաց և երկրաւորաց, բա՛ց զառագաստ մեծի հարսնարանիդ, և ընկալ զիս 'ի բանակս անմահիցդ, որպէս խոստացար իսկ, և անցո խաղաղութեամբ ընդ խաւարային իշխանութիւնսն, առաջնորդութեամբ Հոգւոյդ սրբոյ. և որք յիշեն զանուն իմ 'ի վշտի նեղութեանց՝ այցելու լեր խնդրուածոցն նոցա, փրկելով 'ի վտանգէ հոգւոյ և մարմնոյ: Եւ քեզ փառք յաւիտեանս :

Եւ ասացեալ զամէնն՝ կնքեաց զինքն նշանաւ խաչիւն. հայեցաւ յերկինս մեծահառաչ ձայնիւ ասելով. Տէ՛ր, Տէ՛ր, 'ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ: Եւ խոնարհեցուցեալ զպարանոցն առաջի դահճին. և այնպէս հատաւ ամենամաքուր գլուխն յաղթազգեաց և գերապայծառ վկայուհւոյն Յուլիանեայ, և շարամերձեալ առ գլուխն Քրիստոս: Այլ կին ոմն անուն Սոփիա անցանելով ընդ Նիկոմիդիա՝ երթայր 'ի մեծն Հռովմ. և տեսեալ զորբազանն զայն՝ առնոյր զնշխարսըն, և տարեալ շինէր տաճար մեծահռչակ հանդիսաւոր նահատակուհւոյն Յուլիանեայ. և եդեալ զպատուական մարմինն 'ի նմա, զարդարէր պայծառ և երեւելի սպասուք, յորում բժշկութիւնք անբաւք և նշանք և սքանչելիք լինէին մինչև ցայսօր:

Յետ այսր ամենայնի ոչ յոլով ինչ ժամանակի անցանելոյ, պիղծն Եղեսիոս ըստ արժանի չարեացն զոր գործեաց՝ առնու զվրէժ հատուցման յարդար դատաւորէն: Քանզի նաւելով նորա 'ի վերայ համատարած ծովուն, հողմք չարաչար անդնդային յարուցեալ վարէին զնաւն յաշխարհ անծանօթ. և մերձ առ կղզի մի անբնակ 'ի մարդկանէ խորասոյզ լինէին ամենեքին որք էին ընդ նմա 'ի նաւ անդր։ Իսկ նորա բուռն հարեալ զտախտակէ միոյ՝ փրծանէր 'ի գազանաբնակ տեղլին, և անդ եղկելին ճարակ լինէր վայրենի գազանաց. և դառնութեամբ դառնացեալ ոգի անօրինին էջ 'ի դժոխս։

Այսպէս ուրեմն սուրբ կոյսն Յուլիանէ զվկայութեանն ստադիոնն ստացաւ, և յայսպիսի կատարումն վախճանի վասն Քրիստոսի հետևեալ եղև. ընդ որում ամենայն երկնային զօրութիւնքն սոսկացան։ Որ Եղևսիոսի իսկ խօսեալ լինէր, 'ի յերկրորդում ամին և Քրիստոսի հարսնացեալ գտաւ 'ի ձեռն վկայութեանն իւրոյ, յորժամ հասեալ էր նորա յարբունս հասակի ամաց ութևտասանց. 'ի թագաւորութեանն Մաքսիմիանոսի, և յանթիպատութեանն Փիլիկիանոսի. և առ մեզ թագաւորելոյ յանձառ ծագման էութեան Հօր Աստուածն Բանի Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ. որում փառք պատիւ և զօրութիւն, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

Պատմութիւն վարուց Սրբոյն Նիկողայոսի։

Զամենայն սուրբս և զերջանիկ ընտրեալս Աստուծոյ՝ գովել և պատուել ամենեցուն արժան է, և զյիշատակս նոցա գովասանութեամբ կատարել ըստ ասացելոյ աստուածահօրն Դաւթի մարգարէին, թէ՝ Յիշատակ յաւիտենից եղիցի արդարն. առաւել զայնոսիկ որք քան զայլսն բանիւ և գործովք վայելչացեալ են, և մեծամեծ նշանօք և արուեստիւք տակաւին եւս այժմ պայծառանան. և 'ի նոցանէ դարձեալ զայնոսիկ որք նշանօք եւս պայծառագոյնք, և զմարդկային օգնականութիւն և զառողջութիւն յԱստուծոյ առեալ ընկալան, խնամակալք և ապաստանք կենաց մարդկան։ Յորոց մի է գլուխ և առաջին քան զայլսն՝ մեծս այս և լուսաւորիչ քահանայապետս, զքանչելագործ հռչակաւոր և առաջնորդութեամբ համբաւեալ, մեծ և բազմաքանչ անուն, արագահաս օգնական. որ 'ի ծագաց մինչև 'ի ծագս աշխարհի քարոզելով մեծաձայն և փառաւորի։ Նա և ամենայն աշխարհ զկնի նորա մեծի առաջնորդութեանն երթիցեն, առատապէս 'ի խնամս նորա վայելեն ամենայն ազգք և լեզուք, ամենայն հասակ և ամենայն որդիք մարդկան օգնական զնա 'ի վիշտս և 'ի փորձութիւնս կոչեն։ Քանզի ո՛վ ոք 'ի հողեղինաց 'ի նեղութիւնս անկեալ, կամ 'ի վտանգի ծովու ըմբռնեալ, և ապաւինեալ 'ի մեծն Նիկողայոս և զնա միջնորդ առ Աստուած կալեալ, ոչ վաղվաղակի խնդրուածոցն ամենային կատարումն ընկալաւ։ Եւ կամ ո՞վ ոք 'ի բանտի կապեալ և 'ի զրպարտութեան չարչարանաց ըմբռնեալ և զՆիկողայոսի կարդացեալ զանուն, ոչ արագապէս տրտմութեան լուծումն ընկալաւ։ Հանապազօր հանդիպի Աստուծոյ վասն այնոցիկ որք աղաղակեն առ նա 'ի նեղութիւնս, յամենայն մասունս բարեգործէ, և զնոյն միշտ առնել ոչ դադարէ։ Քանզի թէ 'ի պատկեր նշանագրի, կամ աղօթիւք յիշեալ լինի, և եթէ միայն անուամբ կոչեսցի, ժամանէ ամենայն ուրեք. սքանչելագործէ, հանապազ օգնէ իւրաքանչիւր ումեք անպակաս. որք 'ի հիւանդութեան են՝ բժշկէ, որք 'ի տրտմութեան՝ ազատիչ ամենեցուն հանապազ, և զամենեսեան կեցուցանէ։ Եւ ոչ ոք 'ի նմանէ երթայ տրտմեալ՝ զարագահաս նորա կարդալով զանուն։ Այս ամենայն այսպէս լինի և յամենայն աշխարհէ աներկբայ առնուլ վկայութիւն յարաժամ առ ամենեսեան բարեգործելով։

Արդ պարտ և արժան է ամենեցուն որք բանիւ և գործով և ճշմարիտ իմաստութեամբ հանճարեղք՝ հասարակաց այս առաջնորդի 'ի գովասանութիւն յառնել, զլեզուս շարժել առ 'ի պէտս, և որպէս հնար է իւրաքանչիւր ումեք գովել զայրս զայս. ընդ ամենայն տիեզերս հնչեցուցանելով զգեղազարդութիւնս նորա։ Պատմեսցուք զաւետեօք զյղութիւն նորա և զծնունդն, նա և զսնունդն իսկ, և զպայծառ հասակին աճումն և զկենցաղավարութիւնն, տակաւին ևս և զմեծամեծ նորա զսքանչելիսն և զարուեստս. քանզի մինչ 'ի մարմնի էր՝ ընդ անմարմինսն մարմնով նախանձէր, քաղաքավարելով զբարուօք կենցաղավարութիւնն։ Իսկ զկնի փոխադրութեանն յաստեացս և առ Աստուած դառնալոյն, մանաւանդ թէ զգնալն 'ի մէնջ գործովք, այն որ մինչև ցայսօր միշտ լինին և ոչ երբէք խափանեալք տեղի տան. քանզի որ 'ի նմանէ ցոյցք նշանաց գործեցեալ՝ հիացուցանէ զամենեցուն լսելիս։ Վասն որոյ և 'ի միաձայնութեան և 'ի կարգս հետևողութեան յարմարեալ բանիւ զերկայնագոյն ժամանակաւ անջատեալս 'ի միմեանց, և զմեծամեծ նորա սքանչելիս՝ սկսայց պատմել 'ի փառս Աստուծոյ, որ փառաւորէ զփառաւորիչս իւր. և 'ի պատիւ մեծ և աստուածազգեաց քահանայապետին, և յօգուտ այնոցիկ որ 'ի նախանձ բարեպաշտութեան աստուածեղէն վարուց նուաճին: Եւ է ճշմարիտ անմահութեան անուանակից մեծ հօտապետն մեր Աթանասիոս՝ գրեալ զվարս սուրբ հօրն մերոյ Անտոնի զմեծ և զառաջին ճգնաւորին. այնպէս և Գրիգորիոս ճշմարիտ հսկողն մտօք՝ Նիւսայ եկեղեցւոյն նախագահ, զանուանակցի իւրոյ զնախաթոռի Գրիգորի Սքանչելագործի գրեալ զվարս, և զնորա հաւասար Մովսէսի օտար և զարմանալի նշանաց ցոյցս: Նա և այլ ևս դպիրք բազումք և շարագրող պատմութեան՝ զսրբոց արանց Աստուծոյ զկենցաղավարութիւն և զսքանչելիս դրոշմեալ պատմեցին. իբրև պատկեր շնչաւոր 'ի յօգ հոգւոյն հանդիպողաց, և 'ի պատիւ այնոցիկ որ գովին, առաջի եդին զսրբոյս այսորիկ զվարս. և զաւ 'ի սմանէ գործեցեալս չև ևս յումեքէ մինչև ցայժմ շարագրեալ ըստ կարգի տեսի, ոչ յառաջինսն և ոչ զկնի առաջնոցն յիմաստուն և 'ի խոհեմազարդ արանց, յաղագս համահրեշտակ և գերասքանչելի քաղաքավարութեան սրբոյն ասացեալս:

Վասն որոյ բազում տխրութիւն և տրտմութիւն ըմբռնէ զիս. զի՞րդ այնքան և այնպիսւոյ առն քաղաքավարութիւն՝ որ բանիւ և գործով գեր 'ի վերոյ է քան զամենայն սուրբս, այնչափ ժամանակ անտես եղեալ, ոչ յումեքէ որպէս պատշաճ էր ըստ կարգի վայելչապէս պատմեցաւ: Քանզի բազումք յառաջնոցն և յայժմու արանց, ոմանք բանիւք գովասանութեան զհռչակաւոր զայրս զայս զմեծս Նիկողայոս գովեցին, և այլք փոքր 'ի շատէ մասնաւոր զարմանազան սքանչելեաց նորա պատմութիւն արարին. և կէսք դարձեալ զսքանչելի գործս նորա որ յաճախապէս յիշեալ լինի ամենայն ուրեք, զոր յաղագս երից արանց 'ի Լիկիացւոց իշխանութենէ ցուցեալ. նա և զորս 'ի Բիւզանդիա 'ի մեծի քաղաքին յաղագս Նէապօլսացւոցն անպարտելի զօրավարացն՝ հրեշտակապէս արագահասութեամբ աստուածաբար երևելովն հասեալ յօգնականութիւն: Ոչ ոք 'ի սոցանէ, որպէս կանխաւ ասացի, գտեալ եղև՝ որ 'ի սկզբանէ վարուց նորա մինչև 'ի վախճան և զկնի կատարման նորա զհիացուցանող սքանչելիս նորա ըստ կարգի պատմեաց. վասն որոյ և ես իսկ 'ի փորձանս և 'ի նեղութիւնս մտեալ յոլովակի՝ վայելեցի յարագահաս նորա օգնականութիւնն և պարտական նորա մեծութեանն կացի: Թէպէտ և յոյժ աղքատ եմ բանիւ և գիտութեամբ և թերի յամենայն ճշմարտութենէ, նա և զանազան չարեաց գտեալ շտեմարան, ուստի անմարթ էր ինձ այսպիսի ինչ իրի ձեռն արկանել. սակայն 'ի քրիստոսասէր արանց հրաման ընկալեալ՝ յորդորեցայ ընդհանուր մտօք յօժարել. զամենայն զօրութիւնս իմ ետու այսմ ձեռնարկութեան, և զփափագ իմ զօրս կանխաւ ունէի՝ իբրև զօրաւոր համարեցայ, և յոյժ ամաչելով 'ի հրամայողացն հարկեցայ գրել: Եւ սկիզբըն արարից աստ, և ոչ ևս դարձեալ ներեցից յապաղել յօժարութեանս: Արդ զարթուցէք ինձ զմիտս ձեր հանդերձ ականջօք, աղաչեմ, որք վայելել ախորժէք յայսքան սքանչելւոյ առնս պատմութեան. քանզի արդէն իսկ վասն մեծի և աստուածային առնս՝ մեծ և աստուածային է բանս. զի երթեալ ճոխացուցէք զժողովուրդն՝ զօգտակարն 'ի վեր բերելով: Ապա եթէ մեկնին բանքս զոր հանդերձեալս եմ ասել, մի՛ ոք սքանչասցի. քանզի ոչ եթէ ներբողեան հիւսիւ գեղեցկազարդ ասացուածովք, այլ շարագիր պատմութիւն պարզագոյն և անգեղազարդ բանիւք, զի դիւրաւ և հեշտաբար 'ի միտ առցեն ռամիկք և տգէտք՝ որք ունկնդիր լինին, առանց ծածկութի իմանալ զասացեալս:

Արդ հռչակաւորս այս և երջանիկ քահանայապետըս՝ յորովայնէ մօր իւրոյ ընտրեալ էր և սրբեալ, նախ քան զյղանալն ընտրեալ յԱստուծոյ. ծնաւ սա ըստ աւետեաց հրեշտակին՝ 'ի հօրէ Եպիփանու և 'ի մօրէ Նոճնէ. այսոքիկ էին անուանք երանելեացն: Եւ էին յիշխանութենէ Լիկիացւոց, 'ի քաղաքէ Միւռոյ. մեծատունք յոյժ և ազնուական տոհմիւ, և զառ 'ի Քրիստոս բարեպաշտութիւնն առաւել կալեալք բարձրագոյնք և պանծալի վարուք: Վասն որոյ և զաշխարհական մեծութիւնն և զերևելի փառս գարշելի համարեցան, և զոր յայսմ անճառակարութիւն ուսեալ՝ անշահ վարկանելով յամենայնէ հրաժարեցին ճշմարիտ հաւատովք, և բարի վարուք միայն ընթանային։ Եւ քաջ գիտէին զայնոսիկ թէ որ 'ի վերայ կայծականց շրջիցի և կամ 'ի ձիւթ ջեռեալ մերձեսցի, ոչ զոտսն անկեզ և ոչ զձեռս անշաղախ կարասցէ պահել։ Եւ այսու ամենայնիւ հաստատեալ՝ որդւոյ միայն կարօտանային, որպէս զի մի բարեպաշտութիւն նոցա անյիշատակ յաշխարհէ մնասցէ. և վասն այնորիկ տրտմեալք տարակուսանօք ողբային զամլութիւն բնութեանն. որ ըստ օրէ յուսային առնուլ յԱստուծոյ։ Իսկ իբրև յերկարեցան 'ի վերայ նոցա ժամանակքն և բնութիւնն անյարմարագոյն այնուհետև առ ծնունդն լինէր, ունայն և անշահ զհարսանիսն վարկանէին. ապա առ Աստուած ապաւինէին՝ որ կարող է զամուլն՝ ծննդական առնել, և զբազմածինն՝ յամլոց գործել. աղօթիւք և բարի գործովք և առատ ողորմութեամբ պաղատէին յաղագս անկարծելի յուսոյն. վաղվաղակի օրհնաւոր և մաքուր մերձաւորութեամբ պտուղ ընկալան զփափագողն որդութեան, զողջախոհութեան առաջնորդն, զպահողն կուսութեան, զմեծն Նիկողայոս սաղմնաւեաց երանուհի մայր նորա։

Պարտ և արժան իսկ էր՝ որպէս ինձ թուի, ծնանել նմա ոչ 'ի կամաց մարմնոյ և ոչ 'ի կամաց առն, այլ յԱստուծոյ պարգևացն։ Որպէս 'ի սկզբան հասակին առաքինութեան պարտ է լինել մանկանն, և հետևումն բարութեան 'ի խանձարրոց անտի յառաջանայ, և աստուածային յայտնութիւնքն յաղագս սրբոյս այսորիկ առ ծնօղսն նորա կատարէր։ Քանզի իբրև ծնաւ՝ մատուցեալ ոմանց առ դայեկել, տեսին զի կանգնեցաւ 'ի վերայ ոտից իւրոց 'ի քնարանի անդ, գրեթէ իբրև ժամս երկուս, և տեսանելով ամենեցուն զսքանչելիսն՝ մեծապէս զԱստուած փառաւորէին։ Իսկ մայր նորա ըստ Հոգւոյն բազմածնունդ լեալ՝ ուղղէր զինքն յամենայն առաքինութիւնս, բազմացուցանելով զհոգևոր սերմանցն զաճումն, և զորովայնէ սրբեալն նոր Սամուէլ սնուցանէր դիեցուցանելով նմա զդարմանս կաթին։ Իսկ նա յառաջանայր քան զողջական հասակին կատարումն, և երանելի կենացըն օթևան զինքն սքանչելացուցանէր, առոյգ հասակաւ և իմաստութեամբ և շնորհօք 'ի փառս Աստուծոյ։ Եւ տեսեալ ծնօղացն զյառաջադիմութիւն մանկանն, միանգամայն 'ի միտս առեալ զսքանչելիսն, 'ի հիացման մեծի եղեալ՝ տուողին Աստուծոյ գոհութիւն մատուցանէին։

Եւ երթեալք առ երանելի քեռի մանկանն որում անուն էր Նիկողայոս՝ պատմէին վասն սքանչելի ծնընդեան նորա և զարմանալի սննդեանն։ Եւ նորա լուեալ և հիացեալ ընդ իրսն, նոքօք հանդերձ գոհանայր զՏէառնէ ուրախութեամբ մեծաւ, և պատմէր ամենեցուն զոր եցոյց նմա Տէր տեսլեամբ 'ի ձեռն հրեշտակին, վասն երանելի մանկանն Նիկողայոսի 'ի Քրիստոս յառաջադիմութեանն։ Եւ օրհնեալք 'ի նմանէ դարձան ուրախութեամբ 'ի յարկս իւրեանց. և մնուցանէին պատշաճ խնամակալութեամբ զայն՝ որ յԱստուծոյ տուաւ նոցա պտուղ, պատուասիրելով, քաղցր յուսով վայելէին 'ի նորա զարմանալի տեսութիւնն, և զառաքինութիւն մանկանն անձանց իւրեանց համարէին. փափագանօք և բարեպաշտութեամբ ընդունէին. ոչ ինչ էր զոր ոչ 'ի նորա պահպանութիւն գործէին. համբուրէին զմանուկն, տարաբերէին 'ի վերայ ձեռաց իւրեանց, պարծէին նովաւ իբրև քաջափառք քան զայլ մարդիկ, սփոփէին զանձինս, զուարճանային տեսլեամբք։

Իբրև եղև նա ամաց հնգից, աճեցին և ընդ նմա առաքինութեան շնորհքն, ետուն զնա 'ի պատուական դպիր ուսուցանել նմա գիր։ Եւ եղև 'ի միում աւուր իբրև երթայր նա 'ի դպրոցն՝ պատահեաց նմա կին մի 'ի գեղջէ անտի մօտ 'ի քաղաքն, անուն նորա Նոճխիս. գօսացեալ ոտիւք և տառապեալ յոյժ, աղաչէր զմանուկն զի հանդիպեսցի բժշկութեան. և նորա աղօթս արարեալ և կնքեալ զնա նշանաւ խաչին՝ ազատեաց յախտէն, և առողջացեալ դարձաւ 'ի տուն իւր ուրախութեամբ մեծաւ և գոհանալով փառաւորէր զԱստուած։ Իսկ նա ոչ բազում ժամանակս դեգերեալ 'ի դպրոցի, իբրև տեսին զնա աստուածատուր ծնօղքն 'ի դուզնաքեայ ժամանակի բաւականապէս լցեալ իմաստութեամբ Հոգւոյն, իսկ ապա խորհուրդ 'ի մէջ առեալ հանդերձ սուրբ վարդապետաւն Նիկողայոսիւ, զտուեալն յԱստուծոյ իբրև պտուղ սուրբ ընծայել՚ի կղերիկոսութիւն եկեղեցւոյ սրբոյ. զոր և մատուցեալ առ քահանայապետս՝ վաղվաղակի ձեռնադրեցին զնա։ Եւ յայնմ հետէ էր տեսանել զսուրբն Նիկողայոս յամենեցուն սքանչելապէս սիրեցեալ և գովեալ, հաստատութեամբ և առաքինութեամբ ցուցմամբ։

Իսկ նա զմարմնական իւր փոքր՚ի շատէ հոգացեալ, բովանդակ հոգւոյն խնամարկէր գործելով զբարիս, զախտիցն շարժմունս ցամաքեցուցանէր. իսկ զհոգւոյն տեսութիւնն մաքրէր, մեռուցանելով զանդամս երկրաւորս, և յանախտութեան կարգս հաստատէր զհոգի և զմարմին և զմիտս։ Եւ երեսանակակալ եղեալ առ Աստուած զամենայն շարժմունս դարձուցանէր. զսրտմտութիւն միայն հակառակ անձին շարժէր, որով պարտեցաւ առաջին մարդն. և զցանկութիւնն բովանդակ յԱստուած ձգէր, արիաբար աստանօր և իմաստուն վերբերելով. արդարութեամբ և ողջախոհութեամբ գլխաւորէր զկեանս իւր իբրև զքաջ երեսանակակալ ՚ի վերայ առաքինութեան կառաց նըստեալ, նովաւ ՚ի բարձրութիւնս երկնից ճեպէր ելանել. և այսպէս զկեանս ուղղապէս վարելով՝ երանելի ամենեցուն լինէր, և ՚ի քահանայական ոչ մեկուսանայր գաւթէ։

Վասն սքանչելեաց
Սրբոյն Նիկողայոսի հայրապետի.

Արդ սկիզբն արարից վարուց և սքանչելեաց նորա, զոր ըստ կարի իմում կարացից պատմել։ Այր ոմն Պետրոս անուն՝ որոյ յիշատակ նորա օրհնութեամբ, խոստացաւ լինել կրօնաւոր. եղև նմա ընդ հինգ գունդս զինուորութեան սպառազինաց զկնի այլոց զօրավարաց երթալ ընդդէմ Պարսից ՚ի պատերազմ։ Եւ ըստ յոլովակի պատահմանց մարդկայնոց իրաց՝ դէպ եղև զօրանալ բարբարոսացն ՚ի վերայ Եգիպտացւոցն, ձերբակալ արարին և ՚ի գերութիւն վարեցին. ընդ որս և ասացեալն Պետրոս ըմբռնեալ եղև, ածեալ ՚ի քաղաքն Սամարաղան, 'ի քաղաքն մեծ և բազմամարդ յոյժ, որ էր աթոռ թագաւորութեան Պարսից, և ետուն զնա պարգև զօրավարին Պարսից: Իսկ իբրև մատնեցաւ այրս 'ի բանտ՝ ճշմարտապէս քննիչ եղեալ գործոց իւրոց՝ իմացաւ թէ յաղագս այնորիկ մատնեցաւ, զի խորհեցաւ լինել կրօնաւոր, հրաժարել յաշխարհական իրաց, և յապաղեաց 'ի վախճան հանել զխոստումն. ապաշաւէր, զղջայր, ողբէր յաղագս յամելոյ խոստմանն, մեղադրէր անձին իւրոյ: Եւ որպէս թէ ըստ արժանեաց ընկալեալ իցէ զպատիժն՝ գոհութեամբ համբերէր ամենայնի: Իսկ իբրև եկաց նա 'ի բանտին զամ մի՝ ոչ ուստեք յուսայր հասանել փրկութեան: Այլ քանզի տեղեակ էր սրբոյն Նիկողայոսի և սքանչելեաց նորա՝ պաղատանս առ նա մատուցանէր ասելով. Ո՛վ սուրբդ Աստուծոյ Նիկողայոս, գիտեմ զի անարժան եմ ամենայնի, քանզի բազում անգամ ուխտեցի Աստուծոյ[1] լինել կրօնաւոր և ոչ կատարեցի զդաշինսն զոր եդի Աստուծոյ իմոյ: Վասն այսորիկ ոչ ունիմ համարձակութիւն խնդրել 'ի նմանէ զփրկութիւն անձին իմոյ. այլ զքեզ, հայր սուրբ, միջնորդ և երաշխաւոր ունիմ առ արարիչն, զի եթէ աղօթիւք քո ազատեցայց 'ի բռնութենէ վտանգիցս, ոչ ևս այլ ներեցից մնալ յաշխարհական վրդովմունս, և ոչ ևս դարձեալ բնակեցայց 'ի հայրենի բնակութիւնս իմ, այլ գնացից 'ի Հռովմ 'ի տաճար սրբոյն Պետրոսի, և անդ կատարեցից զպահման կրօնաւորութեան իմոյ, ըստ չափոյ զօրութեան իմոյ. և զայս ասացեալ նորա, անսուաղ կացեալ զշաբաթն ողջոյն: Իսկ 'ի կատարել աւուր շաբաթուն, երևեցաւ նմա արագահաս օգնականն Նիկողայոս, և ասէ ցնա. Լուայ, եղբայր, պաղատանաց քոց և ծանեայ զխնդրուածս քո, այլ քանզի հեզգագոյն և դանդաղկոտ գտար 'ի պատուիրանս Աստուծոյ՝ ոչ կամէի ազատել 'ի բանտէդ: Բայց զի ուսայ 'ի Տեառնէ, թէ՝ Հայցեցէք և տացի ձեզ, բախեցէք և բացցի ձեզ, մի ձանձրասցուք աղաչել զնորա բարերարութիւնն, և նա տնօրինէ մեզ զամենայն իւրով բարերարութեամբն: Եւ զայս ասացեալ սրբբոյն՝ հրամայեաց նմա համբերութեամբ կալ ճաշակել[1] կերակուր: Իսկ նորա առեալ կերակուր՝ զօրացաւ, և ձգնէր 'ի պնդութիւն պահոց, կանխելով յաղօթս 'ի տուէ և 'ի գիշերի:

---

[1] Միւս օր. ուխտեցի Աստուածոյ:

Երևեցաւ նմա երանելւոյն կրկին անգամ խոժոռ դիմօք և տխուր ձևով, իբրև այն թէ ոչ լուաւ նմա Տէր. և ասէ ցնա հեզ և խոնարհ ձայնիւ. Տես, եղբայր, հաւատա ինձ, զի ոչ դադարեցի աղաչել զմարդասիրութիւնն Աստուծոյ վասն քո. այլ վասն զի սովոր է բազմագութն Աստուած յապաղումն առնել փրկութեանն, զի մի՛ վաղվաղակի առեալ փութապէս արհամարհիցեմք, թերևս կամ է մարդասիրութեան նորա՝ զի յայնցանէ որք հաճոյ եղեն նմա՝ բարեխօս կալցուք վասն քո: Եւ ես ցուցից քեզ զարժանապէս բարեխօսն, զի առցուք ջատագով պաղատանաց մերոց առ 'ի կատարել զփրկութեան խնդրուածս մեր: Իսկ նա ասէ ցերանելին. Եւ ո՞վ է այն սուրբն Աստուծոյ՝ որ առաւել քան զքեզ կարող է զողորմութիւնն Աստուծոյ հաճեցուցանել ընդ մարդկան. քանզի հաւատամ ես եթէ միջնորդութեամբ քո և բարեխօսութեամբ որ առ Աստուած՝ կեցցէ ամենայն աշխարհ: Եւ Նիկողայոս ասէ ցնա. Գիտե՞ս արդեօք զՍիմէոն ծերունին, զարդարն զայն, որ արժանի եղև 'ի տաճարի անդ ընդունել 'ի գիրկս իւր զՏէրն քառասնօրեայ: Եւ նա ասէ. Գիտեմ, տէր իմ, ճշմարտապէս, զի յաւետարանի անդ գրեալ է վասն նորա: Իսկ մարդասէրն Նիկողայոս ասէ. Ի միասին մատուցանեմք պաղատանս առ Աստուած, քանզի կարող է զամենայն անհնարինս հնարաւորս գործել: Եւ զայս ասացեալ սրբոյն՝ 'ի բաց եկաց 'ի նմանէ: Եւ իբրև զարթեաւ այրն 'ի քնոյ անտի՝ դարձեալ սկսաւ ճգնել աղօթիւք և պահօք, կարդալ զանուն Նիկողայոսի ոչ խափանէր:

Հայեաց դու ինձ աստ ընդ ցաւակցութիւն սրբոյն, զիա՞րդ կամելով ուրախ առնել զայրն՝ յորդորէր զնա յաւարտումն գրուածոցն անվեհեր. ընդ ինքեան աղօթակից առնելով զարդարն Սիմէոն՝ զաղատութիւն աւետարանեաց նմա. Քաջալերեա, ասէ, եղբայր, և զտրտմութիւնդ ՚ի բաց փարատեա, քանզի միջնորդութեամբ մեր և բարեխօսութեամբ Սիմէոնի՝ կատարեցան խնդրուածք քո: Եւ նորա բացեալ զաչս իւր՝ հայեցեալ ետես զՍիմէոն, զմեծ քահանայապետն, և զահի հարեալ դողայր բովանդակ մարմնովն: Իսկ արդարն Սիմէոն մերձեցաւ առ նա ունելով գաւազան ոսկի, եփուտ և կրկնոց զգեցեալ՝ ըստ սահմանի օրինացն. խօսել սկսաւ այսպիսի բանիւք. Դո՞ւ արդեօք իցես այն՝ որ զեղբայրն մեր Նիկողայոս ստիպեցեր յաճախապէս աղաչել զՏէր, զի ազատեսցիս ՚ի բանտէդ ՚ի կապանաց երկաթոցդ: Իսկ նորա հազիւ բացեալ զբերան իւր ասէ. Այո, սուրբդ Աստուծոյ, ես եմ որ երաշխաւոր ետու զնա առ Աստուած, և միջնորդ և բարեխօս սրբութեանդ քո: Ասէ ցնա սուրբն Սիմէոն. Եւ կատարե՞ս զոր դու ինքնին խոստացար այժմ՝ լինել կրօնաւոր, և առաքինութեամբ վարել զկենցաղս: Եւ նա ասէ. Այո Տէր, կատարեմ ծառայս քո զամենայն զոր խոստացայ: Եւ Սիմէոն ասէ. Բարեմիտ կամօք խոստացար, որդեակ, կատարել. արդ չիք ինչ որ խափանել կարիցէ զքեզ. ել և գնա ուր կամք քո իցեն, զի ոչ ոք այսուհետև ըմբռնել կարիցէ զքեզ: Եւ ձգեալ սրբոյն զգաւազանն զոր ունէր ՚ի ձեռին իւրում՝ մերձեցոյց ՚ի կապանս երկաթի, և որպէս հալի մոմ յերեսաց հրոյ՝ այնպէս սպառեալ հալեցաւ երկաթն: Եւ ելեալ վաղվաղակի ՚ի կապանաց անտի՝ զհետ երթայր նորա հանդերձ սրբովն Նիկողայոսիւ[1]: Եւ նա աղաչէր զնոսա զի արտաքոյ քաղաքին գտցի, քանզի յանուրջս համարէր զիրսն լինել: Եւ հանեալ զնա արտաքոյ քաղաքին՝ յանձն արարեալ զնա սրբոյն Նիկողայոսի, զի հոգ տարցի նմա, և անյայտ եղև յաչաց նորա:

---

[1] Միւս օր. կեալ և ճաշակել:

Եւ մնաց առ նա խնամողն Նիկողայոս. և հրամայեաց երանելին զի առցէ ընդ իւր զթոշակս ՚ի պէտս ճանապարհին: Եւ նա ասէ. Ոչ ինչ ունիմ ՚ի պէտս, սուրբդ Աստուծոյ: Եւ Նիկողայոս քաջալերեալ զնա, հրամայեաց մտանել ՚ի պարտիզի և առնուլ ՚ի պտղոյ անտի՝ ըստ չափոյ պիտոյից։ Եւ այնպէս ոչ դադարէր խնամ տանել նմա, մինչև հասոյց զնա առանց վնասու յաշխարհն Հռովմայեցւոց։ Եւ իբրև եմուտ յաշխարհըն Գերգացւոց[1], վաղվաղակի անյայտ եղև սուրբն, զայս միայն ասացեալ ցնա. Ժամանակ է արդ կատարել զխոստմունսն, ապա թէ ոչ՝ զՍամարաղան ճանաչես, անդ դարձեալ մատնիս։ Իսկ նա իբրև գիտէր զառաջիկայ խոստմանն զյապաղումն՝ երկեաւ յոյժ 'ի պատուհասից, և կատարեաց զոր ինչ միանգամայն խոստացաւն։ Քանզի ոչ 'ի տուն իւր գնաց, ոչ երևեցոյց զինքն իւր բարեկամացն. վաղվաղակի դիմեաց 'ի Հըռովմ, հասանել հատուցանել զխոստացեալ դաշինսն՝ զոր արձակեաց շրթունք նորա և խօսեցաւ լեզու նորա։ Եւ իմ տեսեալ՝ թուի ինձ աստ զանհամեմատութիւն խնամակալութեան սրբոյն Նիկողայոսի, քանզի իբրև զհայր գթած հանապազ զյուսացեալսն յինքն խնամակալութեամբ պահպանէր. Ճանապարհակից լինէր, առաջի նորա հարթ առնէր, և յետոյ նորա զօրացուցանէր և արիութիւն շնորհէր, ուղղէր յամենայն ընդդիմակաց պատահմանց. և ոչ մեկնեցաւ 'ի նմանէ մինչև նուիրեաց զնա Աստուծոյ։

---

[1] Միւս օր. սրբովն Սիմէոնիւ:

Իսկ իբրև եհաս այրն 'ի Հռովմ, ոչ գիտէր զբազմութեան տեղին և ոչ եթէ ով իցէ յայնժամ եկեղեցւոյն Հռովմայ նախագահ։ Երևեցաւ սուրբն Աստուծոյ՝ հայրապետին Հռովմայ, և կալեալ զձեռանէ առն ցուցանէր նմա։ Եւ պատմեաց նմա զամենայն կարգաւ՝ թէ որպէս ազատեաց զնա 'ի բանտէն, և թէ որպէս խոստացաւ փոքրել զհերս իւր 'ի տաճար առաքելոյն Պետրոսի. և ծանուցեալ նմա զանունն Պետրոս կոչեցեալ անուն նորա. և արդ մի՛ հեղգար վաղվաղակի կատարեա զխոստումն սորա։ Եւ զարթեաւ հայրապետն 'ի քնոյ անտի՝ գնաց փութապէս 'ի տաճար առաքելոյն, և էր օրն կիւրակէ։ Հայեցեալ յերեսս ամենեցուն որ մտանէին 'ի տաճարն՝ թերևս ճանաչել կարասցէ զայրն որ յանուրջս եցոյց նմա. և իբրև եկին բազմութիւն ժողովրդեանն, ետես զայրն և ծանեաւ 'ի մէջ այնքան ամբոխին. և ակնարկեալ

[1] Միւս օր. Գրէգացւոց։

կոչեաց զնա առ ինքն: Իբրև ոչ իմացաւ, ապա յանուանէ կոչեաց զայրն. Պետրոս, ասէ, որ 'ի Գերգդոյ եկեալդ ես: Եւ իբրև մերձեցաւ առ նա՝ ասէ. Ո՞չ ապաքէն դու նա ես որ մեծն Նիկողայոս 'ի բանտէ և 'ի կապանաց ազատեաց: Եւ նա ասէ. Այո տէր, նա իսկ եմ: Ասէ հայրապետն. Մի՛ սքանչանար, որդեակ, եթէ կոչեցի զքեզ զոր ոչն արդեօք տեսի. քանզի մեծն Նիկողայոս 'ի գիշերիս յայսմիկ երևեալ ինձ պատմեաց զամենայն վասն քո. և վասն զի եկեալ եմ փոքրել զգլուխ քո: Եւ զայս ասացեալ նորա փոքրեաց զգլուխ առնն, և նուիրեաց զնա Աստուծոյ:

Զայս հռչակեալն Նիկողայոս հրաշագործեաց զայսպիսի ցոյցս. և յորժամ առնէ աղաչանս, այսպիսի օգնական լինի այնոցիկ որ պաղատին առ նա՝ ըստ որում այժմ ասացի. և կամ զոր հանդերձեալ եմ ասել հանդոյն առաջնոյն սքանչելեացն. քանզի և զայս ևս հանդերձ Սիմէոնիւ գործեաց:

Այր ումն կապպադովկացի ազգաւ, ըստ իշխանութեան զօրավար, ժառանգութեամբ ունէր զհայրենի տէրութիւնն իւրոյ աշխարհին: Ունէր կին և որդիս խրատեալս ամենայն բարեպաշտութեամբ 'ի պատուիրանս Տեառն. տուեալ զնոսա 'ի պալատանն՝ կարգեաց զնոսա 'ի դասս թագաւորական սպասաւորացն: Իսկ 'ի բնակելն նոցա անդ, ժանդ ինչ ապականիչ տնկեցաւ 'ի նոսա 'ի պիղծ և յաղտեղի կրօնից մանիքեական աղանդոյն, ծածկաբար յանձինս իւրեանց բուռնեալ զթիւնս դառնութեան սատակիչ ախտին, և կեղծաւորեալք յայտնապէս զկրօնս քրիստոնէից ցուցանէին: Իսկ իբրև լուաւ զայս հայր նոցա՝ խոցեցաւ յոգի իւր, սկսաւ խրատել զորդիսն իւր, և ողոքանօք աղաչէր զնոսա 'ի բաց կալ յայնպիսի սատակիչ հերձուածոյն: Եւ այսպէս ասէ ցնոսա. Վա՜յ ինձ որդիք քաղցունք, ո՞ ապականեաց զամբիծ հաւատն ձեր. ո՞ կողոպտեաց զանկողոպտելի գանձն ձեր. ո՞ բեկեալ խորտակեաց զմեծագին մարգարիտն ձեր. ո՞ փոխանակ քաղցրութեան՝ դառնութիւն սերմանեաց յանձինս ձեր. ո՜վ, ո՞րպէս ուսուցի զձեզ լինել քրիստոնեայս, և զիա՞րդ հաւանեցայք 'ի բաց կալ 'ի լուսոյ և հասու լինել խաւարի: Եւ փոխանակ ծառայելոյ Տեառն Աստուծոյ՝ որ բնակեալն է 'ի լոյս անմատոյց և լուսաւորէ զամենայն մարդ որ գալոց է յաշխարհ, ծառայք եղայք խաւարազգեաց դիւացն կործանողաց:

Զայս ամենայն և առաւել քան զսոյն խօսեցաւ ընդ նոսա. խրատելով զնոսա ոչ երբէք դադարէր. սակայն նոքա անփոփոխելի կային մնային 'ի չարիսն, զի ախտակցեալ հոգի՝ և ոչ միոյ խորհրդակցի հնազանդի, այլ խաւարեալ սրտիւք գահավէժ լինի: Եւ իբրև լուաւ զանփոփոխելի միտս նոցա և զկամս, յայլ տեսակ փոխէր. տանջանս 'ի վերայ ածել սպառնայր և պատուհաս դժնդակ, եթէ ոչ հաւանեսցին: Ազդառնէր թագաւորին, և հաւանեցուցանէր զնա թէ որդիք նորա յայսպիսի չարիս կործանեցան: Իսկ նոքա իբրև տեսանէին զայրագին ցասմամբ զծնօղն իւրեանց՝ ոչ ներէին յանդիմանութեանն. զի ոչ կարեն հայել 'ի լոյսն՝ որ մածեալ են խաւարային ախտիւն: Եւ վատնեալ զամենայն ինչս իւրեանց, և լքեալ զամենայն ազգս և զսիրեկամս, չոգան զկնի Մանեայ բազմաշփոթ աղանդոյն, անմխիթար սուգ թողեալ հօրն իւրեանց: Քանզի ոչ վշտացաւ ընդ հեռանալ որդեկաց իւրոց՝ որպէս ընդ ուրացութիւն ուղիղ և ճշմարիտ հաւատոցն. և կատարէր զկեանս իւր հեծութեամբ. աղաչէր զԱստուած զի տացէ նոցա ապաշխարանաց ժամանակ, դառնալ և 'ի բաց կալ յայնմանէ՝ որ 'ի խաւար ձգեաց զնոսա: Շարժէր և յօգնականութիւն զերանելի և զերջանիկ քահանայապետն Նիկողայոս. քանզի սովոր էր այրս այս յիւրում տեղւոջ կատարել զյիշատակ սրբոյն, որ և տաճար կանգնեաց սրբոյն և զանազան պայծառութեամբ և վայելչութեամբ գեղեցկացուցանէր. ցուցանէր զօրութիւն հաւատացելոց իւրոց: Եւ շրջեալ նորա 'ի կողմանս Կապպադովկացւոց՝ պատերազմէր յարաժամ մարտիւ ընդ հերձուածողսն, յաղթահարէր զնոսա և ամօթալից խայտառականոք արձակէր. ուստի և ոչ փոքր ինչ կրէր 'ի նոցանէ խայտառակ դաւաճանութիւն. քանզի և որդիք նորա առաւելապէս զայրացուցանէին, յարուցանելով զնոսա առ 'ի նախանձ ընդդէմ հօրն իւրեանց: Գիտէ իսկ և անքաւ իրաւունքն Աստուծոյ 'ի բարկութիւն սրտմտութեան տեղի տալ:

Դէպ եղեւ զի ըմբռնեալ կալան զնա Մանիքեցիքն և աստուածամարտքն, և արկին զնա 'ի տղմուտ և 'ի մուրական գուբս. և անդ կապեալ կայր երկաթի կապանօք, հանդերձ այլովք ևս որ ընդ նմայն էին։ Իսկ 'ի բանտի անդ ոչ դադարէր աղաչել զՏէր, բարեխօս ունելով առ նա զմեծ քահանայապետն Նիկողայոս, ազատել զնա յայնպիսի վտանգէ վշտացն։ Իսկ իբրև կատարեաց վեց օր անսուաղութեամբ, ասէ. Ո՛վ սուրբդ Աստուծոյ, կամք միայն պիտոյ է քեզ, կարողութիւն յԱստուծոյ տուեալ է քեզ. եթէ աղաչես զմարդասէրն Աստուած՝ վաղվաղակի լսէ։ Գրեալ իսկ է, եթէ՝ Զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր, և աղօթից նոցա լսէ և կեցուցանէ զնոսա։ Ընդէ՞ր թողեր զիս 'ի բանտի աստ. հի՞մ լքեր զիս իբրև անառաջնորդ. գիտես իսկ թէ զիա՛րդ 'ի սկզբանէ մինչև ցայսօր զամենայն յոյս իմ 'ի քեզ եդի, և զտաճար քո սուրբ բազում խնամակալութեամբ յօրինեցի. և ոչ երբէք հեղգացայ յիւրաքանչիւր տարւոջ զքոյդ կատարել զյիշատակ։ Արդ ամենայն ուրեք սքանչելագործես, ընդէ՞ր թողեր զիս յայսպիսի կապանս անմխիթար. ոչ ունիմ այլ ինչ ածել զմտաւ, բայց զայս միայն՝ զի բազում յանցանք իմ փակեցին զգութ մարդասէր խնամոց քոց. և ըստ օրինակի միգախառն մառախլապատ ամպոց պարփակեալ զիս՝ ոչ տան թոյլ ձայնի պաղատանաց իմոց լսելի լինել յաստուածային քո յականջս։

Զայս և առաւել քան զայս խօսեցաւ այրն ընդ միտս իւր ընդ սրբոյն Աստուծոյ. և որպէս թէ յայտնի իսկ ընդ նա խօսէր՝ այնպէս կատարեաց զբանս պաղատանացն։ Իբրև երեկոյ եղեւ՝ լռեաց 'ի խօսելոյ և նիրհեաց սակաւիկ մի։ Եւ ահա երևեցաւ նմա սուրբն Աստուծոյ և ասէ. Այրդ Աստուծոյ, ընդէ՞ր գոչես առ իս. քանզի այր մի եմ մեղաւոր՝ պէտս ունիմ այլոց օգնականութեան. խնդրեցէք 'ի հասարակաց արարչէն, և նա բարեգթութեամբն իւրով պարգևէ առատապէս զշնորհս ողորմութեան իւրոյ յայնոսիկ որ հայցեն 'ի նմանէ։ Բազում անգամ աղաչեցի վասն քո և ոչ լուաւ ինձ, սակայն և այժմ թելադիր եղէց քեզ։ Էր այր մի արդար որում անուն Սիմէոն, որ 'ի տաճարի անդ 'ի գիրկս ընկալաւ զորդին Աստուծոյ։ Նա համարձակութիւն ունի առ Աստուած, և առնու զամենայն ինչ զոր հայցէ 'ի Նմանէ. մատո առ Նա պաղատանս և Նա փրկեսցէ զքեզ յամենայն վտանգէ։ Վաղվաղակի զարթեաւ 'ի քնոյ անտի և լի եղև խնդութեամբ, թէպէտ ոչ կատարեալ փրկութիւն խոստացաւ նմա. և առեալ սակաւ մի կերակուր, և սկսաւ աղաչել զծերունին որպէս պատուէր ընկալաւ։ Եւ իբրև նոյնչափ աւուրս անսուաղ կացեալ պաղատէր առ բարձրեալն Աստուած արտասուօք, երևեցաւ նմա արդարն յանուրջս, և ասէ. Ո՛վ այր դու, ոչ երբէք խնդրեցեր դու յինէն, և տաց քեզ մինչև ցայժմ։ Ո՞վ արդեօք զգուշացոյց քեզ 'ի բաց կալ յեղբօրէն մերմէ Նիկողայոսէ, զորոյ կատարես զտարևոր յիշատակն, և յորոյ անուն կանգնեցեր զտաճարն. գնա աղաչեա զի կատարէ զխնդրուածս քո և ազատեսցէ զքեզ 'ի նեղութենէդ յայդմանէ. քանզի արդարահաս յօգնականութիւն առաւել ընկալաւ նա զշնորհս՝ քան զամենայն սուրբս։ Եւ զայս ասացեալ անյայտ եղև։

Իսկ նորա անյագ եղեալ 'ի մաղթանս, ըստ որում ասէր Տէր յառակաւոր բանի աւետարանի անդ, վասն հայցելոյ 'ի գիշերի երիս նկանակս 'ի բարեկամէ անտի, և նորա պատճառել զդրացն փակումն, զմանկանցըն լինելն ընդ ինքեան յանկողնի. սակայն վասն ժըտութեանն յարուցեալ տացէ նմա։ Եւ կամ դարձեալ ըստ որում ասէ. Խնդրեցէք և տացի ձեզ, հայցեցէք և գտջիք, բախեցէք և բացցի ձեզ։ Զայսոսիկ խորհեալ յինքեան՝ դարձեալ զերիս աւուրս անսուաղ անցուցանէր։ Եւ 'ի կատարման երից աւուրցն՝ տեսանէ զերանելին քահանայական կերպիւ գաւազան ունելով 'ի ձեռին ըստ օրինակի ծերունւոյ, փայլեալ շուրջանակի արփիահրաշ լուսոյ ճառագայթիւք, մինչ գրեթէ լի եղև բանտն 'ի փայլատակմանց հրոյ անտի։ Եւ մերձեալ յայրն և ասէ ցնա. Արի աւանիկ, արձակեցար 'ի կապանացդ։ Եւ խթեալ նմա ոսկեձոյլ գաւազանաւն զոր ունէր 'ի ձեռին իւրում, և եղոյծ 'ի նմանէ զկապանսն երկաթի, ասէ ցնա. Ե՛կ զկնի իմ։ Եւ մերձեալ 'ի դուռն՝ եբաց նմա. և անցեալ 'ի մէջ ամենեցուն որ 'ի բանտին էին, և որք արտաքոյ դրանն պահելին զբանտն, ճանապարհ հորդեալ եհաս մինչև ՚ի դուռն քաղաքին. և մերձեցեալ ՚ի փականս դրանն՝ բացան վաղվաղակի, և հանեալ զնա արտաքոյ՝ ասէ. Երթ խաղաղութեամբ, և մի՛ երկիցես յումեքէ: Եւ իբրև գնաց սակաւ մի, դարձեալ պատահեաց նմա քահանայապետն Նիկողայոս և ասէ. Ուրախ լեր, որդեակ. և գիրկս արկեալ համբուրեաց զնա և ասէ. Եղբայր, աւասիկ կատարեաց զխնդրուածս քո Տէր, պարտ է ձեզ գոհանալ զնմանէ յարաժամ. և յորժամ հասցես յաշխարհն Յունաց՝ մի՛ երթիցես ՚ի տուն քո, այլ երթիցես ՚ի Հռովմ, և գտանիցես անդ զեղբայրն իմ Նիկողայոս՝ զվերատեսուչն աթոռոյ քահանայութեան[1], և ՚ի մէնջ ողջոյն մատո նմա. և դու զկրօնաւորականն ընկալցիս ՚ի նմանէ զձև, փոքրեալ զվարս գլխոյ քո, և առաջնորդեսցէ քեզ Աստուած յամենայն բարիս: Ետ նմա երիս նկանակս հացի, և ասէ ցնա. Ա՛ռ զհացս զայս և ճաշակեա կերակուր: Եւ նոյնժամայն անյայտ եղև:

Իսկ նորա լի եղեալ խնդութեամբ կատարէր զճանապարհն իւր առանց իրիք խափանելոյ: Եւ գտեալ դրախտ մի, ա՛ռ անտի միրգ ըստ չափոյ պիտոյից իւրոց. և ոչ ոք ՚ի պահապանացն խօսեցաւ ընդ նմա թէ զինչ գործես. և նորա առեալ զպտուղն գնաց եհաս յերկիրն Յունաց: Եւ ոչ ստեաց ուխտին, այլ իբրև օտար ինչ յարկ՝ համարեցաւ զբնակութիւնն իւր. և յանծանօթս եղեալ գնաց զճանապարհն ուր հրամայեցաւ: Եւ որ յառաջ քան զայս պայծառ զգեստիւք և ոսկեհուռ[2] երիվարօք շրջէր, այժմ աշխատասէր շրջելով հետիոտս: Եւ իբրև եհաս յՈվկիանոս՝ եգիտ նաւ մի որ երթայր ՚ի Հռովմ. մտեալ ՚ի նա նաւեաց և եհաս ՚ի քաղաքն հռչակաւոր: Եւ էր օրն այն տօն մեծ, յորում ամենայն ժողովուրդն դիմեալ գայր ՚ի տաճար առաքելոցն: Եւ նորա հարցեալ թէ ուր արդեօք երթիցեն. պատասխանի ետուն նմա եթէ ՚ի տաճար առաքելոցն: Իսկ նորա խառնեալ ընդ նոսա՝ եմուտ յեկեղեցին ՚ի ժամ խորհրդածութեան պատարագլին, և աղաչեաց զայնոսիկ որ մերձ էին՝ ցուցանել զքահանայապետն։ Եւ իբրև ցուցին նմա՝ մատուցեալ անկաւ յոտս նորա։ Եւ հայրապետն ասէ. Եղբայր, եկ, զի ողջունեսցուք զմիմեանս. զի վասն քո պատմեաց եղբայրն իմ Նիկողայոս։ Եւ նորա հիացեալ ընդ բանս հայրապետին՝ ոչ ինչ կարէր տալ պատասխանի։ Իսկ հայրապետն կալեալ զնա փոքրեաց զհերս նորա և արձակեաց զնա խաղաղութեամբ։ Եւ նորա գնացեալ անտի եկն բնակեցաւ 'ի սահմանս Գալլիոյ[1], յանապատ տեղիս, և անդ կատարեաց զկեանս իւր պայծառացեալ առաքինական ճգնութեամբ։ Եւ զամենայն անցս չարչարանաց իւրոց, եթէ որպէս ազատեցաւ 'ի վշտաց իւրոց անտի՝ բարեխօսութեամբ սրբոյն Նիկողայոսի և արդարոյն Սիմէոնի, գրեաց և ետ հաւատացելոց։

---

[1] Միւս օր. քահանայապետութեան:

[2] Միւս օր. ոսկէհուռ:

Ուստի և ես տկար լեզուաւ և փոքրագոյն իմաստիւք, ըստ կարի զօրութեան իմոյ՝ որքան հասու եղէ սքանչելեաց սրբոյն Նիկողայոսի, պատմեցի առանց դանդաղելոյ։ Իսկ արդ յայլ սքանչելիս նորա դարձուցից զյարմարումն բանիս. զի թէպէտ և անբաւ է նորա սքանչելիքն և ոչ ոք կարէ ընդ թուով արկանել, սակայն որչափ հասու եղեաք՝ առանց յապաղելոյ զայնոսիկ պատմեսցուք. քանզի ոչ բարւոք է զանց առնել ծարաւելոյ՝ պատահեալ աղբեր. և դարձեալ որ պատահէ աղբեր և ոչ ըմպէ 'ի նմանէ, ոչ է անվտանգ պատճառել անգիտանալ զպէտս ծարաւոյն, վասն որոյ և յոլովագոյն կրէ այնպիսին պարսաւանս։ Ցաղագս այսր պատճառի փոքր 'ի շատէ զոր ինչ 'ի բարեպաշտ արանց եհաս 'ի լսելիս մեր՝ հայեցուցեալ միաւորեցուսցուք յառաջի կարգ բանին։

Եւ եղև երբեմն ելանել առն միում 'ի հոյակապ քաղաքէն Կոստանդնուպօլսէ, և նաւել 'ի կողմանս Թրակիսու. և իբրև նաւեցին՝ 'ի մէջ գիշերին եհաս 'ի վերայ նոցա մրրիկ ալեայն, և էր նաւն 'ի մէջ ծովուն ծփեալ, ուժգնակի հողմով պատառեաց զնաւն։ Իսկ այրն այն կալեալ զմի 'ի փայտից անտի՝ պինդ ունէր զփինս առագաստին, և 'ի բռնութենէ հնչման հողմոյն ոչ կարացեալ ժուժել՝ թուացեալ ընկէց զնա 'ի ծովն։ Եւ նորա ոչ ինչ ժամանեալ պաղատել՝ բայց միայն զայս. Սուրբ Նիկողայոս, օգնեա ինձ. և ընկղմէր 'ի խորս ծովուն։ Եւ յաճախապէս զայս ձայն աղաղակէր յիշելով զանուն սրբոյն. Ո՛վ զարմանալի սքանչելեացս. հիացուցանէ զմիտս իմ առաջիկայ յարմարումն բանիս. քանզի աներևոյթ զօրութիւն համբարձեալ զնա՝ դրօք փակելովք 'ի բնակութիւնս իւր եմոյծ։ Երիս զայս կատարեաց սքանչելիս. նախ զի 'ի ծովէն կորզեաց զնա կենդանի. երկրորդ՝ զի իբրև միոք մարդոյ արագագոյն ընդ փակեալ դուռն եմոյծ զնա. երրորդ՝ զի ոչ միայն 'ի յարկս իւր այլ և ընդ դրունս սենեկին մուծանէր։ Իսկ որ 'ի տանն էին՝ իբրև լուան զձայնն՝ ասեն. Ո՞վ արդեօք իցէ սա. նման արդեօք իցէ ձայնս այս տեառն մերում, որ յառաջ այս աւուրբս չոգաւ 'ի ճանապարհ հեռի, արդ զիա՞րդ այնպէս փութանակի եկն դրօք փակելովք։ Զահի հարեալ մերձեցան առ դուրս սենեկին, և գտին փակեալ ամենայն զգուշութեամբ հանդերձ ամրագոյն նգօք. և լուան զի զարհուրելի բարբառովն կարդայր զանուն սրբոյն։ Եւ նոցա վառեալ ջահս՝ բացին զդրունս տանն, և գտին զնա թմբրեալ որպէս կիսամահ, մինչև զի ոչ գիտէր թէ ո՛ր իցէ, և կարծեցին թէ այր աւազակ դնի անդ։ Եւ իբրև ծանեան զայրն, հարցանէին թէ զի՞նչ արդեօք պատահեաց քեզ, և զիա՞րդ մտեր այսր փակեալ դրամբք։ Իսկ նորա սուղ ինչ 'ի միտս եկեալ՝ հարցանէր. Ո՞ր արդեօք իցեմ ես, և կամ ո՞վ ոք դուք որ խօսիք ընդ իս։ Եւ նոքա ասեն. Ահաւասիկ 'ի տան քում բնակեալ ես, և ո՞չ գիտես արդեօք թէ ո՛ր իցես։ Եւ նորա բացեալ զաչս իւր՝ ասէ ցնոսա. Զայն գիտեմ զի 'ի նաւն էի և անկայ 'ի խորս ծովուն. այլ թէ զիարդ եկի այսր՝ ոչ գիտեմ։ Եւ նոքա շօշափէին զնա զի իմասցին զճշմարիտն. և տեսին զի ամենայն զգեստ նորա լի էր ջրով, մինչ զի վտակք հոսէին 'ի նմանէ։ Եւ յայսմիկ ծանեան թէ 'ի ծովէ անտի յափշտակեալ էր զնա, և վասն զի աղի էր ջուրն որ իջանէր 'ի նմանէ։ Եւ 'ի հիացման եղեալ ամենեքեան ոչ կարէին խօսել. և ժողովեցան ամենայն բնակիչք քաղաքին 'ի տեսիլ զարմանալի սքանչելեացն։ Եւ ամնեքեան ետուն փառս Աստուծոյ, որ 'ի ձեռն սրբոց իւրոց հրաշագործէ սքանչելիս։

---

[1] Միւս օր. Գաւլիոյ։

Արդ զարթուցէք զմիտս ձեր առ միւս սքանչելիս սրբոյն, և մի՛ ձանձրանայք ընդ յերկարութիւնս. զի ոչ վայրապար լինիցի մեզ ունկնդրութիւն պատմութեանս, այլ բազմապատիկ աւանդէ մեզ զվարձս։ Այր ոմն Սիմէոն անուն երկիւղածութեամբ և ճգնութեամբ վարէր զկեանս իւր, մինչ զի շնորհք կատարման ընկալաւ յԱստուծոյ, ուստի և դեկապօլեցի յամենեցունց կոչեցաւ. ունէր և հաղորդ ինքեան զայր մի՝ որում անուն էր Նիկողայոս։ Առաքեաց զնա վասն պիտոյից իրիք 'ի կողմանս արևմտից. և էր խաղաղութիւն և հանդարտութիւն 'ի ծովուն. և նաւեալք արագընթաց քաղցր օդով փութացեալք՝[1] ախորժելի բարբառով երգէին որպէս օրէն է նաւելոց խնդութեամբ երթալ։ Յանկարծակի եհաս 'ի վերայ նոցա մրրիկ սաստիկ, 'ի ծուփ ալէկոծութեան բարձրակուտակ յորձանաձայն խառնախուժ գոռալով, անառակ և անկարգ բերմամբ սաստկանայր բռնութեամբ հողմոյն՝ կոհակացն 'ի վերայ յարուցմունք, մինչև 'ի բաց առին զառագաստն և լքին զղեակն և զվարձս նաւին։ Նաև հոսանք անձրևաց յոյժ սաստկութեամբ իջանէր 'ի վերայ նոցա, մինչև անյոյս լինել 'ի կենաց աստի։ Եւ ոչ այլ ինչ հնարս կենաց իւրեանց կարէին իմանալ, բայց միայն զանուն արագահաս օգնականին Նիկողայոսի կարդային. և ոչ վրիպեցան 'ի խնդրուածոյն. քանզի տեսանէր կրօնաւորն այն յայտնապէս զմեծ սքանչելագործն Նիկողայոս, զի գնայր 'ի վերայ ծովուն իբրև 'ի ցամաքի։ Ըստ որում և փրկիչն աշակերտացն խօսեցաւ, նոյնպէս և սա յայտնապէս ընդ կրօնաւորն Նիկողայոս. խօսեցաւ և ընդ նաւուղիղն, և ասէ ուրախական ձայնիւ. Արի՛, եղբայր իմ, մի՛ ինչ 'ի վայր անկանիր տարակուսանօք. քաջալերեա և պինդ կալ զսպասաւորութիւն նաւիդ, քանզի ընդ ձեզ եմ. և զայս ասացեալ անյայտ եղև։ Եւ նոյնժամայն եղև խաղաղութիւն մեծ 'ի վերայ ծովուն. և սպիտակացան երկինքն, և դադարեաց բռնութիւն հողմոյն, և հանդարտեաց ծովն իբրև ջուր 'ի կոնք արկեալ։ Եւ այնոքիկ որք յառաջագոյն յուսահատեալ էին իբրև զմեռեալս՝ լցան խնդութեամբ ընդ երևումն սրբոյն, և փառաւորեցին զԱստուած որ սքանչելագործէ 'ի սուրբս իւր։ Իսկ մեք տկար բանիւ և իմաստութեամբ՝ թէպէտ և հիանամք ընդ սքանչելի գործս նորա, սակայն ոչ զօրեմք արժանապէս ընծայեցուցանել նմա գովութիւն. բայց միայն յայլ սքանչելիս[1] զբանիս յարմարութիւնս ուղղեսցուք։

---

[1] Միւս օր. Ընթացեալք։

Այր ոմն Գրատիոս[2] անուն որ բնակեալ էր 'ի ծովեզերս Միւռոյ քաղաքին, սովորութիւն ունէր ըղտարևոր յիշատակս կատարել զսրբոյ քահանայապետին, բազում ինչս բաշխէր աղքատաց. իսկ 'ի միում աւուր յորժամ եհաս պայծառագոյն և երևելի օր տօնի նորա, ընթացան ամենեքեան 'ի քաղաքն Միւռոյ, երկիր պագանել սուրբ գերեզմանի նորա։ Իսկ Գրատիոս հանդերձ ամուսնաւ իւրով մնաց 'ի տան իւրում՝ առ 'ի 'յարմարել զպատրաստութիւն տօնին, և Բասիլիոս որդի նոցա գնաց 'ի տաճար սրբոյն։ Եւ իբրև կատարեցին զպաշտօն երեկոյին, յանկարծակի հասին 'ի վերայ նոցա Հագարացիք, և յաւարի առեալ զամենեսեան որք հանդիպեցան՝ վարեցին գերի 'ի Կրետէս կղզի։ Իսկ զԲասիլիոս զորդին Գրատիոսի[3], քանզի յոյժ գեղեցիկ էր տեսլեամբ, ետուն զնա մասն[4] ազգապետին իւրեանց. և զի կարի զարմանալի էր և յառաջադէմ մանուկն, ընդ մերձակայ սպասաւորսն իւր պատշաճ համարեցաւ կարգել զնա։ Իսկ իբրև լուան ծնօղք մանկանն զպատահումն զաւակին իւրեանց՝ դարձաւ ուրախութիւն նոցա 'ի սուգ, և յապաղեցին 'ի կատարելոյ զտօնն, և զամենայն կազմած տօնին արհամարհեցին, և զողբումն արտասուաց հանդերձ հառաչանօք սրտի անդադար Աստուծոյ վերառաքէին։ Եւ ո՞ արդեօք կարասցէ պատմել զանփարատելի տրտմութիւն նոցա և զանմխիթար վիշտն, և կամ զօրն առանձինն 'ի խորոց սրտէ հառաչանս և վտակս արտասուացն զոր հեղուլին յաչաց նոցա։ Քանզի մայր նորա եղնգամբք ցտէր զերեսս իւր, և խլէր յարմատոյ զհեր գլխոյ իւրոյ, որպէս օրէն է մօր լալ ՚ի վերայ որդւոյ միածնի։ Գիտեն ամենեքեան որք միանգամ տեղեակք են այսպիսի պատահման, թէ զիա՛րդ վշտանան ծնօղք ընդ բաժանումն յանկարծակի զաւակին իւրեանց։ Քանզի յորժամ դէպ լինիցի հիւանդանալ յանկարծակի՝ ամենայն ուրեք հնարին գտանել բժիշկս հմուտս, զի թերևս կարասցեն բժշկել զծնունդս իւրեանց. ապա եթէ մեռանիցի՝ սակայն և ոչ այնպէս անմխիթար լինիցի սուգն, իբրև զայն որ յանկարծակի յափշտակի ՚ի գերութիւն, ՚ի ձեռս անօրէն և գարշելի ազգի։ Եկին առ նոսա գաւառացիք նոցա, ողբային և արտասուէին ընդ նոսա. և որպէս ասէ մարգարէն. Դարձաւ տօն նոցա յողբս և ուրախութիւն նոցա ՚ի տրտմութիւն. փոխանակ սաղմոսացն՝ հառաչանք, և փոխանակ փառաբանութեան՝ բանս գայթակղութեան՝ յայնցանէ որք հաղորդէին ախտին՝ վերառաքէին։ Եւ ո՛վ ոք համարձակի ասել զյանդգնութեան նոցա բանս. քանզի կարծէին անհնար գոլ սրբոյն Նիկողայոսի սքանչելագործել ՚ի բացուստ և ազատել զնոսա յայնպիսի վշտաց։ Եւ ոչ ածէին զմտաւ թէ զիա՛րդ մինչդեռ ՚ի մարմնի էր՝ հեռագոյն միջոցաւ երևեալ մեծ թագաւորին՝ ազատեաց ՚ի պատժոց զայնոսիկ որ տարապարտուց հանդերձեալ էին մեռանել։ Սակայն թոյլ տայր այժմ փոքր ինչ զգալ ախտին, զի մեծապէս սքանչելագործեսցէ յախտումն։

---

[1] Միւս օր. յայս սքանչելիս։
[2] Միւս օր. Գրագիոս։
[3] Միւս օր. Ագրագիոսի։
[4] Միւս օր. հասն 'ի գերութենէն։

Իսկ իբրև կատարեցաւ ամ մի և անյայտ եղև ՚ի ծնօղացն տրտմութիւն մանկանն, եհաս պայծառագոյն տօնն երից երանեալ հօրն մերոյ Նիկողայոսի. ամենեքեան դիմեալք երթային յօժարութեամբ սըրտիւ ՚ի տօնն, մատուցանել ըստ կարի պտղաբերութիւն։ Միայն հայրն Բասիլիոսի յապաղէր երթալ ՚ի տօնն յայն. քանզի ինքն և ամուսին իւր սաստկագոյն սգով վարանեալք էին։ Իսկ հայր մանկանն յերկուս բաժանեալ էր զմիտս, թէ զիա՛րդ զվիշտս կնոջն փարատեսցէ, և կամ թէ ո՛րպէս հանդիպեսցի տօնին։ Ապա մատուցեալ առ մայր մանկանն՝ ասէ ցնա. Ո՛վ կին դու, միթէ օգուտ ինչ գործեսցէ՞ յողբալոյ աստի գերութեան մերոյ. թէ զայս հաւաստի գիտէաք, ոչ միայն մեք՝ այլ զբազումս ընդ մեզ յարուցանէաք ողբակից։ Իսկ եթէ մնոտի և ունայն տագնապիմք, և նա ոչ ինչ յայսցանէ օգտեսցի, եկ այսուհետև հաւատով ընթասցուք առ սուրբն Նիկողայոս, և գիտասջիր զի մեծի բարութեան հանդիպիմք, քանզի տուեալ լինի մեզ մանուկն մեր անակնունելի յուսով. և եթէ 'ի ծառայութեան իցէ՝ արկցէ գութ 'ի վերայ նորա, զի մի՛ ծանրասցի 'ի վերայ նորա լուծ ծառայութեանն։ Իսկ արդ զի՞նչ պատճառ իցէ զի մեք միայն մնասցուք առանց հաղորդութեան 'ի մեծ 'ի պայծառութենէ տօնիս, զոր ոչ մարդիկ միայն այլ և հրեշտակք տօնեն, և ընդ երկրաւորացս ուրախանան և բանակք վերնոցն։ Եւ հաւանեալ կնոջն յորդորական բանիցն առն՝ կատարէին միաբանութեամբ զտօն սրբոյն։ Իսկ իբրև կատարէին զկանոն պաշտաման երեկոյին, արար ուրախութիւն մեծ 'ի տան իւրում և ընկալաւ զամենեսեան որք անդ դիպեցան։

Եւ արդ դիտեսցէ ինձ[1] իւրաքանչիւր ոք որք իսկապէս կամիցին ունկնդիր լինել սքանչելեաց սրբոյն, քանզի էին ուրախացեալք հասարակաբար 'ի միասին։ Ի մէջ ածին յիշատակաւ զանուն մանկանն, ասէին. Ո՛վ փափագելի որդեակ, 'ի միւս ևս տօնի երանելի հօր մերում, դու տայիր զբաժակն 'ի ձեռս մեր։ Եւ զամենայն բարեվայելչութիւնն գովէին 'ի սփոփանս ծնողացն։ Եւ իբրև սկսան խօսել զայս՝ անդէն ղողանջիւն լինէին շանց յարտաքին սրահին, և ընդ յերկարէր աղաղակն. քանզի իբրև 'ի վերայ գազանի յանդգնաբար հաչէին շունքն ցուցանելով։ Իսկ այնոքիկ որ 'ի տանն էին՝ կարծէին եթէ Հագարացիք յարեան 'ի վերայ նոցա, շիջուցին զջահն, և հնարէին գտանել փրկութեան ճանապարհ։ Իսկ հայր նորա հայեցեալ ընդ լուսամուտ դրանն՝ տեսանէր զորդին իւր Բասիլիոս՝ հագարացի զգեստով, և ունէր 'ի ձեռին իւրում բաժակ լի անապակ. և 'ի հիացման եղեալ համարեցաւ եթէ առ աչօք իցէ, և տարակուսեալ յանձն իւր ոչ կարացեալ խօսել 'ի բազում ժամս: Ապա փոքր միւս եւս սթափեալ 'ի քնոյ անտի ահիւ և ուրախութեամբ բաժանեալ զմիտս իւր, ասէ մեղմական ձայնիւ. Որդեակ իմ Բասիլիոս, ճշմարտի՞ւ տեսանեմ զքեզ, թէ առ աչս կարծեօք երեւութանաս: Եւ նա ասէ. Ես եմ որդին քո Բասիլիոս՝ որ յափշտակեցայ յորդւոց Հագարու: Իսկ հայր նորա առաւել կամեցեալ հաստատել՝ մերձեցեալ առ մանուկն շօշափեաց զնա, և ճշմարտապէս իմացեալ՝ գիրկս արկեալ համբուրեաց զնա և գոհացաւ զԱստուծոյ: Հարցանէր թէ զի՞նչ արդեօք յանկարծակի տուար 'ի վերուստ 'ի գիրկս հայրական. և ո՞վ եբեր, կամ որպիսի՞ պատճառանօք յայտնեցար, և ազատեցար 'ի պղծասէր ձեռաց Հագարացւոցն. հանդերձ ընկերօ՞քն փախեար թէ դու միայն, ա՞յլ ոք արձակեաց զքեզ՝ եթէ դու ինքնին թաքնաբար արձակեցար:

---

[1] Միւս օր. և արդ պէտք է ինձ... խօսեցի։

Իսկ մանուկն սկսաւ պատմել զամենայն, և ասէ. Յայդմ ամենայնէ զոր ասացեր՝ և ոչ միոյ արդեօք կարօտեցայ. ահա յայսմ ժամու որ աստ կամ կանգնեալ՝ կայի առաջի ազգապետին, զի նմա մատուցին զիս այնոքիկ որք գերեցին զմեզ. և մինչդեռ էին յընթրիս՝ ես մատուցանէի զբաժակն 'ի ձեռս նորա: Զօրութիւն իմն յափշտակեաց զիս հանդերձ բաժակաւս զոր տեսանէք, և ոչ գիտէի թէ ո՞ւր իցեմ, մինչև ցայժըմ որ խօսիմս ընդ ձեզ: Բարձրացայ յերկրէ և 'ի բարձունս գիտէի զիս, մինչև դու խօսեցար ընդ իս. ապա եկեալ 'ի միտս իմ, տեսանէի զմեծն Նիկողայոս, զի փարատէր զտրտմութիւն իմ յինէն և հրամայէր ինձ քաջալերել: Իբրև լուաւ զայս հայր նորա՝ լի եղև ուրախութեամբ 'ի վերայ մեծի սքանչելեացն. և կալեալ զձեռանէ մանկանն՝ տարաւ առ մայր նորա, և ասէ. Ո՛վ կին դու, զառաջնորդին մերոյ զօրութիւնն տես, զայն՝ որ վաղվաղակի հասանէ յօգնականութիւն այնոցիկ՝ որ բոլորով սրտիւ կարդան առ նա: Իսկ մայրն գիրկս արկեալ որդւոյ իւրոյ, բազում արտասուօք համբուրէր զնա և ասէր. Ճշմարի՞տ արդեօք իցէ, թէ յանուրջս ունիցիմ զորդեակս իմ 'ի գիրկս որ յափշտակեցաւ յայլազգւոյն. արդեօք դո՞ւ ես որդեակն իմ զոր կորուսի: Զայս և առաւել քան զայս խօսեցաւ մայրն։ Իսկ կոչեցեալքն յընթրիսն՝ մեծապէս ուրախացեալք հիանային ընդ սքանչելիսն. և 'ի վաղիւ անդր ժողովեցան ամենայն գաւառքն, ուրախակից լինէին ծնողաց նորա, և օրհնութիւնս Աստուծոյ մատուցանէին, որ արար այնպիսի սքանչելիս 'ի ձեռն սրբոյն Նիկողայոսի սպասաւորին իւրոյ։

Արդ ըստ կարի մերոյ զօրութեան փոքր 'ի շատէ պատմեցաք զարագահաս օգնականութիւն և սքանչելի նորա գործս։ Եւ չէ ինչ զարմանալի, քանզի նոյն Աստուած է որ 'ի ձեռն Ամբակումայ 'ի թօթափել ական 'ի Հրէաստանէ 'ի Բաբիլոն՝ կերակուր մատուցանէր Դանիելի. նոյն ինքն և այժմ 'ի ձեռն սպասաւորին իւրոյ Նիկողայոսի արար սքանչելիս առ մանուկս, հաստատեաց 'ի հաւատս՝ որ խղճի մտօք մատչէին կատարել զտօն նորա. որպէս զի փառաւորեսցեն զԱստուած և զծառայ նորա Նիկողայոս առաւելապէս. 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տ՟ր մեր, որում վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Պանդալէոնի և Երմողեայ քահանայի և Երմոգրատեայ։

Յամս թագաւորութեան Մաքսիմիանոսի ամպարշտի և անօրինի՝ հրաման ետ և ասէ. Զամենայն զօրս գտանիցէք զաստուածապաշտս՝ ժողովեցէք 'ի քաղաքըն Նիկոմիդացւոց։ Եւ ժողովեցին զամենեսեան զօրս գտին և ածին 'ի քաղաքն։ Իբրև ետես զնոսա Մաքսիմիանոս՝ ասէ. Այդքե՞ն են մոլորեալքն։ Ասեն. Այո՛, այս են. զի Մաքսիմիանոս նկրտէր 'ի կորուստ իւր, և նոքա 'ի կեանսն յաւիտենից։ Եւ էր անդ այր մի սինկղիտոս, զի անուն էր նորա Եւստորգէոս, և բնակեալ էր անդէն 'ի Նիկոմիդիա քաղաքին. ունէր և որդի մի գեղեցիկ տեսակաւ, անուն նորա Պանդալէոն, և էր միամօր։ Սա ուսեալ և խրատեալ 'ի դըպրոցի, և դարձեալ ետ զնա հայր նորա 'ի բժիշկս՝ զի ուսցի, և անուն վարդապետին Սոփրենէս. քանզի թագաւորին բժիշկ էր և քաղաքին վարդապետ. և ուր և երթայր նա՝ և Պանդալէոն ընդ նմա։

Եւ ասէ թագաւորն ցՍոփրենէս. Ո՞յր է պատանեակս այս։ Պատասխանի ետ Սոփրենէս և ասէ. Որդի է առն միոյ սինկղիտոսի՝ անուն նորա Եւստորգէոս, և մօր դորա Եւբուլա. և ետուն զդա յիս ուսուցանել զբժշկութիւն։ Եւ ասեն նախարարքն ամենայն. Արժանի է պատանեակդ թագաւորի։ Իսկ թագաւորն ասէ ցվարդապետն նորա. Զգոյշ լեր քեզ, և փութով ուսուցես զդա, զի պիտոյ է ինձ։ Եւ էր անդ երէց մի զի անուն էր նորա Երմողոս, թագուցեալ 'ի Թագաւորէն հանդերձ երկու աշակերտօք իւրովք, ուր էրն Պանդալէոն. սա յամենայն ժամ տեսանէր զվայելուչ քահանայն Երմողիոս. քանզի գիտէր ծերն Հոգւոյն սրբով՝ զի անօթ պատուական լինելոց է պատանեակն, ըստ երանելւոյն Պօղոսի որ ասէ, եթէ՝ Մի՛ ոք իցէ որ զքո մանկութիւնդ արհամարհիցէ։ Եւ յաւուր միում կոչեաց քահանայն զպատանեակն գաղտ, և ասէ. Եկ այսր ժամ մի. քանզի Թագուցեալ էր։ Իբրև եկն, ողջոյն ետ և ասէ. Ողջ ես, որդեակ, լի ամենայն բարութեամբ։ Պանդալէոն ասէ. Ողջ և դու, քահանայ պատուական։ Եւ կալաւ զձեռանէ նորա, մատոյց մօտ առ իւր և ասէ. Որդեակ, ո՞յր ես, և վասն որո՞յ տառապիս։ Պանդալէոն ասէ. Որդի եմ ես առն միում սէնկղիտոսի, զի անուն է նորա Եւստորգէոս և մօրն Եւբուլա, և ամք են զի վախճանեալ է։ Իսկ երէցն ասէ ցնա. Որո՞յ ուսման ես։ Պանդալէոն ասէ. Մինչ կենդանի էր մայրն իմ՝ ընդ նմա էի, և հայր իմ ոչ կամէր, այլ խորհէր զինուորեցուցանել զիս. և ես ընդ մօրն իմում կամէի լինել. 'ի մեռանել նորա՝ հայր իմ զինչ կամի առնէ։ Երէցն ասէ. Զի՞նչ է զոր ուսանիսդ։ Պանդալէոն ասէ. Զոր ուսանիմն այս է՝ Ասկղեպիոս և Գաղինէ, այս ճարտարութիւն է[1]. այսպէս ասաց ինձ վարդապետն իմ, յորժամ զայս ուսանիս՝ կարող ես զամենայն ոք բժշկել։ Եւ երէցն ասէ ցնա. Որդեակ, ոչինչ է Ասկղեպիոս և յոչինչ համարեալ են աստուածքն՝ զոր պաշտէ Մաքսիմիանոս. լո՛ւր ինձ, որդեակ, և հաւատա 'ի Քրիստոս, և նովաւ բժշկեսցես զամենայն հիւանդս. Քրիստոս զմեռեալս յարոյց, զկոյրս լուսաւորեաց, զհիւանդս բժշկեաց, զդևս հալածեաց, զջուրն 'ի գինի դարձոյց։ Իսկ Պանդալէոն իբրև երկիր առեալ զսերմն բարի՝ եբեր պտուղ ըստ սրբոյ աւետարանին ասելով, երեսնաւորս, վաթսունաւորս և հարիւրաւորս. այսպէս և նա ընդունէր զբանս ծերոյն 'ի փրկութիւն անձին իւրոյ և բազմաց։ Պանդալէոն ասէ. Տէր, եթէ հնար ինչ էր՝ իմացուցանել վարդապետին իմոյ զոր ասեսդ. զայս և յերանելի մօրէն իմմէ լուեալ է իմ զի կայր յաղօթս առ Քրիստոս՝ զոր դուդ քարոզես։ Երանելի երէցն[1] ասէ. Հաւատա 'ի Նա, որդեակ, և առնէ քեզ զայս ամենայն յերկնից. հաւատա, որդեակ իմ, 'ի Քրիստոս, և մկրտեա 'ի լոյսն երկնաւոր։

---

[1] Միւս օր. զԱսկղեպիոս, զԻպոկրատէս և զԳաղինէ ճարտարութիւնն։

Եւ հանապազօր կանխէր առ երէցն Պանդալէոն, և հաստատէր'ի հաւատս. և յորժամ երթայր 'ի տուն, նախ առ Նա երթայր և ապա 'ի տուն իւր. և այսպէս լի էր շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Յաւուր միում հրաժեշտ առեալ 'ի վարդապետէն և գայր 'ի տուն իւր. և տեսեալ 'ի ճանապարհին զի կայր մանուկ մի օձահար[2], և օձն կայր անդէն և մանուկն մեռեալ, և Պանդալէոն իբրև ետես՝ երկեաւ և կամէր զանց առնել. խորհեցաւ 'ի միտս իւր, ասէ. Աղէ փորձեցից զբանս Երմողեայ երիցու, և տեսից եթէ ճշմարի՞տ է թէ ոչ։ Եւ համբարձեալ զաչս իւր յերկինս՝ ասէ. Տէր Յիսուս, եթէ արժանի եմ և կամիս զիս ծառայ քեզ, յանուն քո յարիցէ մանուկս այս։ Եւ անդէն վաղվաղակի յարեաւ մանուկն, և օձն ընդ երկուս հերձաւ։ Յայնժամ Պանդալէոն լի եղև շնորհօք, և ասէ. Օրհնեցից զՏէր Յիսուս Քրիստոս, զի արժանի արարեր զիս խառնել 'ի ծառայս քո։ Եւ երթեալ այնուհետև անկեալ առ ոտս երանելի երիցուն և ասէ. Աղաչեմ զքեզ, ծառայ Քրիստոսի, մկրտեա զիս, զի և ես հաւատամ այսօր եթէ ոչ գոյ այլ Աստուած՝ բայց 'ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որով մեռեալքն յառնեն։ Եւ պատմեաց Պանդալէոն զիրսն, թէ որպէս անուամբն Տեառն զմանուկն յարոյց, և կամ զիարդ օձն հերձաւ. և երանելի ծերն ասէ. Եկ, որդեակ, ցոյց ինձ զմեռեալ օձն։ Եւ գնաց սուրբն Պանդալէոն եցոյց նմա։ Իբրև ետես երէցն՝ ամբարձ զաչս իւր յերկինս՝ ասէ. Փառաւորեմ զքեզ, Աստուած, որ առանց պատմելոյ են շնորհք քո։ Եւ չոգան 'ի միասին ուր թագուցեալ էր երէցն, և մկրտեաց զսուրբն Պանդալէոն. և կալաւ զնա անդ աւուրս եօթն, և յաւուրն ութերորդի գնաց 'ի տուն իւր։ Ետես զնա հայրն և ասէ. Ո՞ւր էիր, որդեակ, զայնքան աւուրս, զի սպանէր զիս 'ի հոգոցս: Եւ Պանդալէոն ասէ. Այր մի 'ի գրան արքունի խօթ կայր և սիրելի էր արքայի, առ նմա եղէ այսքան աւուրս մինչև ողջացուցի զնա. և հաճեաց զհայր իւր: Եւ 'ի վաղիւ անդր չոգաւ առ վարդապետն իւր. իբրև ետես զնա վարդապետն՝ ասէ. Ասա ինձ, Պանդալէոն, ո՞ւր էիր զայսքան աւուրս: Եւ Պանդալէոն ասէ. Հայր իմ ագարակ կամէր գնել, և առաքեաց զիս առնուլ զմուրհակն, յայն սակս եղէ մինչև ստացայ զագարակն և զմարգարիտն որ 'ի նմա: Զայս ասէր վասն իւր և վասն մկրտութեանն: Իբրև լուաւ վարդապետն՝ դադարեաց 'ի հարցանելոյ:

---

[1] Միւս օր. ծերն։

[2] Միւս օր. 'ի տարբէն խածեալ. և գազանն մօտ կայր։

Եւ Պանդալէոն լցեալ շնորհօքն Քրիստոսի՝ ունէր զգանձն կենաց յանձին իւրում, և վասն հօրն հոգայր, թէ ո՞րպէս ածցէ զնա 'ի մկրտութիւնն. և հանապազօր խօսէր ընդ նմա զօրութեանցն Քրիստոսի: Եւ ասէ ցհայրն իւր. Հայր, աստուածքն ընդէ՞ր ոչ նստին և ոչ գնան: Եւ հայրն ասէ ցնա. Ծանր է, որդեակ իմ, զոր հարցանես զիս, և ոչ կարեմ տալ քեզ պատասխանի: Եւ սուրբն Պանդալէոն սկսաւ փառաւորել զԱստուած, զի 'ի միջէ բանէ անտի զհայրն ած 'ի հաւանութիւն: Եւ հայրն նորա 'ի ժամէն յորում եհարց ցնա՝ յերկմիտս եղև յաստուածոց իւրոց. քանզի ունէր 'ի տան իւրում կուռս. և երանելին Պանդալէոն կամեցաւ փշրել զնոսա. և ասէր, մի՛ տրտմեցուցից զհայր իմ, այլ հաւանութեամբ ածից 'ի հաւատս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Մինչդեռ նա զայս խօսէր՝ ածին 'ի դուռն անդր կոյր մի, բախեցին ըզդուռնն և ասեն. Ո՞ւր է բժիշկն Պանդալէոն. և Պանդալէոն իբրև լուաւ՝ ելեալ կալաւ զձեռանէ նորա և տարաւ 'ի ներքս. և ասէ ցկոյրն. Զի՞նչ խնդրես: Ասէ ցնա կոյրն. Աղաչեմ զքեզ, Տէր, ողորմեա ինձ խաւարելոյս և արգելելոյս, և տուր տեսանել ինձ զքաղցր տեսութիւնս զայս. զի բազում բժիշկք աշխատեցան յիս և ոչինչ օգտեցին ինձ, այլ զփոքր մի ճաճանչն[1] զոր ունէի՝ և զայն ես հանեին յինէն, և զամենայն ինչս իմ առին բժիշկքն: Ասէ ցնա Պանդալէոն. Զամենայն ինչս քո բժիշկքն առին. ինձ զի՞նչ կամիս տալ՝ եթէ տամ տեսանել քեզ։ Ասէ կոյրն. Որ ինչ մնաց յայլոցն՝ զայն քեզ տաց։ Պանդալէոն ասէ ցկոյրն. Զլոյսս զայս ձրի տայ քեզ Քրիստոս, և դու երթ տուր աղքատաց զոր ինձ խոստանաս։ Հայրն Պանդալէոնի ասէ. Ի բաց կաց յառնեդ, քանզի ճարտարք քան զքեզ էին բժիշկքն որ ձեռնարկեցին 'ի դա։ Պանդալէոն ասէ. Իմ վարդապետն ճարտար է քան զամենայն բժիշկս։ Եւ կալաւ զաջոյ ձեռանէ կուրին և ասէ. Յանուն Յիսուսի Քրիստոսի լուսաւորեսցի խաւարեալս այս, և փառաւորեսցի անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ մինչդեռ կայր յաղօթս՝ բացան աչք կուրին և ետես։ Եւ նոյնժամայն հաւատաց հայրն Պանդալէոնի հանդերձ կուրիւն. և չոգաւ երանելին Պանդալէոն պատմեաց երիցուն զամենայն զոր ինչ եղեն. և Երմողիոս ուրախ եղև հանդերձ Պանդալէոնիւ. և չոգաւ 'ի տուն նորա տեսանել ըզհայրն նորա և զկոյրն. և եղեալ անդ աւուրս բազումս և մկրտեաց զհայր նորա և զկոյրն, և լուսաւորեաց զնոսա 'ի լոյսն երկնաւոր։ Եւ եմուտ Եւստորգէոս 'ի տուն իւր, և խորտակեաց զկուռս իւր և ընկեց 'ի խորխորատ մի։ Զայն իբրև ետես Պանդալէոն՝ ետ փառս Աստուծոյ բարձրելոյն։

---

[1] Միւս օր. սակաւ լուսոյն և զայն խափանեցին յինէն:

Իսկ յետ անցանելոյ փոքր մի աւուրց՝ մեռաւ հայր նորա. և Պանդալէոն ազատեաց զամենայն ծառայս իւր, և ետ նոցա ինչս և արձակեաց յիւրմէ, և զմնացեալ ինչսն աղքատաց բաշխեաց. և ինքն առ հիւանդս և առ կապեալս երթայր և քաջալերէր զնոսա բանիւք և արդեամբք, և ողջացուցանէր զնոսա բանիւն Քրիստոսի։ Եւ նախանձեալ ընդ նմա բազում բժիշկք՝ ժողովեցան 'ի միասին, կալան զկոյրն որ ողջացեալն էր 'ի Պանդալէոնէ և ասեն ցմիմեանս. Ո՞չ սա է կոյրն զոր մեք ոչ կարացաք բժշկել, և ո՞ զսա բժշկեաց։ Կարդացին զնա և ասեն. Ո՞վ զքեզ բժշկեաց։ Ասէ ցնոսա. Պանդալէոն, որդին Եւստորգեայ, նա ողջացոյց զիս։ Ասեն բժիշկքն ցվարդապետն նորա ցՍոփրենէս. Ո՞չ քո աշակերտ է նա։ Ասէ Սոփրենէս. Այո։ Ասեն բըժիշկքն. Աստուածովքն, մեծ շնորհք տուան քեզ։

Չոգան չարախօսեցին զնմանէ Թագաւորին Մաքսիմիանոսի և ասեն. Պատանեակն զոր հրամայեցեր բժիշկ [1] ուսուցանել՝ նա աւանիկ շրջի և բժշկէ ըզթշնամիս աստուածոց մերոց։ Եւ ասեն ցԹագաւորն. Աղէ հրաման տուր կոչել զկոյրն՝ զոր ողջացոյց։ Իբրև ածին զկոյրն, եհարց ցնա և ասէ. Որո՞վ ճարտարութեամբ ողջացոյց զքեզ Պանդալէոն։ Ասէ կոյրն. Ձեռն եդեալ՚ի վերայ աչաց իմոց և ասէ. Յանուն Աստուծոյ մերոյ Յիսուսի Քրիստոսի ողջացիր. և նոյնժամայն ողջացայ։ Ասէ ցնա Թագաւորն. Դու զի՞նչ ասես. աստուա՞ծքն իմ ողջացուցին զքեզ եթէ Քրիստոսն հեթանոսաց։ Իսկ ողջացեալն ասէ. Թագաւոր, զայս գիտեմ զի բժիշկք շատ աշխատեցան յիս զամենայն ժամանակս, և զամենայն ինչս իմ ծախեցին, և ինձ ինչ ոչ օգտեցին, այլ փոքր մի զոր տեսանէի և զայն ես հանեին յինէն. իսկ Քրիստոս յառնէ միոջէ լուսաւորեաց զիս։ Ասէ Թագաւորն. Երթ, և այլ մի անուաներ զՔրիստոս, քանզի աստուածքն իմ ետուն քեզ զլոյսդ։ Իսկ ողջացեալն ասէ. Քրիստոսն իմ լուսաւորեաց զիս ՚ի ձեռն ծառային իւրոյ Պանդալէոնի. զի քո աստուածքն ոչ տեսանեն, զիա՞րդ կարեն ումեք լոյս շնորհել։ Թագաւորն ասէ. Աստուածովքն, ճըշմարիտ ասացին վասն ձեր բժիշկքն. և նոյնժամայն հրամայեաց տանել գլխատել զնա։ Իսկ Պանդալէոն ետ սպասաւորացն ինչս, և առ զմարմին նորա և թաղեաց առ հօրն իւրում։

Եւ յետ այսորիկ հրամայեաց Թագաւորն կոչել զՊանդալէոն. և մինչ երթայրն՝ սկսաւ սաղմոսել և ասել. Աստուած օրհնութեան իմոյ մի լռեր, զի բերան մեղաւորի բերան նենգաւորի բացաւ ՚ի վերայ իմ. խօսեցան զինէն ՚ի լեզուս նենգաւորս։ Եւ որ զկնի այսորիկ։ Եմուտ առաջի Թագաւորին. և աչք մարմնոյ նորա հայէր յերկինս։ Ասէ ցնա Թագաւորն. Ասա ինձ Պանդալէոն, եթէ ճշմարի՞տ է զոր լուայ վասն քո. ո՞չ ես պատուիրեցի վարդապետին քում ուսուցանել զքեզ վասն վայելուչ հասակի քում։ Պանդալէոն ասէ. Յումմէ՞ լուար վասն իմ։ Թագաւորն ասէ. Յումմէ լուայ՝ ոչ հաւատացի, զի համբաւ շատ՝ սուտ ելանէ։

---

[1] Միւս օր. ժամանեալ ուսուցանել։

Պանդալէոն լցեալ Հոգւով սրբով ասէ ցԹագաւորն. Գրեալ այսպէս է. Աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն: Թագաւորն ասէ. Զոր քրիստոնեայքն պաշտեն՝ կարօղ է զերկինս և զերկիր առնել: Պանդալէոն ասէ. Քրիստոս զամենայն ինչ արար և առնէ. և ասէ ցԹագաւորն. Աղէ տուր ածել անդամալոյծ մի 'ի մէջ քաղաքին. և հրամայեաց բերել զանդամալոյծն 'ի մէջ քաղաքին: Ասէ ցՊանդալէոն Թագաւորն. Քաջ ասացեր. հրամայեաց իսկ կոչել զամենայն սուտ քահանայսն իւր. և սկսան կարդալ զԱստուածս իւրեանց, ոմն առ Ասկղեպիոս, ոմն առ Դիոս, ոմն առ Արտեմիս. և ոչ ձայն և ոչ բարբառ [1]: Պանդալէոն եկն և սկսաւ կարդալ առ Աստուած. և լուաւ Աստուած աղօթից նորա. կալաւ զձեռանէ անդամալուծին և ասէ. Յանուն Յիսուսի Քրիստոսի արի: Եւ յարոյց զնա նոյնժամայն. և հաւատաց անդամալոյծն յԱստուած, և գնաց 'ի տուն իւր. և բազումք 'ի ժամուն յայնմիկ հաւատացին 'ի Տէր Աստուած մեր: Զայն իբրև ետես Թագաւորն՝ բարկացաւ յոյժ բժշկացն և առ սուտ քահանայսն. և ասեն նոքա միաբան ցԹագաւորն. Մի՛ հաւատար դմա, զի աստուածքըն քո ողջացուցին զանդամալոյծն: Եւ Թագաւորն ասէ 'ի բանս նոցա ցՊանդալէոն. Հաւանեա ինձ և զոհեա աստուածոցն իմոց. ահա տեսանես զինչ ասանեն, և որք ոչ հաւատան դոցա՝ մեռանին: Պանդալէոն ասէ. Ամենայն որ դոցա մեռանի՝ Քրիստոսի կեայ, այլ ես պատրաստ եմ ամենայնի տանջանաց վասն անուանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Մաքսիմիանոս ասէ. Պանդալէոն, ասա ինձ, յո՞ր բան ելանես: Պանդալէոն ասէ. Մի՛ խաբիր, Թագաւոր, ես յԱստուած հաւատացեալ եմ, զի արժանի եղէց պսակին յաւիտենից [2]:

---

[1] Միւս օր. ոմն 'ի նոցանէ կարդայր զԱսկղեպիոս և ոմն զԻպոկրատէս և ոմն զԱրամազդ և ոմն զԱպողոն և ոմն զՀերակլէս. և այլք զայլ աստուածսն. և էր ամենայն նոցա ընդ վայր:

[2] Միւս օր. յաւելու աստանօր. Մաքսիմիանոս ասէ. Գիտացե՞ր զինչ անցք անցին ընդ ծերն Անթիմոս յառաջեան պատուորն պաշտօնէից: Եւ Պանդալէոն ասէ. Եւ դու գիտացե՞ր թէ որպէս համբերեաց վասն Աստուծոյ՝ ծերն այն, և յաղթանակեցաւ 'ի բարեպաշտութենէ անտի, այլ ամենայն բարեպաշտութեամբ մատնեաց 'ի հարուածս գլխատմամբ զմարմին իւր. Նա առաւել ևս՝ որ 'ի փոքր մանկութեան եմ, պարտիմ իբրև զօրաւոր հաւատովք յառաջ մատչել. զի արժանի լինիցիմ անանց պսակին:

Եւ տեսեալ թագաւորն թէ հաստատուն է 'ի հաւատս իւր, հրամայեաց կախել զնա և քերել. և խեցի ջեռուցեալ դնէին յանթս նորա, և այնպէս պնդէին։ Իսկ երանելին ամբարձեալ զաչս իւր յերկինս՝ ասէ. Տէր Յիսուս Քրիստոս, փաղփաղակի եկեսցէ ողորմութիւն քո առ իս։ Եւ երևեցաւ նմա Քրիստոս 'ի նմանութիւն Երմողեայ քահանայի, և ասէ ցնա. Մի՛ երկնչիր, սիրելի իմ, զի ես ընդ քեզ եմ յամենայն ժամ։ Եւ անդէն փաղփաղակի քաջալերեցաւ երանելին, և կապանքն լուծաւ, և հուրն շիջաւ, և դահիճքն վաստակեցան. և թագաւորն իբրև ետես զայն՝ ամաչեաց. հրամայեաց ածել զնա և ասէ. Զիա՞րդ կաս, Պանդալէոն։ Պանդալէոն ասաց. Իմ յաջողիչն Քրիստոս է, որ զհուրն շիջոյց և զքեզ ամօթ արար։ Մաքսիմիանոս թագաւոր ասէ. Այլ ես չարաչար տանջանս ածեմ 'ի վերայ քո։ Պանդալէոն ասէ. Եթէ մեծամեծ չարչարանս ածես 'ի վերայ իմ՝ և Քրիստոս այլ ես մեծամեծ զօրութիւնս տայ ինձ։ Զայս իբրև լուաւ թագաւորն՝ հրամայեաց բերել տապակ մի երկաթի, և ետ արկանել 'ի նա կապար և եռացուցանել զնա քաջ. և ընկեցին զերանելին անդ, և այնպէս կոտէին զնա։ Իսկ սուրբն կայր 'ի մէջ տապակին և ասէր. Լուր Աստուած աղօթից իմոց և մի՛ անտես առներ. յերկիւղէն թշնամւոյն ապրեցո զիս։ Եւ մինչ կայր յաղօթս՝ երևեցաւ նմա Քրիստոս, և կալաւ զձեռանէ նորա, և նովաւ հանդերձ կայր 'ի տապակին. և անդէն փաղփաղակի հուրն շիջաւ և կապարն սառեաւ, և սուրբն սկսաւ սաղմոսել. Ես առ Աստուած կարդացի և Տէր լուաւ ինձ, ընդ երեկոյս 'ի վաղորդեայն 'ի հասարակ աւուր. պատմեցի և ասացի և լուիցես ձայնի իմում։ Եւ որ անդն կային՝ զարմացան զարմացումն մեծ։

Յայնժամ թագաւորն ասէ ցնոսա. Զի՞նչ կամիք այսուհետև. զի զկապարն սառոյց և զհուրն շիջոյց, արդ որո՞վ տանջանօք կամիք եթէ սպանեսցուք զդա։ Ասեն ցթագաւորն. Աղէ յանդունդս ծովուն ընկեա զդա. միթէ և զծովն կարասցէ՞ ինչ առնել։ Եւ կապեցին զնա դահիճքն և տարան ընկենուլ. և թագաւորն երթայր զհետ նորա տեսանել. և երևեցաւ նմա Քրիստոս 'ի նմանութիւն Երմողեայ երիցու, և սաստեաց ծովուն. և ծովն լռեաց և ունէր զնա 'ի վեր. և Յիսուս շրջէր սրբոյն 'ի վերայ ալեաց ծովուն. և սկսաւ երանելին փառաւորել զԱստուած և ասել. Գոհացայց զքէն, Տէր, բոլորով սրտիւ իմով, և պատմեցից զամենայն զսքանչելիս քո. ուրախ եղէց և ցնծացայց 'ի քեզ, սաղմոս ասացից անուան Տեառն բարձրելոյ. 'ի դառնալ յետս թշնամեաց իմոց կորեան յերեսաց քոց: Եւ եկն ել 'ի ցամաքն: Ասէ ցնա թագաւորն. Պանդալէոն, կախարդութիւն քո և զծովն սանձեաց: Պանդալէոն ասաց. Ոչ ես, այլ Քրիստոս՝ զոր դու ոչ տեսանես: Իբրև լուաւ զայս՝ հրամայեաց ժողովել զամենայն գազանսն. և Պանդալէոն ասէ ցնա. Տէրն մեր այսպէս ասէ, եթէ՝ Գնացէք 'ի վերայ իժի և քարբի. որ զկապարն 'ի տապակին սառոյց և զծովն սանձեաց՝ նա և զվայրենի գազանսն ընտանեցուցանէ ինձ: Եկն այր մի և ասէ. Ահա պատրաստեցի զամենայն գազանսն. և հրամայեաց ածել զՊանդալէոն. և ամենայն քաղաքն ժողովեցան տեսանել զառաքինութիւն սրբոյն: Եւ երևեցաւ նմա Յիսուս և ասէ. Պանդալէոն, սիրելի իմ, քաջալերեաց զի ես ընդ քեզ եմ: Եւ արձակեցին նմա զամենայն գազանսն և զսողունսն. և շուրջ եղեն զնովաւ առիւծքն և ինձքն, լիզուին զոտս սրբոյն[1]. և սողունքն սկսան զդահիճսն կոտորել. և ոչ ետ Տէր մեր մերձենալ 'ի սուրբն, այլ և յիւրաքանչիւր լեզուս սկսան օրհնել զԱստուած: Եւ բազմութիւնն որ անդ կային՝ սկսան աղաղակել. Մեծ է Աստուածն քրիստոնէից. արձակեա զդա և մի մեղանչեր: Եւ հրաման ետ կոտորել զնոսա որք աղաղակէին արս իբրև երկուս հազարս[2]. զոմանս 'ի նոցանէ գազանընկեցս արար, և ոչ մերձեցան 'ի նոսա: Իսկ սուրբն Պանդալէոն սկսաւ փառաւորել զԱստուած. ասէ. Ամենայն հոգիք, օրհնեցէք զՏէր: Եւ թաղեցին զդիակունս սպանելոցն՝ քրիստոնեայքն որ մնացեալ էին. և կէսքն անկեալ կային, և ոչ մերձեցաւ 'ի նոսա թռչուն. զի և նոքա գիտացին թէ վասն Քրիստոսի մեռան: Իբրև ետես թագաւորն թէ ոչինչ մերձեցաւ 'ի նոսա՝ հրամայեաց արկանել զնոսա 'ի խորխորատ մի. և բազումք իբրև տեսին՝ հաստատեցան 'ի հաւատն Քրիստոսի:

---

[1] Միւս օր. և շուրջ պատեալ ընտանեցեալ առիւծքն՝ լիզէին զերեսն ոտիցն և ինձքն զոտսն լիզուին, և այլ գազանք զնովաւ հնազանդէին, եկեալ ոչ քան զոտս համբուրէին սրբոյն. և այնպէս [illegible] փառաւոր բերանովք իւրեանց օրհնէին զԱստուած:

[2] Միւս օր. հազար այր:

Եւ թագաւորն ասէ ցխորհրդականս իւր. Զինչ արասցուք զպատանեակս զայս, զի բազումք 'ի մէնջ խոտորեցան յուսումն նորա: Եւ ասեն ցնա. Արասցուք այսուհետև անիւ մեծ, և հանցուք զնա 'ի տեղի մի բարձր, կապեսցուք զնա ընդ անիւն, և արձակեսցուք վերուստ 'ի վայր. և այսպէս վայրավատին արասցուք զմարմինս նորա: Եւ հրաման ետ թագաւորն առնել զանիւն, և տարան 'ի տեղի մի բարձր, և կապեցին ընդ անիւն: Իսկ ճշմարիտ ծառայն Քրիստոսի սկսաւ գոհանալ և ասել. Խոնարհեցո, Տէր, զունկն քո և լուր ինձ, զի ուրուկ և տնանկ եմ ես. պահեա զանձն իմ՝ զի սուրբ եմ. փրկեա զծառայս քո, Աստուած իմ, որ 'ի քեզ յուսացայ: Եւ կատարեալ զաղօթսն՝ առին և կապեցին զնա ընդ անիւն. և անդէն վաղվաղակի կապանքն խզեցան, և սուրբն կայր առանց չարչարանաց. քանզի Տէր ձեռնկալու էր նորա, և անիւն շրջեցաւ իւրովի, և սպան 'ի նոցանէ հինգ հարիւր. և անկաւ ահ մեծ 'ի վերայ քաղաքին յաւուր յայնմիկ: Եւ թագաւորն առ ահին կարդաց զՊանդալէոն և ասէ. Մինչև յե՞րբ յամառիս, զի զոմանս կենդանութեամբ դարձուցեր 'ի քեզ և զոմանս մահուամբ: Իսկ երանելին ասէ. Ցամօթ լեր որդի սատանայի, մինչև յե՞րբ ոչ ամաչես. բարւոք ասաց մարգարէն վասն ձեր. Դարձցին ցաւք 'ի գլուխ նոցա, 'ի վերայ գագաթան նոցա անօրէնութիւնք իւրեանց իջցեն: Մաքսիմիանոս ասէ. Եթէ վասն մեր ասացաւ բանդ այդ՝ զքեզ ո՞վ ուսոյց: Պանդալէոն ասէ. Տէրն իմ երէցն Երմոլէս: Ասէ թագաւորն. Մեք կարե՞մք տեսանել զնա, զի և ես ուսայց 'ի նմանէ: Զայս ասէր նենգութեամբ քանզի կամէր եթէ գտցէ զնա և սպանցէ: Պանդալէոն ասէ. Հրամայեա արձակել զիս և ես ածեմ զնա: Եւ չոգաւ նա, և ասաց ցերէցն. Ահա կոչէ զքեզ թագաւորն: Եւ նա ասէ. Բարի եկիր, որդեակ, զի ես իսկ յայսմ գիշերի տեսանել զՏէր Յիսուս Քրիստոս, և ասէ ցիս. Կատարեալ են ընթացք քո:

Եւ ելին եկին 'ի դուռնն. եմուտ նուիրակապետն և ասէ. Ահա եկին Պանդալէոն և երէցն: Ասէ Թագաւորն. Ածէք 'ի ներքս. և ասէ ցերէցն. Զի՞նչ անուն է քո: Եւ նա ասէ. Հայրենի անուն իմ Երմողիոս, իսկ կատարեալ անուն իմ քրիստոնեայ[1]: Թագաւորն ասէ. Զայլ ոք ունի՞ս ընդ քեզ: Եւ նա ասէ. Ունիմ այլ ևս երկուս եղբարս: Թագաւորն ասէ. Զի՞նչ անուն է նոցա: Իսկ երէցն ասէ. Միոյն Երմիպոս[2], իսկ միւսոյն Երմոկրատէս: Թագաւորն ասէ. Եւ նոքա քրիստոնեա՞յք են: Երէցն ասէ. Այո: Թագաւորն ասէ. Կոչեցէք և զնոսա. և կոչեցին. և ասէ ցնոսա. Դո՞ւք հրապուրեցէք զՊանդալէոն և յետս դարձուցէք յաստուածոց իմոց: Ասեն ցնա սուրբքն. Ոչ մեք, այլ զերկիւղածս իւր փառաւոր առնէ Տէր: Թագաւորն ասէ. Երթայք զոհեցէք և լինիցիք իմ սիրելիք: Պատասխանի ետուն նմա և ասեն. Մեք աղաչեմք զԱստուած մեր, զի նմա սիրելի լիցուք: Եւ կային չորեքին նոքա յաղօթս առ Աստուած. և երևեցաւ նոցա Յիսուս Քրիստոս, և անդէն շարժեցաւ տեղին ուր կային յաղօթս: Ասէ Թագաւորն. Ահա տեսանէք զի և զերկիր շարժեն աստուածքն իմ: Պանդալէոն ասաց. Բարւոք ասացեր թէ և զերկիր շարժեն, ինքեանք ընդէ՞ր կործանեցան: Եւ եկն ոմն և ասէ ցԹագաւորն. Աստուածքն անկան և փշրեցան: Եւ լուեալ զայս Թագաւորն և ասէ. Երդուեալ յարևս իմ՝ եթէ ոչ բառնամ զդոսա 'ի միջոյ, դոքա և այլ խռովութիւնս առնեն ինձ:

Եւ հրամայեաց զՊանդալէոն արկանել 'ի գուբ մի, և զնոսա գլխատել. եկին քրիստոնեայքն առին զսուրբ մարմինս նոցա և թաղեցին: Եւ յետ մահուան նոցա կոչեաց զՊանդալէոն և ասէ ցնա. Մի՛ կարծեր եթէ փրկել ոք կարասցէ զքեզ 'ի ձեռաց իմոց, բայց եթէ զոհեսցես և կեցցես: Իսկ Պանդալէոն ասէ. Ոչինչ գոն այդր բանք[3]: Թագաւորն ասէ. Տես զընկերսն քո զի լուան ինձ և են զառաջաւորք իմ։ Պանդալէոն ասէ. Աղէ տուր կոչել զնոսա առաջի իմ, թող տեսից զնոսա։ Թագաւորն ասէ. Ի բանի արարի զնոսա յայլ քաղաք[1]։ Պանդալէոն ասէ. Բարւոք ասացեր, շուն անամօթ, կամէիր ստել և զարդարն ասացեր. քանզի են նոքա յերկնաւոր քաղաքին, և անդ շրջին ընդ Քրիստոսի։ Բարկացաւ թագաւորն և հրամայեաց գլխատել զնա, և զմարմին նորա այրել 'ի հուր։ Երթայր սուրբն և ասէր. Բազում անգամ մարտեան ընդ իս 'ի մանկութենէ իմմէ և ինձ ոչ յաղթեցին. զթիկունս իմ հարին մեղաւորք և երկայնացուցին զանօրէնութիւնս իւրեանց. Տէր արդար է, խորտակէ զուլս մեղաւորաց։ Եւ առին տարօղքն և հանին զնա 'ի քաղաքէն ընդ արեւմուտս կոյս՝ իբրև մղոն մի, և գտին տեղի մի ուր Տէր հաճեցաւ կատարել զարդարն. և կապեցին զնա ընդ ծառոյ միոյ ձիթենւոյ[2]. և առ դահիճըն զսուրն և եհար զնա. և եղև սուրն իբրև զմոմ կակուղ, և 'ի սուրբն ոչ մերձեցաւ։ Իբրև տեսին դահիճքն՝ ասեն ցմիմեանս. Աղէ եկայք անկցուք յոտս նորա, և աղաչեսցուք զի աղօթս արասցէ վասն մեր։ Եւ անկեալ յոտս նորա՝ ասեն. Աղաչեմք զքեզ, ծառայ Աստուծոյ, աղօթս արա վասն մեր զի թողցին մեղքն մեր և հաւատամք յաստուածն քո։ Յայնժամ ամբարձ զաչս իւր յերկինս սուրբն Պանդալէոն և ասէ. Տէր Աստուած իմ, Աստուած ամենակալ, կատարեա զցանկութիւնս իմ 'ի տեղւոջս յայսմիկ, և արանցըս այսոցիկ թող զմեղս իւրեանց։ Ձայն եղև յերկնից նմա և ասէ. Պանդալէոն ծառայ իմ, ահա կատարեցաւ ցանկութիւն քո, և բացան քեզ յաւիտենական դրունք երկնից. և զօրք հրեշտակաց սպասեալ մնան քեզ, և փափաքեալ ակն ունին տեսանել զերեսս քո. արդ այսուհետև մի՛ կոչեսցի անուն քո Պանդալէոն, այլ Ամենողորմ[3]. քանզի բազմաց ողորմեցար դու, ապաւէն եղեր 'ի նեղութեան, և զայսս պիղծս հալածեսցեն նշխարք ոսկերաց քոց. և որ ոք ապաւինեսցին 'ի քեզ՝ կատարեսցին խնդրուածք նոցա քոյով բարեխօսութեամբ:

---

[1] Միւս օր. փէրտանական անուն իմ քրիստոնեայ է:

[2] Միւս օր. Միոյն Պօղոս:

[3] Միւս օր. չէ պէտք պատասխանել քեզ վասն բանիդ այդորիկ:

---

[1] Միւս օր. Թագաւորն պատճառս կեղծաւորէր. Պէտք ինչ եղեն 'ի քաղաքի, անդ արձակեցի զնոսա։

[2] Միւս օր. Ձիթենոյ։

[3] Ըստ յունական ձայնին՝ Պանտելէմոն 'ի Ճառընտիրս մեր թարգմանեալ է Ամենողորմ. իսկ Ամենողորմն նմանաձայն հնչի 'ի յոյնն՝ Պանտելէյմոն 'ի հայումս տառադարձութեամբ։

Զայս լուեալ երանելւոյն Պանդալէոնի՝ կարդաց զարսրն և ասէ. Սպանէք զիս. և ոչ կամեցան սպանանել. Ասէ ցնոսա Պանդալէոն. Եթէ ոչ կատարէք զհրամանս թագաւորին՝ ոչ ունիք ընդ իս բաժին յարքայութեանն երկնից: Զայս իբրև լուան արքն՝ համբուրեցին զամենայն մարմին նորա. և ապա սպանին զնա [1]. և եղև մարմին նորա սպիտակ իբրև կծիւն: Եւ քաղաքին Նիկոմիդացւոց ժողովեալ էին տեսանել զնահատակութիւն երանելւոյն, և բազումք հաւատացին 'ի Տէր յաւուր յայնմիկ: Զայն իբրև ետես թագաւորն՝ հրամայեաց զմարմին նորա այրել 'ի հուր, և արարին որպէս հրամայեաց: Իսկ զնշխարս սրբոյն Պանդալէոնի բարձին քրիստոնեայք քաղաքին Նիկոմիդացւոց, և թաղեցին արտաքոյ քաղաքին ընդ կողմն արևմտից, ուր և վկայեաց սուրբն Պանդալէոն բարի խոստովանութեամբ, յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. յամսեանն Նաւասարդի, որ օր հինգ էր [2]. 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն. յաւիտեանս:

---

[1] Միւս օր. յաւելու. և ընդ արեանն կաթն բղխեաց, և փայտն ձիթենւոյն ծաղկեցաւ լցաւ պտղով:

[2] Միւս օր. Նաւասարդի օր քսան էր, և յաւելու ամսոյ քսան և եօթն:

Վկայաբանութիւն սուրբ և փառաւորեալ վկայուհւոյն Պարասկևեայ։

Օրհնեալ է Աստուած, որ արար զերկիր և կացոյց և ժողովեաց զջուրս ծովուն 'ի ժողով մի, և փայլատակեաց զարեգակն յիշխանութիւն տուընջեան, և զլուսին յիշխանութիւն գիշերոյ, և զամենայն ինչ իմաստութեամբ արար, և զթիւ աւուրց եօթնից հրամայեաց՝ յորս զամենայն հրաշագործեաց։ Յառաջագոյն սկսանելով զտեսանելի աշխարհի զարդարանս, զի յառաջնում աւուրն արար զորբուհի օրն զկիւրակէ, զերկինս և զերկիր, զլոյս և զխաւար, զտիւ և զգիշեր. իսկ յերկրորդում աւուրն պատրաստեաց զհաստատութիւնն և ժողովեաց զժողովս ջուրց 'ի ժողով մի. և յերրորդում աւուրն ստորազարդեաց զերկիր ծաղկօք, և զամենայն փայտ պտղաբեր և զամենայն տեսակս բուսոց։ Իսկ 'ի չորրորդում աւուրն արար զլուսաւորսն 'ի հաստատութիւն, զարեգակն և զլուսին և զամենայն զարդս երկնից յօրինեաց՝ իւր արարչութեամբն. և 'ի հինգերորդում աւուրն զկայտառս՝ որ շարժին 'ի ջուրս հնչոց կենդանեաց, և զթռչունս որ թռչին 'ի վերայ երկրի, և զկէտս մեծամեծս, և զամենայն շարժողական բնութիւնս 'ի ջուրց, և զամենայն հնչից կենդանեաց, սողնոց և գազանաց և անասնոց չորքոտանեաց՝[1] յորս իցէ շունչ կենդանի ՚ի վերայ երկրի։ Իսկ ՚ի վեցերորդում աւուրն, այսինքն ՚ի սրբուհի ուրբաթն, ստեղծ Տէր Աստուած զմարդն ըստ պատկերի իւրում և ըստ նմանութեան, հող առեալ յերկրէ, և արար արու և էգ, և օրհնեաց զնոսա ասելով. Աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր։ Եւ կատարեաց Տէր Աստուած զամենայն զգործս իւր ՚ի վեցերորդ աւուրն, այսինքն ՚ի սուրբ ուրբաթս. որ և ՚ի սմին կատարեաց զմարմնաւոր տնտեսութեան իւր զգործսն։ Զի յայսմ սրբուհի աւուրս ՚ի վերայ խաչին բարձրացոյց զանարատ զձեռս իւր. վասն զի քաւութիւն թարգմանի զօրութիւն անուան սուրբ ուրբաթս. քանզի և այսպէս թարգմանի սպառազինութիւն պատերազմի և յաղթութիւն ընդդէմ բանսարկուին և չար դիւացն։ Զի և սպառազինեցաւ Տէրն և ընկճեաց զպատերազմողն և զանթիւ հակառակ զօրութիւնսն. ինքն միայն ՚ի ճակատուն եհար ՚ի ձեռն մարմնոյ իւրոյ և խաչի. վասն զի լարեաց որպէս աղեղն զխաչն, և ձգեաց որպէս նետ՝ զբեւեռս ձեռաց իւրոց և ոտից, ընդդէմ պատերազմող և նախաչար թշնամւոյն սատանայի և ամենածախ դըժոխոցն. զբեւեռ իմն աջոյ ձեռինն եհար ՚ի սիրտ բանսարկուին և եղեն զնա։ Իսկ զերկրորդ բեւեռն հար յամենակեր որովայն դժոխոցն և ելոյծ զնա. և զերրորդ բեւեռն եհար ՚ի մահն և սպան զնա. իսկ զչորրորդն՝ թառուցեալս իբրև տեսին զօրութիւնք դիւացն՝ զփախուստ և զընկղմունն ընկալան ՚ի ներհակէն։

---

[1] Ոչ 'ի հինգերորդում՝ այլ 'ի վեցերորդումն ստեղծան չորքոտանիքդ։

Եւ զի ՚ի նմին աւուրն որ կոչի ուրբաթ՝ ամենայն ստեղծուածք շարժեցան և տարերք սասանեցան, տեսանելով ՚ի վերայ խաչին զստեղծիչն մեր կախեալ՝ ճակատելով ընդդէմ թշնամւոյն, արեգակն խաւարեցաւ և լուսին յարիւն փոխեցաւ, և աստեղք ահիւ թօթափեցան։ Ի նմին աւուր վարագոյր տաճարին ցելաւ, և վէմք պատառեցան, և գերեզմանք բացան. ՚ի նմին աւուր քացախ և լեղի արբ Տէրն ՚ի խաչահանուացն, զդառնագոյն կերակուրն Ադամայ ՚ի քաղցրութիւն փոխարկելով. ՚ի նմին աւուր զամբիծ հոգին իւր աւանդեաց Տէրն առ Հայր իւր, շարժելով զհիմունս երկրի։ Ի նոյն սուրբ աւուրն գեղարդն զսուրբ կողս նորա եբաց, և բղխեաց երկուս հոսանս արեան և ջրոյ, և զԱդամ ընդ Եւայի մկրտեաց։ Ի նոյն սուրբ աւուրն զամենայն կատարեաց, և պատերազմեալ յաղթեաց, և զԹշնամին 'ի վայր անկեաց, և զբնութիւնս մեր Հօր մատոյց։ Զնոյն սրբուհի օրս պարտ է ամենայն քրիստոնէից պաշտել և պատուել, որպէս զսուրբ և խաչական չարչարանս Տեառն, խորշելով յամենայն տեսակէ մսեղինոյ և գինոյ, որպէս 'ի նմա եղեալ զենումն Տեառն և հեղումն անարատ արեան իւրոյ, և բաժակ լեղւոյ և քացախ ըմպեալ, և կամաւոր մահու համբերեալ. և զնա իսկ բազումք 'ի բարեպաշտից պատուեն և պաշտեն։

Զնա և երանուհին Պօլիտիա պատուէր և պաշտէր և մաքրապէս պահելով, որ և եհաս ցանկութեան իւրոյ։ Վասն զի էր երանուհիս այս Պօլիտիա 'ի քաղաքէն Հռովմայ, ունէր և լծակից հաւատարիմ և քրիստոնեայ, որոյ անուն էր Աղղաթոնոս, ընչեղ յոյժ և պատուով սպարապետ։ Սոքա փոյթք էին 'ի պատուիրանս Աստուծոյ պահովք և տքնութեամբ և անդադար աղօթիւք պատուելով զսրբուհի զօրս զայս, և աղաչէին զԱստուած տալ նոցա զաւակ, վասն զի ամուլք համարեալք էին։ Եւ լուաւ Տէր Աստուած աղօթից նոցա՝ որպէս Աննայի մօր մարգարէին Սամուէլի, և ետ նոցա պտուղ որովայնի. և յղացեալ ծնաւ մանուկ էգ, զարժանագովն Պարասկեւի, զառաքինութեան պատկերն, զնմանն Փրկչին մերոյ Յիսուսի, զխօսակիցն հրեշտակաց, զոր ծնեան յաւուրն Քրիստոսի, այսինքն 'ի մեծի ուրբաթու չարչարանաց Տեառն և խաչելութեանն. և բազում ուրախութեամբ լցեալ՝ ետուն փառս Աստուծոյ։

Եւ իբրև եղև մանուկն աւուրց ութից, տարակուսէր յաղագս նորա մայրն իւր եթէ զինչ յորջորջէ զանուն նորա. իսկ 'ի ձեռն տեսլեան գիշերոյն, եկաց առ նմա հրեշտակ Տեառն և ասէ ցնա. Պօլիտիա։ Եւ նա ասէ ցնա. Զի՞ է, Տէր։ Իսկ նա ասէ ցնա. Եւ զի մանուկդ... թէ... այսպէս կոչեա զանուն դորա Պարասկեւի, որ թարգմանի Ուրբաթ. և զի դա գյոլովս մերձ կացուսցէ Տեառն, և բազումք 'ի ձեռս դորա դարձցին 'ի Տէր։ Եւ զարթուցեալ 'ի քնոյն երանուհին Պօլիտիա, և համարէր զյայտնութիւնն զայն յԱստուծոյ լեալ, և ցնծացաւ յոյժ։ Եւ մատուցեալ զնա առ քահանայն՝ մկրտեաց, և անուանեաց զնա Պարասկևի, ըստ յայտնութեան հրեշտակին։ Իսկ 'ի յաւուրսն յայնոսիկ աճէր մանուկն և զարգանայր և շնորհքն Աստուծոյ էր 'ի վերայ նորա։ Եւ մայրն նորա վասն նախասացութեան հրեշտակին և անուան մանկանն, կայր պահելով զաւուրբ ուրբաթուն օրն մինչև ցերեկոյն, ոչ հաց ճաշակելով և ոչ ջուր, այլ կեայր պահելով և աղօթելով զբոլոր օրն. նա և ոչ զստինսն տայր մանկանն յաւուր ուրբաթուն, այլ մանաւանդ առ պիտոյն աղքատաց բաւականանայր. զքաղցեալս կերակրէր, զծարաւիս արբուցանէր, զմերկս զգեցուցանէր, զօտարս ժողովէր. մինչ զի գրեթէ զամենայն պատուիրանս Քրիստոսի կատարէր յաւուր ուրբաթու, իբրու զի և տաճար շինեաց յանուն մանկանն՝ 'ի փառս Աստուծոյ։

Իսկ իբրև եղև մանուկն տասն ամաց՝ ուղղէր զամենայն առաքինութիւնս բարեաց, պահս, տքնութիւնս և աղօթս անդադար, և սէր առնելով և ողորմութիւն առ ամենեսեան. և ոչ պակասէր 'ի կանխելոյ 'ի սուրբ... դեցաւ.[1] բնաւ պարարտ կերակրոց։ Եւ ինքն երկոտասան ամաց դեռ ոչ ևս լինելով, ծնողքըն նորա յառժամեան կենցաղոյս փոխադրեցան, արժանացեալք և ինքեանք փառացն Աստուծոյ։ Իսկ մանուկն որբացեալ 'ի ծնողացն՝ բաշխեաց զամենայն գոյսն նոցին՝ կարօտելոց, և ետ զինքն 'ի ճգնութիւնս պահոց և հսկմանց և ժուժկալութեան որ յաղօթս. մինչ զի զարմանալի լինէր մանուկն յամենեցունց՝ 'ի գործս բարեաց. վասն զի էր պարապեալ 'ի հոգւոյն սրբոյ։ Որով և երթեալ յԵրուսաղէմ՝ երկիր եպագ ամենայն սուրբ տեղեացն, և դարձեալ վերստին եկն 'ի հայրենիսն իւր, դեգերելով 'ի ճգնութիւնսն։ Անդանօր տուաւ նմա և շնորհս յԱստուծոյ, որպէս զի բժշկեաց զամենայն ցաւս և զհիւանդութիւնս. որ և բազում խլից արար լսել 'ի ձեռն աղօթից իւրոց, և կուրաց տեսանել և կաղաց գնալ, համերց խօսել և բազում դիւահարս բժշկեաց, և անդամալուծս յոլոյս ողջացոյց, և մեռեալս յարոյց։ Եւ զոմն 'ի Թագաւորեալ քաղաքն յորովայնէ մօր իւրոյ՝ զմի ոտն զաջոյ գօս ունելով՝ ողջ կացոյց, և շնորհեաց նմա գնալ. որով և ընդ ամենայն գաւառն ընթացաւ համբաւ նորա, և ամենեքեան գային առ նա ոյք 'ի ցաւոց ըմբռնեալք էին, և զամենեսեան բժշկէր 'ի ձեռն աղօթից յոր ինչ և ախտս ըմբռնեալք էին՝ անուամբ Քրիստոսի։ Եւ լցաւ ամենայն Հռովմ բարեգործութեամբք նորա և բժշկութեամբքն, և ամենեքեան փառաւորէին զԱստուած. որ և բազումք 'ի Հելլենացւոցն տեսեալք զոր առ 'ի նմանէ զսքանչելիսն, դառնային և մկրտէին յանուն Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն։

---

[1] Պակասէ տող մի։

Եւ զկնի այսորիկ ասէր ինքն առ ինքն, եթէ ոչ մատնեցից զմարմին իմ 'ի չարչարանս և 'ի մահ կատարեալ՝ վասն Քրիստոսի, պսակազգեաց ոչ գտայց Քրիստոսին իմոյ։ Եւ էր այս 'ի ժամանակս Անտոնինոս արքային. էջ նա ապա 'ի շէնս Հրէից, և մեծաձայն ձայնիւ քարոզէր զՔրիստոս Ճշմարիտ Աստուած, և գոչելով, Քրիստոնեայ եմ, քրիստոնեայ։ Իսկ արտաքս ելեալ ամբոխքն Հրէից և հեթանոսաց, կալան զնա և կացուցին առաջի դատաւորին և ասեն. Մոգ է, և դարձուցանել կամի զմարդիկ 'ի պաշտելոյ զաստուածսն մեր։ Քանզի ընդ աւուրսն ընդ այնոսիկ թագաւորեաց 'ի Հռովմ թագաւոր Անտոնինոս ամպարիշտ, և դժնեայ և սատանայական խորամանկութեամբ ըմբռնեալ 'ի զօհել և 'ի պաշտօնատար լինել կռոց, և բազում հալածանս յարոյց ընդդէմ քրիստոնէից. քանզի կրճտէր զատամունս զայրագնելով ընդդէմ նոցին։ Լուաւ իսկ և զբարի համբաւ զերանուհւոյն Պարասկևէ և զսքանչելեաց նորա, եթէ անուամբն Քրիստոսի կատարէ բժշկութիւնս, և ցասեաւ յոյժ. և առաքեաց սպասաւորս և ասէ ցնոսա. Երթայք ածէք ինձ զմոգն զայն զանարգողն աստուածոց մերոց։ Իսկ նոցա երթեալք ըմբռնեցին զնա և ածին առ թագաւորն. և տեսեալ զնա թագաւորն՝ ասէ. Ուստի՞ ես, և զի՞նչ է անուն քո, և յո՞ր պաշտաման ես։ Իսկ սրբուհին ասէ. Թէ կամիս ուսանել, լուր, թագաւոր. 'ի յայսմ քաղաքէ Հռովմայ գոլով իմ, և անուն իմ Պաբասկեւի կոչի. քրիստոնեայ ծնողաց և մեծատան զաւակ, և 'ի նոցին պաշտօնն եմ։ Թագաւորն ասէ. Զո՞ր Աստուած պաշտես։ Սրբուհին ասէ. Զհայր և զՈրդի և սուրբ Հոգին. 'ի մանկութեան հասակէ ուսայ երկիր պագանել և հաւատալ 'ի մի զերիսն գլխաւորեալ աստուածութիւն, 'ի ձեռն որոյ եղև ամենայն երևելիք և աներևոյթք, և ամենայն ուղղեալ առաջնորդին նովաւ։ Թագաւորն ասէ. Գադարեա 'ի բարբանջմանէդ յայդմանէ, և զոհեա աստուածոց՝ զոր ես պաշտեմ. քանզի տեսանեմ զքեզ քաջավայելչապէս գեղով զարդարեալ յոյժ, որ և թուի ինձ ազնուական լինել քեզ. եթէ լսես ինձ, մշտայաղթ աստուածովքն՝ ածից զքեզ 'ի պալատ իմ, և պսակեսցիս ընդ որդւոյ իմոյ։ Եւ սրբուհին ասէ. Որո՞ց աստուածոց ասես զոհել, քարեղէն և փայտեղէն կռոց անշնչից. վասն որոյ և մարգարէն ասէ. Բերան ունին և ոչ խօսին, աչս ունին և ոչ տեսանեն, ականջս ունին և ոչ լսեն, ունչս ունին և ոչ հոտոտին, ձեռս ունին և ոչ շօշափեն, ոտս ունին և ոչ գնան. նման նոցա եղիցին որք արարին զնոսա, և ամենեքեան որոց յուսացեալ են 'ի նոսա. քանզի ոչ են աստուածք զոր ասես, ով թագաւոր, այլ գործք մարդկան և բնակարանք դիւաց։ Իսկ ես պաշտօնեայ եմ Աստուծոյ կենդանւոյ և ճշմարտի՝ արարողին ամենայնի, որոյ և որդւոյ նորա հարսնացեալ եմ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր դու անգէտ լեալ՝ դիւաց զոհես։ Թագաւորն ասէ. Խնայեա 'ի մարմին քո, և զոհեա աստուածոցն Ապողոնի և Հերակղի և մեծի աստուծոյն Արտեմոնի, և պսակեսցիս ընդ որդւոյ իմոյ. ապա եթէ մնաս 'ի նոյն յամառութեան՝ 'ի դառն տանջանս մատնեցից զքեզ, և արարից քեզ ուրանալ զաստուածն քո զոր ասես։ Իսկ սրբուհին ասէ. Բարէատեայ շուն գաղտածախ, սակս տանջանաց քոց ուրանամ զՔրիստոսն իմ. նզովեալ ես դու ընդ աստուածոց քոց և որդի քո և պսակն քո։

Լուեալ զայս թագաւորն՝ ցասեաւ յոյժ, և դէմք երեսաց նորա շրջեցաւ, և ասէ ցսպասաւորսն. Ջեռուցէք սաղաւարտ և դիք 'ի գլուխ նորա, որպէս զի վաղվաղակի 'ի կենաց սատակեսցի։ Վկայուհին ասէ. Ոչ 'ի քէն երկնչիմ, և ոչ տանջանարանք քո մերձեսցին 'ի յիս: Իսկ սպասաւորքն արարին զհրամայեալն և եդին 'ի գլուխ նորա, և սրբուհին կայր անվնաս, ոչ ընաւին վնասեալ: Եւ հրամայեաց Թագաւորն հատանել զըստինսն նորա, և այնպէս ածել 'ի բանտն. և հրամայեաց 'ի բանտին պարզել զնա և տարածել 'ի չորից, և բևեռել 'ի տախտակ զձեռս և զոտս նորա, և վէմ մի ամենամեծ բառնալ 'ի քառասուն արանց և դնել 'ի վերայ լանջաց նորա, որպէս զի խորտակեսցի, և այնպէս պահել զնա մինչև ցերկուս աւուրս: Եւ սպասաւորքն արարին որպէս հրաման ետ Թագաւորն. և սրբուհին կալով 'ի ներքոյ վիմին աղօթէր և ասէր. Դատեա, Տէր, զդատիչսն իմ. մարտիր ընդ որս մարտնչին ընդ իս. առ զզէն և զասպար, և արի՛ յօգնել ինձ. զի պարծեսցայց եթէ առ 'ի քէն ընկալայ զյաղթութիւն. և քո Թագաւորութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս: Զայս աղօթելով սրբուհւոյն, իսկոյն հնչեաց հողմ ուժգին և մրրիկ, և բարձաւ վէմն որ կայրն 'ի վերայ նորա, և յարեաւ վկայն Աստուծոյ անվնաս, ոչինչ սպի ունելով ամենևին 'ի մարմին, և յարուցեալ ինքնին կանգնէր ամբողջ: Իսկ զինուորքն որք կային առնմա, տեսեալք զեղեալն՝ գոչեցին մեծաձայն. Փառք քեզ, Աստուած, որ առնես զսքանչելիս: Եւ ասեն ցսրբուհին. Մեծ է Աստուած քո. հաւատամք և մեք 'ի նա, և աղաչեմք զքեզ, աղախին Քրիստոսի, անյիշաչար լեր առ մեզ, և մի՛ յիշեր զչարչարանսն՝ զոր ածաք 'ի վերայ քո, այլ մատո զմեզ Քրիստոսի: Իսկ սրբուհին արար 'ի նոսա զնշան սրբոյ խաչին, և ասէ. Օծցին սոքա յանուն Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն. ահա ընկալաւ զձեզ Քրիստոս:

Եւ Թագաւորն լուեալ զեղեալն, առաքեաց և բերեալ կացոյց զնա առաջի իւր և ասէ. Ո՞չ ասացի քեզ եթէ 'ի դառնագոյն տանջանս ունիմ արկանել զքեզ, զոր ոչ կարես բառնալ: Սրբուհին ասէ. Եւ ո՞չ ասացի քեզ եթէ յուսամ յԱստուած իմ և ոչ երկնչիմ 'ի սպառնալեաց քոց, անմաքուր շուն: Իսկ Թագաւորն լցեալ ցասմամբ, հրամայեաց բերել տապակ ձիթով և արկանել 'ի նա կապար, և ջեռուցանել ուժգին մինչև հալեսցի կապարն. և իբրև հրաշիկացաւ[1] կաթսայն, և կապարն հալեցաւ, հրամայեաց արկանել զնա 'ի կաթսայն. և 'ի բորբոքեալ բոցոյն շուրջանակի եռայր տապակն գոչելով. որ և զինուորքն 'ի ցնդմանէ կապարին ոչ կարէին մերձ գնալ, այլ 'ի հեռուստ կացեալք հայէին: Եւ ընկեցին զսրբուհին 'ի կաթսայն, և սուրբ վկայն Քրիստոսի կայր անդ աղօթելով զտիւն և զգիշերն, որպէս զի համարէր ամենեցունց և ոչ ոսկր նորա մնալ, զի ևս քան զևս բորբոքէին զհուրն:

Եւ զկնի վեց աւուրց հրամայեաց թագաւորն զինուորացն գնալ 'ի տեսանել թէ չիջեալ է հուրն, և ժողովել եթէ մնացեալ իցէ յոսկերաց նորա, և բերել առ նա զի մի՛ առցեն քրիստոնեայք և ունիցին իբրև զնշխարս: Իբրև գնացին 'ի տեղին զինուորքն, մինչ զտապակն բանային, եղև որոտումն սաստիկ յոյժ, յորմէ զարհուրեալ ամբոխին, և 'ի բացեայ կացեալք իբրև մղոն մի, տեսին զսրբուհին նստեալ 'ի մէջ տապակին՝ որպէս 'ի բուրաստանի, և փայլէր որպէս աստղ և իբրև զշառաւիղս արեգական, ունելով 'ի ձեռինն բաժակ ոսկեղէն լի կաթամբ և մեղերբ և հաց 'ի կերակուր: Եւ ասեն ցնա. Ճշմարտապէս մեծ է աստուածն քո. զի ահա հաւատամք մեք, զի նա միայն է Աստուած, և չիք ոք բայց 'ի նմանէ: Ասէ վկայուհին. Երթայք պատմեցէք թագաւորին զոր տեսէք: Եւ նոքա երթեալք պատմեցին: Եւ թագաւորին լուեալ՝ յարուցեալ գնաց տեսանել, եթէ արդա՛ր է զոր ասէին. և իբրև գնաց և ետես զնա 'ի մէջ կաթսային կալով, և փայլէր, բարկացաւ սպասաւորացն և ասէ. Ո՛վ չար ծառայք, ոչ երբէք հանգուցիք զանձն իմ, և արարիք որպէս հրաման ետու ձեզ, զի հալեալ էր կապարն: Եւ ասէ ցսրբուհին. Սրսկեա զի ծանեայց եթէ ջերմ իցէ կապարդ: Իսկ սուրբ կոյսն ասէ ցնա. Մերձ լեր առ իս, և ծանիցես. և իբրև մերձ եղև, էառ ձեռամբ իւրով յեռացեալ կապարէն, և սրսկեաց 'ի դէմս թագաւորին. և առժամայն կուրացաւ աչքն և դէմք նորա յետս դարձաւ. և գոչէր ցաւագին և ասէր. Ողորմեաց ինձ աղախին Քրիստոսի Ճշմարտին

---

[1] Յօր. հրաշացաւ:

Աստուծոյ, ճրագ ճշմարտութեան անսպառ լուսոյն, մի՛ յիշեր զտանջանսն զոր ածի 'ի վերայ քո, և մի՛ պատժեր զիս, քանզի բազում չարիս գործեցի 'ի քեզ. այլ անյիշաչար լեր առ իս, և շնորհեա ինձ զտեսութիւն աչացս և հաւատամ յԱստուածն քո։ Եւ սրբբուհին ասէ. Դու հաւատաս, եղկելի. այլ վասն մերձակայիցս զի հաւատասցեն, աղօթեմ առ Աստուածն իմ, և կարող է առնել զայդ։ Եւ աղօթեաց այսպէս. Աստուած, հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արարիչ ես և պարգևիչ աներևոյթ և երևելի լուսոյ, որ կամիս զի ամենայն մարդ կեցցէ և 'ի գիտութիւն ճըշմարտութեան եկեսցէ, մի՛ անտես առներ զաղաչանս աղախնոյ քոյ. այլ լուր ինձ և շնորհեա թագաւորիս զտեսանելն զլոյս, որպէս և էրն յառաջագոյն, և ըզդէմս երեսաց իւրոց. զի և ինքն հաւատասցէ եթէ դու ես Աստուած ամենազօր։ Զայսոսիկ աղօթելով և շիթս յարտասուացն իւրոց խառնեալ 'ի հող, և կաւ արարեալ 'ի ձեռին իւրում, ցօղեաց 'ի թագաւորն. և առժամայն դէմք նորա ուղղեցան, և եղև լոյս աչաց նորա առաւել քան զառաջինն։

Եւ տեսեալ թագաւորին զեղեալ մարդասիրութիւն Աստուծոյ յինքն, գոչեաց և ասէ. Մեծ է Աստուածն քրիստոնէից, որ 'ի քէն քարոզի. և առ ժամայն դիմեաց 'ի բոց հրոյն առ սրբուհին. և վկայուհին տարածեաց զձեռս իւր, էառ զնա առ ինքն, ոչ բնաւ մերձենալով հրոյն առ թագաւորն. և կալեալ զձեռանէ նորա եհան զնա 'ի կաթսայէն. և թագաւորն անկաւ յոտսն սրբուհւոյն և ասէ. Աղօթեաց ինձ աղախին Աստուծոյ, և տուր ինձ զկնիքն Քրիստոսի։

Եւ ամենայն քաղաքն եկեալք 'ի տեսութիւն սքանչելեացն, գոչէին միաձայն և ասէին. Մեծ է Աստուածն քրիստոնէից, որ առնէ սքանչելիս. որ և մերձեալ 'ի բաց կացոյց զթագաւորն 'ի կռոցն պաշտելութենէ, հաւատամք և մեք ամենեքեան 'ի կենդանի և 'ի ճշմարիտ Աստուած։ Եւ տեսեալ սրբուհին զփոխադրումն թագաւորին, կոչեաց զեպիսկոպոս քաղաքին, և մկրտեաց զթագաւորն և զայլս բազումս 'ի քաղաքէն, և յաւելադրեցան Տեառն յաւուրն յայնմիկ ժողովուրդք բազումք։

Եւ տեսեալ սրբուհւոյն եթէ հաճոյ իցէ Տեառն, ել 'ի քաղաքէն և գնաց յայլ քաղաք, յորում թագաւորէր ոմն Անթիմիոս, դաժան և տմարդի յոյժ։ Իսկ իբրև ել համբաւ սրբուհւոյն 'ի քաղաքն յայն՝ բարւոք գործոցն որ 'ի նմանէ կատարէր, և եհաս յականջս թագաւորին Անթիմիոսի, առաքեաց և եբեր զնա, և կացոյց առաջի իւր։ Եւ իբրև ետես զգեղ նորա, եհարց զանուանէն, և ուսեալ զհաւատեան՝ ասէ ցնա. Զո՞ր աստուած պաշտես, քանզի լուայ նշանս և սքանչելիս առ 'ի քէն կատարել։ Ասէ ցնա սրբուհին. Զմեծ Աստուածն պաշտեմ զհզօրն և զճշմարիտն, որ արար զերկինս և զերկիր և զամենայն որ 'ի նմա, զՏէրն մեր Յիսուս Քրիստոս։ Թագաւորն ասէ. Տեսանեմ զքեզ գեղով զարդարեալ և բազում վայելչութեամբ, և 'ի գութ շարժիմ առ քեզ, և լսեմ զքէն օտար խօսս և ապստամբութիւնս ասել զմեծացոյն աստուծոյ, և 'ի բարկութիւն շարժիմ. բայց եթէ լսես ինձ և զոհես աստուածոցն՝ զոր ես պաշտեմ, փրկութիւնք նոցին, զի հարսնացուցից զքեզ որդւոյ իմոյ, և բազմութիւնս ոսկւոյ և արծաթոյ տաց քեզ։ Սրբուհին ասէ. Ոչ ուսայ զոհել անշունչ կռոց բագնաց դիւաց. և ընդէ՞ր նեղես զիս յայսոսիկ՝ թողուլ զհրաշագործօղն, և մատչել Ապողոնի կորուչին ամենեցուն, կամ թողուլ զամբիծ մայր Տեառն մերոյ զՄարիամ Աստուածածինն, և երկրպագանել Արտեմի տիրուհւոյն դիւաց. վասն զի որք պաշտեն զնոսա, կորնչին ընդ նոսին. իսկ ես նզովս համարիմ զքեզ և զնոսա և զպսակ որդւոյն քո։ Եւ թագաւորն լցեալ ցասմամբ՝ ասէ. Ոչ թէ 'ի տանջանս արկից զքեզ, որպէս և կարծես, զի տեսեալ 'ի տանջանսն գթացայց. այլ 'ի բաց արկեալ կերակուր տամ զքեզ լինել օձից և վիշապաց, որպէս զի և ոչ աստուածն քո զոր պաշտես՝ ազատեսցէ զքեզ։

Եւ հրամանն ետ արկանել զնա 'ի վիհ ինչ, ուր բնակէին չարաչար գազանք և օձք և վիշապ մի ահաւոր, վասն զի անդ ընկենուին զամենեսեան որոց բարկանայր թագաւորն, մանաւանդ զքրիստոնեայսն՝ զորս կորուսանել ախորժէր, և ծախեալ լինէր 'ի նոցանէ։ Եւ տարեալք զսրբուհին սպասաւորքն՝ ընկեցին 'ի վիհրն գոլով կապեալ, և ինքեանք 'ի բացեայ կալով հայէին, եթէ զիարդ ծախեալ լիցի։ Եւ վիշապն չար որ անդ բուռնեալ կայր, ըստ սովորութեանն՝ որպէս ծախէր զամենեսեան՝ դիմեալ գայր առ սրբուհին. քանզի դժնեատեսակ գոլով և ահաւոր տեսլեամբ անմաքուրն այն որ էր մեծ յոյժ, շուրջ զամենայն տեղեաւն, և բերան նորա որպէս զջրհոր խոր յոյժ, և ժանիք նորա թզաչափ մի։ Իսկ սուրբ վկայն արարեալ յինքեան զնշան խաչին, և կոչեաց զՔրիստոս, և առժամայն գօսացոյց զնա, և ել 'ի վերայ նորա և ոտիւք իւրովք կոխան առնէր զնա. և վիշապն կափկափէր զատամունսն և դողայր։ Իսկ հոգին չար որ բուռնեալ կայր 'ի վիշապն, գոչեաց մարդկապէս և ասէ. Վա՜յ ինձ նուաստիս, յաղթեցայ 'ի փափուկ աղջկանէս, որ և երեսուն ամաց է և ութ ամսոց, և յաղթեալ հալածիմ աստանօր, որ ոչ ինչ յաղթել հանդերձեալ էի 'ի բիւրուց արանց։ Իսկ զինուորքն տեսեալք զսքանչելիսն՝ զի ծառայապէս դողայր վիշապն և ոչ իշխէր հայել, ընթացեալք պատմեցին թագաւորին. և թագաւորն լուեալ ել արտաքոյ քաղաքին տեսանել զեղեալն։ Եւ իբրև ել թագաւորն և ամենայն քաղաքն, տեսին զգազանն սատակեալ, և զաղջիկն զի գնայր 'ի վերայ նորա և խաղ առնէր զնա, զարմացան, և հաւատացին անձինք երկու հարիւր և վաթսուն և չորս, կանամբ և մանկամբ, և գոչեցին մեծաձայն և ասեն. Ճշմարտ...[1] սրբուհի աղջիկ Պարասկևի, աղաչեմք զքեզ և հաւատամք և մեք 'ի նա. և թագաւորն անկաւ յոտս սրբուհւոյն, հայցէր առնուլ զկնիքն Քրիստոսի։

Եւ սրբուհին առաքեալ կոչեաց երկիւղած քահանայս և սարկաւագունս 'ի քաղաքէն Հռոմայ, և մկրտեաց զթագաւորն և զամենայն քաղաքն զայն. և կացեալ առ նոսա ամ մի, ուսոյց նոցա զբանն ճշմարտութեանն՝ յոլով սքանչելիս կատարելով 'ի նոսա։ Իսկ իբրև ետես ամենագով աղախինն Քրիստոսի սուրբն Պարասկևի, եթէ հաճոյ է այն Տեառն, գնաց և յայլ քաղաք, որոյ անուն էր Երմուպոլիս. և պատահեաց անդ երրորդ անգամ այլում Թագաւորի, որոյ անուն էր Ասկղեպիոս, որ և մինչ քարոզէր զՔրիստոս, եհարց կալեալ զնա և ասէ. Ուստի՞ ես դու, կամ յորմէ՞ գաւառէ և ո՞ւր գնաս: Ասէ ցնա սրբուհին. Ո՛վ բռնաւոր, խաւարեալդ 'ի սատանայէ, ո՞վ ետ իշխանութիւն քեզ հարցափորձել զծառայսն Աստուծոյ: Իբրև լուաւ զայն բռնաւորն, ցասեաւ յոյժ և այլագունեցան երեսք նորա, և կրճտէր զատամունսն, ըսպառնալով աղախնոյն Աստուծոյ. և ասէ ցամբոխն. Կացուցէք տապակ, և բերէք նաւթ և ձիւթ և որթ և կապար. և խառնեալ կիր արկէք 'ի նմա, և զաւուրս եօթն այրեցէք. զի ոչ է պարտ Թեթևագոյն տանջանօք սպանանել զդա: Եւ իբրև արկաւ սրբու...[1]: Աստուած, ողորմեաց ինձ, վասն զի 'ի քեզ յուսացաւ անձն իմ: Իսկ զկնի աղօթիցն, պատառեցաւ տապակն և եղև 'ի չորս մասունս, և հրակիզեալ եսպան զորս շուրջն կային. բայց մնաց միայն Ասկղեպիոս ընդ երկու դահճացն. որ և նստեալ լայր դառնապէս և ասէր. Վա՜յ ինձ, զի՞նչ արարից. քանզի յաղթեցայ 'ի միոյ կնոջէ, մանաւանդ 'ի կախարդէ. որոյ ոչ յաղթեաց տանջանքս իմ այս ամենայն, և հրաման ետ դահճացն արձակել զնա:

---

[1] Պակասէ տող մի։

Իսկ սուրբն կամեցաւ դառնալ 'ի հայրենիսն իւր 'ի Հռոմ. քանզի ասէր յինքեան, եթէ ոչ 'ի ձեռն որոյ կատարիմ՝ զպսակ նահատակութեան կատարեալ ոչ հիւսիցեմ: Եւ դարձաւ սրբուհի վկայն 'ի Հռոմ. և եղև վախճանել Անթիմիոսի Թագաւորի որ 'ի նմանէ լուսաւորեցաւ և հաւատաց 'ի Քրիստոս: Եւ Թագաւորեաց այլ Թագաւոր Տարասիոս անուն նորա, և էր նա դժպհի և ամպարիշտ և պաշտօնատար կռոց, որ և առաւելագոյն հալածումն յարոյց ընդդէմ քրիստոնէից: Եւ լուեալ զսրբուհւոյն Պարասկևէ, եթէ սքանչելիս կատարէն 'ի նմանէ, առաքեալ կացոյց զնա առաջի իւր մերձ նայելով իւր և մեծամեծաց իւրոց: Եւ իբրև եկաց 'ի միջի սրբուհի վկայն, ասէ Թագաւորն ցմեծամեծս իւր. Ճանիջիք զմոգս զայս որ զբազում ապստամբեցոյց յաստուածոցն. վասն զի բազում լուայ վասն սորա, և աստուածոցն իսկ բարկացեալ մատնեցին զդա 'ի ձեռս իմ:

---

[1] Պակասեն երեք տողք:

Եւ դարձաւ առ վկայուհին և ասէ. Լուայ վասն քո բազում սքանչելիս առնել. և արդ պատմեա մեզ եթէ զո՞ր պաշտօն պաշտես, կամ ո՞վ է որ ուսոյց քեզ առնել զմոգութիւնդ զայդ: Սրբուհին ասէ. Ի պաշտօնս քրիստոնէական եմ, և մոգութիւն ոչ եմ ուսեալ որպէս դուդ ասես. արդ կոչեմ զՏէրն իմ Յիսուս Քրիստոս զորդին Աստուծոյ կենդանւոյ, և նա շնորհէ ինձ զոր ինչ հայցեմ 'ի նմանէ. որով և դու, Թագաւոր, լուր ինձ և հաւատա 'ի նա և ունիցիս զթագաւորութիւնն յաւիտենական. զի 'ի ձեռն նորա թագաւորք թագաւորեն և հզօրք գրեն զերկիր: Եւ թագաւորն ասէ. Պարասկեւ, զոր Հրեայքն խաչեցին, և քացախ և լեղի արբուցին, աստուա՞ծ խոստովանիս. զոր և խաղ արարեալ պսակեցին փշովք և եղեգն եդին 'ի ձեռին, աստուա՞ծ պատմես. որ 'ի խաչին մեռաւ, և տեսին զնա մեռեալ և գեղարդեամբն բացին զկողն, աստուա՞ծ տեսանես, և կենդանի աստուածոց ոչ զոհես, Ապողոնի և Հերակղի և մեծ աստուածուհւոյն Արտեմեայ: Եւ սրբուհին ասէ. Խաբիս թագաւոր, քանզի սոքա աստուածք քո՝ գործք ձեռաց են մարդկան և բնակարանք դիւաց, կացեալք 'ի մոլորութիւն մարդկան. իսկ զոր խաչեալ և մեռեալ ասես, նա գոլով է որդի Աստուծոյ կենդանւոյ և Աստուած ճշմարիտ, և իւր մարդասիրութեամբն կամաւոր չարչարանաց համբերեաց և խաչ ստորընկալաւ, և զմահ ճաշակեաց, զի զմեզ անմահացուսցէ. և զայն իմն կրեաց որպէս մարդ, և զօրութեամբ կարողութեամբ իւրոյ զմահ խափանեաց, և որպէս զԱստուած՝ զդժոխս աւերեաց, և զննջեալքս յարոյց, զշաւիղս առաջնորդեաց զերկնից արքայութեանն:

Թագաւորն ասէ ցնա. Ողորմիմ արեգակնակերպ գեղոյ քո՝ արկանել 'ի տանջանս, զոր ունիմ մատուցանել քեզ, զոր ոչ կարես բերել, եթէ ոչ հաւանիս զոհել աստուածոցն: Սրբուհին ասէ. Մի՛ ողորմիս մարմնոյ իմոյ, որ առժամայն երևի և այգուցն թառամի. արա զոր ախորժես, վասն զի ես ոչ խնայեմ 'ի մարմին իմ՝ յաղագս հոգւոյ իմոյ. և ոչ իսկ զօրես 'ի ձեռն տանջանաց քոց որոշել զիս 'ի Քրիստոսէն իմմէ։

Իսկ Թագաւորն հրամայեաց ընկենուլ զնա 'ի գուբ մի չորային, յորս բնակէին բազմութիւնք սողնոց, զի 'ի նոցանէն ծախեսցի։ Իսկ սպասաւորքն ածին զնա ուր էր գուբն։ Եւ սրբուհին ասէ ցդահիճսն. Փոքր մի համբերեցէք ինձ, որպէս զի աղօթեցից առ Աստուածն իմ. և տարածեալ զձեռս իւր յերկինս՝ աղօթեաց առ Աստուած և ասէ. Լուր, Տէր, ձայնի իմում յաղաչել իմ առ քեզ, և 'ի համբառնալ ձեռաց իմոց առ տաճար սուրբ քո, մի՛ անտես առներ զաղաչանս աղախնոյ քո, և արա զգուբս զայս երկիր հաստատուն, զի մի՛ գազանակեր լիցին մարմինք յուսացելոց 'ի քեզ, որպէս զի և բազմաց տեսեալք հաւատասցեն յանուն սուրբ քո։ Եւ վաղվաղակի մեծագոյն շարժ եղև 'ի տեղին յայն, և եղև գուբն երկիր հաստատուն, և սողունքն որ բնակեալք էին 'ի նմա՝ սատակեցան, և բազմութիւնք դիւացն յայտնապէս ղօղանջելով զփախուստ ընկալան, հալածեալք 'ի հրեշտակական զօրաց։

Զոր տեսեալ դահճացն և ամբոխին որք եկեալ էին 'ի տեսիլն, և իբրև տեսին զհրաշափառ եղեալ նշանն՝ վերաձայնապէս գոչեցին մեծաւ բարբառով և ասեն. Մեծ է Աստուածն քրիստոնէից, որ յաղախնոյս իւրոյ յայտնանէ քարոզի. և ոչ գոյ այլ Աստուած բայց 'ի նմանէ։ Իսկ Թագաւորն տեսեալ զամբոխն խռովեալ և յերկու բաժանեալ, և զօտար սքանչելիսն եղեալ, երկեաւ զի մի՛ գուցէ ձեռն արկցեն յինքն. և կոչեաց առ իւր զսինկղիտոսսն և ասէ ցնոսա. Զի՞նչ արասցուք մոգիս այսմիկ, զի ոչ զօրեմք լինել առ նմա։ Եւ նոքա ասեն ցնա. Եթէ ոչ սրով կատարեսցի, ոչ զօրեմք առնել ինչ նմա տանջանօք, զի մի՛ զամենայն քաղաքս շարժեսցէ և արմատաքի խլեսցէ զամենեսեան յաստուծոյն։ Եւ Թագաւորն հաւանեալ նոցա՝ հրամայեաց սրով հատանել զգլուխ նորա։

Իսկ դահճացն առեալ զսրբուհին՝ ածին 'ի տեղին ուր հանդերձեալ էր կատարել։ Ասէ վկայուհին ցդահիճսն. Համբերեցէք սակաւիկ մի զի աղօթեցից առ Տէրն իմ։ Եւ նոքա ասեն. Աղօթեա որպէս և կամիս։

Եւ սրբուհին խոնարհեցուցեալ զծունկսն իւր յաղօթըս և ասէ. Աստուած հարցն, Հայր ամենակալ, արարիչ և հրաշագործող ամենայնի, որ ես Հայր օրհնեալ Որդւոյ քո Յիսուսի Քրիստոսի, լուր ինձ անարժան աղախնոյս քոյ, զի որ ոք կոչեսցէ զանուն իմ 'ի վտանգս, կամ 'ի դատաստանս, և եթէ 'ի տրտմութեան իցէ, և եթէ նեղեալ իցէ յանմաքուր այսոց, բժշկեսցի 'ի ցաւոց իւրեանց, և մի լիցի 'ի ծննդոց նոցա խեղ կամ հաշմանդամ. և որք պատուեն զօր իմ զուրբաթի՝ պահօք և սրբութեամբ, զօր և պատուիրեաց Տէրն մեր Յիսուս Քրիստոս Միածին որդին քո, որ և խաչեցաւ 'ի նմա, և բացաւ գեղարդեամբ կող նորա, մի ամաչեսցեն առաջի ահաւոր բեմի քո, այլ ժառանգորդք գտցին արքայութեանն երկնից. և որ ոք պահեսցէ սրբութեամբ զօրս իմ, կամ ընթասցի 'ի տաճարս իմ, մի մերձեսցի առ նա փորձութիւն բանսարկուին, փրկեա զամենեսեան 'ի նեղութենէն յայնմանէ. և որ ոք նեղեսցի 'ի դիւական և յանմաքուր ոգւոց և յիշեսցէ զիս, ազատեա զնոսա, Տէր, յայնմ վտանգէ: Տուր, Տէր, և որոց կատարեն զյիշատակ իմ և զմարտիրոսութեան ճգնութիւնս իմ գրեսցեն, շնորհեա նոցին զհայցուածս իւրեանց. և մի եկեսցէ 'ի բնակութիւն նոցին դիւական ներգործութիւնք. Լուր ինձ, Տէր Աստուած իմ, առաւել այնոցիկ որք պահեն զուրբ օրն ուրբաթու, յորում խաչեցաւ Որդի քո, ազատեա զնոսա յամենայն ցաւոց ախտից և յանգամանէ չարին. և ոյք հաւատով կատարեն զյիշատակ իմ, տուր նոցա օրհնութիւնս 'ի ցորենոյ, գինւոյ և ձիթոյ, և զամենայն մեղս նոցա ջնջեա, և զհոգիս իմ, Տէր, ընկալ խաղաղութեամբ:

Եւ զայս ասացեալ՝ ձայն եղև յերկնից առ նա որ ասէր. Լսելի են աղօթք քո, զօրացիր և եկ առ իս, պատուական աղջիկ Պարասկեւի, և ընկալ զյաւիտենական բարիսն. և վասն որոյ հայցեցեր՝ շնորհեմ քեզ, և ամենեցուն որոց կոչեն զքեզ՝ հարիւրապատիկ տաց նոցա զոր ինչ և խնդրեն:

Յայնժամ ասէ ցդահիճսն. Եկայք, արարէք զհրամայեալսն ձեզ: Եւ տարածեալ զպատուական պարանոցն, հատին զգլուխ սրբուհւոյն: Եւ հրեշտակք աւեալ զամենամաքուր հոգի նորա մատուցին Աստուծոյ յերկինս։ Իսկ զպատուական նշխարս նորա՝ առին ոմանք որոց անուանքն Թէոտիմոս և Տիմոթէոս. և մոմեղինովք և խնկովք մեռոնեալք՝ մաքուր կտաւովք եդին 'ի տապանակ, 'ի գերեզման փորուածոյ, և եդ զնա 'ի բնակութեան իւրոյ։ Որ և շեղջ նշխարաց նորա բղխէ բժշկութիւն՝ որոց հաւատով հայցեն մինչև ցայսօր. որով և յայնժամ 'ի նշխարացն որ եղեն սքանչելիք՝ հաւատացին 'ի Քրիստոս ինն հարիւր և իննըսուն և ինն հոգի, թող զկանայս և զմանկտի։

Վկայեաց սրբուհի վկայն Քրիստոսի Պարասկևի առ երից թագաւորաց, Անդոնիու, Անթիմիու և Տարասիու, զոր ոմանք Ասկղեպիու ասեն, յամսեանն հոկտեմբեր չորեքտասան. իսկ մեզ քրիստոնէից թագաւորելով Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում փառք և կարողութիւն յաւիտեանս յաւիտենից։

Վկայաբանութիւն Սրբոյն Պետրոսի Աղեքսանդրու Հայրապետի։

Ի թագաւորութեանն Դիոկղետիանոսի կայսեր, էր հալածումն մեծ ընդ ամենայն իշխանութիւնս նորա. յայնժամ կալան զերանելի եպիսկոպոսապետն Պետրոս՝ զօրականք թագաւորին, և արկին 'ի բանտ. և ծանուցին թագաւորին Դիոկղետիանոսի զըմբռնումն նորա և զպահելն 'ի բանտին. և նա հրամայեաց փութով սպանանել զնա։ Եւ 'ի գալ գրոյն՝ փութային սպասաւորքն կատարել զհրամանն։ Եւ իմացեալ ժողովրդոցն՝ մերձ կային առաջի դրաց բանտին, և պահէին զհովիւն իւրեանց և ասէին. Նախ զմեզ սպանէք և ապա զառաջնորդն և զվերատեսուչ հոգւոց մերոց։ Բազում հոգ էր այնուհետև զօրականացն՝ թէ որպէս զնա սպանցեն, և անվնաս զժողովուրդն պահեսցեն։ Քանզի բազումք էին, արք և կանայք, ծերք և մանկունք, երիտասարդք և կուսանք, նա և միայնակեացք և բազմակեաց եղբարք, զմի պնդութիւն հանդերձ արտասուօք ցուցանէին։ Եւ 'ի գլխաւորացն տեղի տուեալ, զի մի 'ի ժողովրդեան խռովութիւն յուզեսցի յամբոխէն՝ գաղտ խորհէին կորուսանել զերանելին։ Եւ իմացեալ Արիոսի՝ որ որոշեալն[1] էր 'ի Պետրոսէ 'ի սուրբ հայրապետէն, մի գուցէ նա վկայութեամբ կատարեալ փոխեսցի, և մնասցէ ինքն անլուծանելի յորոշմանէն, ժողովէ երիցունս և սարկաւագունս[1], և նենգաւ աղաչէ զնոսա, զի աղաչեսցեն ըզսուրբ հայրապետն լուծանել զնա 'ի կապանաց և յուրոշմանէն: Եւ նոցա բարեպաշտութիւն զայն վարկանելով՝ չոգան 'ի բանտն յաղագս Արիոսի աղաչել զեպիսկոպոսապետն. և անկեալք առաջի հայրապետին Պետրոսի՝ ասեն ցնա. Աղաչեմք զքո սրբութիւնդ, որ վասն մեր հաւատացելոցս ընտրեաց զքեզ Աստուած 'ի վերակացութիւն և 'ի պատիւ փառաւորեալ անուան իւրոյ, խոստովանութեամբ հաղորդել չարչարանաց Քրիստոսի նորա, և մահու չափ նահատակել յաղագս ճշմարտութեան. քանզի արժանի ես վկայութեան և պսակի: Եւ արդ հանդերձեալ ես փոխիլ կամօքն Աստուծոյ առ այն՝ առ որ անձկացեալ ես. աղաչեմք վասն Արիոսի զի լուծցես զնա յորոշմանէն: Իսկ սուրբ եպիսկոպոսն կարկառեալ զձեռսն՝ ասէ մեծաձայն. Վասն Արիոսի՞ աղաչէք. Արիոս որոշեալ եղիցի յայժմու յաւիտենից և 'ի հանդերձելումն՝ 'ի փառաց որդւոյն Աստուծոյ: Եւ յասել Պետրոսի հայրապետի զայս, ահ կալաւ զամենեսեան՝ և ոչ կարացին պատասխանի առնել, քանզի ահիւ ըմբռնեցան, որպէս 'ի գիտութենէ իմն զայս պատասխանի առնել նոցա: Եւ տեսեալ երանելւոյն զժառանգաւորսն տրտում և տխուր, առնոյր առանձինն զԱքեղաս և զԱղեքսանդրոս զերիցունսն, և ասէ ցնոսա. Զի Աստուծոյ զօրացուցեալ զիս այսքան՝ պարտ է կատարումն ընդունել վըկայութեամբ և արեամբ, քանզի յայտնեաց Աստուած ինձ. և դու Աքեղաս հանդերձեալ ես զկնի իմ նըստել յաթոռ հայրապետութեանս, և զկնի քո եղբայրդ Աղեքսանդրոս՝ ըստ փոխելութեան քո ժառանգելոց է: Եւ զի մի համարիցիք անգութ գոլ զիս և անախտակիր, զի ես այր մեղաւոր եմ, և ոչ յինէն նզովեցի զԱրիոս՝ այլ յԱստուծոյ, որ եցոյց ինձ զնորա. յայսմ գիշերի կատարեալ իմ զսովորական աղօթսըն և դեռ ևս յաղաչանս էի, և խնդրէի 'ի բարերարութեանցն Աստուծոյ զողորմութիւն. տեսանէի լուսաւոր և շքեղաւոր մանուկ մի ահաւոր տեսլեամբ, որպէս թէ ամաց երկոտասանից. որոյ դէմքն լոյս փայլուտակէին, և տունն լի եղև 'ի լուսոյն. զգեցեալ պատմուճան կտաւի, և 'ի պարանոցէն և 'ի լանջացն՝ յառաջոյ կողմանէ մինչև 'ի խոնարհ՝ պատառեալ յերկուս մասունս, և զսկզբունսն զերկոսեանսն 'ի լանջսն պնդեալ զպատառուածս պատմուճանին, հայեցաւ յիս և զգիտութիւն եցոյց ինձ. և իմ զարհուրեալ՝ բացի զբերան իմ և ասեմ. Տէր, ո՞ պատառեաց զքո պատմուճանդ: Պատասխանի ետ և ասէ. Արիոս պատառեաց զպատմուճանս իմ. այլ տես, մի՛ համարիր զնա 'ի հաւասարութիւն եկեղեցւոյ, քանզի ահա հանդերձեալ են աղաչել զքեզ 'ի վաղիւն վասն նորա, տես մի՛ հաւանեսցիս լուծանել զնա 'ի կապանաց նորա. պատուիրեա Աքեղայ և Աղեքսանդրի երիցանց՝ որ փոխանորդելոց են զկնի քո ունել զեկեղեցի իմ, զի մի՛ զնա ընդունիցին: Քանզի դու հանդերձեալ ես վկայութեամբ զընթացս քո կատարել, և զանթառամ պսակն ընդունել 'ի յաղթանակ մարմնոյդ: Զայս ասելով աներևութացաւ մեծ տեսիլն. արդ ասացի ձեզ և զհրամայեալսն պատմեցի. դուք գիտէք, եղբարք, զմուտն մեր առ ձեզ, որպէս եղեաք առ ձեզ զամենայն աւուրս կենաց մերոց, ծառայել Աստուծոյ կենդանւոյ ճշմարտի ուղղափառ հաւատով՝ որ 'ի Հայր և յՈրդի և 'ի սուրբ Հոգին. և զփորձութիւնսն հանդիպեալ 'ի դրժողաց հերձուածողաց և 'ի հալածանաց[1] մոլորելոց կռապաշտիցն 'ի տեղիս տեղիս, 'ի Միջագետս Ասորւոց, և 'ի Փիւնիկէա և 'ի Պաղեստին և 'ի կղզիս հեռաւորս, գրով և անգիր ոչ դադարէի 'ի խրատել զժողովուրդն Աստուծոյ, զոր գնեաց արեամբն իւրով սրբով. և զաւանդեալն 'ի սրբոյ աւետարանչէն Մարկոսէ և որք յետ նորա ընկալան զաթոռն սուրբ եպիսկոպոսունքն, նոյնն աւանդութեամբն ճանապարհորդեցայ առ ճշմարտութիւնն. հալածեալ և նոքա յաղագս արդարութեան և առ 'ի Քրիստոս հաւատոյն. զի ամենեքին որք կամիցին աստուածպաշտութեամբ կալ՝ 'ի հալածանս կեցցեն: Նաև վասն երանելեաց եպիսկոպոսաց՝ Փիւղայ և Սիւքի և Մաքսիմի և Թէոդորի, որք յամպարշտացն վասն Քրիստոսի 'ի բանտին արգելեալ էին, ոչ սակաւ հոգայի վասն նոցա՝ գուցէ այլազգ ինչ դիպիցի նոցա, և լինիցին գայթակղութիւն բազում ժողովրդոց և այլոց ժառանգաւորաց՝ որք 'ի բանտս արգելեալ էին, վասն նոցա որք 'ի Քրիստոս հաւատացին, որք էին վեց հարիւր և վաթսուն. որք և վկայեցին ճշմարիտ խոստովանութեամբ, զոր և գրեաց իսկ. և յորժամ լուայ զվկայութեանց նոցա զկատարումն՝ օրհնեցի զԱստուած, և գոհացայ զօրացուցչէն նոցա զՔրիստոսէ։ Գիտէք որչափ չարիս եցոյց ինձ Մելիտոս լիբէհացի, պառակտելով զեկեղեցի Աստուծոյ, զոր փրկեաց իւրով արեամբըն Քրիստոս Աստուած մեր. որոշէր զուղղահաւատսըն, նաև զվկայսն և զեպիսկոպոսունսն որք էին 'ի կապանս՝ տրտմեցուցանէր և նեղէր զնոսա, պատերազմելով ընդ ճշմարտութեանն։ Զգուշացարուք 'ի նմանէ և 'ի նորին աղանդոյ, և մնացէք 'ի հաւատս ուղղութեան։ Քանզի ահա որպէս Տէր եցոյց, կապեալ սիրով երթամ առ նա՝ առ որ անձկացեալն եմ. և ոչ մի ինչ ցանկութիւն ունիմ յերկրաւորս, բայց կատարել զընթացս իմ բարի վկայութեամբ. զի զըսպասաւորութիւնն իմ կատարեցի զոր ընկալայ 'ի Տեառնէ իմմէ Յիսուսէ Քրիստոսէ յուսոյն մերմէ։ Եւ արդ ասեմ ձեզ, յայսմ հետէ ոչ ևս տեսանէք զիս մարմնով, և վկայ ունիմ զԱստուած՝ զի սուրբ եմ յամենեցունց յորս քարոզեցի զբանն կենաց, որք հաւատացան ինձ ժողովուրդք, զի ոչ հեղգացայ առ իւրաքանչիւր օգուտ։ Եւ որ ինչ միանգամ յաղագս փրկութեան մարդկան և ճշմարտութեան աւանդեցին՝ որ 'ի Հայր և յՈրդի և 'ի Հոգին սուրբ՝ քարոզեցաւ աւետարանն փրկութեան 'ի սուրբ առաքելոցն։ Արդ հայեցարուք 'ի ձեզ և տեսէք զարժանն, և մի հեղգայք զառաւելագոյնսն որ կան և մնան. և զգուշացարուք հօտիդ Քրիստոսի, յորս կոչեաց զձեզ Հոգին սուրբ՝ եպիսկոպոսս, հովուել զժողովուրդս նորա սրբութեամբ և արդարութեամբ, զոր փրկեաց արեամբն իւրով սրբով և շնորհօք մարդասիրութեան։ Գիտեմ զի յետ իմոյ կատարման յարիցեն արք՝ որք խօսիցին խոտորնակս, և օձտեն զեկեղեցի սուրբ, որպէս Մելիտոս։ Նաև Արիոս օձտէ և պառակտէ զժողովուրդս զհետ իւր. յաղագս այսորիկ հսկեցէք, զի դարձեալ 'ի նեղութիւնս մատնելոց էք և 'ի փորձութիւնս, զի ոյք 'ի ձեզ ընտիրքն են՝ երևեսցին: Գիտէք ո՛րքան վտանգից համբերեաց որ սնոյց զիս հայրն իմ Թէովնաս՝ 'ի մոլելոյն 'ի կուռս, զորոյ զաթոռն ընկալայ, երանի՛ և թէ զօրինակն. նա և մեծն Դիոնեսիոս հալածեալ վասն Քրիստոսի և Ճշմարտութեան աւանդիցն. առ այնոքիւք և Սաբել վտանգէր զնոսա իւրով չարախորհ ամպարշտութեամբն: Զի՞նչ ասացից և զերանելի եպիսկոպոսացն՝ զՀերակղեայ և զԴեմետրեայ. որպիսի՛ փորձութեանց համբերեցին 'ի կատաղելոյն 'ի կռամոլութիւնս: Նաև Որոգինէս արկ հերձուած յեկեղեցի: Եւ յառաջ քան զնոսա սուրբ հայրապետքըն և հարքն ո՛րքան մարտս ցուցին և նեղութիւնս կրեցին 'ի վերայ նեղութեանց՝ յաղագս Ճշմարտութեանն: Այլ շնորհք ամենակալին Աստուծոյ, որ զօրացոյց զնոսա և ետ նոցա յաղթանակ մարտին, որ վասն Քրիստոսի պատերազմեցան և առին զպսակն, նոյն շնորհք Հոգւոյն սրբոյ զօրացուսցէ զձեզ և պահեսցէ անբիծ և անարատս. և զյարուցեալն 'ի վերայ եկեղեցւոյ պատերազմն՝ խափանեսցէ, և պահեսցէ անխռով խաղաղութեամբ 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր: Եւ այժմ յանձն առնեմ զձեզ ամենեցունց Տեառն և նորին շնորհաց ողորմութեանց:

---

[1] Միւս օր. Նզովեալ էր։

---

[1] Միւս օր. և հարքնոր փանոսպէտրս:

---

[1] Յօր. հալանաց:

Եւ զայս ասացեալ՝ եդ ծունր նոքօք, և եկաց յաղօթս առ Տէր, և օրհնեաց զԱքեղաս և զԱղեքսանդրոս և ասէ. Խաղաղութիւն և շնորհք ողորմութեանց Աստուծոյ եղիցի ընդ ձեզ: Եւ նոքա յարտասուս եղեալ լային 'ի վերայ ասացելոցն. մանաւանդ զոր ասաց այլ ոչ ևս տեսանէք զիս. և համբուրեցին զաջն, և հրաժարեցին բազում տրտմութեամբ: Եւ նա դարձաւ առ ժողովուրդն որ մերձ էին, խօսեցաւ ընդ նոսա բանս մխիթարութեան, զի կայցեն 'ի հաւատս ուղիղս և 'ի յոյս և 'ի սէր. հնազանդել ընդ ամենահեշտ լըծոյն Քրիստոսի: Եւ նոքա եկեալ 'ի ծածուկ պատմեցին ժառանգաւորաց եկեղեցւոյն զասացեալսն 'ի սուրբ հայրապետէն Պետրոսէ՝ վասն Արիոսի, և վասն կատարմանն իւրոյ և վկայութեանն, և փոխանորդութեան նորին աթոռոյ Աքեղայ և յետ նորա Աղեքսանդրի՝ զոր Տէր եցոյց։ Եւ լուեալ զայս՝ սքանչացան. զոր և Արիոս լուեալ՝ և խորշեալ ծածկէր զնենգութիւնն իւր, վստահութիւն տալով Աքեղայ և Աղեքսանդրի և այլոցն։

Իսկ երանելին ծանուցեալ զհրամանս թագաւորին և զխորհուրդ զօրավարացն՝ թէ որպէս գաղտ կորուսցեն սպանանել զերանելին, մանաւանդ զկամս Աստուծոյ, որ եցոյց նմա զվախճան ժամանակին, ախորժեաց ինքն զինքն մատնել 'ի մահ, և զժողովուրդն անվնաս ապրեցուցանել։ Առաքեաց զոմն ծեր որ ընդ նմա ժուժկալեալ էր յամենայն նեղութիւնս՝ ասել զօրագլխացն, գալ 'ի գիշերի 'ի ծածուկ և հատանել զբանտն յետուստ կողմանէ, և առեալ տարցին ուր և կամեսցին, և զհրամայեալն 'ի վերայ նորա զմահ՝ կատարեսցեն։ Եւ լուեալ նոցա զայս 'ի ծերոյն՝ արարին որպէս հրամայեցաւ. և եկեալ գիշերի 'ի ծածուկ՝ հատին զբանտն։ Եւ ել առ նոսա ասելով. Զանձն իմ դնեմ 'ի մահ, և անվնաս զժողովուրդն պահիցեմ, որ վասն իմ կամին մեռանել։ Եւ եղև հողմ սաստիկ որպէս թէ յԱստուծոյ իմն, զի մի ոք լուիցէ զձայն հատման բանտին։ Նմանեցաւ իւրում Տեառնն և Հովուին, որ ետ զանձն յաղագս ոչխարացն, զինքն մատնելով ունողացն ասելով. Ես եմ զոր խնդրէքն։

Եւ նոքա ածին զնա 'ի գիշերին 'ի կատարմանն տեղի սրբոյ աւետարանչին Մարկոսի։ Իսկ արքն որք տանէին զնա՝ սքանչանային ընդ համարձակութիւն սըրբոյն՝ որ յօժարութեամբ երթայր 'ի մահ։ Եւ ասէ երանելին. Ներեցէք ինձ փոքր մի։ Եւ նոքա որպէս պատկառանօք ասեն. Որպէս կամիս՝ եղիցի։ Եւ իջեալ 'ի գերեզման աւետարանչին Մարկոսի, և գիրկս արկեալ զգերեզմանաւն, որպէս ընդ կենդանւոյ խօսէր ընդ սրբոյ աւետարանչին. և սկսաւ ասել. Ո՛վ հայր պատուական և աւետարանիչ Միածնի որդւոյն Աստուծոյ, և վկայ նորին չարչարանացն. զքեզ՝ հիմն և առաջնորդ և առաջին եպիսկոպոս այսմ աթոռոյ ամենեցուն Փրկիչն մեր Քրիստոս ընտրեաց. դու զքարոզութիւն աւետարանին հնչեցուցեր յԵգիպտոս և 'ի քաղաքս յայս, և շուրջ զսահմանօքն նորա, և ընդ ամենայն կողմանս. և լուսաւորեցեր բանիւ կենաց՝

որք հաւատան 'ի սէր աստուածութեանն. յորում և բազում վկայք իւրեանց արեամբն՝ Քրիստոսի ընծայեցան, և առին զպսակն յաղթութեան մարտին. և որք բազումք 'ի ձեռն քարոզութեան քո 'ի ծածուկ հաճոյացան Աստուծոյ, որք և կանայք՝ պէսպէս ձգանց համբերեալ վասն յուսոյն Քրիստոսի: Եւ դու եդիր հիմն այսմ եկեղեցւոյ Քրիստոսի. և յետ քո կալաւ զաթոռն երանելին Անանիա, զհետ նորին Մելիտոս արժանաւոր կոչմամբ, և յետ նորա Դեմետրոս արժանի Աստուծոյ: Եհաս և ինձ փոխանորդել զաթոռ հայրապետութեանս, որ տրուպս եմ ամենեցուն, որ չեմ իսկ արժանի կոչել եպիսկոպոս, այլ շնորհօքն Աստուծոյ իմոյ և փրկչին՝ արժանացայ 'ի ձեռն քո բարեխօսութեանդ, հայր մեր Մարկոս, աւետարանիչ Քրիստոսի և վկայ նորին: Եւ արդ զսպասաւորութիւն իմ լցի, և հանդերձեալ եմ հեղուլ զարիւն իմ վասն անուանն Քրիստոսի. և ես յօժարութեամբ տամ զանձն իմ 'ի մահ, զի եղէց վկայ ճշմարտութեան: Եւ արդ՝ լեր վասն իմ բարեխօս առ Տէր, զի ընկալցի զիս 'ի դասս հարց իմոց, որ զհետ քո ընկալան զաթոռս զայս, և եղէց վկայ Քրիստոսի Աստուծոյն իմոյ, զի առից զյաղթութեան պսակն: Եւ արդ զի ժամանակս փութացուցանէ զիս՝ լեր օժանդակ իմոյ կատարմանս, զի աներկբայ հաւատով զօրացայց 'ի տկարութեանս: Ահա զայս բանս բարբառեցայ, հայր և հայրապետ և աւետարանիչ Քրիստոսի և վկայ նորին, որ ես վերակացու այսմ հովուաց և հօտից. ամրացուցես զսասա ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ, որ ունիս զաթոռոյս այսորիկ զնախագահութիւն, և պահեսցես յորսողաց թշնամեաց եկեղեցւոյ Քրիստոսի. որպէս զի լուսաւորեալք ըստ աւետարանի քում, ամենասուրբ Երրորդութիւնն փառաւորեսցի յամենեցունց. այժմ և հանապազ, ճշմարիտ խոստովանութեամբ և երկրպագութեամբ և օրհնութեամբ, հանդերձ անարատ վարուք, և ուղիղ գնացիւք 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր:

Anianus

Եւ յարուցեալ 'ի գերեզմանէն Մարկոսի, համբարձեալ զձեռս իւր յերկինս՝ ասէ. Որդի Աստուծոյ և բան Հօր երկնաւորի և ամենակալի, լուր աղաչանաց ծառայի քո, և նայեաց յերկնից 'ի սրբութենէ քումմէ 'ի ժողովուրդս քո՝ զոր փրկեցեր պատուական արեամբդ քո սրբոյ. և դադարեցո զհալածումն եկեղեցւոյ քում սրբոյ, և զպարուցեալսն 'ի վերայ զպատերազմողսն շիջո, և արա կնիք հալածանացս զհեղումն արեան իմոյ. զի դադարեսցէ մրրիկս որ ալէկոծէ զեկեղեցի քո՝ նեղութեամբ և վտանգօք. բարեխօսութեամբ սուրբ աւետարանչիս և սորին աթոռակալաց, որ սորին քարոզութեան եղեն հետեւողք և հովիւք, ուղիղ վարդապետելով ժողովրդեան քում:

Յայնժամ եղև ձայն յերկնից որ ասէր. Պետրոս՝ գլուխ առաքելոցն, և Պետրոս եպիսկոպոսապետն՝ կատարումն հալածանաց: Ի նմին ժամանակի կոյս մի ձգնաւոր ցանկորդեալ յաղօթս, որ էր մերձ 'ի գերեզման աւետարանչին Մարկոսի՝ լսէր զձայն յերկնից եկեալ, և զաղօթսն զոր մատուցանէր Տեառն, զոր և յետոյ պատմեաց ամենեցուն: Իսկ երանելոյն կատարեալ զաղօթսն՝ համբուրելով զհանգիստ սրբոյ աւետարանչին, նմանապէս և զայլոց հայրապետացն զհանգիստն, ել առ նոսա: Եւ հայեցեալ տեսին զերեսս նորա իբրև զերեսս հրեշտակի, և զարհուրեալ սքանչացան. և ակնածելով տարան զնա 'ի հարաւակողմն կոյս առ վկայարան աւետարանչին Մարկոսի, 'ի հովիտն՝ յորում էին հանգստարանք սրբոցն: Հանդիպեցան երանելիք ոմանք, կոյս ումն սուրբ՝ աւագ կանանց վանականաց և ծեր ումն, որ ունէին կտաւս ըստ յաջողելոյն Աստուծոյ: Եւ ասէ սուրբն Պետրոս հայրապետն. Ամենայն ինչ կատարեալ է: Ասէ ցծերն և ցկոյսն. Տարածեցէք զկտաւսդ. և ելեալ 'ի վերայ տարածեաց զձեռս իւր՝ եկաց յաղօթս առ Աստուած և ասէ. Գոհանամ զքէն, Տէր Աստուած իմ, որ արժանի արարեր զիս կատարել զսպասաւորութիւն իմ և զվերակացութիւն ժողովրդեան քո՝ որ աւանդեցաւ ինձ 'ի քումմէ բարերարութենէդ, և պահեցեր զիս յորսողաց անիրաւաց և 'ի հակառակորդաց ճշմարտութեանն, 'ի կամօլութեանց և 'ի հերձուածողաց, որ ըստ իւրաքանչիւրոցն մոլեալ հալածէին զեկեղեցի քո սուրբ: Եւ արդ քոյին զօրութեամբդ զօրացո զիս ’ի նահատակութիւնս՝ յոր հասեալ կամ, մեռանել վասն անուան քո մեծի և ահաւորի, և հեղցի արիւն իմ վասն սիրոյդ քո որ ես Տէր Տէր, որ եկիր և մեռար վասն մեր, և հեղեր զարիւն քո սուրբ ’ի փրկութիւն քոյոց արարածոց, մարդասէր. ընկալ, Տէր, զկամաւոր պատարագս անձին իմոյ ’ի հօտ անուշից, զոր քեզ ընծայեմ յօժարութեամբ սրտի. և կատարեա զընթացս իմ բարի խոստովանութեամբ՝ որ ’ի Հայր և յՈրդի և ’ի սուրբ Հոգիդ. արժանաւորեա զիս ընդ սրբոց հարցն, որք յիւրաքանչիւր կարգի ուղիղ հաւատով սրբութեամբ և արդարութեամբ և անարատ վարուք պաշտեցին ըզքեզ, ճշմարիտդ Աստուած. որպէս զի ընդ նոսին դասաւորելով յանվախճան կեանսդ՝ զանճառելի օրհնութիւն և զփառաբանութիւն մատուսցուք ամենասուրբ Երրորդութեանդ, Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ, այժմ և յաւիտեանս։

Եւ խոնարհեցուցեալ զպարանոցն և երիցս անգամ կնքեալ զամենայն զզգայարանս նշանաւ սուրբ խաչին, առէ ցզինուորսն. Արդ զհրամայեալսն ձեզ արարէք որպէս և կամիք։ Եւ նոքա զահի հարեալ ընդ համարձակութիւն և ընդ շնորհալից բանս սրբոյն, ակն ածէին կատարել զհրամանս թագաւորին. և նոցա արարեալ խորհուրդ ’ի մէջ իւրեանց եթէ ո՛ ոք առցէ ’ի նոցանէ ոսկի և կատարեսցէ զհրամանս թագաւորին, զմահ առն Աստուծոյ։ Իսկ մի ոմն ’ի զինուորացն առնոյր քսան և հինգ դահեկան նմանեալ Յուդայի որ և զնորին մասն ժառանգեաց զպատուհասն. և առեալ զսուրն եհատ զպարանոց սուրբ հայրապետին, և ’ի բաց առ զսուրբ գլուխ նորա։

Իսկ զինուորացն խուճապեալ ’ի հաւատացեալ ժողովրդոցն՝ առժամայն գնացին ’ի վայրէն։ Եւ կուսին և ծերոյն ամփոփեալ զմարմինն, յարեցուցեալ և զգլուխն ’ի մարմինն, և կային միայն տեսչութեամբ Աստուծոյ. և փողփողակի ազդ լինէր հաւատացեալ ժողովրդեան, որք առ հասարակ անդր դիմէին. և բազում լալիւն լինէր վասն սուրբ հայրապետին որ բարձաւ ’ի միջոյ, և ամենայն ոք ցանկայր տեսանել և մերձենալ ’ի սուրբ վկայն։ Եւ այնուհետև պատեալ սուրբ կտաւօք և խնկօք անուշիւք՝ և նստուցին յաթոռ հայրապետութեան, և տարան 'ի հանգիստն՝ զոր ինքն իսկ ցուցեալ էր զտեղին. և եդեալ անդ պատուով մեծաւ. զի Աստուած զփառաւորիչս իւր փառաւորէ։ Այսպէս կատարեցաւ սուրբ հայրապետն Պետրոս 'ի փառս ամենասուրբ Երրորդութեան, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Վկայաբանութիւն Սրբոյն Պղատոնի։

Ի քաղաքին Անկիւրացւոց նստեալ յատենի Ագրիոս, հրամայեաց առաջի իւր կացուցանել զերանելին Պղատոնիս, որ անուանի յամենայն աշխարհն Գաղատացւոց, մանուկ հասակաւ, գեղեցիկ յոյժ, լի իմաստութեամբ աստուածային գրոց։ Իբրիդիոս դահճապետն ասէր. Ահաւասիկ առաջի քոյոյ բեմիդ, տէր իմ։ Եւ դատաւորն իբրեւ ետես զնա՝ ասէ. Ամենայն տիեզերք 'ի խաղաղութիւն վարին, իսկ դու ընդէ՞ր յայդչափ մոլորութիւն յամառիս, և զբազումս ընդ քեզ մոլորեցուցանես։ Սուրբն ասէ. Ո՛վ դատաւոր, դուք էք մոլորեալ, որ թողեալ զարարիչն երկնի և երկրի, քարանց և փայտից երկիր պագանէք։ Դատաւորն ասէ. Մանկութիւնդ քո յանմտութիւն ածէ զքեզ, և որպէս տեսանեմ՝ բազում տանջանաց մատնէ զքեզ. արդ ասա վաղվաղակի, թէ որո՞յ կրօնից ես, յորմէ՞ քաղաքէ, կամ զի՞նչ անուն է քո։ Սուրբն ասէ. Թէ զկրօնս իմ կամիս ուսանել, քրիստոնեայ եմ, մնեալ 'ի քաղաքիս յայսմիկ, և անուն իմ Պղատոնիս կոչի 'ի ծնողաց իմոց, այլ և ծառայ Քրիստոսի յորովայնէ մօր իմոյ։ Դատաւորն ասէ. Ոչ ինչ օգտէ զանունն Քրիստոսի 'ի վերայ քո կոչել. վասն զի բազումք որք խոստովանեցին յանուն յայն՝ մահու մատնեցան. իսկ որք ուրացան 'ի նոցանէ՝ մեծամեծ պարգեւս ընկալան 'ի թագաւորացն. և արդ ես թելադիր եղէց քեզ, հաւանեա ինքնակալացն և մեծամեծ շահս շահիս, և 'ի մեծամեծ տանջանացն զերծանիս: Սուրբն ասէ. Ես թագաւորին իմոյ հաւանեալ եմ, վասն զի նա իշխէ ժամանակիս և յաւիտենականին: Դատաւորն ասէ. Մի՛ այդպէս պատասխանի տաս, այլ իմաստութեամբ խորհեա զօգուտն քո. վասն զի պատուական հրաման ինքնակալին եղաւ 'ի վերայ ամենայն քրիստոնէից, կամ զոհել կամ մեռանել: Սուրբն ասէ. Այլ և հրաման եղաւ յԱստուծոյ 'ի վերայ մեր՝ նմա երկիր պագանել: Յայնժամ բարկացեալ դատաւորն, հրամայեաց չորից զինուորաց՝ զսուրբն պարզել և արջառաջիլօք հարկանել. և այնչափ յերկար տանջեցին զսուրբն, մինչև զինուորքն զմիմեանս փոխէին 'ի հարկանելն: Եւ նա միայն գոհանայր և խոստովանէր զանունն Քրիստոսի: Ասէ դատաւորն. Ա՛յ թշուառական, փութա 'ի մահուանէ 'ի կեանս: Սուրբն ասէ. Բարիոք խրատես, ո՛վ դատաւոր, վասն զի այսպէս կամիմ փախչել 'ի յաւիտենականէն, և 'ի մշտընջենաւոր կեանս մտանել: Դատաւորն ասէ. Ա՛յ թըշուառական, և երկու մա՞հք իցեն և երկու կեանք: Սուրբն ասէ. Այո: Դատաւորն ասէ. Եւ ո՞ր իցէ երկու: Սուրբն ասէ. Մի առժամանակեայս և միւսն յաւիտենական: Դատաւորն ասէ. Մի՛ շատախօս լինիր, այլ մատիր զոհեա աստուածոցն և զերծիր 'ի տանջանացն: Սուրբն ասէ. Արա զոր ինչ կամիս, քանզի զիս ոչ հուր և ոչ սուր և ոչ գազանք և ոչ այլ ինչ տեսիլք տանջանաց կարեն հեռացուցանել յԱստուծոյն իմմէ Յիսուսէ Քրիստոսէ, որ մեռաւ վասն մեր և յարեաւ: Յայնժամ հրամայեաց դատաւորն տանել զնա 'ի բանտ: Եւ սուրբն ուսուցանէր զամենեսեան, որ երթային առ նա:

Եւ յետ վեց աւուր հրամայէր դատաւորն առաջի իւր ածել զերանելին, և բազում տանջանարանս կազմէր առ 'ի զարհուրեցուցանելոյ զսուրբն: Ասէ. Ահաւասիկ այս ամենայն տանջանարանքս վասն քո պատրաստեցան. բայց եթէ կամիս՝ ոչ եթէ միայն զերծանիս 'ի նոցանէ, վասն զի է իմ դուստր միամօր գեղեցիկ իբրև զքեզ, զայն տաց քեզ 'ի կնութեան, և բազում վարձս ընդ նմին, և եղիցիս իմ որդի. միայն մատիր զոհեա աստուածոցն, և ճաշակեա 'ի խորհրդակամ զոհիցն։ Պատասխանի ետ սուրբն և ասէ. Սպասաւոր լեգէոնին և Թշնամի Քրիստոսի, նմանեալ հօրն քում սատանայի, մեքենայի՞ւք կամիս պատրել զիս. այլ Աստուծով իմով՝ ոչ 'ի պատրանաց քոց խաբիմ և ոչ 'ի սպառնալեաց քոց երկնչիմ։ Յայնժամ բարկացեալ դատաւորն, ետ բերել մահիճս պղնձիս և պարզել զսուրբն 'ի վերայ նորա. և 'ի ներքոյ մահճացըն խարոյկ արկեալ, և 'ի վերայ նորա արկանել ձէթ և ծծումբ և կուպր և մոմ։ Եւ իբրև այսպէս պատրաստեցաւ տանջանարանն, և սպասաւորքն լուցին ըզհուրն ըստ հրամանի դատաւորին, ամբարձ երանելին յերկինս զաչս իւր և ասէ այսպէս. Տէր իմ Յիսուս Քրիստոս, Աստուած հրեշտակաց և ամենայն անուան անուանելոյ, դու ես որ ամենայն ուրեք զծառայսն քո զօրացուցեր, և համբերութիւն յուսացելոցն 'ի քեզ շնորհեցեր. դու և 'ի Բաբելոնի զզօրութիւն աստուածութեան քո ցուցեր փոփոխելով ըզհուրն 'ի ցօղ. արա և այժմ առ իս զնշան սքանչելեաց քոց, և առաքեա զհրեշտակ քո և ցրուեա զբոց հրոյս այսորիկ, որպէս զի ծանիցեն ամենեքեան՝ որք մոլորեալ են 'ի կուռս, եթէ միայն ես ճշմարիտ Աստուած, միշտ փառաւորեալ ընդ Հօր և ընդ սուրբ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Եւ բազմութիւն քրիստոնէիցն որ մօտ կային՝ ասացեալ զամէնն, հուրն շիջաւ, և լոյս սաստիկ ծագեալ 'ի վերայ նորա՝ և բուրեաց հոտ անուշութեան. և ամենայն ամբոխն սկսաւ աղաղակել և ասել. Մեծ է Աստուածն քրիստոնէից, և նա միայն է Աստուած և այլ ոք չիք։

Իսկ ամենաթշուառ դատաւորն 'ի վերայ այսր ամենայնի ոչ ծանեաւ զճշմարտութիւն, այլ կուրացեալ 'ի լուսոյ սքանչելեացն, տակաւին կախարդութիւն զեղեալսն կարծէր։ Ետ հրաման և իջուցին զնա 'ի պղնձի մահճացն և կացուցին առաջի նորա։ Ասէ դատաւորն. Երդուեալ 'ի յԱպողոն աստուածն իմ, ոչ ապրիս 'ի ձեռաց իմոց, եթէ ոչ ուրասցիս զխաչելեալն՝ զոր դու Աստուած կարդաս։

Ասէ սուրբն. Ո՛վ սիրտ թմրեալ և միտք կուրացեալ, զի՞նչ է զոր խօսիս զհայհոյութիւն. 'ի վերայ այսր ամենայնի ոչ ծանեար զզօրութիւն Աստուծոյ իմոյ, այլ տակաւին լրբիս։ Եւս առաւել բարկացեալ դատաւորն՝ ետ հրաման արկել զնա, և ըստ չափոյ հասակի երկայնութեան նորա փոքս փոքս մորթեալ ձգել զմորթ մարմնոյ կողից նորա։ Եւ իբրև սկսան առնել դահիճքն անողորմ զայս այսպէս, Ճգնազգեաց վկայն Քրիստոսի ոչ ինչ տայր պատասխանի, բայց միայն սաղմոսէր և ասէր. Համբերելով համբերի Տեառն, նայեցաւ առ իս և լուաւ ձայնի աղօթից իմոց։

Յետ այսորիկ ետ կախել և քերել զնա. և իբրև քերեցին զամենայն մարմինն, մինչև ոչ մնաց ամենևին տեղի, այլ և զոտսն անգամ և զծնօտս նորա քերեցին այսպէս, հոսէր իջանէր արիւն վկայէն և առոգանէր զվայրսն։ Ապա յետ այսորիկ ետ հրաման իջուցանել զնա յայնմանէ և ետ բերել շանթս երկաթիս և ջեռուցանել զնա 'ի քուրայս դարբնաց, և դնել յանթս նորա, և այսպէս այրեցին խորովեցին զմարմին նորա։ Եւ ապա 'ի վերայ այսր ամենայնի ետ հրաման արկանել 'ի բանտ. և պատուէր տուեալ բանտապանացն՝ ոչ թողացուցանել զոք 'ի քրիստոնէից մտանել առ նա 'ի բանտն, բայց միայն ժամէ 'ի ժամ նոքին իսկ տային նմա նուկլի մի հաց և բաժակ մի ջուր։

Իսկ երանելին Պղատոնիա կացեալ 'ի բանտին աւուրս տասն անսուաղ, այլ միայն յաղօթս կայր զցայգ և զցերեկ. և այնպէս կերակրէր յիշելով զբանն Փրկչին, թէ՝ Ոչ հացիւ կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ 'ի բերանոյ Աստուծոյ։ Եւ յետ աւուրցն տասանց՝ ետ հրաման դատաւորն ածել զառաջեաւ, և հարցեալ զնա իբրև զառաջինն, ամենևին ոչ կարաց հաւանեցուցանել զսուրբն։ Ապա եդ 'ի վերայ վճիռ մահու բառնալ սրով զգլուխ նորա. և դահճացն առեալ հանին զնա արտաքոյ քաղաքին 'ի տեղի մի. և աղաչեաց զդահճսն սուրբն, որպէս զի ներեսցեն սակաւիկ մի կալ յաղօթս. և նոքա թողացուցին նմա։ Եւ ամբարձեալ զձեռս իւր յերկինս ընդ արևելս, և եկաց յաղօթս առ Տէր Աստուած 'ի միտս իւր՝ հաբուստ մի ժամ. և ապա 'ի կատարման աղօթիցն՝ փառաւորեալ և զամէնն ասացեալ, աղաղակեաց և ասէ.

Տէր Յիսուս, ընկալ զոգի իմ խաղաղութեամբ։ Եւ զայս ասացեալ՝ խոնարհեցոյց զպարանոցն. և ձգեալ դահճին զսուրն՝ անդէն եհատ զգլուխ սրբոյն։

Եւ այսպէս կատարեցաւ սուրբ վկայն Քրիստոսի Պղատոնիոս 'ի փառս Աստուծոյ, յամսեան նոյեմբերի՝ որ օր ութևտասն էր ամսոյն. փառաւորելով զամենասուրբ զԵրրորդութիւնն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Վկայաբանութիւն Սրբոյն Պողիկարպոսի, եպիսկոպոսի Զմիւռնացւոց քաղաքի։

Բայց յաւուրս Անիկտոսի, այն որ ասացաք մեք զնմանէ թէ էր նա եպիսկոպոս եկեղեցւոյն Հռոմայ, պատմէ Իրենիոս եթէ Պողիկարպոս կենդանի էր յաշխարհի, և եկն նա 'ի Հռոմ քաղաք, զի ունէր նա բանս քննութեան ընդ Անիկտոսի վասն աւուրցն Զատկաց։ Եւ այլ ևս պատմութիւն ետ մեզ վասն Պողիկարպոսի, զոր և մեզ արժան է յիշել ընդ այնոսիկ որ աւելի զնմանէ. բայց դրոշմեալ է յերրորդ խօսան զոր ետ Իրենիոս ընդդէմ Հերձուածողաց այսպէս. Պողիկարպոս, ասէ, ոչ միայն աշակերտելով աշակերտեցաւ ընդ բազումս որ տեսին զՏէր մեր, այլ և 'ի նոցունց իսկ յառաքելոց անտի եղև եպիսկոպոս 'ի կողմանս Ասիացւոց, յեկեղեցւոջ անտի Զմիւռնացւոց, որ և մեք իսկ տեսաք զնա 'ի մանկութեան մերում[1]։ Յոյժ իսկ յերկարեցաւ նա յաշխարհի և ծերացաւ շատ, և սքանչելապէս և յայտնապէս իսկ վկայեցաւ, և այնպէս ել նա յաշխարհէ աստի։ Վասն որոյ ասացաք մեք զնմանէ, եթէ զայս Ճշմարտութիւն ընկալաւ նա յառաքելոց անտի, զայս զոր եկեղեցի ստացեալ ունի այսօր։

Եւ են ոմանք որ լուան 'ի նմանէ զի ասէր, եթէ՝ Աշակերտն Տեառն մերոյ Յովհաննէս երթեալ յԵփեսոս լուանալ, և ետես 'ի ներքս զԿերինթոս, վազեաց և ել 'ի բաղանեացն, և ոչ լուացաւ, այլ ասէ. Փախիցուք աստի, զի մի՛ բաղանիքս փլանիցին 'ի վերայ մեր. զի 'ի սմա է Կերինթոս թշնամին ճշմարտութեան: Նա և ինքն իսկ Մարկիոն երբեմն եկն աղաչել զՊօղիկարպոս և ասէ ցնա. Եղիցե՞ս ճանաչել զմեզ: Եւ նա ասէ. Ճանաչեմ զքեզ՝ զի անդրանիկ ես դու սատանայի: Եւ իբրև զայս զգուշութիւն ունէին առաքեալքն և աշակերտքն իւրեանց, որպէս զի և ոչ բանիւ անգամ հաղորդէին ընդ ումեք յայնցանէ որ փոփոխէին զճշմարտութիւնն. զոր և Պօղոս ասաց, եթէ՝ Յառնէ հերետիկոսէ յետ միանգամ և երկիցս խրատելոյ՝ հրաժարեա, զի գիտես եթէ այնպիսին թիւրեալ է և մեղանչէ, անձամբ զանձն դատապարտեալ է նորա: Բայց գոյ և այլ միւս ևս թուղթ Պօղիկարպոսի՝ զոր գրեաց առ Փիլիպպեցիս. զի զօրինակ հաւատոց նորա և զճշմարտութիւն քարոզութեան նորա՝ 'ի նմանէ կարեն ուսանել, որք միանգամ կամին և փոյթ է նոցա վասն կենաց իւրեանց:

---

[1] Մի օր. երրում։

Իսկ Անտոնինոս որ կոչեցաւն Եւսեբէս, իբրև յաջորդեաց զթագաւորութիւն զքսան և զերկու ամս, Մարկոս Վաղերիոս Վերոս Անտոնինոս որդի նորա հանդերձ Ղուկիոսիւ եղբարբ իւրով կալաւ զհետ նորա: Յայնմ ժամանակի խռովութիւն բազում եղև 'ի կողմանս Ասիացւոց և հալածումն եկեղեցւոյ, և կատարեցաւ վկայութեամբ Պօղիկարպոս: Բայց արժան է զգիր վկայութեան նորա որ պահեալ է մինչև ցայսօր ժամանակի, դնել զնա 'ի մէջ յիշատակի այսր պատմութեան. զի գրեալ են գիրքս այս իբրև 'ի դիմաց եկեղեցւոյն այնորիկ որում առաջնորդէր նա:

Առ եկեղեցիս որ 'ի կողմանս Ասիացւոց, ցուցանէ այսու բանիւք [1] և առ ամենայն ժողովուրդս որ են 'ի սուրբ եկեղեցիս՝ ընդ ամենայն տեղիս, շնորհք և խաղաղութիւն և սէր Աստուծոյ և Հօր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի բազմասցի: Գրեցաք առ ձեզ, եղբարք, վասն ամենայնի որ վկայեցին և վասն Պօղիկարպոսի երանելւոյ, որ կնքեաց 'ի ձեռն վկայութեան իւրոյ, և դադարեցին հալածանքն: Եւ յետ այսորիկ և յառաջ քան զպատմութիւն Պօղիկարպոսի վասն այլոց վկայիցն պատմէն և որոշեցին գրով, թէ որպիսի՛ համբերութիւն ցուցին նոքա 'ի ցաւս անդ իրեանց, այնպէս զի զարմացուցին որ միանգամ շուրջ կային և հայէին ընդ նոսա: Զի էր ժամանակ, զի տանջանօք մինչև 'ի ջիլս ներքինս այրեալ խորովէին[1], որպէս զի աղիք որովայնից նոցա երևէին: Բայց էր ժամանակ զի և գաղտակտուր որ լինի 'ի ծովու՝ արկանէին 'ի ներքոյ նոցա: Բայց զարմանալի էր քան զամենեսեան Գերմանիկոս քաջ. որ առաքինացաւ յայնմ պատերազմին. զի իբրև անթիւպատոսն կամէր հրապուրել զնա, և դնէր առաջի նորա զհասակ մանկութեան նորա, և ասէր ցնա, թէ՝ Տղայ ես և մանուկ, խնայեա յանձն քո. իսկ նմա ոչինչ եղև փոյթ. այլ խնդութեամբ բուռն հարկանէր զգազանէն՝ և ածէր առ ինքն, ոչ միայն գրգռելով այլ և բռնի. որպէս զի վաղվաղակի լուծցի նա յանօրինէն և յամպարիշտ աշխարհէս յայսմանէ. և սքանչելի մահուամբ իւրով ամենայն ժողովուրդն զարմանայր ընդ զօրութիւն այսր վկայի սիրելւոյ Աստուծոյ:

---

[1] Միւս օր. այսոր բանիւք:

Իսկ Պօղիկարպոս սքանչելի իբրև լուաւ, զառաջինն եկաց մնաց առանց խռովութեան, և պահեաց զմիտս իւր հաստատուն և ոչ շարժուն. իսկ իբրև ստիպէին մեծաւ պնդութեամբ որ խնդրէին զնա, դարձեալ միւսանգամ վասն սիրոյ եղբարցն բռնադատեցաւ փոխել յայլ միւս ևս յագարակ: Եւ յետ սակաւ միոյ հասին ժամանեցին նմա անդէն որ զհետ մտեալ էին նորա. բայց կալան անտի երկուս պատանեակս: Իբրև տանջեցին զմի 'ի նոցանէ, տարան ցուցին զվանսն Պօղիկարպոսի: Բայց յորժամ հասին առ նա՝ ժամ էր երեկոյի, գտին զնա զի բազմեալ էր 'ի վերնատան միոջ. իբրև կարէր նա փախչել 'ի միւս տուն՝ ոչ կամեցաւ, այլ ասէ, եթէ՝ Կամք Աստուծոյ լիցին: Եւ իբրև գիտաց եթէ եկին հասին, որպէս և բանն ասէ, էջ առ նոսա, և խօսեցաւ ընդ նոսա զուարթ երեսօք և քաղցրութեամբ. և հրամայեաց դնել առաջի նոցա սեղան, և խորտիկս ազնիւս կազմեաց նոցա. բայց խնդրեաց 'ի նոցանէ ժամ մի յաղօթս կալ ցածութեամբ. և համարձակեցուցին նմա: Եւ յարեաւ կայր յաղօթս շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որպէս զի զարմանային որք միանգամ եկինն և լսէին մինչդեռ յաղօթս էր. զի բազումք 'ի նոցանէ զղջանային յանձինս իւրեանց, եթէ որպիսի այր հանդերձեալ է մեռանել, ծեր, ցածուն և արժանի Աստուծոյ: Եւ հանդերձ այսոքիմբք իբրև եհաս ժամ գնալոյ անտի, նստուցին զնա 'ի վերայ գրաստու և ածին 'ի քաղաքն. և էր շաբաթն մեծ, և պատահեաց անդ Հերովդէս իրենարքայ[1], և հայր նորա Նիկետա: Նոքա իսկ նստուցին զնա 'ի կառս ընդ իւրեանս. և հրապուրէին զնա մինչդեռ նստէին ընդ կառսն և ասէին ցնա, եթէ՝ Զինչ, ասեն, չար է յայսմիկ, ասել եթէ Տէր իմ կայսր, և զոհել և կեալ: Եւ նա զառաջինն ոչ ետ նոցա պատասխանի: Իսկ իբրև ստիպէին զնա, ասէ ցնոսա. Ոչ գործեմ զայդ ինչ զոր դուք ինձ խրատ տայք: Իսկ նոքա իբրև տեսին եթէ ոչ առնու յանձն, բանս չարաչարս տային նմա: Եւ նոյնժամայն առին ընկեցին զնա 'ի կառաց անտի. և իբրև ընկեցին զնա՝ ջաղջախեցան խունջանունք նորա, բայց նա ոչ դարձաւ. այլ իբրև թէ նմա ոչինչ եղև՝ ուրախութեամբ և փութութեամբ երթայր:

---

[1] Միւս օր. քերեալ լինէին… գաղտիկուրս:

Ածին զնա յասպարէզն ուր գազանքն արգելեալ էին, և եղև աղմուկ մեծ յասպարիզին. զի բազմաց 'ի նոցանէ չէր լուեալ եթէ եմուտ Պօղիկարպոս յասպարէզ անդր: Եւ մինչ մտանէր՝ ձայն եղև յերկնից և ասէ. Քաջալերեաց, Պօղիկարպէ: Բայց զայն որ ասացն ոչ ոք ետես, բայց զձայնն բազումք 'ի մերոց անտի լուան: Իսկ իբրև ստիպեաց զնա դատաւորն և ասէ ցնա. Երդուիր և արձակեմ զքեզ, հայհոյեա ըզՔրիստոս: Ասէ ցնա Պօղիկարպոս. Ութսուն և վեց ամ է զի ծառայեմ Քրիստոսի, և մեղ ինչ ոչ արար ինձ, զիա՞րդ կարեմ հայհոյել զթագաւորն իմ զայն՝ որ նա փրկեաց զիս: Ասէ ցնա անթիւպատոսն. Գազանս ունիմ արձակել, և նոցա արկանեմ զքեզ, եթէ ոչ զղջացեալ ապաշխարեսցես: Իսկ նա ասէ ցնա. Կոչեա զնոսա զի եկեսցեն. զի չէք մեր փոփոխումն 'ի բարեացն 'ի չար: Դարձեալ միւսանգամ ասէ ցնա. Հրով մաշեցից զքեզ եթէ զգազանսդ արհամարհես: Ասէ ցնա Պօղիկարպոս. Հրով սպառնաս դու, որ տոչորի առ ժամանակ մի, և յետ սակաւ միոյ անցանի. զի ոչ գիտես դու զհուրն դատաստանաց որ լինելոցն է, և ըզտանջանսն յաւիտենից որ պատրաստեալն է սատանայի և ամպարշտաց. այլ մի՛ յամեր, բեր զոր ինչ կամիս: Այլ անթիպատոսն զարմացեալ էր, և յղեաց քարոզել 'ի մէջ ասպարիզին երիցս անգամ. Պօղիկարպոս քարոզեաց վասն անձին իւրոյ՝ եթէ քրիստոնեայ է: Իբրև ասացաւ այս 'ի քարոզէ անտի, ամենայն ժողովուրդքն Հրէից և հեթանոսաց՝ որ բնակեալ էին 'ի Զմիւռնիա քաղաքի, մեծաւ բարկութեամբ և սրտմտութեամբ 'ի ձայն բարձր աղաղակէին և ասէին. Դա է վարդապետ և ուսուցիչ Ասիացւոց, հայր քրիստոնէից և լուծիչ դից մերոց. զի ուսուցանէ ըզմարդիկ մի՛ երկիր պագանել նոցա: Եւ իբրև ասացին զայս, աղաչէին զիշխանն Ասիացւոց, զի արձակեսցէ առիւծ մի 'ի վերայ Պօղիկարպոսի: Իսկ նա ասէ ցնոսա. Չունիմ ես իշխանութիւն, զի կատարեցան աւուրք խաղուս: Ապա հաճոյ թուեցաւ նոցա աղաղակել զի կենդանւոյն այրեսցեն զՊօղիկարպոս: Իսկ իբրև հուրն պատրաստեցաւ, 'ի բաց արար յիւրմէ զհանդերձս ամենայն. եղոյծ և զգօտին, կամեցաւ և զհողաթափսն լուծանել. իբրև յառաջագոյն նա զայն արարեալ էր. վասն զի փութային հաւատացեալքն, թէ ո՛վ 'ի նոցանէ յառաջիցէ մատիցէ 'ի հանդերձս նորա, զի ամենայն բարի վարուք զարդարեալ էր 'ի մանկութենէ: Եւ այնուհետև եդան գործիքն որ պատրաստեալ էին 'ի նիւթ հրոյն: Եւ իբրև պատրաստեցան բևեռել զնա բևեռօք, նա ասէ ցնոսա. Թո՛յլ տուք ինձ, զի այն որ տայ ինձ զօրութիւն համբերել 'ի հուրն, այն տայ ինձ յերկարել 'ի նմին առանց աշխատութեան և առանց բևեռելոյ: Իսկ նոքա թոյլ ետուն, և ոչ բևեռեցին զնա, այլ կապեցին կապանօք. ինքն իսկ ետ զձեռս յետս, և կապեցաւ իբրև զգառն երևելի որ ելանէ 'ի մեծ հօտէ պատարագ ընդունելի Աստուծոյ ամենակալի: Եկաց յաղօթս և ասէ.

---

[1] Մխս օր. Իրեան արքայ... Անիկիտեայ:

Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ որդւոյ քո օրհնելոյ, այն որ 'ի ձեռն նորա ընկալաք մեք զգիտութիւն ճշմարտութեան քո. Աստուած հրեշտակաց և զօրութեանց, և ամենայն տոհմին արդարոց՝ որ կենդանի են առ քեզ. օրհնեմք զքեզ որ արժանի արարեր զիս աւուրս այսմ և ժամու, առնուլ մասն 'ի թիւ վկայիցն 'ի ձեռն բաժակի Քրիստոսին քո, 'ի յարութիւն կենացն յաւիտենից, շնչով, մարմնով և հոգւով, առանց ապականութեան. զի սոքօք մատեայց առաջի երեսաց քոց այսօր պատարագ ընդունելի:

Եւ իբրև կատարեաց զաղօթսն և ասաց զամէնն, սպասաւորքն վառեցին զհուրն: Իսկ իբրև հուրն տոչորէր յոյժ, սքանչելի ինչ տեսիլ երևեցաւ նոցա. զի հուրն ձևացաւ 'ի նմանութիւն խորանի, իբրև զկըտաւ առագաստի նաւի՝ յորժամ ուռուցու օդով, և պատեալ էր շուրջ զմարմնով վկային. և էր նա 'ի մէջ նորա իբրև զոսկի և զարծաթ որ քննի 'ի բովս. և հոտ անոյշ գայր մեզ իբրև խնկոց: Բայց յետոյ իբրև տեսին անօրէնքն եթէ ոչ կարէ այրել հուրն զմարմին նորա, հրամայեցին դահճի միոյ մատչել և սրով խոցել զկողս նորա: Եւ իբրև արար զայս՝ ել 'ի նմանէ արիւն յոյժ, և շիջոյց զհուրն. և զարմացան ամենայն ժողովուրդն, եթէ այսպիսի ընտրութիւն է 'ի մէջ անհաւատից և հաւատացելոց Աստուծոյ: Բայց ամենայն բան որ ել 'ի բերանոյ նորա, կատարեցաւ և կատարի: Իսկ հարիւրապետն իբրև ետես զմարտ Հրէիցն, եդ զնա 'ի միջի, որպէս սովոր էին նոքա, և այրեաց զնա. և ապա մեք ժողովեցաք զնշխարս ոսկերաց նորա, որ առաւել է մեզ քան զականս պատուականս և քան զոսկի ընտիր. և եդաք 'ի տեղւոջ ուր արժանաւոր էր, զոր Տէր եցոյց մեզ: Բայց 'ի սոյն յայս գիրս և վասն այլոց վկայից որ անդէն 'ի Զմիւռնիա յայնմ ժամանակի գրեցին ընդ վկայութեան Պօղիկարպոսի, և ընդ նոսին ընդ այնոսիկ պատմեն որ արժանի են մեծի յիշատակի:

Վկայաբանութիւն Սրբոյն Պօղիկարպոսի։

Այժմ մեծութիւն շնորհացն Աստուծոյ և զօրութիւն նորին 'ի ձեռն սրբոյ մարտիրոսին Պօղիկարպոսի ամենեցուն ցուցաւ. այժմ հեթանոսք թախծեալ և տրտմեալ, որք յանշունչ կուռսն իւրեանց յուսային, որք մոլորեալքն էին 'ի դրօշեալս իւրեանց՝ յամօթ լինէին. վասն զի յաստուածային զօրութենէ անտի նմանողք սրբոյն Պօղիկարպոսի լինել՝ ակամայ հարկաւորէին, որպէս յամենեցուն ստացչին և արարչին Աստուծոյ. ըստ աստուածային գրոց, թէ՝ Ամենայն ծունր կրկնեսցի երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց. քանզի յաստուածային զօրութենէն որ տուեալ լինի մարդկան՝ յայժմու 'ի մերձակայ իրաց, առաւել ևս օրհնի և փառաւորի։ Քանզի ահաւասիկ և երանելի Պօղիկարպոս, որ կարծէր զհեթանոսական զվարս և զպաշտօն ունել՝ նոյն ինքն արագ արագ ըզՔրիստոսի պաշտօնն ունել յինքն զօրացուցանել զինքըն. և որ երկրաւոր թագաւորին զօրական էր՝ իսկոյն վաղվաղակի զմարդկային զինուորութիւնս արհամարհէր, և զՔրիստոսի զինակրութիւն փոխանակ երկրաւոր զինուորութեանն՝ ամենայն յօժարութեամբ փոխանակէր. և պսակ անթառամ զիւրոյ զջան վաստակոց և զժուժկալութեանն զգեցեալ ցուցանէր։ Քանզի կոչէր զնա Փրկիչն յիւր ընտանի արքայութիւնն՝ 'ի ձեռն յայտնութեան իւրեք. և զերկրաւոր զքղամիդն զոր զգեցեալ ունէր վկայն, 'ի խորհրրդապէս և յանճառելի և յևս պատուականագոյն քղամիդ փոխեալ նմանեցուցանէր. և զխոտանն զոր ունէր՝ զերկրաւոր քղամիդն՝ այսինքն զանհաւատութեանն, 'ի բաց ընկենուլ հրամայէր. որպէս զի ևս պատուականագոյն և պարկեշտագոյնն և որ Աստուծոյն հաճոյ էր՝ զգեցուսցէ սուրբ մարտիրոսին: Որ և փութայր իսկ այնուհետև երանելին իւրով ընտանի յօժարութեամբն. քանզի կոչեցեալ լինէր 'ի Փրկչէն և ժամանէր յօժարութեամբ կոչմանն. անդէն վաղվաղակի առժամայն զերկրաւորս և զմարդկայինս արհամարհէր: Ոչ կին և ոչ մանկունք և ոչ գեղից մեծութիւն և հարկք, և ոչ հօգք զօրականաց, և ոչ մեծարանք և պաճուճանք, և ոչ դարձեալ մարդկային փառք և մեծութիւն ինչ կարացին զնա 'ի բարեպաշտ աստուածպաշտութենէ անտի մերժել: Վասն զի առաւել լաւագոյն համարեցաւ զայն որ 'ի յերկինս են կեանք և առաքինութիւն. անդէն վաղվաղակի փոխեալ լինէր բարուքն 'ի կռոցն 'ի մոլորութենէ 'ի սուրբ և 'ի ճշմարիտ և յանարատ աստուածպաշտութիւնն:

Այլ մի ևս սքանչելիք որ ըստ մատակարարութեանն լինէին առ սուրբն. քանզի ընդ Դեկոսի ուրումն՝ որ թարգմանի հալածիչ, ընդ նորուն դատերն բնակեալ էր սուրբն Պօղիքտոս: Իսկ հալածիչս այս զայս ևս հարկաւորէր և հաւանեցուցանէր զոհել կռոցն. իսկ զսրբոյն զբարիոք յօժարութիւնն ոչ կարաց յինքն դարձուցանել: Ապա այնուհետև առեալ զիւր դուստրն և զմանկունսն՝ մատուցանէր առ նա, և կամէր նոքօք խոնարհեցուցանել զնա և նենգագործել: Իսկ նա անշարժ և հաստատուն կայր և մնայր 'ի հաւատսն Քրիստոսի. և զմարդկային ազգականութիւն և զախտակցութիւն արհամարհէր: Հետևէր այնուհետև երկնաւոր թագաւորին՝ որ ընտրեաց զնա յիւր զօրականութիւն, և փութայր այնուհետև նմա սպասաւորել. նա և 'ի կենցաղս յայս ոչ առանց Աստուծոյ տեսութեանն ըմբռնեցաւ 'ի զինուորութիւնն, որ և բազում և ծանր մեղադրութիւն ունէր՝ մինչդեռ 'ի զինուորութեան վարմն էր: Քանզի անդստին իսկ կամէր Աստուած փորձել զմարտիրոսին յօժարութիւնն, և որպէս զոսկի սուրբ և ընտիր որ փորձի 'ի բովս՝ այնպէս և զսա կամելով փորձել Աստուծոյ, արկանէ զսա զառաջինն 'ի զինուորական վարս, ուստի ակն ունէին բազումք թէ խոտան ինչ գտանիցի. իսկ նորա 'ի ձեռն աշխարհական վարուցն՝ ընտանի և սերտ ծառայ Աստուծոյ գտաւ։ Եւ արդ աւասիկ 'ի ձեռն բարւոյ գործոյն այնորիկ՝ որ տէրն զօրականն է մարտիրոսանայր, յանարգ և յերկրաւոր զինուորութենէս յայսմանէ փոխեցաւ նա 'ի մեծագոյնն։

Ո՛վ վկայ բարեպաշտ, ամենևին սուրբ և ամենայն ուստեք, այժմ վկայ Աստուծոյ պատուականագոյն, զորոյ զյիշատակդ մեք ամենեքեան ոչ ձանձրանամք. ո՛վ աստուածային վկայդ և ճշմարիտ, որ 'ի քէն այդչափ զարդ և գովութիւնս ետուր ազգի մարդկան, մանաւանդ թէ դու իսկ մատուցեր. քանզի դու կոխեցեր զգլուխ վիշապին, որպէս և զսրբոյն Թեկղէ վկայեն. և 'ի վեր ամբարձեալ ըստ ելիցն այնմիկ, որ ըստ պղնձի սանդղոց և երկնային հեռաւարձակութեամբն անդր որոշել, զոր ոչ ոք լուաւ, և ոչ զմարգարէութիւնս անտես առնել՝ զոր ինչ պատմենն։ Քանզի գիտէին թէ հեռաձիգ և բազում նաւաղապէս են վարք կենցաղոյս այսորիկ՝ յոր ըմբռնեցան ազգք քրիստոնէից. վասն այսորիկ 'ի ձեռն կենաց ուրուք յերկրակեցաց և անպատուական վարուք հազիւ ոք թէ կարասցէ մերձենալ յերկնաւոր պատուին։ Եւ արդ յայս սանդուխս ել երանելին Պօղիքտոս. նոյնպէս և սա կոխեաց զնորին զգլուխ զվիշապին, և արհամարհեաց զկուռսն, և 'ի վեր ամբառնալով ընդ խորհրդական և անճառելի սանդուխսն, և 'ի ձեռն այսպիսի հրաշագոյն իրացս հաստատեաց զառաքելական ձայնն որ ասէ, թէ՝ Հաւատովք շիջուցին զզօրութիւն հրոյ, խցին զբերանս առիւծուց։

Ո՛ զինուորութիւն երկնային հաւատոյն, յորս սատանայական սուրն ոչ մերձեցաւ. ո՛ Քրիստոսի աշակերտ 'ի ձեռն հրոյ, և զօրական ճշմարիտ և ընտիր. քանզի այսպէս վասն առաքինութեան և ճշմարիտ հաւատոյ՝ անմահական յիշատակաւ միշտ պատուին, իբրև մերձ եղեալ առ մեզ. որպէս զի և մեք ճշմարտապէս այսօր զծննդեան նորա զխրախճանութիւն կատարեսցուք. որպէս զի և 'ի գործս նորա վայելեսցուք, առ 'ի պարգևել մեզ իւրաքանչիւր ումեք զօգտակարն և զլաւ աղօթսն մատուցեալ. որոց փոյթ յանձին կալեալ և մեր ընծայ ինչ ընդունելի մատուցանել վկային, զորպիսի ինչ զայսոսիկ զգովութիւնս յաղագս սիրոյն որ առ Աստուած՝ կատարեսցուք։ Զայս բարեմտութեամբ տուեալ՝ բերկրեսցուք ընդ բարի գործոցն նորա. և միշտ զմտաւ ածցուք զայն, որպէս զի 'ի յիշատակ բանից նորա եկեալք, նորին սրբոյ յիշատակաւ, ըստ գրոց, հաղորդք գտանիցիմք, և զմեր զանձինս ճշմարիտ հաւատովք հաստատել կարասցուք։ Եւ արդ որ ինչ վարք և գործք յաղագս իրաց սրբոյ վկային՝ սկիզբն եղեալ, եթէ ուստի եկն յայնպիսի իրս, դուք՛ ինձ զմարմնոյ և զհոգւոյ լսելիս մաքրեալ սրբեցէք հանդերձ անարատ վարուք. որպէս զի 'ի ձեռն բարեօք յօժարութեան զոգիս ձեր յօգտակարաց սրբոյ վկային արբուցանել փութասցի։

Եւ արդ է սկիզբն վկայութեան նորա այսպէս. Նէարքոս ոմն, քանզի այսպէս կոչեալ էր անունն նորա, և Պօղիկտոս երանելի սուրբ վկայն՝ եղբարք կոչէին, ոչ եթէ ազգականութեամբ, այլ ըստ բարիօք յօժարութեանն և սիրոյ հանդիպելին. և զընտանի սերտ սէրն զոր ունէին՝ կոչեցան բարեկամք և ընկերք. ըստ Աստուծոյ խորհրդեան գտան խորհրդակիցք երկոքեան։ Եւ Նէարքոս քրիստոնեայ էր. իսկ երանելին Պօղիկտոս հեթանոս բարուք զինքն համարէր, ըոկ զանուն միայն, այլ 'ի ճշմարիտ հաւատոց ոչ փոխեալ լինէր. և զբազում յերկմիտ քրիստոնէիցն յաղագս ճշմարիտ հաւատոյն՝ 'ի բաց որոշել փութայր։ Եւ տես զքանչելի մատակարարութիւնն Աստուծոյ. քանզի յառաջ քան զտնտեսութիւն Փրկչին որ վասն մերոյ փրկութեան յերկնից յերկիր առաքեցաւ, ամենեքեան 'ի մառախլական միգի և 'ի խորս խաւարի ընթանային. իսկ ապա յորժամ եկն Փրկիչն՝ առ հասարակ ամենեքեան որպէս 'ի վախէ իմեքէ 'ի գբոյ կռապաշտութենէ 'ի վեր յարուցեալք. որպէս և երանելին Դաւիթ վկայէ ասելով, թէ՝ Տէր եհան զիս 'ի գբոյ տառապանաց՝ 'ի կաւոյ և 'ի տղմոյ, և հաստատեաց 'ի վերայ վիմի զոտս իմ, և ուղղեաց զգնացս իմ. քանզի գուբ և տառապանս և կաւ զկռապաշտութիւնն անուանեաց։ Իսկ վէմ՝ դարձեալ զՏէր մեր Յիսուս Քրիստոս ակնարկեաց. յորում և մեք ամենեքեան 'ի ձեռն հաւատոյ հաստատեալ կամք։ Քանզի 'ի գալստեան և 'ի յայտնութեանն՝ յետ չորից աւուրց երանելին Պօղիւքտոս վկայեաց, յառաջ քան զչորս աւուրս Արաց ամսոյ, զոյգ ընդ գալստեան Փրկչին՝ զհեթանոսական զաղտն 'ի բաց լուացեալ, և զկռապաշտութեան բարձն փոխեալ, անդէն վաղվաղակի ընդ Քրիստոսի կարգաւորութեանն փառաւորեալ։

Ո՛վ աստուածային գալստեանն, եղբարք. ո՛վ Պօղիւքտոսի հաւատոյն, ո՛վ սքանչելեացն։ Թագաւորն յերկնից եկեալ և զօրականն ինքնակամ յօժարութեամբ 'ի նա զինուորէր։ Եւ արդ զի՞նչ իցէ ընտրութիւն վկայիս, և կամ ո՞ր պատճառք զսա արագ առժամայն 'ի վկայութիւն կոչեաց, անդէն վաղվաղակի յետ գալստեան Փրկչին։ Դեկոս ոմն և Վաղերիանոս՝ որ յԱստուածոյ տուեալ էր նոցա զպատիւ թագաւորութեանն, նոքա զայն ամպարշտապէս և բռնաւորաբար 'ի կիր արկին. նորապէս հրամանս կարգեալ, լի ամպարշտութեամբ օրէնս գրեցին, որպէս զի որք հաւանիցին զոհել կռոցն՝ 'ի զինուորութիւն կարգեսցին. իսկ որք ոչն կամեսցին զոհել, նոքա գլխատութեամբ և պատժովք 'ի կենացս յայսցանէ վախճանեսցին։ Եւ արդ 'ի դնել զայսպիսի հրամանս նոցա ամենեցուն առաջի՝ կամ զոհել և կամ 'ի կենացս ելանել, տեսցուք այսուիկ և զվկային զյօժարութիւնն զՊօղիւքտոսի՝ յաղագս անշարժ հրամանացն։ Դեկոս և Վաղերիանոս զայս կարգեցին հակառակ քրիստոնէից։

Յայնժամ ապա Նէարքոս բարեկամ մարտիրոսին՝ յաղմուկ և 'ի նեղասրտութիւն եկեալ, հանապազ յոգւոց հանելով լայր դառնապէս. ուստի և ոչ սովորական խօսիցն կամէր հաղորդել Պօղիւքտոսի։ Եւ նորա զարմացեալ ընդ այնպիսի իրս, 'ի վշտակցութիւն շարժէր զոգի իւր. մատուցեալ բազում անգամ հարցանէր ցնա սուրբ վկայն, թէ զի՞նչ պատճառք են այդպիսի տրտմութեանդ քո։ Նա և զայն ոչ առնէր նմա դիւրաւ պատասխանի։ Ապա յայնժամ յետ այնչափ լռութեանն և նեղութեանն և 'ի խոր տրտմութեանն զինքն ունելով, խօսի ընդ նմա կրկին անգամ սուրբն և ասէ. Զի՞նչ է այդ քո մտածութիւնդ՝ աննման ցասմանդ և բարժանմանդ. և զսովորութեան զսէրն 'ի բա՞ց մերժեցեր, որ ոչ բանի անգամ արժանի չառնես զիս։ Զի՞նչ տրտմութիւն ընկալար յինէն երբէք, կամ ո՞ր վնասութիւն եղև քեզ յինէն։

Յայնժամ ապա Նէարքոս հազիւ յետ բազում խօսիցն մարտիրոսին՝ յերկիւղածութիւն եկեալ, սկսաւ խօսել ընդ նմա և ասել. Վասն զի յառաջիկայ զբարժանումն մեր զմտաւ ածեալ իմ, ո՛վ Պօղիկտոս, որ յանօրէն և յանարժան հրամանաց նոցա լինի. վասն այսորիկ արգելլի զիս 'ի լռութեան, որպէս զի մի՛ ըստ սովորական յօժարութեանն ունիմք առ միմեանս սէր։

Յայնժամ պատասխանի ետ նմա սուրբն Պօղիկտոս և ասէ. Ո՛վ Նէարքոս, և զի՞րդ անյոյս և առանց ակնածութեան են բանքդ քո առ իս. քանզի թէպէտ և մահուամբք հանդերձեալ եմք բարժանել 'ի միմեանց, այլ ոչ ոք կարէ զբարեկամութիւն և զսէրն մեր ջրել։ Ասէ ցնա Նէարքոս. Այս է զոր ես յանձն իմ խորհէի, եթէ 'ի վերագոյն քան զմարդկան մահ՝ զոր ես զմտաւ ածէի զբարժանումն։ Զայս լուեալ սըրբոյն Պօղիկտոսի՝ անկանէր զպարանոցաւ Նէարքոսի, աղաչէր և մաղթէր նմա, որպէս զի ասասցէ զպատճառս հանդերձեալ բարժանմանն։ Իսկ Նէարքոս ընկալեալ զպաղատանս սրբոյ մարտիրոսին, կամէր ասել նմա զպատճառս բարժանմանն, և ոչ կարէր 'ի դժնդակ նեղութենէն և յարտասուացն, և լի չփոթութեամբ հայէր ընդ Պօղիկտոս. և 'ի բազում վհատութիւն եկեալ՝ ընկենոյր զինքն 'ի վերայ երկրի։ Զոր ոչ կարացեալ սրբոյն Պօղիկտոսի զայնպիսի իրս տեսանել, թէ որպէս զնայն մխիթարեսցէ, զմըտաւ ածելով մի՛ գուցէ թշնամանս ևս կրեսցէ յիւրմէ բարեկամէն. և մտախորհ եղեալ յինքեան սրբոյն Պօղիկտոսի թէ ոչ ինչ ունիմ կարծիս չարի 'ի լաւ բարս Նէարքոսի. ապա յետ այսորիկ զմտաւ ածեալ ասէր.

Մ՛ի գուցէ սուտ չարախօս եղև զՆէարքոսէ ոք ուրեք, կամ 'ի հայհոյութեան աղագս կամ 'ի յընչից վնասակարութենէ, վասն այնորիկ 'ի վհատութիւն և յարտասուս եկն Նէարքոս. պատրաստ եմ, ասէ սուրբ վկայն, և յայսոսիկ օգնել նմա, և վնասուց և մահուան համբերել յաղագս ճշմարիտ սիրոյն Նէարքոսի. այլ թէ որդի իսկ ունէր՝ ոչ խնայէր յաղագս սիրոյն Նէարքոսի, նա և նուազ ևս համարէր զնա քան զսէր նորա. և յառաջադէմ ունէր զսէրն՝ ամբողջ պահելով և անվնաս քան զամենայն:

Իսկ ապա իբրև զայսպիսի բանս լսէր Նէարքոս 'ի սրբոյ վկայէն, յայնժամ կանգնեալ հազիւ բանայր զբերան իւր. քանզի յոյժ թախծեալ էր հոգովք և տրտմութեամբք: Յայնժամ սկսաւ ասել ցնա. Ո՛վ Պօղիքտոսէ, վաղիւ ունիմք բաժանել 'ի միմեանց. օտարացեալ և աննմանք գտանիմք վարուք և ձևօք: Իսկ Պօղիքտոս առ 'ի չկամելոյ նմա հաւատալ բանիցն Նէարքոսի. իսկ մտօք և խորհրդովք յոյժ խռովեալ էր 'ի վերայ սքանչելի այնպիսի շարժմանն Նէարքոսի, և զանչափ արտասուսն հեղուլ. աղաղակէր Նէարքոսի, զի ասասցէ նմա թէ զի՞նչ է որ անց ընդ նմա, և կամ զի՞նչ պատճառք են այդպիսի խօսից: Եւ 'ի բազում ժամս աղաչեցեալ նորա զնա, սկսաւ նմա պատմել հանդերձ արտասուօք Նէարքոս, ասել վասն անօրէն օրէնսդրութեանն հակառակ քրիստոնէից: Եւ նորա զայս լուեալ 'ի նմանէ, թէ անիրաւ օրէնսդրութիւնք կարգեցան, զարթուցանէր զիւր ոգին, և աստուածատեսական և երկնատեսական կամէր լինել: Իսկ ապա յինքն եկեալ և զյայտնութիւնն որ 'ի նմանէ լինելով՝ ընթացեալ գտանէր 'ի ժամանակին զյայտնութիւնն: Եւ լցեալ սուրբն շնորհօք, սկսաւ պատմել Նէարքոսի և ասէ. Տեսի այսօր, ո՛վ Նէարքոս, զՏէր մեր Յիսուս Քրիստոս, որում դու սրբութեամբ և հանդերձ դողութեամբ երկիր պագանես. նորա մատուցեալ առ իս և զաղտեղիս զայս զմարդկային զքղամիդս զոր զգեցեալ ունէի՝ 'ի բաց եհան յինէն, և ևս պատուականագոյն և լուսանման զգեցոյց ինձ, ոսկեճաճանչ զարդարեալ միանգամայն, և առ այսպիսի զգեստ՝ և ձի թևաւոր պարգևեաց ինձ:

Եւ արդ այսպիսի և այսոքիկ ոչ եթէ դատարկ ինչ և ընդ վայր է տեսիլ մարտիրոսիս, այլ զհանդերձեալսըն յառաջագոյն աստուածութիւնն նշանակէր նմա զմարտիրոսութիւնն. քանզի զգեստուն փոփոխումն 'ի յետոյն 'ի լաւ անդր, այսինքն փոխել 'ի չարութենէ 'ի լաւութիւն անդր և զերկնային յառաջադիմութիւնն նշանակէր, և երկնային զօրական հրամայէր լինել փոխանակ երկրաւորիս։ Իսկ տեսիլ թևաւոր ձիոյն որ շնորհեցաւ նմա յԱստուծոյ, ոչ այլ ինչ նշանակէր, եթէ ոչ 'ի յերկրէս 'ի յերկինս զվերագնացութիւն ակնարկէր։ Զայս լուեալ Նէարքոսի 'ի նմանէ և 'ի բազում խնդման եղեալ՝ ասէ ցնա. Ուրեմն և դու ծանեար զՔրիստոս Աստուածն երկնաւոր՝ որ միշտն է, զմեծատուն՝ որ մեծատունն է երկնաւոր մեծութեանն, և աննախանձ և առատապէս բաշխէ զշնորհս ամենեցուն որ կարդան առ նա։ Իսկ ապա առ այսոսիկ ասէ ցնա Պօղիքտոս. Եւ երբ անգիտացայ ես զՏէրն իմ և զՓրկիչն Յիսուս Քրիստոս. և կամ դու յորժամ ասէիր ինձ զնմանէն՝ ո՞չ սքանչացեալ զարմանայի. և կամ յորժամ ընթեռնուիր դու զաստուածային գիրս, ո՞չ 'ի լսելոյ անտի արտասուեալ դողայի. զի թէպէտ և անուամբ ոչ կոչէի քրիստոնեայ անուն, այլ յօժարութեամբ և իրօք 'ի ծառայութիւն զիս ինքն Փրկչին փութայի կարգել, քանզի ամենայն ուրեք և յամենայն ժամ փոյթ յանձին ունէի յամօթ առնել զընդունայն կռոցն զմոլորութիւնս, և զսուտ և զխաբող նոցա զխաբէութիւնն։

Եւ իբրև լսէր զայսոսիկ Նէարքոս զբանս՝ լնոյր անձն նորա ցնծութեամբ և ասէ ցերանելին Պօղիքտոս. Յաղագս պիղծ և սուտ կռոցն, քանզի նոցա հարկաւորիմք այժմ զոհել յանօրէն թագաւորացս. իսկ որք ոչ կամեցցին զոհել՝ այլ Քրիստոսի ծառայել, նոքա սպանմամբ սրոյ վախճանեսցին 'ի կենացս յայսցանէ։ Եւ արդ այժմ զի՞նչ ասես, ո՛վ Պօղիքտիէ, մի՞ արգելուր զիս յարտասուելոյ, ո՛վ Պօղիքտիէ, և յողբալոյ վասն քո. քանզի երկուցեալ եմ թէ գուցէ կորուսից զքեզ 'ի սիրոյ իմմէ. վասն զի ակնկալութիւն իմն եկն յիս որպէս թէ հրամանաց թագաւորին հնազանդիցիս. քանզի չև ես կատարեալ քրիստոնեայ հանդիպեցիս, և հարկաւորեցիս զոհել կռոցն:

Իսկ երանելին Պօղիկտոս իբրև զայս լսէր՝ զշարժումն հոգւոյն վառէր առ Աստուած, և մարմնաւորական աչօք իբրև զայրացեալ հայէր ընդ Նէարքոս, և բուռն հարեալ զձեռանէ նորա ասէր. Ապա ուրեմն այսօրէնս էին յորժամ դու երկնչէիր, ով Նէարքոս. այսպիսի՞ կարծիք էին 'ի սկզբանէ առ քեզ վասն իմ. և կամ զայսպիսի՞ ակնկալութիւն պարտ էր ինձ 'ի քէն ընդունել, որ յամենայն ժամ զաստուածային և զանճառելի խորհուրդն ընթեռնուիր ինձ. և իմ զայն լուեալ՝ զգարշ և զպիղծ կուռսն անպատուեալ ունէի: Եւ արդ զի՞նչ է, ով ընկեր իմ Նէարքոս, որ և զմարմնաւորական զօր ոչ ճանաչէաք մինչև ցայժմ, իսկ զհոգևորականն և զանճառելին որ ընդ Աստուծոյ խօսակից առնէ, զայն մինչև ցայժմ տգիտանայաք. և արդ ընդէ՞ր ոչ արկանեմք 'ի վար զկիրս մեր, ով Նէարքոս, և կամ ընդէ՞ր ոչ յայտ յանդիման քարոզեմք զհաւատսն՝ որ 'ի Տէր մեր Յիսուս Քրիստոս:

Իսկ Նէարքոս որպէս թէ 'ի քնոյ ինչ զարթուցեալ՝ յերանելւոյն 'ի Պօղիկտոսէ բանիցն, և զիւր հոգին և զմիտսն վերստին կանգնէր, և ասէր առ սուրբն, թէ՝ ինձ, ով Պօղիկտոսէ, ոչ մեծութիւն և ոչ զինուորութեան պատիւ, ոչ կեանք աշխարհիս այսորիկ պատուականագոյն թուին քան զկեանսն Քրիստոսի. այլ զանմահութիւն և զփրկութիւն և զյաւիտենականն՝ փոխանակ մարդկային և առժամանակեան կենացս յառաջ պատուել հաճոյ է ինձ: Իսկ Պօղիկտոս իբրև զայս լսէր, կամէր փորձել զհաւատսն և քննել զյօժարութիւն նորա. ասէ ցնա. Եւ ո՞չ խնայես դու, ով Նէարքոս, յայդպիսի պատիւ: Իսկ նորա համարեալ թէ ճշմարտութեամբ հարցանէ զայն և ոչ թէ փորձելով ինչ, ասէ ցնա. Թէ գիտէիր զոնէ 'ի տանս դու զիմ զպատիւն որ 'ի Քրիստոսէ տուեալ է ինձ և զյառաջադիմութիւնն, քանզի յայտնապէս և հոգևորապէս խօսէր ընդ նմա. անդէն իսկ ըստ աստուածային կամացն յօրինի և 'ի յօժարութիւնն: Ասէ ցնա սուրբն Պօղիկտոս. Դու կարծիս ունիս տգիտանալ ինձ զյառաջադիմութիւնդ քո որ 'ի Քրիստոս, և զհանդերձեալ պատիւդ քո որ 'ի նմանէ. այլ նախ քան զքեզ, ով Նէարքոս, ես յառաջադէմ եղէ 'ի Փրկիչն. քանզի երկնաւոր և թագաւորական քղամիդ 'ի Փրկչէն 'ի ձեռն յայտնութեանն ընկալայ այսօր: իսկ ես զքեզ կամիմ զլուխ մի հոգևորական բանի հարցանել, և արդ քանզի երկնչիմ և կասկած 'ի մտի ունիմ եթէ գուցէ եթէ անկատար երթիցեմ առ Փրկիչն, և ոչ ընդունիցի զիս ընդ այլ զօրականսն հոգևորս. և արդ իցէ՞ հնար արդեօք որ ոչ իցեն կատարեալ և սուրբ խորհրդոյն չեն հաղորդեալք՝ եթէ ընդունակք գտանիցին Աստուծոյ:

Իսկ Նէարքոս յերանելւոյն Պօղիքտոսի միտսն հայելով՝ որպէս զի չև ևս քրիստոնեայ հանդիպեալ, և անփորձ եղեալ աստուածային խորհրդոյն, կամելով ևս մեծագոյն հաւատս զնա յորդորել, յիշատակ նմին յաստուածային գրոց յիշեցուցանէր նմա, որ ևս առաւել յորդորեսցէ զերանելին 'ի հաւատսն: Եւ սկսաւ ասել առ նա այսպէս. Մի երբէք, ասէ, ով Պօղիքտիէ, յերկուանար ինչ վասն այդորիկ. քանզի կարող է Աստուած, որպէս և ասեն աստուածային գիրք, 'ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու, այսինքն յանյոյս և որք ակն ոչ ունիցին՝ յօժարութեամբ. և բազումք 'ի հեթանոսաց մարդիկ՝ կարգին 'ի զօրականութիւն Քրիստոսի. քանզի ահաւասիկ առ հասարակ ամենեցուն բացեալ են դրունք երկնից, և անմահ փրկութեանն մուտ՝ ոչ երբէք փակեցաւ. թէպէտ և 'ի սակաւ ժամու ոք հաւատասցէ՝ մեծ վարձս ընդ սակաւուն ընդ այնորիկ և ընդ ճշմարտի հաւատոյն ընդունի. վասն այսորիկ և Փրկիչն յաւետարանին զայս ամենեցուն հրամայէ տալ ըզվարձս որք յառաջին ժամուն և որք յիններորդին և որք 'ի մետասաներորդումն մտանէին մշակքն, որպէս եթէ և անագան երբէք մտանիցես առ Փրկիչն՝ զնոյն վարձս ընկալեալ երևեսցիս: Եւ առ այսոսիկ՝ Նէարքոսի 'ի բանս 'ի հիմն և 'ի յիշատակ բանից եկեալ երանելւոյն Պօղիքտոսի, որ զուգեալ հաւատարէին զասացեալսն 'ի նմանէ, և ասէ ցնա. Ճշմարտապէս լուայ ես երբեմն 'ի քէն, զի ընթեռնուիր զաստուածային գիրս, թէ մի ժամ վաստակեցին մշակքն, և ընդ այնոսիկ որք զաւուրն ծանրութիւն բարձին՝ հրամայեաց Փրկիչն տալ զվարձսն։ Եւ Նէարքոս ասէ ցնա. Եւ զայլ ևս պատմութիւնս յիշեա, ո՛վ Պօղիքտէ, որ զքեզ առ հաւատըս Փրկչին ևս առաւել զարթուցանեն, 'ի Տեառն պատմութենէն. 'ի միտ առ զաւազակն որ ընդ աջմէ խաչեալ էր. զի՞նչ ասէր ցայն՝ որ ընդ ձախմէն խաչեալ էր և հայհոյէր, եթէ՝ Մեք յիրաւի զոր ինչ գործեցաքն՝ կրեցաք, իսկ Փրկիչս մեր անպարտ և անմեղ էր խաչի. և զայս ասելով դառնայր և ասէր. Յիշեա զիս, Տէր, յարքայութեան քում։ Եւ ապա զի՞նչ պատասխանի առնէր նմա Փրկիչն, ընդ փոքր և ընդ անպաճոյճ հաւատոյն որպիսի՞ մեծամեծս խոստանայր նա և ասէր. Դու այսօր ընդ իս ես 'ի դրախտին։ Տեսանե՞ս, ո՛վ Պօղիքտիէ, զիա՛րդ փոքր մի հաւատք որպիսի՛ մեծ աւետիս պարգևէ. ահաւասիկ հաւատք ըստ աւետարանին ասացուածին, թէպէտ և փոքր՝ հանդիպելին բոլորովին իսկ զլերինս փոփոխել։

Եւ ապա առ այսոսիկ երանելին Պօղիքտոս գոչէր և ասէր. Եւ է՞ կարողութիւն, ո՛վ Նէարքոս, առանց մկրտութեան՝ այսպիսի իրաց դիպել մարդկան։ Ասէ ցնա Նէարքոս. Ամենայն ինչ սուրբ է սրբոց, որպէս և աստուածային գիրք ասեն. իսկ որք պղծեալքն են յօժարութեամբ՝ նոցա ոչինչ է սուրբ, վասն զի ապականեալ են միտք և խորհուրդք նոցա. ահաւասիկ տեսանեմք զՏէրն. յորժամ մատչէին առ նա կոյրքն զի բժշկութիւն ընկալցին 'ի նմանէ՝ ոչ ինչ յաղագս աստուածային խորհրդոյն ճառէր նոցա, և ոչ թէ մկրտութեան հանդիպեալ էին՝ հարցանէր. այլ զայն միայն թէ ճշմարիտ հաւատովք մատչիցին առ նա. ուստի հարցանէր զնոսա. Հաւատա՞յք, ասէ, թէ կարող եմ առնել զայդ։ Իսկոյն պատրաստ զիւր մարդասիրութիւնն ցուցանէր, և զզօրութիւնն և զբանն միոյ բարբառելոյ՝ հրաման տայր մարմնաւորական աչաց տեսանել նոցա, և անդէն իսկոյն բանային աչք նոցա։

Ապա առ այսոսիկ երանելին Պօղիքտոս յորդորէր զհոգին իւր, և երկրաւոր իրաց 'ի մոռացումն դայր, գոչէր յանկարծօրէն և ասէր, թէ՝ Ես ընդ Քրիստոսի միաւորեցայ 'ի սկզբանէ, և նա պարտի ինձ հող տանել և խնամել. քանզի ես 'ի բաց հրաժարեցի 'ի մարդկային իրացս, այսուհետև պարտ է ինձ վասն Քրիստոսի վկայել: Իսկ Փրկչին օրէնսդրութիւն յառաջագոյն ծանուցաւ, որ ուսուցանէր և ասէր, թէ՝ Մինչչև ստեղծեալ էիր յորովայնէ՝ ծանեայ զքեզ, և յառաջ քան զելանել յարգանդէ՝ սրբեցի զքեզ. ապա ուրեմն յայտ է թէ յերկինս հրաւիրեաց զիս. քանզի ահաւասիկ հեթանոսք աստուածատեացք՝ երևեալ տեսանէին զՏէր Յիսուս մերձ առ իս կացեալ, և 'ի Ճառագայթից լուսոյ երեսաց նորա զիմ զերեսս պայծառացեալ: Եւ արդ ժամ է մեզ երթալ և ընթեռնուլ զանարժան զհրամանս թագաւորին:

Եւ յընթեռնուլ երանելւոյն Պօղիքտոսի՝ սկսաւ այպն առնել զայնպիսի մարդկային օրէնսդրութիւն, և բուռն հարեալ զգրոյն՝ 'ի բաց պատառեաց մասն մի. և յետ այսորիկ հայեցեալ 'ի միւս կողմն տեսանէր՝ զի զգրեալ կուռսն բարձեալ բերէին 'ի մեհեանս անդր ուր սովոր էին, և ոստովք և տերևովք զարդարեալ էին զնոսա. որպէս զի այնպիսի տեսլեամբք խաբեալ մարդիկ՝ 'ի տես երթիցեն անուանեալ աստուածոցն: Զայսոսիկ զկուռս հայեցեալ տեսանէր սուրբն Պօղիքտոս, և երկնային ծաղու խնդացեալ՝ այպանէր զնոսա. և մատչէին յօժարութեամբ իւրաքանչիւր ոք առ կուռսըն: Եւ նորա բուռն հարեալ հարկանէր զգետնի զիւրաքանչիւր ոք 'ի նոցանէ, և անդէն վաղվաղակի միանգամայն զամենեսեան առ հասարակ խորտակեալ մանրէր:

Եւ իբրև այս եղև՝ գայ աներ նորա Փելիքս, որ հալածիչն կարգեալ էր յանօրէն թագաւորացն. յիմարեալ հիացեալ լինէր ընդ իրսն որ 'ի սրբոյն Պօղիքտոսէ գործեցան. ասէ ինքն ցինքն Փելիքս. Վրիպեցայ 'ի յերկաքանչիւրոցս, և այժմ անզաւակեցայ ես Փելիքս. քանզի առաջինն փախճանեցաւ, և ես պերճացեալ պարծէի փեսայիւս. իսկ այժմ չուառատես անզաւակեցայ, քանզի ոչ ոք յայսմհետէ ողորմել կարիցէ Պօղիքտոսի, ոչ աստուածքն և ոչ ինքնակալ թագաւորքն, որ զայնպիսի իրս յանդգնեցաւ առնել.

և զամենայն աստուածքն մեր յանիրաւի փշրեալ խորտակեաց: Իսկ Պօղիւքտոս ասէ. Սակայն ես զնոսա արհամարհեցի, և զանզօրութիւն նոցա նովին գործով յանդիմանեցի. իսկ ապա և այլ աստուածս ունի՞ս, ով Փելիքս, տես, և զնոսա ես յառաջ բերել փութա, որպէս զի լինէին ’ի ծառայէս Աստուծոյ անարգեալ չքաւորեսցին:

Յայնժամ դարձաւ առ սուրբն՝ Փելիքս, և ասէ ցնա. Փոյթ յանձին կալ գոնէ մի ժամ, զի կեցցես, ով Պօղիւքտէ, և առանձինն միայնացիր լռութեամբ, որպէս զի յառաջ քան զվախճանն տեսցես զամուսինն քո: Իսկ սրբոյն Պօղիւքտոսի զերկնային իմաստութիւնն ’ի կիր արկեալ՝ ասէ ցնա. Զո՞ր կին կամ զորդիս ունիմ տեսանել ես, եթէ ոչ զհոգևորն և զերկնային բարիս, զոր Քրիստոսն պատրաստեաց ինձ. բայց դուստրն քո թէ կամեսցի հետևել ինձ և իմոյ կամացս հետևեսցի, և փոյթ յանձին ունիցի, երանելի և փառաւոր ոմն է. իսկ ապա թէ այլ ինչ կամք իցեն նմա, սոյնպէս և նա առ անուանեալ աստուածսն դարձաւ: Եւ յայս իսկ ’ի բանս արտասուէր Փելիքս, և տեսանէր թէ ամենայն իսկ վճարեալ է Պօղիւքտոսի մարդկային կ...[1] աստի: Ասէ ցնա. Եւ զքե՞զ, ով Պօղիւքտէ, խաբեցին Քրիստոսի մոլորութիւնք: Իսկ սուրբըն Պօղիւքտոս ասէ ցնա. Ես խոստովանիմ թէ ’ի նորա զօրութենէն ձգեալ հոգւոյս և յօժարութիւն կամացս զկնի իւր. քանզի Քրիստոս անհասանելի զօրութեամբն այսքան է, զի նոյն ինքն անճառելի իւրով թագաւորութեամբն մեկնեաց զիս ’ի կռապաշտութենէ մոլորութեանն, և զօրական ընտիր զիս արժանի արար ցուցանել: Եւ զայնպիսի բանս ճառեալ նորա, իսկոյն զաստուածային և զերկնային զօրութիւնն յինքն նկարեալ լինէր:

Յայնժամ մատուցեալ հալածչացն և սպասաւորացըն՝ կոճկամբն իւրեանց անողորմ ծեծէին զբերան նորա: Իսկ սուրբն ոչ ինչ զգայր այնպիսի հարուածոց, քանզի տեսանէր զայն որ վասն նորա խաչեցաւն՝ զի մերձ առ նմա կայր: Յայնժամ սուրբն մեծաւ զայբազմամբ սկսաւ ասել առ Փելիքս այսպէս. Ո՛վ անսուրբդ և պիղծդ և գարշելի խորհրդածուդ, որ թըշուառական և սակաւժամանակեայ թագաւորաց ըսպասաւորիս, ընդէ՞ր խաբես զիս 'ի ձեռն նենգաւոր արտասուացդ, որ 'ի ծածուկդ լի ես ամենայն կեղծաւորութեամբ, յաղագս կնոջ և մանկանց 'ի յուսոյն Քրիստոսի փութաս ընկենուլ զիս. մի ևս այսուհետև զիս արտասուէր՝ զՊօղիքտոս. այլ եթէ ինձ հաւատաս՝ զքեզ ինքն հարկ է արտասուել, որ հանդերձեալ... պիղծ և գարշելի... որութեանդ քո այդ... ... ահազգեաց 'ի խաւարն իջանել:

---

[1] Թուի՝ չէնայ:

Եւ զայս ասացեալ երանելւոյն Պօղիքտոսի, և 'ի մարդկայինն իրացս մեկնելով և զերկնայինսն միայն խորհելով և զմտաւ ածէր: Յայնժամ յընթացս յարուցեալ կին մի անուն Պաւլինա, հանդերձ արտասուօք և վշտակցութեամբ՝ ասէ ցսուրբ վկայն. Ընդէ՞ր մոլիս, ո՛վ Պօղիքտիէ, և կամ ո՞ խաբեաց զքեզ յանդըգնել և զայսպիսի իրս գործել և զտասն և երկու աստուածսն խորտակել: Իսկ երանելին Պօղիքտոս ծիծաղեցաւ զբանիւք կնոջն և ասէ ցնա. Զի թէ ես միայն զերկոտասան զաստուածսն ձեր խորտակեցի, ապա ուրեմն ոչ գտեր այլ աստուածս 'ի վերայ երկրի. և արդ թէ ինձ հաւանիս, ո՛վ Պաւլինա, եկ զհետ իմոյ յօժարութեան և հաւատոյ, և փոյթ յանձին կալ, որպէս զի ընդ սակաւժամանակեանս՝ զյաւիտենականն և զանմահ զկեանսն ընկալցիս: Եւ զայսպիսի բանս 'ի կիր արկանելով նորա, և այլ ևս բազում խորհրդական և հոգևորական բանս կատարէր առ նոսա: Եւ տեսանելով զանարատ և զանքակ հաւատս նորա՝ բազումք յանհաւատից հաստատէին 'ի նա: Յայնժամ ապա միաւորեալ ամենայն հալածիչքն, խնդրեցին 'ի թագաւորացն որպէս զի երանելին ընդ գլխատութեամբ մահուամբ անկցի:

Սուրբ վկայն գիտացեալ զայնպիսի անարժան հրամանս՝ արհամարհէր զմարդկային մարմնոյն զչարչարանս. յեւս մեծ իմն յառաջադիմութիւն փութայր, խնդութեամբ և ուրախութեամբ կայր և մնայր հրամանաց պատուհասին: Քանզի նա յերկինս ընդ Փրկչին հրճուէր. իսկ վասն ոգւոյն վշտակցութեանց մինչդեռ էր 'ի մարմնի և ընդ մեզ խօսէր, նա և առ մերձակայ եղբարսն խօսէր զայս. և հաստատէր սուրբ վկայն և ասէր. Զոմն երիտասարդ եկեալ առ իս տեսանեմ, որ խօսէր ընդ իս, և ուսուցանէ փութալ ելանել ինձ 'ի մարդկային իրաց աստի. ապա ուրեմն յայտ է եթէ կատարելոց եմ 'ի Տէր. և պատուական արեամբ նորա խորհրդապէս և աստուածայինն մկրտութեանն և Քրիստոսի կնիքն թուի ինձ թէ է այս:

Իսկ Նէարքոս զարեկամութիւն սիրոյն ոչ երբէք մոռանայր. քանզի էին յերկոսին մարմինսն մի ոգի և մի կեանք: Յայնժամ հայեցեալ վկային 'ի Նէարքոս, ասէ ցնա. Ողջոյն ընդ քեզ. և զանձառելի ուրախութիւնն իմ և զքո յիշեա, եղբայր: Եւ զայս զվերջին զձայնս՝ իբրև զկնիք թողոյր Նէարքոսի. և ինքն կատարի սիրով[1]: Յայնժամ ապա զպատուական և զսուրբ մարմին նորա 'ի Մելիտինէ քաղաք Հայոց թաղեցին պատուով՝ եղբարքն, և իբրև զժառանգութիւն յաւիտենական իւրեանց ընծայեցին. Թաղեցաւ սուրբն յաւուր չորեքշաբաթոջ, քանզի և վայել էր իսկ նմա յայնպիսում աւուր կատարել. քանզի ամենայն ուրեք չորեքկուսի զհաւատս հաստատուն և անշարժ 'ի ձեռն իւրոյ գործոյն եցոյց: Եւ այնպէս զսուրբ մարմինն նորա անդ իսկ եդին. և զպատուական արիւն նորա 'ի կտաւս սուրբս ընկալեալ Նէարքոսի 'ի կանանացւոց քաղաքն տարաւ, իբրև զերանելի իմն ժառանգութիւն, և իբրև զզէն փրկութեան կանանացւոց քաղաքին մերձաւորաց և հեռաւորաց գանձեաց զայս:

Այս ամենայն գործեցաւ յաւուրս Դեկոսի և Վաղերիանոսի յարևելս 'ի յառաջին հալածանսն: Եւ արդ վկայեաց նախ սուրբն Ստեփանոս յԵրուսաղէմ. և երկրորդ Փիղիոր ոմն սուրբ յԱղեքսանդր քաղաքի. և երրորդ սուրբն Պօղիքտոս 'ի Մելիտինէ, յառաջ քան զչորս ընդիքտիոնին Արաց ամսոյ. 'ի թագաւորութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում փառք և զօրութիւն յաւիտեանս. ամէն:

---

[1] Այսպէս յօրինակին. այլ յայտ է սրով գոլ:

Եւ յետ չարչարանաց սրբոյն Պօղիկտոսի՝ ես տառապեալս Նէարքոս՝ ետու զՅիշատակարանն Տիմոթէոսի Կանանացւոյ եւ Աւկտար[1] Նեղոսի, եւ երդմնեցուցի զնոսա 'ի դատաստանն Քրիստոսի եւ 'ի յաղթութիւն սրբոյն Պօղիկտոսի 'ի Քրիստոս. որպէս զի տարւոյ տարւոյ կատարեսցեն զօր նորա, եւ զՅիշատակարանն ընթերցցին խնամով: Իսկ Տիմոթեայ ընկալեալ զայն Յիշատակարան՝ եդ 'ի սուրբ եկեղեցւոջ, ուր եւ....:

---

[1] Թուի Actuarius, որ է Նոտար:

Վկայաբանութիւն Սրբոյն Ռոմանոսի և Մանկանն խոստովանողի և Հիւսիքոսի զինուորին։

Ասկղեպեայ հազարապետի կամեցեալ մտանել յեկեղեցի Անտիոքացւոց և հալածել զքրիստոնեայս, երանելին Ռոմանոս յառաջեալ պատուիրեաց այնոցիկ՝ որք 'ի սուրբ եկեղեցւոջն էին և որք 'ի դրունսն նստէին՝ կէս սարկաւագացն, և ասէ ցնոսա. Իբրև զարս հաստատունս կացէք, և մի՛ թողլ տացուք Ասկղեպիադայ՝ մտանել յեկեղեցիս։ Իսկ ոմանց 'ի զօրականացն զայս լուեալ, հասուցին յԱսկղեպիադէս զբանն, և ասեն. Ոմն 'ի միայնակեցացն Ռոմանոս անուն՝ հաւանեցոյց զամենեսեան որք յեկեղեցւոջն են, և զանուանեալսն կէս սարկաւագաց՝ արգելուլ զմեզ, եթէ կամիցիս մտանել յեկեղեցին։

Ասկղեպիադէս իբրև լուաւ զայս՝ հրամայեաց ածել զառաջեաւ զսուրբն Ռոմանոս. և իբրև եկն նա, ասէ ցնա. Ա՛յ պիղծ և երեքթշուառեան, զի՞նչ զմտաւ ածեալ պատուիրեցեր եկեղեցականացն՝ արգելուլ զիս։ Ռոմանոս ասէ. Վասն զի չէ քեզ օրէն 'ի տունն Աստուծոյ մտանել. զի մի՛ յանդգնութեամբ իշխանութեանդ քո ձեռնամուխ լիցիս գործել անարժան ինչ 'ի տան Աստուծոյ։ Ասկղեպիադէս ասաց. Թշուառական այր և չարաբախտ, արդ երկուցեա՞լ 'ի քէն չմտանեմ. 'ի թագաւորն արեգակն երդուեալ, սաստիկ տանջանօք զքեզ խոշտանգեալ՝ յետոյ 'ի հուր մատնեցից, 'ի ցոյց ամենեցուն՝ որք քև հրապուրեցան։ Ռոմանոս ասաց. Մի՛ համարիր երկեցուցանել զիս սպառնալեօք քովք. այլ զայս գիտեա զի վասն երկիւղի իմոյ ոչ մտեր, և զի ոչ ետ քեզ Աստուած մտանել 'ի տուն իւր: Ասկղեպիադէս բարկացեալ հրամայեաց կախել զնա. իսկ դիւանապետքն ծանուցին նմա եթէ յազգէ է քաղաքապետացն: Ասկղեպիադէս հրամայեաց իջուցանել զնա 'ի կախաղանէն, և ասէ ցնա. Ասա ինձ թէ արդեօք 'ի քաղաքապետացըն ազգէ՞ ես, որպէս և դիւանապետքն ասացին ինձ: Ռոմանոս ասաց. Այդ զի՞նչ առնէ. կարծես թէ անուամբքդ այդիւ իցէ ազատութիւն քրիստոնէից, և ոչ եթէ զի 'ի ձեռն Քրիստոսի. գիտացեալ զի հարազատք և պատուականագոյնք բազմապատիկ քան զձեզ երևեցաք, որք համարիք ունել իմն յաշխարհիս յայսմիկ. այլ և 'ի նոցին իսկ իրացն ցուցանեմ քեզ՝ եթէ ժամանակն ներեսցէ: Ասկղեպիադէս ասաց. Ա՛յ պիղծ և թշուառական այր, վասն որոյ հարցանեմ քեզ՝ պարտիս պատասխանի առնել և ոչ ճամարտակել. քանզի ոչ եթէ վասն այնր կոչեցար: Եւ հրամայեաց կապարեայ գնդօք զգլուխ նորա մալել. և ասէ ցնա. Մի՛ այդպէս յանդգնութեամբ և ամբարհաւաճութեամբ բարբառիր: Ռոմանոս ասաց. Համարձակութիւնն իմ և խոստումն՝ Քրիստոս է. վասն որոյ և համարձակեալ այսպէս բարբառիմ. և եթէ ցասչիս՝ չտամ պատասխանի. ապա եթէ հարկ առնես ինձ ըստ իւրաքանչիւր հարցուածոց քոց պատասխանի առնել, զի՞ սրտնիս. քանզի եթէ և լռեցից՝ առաւել ես զայրացուցանեմ զքեզ: Ասկղեպիադէս ասաց. Այլ չկամիմ, ո՛վ պիղծ, զի այդպիսի մեծաբանութեամբ բարբառիցիս, և յանդգնաբար պատասխանի առնիցես, այլ հեզութեամբ, որպէս և ձեր իսկ կրօնքն պահանջեն: Ռոմանոս ասաց. Այլ երևի՝ թէ ե՛րբ պարտի քրիստոնեայն հեզութեամբ բարբառել և ե՛րբ համարձակութեամբ. քանզի և գիրն մեր ասէ, եթէ՝ Մի՛ երկնչիք յայնցանէ որ զմարմինս սպանանեն, և զոգին ոչ կարեն սպանանել: Ասկղեպիադէս ասաց. Ա՛յ պիղծ այր, զիա՞րդ կարէ այդ լինել որպէս ասացեր. եթէ պատուականագոյնքդ էք դուք քան զմեզ որ զայդ օրէնսդ ունիք: Ռոմանոս ասաց. Եթէ ոչ դարձեալ ցասնուցուս, ասեմ. սակայն եթէ ցասչիս, այդ զի՞նչ վնասէ ինձ. քանզի արդարև Աստուծով՝ որ զօրութիւն տայ մեզ, արդարև առաւել եմք քան զձեզ՝ որ զիշխանութիւնդ ունիք 'ի սնոտի յաշխարհիս յայսմիկ. և մանաւանդ քան զայնոսիկ՝ որք զԱստուծոյ գիտութիւնն ոչ ունին այլ զանաստուածութիւն: Ասկղեպիադէս ասաց. Եւ զիա՞րդ կարէք քան զմեզ աւելի լինել, մարդիկ՝ որ ընդ ձեռամբ մերով էք յամենայնի և հարկս մեզ տայք: Ռոմանոս ասաց. Եւ յառաջագոյն իսկ ասացի քեզ, եթէ մեք քան զձեզ լաւագոյնք եմք. վասն որոյ երկայնմտութեամբ լուր ինձ: Դուք փութայք հաճոյ լինել առժամանակեան թագաւորաց ձերոց, որ յանցաւոր և 'ի սնոտի յաշխարհիս յայսմիկ զպատիւն տան ձեզ. իսկ մեք եթէ փութացուք հաճոյ լինել Աստուծոյ՝ և աստ պատուականք եմք, և յաշխարհին յայնմիկ զարքայութիւնն երկնից ժառանգեմք: Դուք չար միայն գիտէք առնել, մեք բարիս առնեմք Աստուծով՝ հաւատացեալք 'ի նա. դուք դիւաց երկիր պագանէք, մեք անուամբն Քրիստոսի զդևս հալածեմք. դուք առ սակաւ ժամանակ կալեալ զիշխանութիւնն, անողորմութեամբ վարէք առ մարդիկ, մեք պատուէր ունիմք և զթշնամիս սիրել, և յաղօթս կալ վասն այնոցիկ որ հալածեն զմեզ և բռնադատեն: Դուք առ սակաւ ժամանակ 'ի խուռն մարդկանէ գովիք և կամ պարսաւիք, մեք հաւատացեալք յԱստուած՝ 'ի հրեշտակաց գովիմք: Դուք գեհենին առիթք էք մարդկան՝ 'ի դիւացն երկրպագութենէ, մեք 'ի գեհենէ անտի կորզեմք զմարդիկ: Դուք փիլիսոփայութեամբ ձերով զերծուցանէք զմարդիկ 'ի յաւիտենական կենացն, մեք 'ի ձեռն ուղիղ կենաց և հեզութեան՝ 'ի մահուանէ զերծուցանեմք զմարդիկ: Դուք պատիր բանիւք և խոստմամբ և կեղծաւորութեամբ՝ զմարդիկ 'ի մահ յուղարկէք, մեք 'ի ձեռն գրոց 'ի մեղաց դարձուցանեմք զմարդիկ, խոստանալով նոցա զփրկութիւն յաւիտենական և ոչ ըղժամանակեան: Դուք թագաւոր ունիք սակաւաժամանակեան, և ոչ նմա երկիր պագանէք, այլ քարանց և փայտից, մեք թագաւորին յաւիտենից երկիր պագանեմք և զնա միայն պաշտեմք: Դուք և զայնոսիկ որք չպարտին ինչ ձեզ՝ բռնութեամբ պահանջէք, մեք պարտապանացն մերոց՝ որ արդարև պարտին մեզ, զպարտսն շնորհեմք։ Դուք զաշխարհս յափշտակէք և զրկէք, կարծեցեալք եթէ յաւիտենականք իցէք, մեք և զշնորհն մեզ՝ տամք աղքատաց վասն Աստուծոյ։ Ուստի այդիւ ամենայնիւ պատուականագոյնք եմք քան զձեզ։

Ասկղեպիադէս ասաց. Շատ յանձին կալայ քեզ և համբերի վասն բազմութեանս որ շուրջ կան. այլ սակայն զի՞նչ առաջի եդեալ կամ զի՞նչ զմտաւ ածեալ, ա՛յ պիղծ, այդպէս 'ի վերայ թագաւորաց խրոխտանաս։ Ռոմանոս ասաց. Ոչ է այն խրոխտումն, այլ ճշմարտութիւն. քանզի ո՞ ոք է 'ի մարդկանէ որ ոչ գիտէ, թէ իւրաքանչիւր մարդոյ կեանք առժամանակեան են, և մահն անյայտ է ամենեցուն, և թագաւորաց և իշխանաց և ազատաց և ծառայից. վասն որոյ ոչ էք առաւել դուք քան զմեզ տնանկքս։ Ասկղեպիադէս ասաց. Այդչափ թողացուցի քեզ շաղակրատել, թողեալ զկարևորսն. ինքնակալ թագաւորքն հրամայեցին ձեզ քրիստոնէիցդ՝ կամ զոհել աստուածոցն, և կամ 'ի հուր մտանել։ Ռոմանոս ասաց. Գովեմ զքեզ Ասկղեպիադէս, զի զամօթի հարեալ՝ թողեալ զառաջինն՝ և զյետինն անուանես առաջին լինել. այլ ես ևս առաւել մոլեկան գտայց քան զձեզ, եթէ թողեալ զԱստուած՝ որ ձգեաց զերկինս և հաստատեաց զերկիր, և քարանց և փայտից երկիր պագից, որք 'ի ձեռաց մարդկան կազմեցան։

Իսկ Ասկղեպիադէս հրամայեաց զբերան նորա ծեծել յերկար և ասէ. Մի՛ յանդուգն զմտաւ ածեր, զի առաջի հազարապետի կաս. և ասա ինձ թէ արդարև 'ի քաղաքապետացն ազգէ ես։ Ռոմանոս ասաց. Եւ յառաջագոյն ասացի քեզ, թէ այդ զի՞ առնէ. իմ տոհմականութիւն և պատիւ և փառք և ազգականութիւն Քրիստոս է. որ ամենայն ազատութեամբ զգեցուցանէ զմերձաւորս իւր և զերկիւղածս իւր. պատուեմ և երկնչիմ առաւել քան զքեզ՝ ծառայս Աստուծոյ. հազարապետ՝ որ զԱստուած չգիտէ, ոչ գիտեմ ուստի՛ գայ կամ յո՛ երթայ։ Ասկղեպիադէս ասաց. Թէ և ես յայնմ ազգէ, 'ի ձեռն տանջանաց անարգեցիր զանձն քո։ Ռոմանոս ասաց. Քրիստոսիւ, զի զոր համարիդ անարգութիւն՝ այդ ինձ փառք են, և ամենեցուն՝ որ գան յայսպիսի խոստովանութիւն։

Ասկղեպիադէս ասաց. Կախեցէք զնա և քերեցէք քաջիկ՝ ըստ փոխելութեան դորա։ Ռոմանոս ասաց. Ոչինչ օգտիս տանջելովդ, այլ միայն աշխատութիւն հասուցանես քեզ. և հաւատամ յԱստուած, եթէ տայ ինձ այնպիսի զօրութիւն, զի համբերեալ յաղթեցից քեզ և հօրն քում սատանայի, որ գրգռէ զքեզ 'ի վերայ ծառայիցն Աստուծոյ։ Ասկղեպիադէս ցասուցեալ ընդ բանս նորա, ասաց. Քերեցէք զծնօտս նորա, զի մի կարասցէ բարբառել 'ի տանջանացն։ Ռոմանոս ասաց. Գիտէ Քրիստոս Որդին Աստուծոյ, եթէ առաւել ևս բացան երախքս իմ, քանզի ճշմարտութեան քարոզ եմ և ոչ ձերոյ յիմարութեանդ։ Ասկղեպիադէս ասաց. Արդ որպէս դու ասես, փոխելանա՞ն ինքնակալքն զի երկիր պագանեն աստուածոցն։

Ռոմանոս ասաց. Ոչ սակաւ ինչ փոխելեան, այլ և յոյժ իսկ. ապա թէ կամիս հաստատութեամբ ուսանել, եթէ իմաստութիւն ձեր յիմարութիւն է՝ ըստ իմոց գրոց, երդմնեցուցանեմ զքեզ 'ի թագաւորն քո, զի հրամայեսցես ածել այսր մանուկ մի և հարցանել զայս. Զինչ արդար է, Աստուծո՞յ երկիր պագանել, եթէ աստուածոցն. և զինչ մանուկն ահա ընտրեսցէ՝ արդարութեամբ զայն առնեմք։ Ասկղեպիադէս ասաց. Վասն զի երդմնեցուցեր 'ի փրկութիւն տերանց մերոց թագաւորաց, հրամայեմ ածել զմանուկն. այլ դու ոչ ճողոպրեսցիս 'ի ձեռաց իմոց վասն յանդգնութեանդ քո։

Եւ հրամայեաց Ասկղեպիադէս յանկարծակի մանուկ փոքր յափշտակել 'ի հրապարակէն և ածել զառաջեաւ։ Եւ իբրև ածին, ասաց Ասկղեպիադէս ցՌոմանոս. Ահա մանուկն, որպէս ասացերն և խոստացարն՝ պարտիս այսուհետև կատարել։ Ռոմանոս ասաց. Միայն ճշմարտութեամբ ասա ինձ, քո առաջի հարցանեմ զմանուկն։ Ասկղեպիադէս ասաց. Հարց զմանուկդ։ Եւ Ռոմանոս սկսաւ հարցանել զմանուկն, և ասէ ցնա. Որդեակ, զի՞նչ արդար է, Աստուածո՞յ երկիր պագանել, եթէ աստուածոց՝ զոր սոքայս ասեն: Եւ մանուկն ասաց. Արդար է Աստուծոյ երկիր պագանել, որ արար զամենայն բանիւ, քանզի աստուածք՝ հաստուածք մարդկան են: Ասկղեպիադէս ասաց. Բարձցի մանուկդ զուսով. և հրամայեաց հարկանել զնա և ասել. Ո՞վ ուսոյց քեզ: Եւ մանուկն ասաց. Արդարութեամբ՝ չուսոյց ոք. այլ 'ի մօրէ իմմէ լուայ, որ ասէր այդու այդու. Մի է Աստուած և մի է Քրիստոս Նորա: Եւ հրամայեաց Ասկղեպիադէս ածել զմայր նորա. և իբրև ածաւ, հրամայեաց կացուցանել զնա դէմ յանդիման մանկան նորա, զի տեսցէ զչարչարանս որդւոյն իւրոյ. և ասաց Ասկղեպիադէս ցմանուկն. Արդ և դու քրիստոնեա՞յ ես: Մանուկն ասաց. Այո, 'ի Քրիստոս ունիմ զյոյս իմ որպէս և մայրդ իմ:

Ասկղեպիադէս ասաց. Կախեսցի պատանեակդ: Եւ դահիճքն վաղվաղակի արարին զհրամանն: Եւ մինչդեռ 'ի կախաղանին և 'ի չարչարանսն էր մանուկն՝ ծարաւեցաւ, և ասէ. Մայրիկ իմ, տուր ինձ սակաւ ջուր ըմպելոյ, զի ծարաւի եմ: Եւ մայրն ասաց. Մի՛, որդեակ, մի՛ ըմպեր զջուրս զայս, այլ չոգ առ ջուրն կենդանի՝ առ Տէր մեր Յիսուս Քրիստոս: Ասկղեպիադէս ասաց. Կախեցէք զՌոմանոս և բերեցէք զդա սաստկագոյն տանջանօք: Ռոմանոս ասէ. Ես 'ի հանգըստեան եմ, զի չարչարիմ և յաղթեմ քեզ. այլ առ ձեզ ո՞ր ճշմարտութիւն գտանի, զի յաղթահարեալ յինէն՝ հրամայես հարկանել զիս. Նման ես Թագաւորացն քոց՝ որ այդպէս ընդ վայր առանց իրաւանց հաշեն զմարդիկ տանջանօք: Ասկղեպիադէս ասաց. Ըստ փոխելութեան քում՝ 'ի հուր մատնեմ զքեզ, որպէս և ես արժանի: Ռոմանոս ասաց. Հաւատամ յԱստուած կենդանի, եթէ արժանի եմ այսմ տանջանաց, զի թէ չէի արժանի՝ չէր իմ արդեօք եկեալ յայս. այլ Տէրն մեր Յիսուս Քրիստոս համբերութիւն ետ ինձ և զօրացոյց զիս, զի այսպէս և այսքան չարչարեալ՝ համբերից և խոստովանեցայց զնա առաջի մարդկան ամենեցուն: Եւ յայսմ հետէ ասեմ քեզ, եթէ հուրն քո քան զջուր ցրտագոյն գտանել ունի:

Ասկղեպիադէս ասաց. Ի Թագաւորն արեգակն երդուեալ, 'ի հուր հրամայեմ արկանել զքեզ, և տեսցուք եթէ օգնէ քեզ Քրիստոսն քո, զոր դուն խոստովանիս. այլ զմարդ խաչեալ՝ ես և յանուանէ կոչել ամաչեմ: Ռոմանոս ասաց. Այն ամօթ ինձ լիցի և ամենեցուն որ սիրեն զԱստուած. այլ ես ասեմ քեզ, թէ օգնեաց ինձ Քրիստոսն իմ և օգնէ. և զհուրն զոր ասես՝ տեսանել անգամ չտայ ինձ: Ասկղեպիադէս ասաց. Եթէ այդպէս է, ապա կախարդ ես: Ռոմանոս ասաց. Մեք զկախարդութիւնս կախարդաց՝ անուանելով զՔրիստոս՝ 'ի դերև հանեմք, վասն որոյ հզօրագոյն եմք քան զձեզ. այլ դու ոչ ես ճողոպրելոց 'ի ձեռացն Աստուծոյ, և ոչ վարդապետն քո սատանայ: Ասկղեպիադէս ասաց՝ զՌոմանոս 'ի բանտ արկանել հանդերձ մանկամբն. և հրամայեաց արտաքոյ քաղաքին հրատ սաստիկ արկանել, և երկայն երկչերտեաւ ընկենուլ զնա 'ի ներքս: Եւ իբրև արկին սաստիկ ըդհրատն, 'ի միւսում աւուր ընդ այգն ընդ առաւօտն տարան զՌոմանոս. և 'ի տանելն յանկարծակի անձրև սաստիկ եղեալ՝ թանայր զամենեսեան և զհուրն շիջուցանէր: Իսկ որ տանէինն զնա՝ դարձան անդրէն վասն սաստկութեան անձրևէն, և զերանելին արկին 'ի բանտ՝ ըստ հրամանի Ասկղեպիադայ: Իսկ որոց լուեալն էր յառաջագոյն զերդնուլն Ռոմանոսի, զարմանային զիա՛րդ անշուշտ մնաց երդումն սրբոյն զոր երդուաւ առաջի իշխանին, և տեսանել անգամ զհուրն:

Ասկղեպիադէս ասաց. Կոչեցէք զՌոմանոս և զմանուկն. և եկին նոքա զառաջեաւ նորա: Ասէ ցնա Ասկղեպիադէս. Մի՛ համարիր թէ վասն քո եղև անձրևս, այլ ժամանակս զիւրն պահանջէ. քանզի ութ և տասն է այսօր քաղոց ամսոյ: Ռոմանոս ասաց. Ես գիտեմ զԱստուած իմ օգնական ինձ յամենայնի և ամենայն ուրեք և ամենայն նահատակաց իւրոց, ուստի ոչ թերահաւատեմ և երկմտեմ՝ թէ վասն իմ եղև անձրևս այս, զի յաղթեցից քեզ անմտի և մոլեկանի և թագաւորացն քոց: Ասկղեպիադէս ասաց. Պատանեակդ գլխատեսցի և այնպէս վախճանեսցի 'ի կենացս՝ վասն յամառութեան իւրոյ. և պիղծդ Ռոմանոս լեզուատեսցի, զի մի՛ այդպէս յանդուգն իշխեսցէ քաջաբարբառ լինել 'ի վերայ թագաւորաց: Ռոմանոս ասէ. Դուք ինքնին պիղծք էք և զմեզ պիղծս կոչէք. քանզի որք ոչ գիտեն զԱստուած՝ նոքա են պիղծք. այլ օրհնեալ է Աստուածն իմ որ պսակեաց 'ի ձեռն իմ ըզմանուկս զայս, որ աճապարեաց, զի ճշմարտիւ գտցի առ Աստուած: Եւ այնպէս գլխատեցաւ մանուկն. և հաւաքեաց զնա մայր իւր:

Եւ կոչեցեալ զԱրիստոն բժիշկ, 'ի հարկէ մեծաւ տրտմութեամբ արտաքոյ քաղաքին, հանեալ եհատ զլեզու Ռոմանոսի. և անդէն 'ի հանել լեզուին՝ 'ի ներքուստ անտի խօսէր: Եւ սկսաւ գոհանալ և ասել. Զի՞ օրհնեցից զքեզ Տէր, և քանի՛ բերանով գոհացայց զքէն, կենաց առաջնորդ: Եւ յաւելեալ 'ի սոյն՝ ասաց. Լցաւ բերան իմ ուրախութեամբ և լեզու իմ ցնծութեամբ: Եւ ևս յաւելեալ ասաց. Օրհնեալ ես դու Տէր, ուսո ինձ զարդարութիւնս քո: Եւ գրեալ յարենէ անտի ետ ցմծտակայմն, և գրեալ էր այս. Երանելիք են սուրբքն սրտիւք. Երանելիք են որ ունին անկեղծ սէր. Երանելիք են որք հրաժարեն 'ի կենացս յայսցանէ վասն Աստուծոյ, զի 'ի նմանէ առցեն զվարձս. Երանելիք են որք չուրացան զԱստուած, զի զնոցանէն խոստովանեսցի Որդի առաջի Հօր իւրոյ:

Եւ լուեալ զայն Ասկղեպիադայ՝ հրամայեաց կոչել զԱրիստոն բժիշկ, և ասէ ցնա. Ա՛յ թշուառական այր, ընդէ՞ր ստունգանեցեր ինձ, և ոչ հատեր զլեզուն Ռոմանոսի՝ որպէս արժան էր: Արիստոն ասաց. Գիտեն քո փառքդ, զի 'ի ներքուստ անտի կտրեցի և 'ի պահեստի կայ այժմ առ իս, զի չափովն հատաւ՝ հաւանեցուցից զքեզ թէ որպէս կտրեցի. արդ եթէ կամիս մահապարտ զոք հրամայեա ածել այսր, և զնոյն չարչարեալ՝ եթէ կարասցէ կեալ վայր մի, զինչ կամիս արա զնա. ապա թէ կամիս 'ի ձեռն անասնոց ցուցանել զփորձն, հրամայեա ածել խոզ: Եւ իբրև ածաւ խոզն և եհատ զլեզուն, նոյնժամայն մեռաւ: Եւ այնպէս զփորձ առեալ՝ արձակեաց զԱրիստոն անպատուհաս:

Ասկղեպիադէս ասաց. Կոչեցէք զՌոմանոս. և իբրև եկն՝ ասէ ցնա. Ո՛վ Ռոմանէ, հաւանեցուցէ՞ր զքեզ բուժել գոնէ յառաջիկայ տանջանացդ։ Ռոմանոս ասէ. Ես զարմանամ ընդ անմտութիւնդ ձեր, թէ զիա՞րդ յաղթահարեալք 'ի նահատակացն Աստուծոյ՝ ոչ ամաչէք. արդ եթէ ոչ հաւատացեր յառաջագոյն եղելոց իրացն՝ գոնէ այժմ հաւատա, եթէ ոչ անմտանամ և զոհեմ դիւաց, և թողում զԱստուածն իմ որ զերկրորդ լեզուս շնորհեաց ինձ, զի յամենայն ժամ օրհնեցից զնա անդադար բերանով։ Ասկղեպիադէս ասաց. Բռնամահ, արդ վասն զի բժիշկն շնորհուկս արար քեզ, այնր աղագաւ կարծես թէ Աստուածն քո այլ լեզու շնորհեաց քեզ. և այլ տանջանս իմացայց քեզ, ըստ փոխելութեանդ քում և անզգամութեան։ Ռոմանոս ասաց. Իմացիր տանջանս՝ որպէս և կամիս. քանզի ես պատրաստ եմ 'ի պատահել ամենայն իմաստից քոց. վասն զի ոչ պատուական ունիմ զմարմին քան զհոգի, և ոչ մեծարեմ զառժամանակեայս քան զյաւիտենականսն, և ոչ զծնողս կամ զազգականս կամ զբարեկամս քան զԱստուած. քանզի չեմ անզգամ և անմիտ՝ եթէ զայդ արարից. այլ իմաստնագոյն եմ քան զքեզ՝ որ զիշխանութիւնդ ունիս 'ի վերայ երկրի։ Յայնժամ յիմար և անմիտ գտանիմ, եթէ երկուցեալ յաղթահարեցայց 'ի քէն։ Երդուեալ 'ի փրկութիւն քրիստոնէից եթէ ոչ զոհեմ դիւաց. արդ գոնէ այժմ հաւատա։

Ասկղեպիադէս ասաց. Ո՞ր փրկութիւն է քրիստոնէից։ Ռոմանոս ասաց. Քրիստոս Որդին Աստուծոյ կենդանւոյ, նա է փրկութիւն յուսացելոց 'ի նա. անքուն Ճրագն, թագաւորն թագաւորաց, արեգակնն արդարութեան, աղբիւրն անսպառ, պսակն նահատակաց, ողորմածն և գթածն՝ որ մեծապէս շնորհէ, որ ոչն զղջանայ 'ի վերայ շնորհեցելոյն, որ ուրախն է 'ի վերայ փրկութեան մարդկան, որ յերկինսն է և 'ի վերայ երկրի, որ հարկանէն և բժշկէ. որ պատրաստէն աղքատաց կերակուր, որ անոխակալն է, որ աննախանձ 'ի հայրենի ժառանգութիւն կոչէ զմեզ, որ արժանի արար զմեզ բարեաց իւրոց, որոց դուք արտաքոյ էք՝ վասն կամաց ձերոց. յոյսն անյուսաց, ուրախութիւն տրտմեցելոց, օգնականութիւն անօգնականաց, քաջալերութիւն 'ի նա փախուցելոց, լոյս ճշմարտութեան, ճանապարհ որ տանի առ Հայր, ճշմարտութիւն, անսուտն Աստուած, նա է փրկութիւն քրիստոնէից։

Ասկղեպիադէս ասաց. Շատ խօսեցար և ազդոյ ինչ ամենևին ոչ ասացեր. արդ զոհեա այսուհետև և բուժեաց, քանզի ոչ տամ քեզ թոյլ, զի մի պարծեսցիս, եթէ Ասկղեպիադայ այնպիսւոյ առն յաղթեցի. այլ սակայն չվստահեցա՞ր 'ի կախաղանիդ։

Ռոմանոս ասաց. Ոչ վստահեցայ, Քրիստոսի թեթևացուցանելով ինձ, քանզի նա է որ յաղթէ քեզ, զի գլուխ յաղթողաց և պսակելոց նա է Քրիստոսն իմ, որպէս և գրեալ է 'ի մերում գիրս, եթէ՝ Գլուխ առն Քրիստոս է. որ մատնէ զքեզ 'ի յաւիտենական տանջանս, քանզի ոյժ թագաւորացն քոց վաղվաղակի անկցին։ Եւ ցասուցեալ Ասկղեպիադայ՝ զամենայն եղելսն հասոյց 'ի Մաքսիմիանոս թագաւոր։ Եւ լուեալ Մաքսիմիանոսի՝ հրամայեաց զՌոմանոս հեղձուցանել 'ի բանտի։ Եւ այնպէս հեղձաւ երանելին, որ օր ութ և տասն էր քաղոց ամսոյ։ Եւ բարձին զնա արք երկիւղածք գաղտուկ։

Եւ Մաքսիմիանոսի առեալ զիշխանութիւն Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի՝ հրամայեաց քրիստոնէից որ էին յարքունիսն՝ լուծանել զգօտիսն և հրաժարել 'ի զինուորութենէ։ Եւ իբրև լուծին բազումք, նշանակէր Մաքսիմիանոս զհրաժարեալսն. և տեսեալ և զՀիւսիքոս զարժանի քաջի երանելւոյ յիշատակի, բարկացաւ յոյժ և կոչեաց զնա. և մերկացեալ զհանդերձս նորա՝ զոր զգեցեալ էր, զգեցոյց նմա պարեգօտս ասուիս, և հրամայեաց տալ 'ի տուն կանանց ասրագործաց, իբրև 'ի թշնամանս նմա, քանզի էր առաջին և երևելի 'ի դրան։ Իսկ սրբոյն երթեալ 'ի կանանց տունն, յոյժ գոհանայր զԱստուծոյ. և բազումք երթային 'ի տես առ նա։ Եւ լուեալ Մաքսիմիանոսի՝ կոչեաց զնա և ասէ ցնա. Ո՛ թշուառական և խոհակերակ, ընդէ՞ր թողեր զպսակն քո և յարեցար 'ի քրիստոնեայս. միթէ կարե՞ն այդպիսի պատիւ շնորհել քեզ, որպէս և ես շնորհեցի։ Հիւսիքոս ասաց. Այլ քո պատիւդ առժամանակեան է, իսկ Քրիստոսին յաւիտենական է 'ի փրկութիւն հոգւոց ։ Եւ սրտմտեալ Մաքսիմիանոսի՝ երկանաքար հրամայեաց կապել 'ի պարանոց նորա, և ընկենուլ 'ի գետն Անտիոքացւոց, որ կոչի Երենտէս, մինչդեռ ինքն 'ի վերայ կայր ։ Եւ այնպէս վախճանեալ երանելւոյն յանցաւոր կենացս, բուռն հարկանէր զյաւիտենական կենացն, 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէրն մեր. որում փառք յաւիտեանս. ամէն ։

Վկայաբանութիւն Սրբոյն Սահակայ և Յովսեփայ։

Յամն թագաւորութեանն Հռովմայեցւոց Նիկեփորայ, և 'ի բռնակալութեանն Ահարոնի Տաճկաց[1], արք ոմանք երևեցան 'ի Տաճկաց՝ 'ի գեղջէ որ կոչի Կայս, որ վկայեցան 'ի Թէոդոսուպօլիս, որ կոչի այժմ Կարնոյ քաղաք։ Որոց անուանք են Սահակ և Յովսէփ. որոց 'ի մօրէն իւրեանց խրատեալք և վարժեալք 'ի մանկութենէ քրիստոսական հաւատով և կարգաւորութեամբ 'ի Քրիստոս, և եռային հոգւով ըստ Առաքելոյ բանին և յուսով խնդային և աղօթից ստէպ կային և 'ի պէտս սրբոց հաղորդէին և աննայորդոր էին 'ի բարեպաշտութեան ընթացս. և 'ի ծածուկ ունէին զքրիստոնէութիւնն՝ յաղագս երկիւղի հօրն և ազգին, մինչև 'ի կատարումն մանկական տիոյն, և ցանկային յայտնապէս ունել։ Յայնժամ ծանուցին 'ի ձեռն գրոյ՝ թագաւորին՝ զքրիստոսասիրութիւնն իւրեանց, և զիւրեանց ազգին արհամարհելով՝ առասպելս վարկանելով, միանգամայն և զկամս երթալոյն նոցա առ նա։ Եւ նորա ընկալեալ՝ յոյժ ուրախ եղև, 'ի փառս Քրիստոսի. և առաքէ հրովարտակ և երանէ զնոսա յաղագս 'ի Քրիստոս հաւատացըն, և երդմամբ խոստանայ զամենայն ինչ առնել զոր ինչ կամիցին, բայց միայն փութով եկեսցեն։ Եւ նոցա ուրախ եղեալ ընդ մխիթարութիւն թղթոյն՝ պատրաստէին ճանապարհորդել. և զայլս յորդորէին յազգէն, որ զնոյն հաւատս ունէին ’ի Քրիստոս. և ազդ լինէր հօրն, և նա խափանէր զպատրաստեալ ճանապարհորդութիւնն։

---

[1] Հարուն-էլ-Ռաշիտ ամիրապետ։

Եղբարք երեք էին սոքա. մինն ’ի նոցանէ յորժամ ազդ լինէր հօրն՝ փախչէր ’ի Հռովմայեցւոց թագաւորութիւնն, և միւսն ամուսնացեալ՝ Յովսէփ, և յաղագս այնորիկ արգելաւ, զի ունէր որդիս, և նոցա փրկութեանն ցանկայր. և Սահակ եղբայրն հաւանեալ նորա կամացն՝ մնալ ժամանակի յաջողելոյ, որ զայս արասցեն ’ի Քրիստոս, և ամենայն ընտանեօքն գնասցեն։ Ի նմին ժամանակի համբաւ հասանէր վասն Սամկոնէնից տեառն Քուրդկայ, եթէ ’ի Հռովմայեցւոց թագաւորութիւնն է ’ի գնալ, յաղագս երկուղի ապստամբութեանն։ Եւ նոցա զայս լուեալ՝ գնացին առ նա, և պատմեցին նմա զամենայն. և նա յանձն առնոյր տանել ընդ իւր ամենայն ընտանեօքն։ Եւ յապաղէր ասացեալն, և նոքա դառնային անդէն առ իւրեանցն. և ’ի դառնալն պատահէին գործակալի ումեք զօրօք՝ որ զաշխարհին քննութիւնն հաւատացեալ էր. և ’ի վերայ հասեալ յետ բազում հարցմանցըն՝ ածէր զնոսա առ բռնաւորն որ զիշխանութիւն քաղաքին և զաշխարհին ունէր, և զեկուցանէր նմա վասն արանցն՝ զիւրդ կամ զինչ օրինակաւ։ Եւ հրամայեաց ածել զառաջեաւ. և հարցանէր. Զի՞նչ է ամբաստանութիւնս վասն ձեր։

Հեշտալի է ինձ պատմութիւնս յայսմ հետէ։ Երանելեացն խրախուսեալք յԱստուած՝ մեծապէս համարձակութեամբ առաջի ատենին քարոզէին, եթէ քրիստոնեայ եմք, և արհամարհեցաք զմոլար մնոտի ուսմունս մեր, ժամանակաւ օգնեալք և առասպելովք գողացեալք։ Քրիստոս է Որդի Աստուծոյ, արարիչ և տէր երկնի և երկրի և որ ’ի նոսա արարածք իցեն. որ յաղագս մարդասիրութեան և փրկութեան մերոյ՝ խոնարհեցաւ և առ մարմին ’ի սուրբ Աստուածածին Կուսէն Մարիամայ, և եկաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս՝ կամաւորութեամբ՝ առանց մեղաց, և խաչեցաւ, թաղեցաւ և յարեաւ յերրորդ աւուր, և համբարձաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ Հօր ’ի բար ձունս, որ էրն յառաջ նովին մարմնով, զոր էառ 'ի մէնջ, զի զմեզ բարձրացուսցէ առ ինքն, յանարգութեանս մնացեալք՝ վասն մեղաց՝ ըստ կործանմանս։ Սմա ամենայն նախահարքս և մարգարէք վկայեն և արդարոց անձինք, և յամենայն ազգս քարոզի անուն նորա և աստուածութիւնն՝ 'ի ձեռն հրեշտակաց և զօրութեանցն որ երևեցան յերկրի. և գալոց է փառօք յարուցանել զմեռեալս, և հատուցանել ըստ բարեաց գործոց՝ որք զնա Աստուած իմացան. միանգամայն և անհնազանդիցն և զհետ երթեալք անիրաւութեան և հայհոյութեան՝ որ 'ի Հայր և յՈրդին և 'ի սուրբ Հոգին։ Այսմ հաւանեալք մեր և հաւատացեալք՝ խոստովանիմք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին՝ աստուածութիւն մի, փառօք և պատուով և բնութեամբ և թագաւորութեամբ. յայս հաւատացաք, յայս մկրտեցաք, յայս հաստատեալ կամք, 'ի յոյս կենացն յաւիտենից. և ոչ խոտորեսցուք յայս խոստովանութենէ՝ որ ոչ գոյ այլ 'ի մոլորութիւն սնոտիս. այլ ոչ իշխանութիւն, ոչ մեծութիւնք, ոչ պարգևք, ոչ գութք ընտանեաց, ոչ սուր, ոչ հուր և ոչ ազգի ազգի տանջանք և ոչ մահ, և ոչ այլ ինչ արարած՝ կարէ մեկնել զմեզ 'ի սիրոյն Քրիստոսի։ Զոր ինչ կամիս՝ արա վաղվաղակի։

Եւ բռնաւորն և ամենայն ատեանն զարմանային ընդ երանելւոյն համարձակութիւնն, միանգամայն և ընդ իմաստութիւնն և ընդ հզօր բանսն. և ոչ ոք կարէր պատասխանի առնել բանիցն զօրութեան և հոգւոյն՝ որով քարոզէին զճշմարտութիւնն 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր. և խայտառակէին զսնոտի ուսումն իւրեանց։ Եւ ակնածեալ յերանելեացն համարձակութենէն, միանգամայն և յանարգութենէն իւրեանցն օրինաց, հրամայէր տանել 'ի բանտ, և խորհէր թէ զի՞նչ արասցէ։ Եւ երանելիքն 'ի բանտին գոհանային և օրհնէին զԱստուած զցայգ և զցերեկ, 'ի վերայ անպատում պարգևացն Աստուծոյ որ շնորհեցաւ նոցա, ոչ միայն 'ի նա հաւատալ այլ և վասն նորա չարչարանս և մահ ընդունել, և քարոզել աներկիւղ զբանն ճշմարտութեան որ 'ի Քրիստոս Յիսուս։ Եւ կոչեաց բռնաւորն զխորհրդակիցս իւր, եթէ զի՞նչ արտայեն. և զայս խորհեալ առաքել 'ի բանտն՝ իւրեանց իմաստնոց, խօսել նոցա ըստ իւրեանց ուսմանց, դառնալ 'ի բաց. և եթէ ոչ հաւանեսցին՝ սրով բառնալ զնոսա 'ի կենացս: Եւ յղեն 'ի բանտն, որք երթեալ հրապուրէին զնոսա և ասէին. Ընդէ՞ր մոլորեալ էք տարապարտուց յընդունայն խորհուրդս՝ որ 'ի Քրիստոս. դարձարուք յայդպիսի յամառութենէ, և ընկալջիք պարգևս և իշխանութիւնս. ապա եթէ ոչ հաւանիք՝ սրով զպարանոցս ձեր հատցուք. վասն զի այս ձեր բան այսպէս սահմանեցաւ յարքունիս:

Իսկ երանելիքն ասեն զուարթութեամբ. Ո՛վ դուք, խորամանկութիւն զանհանճարսն որսայ, մեք ոչ խաբիմք 'ի ճշմարտութենէն զոր ուսաք, և հաւատարիմ եղաք 'ի Քրիստոս, զի նովաւ կեցաք հաւատով և յուսով, և ցանկամք ելանել 'ի մարմնոյս, երևմամբք վայելեալք զառաջիկայ երանութիւնսն որ 'ի Քրիստոս Յիսուս. դուք մեզ զայս պատիւ խոստանայք զանցաւորս, կամ 'ի յայսց կենաց կարճել համարիք. մեք պատրաստ եմք 'ի մեռանել քան եթէ զճշմարտութիւնն ուրանալ. արագագոյն սպասաւորեսցէ սուրն և յուղարկեսցէ զմեզ 'ի Քրիստոս՝ առ որ անձկացեալ եմք: Եւ յետ բազում հարցափորձ բանից սքանչացեալ գնացին և պատմեցին բռնակալին. և հատաւ վճիռ մահու երանելեացն: Յետ այսորիկ և հայրն հրաման առնու երթալ 'ի բանտն և խօսել զնոյն բանս. և եկեալ՝ առաջի արկանէր զալիսն և զծերութիւնն, ողոքէր մաղթէր լայր ողբալով. Որդեակք, ասելով, ողորմեցարուք ինձ թշուառական հօրս, և խնայեցէք 'ի ձեզ, և յանձն առէք առաջի բռնաւորին և ամենայն ատենին զուսումն մեր և ուրանալ զքրիստոնէութիւնդ, և 'ի մահուանէդ ապրեսջիք, և երթեալ ունիջիք զքրիստոնէութիւնդ որպէս և կամեսջիք 'ի Քրիստոս Յիսուս: Ասեն երանելիքն. Ո՛վ հայր, ոչ առողջի է խրատդ, 'ի բաց տար, ուսաք յաւետարանէն զխոհեմագոյն զհանճար և զխրատն. Որ ուրասցի զիս առաջի մարդկան, ասէ, ուրացայց և ես զնա առաջի Հօրն իմոյ որ յերկինսն է. և՝ Որ ոք ոչ ատեայ զհայր իւր և զմայր, զհակառակս ճշմարտութեանն, և առնու զխաչ և երթայ զհետ Քրիստոսի, ոչ կարէ որդի լինել Հօրն երկնաւորի և ժառանգակից Քրիստոսի։ Իբրև գիտաց եթէ ամենևին չխոտորեցան 'ի բանսն հօրն՝ 'ի բաց գնաց լալով և կոծելով յաղագս մահու նոցա. և նոցա զանց արարեալ զարտասուօքն և զողբովք և զհառաչանօքն, և իբրև զչարին խափանումն վկայութեան իւրեանց, ցանկային ելանել յաշխարհէ բարի խոստովանութեամբ։

Եւ զայս 'ի բանտին աղօթս մատուցանէին. Տէր Աստուած ամենակալ, գոհանամք զքէն որ պահեցեր հաստատուն զյոյսն մեր որ 'ի քեզ, և յարգեցեր զմեզ. և առաջնորդեցեր մեզ 'ի խաւարէ 'ի լոյս, յանգիտութենէ յաստուածգիտութիւն, յանօրէնութենէ յարդարութիւն, և հասուցեր մինչև 'ի տեղիս յայս խոստովանութեամբ զքեզ Աստուած ճշմարիտ՝ առաջի ատենեաց քոց աներկիւղ համարձակութեամբ։ Այլ զի՞նչ փոխարէնս տացուք շնորհաց քոց որ առատացաւ 'ի մեզ՝ իմաստութեամբ և գիտութեամբ, և ցուցեր մեզ խորհուրդս կամաց ըստ հաճութեան քո. բայց անձինք մեր եղիցին վկայք ճշմարտութեանդ, մեռանել վասն անուանդ քո մեծի և ահաւորի։ Արդ ընկալ զմահս մեր որ վասն անուանդ քո՝ ընդ սիրելիս քո որք սիրեցին զքեզ յամենայն անձնէ և 'ի զօրութենէ, և խառնեա զմեզ 'ի թիւս վկայից քոց՝ որք մեռան վասն քո, և վայելեսցեն յանպատում բարիսն որ յաւիտենից. զի քո է փառաւորութիւն և երկըրպագութիւն յամենայն արարածոց. այժմ և յաւիտեանս յաւիտենից։ Եւ ասացեալ զամէնն՝ որք 'ի բանտին էին՝ փառս Աստուծոյ մատուցանէին. վասն որոյ էին և այլք յազգէն կալեալս ածեալս 'ի բանտն 'ի խոշտանգանս, ստիպէին 'ի բաց կալ առ 'ի Քրիստոս հաւատոցն. զորս քաջալերէին մի՛ զանգիտել 'ի մահուանէ, յիշելով զասելն, եթէ՝ Ոչ են արժանի չարչարանք ժամանակիս այսորիկ հանդերձեալ փառացն՝ որ յայտնելոցն է 'ի մեզ։

Եւ անդէն վաղվաղակի հասանէր հրաման 'ի բռնաւորէն վասն երանելեացն Սահակայ և Յովսեփայ սպանմանն։ Եւ իբրև տարան 'ի տեղի կատարմանն՝ աղաչեաց սուրբն Յովսէփ զի նախ զերանելին Սահակ կատարեսցեն. և նա յօժարութեամբ զպարանոցն խոնարհեցուցանէր. և դահիճն ձգեաց զսուրն և եհատ զգլուխն. ըստ նմին օրինակի և երանելին Յովսէփ կատարեցաւ։ Այսպէս սուրբքն վկայեցին բարի խոստովանութեամբ ՚ի Քրիստոս, յարաց ՚ի հնգետասան. և քարշեցին զմարմինս նոցա և ընկեցին կերակուր լինել շանց և թռչնոց։ Եւ քարոզն աղաղակէր, թէ՝ Մի՛ ոք մերձեսցի ՚ի նոսա, ապա եթէ ոք յանդգնեսցի՝ ըստ նոցին օրինակի կորիցէ։ Եւ պահապանքն պահէին հրամանաւ բռնաւորին զմարմինս սրբոցն՝ զի մի՛ ոք տարցի զնոսա։ Եւ տեսիլ սքանչելի երևեալ ՚ի գիշերին յայնմիկ, լոյս ՚ի վերուստ իջեալ ՚ի վերայ սրբոցն, և զարմացումն և ահ ՚ի վերայ ամենեցուն լինէր, և արհաւիրք ՚ի վերայ բռնաւորին լինէր. և զարհուրեալ հրամայէր քարոզել, որ կամիցին առնուլ զմարմինս որք սպանան՝ համարձակ լիցին. և որք ՚ի բանտին էին՝ զամենեսեան արձակեաց առանց պատուհասի։ Եւ հաւատացելոցն մեծաւ խնդութեամբ բարձեալ զնշխարսն՝ մատուցին ՚ի տեղի հանգստեան, և շինեցին վկայարան. յորում բժշկութիւնք բազում լինին. փառաւորելով զամենասուրբ զԵրրորդութիւնն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Սարգսի և Բագոսի։

Ընդ ժամանակս հալածանացն Մաքսիմիանոսի ամպարիշտ թագաւորի՝ ըմբռնեալք եղեն ’ի ձեռն Անտիոքայ դքսի, որ էր արբանեակ սատանայի, հրամանաւ թագաւորին Մաքսիմիանոսի կայսեր, երանելիքն Սարգիս և Բագոս յաղագս ’ի Քրիստոս հաւատոյն։ Եւ նստեալ յատենի՝ հրամայեաց ածել զերանելիսն. և ողոքանօք և սպառնալեօք ուսաւ զպնդութիւն նոցա և զհամարձակութիւնն, արհամարհելով զողոքանսն և զխոստմունսն պատուոյն, և առ ոչինչ համարեալ զսպառնալիսն։ Յայնժամ բարկացեալ յոյժ դուքսն Անտիոքոս՝ հրամայեաց զերանելին Սարգիս հանել ’ի տաճարէն և զգուշութեամբ պահել. իսկ զերանելին Բագոս հրամայեաց պրկել և ջլօք գալարօք տանջել ցայնքան՝ մինչև վաստակեցան տանջողքն և անկան ’ի զօրութենէ։ Արդ իբրև լքեալ լինէին նոքա, հրամայէր շրջել զնա յայնկոյս և դարձեալ հարկանել զորովայն նորա՝ ասելով ցնա. Արդ տեսից եթէ կարասցէ՞ փրկել զքեզ Քրիստոսն քո՝ զոր դու ասես Աստուած, և ապրեցուցանել ’ի ձեռաց իմոց։ Արդ յառաւօտէ մինչև ցերեկոյ այսպէս գղեալ զմարմինս նորա և արիւնն հոսեալ յոյժ, պատառեցաւ որովայնն և լերդն նորա, մինչև կուշտքն աներևոյթ եղեալ սուզան ’ի նմանէ ’ի ցնդել աղեացն։ Յայնժամ ասէ սուրբն ցԱնտիոքոս. Սպասաւոր սատանայի, տանջիչքդ քո տկարացան, մոլեգնեալ յանդգնութիւնդ քո ցածեաց, բռնաւորն Մաքսիմիանոս յաղթեցաւ, բանսարկուն հայրն ձեր յամօթ եղև. զի որքան վերին մարդս մեր ապականի 'ի տանջանաց քոց, նոյնքան ներքին մարդս նորոգի առ հանդերձեալ յաւիտենական կեանսն: Արդ զայս ասացեալ նորա՝ ձայն եղև յերկնից և ասէ. Եկ արդ յայսմհետէ 'ի պատրաստեալ քեզ արքայութիւնն, ճգնազգեաց զինուորդ Բագոս: Իսկ որ շուրջն կային՝ իբրև լուան զբանս զայս, հիացան և եղեն իբրև զմեռեալս: Արդ այսպէս չարչարեալ աւանդեաց զհոգին 'ի ձեռն հրեշտակի Աստուծոյ:

Սրտմտեալ դուքսն յամօթոյն, վասն զի յաղթահարեալ գտաւ, ոչ հրամայեաց զսուրբ նշխարս նորա արժանի առնել թաղման, այլ շանց և գազանաց և հաւուց արկանել, և հրամայեաց 'ի հիւսիսոյ կողմն ընկենուլ բերդին. և ինքն յարուցեալ գնաց: Իսկ նշխարքն ընկեցեալ հեռագոյն 'ի բերդէն, ժողովեալ բազմութիւն գազանացն շուրջ պատեալ փակեցին զնա: Իսկ 'ի վերուստ թռուցեալ ազատաբարոյ հաւքն՝ ոչ տային գիշակեր գազանացն և հաւուցն մերձենալ 'ի նշխարսն: Արդ այսպէս կացեալ մնացեալ մինչև յանագան երեկոյն. և իբրև երեկոյ եղև՝ իջին եղբարք ոմանք որ բնակեալ էին յայր ուրեմն, և առին զնշխարս երանելւոյն և հանգուցին զնա յայրին, որ էր ինքեանց բնակարան:

Իսկ երանելւոյն Սարգսի յոյժ տրտմեալ և խռովեալ էր զի մնաց 'ի սրբոյն Բագոսէ, և արտասուելով հանապազ ասէր. Վա՛յ ինձ եղբայր իմ և զինուորակից, Բագքէ, ո՞չ ևս սաղմոսեմք 'ի միասին և ասեմք, թէ՝ Ահա զի՛ բարի կամ զի՛ վայելուչ զի բնակեն եղբարք 'ի միասին. բաժանեցար յինէն և թողեր զիս միայն անմխիթար: Արդ զայս նորա ասացեալ և զմտաւ ածեալ, 'ի գիշերի կացեալ առաջի նորա երանելւոյն Բագոս զուարթ երեսօք իբրև զհրեշտակ, և պայծառ զինուորական ձև զգեցեալ, և ասէ ցնա. Զի՛ տրտմիս և ընդէ՞ր խռովիս, զի թէպէտ և մարմնով թողի զքեզ, այլ խոստովանութեան կցորդութեամբս ընդ քեզ եմ սաղմոսելով և ասելով. Ի ճանապարհս պատուիրանաց քոյ ընթացայ, և ժառանգեցի զվկայութիւնս քո։ Փութա և դու, եղբայր, կատարել բարի խոստովանութեամբ, վաղ հասանել ինձ՝ զընթացսդ կատարելով, վասն զի քև հանդերձէ ինձ պատրաստեալ արդարութեան պսակն 'ի Թագաւորէն Քրիստոսէ։ Արդ ընդ առաւօտն յարուցեալ պատմեաց որք ընդ նմայն էին թէ որպիսի ձևով ետես զերանելին Բագոս։

Ապա վաղիւն չու արարեալ դքսին ելանել 'ի բերդէն Բարբաղիսայ 'ի բերդն Սուր, ած ընդ իւր և զերանելին Սարգիս և աղաչէր զնա զի զոհեսցէ. իսկ նա ոչ ինչ լսէր նմա։ Արդ իբրև եկն 'ի Սուր, նստեալ անդ դուքսն 'ի տաճարին և կոչեցեալ առ ինքն զերանելին Սարգիս և ասէ ցնա. Ամպարիշտն Բագոս ախորժեաց ընդունել զմահ վատամահացն, ոչ կամելով զոհել աստուածոցն, այլ արժանի ըստ ինքեան և պատիժս ընկալաւ. ընդէ՞ր և դու, տէր իմ Սարգիս, խաբողական և ամպարիշտ այնր պաշտաման զհետ երթեալ՝ յայնքան տառապանս հասեր. վասն զի պատկառեմ 'ի քէն, յիշելով զքո բարին՝ զոր առ իս արարեր, և ամաչեմ ընդ քո՝ ես որ զիշխանութիւնս ընկալայ, քո լեալ պատճառք սմա. և արդ դու 'ի հարցման կարգի կաս, և ես 'ի հարցողաց ատենի նստիմ։ Պատասխանի տուեալ երանելւոյն Սարգսի և վկայի Քրիստոսի և ասէ. Անտիոքէ, տառապանքս այս և սակաւաժամանակեայ ամօթս՝ մեծի համարձակութեան և յաւիտենական կենացն կարապետ լինի առ երկնից և երկրի և ամենայն ինչոյ Թագաւորին Քրիստոսի. երանի թէ այժմ լսէիր ինձ և ճանաչէիր զիմ Աստուածն և զԹագաւորն Քրիստոս, տայի քեզ առնուլ զանփոփոխ իշխանութիւնն և զանվախճան փառսըն. վասն զի աշխարհական իշխանութիւն քո վաղվաղակի անկանի, ըստ սաղմոսին որ ասէ. Դուք իբրև զմարդիկ մեռանիք և իբրև զմի յիշխանաց անկանիք. և դարձեալ ասէ. Տեսի զամպարիշտն վերացեալ բարձրացեալ որպէս զմայրս Լիբանանու, անցի և ահա ոչ ևս էր, խնդրեցի և ոչ գտաւ տեղի նորա։ Ասէ ցնա Անտիոքոս. Զզառանցեալ և գլխմար բանդ զայդ 'ի բաց թողեալ՝ զոհեա աստուածոցն, լսելով հրամանի թարեպաշտին Մաքսիմիանոսի, ապա թէ ոչ՝ գիտասջիր զի հարկաւորիմ մոռանալ զամենայն ինչ որ ինձ 'ի քէն շնորհեալ են, և ընդ օրինաւոր և ընդ դժնդակ տանջանօք արկանեմ զքեզ անողորմաբար: Պատասխանի տուեալ երանելւոյն Սարգսի և ասէ ցդուքսն. Արա զինչ կամիս, զի զՔրիստոս ունիմ օգնական ինձ, որ ասացն ինձ, թէ՝ Մի երկնչիր յայնցանէ որ սպանանեն զմարմինդ և զոգիդ ոչ կարեն սպանանել, այլ երկերուք առաւել յայնմանէ որ զոգի և զմարմին կորուսանել կարասցէ 'ի գեհենի. արդ առաջի քո է իմ մարմինս, տանջեա զիս և չարչարեա որպէս և կամիս, գիտելով զայս, թէպէտ և զմարմինս սպանանես, ոգւոյս ոչ կարես տիրել, ոչ դու և ոչ հայրն քո սատանայ: Սրտմտեալ դուքսն՝ ասէ. Որպէս կարծեմ՝ իմ երկայնմտութիւնս յամպարշտութիւն զքեզ յառաջեցոյց: Եւ կոչեալ զգլխաւորացն առաջնորդն՝ ասէ ցնա. Փութապէս տուր պատրաստել կօշիկս երկայն բևեռօք վարեալս, և զբևեռսն ուղղորդս լեալ՝ ագուցէք դմա: Արդ իբրև ագուցին նմա, նստեալ դուքսն 'ի կառսն և ածեալ զերանելին առաջի իւր, ընթանալ հրամայէր մինչև 'ի Տետրապիւրգիա բերդ, փութապէս վարեալ զկառսն. և յայսմ բերդէ մինչև 'ի Սուր բերդն է ինն մղոն: Իսկ սրբոյն ընթացեալ առաջի՝ սաղմոսէր և ասէր. Համբերելով համբերի Տեառն, և նայեցաւ առ իս. եհան զիս 'ի գբոյ հեթանոսական տառապանացս և 'ի կաւոյն նիւթոյ կռոցն, և հաստատեաց 'ի վիմին հաստատուն խոստովանութեան զոտս իմ, և ուղղեաց ըզգնացս իմ:

Եւ իբրև եկին 'ի Տետրապիւրգիա բերդն՝ ասէ դուքսն. Զարմանամ ընդ քո, Սարգիս, թէ զիարդ կարացեր այդմ տանջանացդ համբերել: Պատասխանի ետ սուրբն Սարգիս և ասէ. Ոչ ինչ են ինձ դառինք, այլ քան զմեղու խորիսխս քաղցրագոյն է: Իսկ դուքսն իջեալ 'ի կառացն՝ չոգաւ 'ի ճաշ, և զնա հրամայեաց 'ի զինուորական բանտին պահել: Եւ իբրև երեկոյ եղև՝ աղօթէր սաղմոսելով և ասէր. Որք ուտէին զհաց իմ երբեմ̃, այժմ յաճախեցին 'ի վերայ իմ զխաբէութիւն. չուանօք չարաչար արկեցին զիս, որոգայթ պատրաստեցին ոտից իմոց՝ գայթակղեցուցանել կամեցեալ զիս. այլ արդ Տէր, ժամանեա նոցա և գլորեցո զնա, և փրկեա յամպարշտաց զանձն իմ: Եւ 'ի մէջ գիշերին հրեշտակ Տեառն իջեալ և բժշկեաց զոտս նորա: Եւ ընդ առաւօտն նստեալ յատենի դուքսըն՝ առաքեաց զի ածցեն զնա, կարծեցեալ այսպէս՝ եթէ վերամբարձ բերցեն զնա, ոչ կարասցէ գնալ: Արդ մինչդեռ ածէին զնա, տեսեալ զնա 'ի հեռուստ զի գնայր գայր և ամենևին ոչ էր ընդարմացեալ, զարհուրեալ յոյժ՝ ասէ. Այս այր կախարդ է, վասն որոյ և իշխեաց առնել այսչափ համարձակութիւն առ ինքնակալ թագաւորն, դիւթութեամբ զայս արարեալ. և ասացելոցս յինէն տեսիլդ իսկ դորա վկայէ. վասն զի կարծէի ես զնմանէ եթէ ոչ երբէք կարասցէ գալ այսր՝ յենուլ յոտս իւր, յերեկեան տանջանացն որ եկին 'ի վերայ դորա. իսկ զիա՞րդ այժմ որպէս թէ ոչինչ կրեալ այնպէս գնայ՝ զարմացեալ եմ ընդ իրսդ: Եւ կացեալ երանելւոյն Սարգսի առաջի ատենին նորա, ասէ Անտիոքոս. Ի վեր հայեաց և սթափեա գէթ յայսմ հետէ, թշուառական, և զոհեա աստուածոյն՝ վճարեալ 'ի տանջանաց. վասն զի խնայեմ 'ի քեզ, յիշելով զքո բարեգործութիւնն առ իս. ապա թէ ո՛չ՝ գիտասցես եթէ ոչինչ հնարեն քեզ կախարդութիւնդ քո զոր 'ի գործ արկեալ 'ի դըմանէ կարծես քեզ զառողջութիւնդ: Պատասխանի տուեալ երանելւոյն Սարգսի ասէ. Երանի թէ դու սթափէիր և զուարթանայիր 'ի սատանայական խաբէութենէդ և 'ի մոլորութենէդ. ես սթափեալ 'ի Տէր՝ որ փշրէ զհայրն քո սատանայ 'ի ներքոյ ոտից իմոց, և տայ ինձ ընդդէմ քո յաղթութիւն, որ առաքեաց զհրեշտակ իւր և բժշկեաց զիս. կախարդ դու ես որ երկիր պագանես կռոց, վասն զի անշունչ կռոց պաշտօն զամենայն կախարդութիւն եգիտ. զի ամենայն սկիզբն չարի պատճառք 'ի դմանէ են:

Առաւել սրտմտեալ Անտիոքոս՝ նստաւ 'ի վերայ կառացն և հրամայեաց զնոյն կօշիկսն ագուցանել նմա և ընթանալ առաջի նորա մինչև 'ի Հռուսափատ բերդ՝ նոյնպէս մղոնս ինն 'ի Տետրապիւրգեայ: Արդ իբրև եկն 'ի Հռուսափատ բերդ, ասէ դուքսն ցերանելին Սարգիս. Ո՞չ թողացուցին զքո յիմարութիւնդ բևեռացն տանջանք, ով երեքթշուառեան. արդ լուե՞ս մեզ և զոհե՞ս աստուածոյն, եթէ 'ի նմին յամառեալ կաս յառաջին մոլորութեանն: Պատասխանի ետ քաջ վկայն Քրիստոսի Սարգիս և ասէ. Զայս գիտասջիր, Անտիոքէ, զի յիմարութեամբ իմով ժուժկալեցից քակել զչարիմաստ և զչարախորհ զօրութիւնդ քո. արդ քեզ որ ինչ կամք են՝ կատարեա, վասն զի ես դիւաց երկիր ոչ պագանեմ և կռոց քոց ոչ զոհեմ, այլ Տեառն Աստուծոյ իմոյ ողջակէզս ամբիծս զիս փութամ մատուցանել: Իսկ դուքսն իբրև ետես եթէ հաստատուն և անշարժ կայ 'ի հաւատսն որ վասն առ 'ի Քրիստոս խոստովանութեանն՝ քաջ վկայն Քրիստոսի Սարգիս, զվճիռ մահու արար 'ի վերայ նորա այսպիսի ինչ. Սարգիս՝ օտար երևեալ յաստուածոցն բարեպաշտութենէ, և ընտանի ամպարիշտ պաշտամանն՝ որ կոչին քրիստոնեայք, յանցուցեալ առ ճշմարիտ ինքնակալ թագաւորին մերոյ Մաքսիմիանոսի, ոչ կամելով լսել բարեպաշտ հրամանաց նորա՝ զոհել աստուածոյն. արդ այսպէս հրամայեմ վասն նորա օրէնք, զի ընդ սրոյ պատուհասիւ անկցի: Իսկ ոմանք որ անդր կային՝ աղաղակէին և ասէին. Թէ արդար են դատաստանքդ 'ի վերայ նորա:

Արդ անցեալ 'ի մէջ դահճացն՝ հարին գայլ 'ի բերան սրբոյն, և այնպէս 'ի միջոյ 'ի բաց առեալ գնացին զնա, զի սրով վախճանեսցի: Եւ սաստիկ բազմութիւն արանց և կանանց և մանկտւոյ զհետ երթային 'ի տեսիլ վախճանի սրբոյն: Տեսեալ ամենեցուն զծաղկեալ դէմս նորա գեղեցկութեամբ և զչափաւորութիւն հասակի երիտասարդութեան նորա՝ արտասուէին դառնապէս 'ի վերայ նորա և յոգւոց հանէին: Իսկ իբրև չոքան 'ի տեղին յորում հանդերձեալ էր մեռանել երանելի վկայն Սարգիս, աղաչէր զդահճապետն զի անսասցեն նմա փոքր մի: Եւ կացեալ 'ի տեղւոջն՝ համբարձ յերկինս զձեռս իւր, և յաղօթս կացեալ ասէ. Գազանք վայրենի և թռչունք երկնից զքո իշխանութիւնդ ճանաչեն և զտէրութիւնդ, և ժողովեցան 'ի փառս անուան քո սրբոյ. որպէս զի զբանաւոր մարդկան բնութիւն՝ ինքեանց անբանութեամբ՝ յափշտակեցին 'ի քո ծանօթութիւն, ակնարկելով և խորհելով քոյոյ մարդասիրութեանդ, վասն զի կամիս թէ ամենայն մարդիկ կեցցեն և 'ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն: Դու, Տէր, զմեղս տգիտութեան սոցա մի յիշեր՝ որ վասն իմ ընկալան. լուսաւորեա զաչս մտաց սոցա և առաջնորդեա սոցա յապաղելով զմահ, և ակն ունելով ապաշխարութեան, մինչ 'ի ճշմարտութիւն քո, և դարձո զսոսա 'ի քո գիտութիւնդ. ընկալ, Տէր, զիմ հոգիս և հանգո յերկնային յարկսդ քո, ընդ 'ի սկզբանէ հաճոյացելոյն քեզ. վասն զի քեզ յանձն առնեմ զհոգի իմ, զի փրկեցեր զիս, Աստուած ճշմարտութեանց:

Եւ կատարեալ զաղօթսն՝ արար զքրիստոսական կնիքն յինքեան, և խոնարհեցուցեալ ծունր՝ հատին զգլուխ նորա սրով, աւանդեալ զհոգին 'ի ձեռն հրեշտակաց սրբոց. ձայն եղև յերկնից և ասէ. Եկ և դու զինուորակից Բագոսի, ճգնազգեացդ Սարգիս, 'ի պատրաստեալ քեզ արքայութիւն. վասն զի ակն ունին քեզ զօրք հրեշտակաց և բանակք հայրապետաց և առաքելոց և արդարոց հոգիքն և դասք մարգարէից. զի ընդ նոսա ընկալցիս զպատրաստեալ քեզ զարքայութիւնն աստ բարեացս: Իսկ տեղին որ ընկալաւ զարիւն սրբոյ վկային՝ պատառեալ եղև վիհ մեծ, այսպէս Տեառն Քրիստոսի կամեցեալ. մինչև երկուցեալ 'ի տեսլենէ վհին հեթանոսքն՝ և ոչ իշխէին մերձենալ և կոխել զարիւն սրբոյ վկային: Եւ հրամանաւն Աստուծոյ դեռ ևս տեղիքն յայտնի կան մինչև ցայժմ՝ վասն յիշատակի սրբոյն: Իսկ ոմանք որ եկեալ էին 'ի սրբոյն կատարած 'ի տեսանել, 'ի հասարակաց բնութիւնս հայելով՝ ժողովեցին զնշխարսն, և թաղեցին 'ի նմին տեղւոջ ուր վախճանեցաւ սուրբն:

Այսպէս կատարեցան երանելի վկայքն Քրիստոսի՝ Սարգիս և Բագոս, յերեսունն սահմի ամսոյ, ճըշմարիտ հաւատով և արժանաւոր գոհութեամբ ընդ ամենայն սուրբս 'ի Քրիստոսէ պսակեալք: Յայնժամ 'ի մի վայր ժողովեալ եպիսկոպոսաց հնգետասանից, և շինեցին վկայարան 'ի ներքս 'ի բերդին Հռուսափա, և անդ եդին զնշխարս սրբոց վկայիցն Սարգսի և Բագոսի փառաւորապէս. յորում տեղւոջ բժշկութիւնք բազում լինին բարեխօսութեամբ սրբոց վկայիցն. փառաւորելով զՀայր և զՈրդի և զՀոգին. այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

Rasaph

Վկայաբանութիւն Սրբոյն Սարգսի զօրավարի և որդւոյ նորա Մարտիրոսի։

Ի ժամանակս թագաւորութեանն Հռովմայեցւոց մեծին Կոստանդիանոսի՝ որ ըստ բնաւորական բարեսէր կամացն, և ըստ երկնային կոչմանն 'ի վերուստ, այն ինչ նորընծայ ընկալաւ 'ի թագաւորս զբարեպաշտութիւն հաւատոյ, և զկրօնս քրիստոնէութեանն, որով մեհեանք դիւաձոյլ պատկերաց տապալեալ քակէին, և եկեղեցիք Քրիստոսի պայծառացեալ լուսաւորէին յամենայն տեղիս, և խաւար հեթանոսական կռամոլութեան հալածական լինէր, և մանկունք նոր Սիօնի փառազարդեալ շքեղանային 'ի հանդերձս ոսկեհուռն պսակեալ և պաճուճեալ. յայնմ ժամանակի ծագէր իբրև զաստղ լուսապայծառ յաշխարհէն Կապպադովկացւոց բարեպաշտութեան հաւատով այր ոմն զարմանալի և հռչակաւոր, որոյ Սարգիս անուն ճանաչիւր. որ արքունական հրամանաւ էր կարգեալ 'ի զինուորութիւն ընդ զօրս թագաւորին որք 'ի Կապպադովկիա. գերագոյն գոլով քան զյոգունս 'ի համադասից զինուորակացն յարիական մրցմունս[1] որ 'ի պատերազմունս բարբարոսաց. մինչ զի և համբաւ քաջութեան նորա, որով զհակառակացն մղէր մարտակռուութիւն[2], հասանէր միշտ 'ի լսելիս մեծի թագաւորին. ուստի և ընդ սպագեաց մեծագունից և պատիւ ստրատելատութեան առաքէր նմա, և պատուական 'ի մէջ համապատիւ իշխանացն և դատաւորաց կողմանցն այնոցիկ լինել հրամայէր. և եղեալ նորա այնքան մեծապատիւ՝ մինչև անսալ նմա բոլորիցն պատուասիրաբար, և հրպատակել ամենայն խոնարհութեամբ. և ոչ ոք ընդդիմակաց գտանէր առ 'ի նմանէ եղելոցն և հրամայելոցն:

---

[1] Այլ օրինակ՝ մրցանացն։

[2] Հնագոյնն՝ մարտակցութիւն։

Իսկ սքանչելի այրն Աստուծոյ իբրև ընկալաւ յարքունական հրամանացն զգերապատիւն այն իշխանութիւն, ոչ 'ի նիւթական շահավաճառութիւնս 'ի կիր արկանէր զայն և 'ի փառս, այլ 'ի հոգևորս և յաստուածայինս: Քանզի շրջէր ընդ քաղաքս և ընդ գաւառս այնր նահանգաց, և սրբէր զաշխարհն 'ի կռոցն մոլորութենէ, խափանելով զզոհս ճենճերալից ուրուական պատկերացն սնոտեաց. զի դեռ ևս զօրանայր առ բազումս խաբէութիւն կռապաշտութեանն. ըստ որում զոմանս բանիւ վարդապետութեան ձգէր յուղկանս առաքելականս աւետարանին Քրիստոսի Հոգւոյն իմաստութեամբ. նա և հմուտ գոլով 'ի մանկութենէ հին և նոր կտակարանաց[1], և զոմանս ըսպառնալեօք հաւանեցուցանէր թողուլ զմոլորութիւն և գալ առ ճշմարտութիւնն. և զայլս՝ որոց սիրելի էր խաւարն անգիտութեան, և ատելի լոյսն աստուածգիտութեան, հալածականս գանիւք և տանջանօք առնէր 'ի հայրենի գաւառաց. և զբագինս կռոցն քակէր 'ի հիմանց, և փոխանակ շինէր եկեղեցիս Աստուծոյ և մատուռնս նախ եղելոց վկայիցն. որովք լինէր խնդութիւն աստուածապաշտից, և սուգ տրտմութեան հակառակորդացն դասուց: Եւ ինքն առ ինքեան երանելին ուրախ լինէր ընդ փառաւորութիւնն Քրիստոսի նովաւ, և ընդ կործանումն սատանայի. և այսպիսի բարեսնունդ քաղաքավարութեամբ ըստ պատուիրանացն Աստուծոյ կալով սրբոյն ամս բազումս սրբութեամբ և արդարութեամբ և բաւանդակ առաքինութեանցն մասամբք:

Բարիատեաց և մարդախոշոշ բանսարկուն նախանձաբեկ լինէր 'ի տեսանել յայնպիսի հանդէս բարեպաշտութեան զերանելին, և ջանայր խափանել զնա յառաջի եդեալ ճանապարհաց վերնոյ քաղաքին Երուսաղեմի 'ի ձեռն զանազան փորձութեանց. սակայն ոչ զօրէր որքան սիւնքն հաւատոյ կայսրն Կոստանդիանոս հանդերձ որդւովքն կենդանի էին յաշխարհի. զի ամրածածուկ աջովն Աստուծոյ պարսպեալ լինէր, և բարձրանայր օր ըստ օրէ արքունական մեծամեծ ձրիւք պայծառացեալ փառաց 'ի փառս։ Մինչև ըստ յաճախելոյ մեղաց մերոց, յետ երկնային խաղաղութեանն եկեղեցւոյ որ յաւուրց անտի Կոստանդեայ մեծի և որդւոցն, նստէր յանցաւորն Յուլիանոս կոչեցեալն Պառաւատոս՝[1] յաթոռ թագաւորութեան նոցա. որ իբրև զկայծակն ինչ պարածածկեալ ընդ յարդիւ թաքուցեալ ունէր զկռոցն մոլորութիւն, և 'ի դիպող ժամու իւրոյ չարութեանն զկնի բարեպաշտ թագաւորացն վախճանի՝ վառեալ հրդեհեաց զօրս ընդ տիեզերս զաստուածեղէն կրօնիցն պաշտօնեայս. և մնացեալքն 'ի հեթանոսաց մոլորելոցն 'ի կուռս՝ տեղի գտեալ յառնէին 'ի վերայ հաւատացելոցն 'ի Քրիստոս. աւերէին զեկեղեցիս և հալածէին զպաշտօնեայս. և շինէին դարձեալ հրամանաւ ուրացողին զաւերեալ մեհեանս դիցն. և զբազումս 'ի քրիստոնէից յեկեղեցականաց և 'ի զինուորաց և 'ի ռամկաց պէսպէս չարչարանօք տանջեալ սպանանէին յաղագս ճշմարտութեան հաւատոցն. և ոմանք խոյս տուեալ փախչէին յահէ անօրինացն, տարաշխարհիկ 'ի հայրենի գաւառացն լինելով։

---

[1] Մեւս օրինակն. հմուտ գոլով գիտութեան հին և նոր կտակարանաց՝ առեալ 'ի մանկութենէ:

Իսկ երանելին Սարգիս իբրև զայս ամենայն տեսանէր եղեալ, մտախոհ լինէր առ ինքեան եթէ զինչ կամք են Աստուծոյ՝ արասցէ, հայցէր պաղատանօք. և ահա երևեալ նմա Յիսուս 'ի տեսլեանն՝ ասէր. Ժամ է քեզ, ով Սարգիս, ելանել յաշխարհէ քումմէ և յազգէ ըստ նահապետին Աբրահամու, և գնալ յաշխարհ զոր ցուցից քեզ. յորում պատրաստեալ է քեզ անդամնոր առնուլ զպսակն արդարութեան։

---

[1] Միւս օրինակն՝ Պառնամափ։

Յայնմ ժամանակի համբաւ իմն հռչակեալ լինէր, եթէ հանդերձեալ է Յուլիանոս արքայ ելանել յարեւելս, և ընթանալ պատերազմական օրինօք 'ի Պարս. քանզի կախարդասար աղանդիցն հեթանոսաց պատրեալ՝ որք զճակատագիրն ասէին, ունել նմա զԱղեքսանդրի մակեդոնացւոյ, տիրել հանգոյն նմին հանուրց թագաւորութեանց աշխարհի։

Իսկ իբրեւ լուաւ բարեյաղթ զօրավարն Սարգիս զյարուցմունս հեղեղացն բռնութեան՝ որ հանդերձեալ էր հարկանել զիմաստութեան տուն զեկեղեցի, զոր 'ի վերայ վիմի հաւատոյ շինեալ, կամեցաւ գործով զհրամանն տէրունական կատարել. քանզի ծանեաւ թէ այս է ժամանակն որ ցուցաւ նմա 'ի տեսլեանն՝ հալածիլ վասն արդարութեան, որով և երանելի լինել։ Թողոյր ապա զհայրենին ժառանգութիւն, զիշխանական ճոխութիւնն, զերեւելի զփառսն, և զյոգնախումբ զօրացն զպետութիւն, զառ 'ի մեծամեծացն համադասութիւն, զմննդակցացն զընդաբոյս սիրոյ զուարճութիւն. և բովանդակ իսկ ասել, զպատճառս կելոյ բարիոք նիւթականիս այս մարմնոյ, և ըստ սիրելական[1] հրամանին որ առ մեծատունն, վաճառեալ զստացելոց գոյից բազմութիւն՝ բաշխէր կարօտելոց, և թեթեւանայր ինքն 'ի հոգոց յոքնավրդով հիւթից ծանրութենէ. և փոխանակ ծանունցին և վայրաբերաց՝ զխաչն Քրիստոսի բարձեալ, հետեւէր նախընթաց կարապետի այնր ճանապարհի։

Առնոյր ճանապարհակից զՄարտիրոս անուն որդի իւր, որ ոչ էր նուազ բարի արդասեօք մարմնոյն արութեամբ և հոգւոյն առաքինութեամբ՝ յազնուականութենէ հայրենի բարետոհմութեանց. և նախ աղօթիւք առ ճանապարհն ճշմարտութեան պաղատէին, և զայս յաղօթեն իւրեանց ասէին. Աստուած բոլորից և Տէր ամենայնի, յորմէ գոյացան արարածք, և նախախնամին զօրութեամբ քով. որ քաղցր ես առ ամենեսեան, և գթած առ երկիւղածս 'ի քէն, որ եղեր ողորմութեամբ քոյով ընդ արդարոցն առաջինս, և փրկեցեր յիւրաքանչիւր փորձութեանց զնոսա. դու նոյն Տէր 'ի սկզբանէ մինչև ցայժմ և յամենայն յաւիտեանս։ Վասն որոյ անկեալ առաջի քո հալածեալքս վասն անուանդ քում սրբոյ, հայցեմք 'ի քէն՝ լեր կցորդ ճանապարհիս մերոյ յոր հանդերձեալ եմք ընթանալ, որպէս որոց նախ քան զմեզ սրբոց քոց, մինչև հասուսցես 'ի մի յօթևանացդ արդարոց. մոյծ զմեզ 'ի տուն Հօր քո երկնաւորի. և քեզ փառք ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ յաւիտեանս. ամէն։

---

[1] Միւս օրինակն՝ փրկչական։

Ապա այնուհետև յուղի անկեալ գնային տարադէմ յաշխարհն Հայաստանեայց, առ որ յայնժամ ունէր զաթոռ թագաւորութեան Հայոց Մեծաց՝ Տիրան անուն, որդի Խոսրովու, որդւոյ Տրդատայ մեծի և առաքինւոյ. և նորա ընկալեալ զնոսա պատուասիրելով՝ պահէր առ ինքեան ժամանակս ինչ։

Իսկ ամպարիշտն Յուլիանոս յոքնախուռն ամբոխիւ Յունովք և Հռոմայեցւովք և բարբարոսօք եկեալ յարևելս՝ գայր յԱնտիոք Ասորւոց. և զորս գտանէր առ ճանապարհաւն արս կամ կանայս հաւատացեալս 'ի Քրիստոս՝ ընդ զանազան չարչարանօք արկեալ վախճանէր 'ի կենաց։ Եւ այս համբաւ դառնութեան եհաս ընդ բնաւս. յորմէ սասանումն երկիւղի պաշարէր զամենեսեան. և փախստեայ եղեալ յոլովից՝ թաքչէին 'ի խորաձորս և 'ի ծերպս վիմաց։ Լինէր լսելի այս և յաշխարհն Հայոց, որովք ոչ սակաւ ինչ խռովէին յերկիւղէ ամպարշտին. և այնքան՝ մինչև զանգիտեալ արքային Հայոց զերջանիկն այն ունել առ ինքեան, գուցէ, ասէ, ծանուցեալ խնդրեսցէ, և յոչ տալն՝ խռովութիւն լինել նմա ընդ աշխարհս ես. խորհրդակից լինի ապա նմին խոյս տալ անդուստ և առ Պարսիցն ընթանալ թագաւորն Շապուհ անուն։ Եւ այս գործիւր ոչ վայրապար, այլ զի ձգէր զնա տնօրէնութիւնն Աստուծոյ տեսլեամբ 'ի նշանակեալն տեղի, յորում հանդերձեալ էր պսակիլ վկայութեամբ 'ի Քրիստոս։

Եւ եկեալ վկայութեամբ յաշխարհէն Հայոց հանդերձ որդւովն իւրով, և հասեալ 'ի Պարս՝ յանդիման լինէր թագաւորին. զոր տեսեալ Շապհոյ ուրախ եղև յոյժ, մանաւանդ իբրև լուաւ զհամբաւ քաջութեան նորա, և զՀաստուածի պատճառաւ ելանելն 'ի Հոռովմոց. և ընկալեալ մեծապատիւ փառօք՝ ընդ առաջին զօրագլխացն Պարսից կարգէր զնա, գունդս բազումս տուեալ 'ի ձեռս նորա. և յամենայն պատերազմունս առ որս առաքեալ լինէր՝ յաջողէր նմա Աստուած. որով լինէր սիրեցեալ յաչս թագաւորին և մեծամեծաց նորա: Իսկ երանելին ոչ անձին զօրութեան այլ Աստուծոյ տալով զյաղթութեան կատարումն, վասն որոյ ոչ երբէք նուաղեցուցանէր զՀոգևորացն ընծայաբերութիւն. այլ յարաժամ մատուցանէր զգոհութեան և զփառաբանութեան պատարագս առաջի Աստուծոյ, ոչ միայն զանձին իւրոյ մաքրութիւն բանաւոր պատարագաց, այլ և զանբանից կենդանեաց զենմունս բաշխելով 'ի պէտս աղքատաց և կարօտելոց, ըստ սովորութեան իւրում 'ի նախնեաց անտի. զոյն և ուսուցանէր ամենեցուն աննուազ կատարել զզենմունս անասնոց 'ի նուէրս Աստուծոյ, յաղագս կերակրելոյ ողորմութեամբ ըղքաղցեալս և զկարօտեալս[1]:

Յայնմ ժամանակի լուր եհաս եթէ զօրքն Հոռովմոց որ ընդ Յուլիանոսիւ, աւերեն ասպատակաւ զաշխարհն Տաճկաց որ ընդ սահմանաւ թագաւորութեանն Պարսից. և հաճոյ թուեցաւ արքային առաքել զսուրբն Սարգիս 'ի պահպանութիւն կողմանցն Տաճկաստանի, որ էր սահմանակից աշխարհին Հոռովմոց. և սրբոյն առեալ զգունդս զօրաց իւրոց՝ հասանէր 'ի տեղին նախասացեալ, և անդանօր դադարեալ ամիսս երիս, բանակէր ընդդէմ զօրացն Յուլիանոսի, պահելով 'ի թշնամեացն ասպատակէ զաշխարհն զայն. և զայն լուեալ Հոռովմայեցւոցն՝ բազմութիւն զօրաց եկեալ զետեղէին հանդէպ սոցա, և խնդրէին օրինօք պատերազմել ընդ միմեանս: Իսկ զօրքն որ ընդ սրբոյն Սարգսի՝ տեսանելով զայնքան ամբոխ բազմութեան զօրու ծանու և զինու, զանգիտէին յոյժ և ասէին կորնչել[2] 'ի ձեռաց նոցա, յաղագս անկարելի գոլ պատերազմել ընդ այնքան ուժոյ բռնութեանն։ Իսկ երանելւոյն տեսանելով այնքան զանգիտեալս յերկիւղէ նոցա զիւր զօրսն, տեղի եգիտ յայտնի առնել նոցա զիւրոյ զհաւատոյն զճշմարտութիւն, և զհեթանոսականացն աղարտութիւն[1], ասէր. Եղբարք իմ և զինուորակիցք, եթէ հաւատայք բոլորով սրտիւ յարարիչն երկնի և երկրի, ոչ երբէք զարհուրեսցին սիրտք ձեր 'ի բազմութենէ անտի զօրացն թշնամեաց մերոց. այլ անյաղթելի զօրութեամբ ճշմարտին Աստուծոյ իմոյ, մին 'ի ձէնջ զհազարսն հալածեսցէ 'ի նոցանէ և երկուքն զբիւրսն շարժեսցեն։ Իսկ անուանեալ աստուածքն ձեր ոչինչ ունին զօրութիւն, և ոչ լուսաւորքդ զոր պաշտէք, և ոչ տարերացդ բնութիւնք, և ոչ պատկերքդ կռոցն որոց երկրպագէք. քանզի աչք են նոցա և ոչ տեսանեն, ականջք են և ոչ լսեն, ձեռք և ոչ շօշափեն, ոտք և ոչ գնան, և ոչ բարբառին կոկորդք նոցա և բերանք իւրեանց։ Եւ նոքա ասեն. Իսկ արդ ո՞ր է Աստուածն քո, Սարգիս. եթէ նոքա չեն աստուածք, ցոյց մեզ զի տեսեալ հաւատասցուք 'ի նա։ Եւ ասէ երանելին. Իմ Աստուածն ամենայն եղելոց է Աստուած, երևելեաց և աներևութից. Հայր անսկիզբն և անեղ, արարիչ եղելոց ամենայնի. Որդի ծնեալ 'ի Հօրէ անմարմնապէս յառաջ քան զյաւիտեանս, էակից Հօր և արարչակից. Հոգին սուրբ բղխումն 'ի Հօրէ[2] անժամանակ և անքննաբար, փառակից Հօր և Որդւոյ. երեք անձինք կատարեալք, մի բնութիւն և մի աստուածութիւն անբաժանելի. որով 'ի լինելութիւն եկին արարածք ամենայն, երկնայինք և երկրաւորքս, բանական կենդանիք. և որպէս զիմանալի աշխարհն վերին՝ անմարմին բանականացն ետ 'ի բնակութիւն, նոյնպէս և զգալի աշխարհս մարմնաւոր բանականաց[3] մարդկան։ Զոր ստեղծեալ զմարդն առաջին, և զկինն 'ի հողոյ և յանմարմին բնութենէ հոգւոյ 'ի պատկեր աստուածութեան իւրոյ, եդ զնոսա յանմահական 'ի դրախտին փափկութեան, 'ի միոյ միայն ծառոյ հրամայելով չուտել. որք ոչ պահելով զպատուիրանս նորա՝ կորուսին զանձառելի զփառսն. և փոխանակ անմահութեանն՝ զմահ ժառանգեցին, և ընդ օրհնութեանն՝ զանէծս, և ընդ դրախտին՝ զփշաբեր երկիր. և փոխանակ անախտաբար աճմանն զոր հանդերձեալ էին ունել 'ի դրախտին՝ անասնեղէն ծննդեամբ[1] հրաման ընկալան բազմանալ 'ի վերայ երկրի. որոց աճեալ 'ի բազմութեան՝ ոչ կացին 'ի պատուիրանս արարչին, առաջին յանցանօքն շատացեալք. այլ այնքան յաճախեցին 'ի մեղս՝ մինչև բարկանալ Աստուծոյ 'ի վերայ նոցա, և խրատել ջրով և հրով, և զանազան հարուածովք. և ոչ միայն ոչ դարձան 'ի բարիս, այլ ևս դրդեցան 'ի չարիս, զի փոխանակ արարչին՝ արարածոցս երկիր պագանէին: Բայց և այնու ամենայնիւ ոչ անտես արար զմարդկային բնութիւնս, այլ յայտնեաց զինքն արդարոց յիւրաքանչիւր ժամանակս, խօսելով ընդ Աբրահամու և զաւակի նորա. որոց և ետ օրէնս գրեալ մատամբ իւրով 'ի տախտակս քարեղէնս 'ի ձեռն Մովսէսի առաջին մարգարէին. երևեցոյց յետ նորա և դասս մարգարէից որք խրատէին յիւրաքանչիւր ժամանակս զմարդիկ. և մարգարէանային վասն գալստեան Որդւոյն Աստուծոյ: Որ առաքեալ 'ի Հօրէ 'ի փրկութիւն ազգի մարդկան, 'ի ժամանակս վերջինս էառ զմեր բնութիւն 'ի սրբբոյ կուսէն Մարիամայ. և ծնեալ 'ի նմանէ անախտաբար, շրջեցաւ ընդ մարդկան ամս երեսուն, և եկն 'ի Յորդանան առ Յովհաննէս Մկրտիչ առնուլ մկրտութիւն, զի զմեղս Ադամայ լուասցէ ջրովն Յորդանանու. վկայեցաւ յերկնից 'ի Հօրէ եթէ՝ Դա է որդի իմ սիրելի, և 'ի սուրբ Հոգւոյն աղաւնակերպ իջմամբ. յայտնեաց ինքն զաստուածութիւն իւր 'ի ձեռն պէսպէս սքանչելեացն զոր կատարեաց, զհիւանդս բժշկելով, զկոյրս լուսաւորելով, զմեռեալս յարուցանելով, 'ի վերայ ծովուն գնալով, սակաւ հացիւ զբիւրս կերակրելով. և զայլս բազմապատիկս, զորս տկարանայ լեզու առ 'ի պատմել:

---

[1] Յաղագս Ագապին ակնար. յաճախուեալ էր առ նախնի քրիստոնեայս, որոյ սովորութիւն անեայս:

[2] Միւսն՝ կորչել:

---

[1] Հնագոյնն՝ մոլար պաշտօնէին։

[2] Ըստ հնոյն սովորութեան զանց առնէ ասելն յիշատակել զբղխումն Հոգւոյն սրբոյ և յՈրդւոյ։

[3] Հնագոյնն՝ բանաւորաց։

---

1. Միւսն՝ բնութեամբ:

Իսկ ազգն Հրէական զայսքան բարութիւն գտեալ առ 'ի նմանէ, ապերախտ առ բարեգործն եղեն, և մատնեալ զնա խաչի և մահու, որ և ինքն կամաւ ետ զանձն և ոչ 'ի հարկէ. զի կատարեսցէ զմարգարէիցն կանխասացութիւն և զաշխարհի փրկութիւն. և յայտնի արար 'ի մեռանելն մարմնով՝ զզօրութիւն աստուածութեան իւրոյ. զի արեգակն խաւարեցաւ, երկիր շարժեցաւ, վէմք պատառեցան, վարագոյր տաճարի նոցա հերձաւ, գերեզմանք բացան և մեռեալք յարեան. էջ 'ի գերեզման մարմնով որպէս մարդ, և յարեաւ ինքնիշխանաբար յաւուր երրորդի՝ որպէս զԱստուած. երևեցաւ աշակերտաց իւրոց յետ յարութեանն և խօսեցաւ ընդ նոսա զաւուրս քառասուն, և համբարձեալ յերկինս նստաւ ընդ աջմէ Հօր իւրոյ. և գալոց է նովին մարմնով դատել զազգս ամենայն ըստ իւրաքանչիւր գործոց. բարեգործացն և ուղիղ հաւատացելոց յԱստուած՝ զբարիս հատուցանելով, իսկ չարագործացն և անհաւատիցն՝ զտանջանսըն յաւիտենականս: Արդ այս է ճշմարիտ աստուածպաշտութիւն, որում թէ հաւատայք բոլորով սրտիւ ձերով, և 'ի բաց կայք 'ի խաւարային պաշտամանց ձերոց, ընդունիցիք զյաւիտենից կենդանութիւնն, յորժամ գայ Քրիստոս փառօք աստուածութեան իւրոյ, և ոչ տանջիցիք ընդ անհաւատսն 'ի հուրն անվախճան:

Զայս և առաւել քան զսոյն խօսէր երանելին Սարգիս առաջի բազմութեան զօրացն. և բազումք 'ի նոցանէ հաւատացին 'ի Տէր, և մկրտեցան 'ի քահանայից անտի՝ որք ընդ սրբոյն:

Իսկ զօրացն Հոռոմոց գունդ բազում հատեալ արշաւել կամելով 'ի կողմանս Տաճկաստանի որք ընդ պահպանութեամբ սրբոյն Սարգսի, և խաւարային օդովք պաշարեալք որպէս Ասորեստանեայն առ Եղիսեիւ, մոլորէին 'ի ճանապարհէ անտի աշխարհէին՝ յոր հանդերձեալ էին մտանել, և ցրուեալքն ոչ տեսանէին զմիմեանս. բազումք 'ի նոցանէ և տեսիլս իմն պատմէին անմարմնական զօրաց, և ձայն լսելի եղեալ 'ի նոցանէ, եթէ՝ Մի՛ յանդգնիք պատերազմել ընդ ծառային Աստուծոյ սրբոյն Սարգսի, եթէ ոչ՝ ամենեքեան կորնչիք։ Զոր տեսեալ սրբոյն՝ փառս վերառաքէր ամենազօրին Աստուծոյ, և ասէր. Մեծ է Տէր մեր և մեծ է զօրութիւն նորա, և ո՜վ պատմեսցէ զսքանչելիս նորա. Եկայք, եղբարք իմ պատուականք, մատուսցուք փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ յայտնեաց զողորմութիւն իւր առ ծառայս իւր, և զզօրութիւնն՝ առ հակառակորդսն մեր։ Իսկ զօրքն ամենայն հաստատեալք 'ի հաւատս, աղաղակէին և ասէին. Մեծ է Աստուածն քրիստոնէից, և անհաս է զօրութիւն նորա. հաւատամք այսուհետև յամենասուրբ Երրորդութիւնն և 'ի մի աստուածութիւնն՝ զոր քարոզեաց մեզ Սարգիս։ Եւ մատուցանէին ամենեքեան երկրպագութիւն առաջի Աստուծոյ. և ընծայէին նուէրս բազում զէնմամբ անասնոց կենդանեաց, և ուրախ լինէին միշտ 'ի վարդապետութիւն սրբոյն։

Իսկ բարիատեացն սատանայ բանսարկուն՝ դրդեաց զոմանս 'ի զօրաց անտի, յորոց ոչ ծագեաց յոգիս լուսաւորութիւն աւետարանին Քրիստոսի. և գնացեալ առ Թագաւորն Շապուհ. Ապստամբեաց, ասեն, Սարգիս յաստուածոց և 'ի ձէնջ՝ արքայ, և քարոզէ հաւատալ 'ի Յիսուս Նազովրեցի, և զզօրսն ամենայն ապստամբեցոյց զկնի մոլորութեանն իւրոյ. միաբանեալ է սիրով և ընդ զօրացն Հոռոմոց։

Զայս ամենայն լուեալ Թագաւորին, և 'ի մեծի եղեալ տրտմութեան և խռովութեան, խորհէր ընդ աւագանւոյն թէ զինչ արասցէ. և առեալ զխորհուրդըս՝ առաքէ նմա պարգևս մեծամեծս, գրեալ առ նա նամակ որ ունէր օրինակ զայս. Լուաք բարի համբաւ զքէն, պատուականդ 'ի զօրագլուխս մեր, Սարգիս, յաղագս մտերիմ լինելոյ թագաւորութեանս մերոյ, և ուրախ եղաք յոյժ. վասն որոյ սէր մեր յաճախեաց 'ի վերայ քո որպէս առ հաւատարիմ ծառայ և իմաստուն. ըստ որում առաքեաց քեզ թագաւորութիւնս մեր ձիր արժանաւոր մեծանձնութեան քո։ Ողջ լեր։

Եւ յետ այսորիկ միւսանգամ խորհրդածեալ արքայն ընդ խորհրդակիցս իւր, առաքէ զորդի երանելւոյն՝ որ էր 'ի դրան արքունի՝ հրաւիրակ նմին, իբրու զի առանց կարծեաց ինչ եկեսցէ վաղագոյն, գրելով օրինակ զայս. Եհաս առ մեզ, ով վեհագոյնդ զօրագլխաց մերոց, Սարգիս, կորովամիտ քո իմաստութեան համբաւ. զի ըստ օրինակի խոհական [1] իմաստասիրաց՝ շահեցայք զխաղաղութիւն աշխարհիդ, նուաճելով զթշնամիսն. արդ վասն զի զայդ բարւոք տնօրինեցէք, հրամայեսցէ այսուհետեւ թագաւորութիւն մեր կանխաւ ժամանել առ մեզ ընդ որդւոյ քում. քանզի կարօտիմք զկատարեալ քո խոհեմութիւն խորհրդակից առնլոյ՝ յաղագս թագաւորութեանն Հռովմայեցւոց, հուպ հանդերձեալ տալոյ ընդ մեզ պատերազմ։ Ողջ լեր։

Եւ յուղի անկեալ որդւոյ նորա մերձ գայր 'ի սահմանն յորում էր բանակետղ հօր նորա [2]. և 'ի ճանապարհի անդ պատահեալ թշնամեացն դասուց, ըմբռնեցին զպատանին և զորս ընդ նմա, և տարան 'ի բանակն իւրեանց. և արդ եղեալ սրբոյն ներգործութիւն իրացն որ յազդմանէ չարին, տրտմութիւն ոչ սակաւ տիրեաց նմա և ամենայն զօրացն։ Ապա զմարդկային օգնականութեան յուսոյ անփոյթ արարեալ, յԱստուած ապաւինէր. որում և պաղատանս արտասուալից առաջի անկեալ մատուցանէր. յիշելով յաղօթելն զքանչելեացն զկատարումն յիւրաքանչիւր դարս՝ առ Նոյ և Աբրահամ, Իսահակ և Յակովբ և ամենայն նահապետսն, եթէ՝ Որպէս լուար աղօթից նոցա, լուր և ինձ մեղաւորիս. և ըստ որում Յակովբայ արդարոյ շնորհեցեր զՅովսէփ 'ի տեսանել, տուր և ինձ զորդի իմ վերստին տեսանել. զի մի՛ գայթակղեալ կորիցեն նոր հաւատացեալ ժողովուրդս որք դարձան առ քեզ քարոզութեամբ ծառայի քո, այլ արա տեսանել սոցա զողորմութիւն քո առ իս 'ի փառս անուանդ քո սրբոյ։ Եւ զերիս աւուրս ոչ դադարէր յաղօթելոյ զցայգ և զցերեկ. և ահա յաւուրն երրորդի առեալ զորդի նորա որք ըմբռնեցինն և զորս ընդ նմա՝ ածին առաջի երանելւոյն, պատմելով զեղեալ սքանչելիսն իմն առ նոսա. եթէ յորժամ հետեմուծաք զսա 'ի բանակ անդր, ոչ դադարեաց խռո-

---

[1] Միւսն՝ փրամախոհական։

[2] Միւսն՝ բնակէլաւ նորին Սարգսի։

վութիւն 'ի զօրացն, մինչև զմիմեանս սատակել բազմաց. և տեսիլ երևեալ զօրագլխացն. Եթէ ոչ դարձուցանէք զպատանեակդ առ Հայր իւր, ամենեքեան, ասէ, սատակիցիք: Զոր տեսեալ երանելւոյն և լուեալ, լի եղև խնդութեամբ, և անկեալ 'ի վերայ երեսաց իւրոց գոհանայր զԱստուծոյ, և տօն ուրախութեան կատարէին զօրն զայն՝ զենմամբ խոյոց և զուարակաց 'ի նուէրս անուան Բարձրելոյն, զորս բաշխելով կարօտելոց, ուրախ լինէին 'ի Տէր հոգևոր և մարմնաւոր խնդութեամբ:

Յետ այսորիկ իբրև լուաւ սուրբն Սարգիս յորդւոյ իւրմէ զհրամանս Թագաւորին, զի կոչէր զնա ստիպով, ծանեաւ հոգւովն զչարութիւն ամպարշտին. և կոչեցեալ առ ինքն զզօրսն ամենայն որք հաւատով զօրացեալ հաւատացեալ էին 'ի Քրիստոս, ասէ ցնոսա. Եղբարք, ահա ժամանակ ընդունելի, յորում պարտ է զբարեպաշտութիւն հաւատոց մերոց յայտնի առնել. և խոստովանել զՏէր մեր Յիսուս Քրիստոս առաջի մարդկան, զի և նա խոստովանեսցի զմեզ առաջի Հօր իւրոյ և հրեշտակաց սրբոց: Իսկ զօրացն իբրև ընդ մի բերան պատասխանի տուեալ նմա ասեն. Ընդ քեզ եմք, ով հայր պատուական, 'ի կեալ և 'ի մեռանել: Եւ սուրբն ասէ. Հրամայեալ է մեզ 'ի Տեառնէ ոչ ծածկել զլոյս հաւատոց մերոց, այլ դնել 'ի վերայ աշտանակի, և քարոզել 'ի վերայ տանեաց. և մի երկնչել յայնցանէ որ զմարմին սպանանեն և զոգին ոչ: Բայց ես անպիտանս յամենայնի ստացական ստունդանող գտայ հրամանաց Տեառն իմոյ. քանզի ծածկեցի յիս ինքեան իբրև զճրագ ընդ գրուանաւ՝ զլուսաւորութիւն հաւատոյն որ առ նա՝ յաղագս երկիւղի մարդկան: Այլ այժմ, եղբարք, աղաչեցէք զՏէր, զի տացէ ինձ համարձակութիւն աներկիւղ քարոզեալ զանուն նորա առաջի Թագաւորաց և իշխանաց. և հաստատեսցէ զոտս իմ 'ի վերայ վիմին հաւատոյ, զի մի սասանեցայց 'ի մարդկանէ, որոց հանդերձեալ եմ կալ առաջի. քանզի այնր աղագաւ է կոչումն այս: Եւ զօրականացն պատասխանի տուեալ ասեն ցսուրբն. Աղաչեմք և խորհրդակից լինիմք տեառնդ մերոյ՝ ոչ տեսանել զե-

րեսս բռնաւորին, և մի ինչ զանգիտեր. քանզի յամենայն պատերազմունս որ պատահեն առաջի քո՝ մեռանիմք ամենեքեան մեք. նա թէ մարտիցէ ընդ մեզ, յաղթեմք նմա զօրութեամբ Տեառն մերոյ՝ յոր հաւատացաքս: Պատասխանի ետ սուրբն և ասէ ցնոսա. Ոչ հրամայէ Տէր մեր ըստ մարմնոյ զօրանալ, այլ հոգւով. և ոչ պատերազմական մենքենայիւք, այլ համբերութեամբ մեր 'ի նեղութիւնս յաղթել թըշնամեաց մերոց: Արդ մի խափանէք զիս յառաջակայ ընթացից կենաց ճանապարհին, այլ աղաչեցէք զՏէր զի արժանի արասցէ զիս մեռանել վասն անուան իւրոյ սրբոյ. և ձեզ հովանի լիցի աջ նորա, և հաստատեսցէ 'ի հաւատս ճշմարիտս զոր ընկալայք 'ի շնորհաց սուրբ Հոգւոյն. և եթէ սիրէք զնա բոլորով սըրտիւ ձերով՝ նոյն ինքն եղիցի ձեզ փրկութիւն 'ի կեանս յայս, և յաւիտենական կենացն արժանի արասցէ ընդ ամենայն սուրբս:

Զայս և որ սոյին նման խօսեցաւ երանելին ընդ հաւատացեալ զօրացն, հաստատէր զնոսա 'ի հաւատըս. և ապա բաժանեալք 'ի միմեանց բազում արտասուօք հանդերձ որդւովն, և ոմանք 'ի զօրականացն յուղի անկեալ գային առ թագաւորն. զոր տեսեալ ուրախ եղև յոյժ. և ասէ ցխորհրդակիցսն իւր. կարծեմ անիրաւ գոլ զամբաստանութիւնն զնմանէ, և 'ի նախանձուէ շարժեալք, այլ ոչ ուղղութեամբ: Եւ դարձեալ 'ի սուրբն Սարգիս՝ ասէ. Բարի է գալուստ քո, իմաստունդ և հաւատարիմ 'ի զօրագլուխս իմ. ընկալցիս ողորմութիւն առ 'ի մէնջ ըստ անստերիւր հաւատոց որ ցուցեր մեզ: Վասն որոյ մեծացուցանէ զքեզ թագաւորութիւն մեր, և գլուխ ամենայն զօրաց կացուսցէ յաղագս խոհեմագոյն քո իմաստութեան: Եւ շնորհէր նմա ձիրս բազումս և պատիւս գերապանծ ճոխութեան և պայծառութեան: Բայց նա ոչ 'ի բանից անտի պատրեցաւ, և ոչ 'ի ճշմարտութենէն՝ յաղագս երևելի մեծութեանն՝ այլափոխեցաւ. այլ տայր նմա պատասխանի իմաստախոհ բանիւք. Գոհանամ, ասէ, զԱստուծոյ իմոյ՝ որ փրկեաց զիս 'ի ձեռաց թշնամեաց իմոց, որք ոչ իմաստութեամբ մերով և ոչ զօրութեամբ յաղթահարեցաք, այլ ամենաշօրհն Աստուծոյ կարողութեամբ. նովաւ են և պարգևքն շնորհեալք առ 'ի ձէնջ. քանզի ետ ձեզ իմաստութիւն ճանաչել զճշմարիտն: Եւ զայս ասացեալ սրբոյն, ել յերեսաց նորա: Եւ ասէ թագաւորն ցմերձակայս իւր. Կատարեալ 'ի ճշմարտութեան տեսանեմ զայրս զայս: Իսկ չարախօսքն յառաջ մատուցեալ՝ ասեն. Թագաւոր և արքայ քաջ, զՆազովրեցւոյն ունի զուսումն և զաղանդն, վասն որոյ և Աստուած ոչ զմերս՝ այլ զՆազովրեցին զՅիսուս անուանէ. ապա թէ ոչ՝ հարցցէ ցնա թագաւորութիւն քո, և ծանիցէ զբանիս մերոյ զճշմարտութիւն: Եւ իբրև լուաւ զայս թագաւորն, տրտմեցաւ յոյժ, և խորհէր 'ի միտս, թէ զիա՛րդ գտցէ զասացելոցն իրաւաբանութիւն:

Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ եկն տօն աստուածոցն. և ել հրաման յարքայէ ժողովել բազմութեանն յատրուշանս կրակարանին յորում զհուրն լուցանէին ըստ պարսկական օրինացն. յորս էին կանգնեալ և պատկերք կռոց երկոտասան: Կոչեցեալ եղև և Սարգիս ընդ պատուական զօրագլխացն՝ գալ հանդերձ որդւովն իւրով 'ի հանդէսն յայն. և երանելւոյն ծանուցեալ զհասեալ ժամն որ յաղագս Աստուծոյ պատերազմին, յարուցեալ կայր յաղօթս առ Աստուած և ասէր. Տէր Աստուած, փրկիչ յուսացելոցս 'ի քեզ, որ խոստացար ծառայից քոց և ասացեր, թէ՝ Յորժամ տանիցեն զձեզ առաջի թագաւորաց, մի հոգայցէք վասն տալոյ պատասխանի. զի ես տաց ձեզ բան և իմաստութիւն, որում ոչ կարիցեն ընդդիմակաց լինել հակառակորդքն ձեր. արդ տուր և ինձ, Տէր, բան 'ի բանալ բերանոյ իմոյ յասպարիզիս որ առաջի կայ. և զօրացո զիս համբերել չարչարանաց և համահաւաք մահու, որ գան 'ի վերայ իմ վասն անուանդ քո սրբոյ. և քեզ փառք յաւիտեանս:

Եւ իբրև կատարեաց զաղօթսն՝ գնաց հանդերձ որդւովն իւրով 'ի կոչունսն արքային. և տեսեալ զնա թագաւորն, ասէ բարձր ձայնիւ. Սարգիս, պատուականդ 'ի զօրագլուխս զօրաց իմոց, յառաջ մատուցեալ զոհեա հրոյ ըստ օրինի ամենեցուն մեր, և արկ խունկ առաջի մեծամեծաց աստուածոցն՝ որպէս արդարև աստուածասէր, որպէս զի չարախօսքըն քո յամօթ եղեւ, պայծառասցիս դու բարձրագոյն փառօք։ Պատասխանի ետ սուրբն Սարգիս եւ ասէ. Ես ճշմարտին Աստուծոյ մատուցանեմ զոհ եւ երկրպագութիւն, այնմ որ արար զերկինս եւ զերկիր եւ որ 'ի նոսա արարածք իցեն, որ է կենդանի եւ յաւիտենական թագաւոր. որում պարտ էիրն, ո՛վ թագաւոր, եթէ ունէիր իմաստութիւն՝ երկիր պագանել եւ փառաւորել, եւ ոչ տարրեղէն արարածոց գոյացելոց 'ի նմանէ, եւ անշունչ պատկերաց 'ի մարդկանէ եղելոց։ Զայս լուեալ արքայի՝ ասէ. Ահա յայտնի եղեւ մոլորութիւն քո, ո՛վ թագաւորութեան հակառակ, ո՛վ արբեալդ յիմարութեամբ, եւ զրկող անձին քում ինքնակամ 'ի բիւրուց բարեացն՝ զորս հանդերձեալ էաք առնել քեզ։ Իսկ դու փոխեցեր զսէր քո առ այր ոմն հրեայ, որ վասն մեղաց իւրոց խաչեցաւ։ Եւ այլ եւս բանիւք բազմօք հայհոյէր զՔրիստոս։

Իսկ երանելին իբրեւ լուաւ զայս, ոչ կարաց համբերել, այլ լցեալ զբերան իւր խուխով՝ եթուք ընդդէմ ամպարշտին. եւ ոյժ առեալ 'ի հոգւոյն սրբոյ, եւ ձգեալ զձեռն՝ մանրեաց զպատկերս կեղծաւոր կռոցն, եւ ասէ. Ո՛վ անմիտք, ահա պաշտամունք ձեր փշրեցան, եւ հուրդ որում երկրպագէք, մոխիր է ցընդելի։ Եւ յորժամ տեսին զայս եւ լուան մոգքն եւ բազմութիւն հեթանոսացն որ անդ կային, շարժեցան բարկութեամբ 'ի վերայ սրբոյն. եւ բուռն հարեալ զնմանէ, քարշէին յայսկոյս եւ յայնկոյս, եւ աղաղակէին սպանանել զնա. եւ 'ի յանդուգն յարձակմանէ անօրինացն, սպանաւ 'ի մէջ ամբոխին Մարտիրոս անուն որդի նորա, գործով ընկալեալ զվկայականն անուն, պսակակից նախընթաց վկայիցն եղեալ 'ի Քրիստոս։ Իսկ թագաւորն արգել զբազմութիւնն 'ի սպանանելոյ զերանելին, եւ հրամանս ետ կապել երկաթեաւ եւ դնել 'ի բանտի. եւ տրտմեցաւ յաղագս մահուան որդւոյ նորա, զի առանց կամաց նորա եղեւ։

Իսկ երանելին 'ի բանտին գոհանայր զԱստուծոյ, զի արժանի եղեւ վասն անուան նորա կրել զչարչարանս եւ զկապանս. եւս եւ վասն որդւոյ իւրոյ՝ զի վկայական արեամբ պսակեցաւ 'ի Քրիստոս. եւ մինչդեռ 'ի բանտի անդ կայր յաղօթս, 'ի մէջ գիշերին երեւեալ նմա բանսարկուն սատանայ, ասէ. Ո՛վ Սարգիս, զի՞նչ շահիս 'ի յամառ խորհրդոց. հաւանեա կամաց թագաւորին և լեր երանելի յաշխարհի, և մի՛ վասն սնոտի յուսոյ լքաներ զկեանս քո։ Ասէ ցնա սուրբն Սարգիս. Երթ յետս, հակառակորդ ճշմարտութեան և հայր ստութեան. զի խրատ քո ոչ է պատճառ կենաց, այլ մահուն յաւիտենից՝ ունողացն զնա, որ ընդ քեզ արկանին 'ի կորուստ, այնոքիկ որք առնեն զոր ասեսդ. և նոյնժամայն հալածեալ չարն՝ եղև աներևոյթ։

Եւ ահա յանկարծակի երևեալ նմա Տէր Յիսուս 'ի բանտին՝ հանդերձ երկնաւոր զօրօքն, և լի եղև տունն գերապայծառ լուսով առաւել քան զարեգակն, և լուծան վաղվաղակի կապանք ձեռաց և ոտից երանելւոյն։ Եւ ձայն լսելի եղև 'ի լուսոյ անտի և ասէ. Քաջալերեաց բարի և հաւատարիմ ծառայ իմ Սարգիս. և մի՛ երկիցես 'ի սիրտ քո 'ի սպանողաց զմահկանացու մարմինդ. զի մտանելոց ես 'ի տրտմականաց աստի և 'ի հողանիւթ յարկացս՝ յանվախճան ուրախութիւն լուսեղէն խորանաց Տեառն քո։ Եւ 'ի տեսիլ լուսոյ փառաց այնորիկ ծագման, ժողովեցան բազմութիւնք որ շուրջ կային զբանտիւն՝ 'ի տուն անդր, և լցեալք զարմանալեօք՝ տային փառս ճշմարտին Աստուծոյ՝ զոր քարոզէրն Սարգիս. մանաւանդ իբրև տեսանէին զերանելին Սարգիս՝ զի արձակեալ էր 'ի կապանաց և կայր յաղօթս առ Աստուած. և վաղվաղակի երթեալք պատմեցին թագաւորին զսքանչելիսն զոր տեսին. և հրամայէր առաջի իւր ածել զերանելին։ Եւ իբրև տարան, ասէ ցնա. Ո՛վ անխմաստ և թշնամի անձին քում. զի՞նչ շահ եբեր քեզ հակառակութիւն հրամանաց մերոց, բայց թէ զանարգանս և զչարչարանս և զմահ որդւոյ քո. և թէ ոչ զղջացեալ դառնաս՝ չարաչար մահուամբ ելցես 'ի կենացս. իսկ եթէ փոխեսցես յանմիտ խորհրդոց այտի, և գաս 'ի լաւութիւնն, յիշելով զսէրն մեր զառաջին, քաղցրութիւն մեր և ներողութիւն ոչ համարին 'ի մեզս զսխալանսդ՝ որով յանցաւոր գտար. այլ ես գերագոյն պատուոյ և փառաց արժանաւորեսցիս։ Արդ յայսմ աւուր միայն անսա հրամանաց մերոց, և յետ այսորիկ երթ առ Նազովրեցին։ Զայս ասէր Թագաւորն, վասն զի ոչ կամէր զմահ սրբոյն, քանզի Յուլիանոսի կայսեր հասեալ էր համբաւ գալստեան։

Երանելին ասէ. Զամօթ և զնախատինս աստուածոց քոց ոչ զգացեր. քանզի խաւար և անլոյս ես իբրև զաստուածսն քո. զիա՞րդ տեսանելով մանրեալ զնոսա իբրև զփոշի, և ոչ ծանեար զտկարութիւն նոցա։ Այլ իմ պարծանք և յոյս առ Աստուածն իմ է Յիսուս Քրիստոս, զի որպէս զորդին իմ ընկալաւ բարեպաշտութեան հաւատով, և զիս ընկալցի 'ի նոյն հաւատս արմատացեալ և հաստատեալ. զորմէ գոհանամ և փառաւորեմ զի ընկալաւ զպտուղ որովայնի իմոյ, և ոչ ետ խաբել մոլորութեան քո. և արդ ասեմ յայտնապէս, զի կուրութիւն քո զիս ոչ խաւարեցուսցէ, և անիմաստութիւն քո զիս ոչ յիմարեցուսցէ։

Իբրև լուաւ զայս Թագաւորն՝ լի եղև սրտմտութեամբ, և հրամայեաց մերկացուցանել 'ի նմանէ զպատմուճանն զինուորական և ասէ. Սարգիս՝ որ ոչ ծանեաւ զպատիւն՝ զանպատուութիւն ծանիցէ, և 'ի մեղս իւր մեռցի. և հրաման ետ հանել արտաքոյ քաղաքին և սպանանել։ Արդ առեալ զնա դահճացն՝ վարէին զնա բռնութեամբ մինչև 'ի մահուն տեղի. երթային ընդ նմա բազմութիւնք յոյժ քրիստոնէից և հեթանոսաց. և իբրև հասին 'ի տեղին որ անուանեալ կոչէր Սալք, դադարեալ սրբոյն, քանզի անդանոր հանդերձեալ էր կատարիլ, և զձեռս տարածեալ և կացեալ յաղօթս բարձր ձայնիւ ասելով.

Տէր Աստուած յաւիտենական, որ արժանի արարեր զիս մեռանել վասն անուանդ քո սրբոյ, լուր աղաչանաց ծառայի քո, և ընկալ զիս ընդ այնոսիկ որ սիրեցին զօր երևելոյ գալստեան քո, և եղեն ճանապարհակից քեզ չարչարանօք խաչի և մահու. և զոր միանգամ պատրանօք չարին մեղուցեալ եմ 'ի մանկութենէ իմմէ առաջի քո մինչև ցայժմ կամաւ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, լուա և մաքրեա ողորմութեամբ քո 'ի ձեռն հեղման արեան իմոյ։ Շնորհեա և հաւատացելոց քոց ամենեցուն որք յիշեն զանուն իմ 'ի բարեխօսութիւն, զթողութիւն մեղաց, և յիւրաքանչիւր վտանգից զփրկութիւն հոգւոյ և մարմնոյ, զդիւաց հալածումն, զհիւանդաց բժշկութիւն, 'ի պատերազմունս յաղթութիւն, 'ի կապանաց և 'ի բանտից զարձակումն, 'ի ծառայութենէ զազատութիւն, 'ի խռովութեանց զխաղաղութիւն, 'ի նեղութեանց անդորրութիւն, 'ի ճանապարհի զառաջնորդական պահպանութիւն, ալէկոծելոց 'ի ծովու զհանդարտութիւն, յերաշտութեան զհոսումն անձրևաց քաղցրութեան՝ յառատապէս պտղաբերութիւն. 'ի կարկտաբեր և յեղեամնարկու օդոց բռնութենէ՝ դադարումն արագապէս, մարախոյ և ամենայն վնասակար զեռնոց որ շարժին 'ի բարկութենէ քումմէ պատուհասել զմարդիկ վասն մեղաց՝ զհալածումն. և որք նուիրական ընծայիւք և ողորմութեամբ զյիշատակս մեր կատարեն, ընկալ 'ի հոտ անուշից, և վարձատրեա բիւրապատիկ բարութիւնս աստ և 'ի հանդերձելումն. և զհոգիս իմ ընկալ յօթեվանս արդարոց 'ի հանգիստն յաւիտենական, և քեզ փառք յաւիտեանս:

Եւ յետ կատարման աղօթիցն, էջ առ նա հրեշտակ Տեառն յերկնից՝ ունելով 'ի ձեռին իւրում պըսակ լուսապայծառ, և ասէ. Զօրացիր քաջ նահատակդ Քրիստոսի, և մի երկնչիր 'ի սպանողացդ զմարմինդ, քանզի բացաւ քեզ դուռն արքայութեան երկնից, և զոր ինչ խնդրեցեր՝ տուաւ քեզ յԱստուծոյ. և ամենայն հաւատացելոց խնդրուածք յանուն քո շնորհեսցի 'ի Տեառնէ: Եւ տեսեալ բազմութեանն զհրեշտակն Աստուծոյ և զպսակն լուսոյ՝ աղաղակէին ասելով. Մեծ է Աստուածն քրիստոնէից, և բայց 'ի նմանէ այլ ոչ գոյ Աստուած: Իսկ սրբոյն դարձեալ առ դասս հաւատացեալ զօրացն և ասէ. Լուարուք ինձ այժմ հաւատացեալք 'ի Քրիստոս, որք մերձ եղեալ տեսանէք զնահատակութիւնս իմ: մի եղիցի ձեզ տեսանել[1] զմահկանացու մարմնոյ իմոյ կրել անյուսաբար զտրտմութիւն. զի եթէ այսօր և եթէ վաղիւ ընդունելոց է սա հարկաւորապէս զպարտիս նախահօրն. բայց յոյս իմ որ 'ի Քրիստոս՝ անվախճան է. որով ունիմ վերստին առնուլ զնա անմահ և անապական 'ի գալստեան նորա. և ես ցնծամ և ուրախ եմ այսօր, զի զփափագումն իմ որ 'ի մանկութենէ՝ կատարեաց Տէր, չարչարանաց իւրոց լինել հաղորդ, և վկայիցն պսակաց կցորդ. և որպէս զօրացոյց զիս 'ի պատերազմունս մարմնաւորս թշնամեաց, զօրացուսցէ և այսօր 'ի վերայ ոգւոյ թշնամւոյն, և որք նովաւ պատերազմին: Եւ արդ իմ զընթացս բարի ճանապարհի կենցաղոյս կատարեալ և զհաւատոն պահեալ, գնամ ուրախութեամբ առ Քրիստոս. և խաղաղութիւնն Աստուծոյ եղիցի ընդ ձեզ յաւիտեան: Եւ զայս ասացեալ՝ եդ ծունր յարեւելս, և տեառնագրեալ զինքն նշանաւ խաչին, և խոնարհեցուցեալ զպարանոցն՝ ասէ. Տէր Յիսուս, ընկալ զոգի իմ: Եւ եհատ դահիճն սուսերաւ զգլուխ երանելւոյն. և նոյնժամայն ծագեաց լոյս երկնային և շրջապատէր զմարմնով նորա. և ցոլացեալ 'ի լուսոյ անտի բոց՝ այրէր զոմանս 'ի հեթանոսաց անտի, և մնացեալքն 'ի նոցանէ փախստական լինէին: Եւ ձայն լսելի յերկնից լինէր որ ասէր. Վայելչապէս կատարեցեր զճգնութիւնդ քո, ով երանելիդ Սարգիս. արդ եկ և ժառանգեաց զհանգիստն զյաւիտենական ընդ ամենայն սուրբս: Իսկ որք 'ի զօրաց անտի հաւատացեալք 'ի տեղւոջ անդ՝ առեալ զմարմին երանելւոյն պատեցին մաքուր զգեստիւք: Եւ պատմեցաւ այս յականջս թագաւորին. և առաքեալ դահիճս կոտորեաց 'ի նոցանէ արս չորեքտասան, որք էին յազգէ անտի Պարսից, և հրամայեաց գազանաց արկանել զմարմինս նոցա. յորս ոչ մերձեցան ըստ տեսչութեանն Աստուծոյ. ապա խորհուրդ առեալ՝ հրով այրել զմարմինս վկայիցն Քրիստոսի. վասն զի բազումք 'ի Պարսիցն յաղագս սքանչելեացն հաւատացին 'ի Տէր:

---

[1] Հնագոյնն՝ հայել:

Եւ մինչ յայսմ խորհրդեան էր՝ եհաս 'ի լսելիս ամպարշտին շշուկ երկիւղի գալստեանն Յուլիանոսի, և մոռանայր զչարութեան խորհուրդ որ յաղագս սրբոյն. և հանդերձեալ պատրաստէր զզօրսն ելանել ընդդէմ նորա 'ի պատերազմ: Յայնժամ եկեալ ոմանք 'ի հաւատացելոցն՝ 'ի գիշերի, և առեալ զմարմին սըրբոյն Սարգսի և զորդւոյ նորա և զչորեքտասան զօ-

ըսկանացն՝ պահեցին զգուշութեամբ ՚ի պատուական տեղւոջ։

Կատարեցաւ սուրբն Սարգիս և որք ընդ նմա յամսեանն յունուարի ՚ի կատարման աւուր երեսուն և մի, ՚ի թագաւորութեանն Պարսից Շապհոյ, և Հռոմայեցւոց Յուլիանոսի։ իսկ ՚ի մեզ թագաւորեալ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում Հօր միանգամայն և Հոգւոյն սրբոյ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և յաւիտենից յաւիտեանս. ամէն։

Թարգմանեցաւ Ճառս յասորւոցն ՚ի մերս՝ ՚ի ձեռն Միխայելի ուրումն կրօնաւորի քահանայի ասորւոյ, և յարմարեցաւ ըստ կարի մերում լեզուի շարադրութեամբ ՚ի Ներսիսէ եպիսկոպոսէ՝ յեղբօրէ կաթողիկոսի Հայոց Գրիգորիսի, ՚ի թուաբերութեանս Հայոց ՈԻ. և մաղթեմք զընթերցողսդ և զգաղափարողսդ յիշել զաշխատեալքս ՚ի սմա աղօթիւք առաջի Աստուծոյ յաւուր տօնի երանելւոյն. և զբանսդ յիշատակել գրել յիւրաքանչիւր գրեալսդ՝ հայցեմք. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Սեւերիանոսի։

Յետ մրցմանց և վկայական նահատակութեան սրբոց Քառասուն վկայիցն այնոցիկ որ վկայեցին 'ի Սեբաստացւոց մայրաքաղաքին, յաւուրս ժամանակաց ամպարիշտ թագաւորին Լիկիանոսի, այն ինչ զօրացելոյ հալածանացն 'ի վերայ քրիստոնէից, մախանօք և սպառնալեօք շարժեալ 'ի բանսարկուէն ազդմանէ։

Ծաղկեալ էր ըստ այնմ ժամանակի աստուածպաշտութեամբ պանծալի վկայն Քրիստոսի Սեւերիանոս, և սիրովն Աստուծոյ յոյժ պայծառացեալ, որպէս զի 'ի զարմացման լինել ամենայն տեսողացն վասն համարձակութեանն. քանզի բազմաց ողոքելով զնա ձողոպրել 'ի ժամանակէն յայնմանէ, և ոչ զհամարձակութիւնն 'ի կիր արկանելով յանդիման 'ի տագնապ մտանել, ասէ ցնոսա սուրբ վկայն Քրիստոսի. Ոչ զանգիտեալ խորշիմ ես 'ի Հելլենացւոց անաստուածից, և ոչ տամ պարծել ամպարշտացն 'ի վերայ իմ, այլ յանդիմանեմ զնոցա զանաստուած մոլորութիւնն. զի Քրիստոսի մի զինուորն զօրեղագոյն է քան զամպարիշտ թագաւորսն նոցա։ Եւ ասելով համարձակութեամբ զբանս զայսոսիկ, հրապարակաւ 'ի քաղաքին, պատուէր տայր ոմանց 'ի ծանօթից գաւառին իւրոյ որ անդր կային, զի յետ կատարման իւրոյ՝ պահանջեալ զնշխարս նորա ամփոփեսցեն ըստ օրինին։

Արդ չարախօսեալ լինէր սուրբն առ դուքսն Լիւսիաս յոմանց, ասելով. Սեւերիանոս մի 'ի զինուորաց որ ընդ ձեռամբ ձերով կարգեալ է 'ի գունդն Սենատորոսաց[1], արհամարհէ զհրամանս ինքնակալին և զձեր, ասելով զինքենէ քրիստոնեայ գոլով. որ և մահու պատճառ եղև Քառասնիցն արիագոյն զինուորացն, խառնեցուցեալ զնոսա ոչ հաւանել հրամանաց Թագաւորին[2]. և այնպէս փարթամ գոլով՝ զի յինքենէ կերակրէր զնոսա, և զայլս ամենայն որ 'ի բանտին արգելեալ էին։

Իսկ զայս լուեալ իշխանին Լիւսիայ 'ի պաշտօնէից իւրոց մոլորութեանն, հրամայեաց փութով առաջի կացուցանել զՍեւերիանոս։ Եւ լուեալ սրբոյն զայսոսիկ՝ լի եղև խնդութեամբ, և արիութիւն ընդ խոհեմութեան[3] խառնեալ, ինքնին յանդիման լինէր։ Եւ մտեալ յապարանսն, ասէ ցդուքսն. Ահաւասիկ հասեալ կամ առաջի քո՝ խնդրեալս 'ի քէն, զի ցուցից քեզ գործովք թէ ոչ բանի պէտս ունի յանդիմանութեան[4] ձեր ամպարիշտ անկարգութիւնդ. զի յանդիմանեաց զձեզ փորձմամբ առաջնոց վկայիցն համարձակութիւնն. որպէս զի և խափանեցան 'ի ձեռն նոցին համբերութեանն ամենայն հնարք տանջանաց ձերոց, և ոչ կարացիք փոփոխել[5] զբարեպաշտ կամս նոցա, դառն և անչափ տանջանօքն զոր ածէք 'ի վերայ նոցա. այլ դուք և երկրպագեալքն առ 'ի ձէնջ դևքն՝ յամօթ եղէք, և նոքա պսակեցան 'ի Քրիստոսէ։

Յայնժամ դուքսն Լիւսիաս ոչ բերելով զհամարձակութիւն սրբոյ վկային, և մանչեալ որպէս զառիւծ, հրամայեաց մերկացուցանել զնա և տարածանել, և չոր արջառաջլօք հարկանել։ Եւ նա ասէր 'ի տանջանսն. Ցթիկունս իմ հարին մեղաւորք, և երկայնացուցին[6] զանօրէնութիւնս իւրեանց։ Եւ յետ վաստակելոյ և տկարանալոյ պաշտօնէից անօրինին, հրամայեաց բառնալ զնա 'ի գետնոյն, և ասէ ցնա. Տես Սևերիանէ, թէ որո՛ց իրաց առիթ եղեն քեզ տարաժամ յանդգնութիւնք քո, և 'ի Քրիստոսն քո վստահութիւնք։ Եւ պատասխանի Սևերիանոս և ասէ. Եթէ աչս ունէիր տեսանողական[1], ցուցանէի քեզ զիրսն որ առիթ եղեն ինձ տարաժամ անզգամութեանս, որպէս դուդ ասես. բայց այժմիկ կոյր ես, և զառաջիկայ պատրաստեալ ինձ բրաբիոնն տեսանել ոչ կարես. և յայսմ իսկ տեսցես աստուստ, զի կրելով զտանջանս՝ հոգւով վերացեալ լինիմ. զմահկանացու մարմինս տանջելով՝ հոգւոյս իմոյ փոխեալ 'ի տեղի հանգստեանն 'ի բժշկութիւն խոստմանցն[2] փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի պարգևելով նորա։

---

[1] Senatorius ըստ Հռովմէացւոց, որ և ըստ յունականին, 'ի գաւառէ սենատոր (ծերակոյտ) իշխանաց։

[2] Միւս օր. ինքնակալին։

[3] Միւս օր. խոնարհութեան։

[4] Միւս օր. յանդիման ձեր։

[5] Միւս օր. ոչ կարէք փոխել։

[6] Միւս օր. երկար արարին։

Լիւսիաս դուքսն ասէ. Պաճուճիս պարծանօք, Սևերիանէ, և զանխմաստս ընդ քեզ յափշտակես. այլ զիս ոչ կարես. այլ այնչափ հարուածովք տանջեմ զքեզ՝ մինչև խոստովան լինիցիս զտէրութենէ աստուածոցն։ Պատասխանի ետ սուրբ վկայն և ասէ. Զամենայն տեսակ տանջանաց, զոր ինչ և կամիս հասուցանել 'ի վերայ իմ՝ մի՛ հեղգար և մի՛ ընդերկուանար, զի իմացեալ ծանիցես զզօրութիւն Քրիստոսին իմոյ, աւելագոյն գտանել զիս քան զամենայն ադամանդեայ. և մանաւանդ դու նուաղեսցիս՝ զտանջանարանսն վասն իմ զմտաւ ածելով, քան եթէ ես կրելով զառ 'ի քէն հասեալ ինձ չարչարանս։

Դուքսն ասէ. Ո՞չ գիտես երկիցս թշուառական և եղկելի, եթէ զինուոր գոլով քո որոց ընդ ձեռամբ մերով բնակեալ[3] են, և քո արեանդ իշխանութիւն ունողի, և այդպէս յանդգնեալ համարձակեալ ճամարտակիս։ Սևերիանոս ասէ. Համարձակութիւն տայ ինձ բարեպաշտութիւն Քրիստոսին իմոյ. զի այնպիսի աստուածապաշտ եմ ես՝ որ արհամարհել տայ ինձ զամպարիշտ թագաւորս, և զիշխանս նոյնպէս առ ոչինչ համարել, քանզի օրինօք ոչ քաղաքավարին. այլ նախատես զիս՝ վասն զի զինուորեալ եմ ընդ քոյով իշխանութեամբ կարգեալ. այլ իմացեալ ծանիցես զբարետոհմութիւն ազատութեան իմոյ որ 'ի Քրիստոսէ, յայն որ վերստին ծնաւ զիս արեամբն իւրով, և քան զթագաւորս պայծառագոյնս զիս արար և պատուական քան զիշխանսդ. վասն որոյ և այժմ իսկ իբրև ընդ անբան անասնոյ զրուցատրելով խօսիմ ընդ ձեզ յուսով իմով որ 'ի Քրիստոս. որ և զամենայն հրձուանս կենցաղոյս հաւանեցոյց [1] մեզ իբրև զաղբ վարկանել: Արդ մի՛ կարծեր զարհուրեցուցանել զիս քոյովդ ամբարհաւաճութեամբ. այլ խրոխտաս 'ի վերայ իմ և մեծամեծս խորհիս, իբրև իշխանութիւն ունելով արեան իմոյ. զայդպիսի իշխանութիւն և աւազակք իսկ ունին որ շրջին 'ի լերինս. քանզի յորժամ ըմբռնեն զոմանս յուղևորութեան ճանապարհի, գան հարկանելով սրախողխողս իսկ առնեն, և 'ի բաց կորզեն զոր ինչ և գտանիցեն առ նա, և առնեն զոր ինչ և կամին. և դու այժմիկ մի՛ կարծեր հպարտանալ [2] 'ի վերայ իմ անօրէն սրովդ քո վարեալ. քանզի զօրինաւոր իշխանութիւնդ փոխեալ 'ի գոռոզութիւն՝ շանց և այլասպանից իսկ թոյլ տաս. և բարեպաշտաց զպատուհաս հասուցանես, զոր նոցա վայել է:

---

[1] Միւս օր. տէսական։

[2] Միւս օր. խոստովանողաց։

[3] Միւս օր. անկեալ։

Իսկ դուքսն սրտմտեալ չարութեամբ, եռացեալ ցասմամբ, հրամայեաց կախել զնա և քերել: Յայնժամ պաշտօնեայք ամպարշտին պաշարեալ զնա յամենայն կողմանց, կախեցին զնա զփայտէ, և քերեցին զկողսն նորա: Եւ սուրբ վկայն 'ի զկծեցուցիչ ցաւոցն առեալ զգայութիւն, համբարձ զաչս իւր յերկինս, և սկսաւ աղօթել և ասել այսպէս. Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ երևելի և աներևոյթ արարածոց գոյացուցիչդ ես, որ գերեցեր զգժոխս՝ բարձրացեալ 'ի խաչին. որ յայտ յանդիման խայտառակեալ նշաւակեցեր զիշխանութիւնս և զպետութիւնս այսմ յաւիտենիս. որ սրբոց քոց առաքելոց ետուր զօրութիւն 'ի բարձանց, և 'ի բազում վշտաց և նեղութեանց փրկեցեր զնոսա. որ 'ի հնոցին 'ի Բաբելոնի զզօրութիւն բոցոյն սանձահարեցեր[1], և զմարմին երից մանկանցն անարատ պահեցեր. տուր ինձ, Տէր, համբերութիւն մինչև 'ի սպառ և զօրացո զիս. դու գիտես զմարդկային բնութեանս տկարութիւն, և տուր զփառս անուանդ քո սրբոյ, լուծանելով զզօրութիւն յարուցելոցն 'ի վերայ սուրբ հօտի քո, զի ծանիցեն ամենեքեան եթէ դու ես Աստուած մեր։

---

[1] Միւս օր. հաճարեցոյց:

[2] Միւս օր. մի՛ պարծիր և հպարտանար:

Եւ իբրև դադարեաց յաղօթիցն, հրամայեաց դուքսըն իջուցանել զնա 'ի փայտէն և տանել 'ի բանտն, սպառնացեալ նմա, զի եթէ ոչ քաջ հաւանեալ եկեսցես առ վաղիւն առ միւս քննութիւն, 'ի ձեռն յոլովագոյն տանջանաց ողջախոհացցիս։ Եւ իբրև տանէին զսուրբն 'ի բանտն, ընդ երթալն 'ի քաղաքամիջի անդ, զաղաղակ բարձեալ 'ի լսելիս ամենեցուն, հրապարակախօս եղեալ ասէր. Որք զնահատակացն կրելոցն յասպարիզին զտէրունի զվէրսն տեսանէք, զմտաւ ածէք ընդ ցաւոցն զպարգևսն. զի թէ թագաւոր զմեռելոց զինուորացն վասն իւր զազգայինսն մեծաւ պարգևօք մեծարէ 'ի պատիւ քաջացելոցն, և անդրովք և գրով քարոզէ զնոցա զառաքինի մահն, և անմոռաց զնոցա յիշատակն պահել և որոց յետ այսորիկ, որչափ ևս առաւել մեր մարտադիրն, և 'ի կեանս յայսոսիկ պսակեսցէ մեծապէս զվկայս սրբոյ յարութեան իւրոյ, և 'ի հանդերձելումն հաղորդս արասցէ արքայութեանն իւրոյ։ Եւ այսոցիկ վկայեն յառաջ նահատակելոցն[2] ոսկերքն, որք պատուական են բարեպաշտիցն քան զամենայն երկրաւոր մեծութիւն։

Երթայր ընդ նմա և ամենայն ամբոխ[3] քաղաքին մինչև ցբանտն. զոր ողջունելով 'ի համբոյր սրբութեան զհաւատացեալսն 'ի Տէր, մտանէր 'ի ներքս ուրախութեամբ բազմաւ, փառաւորելով զԱստուած։ Եւ զկնի աւուրց հնգից, հրամայեաց դուքսն ածել զառաջնեաւ զսուրբն և ասէ ցնա. Թուի ինձ թէ ողոքանաց պէտս չունիս. այլ անձամբ իմացեալ ես ըզպատշաճ զօգուտն քո. արդ այսուհետև զոհեա առտուածոյն, և մի՛ զառաջինն 'ի կիր արկանէր զվիճաբանութիւն. այլ հաւանեալ լեր և ազատեա զանձն քո յայդպիսի տանջանաց:

---

[1] Միւս օր. հրոյ սանձեցեր։

[2] Միւս օր. հալածեցելոցն։

[3] Միւս օր. բազմամբոխ։

Ասէ ցնա սուրբ վկայն Քրիստոսի. Ո՞չ գիտես երիցս թշուառականդ և եղկելիդ, զի թէպէտ և վաստակեալ է մարմինս իմ յառաջինկայ տանջանարանացն[1] զոր ածեր 'ի վերայ իմ, սակայն և այժմ զուարթ և պայծառ դիմօք յօժարութեամբ կամ առաջի քո ատենիդ, պատրաստ գոլով առ հանդերձեալ տանջանսըն զոր խոստացար վասն իմ, մինչև կատարեցից զընթացս և զջանն իմ գեղեցիկ, ակն ունելով յուսոյ կենացն յաւիտենից որ կայ և մնայ ինձ զոր ընդունելոց եմ առ 'ի Տեառնէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ:

Յայնժամ եւս առաւել սրտմտեալ դուքսն, հրամայեաց անօրէն դահճացն քարամբք հարկանել զբերան նորա, ասելով ցսուրբ վկայն. Ընդէ՞ր յիշելով քո զանուն խաչելոյն՝ պղծեցեր զապարանս իմ: Եւ Քրիստոսի նահատակն ծիծաղելով ասէր. Ո՛վ անմիտ և լցեալդ ամենայն անօրէնութեամբ[2], զաստուածսն քո յիշելով որ դևք են՝ ոչ թուի քեզ պղծել զապարանս քո, և զՔրիստոս՝ որ է թագաւոր և արարիչ երկնի և երկրի յիշելով՝ ասես պղծիլ ապարանից քոյ: Իշխանն ասէ. Ես կարծէի հեզագոյն լինել քեզ առաջին տանջանօքն և այնուհետև հաւանել մեզ. այլ վասն զի կաս և մնաս 'ի նմին յամառութեան՝ վիճաբանելով[3] ընդ մեզ, և յօժարիս դարձեալ տանջիլ, զի սնափառութեամբ պարծեսցիս առ քրիստոնեայսըն, և ես հաւանեցուցից զքեզ թէ ոչ և մի շահեսցիս յայնմանէ յոր յուսացեալն ես: Սևերիանոս ասէ. Եթէ վասն մարդկան համբերէի այսոցիկ, եղկելի արդեօք և թշուառական էի քան զաստուածսն քո, այլ և ոչ հանդուրժել իսկ կարէի մինչև իսպառ կրելով զայսոսիկ: Այլ մեծագոյն քան զաշխատութիւնս զփոխարէնսն պահանջելով՝ արհամարհեմ ըզմարմնոյս պատուհաս: Արդ այսուհետև մի՛ ինձ այլ լոկ բանիւք սպառնար, այլ միւսանգամ հուպ լեր զտանջանաց, և զփորձ առցես զօգնականէն իմմէ. և հաւանեալ ծանիցես դու եթէ ոչ իբրև 'ի մնոտի ինչ յուսացեալ եմ ես։

---

[1] Միւս օր. յառաջին տանջանաց:

[2] Միւս օր. անիրաւութեամբ:

[3] Միւս օր. վիճաբանութեան:

Դուքսն ասէ. Կախեցէք զդա զփայտէ և սուսերաւ ծակոտեցէք զկողս դորա։ Եւ իբրև կախեալ լինէր նա 'ի փայտն, ասէ ցնա իշխանն. Սեւերիանէ, խոստովանի՞ս զոհել աստուածոցն նախ քան սկսանել տանջանացն. տես զքանցումն կողից քոց, և ողորմեա եղկելի անձին քում. այլ ուստի՞ է ձեզ քրիստոնէիցդ, ասա ինձ, այնչափ յանդգնութիւն անողորմութեան. կամ ո՞ւմ հնար է ձեզ ողորմել, որք անձանց ձերոց ոչ կարէք[1] ողորմել։ Պատասխանի ետ սուրբ վկայն Քրիստոսի և ասէ. Լուր դատաւոր, ոչ գիտես դու զեղանակ մարդասիրութեան, և զիա՞րդ ասես ինձ ողորմել։ Յայնժամ շնորհս խոստովանիցիմ քեզ, յորժամ մահուամբ զիս դատապարտիցես, զի բազում բարութեանց առիթ ինձ լինիցիս, և երկնային գանձուցն ժառանգորդ զիս արասցես։

Զայսոսիկ լուեալ իշխանին Լիւսիայ, հրաման ետ իջուցանել զնա 'ի փայտէն. և դարձեալ ասէ ցնա. Լուր ինձ այսուհետև և զոհեա աստուածոցն, ապա թէ ոչ՝ զամենայն անդամս քո խլել հրամայեմ յօդուածոց իւրեանց։ Եւ վաղվաղակի հրամայեաց հանել զնա 'ի վերայ պարսպացն և ձկտեցուցանել, և կախել քարինս մեծամեծս 'ի պարանոցն և յոտն։ Եւ իբրև կախեցին, ասէ ցնա դուքսն 'ի կատականս արկեալ՝ կամելով հենգնել զնա. Զանա, ջանա, Սեւերիանէ, զի մեծագոյն վարձս առցես։ Եւ սուրբ վկայն Քրիստոսի հեծեծելով, և զաչս 'ի յերկինս համբառնալով, աղօթէր առ Տէր՝ ասելով այսպէս. Աստուած յաւիտենական, որ զամենայն ինչ գոյացուցեր 'ի ձեռն Միածնի որդւոյ քո սիրելւոյ և Հոգւոյդ սրբոյ, առ քեզ կարդամ; որ եսդ Տէր կենդանեաց և մեռելոց, լսելի արա զամենայն օրհնութիւնս, և շնորհեա ինձ զերկնային յաղթութիւնդ քո, զի մի պարծեսցի 'ի վերայ իմ անօրէնն Լիւսիաս, այլ տուր փառս անուանդ քո Տէր։

---

[1] Միւս օր. ոչ կամիք։

Եւ հայեցեալ ասէ ցԼիւսիաս. Եթէ գիտէիր, եղկելի, զպարգեւս մարդասիրի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի 'ի ձեռն այսոցիկ առժամանակեայ տանջանացս զյաւիտենական բարութիւնսն ինձ շնորհէ, ըղձանայիր թերեւս և դու կրել զայսպիսի չարչարանս զոր ինձ յարմարես այժմիկ: Այլ քանզի հեռացուցեալ էն զսիրտս ձեր յԱստուծոյ կենդանւոյ՝ առ 'ի ձէնջ երկրպագեալ դեքն, և մեծ թուին ձեզ մարդկային բարութիւնքս[1] և անցաւոր պատիւդ և իշխանութիւնդ, ոչ գիտելով ձեր եթէ առսակաւ ժամանակեայ են այդոքիկ և անցաւոր, և միայն յաւիտենականն է փոյթ արժանի և փափաքանաց[2], այն որ յուսով կայ և մնայ զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց: Եւ զայսոսիկ ասելով սրբոյն՝ մինչդեռ 'ի կախաղանի անդ էր առ պարսպովն, ազանչանայր դուքսն ընդ համբերութիւն նորա. և ասէ ցնա. Ասէին ինձ վասն քո ամենեքեան, թէ ռամիկ այր ես դու և առանց դպրութեան. այլ ես առն հռետորի և փիլիսոփայի[3] քաջաբանութիւն տեսանեմ 'ի քեզ: Սուրբն ասէ. Եւ ո՞ր հռետորի կամ իմաստասիրի հընար է հաւասարել այնմիկ՝ որ յիմն խօսի Քրիստոսին իմոյ. արդ մի՛ կարծեր թէ ես եմ որ բարբառիմ զայսոսիկ, զի ռամիկ և չինականագոյն եմ քան զամենեսեան՝ որպէս և լուեալ ես վասն իմ. այլ շնորհքն Աստուծոյ ջանակից ինձ լինելով, խօսել զայսոսիկ պատրաստեաց զիս: Եւ զայս ասացեալ՝ սկսաւ աղօթել և ասել. Տէր, Տէր, գոհանամ զքէն, զի զանարժանութիւնս իմ արժանի համարեցար անապական բարութեանց քոց: Մեծացիր, Տէր իմ, 'ի մարմնի իմում և 'ի հոգւոջս. զի կեալն ինձ դու ես, և մեռանելն վասն անուանդ քո փառաւորելոյ՝ անանց կենդանութիւն 'ի կեանս յաւիտենից: Քեզ, Քրիստոս, որդի Աստուծոյ կենդանւոյն յաւիտենից, յանձն առնեմ զհաւատացեալս զայսոսիկ, որ հալածեալք վասն անուանդ քո մեծի և ահաւորի. լեր սոցա օգնական, և տուր համարձակութիւն[4] զի փառաւորեսցեն զսուրբ անուն քո յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Եւ կատարեալ սրբոյ վկային զաղօթսն, աւանդեաց զհոգին 'ի ձեռն Տեառն, ըստ գրեցելումն, թէ՝ Հոգիք արդարոց 'ի ձեռին Աստուծոյ են։ Եւ 'ի վաղիւ անդր ընդ այգանալ առաւօտուն [1] ժողովեցան արք պատուականք և երկիւղածք 'ի Տեառնէ, որոց յառաջագոյն յանձն էր արարեալ սրբոյ վկային. և բարձեալ զսուրբ նշխարս նորա 'ի գիշերի, և գնացեալ տարան 'ի հայրենի գիւղ նորա՝ ուստի բնաւորեալն էր երանելին։ Եւ 'ի գնալն նոցա և մերձ լինել 'ի տեղի վախճանին, ազդ եղև գալուստ նշխարացն. և ծառայ սրբոյն որ բնակեալ էր 'ի գիւղն, վախճանեալ էր յաւուր յայնմիկ, և էին ամենայն բնակիչք տեղւոյն ժողովեալ յողբումն և 'ի թաղումն մեռելոյն։

---

[1] Միւս օր. բնութիւնք:

[2] Միւս օր. ճառոց:

[3] Միւս օր. իմաստասիրի:

[4] Միւս օր. համբերութիւն:

Իբրև լուան զգալուստ սրբոյն, թողին արտաքոյ գերեզմանին զմեռեալն՝ հանդերձ ամուսնաւ իւրով և որդւովքն, և գնային օրհնութեամբ և երգովք հոգևորօք և լապտերովք բորբոքելովք, և անուշահոտ բուրմամբ խնկոց 'ի հանդիպումն սուրբ նշխարացն։ Եւ շուրջ զիւրեաւ հայեցեալ կինն՝ ոչ զոք ետես յողբակցաց իւրոց. բուռն հարեալ զվախճանելոյ առն իւրոյ, ասէր ողբալով ցնա. Արի՛ վաղվաղակի, զի և մեք ժամանեսցուք արագապէս զկնի այլոցն 'ի հանդիպումն սրբոյն այնորիկ Տեառն մերոյ, զի եկեսցէ նա պատուով, և մի՛ արհամարհողք կարծեսցուք սրբոյ վկային։ Եւ ևս յոլովագոյն բանս յաւելեալ յողբսըն՝ որպէս օրէն է սգացելոյն։

Եւ ասելով զայսոսիկ կնոջն, մեռեալն նստաւ վաղվաղակի 'ի վերայ դագաղացն, ունելով զոտսն երիզապնդեալ կտաւօքն. և 'ի բաց ձգեալ յանձնէ իւրմէ զգերեզմանական պատանսն, կենդանի եղեալ վազելով գնայր 'ի հանդիպումն որ վասն Քրիստոսի մեռեալն էր, 'ի մահուանէ 'ի կեանս դարձեալ, վասն մեռելոյն մաղթանացս փոխադրեալ։ Եւ տեսանելով զնա ամբոխն ամենայն յարուցեալ՝ ետուն փառս Աստուծոյ, այնմ որ շնորհեաց 'ի ձեռն մաղթանաց սրբոյ վկային զյարութիւն մեռելոյն։ Սա եկեաց ամս հնգետասան՝ սպասաւորելով գերեզմանացն [1] 'ի կենդանութեան վասն փրկութեան հոգւոյ իւրոյ. և յետ այնորիկ եմուտ ընդ վախճանաւ կենցաղոյս այս՝ յաւելեալ առ հարս իւր:

---

[1] Միւս օր. և վաղվաղակի ընդ այգն ընդ առաւօտուն։

Էր արդ հոգաբարձութիւն բազում ժողովրդեանն թէ յորում տեղւոջ արասցեն զհանգստարան նշխարաց սրբոյն. և ասէին. Եկայք մանեսցուք պսակ 'ի ծաղկանց, և դիցուք 'ի վերայ մահճացն, և Տէր ցուցցէ մեզ զտեղին զոր պատրաստեալ է սրբոյն. և արարին այնպէս: Եւ մատակարարութեամբն Աստուծոյ եկեալ արծուի մի թռուցեալ 'ի վերայ մահճացն. և տեսանելով ամենեցուն զայնպիսի պսակն առաջի տանելով նոցա արծուոյն, գնացեալ լինէին զկնի պսակացն և բազմութիւն ժողովրդոցն, հանդերձ նշխարօք սրբոյն. և ազդեալ ցուցանէր նոցա զտեղին՝ յորում հանդերձեալ էր հանգչել նշխարք սրբոյն Սեւերիանոսի. և անդ եդեալ զպսակն ոչ եւս երեւեալ լինէր: Իսկ տեսողքն սքանչացեալ փառաւորէին զԱստուած, զայն որ եցոյց զտեղին՝ յոր պարտ էր հանգչել ոսկերաց սրբոյն, և հանդերձ մեծաւ փափաքանօք կատարեցին զհանգիստն:

Արդ այսպէս նահատակեալ երանելւոյն յամսեանն սեպտեմբերի որ օր ինն էր [2], և սքանչելագործելով յամենայն ժամու անխափան զամենայն ցաւս բժշկելով, և մաղթելով վասն փրկութեան ամենայն տիեզերաց առ Քրիստոս Աստուած մեր. որում վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

---

[1] Միւս օր. սրբոյ գերեզմանին:

[2] Միւս օր. նոյեմբերի որ տասն և հինգ էր:

Վկայաբանութիւն Սրբոյն Սոփիայ և երից դստերաց նորա՝ Պիստիսի, Ելպիսի և Ագապիոսի ։

Բանք երկնաւորք Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ, և բարերարին ամենայն բնութեան մարդկան, որովք աւետարանեաց հաւատալ 'ի մի Աստուած 'ի Հայր ամենակալ, և 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս յորդին Աստուծոյ, և 'ի սուրբ Հոգին. և հեռանալ 'ի մոլորութենէ կռոց, և գտանել թողութիւն մեղաց ջրով և Հոգւով, որպէս ասէն Յովհաննէս. Ես մկրտեմ զձեզ ջրով. քան զիս հզօրագոյն՝ նա մկրտեսցէ զձեզ Հոգւովն սրբով. աւետարանելով բարերարութեանս այսր ամենայնի որ ընդ ամենայն աշխարհս՝ սրբոց առաքելոցն, ամենայն երկիր 'ի ներքոյ երկնից մկրտէր, պայծառ և զուարթ էր բարեպաշտութեան հրամանն ։

Կին ոմն որում անուն էր Իմաստութիւն, յազգէ հաւատացելոց, մեծատուն յոյժ, եմուտ 'ի քաղաքն Հռովմ՝ հանդերձ դստերօքն իւրովք երիւք գեղեցկօք. և փութացաւ առնուլ զկնիքն Քրիստոսի՝ դստերօքն իւրովք հանդերձ, և խրատեաց զնոսա 'ի բարեպաշտութեան հաւատոյն. և զարգանային աղջկունքն յիմաստութիւն և 'ի շնորհս Աստուծոյ ։ Եւ տեսեալ մօրն զիմաստութիւն դստերացն իւրոց՝ փառաւորէր զԱստուած, և աղօթս առնէր վասն նոցա. և առաւել քաջալերէր զնոսա շնորհօք աստուածական խրատուն. և սուրբ աղջկունքն բազում առաքինութեամբ զկենքեանս զարդարեալ՝ վարէին զհասակ մանկութեան իւրեանց 'ի մարգարէական և յառաքելական գիրս. և 'ի սիրտս իւրեանց պահել: Եւ յերթալ նոցա ըստ սովորութեան իւրեանց աղօթել 'ի տան Տեառն՝ յաւուր կիւրակէի, ամենահակառակորդն սատանայ ծառայից Աստուծոյ, մտեալ 'ի սիրտ Անտիոքու ուրումն մեծի 'ի քաղաքէն, մատուցեալ առ Ադրիանոս թագաւոր և ասէ ցնա. Ահա կին ոմն հանդերձ դստերօք իւրովք ոչ գիտեմ ուստի՞ գաղթական հալածեալ, զմեր կանայս հաւանեցոյց պաշտել զմի Աստուած և զՅիսուս Քրիստոս որդի նորա. և արգելու զկանայս մեր 'ի մէնջ անգամ. և յուտել և յըմպել ոչ գան առ մեզ, այլ դեգերին հանապազ առ աղջկունսն այնոսիկ. արգելուն և 'ի փառաւորութենէ աստուածոց որ է 'ի մէնջ: Եւ իբրև լուաւ վասն նոցա թագաւորն՝ առաքեաց զնոցանէ դահիճս. և կալեալ ածին զնոսա յապարանս թագաւորին:

Իսկ սուրբ կուսանքն հանդերձ մարբն իւրեանց, ուրախութեամբ ձեռն զձեռանէ ունելով մտանէին: Եւ իբրև մերձեցան յապարանս թագաւորին, նշանաւ խաչին Քրիստոսի զինքեանս դրոշմեցին. քանզի էին շնորհք սուրբ Հոգւոյն 'ի վերայ երեսաց նոցա: Եւ 'ի մտանելն նոցա յարքունիսն՝ հայեցաւ 'ի նոսա թագաւորն, և եկաց հիացեալ իբրև ժամ մի. և ասէ ցմայրն նոցա. Յորմէ՞ իշխանութենէ ես, և կամ զի՞նչ իրք են քո, զի այդպէս դղրդեցուցեր զքաղաքս Հռովմայեցւոց, ուրանալով զաստուածսն որք ստեղծին զամենայն աշխարհս: Արդ ասա ինձ՝ զի՞նչ անուն է քո: Եւ ասէ Սոփիա. Ես քրիստոնեայ եմ:

Ասէ թագաւորն. Զանուն բնութեան՝ որպէս և մարդիկ կոչեն՝ հարցանեմ ցքեզ: Յայնժամ ասէ արդարև աղախինն Քրիստոսի Սոփիա. Ի ծնողաց իմոց՝ Սոփիա կոչի անուն իմ, այլ կատարեալ անուն իմ Քրիստոնեայ է, յառաջնոց և 'ի մեծամեծաց. յիտալիա գաւառէ եմ. այլ փրկչին մերոյ Քրիստոսի մարդասիրութիւն 'ի քաղաքս Հռովմայեցւոց կոչեաց զիս. զի զոր շնորհեաց ինձ Տէր զտղայս զայսոսիկ՝ 'ի սրբութեան պահեցից, և մատուցից զնոսա պատարագ Քրիստոսի:

Եւ լուեալ թագաւորին զբանս զայս, հրամայեաց նմա առ կնոջ ումեմն մեծի 'ի քաղաքին հանգչել, մինչև հարցափորձի նոցա կատարած լիցի. և 'ի հանգչել նոցա, ասէ Սոփիա դստերս իւր. Որդեակք իմ և աղիք իմ, խրատեցի զձեզ 'ի բարւոքն դպրութիւն և զՔրիստոսի գիտութիւնն. առ որ զլոյսն ձեր եղիք, նա կոչէ զձեզ։ Մի հայիք այսուհետև 'ի տղայութիւն հասակիդ ձերոյ, այլ զպատուականութիւն կոչողին ձերոյ զգեցարուք, և զիս յիշեցէք 'ի կատարեալ խոստովանութեան ձերոյ առ Քրիստոս. զի եթէ զձեզ առաքեմ յերկնաւոր թագաւորին զօրս՝ այնպէս յառաջէք բարեխօսք ինձ կատարեալք. և ձերով առաքինութեամբդ, դստերք իմ, ծանօթ լինիմ երկնաւոր արքայութեանն. և կոչէին զիս յառաջ վասն ձեր, որք հաճոյ եղէն Աստուծոյ 'ի յաւիտենական ժառանգութիւնն, դստերք իմ և աղիք իմ և շառաւիղք իմ և անդամք իմ և յոյսք իմ և բարիք իմ, փոխանակ ձեր՝ ողորմեցարուք թշուառականի մօր ձերում, որ երկնեցի և ծնայ զձեզ ցաւօք, և ջամբեցի ձեզ կաթն ցանկութեամբ. արդ քաջալերեցարուք 'ի նահատակութեանդ՝ որ վասն Քրիստոսի է. զի նա է որ տալոցն է ձեզ զպսակս արդարութեան՝ յուրախութեան փեսային։ Եւ սերմանեալ մօրն զբանս զայսոսիկ 'ի սիրտս կուսիցն՝ ընկալին շնորհօքն Քրիստոսի ցնծացեալք յիրեարս։

Եւ ասեն աղջկունքն ցմայրն իւրեանց. Տիկին մեր և մայր մեր, միայն ցնծութեամբ և ուրախութեամբ մատո զմեզ երկնաւորին. քանզի փրկիչն մեր Քրիստոս, որոյ օրինօքն խրատեցաք՝ տացէ մեզ համբերութիւն և բանից պատասխանատուութիւն թագաւորին։

Եւ իբրև անցին աւուրք երեք՝ հրամայեաց թագաւորն ածել զնոսա առաջի. և 'ի մտանել նոցա յարքունիսն՝ ասէ ցնոսա թագաւորն. Աղջկունք, տեսանեմ զգեղդ ձեր աստուածական, և զկերպարանս ձեր ոչ 'ի բնութենէ մարդկան, և զհասակդ ձեր առաւել տղայ 'ի ժամանակէ. խրատ տամ ձեզ զի ողորմեսջիք ծերութեան մօր ձերում, և խնայեցէք տղայութեան հասակի ձերոյ՝ 'ի հաւանել ինձ իբրև հօր, և զոհել աստուածոց տերանց ամենայն աշխարհի. եթէ հաւանիք ինձ՝ դստերք իմ անուանիք դուք, և 'ի Թագաւորութեանս իմոյ բերկրիք, և պարծանայք դըստերք Թագաւորի կոչեցեալք. և կարդամ զկուսակալս և զառաջնորդս և զամենայն նախարարս և զզօրականս իմ, զի օրինօք հաստատեցից զորդեգրութիւնդ ձեր. ապա թէ ոչ հաւանիք ինձ և խրատու իմոյ ոչ հնազանդիք, բազում և պէսպէս տանջանս ածեմ 'ի վերայ ձեր, և այնպէս զգեղեցկութիւնդ ձեր և զմատաղ հասակդ ձեր 'ի չարչարանս մաշեմ, և զցանկալի անդամս ձեր շանց ընկենում. հաւանեցայք այսուհետև մինչչև սկսեալ եմ 'ի ձեզ։

Իսկ սուրբ կոյսքն Աստուծոյ որպէս զմի անձն ասեն ցԹագաւորն. Մեզ այդպիսի պարգևք չեն պիտոյ. այլ որ կոչեացն զմեզ յառաջ Քրիստոս, Ճանաչեմք զնա երկնից և երկրի և ծովու և ամենայն արարածոց Տէր. և նա է որ ընդունի զմեզ դստերս իւր կատարեալս յերկինս. զՔրիստոսի սպառազինութիւնն ըզգեցեալք՝ հաւատամք ամենայն մեքենայից քոց յաղթել. յայսմհետէ որպիսի տանջանարանս ունիս՝ յառաջ մատո, զի զհամբերութիւն մեր տեսցես, և զգթութիւն բարերարին Աստուծոյ՝ որ է առ մեզ, և զփրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Յայնժամ սրտմտութեամբ բարկացեալ՝ հրամայեաց կոչել զմայրն նոցա և ասէ ցնա. Զինչ անուն է դստերաց քոց, ըստ յառաջանալ աճման իւրեանց։ Եւ նա ասէ. Առաջին դուստր իմ Պիստիս, և ժամանակաց սորա ամք են երկոտասան. և երկրորդս տասնամեայ է, և անուն նորա Ելպիս կոչի. և երրորդի դստերս իմոյ Ագապէ, և աւուրք ամաց սորա ինն ամ է։ Յայնժամ հրամայեաց Թագաւորն յառաջ մատուցանել զՊիստիս և ասէ ցնա. Զօհեա մեծի և գեղեցկականի Աստղկան. հայեաց 'ի նա զի որպէս գեղեցկական տիկին է։ Իսկ սուրբն Աստուծոյ Պիստիս ասէ. Ո՛վ բազում անզգամութեան և կուրութեան մարդկան. զԱստուած որ բանիւն զամենայն արար, և զՃշմարիտ բարերարն Յիսուս Քրիստոս թողեալ՝ պաշտեն զկուռս անմռունչս և զքարինս անզգայս։ Եւ իբրև լուաւ զայս Թագաւորն Ադրիանոս, հրամայեաց մերկացուցանել զնա և վարոցել մինչև խոստովանեսցի զոհել. և այնչափ յերկար տանջեցաւ աղջիկն, մինչև երկոտասան դահիճ փոփոխ մաշել 'ի կոծս նորա, և ոչ հարած անգամ 'ի մարմնի անդ լինէր։ Եւ տեսեալ թագաւորն եթէ ոչ կտրած վէրք է 'ի մարմինս նորա և մանաւանդ զի քանի տանջանս ընկալաւ, հրամայեաց սրով կտրել զգառնն Քրիստոսի։

Իսկ որ մերձն էին արք՝ կանամբք հանդերձ տեսանէին զմատաղուկն տիովք՝ երբեմն 'ի տանջանս արկանելով, և երբեմն երկաթովք զսուրբ ոսկերսն հատանելով, կական բառնային և ասէին յիրեարս. Զի՞նչ արդեօք չարիս իցէ գործեալ սորա, զի այսմ տանջանաց պատրաստեցան. անարդար է դատդ և վնասակար հրամանս։ Եւ ընդ կոտորել ոսկերաց սրբոյն, ընդ արեանն կաթն բղխէր. և ամենեքեան որ տեսանէին՝ տային փառս Աստուծոյ 'ի վերայ եղելոց զարմանալեացն։ Իսկ սուրբ կոյսն Աստուծոյ ասէ. Այս են տանջանք քո, ո՜վ դիմադարձ Աստուծոյ. յայսմանէ ոչ զգացին մարմինք իմ. թէ դաւաղանացդ քո ոչ է վէր 'ի մարմնի իմում, և կոտորել մարմնոցս իմոց որպէս և դու իսկ տեսանես, ո՜վ անսուրբ այր, ընդ արեան կաթն բղխէր յերկիր, կարծեիր դու 'ի մտի քում եթէ տանջանօք հեռացուցանես զիս 'ի խոստովանութենէն Քրիստոսի իմոյ. վասն որոյ լուր և այժմ, ո՜վ արժանի բարկութեան Աստուծոյ. զի և եթէ յերեսաց իմոց հրամայես հատանել՝ սակայն ես ոչ ամաչեմ, վասն զի ունիմ զզօրացուցիչն իմ Քրիստոս. և դու ունիս դատ տալ վասն կրիցս որ ընդ իս անցուցանես. այլ ես հաստատուն կամ Աստուծով իմով յաղթել քում յանդգնութեանդ։

Եւ հրամայեաց թագաւորն բերել դարգինս երկաթիս և դնել 'ի վերայ կրակի, մինչև շողանալ դարգնացն իբրև զհուր, և զսուրբն տարածեցին 'ի վերայ. և երանելին Պիստիս ցնծայր յաղօթս իւր. և համբարձեալ զձեռս իւր 'ի վեր ասէր. Տէր Յիսուս Քրիստոս, հայեաց 'ի տկարութիւն իմ և մի տար յաղթահարել 'ի բարկութենէ բռնաւորին, այլ անվէր և ամբիծ պահեա զիս որպէս զերիս մանկունսն 'ի հնոցէ հրոյն. այնպէս և զմեզ զերիս քորս պահեա, զի կացցուք ընդդէմ և խափանեսցուք զսորա մեծ յանդգնութիւնս: Եւ յետ ժամուց անցանելոց յաղօթել սրբոյն՝ ոչ մերձեցաւ 'ի նա հուրն: Յայնժամ հրամայեաց առնուլ զնա 'ի դարգճացն և դնել 'ի տապակ և արկանել ձէթ և մոմ և նաւթ. և իբրև հալեցան, և էր եռանդն յոյժ 'ի տապակին՝ և արկին զնա անդր. և երանելին հայէր յերկինս և ասէր այսպէս. Որ ստեղծիչդ ես ամենայն արարածոց, Աստուած, Տէր Յիսուս Քրիստոս, փրկեա զիս 'ի վայրենի գազանէս յայսմանէ, և օգնեա տղայութեանս իմոյ ըստ բազում ողորմութեան քում:

Եւ զայս ասացեալ՝ մինչչև հրաման տուեալ թագաւորին՝ խնդութեամբ ելանէր 'ի տապակն, և վաղվաղակի տապակն ցրտանայր. և աղախինն Քրիստոսի զովանայր 'ի տապակին իբրև 'ի ցօղոյ: Եւ իբրև ոչ կարաց զնա Ադրիանոս տանջանօք կորուսանել՝ էր տրտմութիւն անձին նորա, և խորհէր թէ որովք հնարիւք կարասցէ կորուսանել զնա: Յայնժամ հրամայեաց սրով մաշել զնա: Եւ լուեալ նորա զվճիռ թագաւորին՝ ուրախութեամբ աղաչէր զմայր իւր զի աղօթս արասցէ վասն նորա. զի կատարեալ խնդիրն որ կայր առաջի նմա՝ գտցի. ասէր և ցքոյրսն իւր. Գիտէք քոյրք իմ, ո՞ւմ նուիրեցաք զանձինս մեր. և պարտ է մեզ առաջի կալ յօժարութեամբ. համբերեցէք 'ի վկայութիւն Փրկչին մերոյ. քանզի մայրս այս ծնաւ զմեզ, զոր տեսանեմքս այժմ յուրախութեան մեծի վասն մերոյ պատերազմիս. մի՛ արհամարհեսցուք այսուհետև զուխտն զոր ընդ Տեառն մերում եդաք. և մի՛ տրտմեցուսցուք զգութ մօրն մերոյ Սոփիայ, որ զինն ամիս վասն մեր աշխատութեանց և երկանց համբեր վասն միոյ միոյ մեր առանձին. յորոյ և կաթն 'ի ստեանց մեղրաբուղխ արբաք. որ և խրատեաց զմեզ իմաստութեամբն Քրիստոսի: Ես այսուհետև ուղևորիմ զբարւոք ճանապարհն, զոյն և վասն ձեր աղաչեմ. արդ այսուհետև, քոյրք իմ կատարեալք և դստերք Սոփիայ, ցանկասցուք երկնից արքայութեանն՝ ընդ սուրբսն ուրախ լինել մերով կատարեալ առաքինութեամբս: Եւ զայս ասացեալ աղջկանն երանելւոյ՝ պատէր զմայրն իւրով, համբուրեալ զնա և ասէր. Աղօթեա վասն իմ, մայրիկ իմ։ Նոյնպէս և զքերքն փարէր և ասէր զնոյն բանս. և պատրաստէր զինքն սրոյն՝ ձգեալ զպարանոցն իւր։ Իսկ մայրն և քորքն կային և ասէին. Տիկին մեր կատարեալ, յառաջ մատիր 'ի ճանապարհ մարտիրոսութեանդ, և մի զանգիտեր 'ի սրոյդ, զի զբարուոք ճանապարհն ճանապարհորդես. յիշեա և զմեզ յարքայութեան երկնից։ Եւ մատուցեալ զսուրն առ սուրբ կոյսն, նորա համբարձեալ զձեռս իւր առ Աստուած ասէր. Ապաւէն իմ Տէր, յիշեա զամենայն ծառայքս քո, և զամենայն աղախնայս քո, և զմայրն իմ և զքորս. և զիս անարժանս յիշեա, ամենատեսդ Քրիստոս. և 'ի կռապաշտ ապստամբս արագեա զսուրդ քո։ Եւ զայս ասացեալ երանելւոյն՝ զկատարեալ ընթացս իւր ելից, և այնպէս հանգեաւ Աստուծով։ Եւ մինչդեռ եդեալ էր մարմինն առաջի, մատեաւ մայրն և անկաւ 'ի վերայ նորա. և համբուրէր զնա գոհանալով զՔրիստոսէ՝ որ բարեաւն կատարեաց զնա։

Դարձեալ կոչէր զՅոյսն՝ Ադրիանոս. և փորձելով զնա խրատէր և ասէր. Դուստր, հաւանեա ինձ իբրև հօր քում, և պագ. երկիր մեծի և ազնուի Արտեմեայ, և երթ առողջ։ Իսկ երջանիկ Յոյսն ասէ. Գիտեա, ով թագաւոր, զի ոչ օգտիս լուկ և սնոտի բանիւք խաբելով զիս՝ որպէս տեսանեսդ. և գործովքս գիտելոց ես զի քոյր եմ ես կատարելոյն այնորիկ. քանզի նոյն մայր ծնաւ զմեզ, և զնոյն կաթն արբաք, և զնոյն խրատ որ 'ի Քրիստոսէ՝ խրատեցաք, և զնոյն ճանապարհ գնալոց եմք, և նոյն պսակի պատահել հաւատամք, վասն զի միոյ փեսայի հաստատեցաք զանձինս մեր, Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. այսուհետև մի բազմապատիր բանիւքդ քովք մխիթարելով խրատեր զիս, արա զոր ինչ և կամիս. քանզի ես յոր և ապաւինեցայ, և առ ո՛ զկոյսն իմ եդի՝ առ նոյն է սիրտ իմ և անձն իմ։

Եւ զայն լուեալ Ադրիանոսի, և պատասխանեօքն զինքն հաւանեցուցեալ՝ եթէ ոչինչ կարէ առնել, հրամայեաց զաղջիկն տարածել և խիստ ջղօք հարկանել զնա. և այնպէս յերկար տանջեալ՝ մինչև փոխեալ տասն առն. և մայրն աղօթելով առ Աստուած ասէր. Տէր Յիսուս Քրիստոս, տուր համբերութիւն դստերն իմոյ, զի տեսից զնա յաղթող յառաջի պատերազմիդ, որպէս և զառաջին դուստրն իմ տեսի յաղթող: Եւ զայս աղօթէր մայրն, և 'ի բազում ուրախութեան լինէր: Իսկ սուրբն Եղպիս ասէր. Աստուած իմ, որում զինուորել փութամ, որ առնես սքանչելիսդ միայն, որ փրկեցեր զՇուշան յանօրէն ծերոցն, որ լուար աղօթիցն 'ի գբին առիւծուց՝ մանկանն տղայոյ Դանիէլի, որ փրկեցեր զսուրբն քո Թեկղ 'ի հրոյն և 'ի գազանացն վայրենեաց, որ լսեսդ ամենեցուն որք յարդարութեան ծառայեն քեզ, լուր և ինձ անարժան աղախնոյ քում, և տուր ինձ համբերութիւն, զի փառաւորեսցի անուն քո յիս: Եւ ասէ ցթագաւորն. Հապա, մատո զտանջանարանսդ քո յառաջ, զի գիտասցես փորձիւ զզօրացուցիչն իմ Աստուած: Եւ բարկացեալ բռնաւորին՝ ածէր զմտաւ թէ որո՛վք տանջանօք կորուսցէ զնա. և հրամայեաց հրով այրել զնա. և ընկեցեալ զնա 'ի հուրն՝ ցնծայր և ասէր. Տէր, մի՛ անփոյթ առներ զաղախին քո, և մի՛ թողուր զիս 'ի ձեռանէ, Տէր Յիսուս Քրիստոս, քանզի նեղիմ, վաղվաղակի լուր ինձ. զի առանց ամօթոյ կացից առաջի քո, և զանօրէն թագաւորս սրով սատակեա:

Եւ տեսեալ բռնաւորին եթէ ոչ մերձեցաւ 'ի նա հուրն՝ հրամայեաց բերել զնա. և բերեցին զնա յերկար, և 'ի սուրբ անդամոց աղջկանն՝ որ հատանէին մարմինքն, զանուշ խնկոց հոտ բուրէին մերձաւորացն. և յերեսաց նորա շնորհ փայլէին. և ասէ ցթագաւորն. Կարծեմ, ո՛վ բռնաւոր, եթէ դու առաւել տանջիցիս, քանզի ոչ կարացեր աղջկան միոյ տղայի յաղթել: Իսկ սատանայ որ շահեցաւ զնա, արկ 'ի սիրտ նորա՝ սան լնուլ ձիթով և ճարպով, և դնել հուր 'ի ներքոյ նորա. և յեռալ սանին սաստիկ շիթք հատանէին, և զբազումս 'ի մերձաւորացն այրէին գոլոշիք հրոյն. և հրամայեաց ընկենուլ զնա 'ի ներքս: Իսկ սպասաւորացն առեալ զաղջիկն արկանէին 'ի սանն. և վաղվաղակի սանն հերձաւ, և այրեաց զամենեսեան որք յանհաւատիցն մօտ կային: Եւ բռնաւորն ոչ զղջացաւ 'ի վերայ եղելոց սքանչելեացն 'ի

Տեառնէ. այլ հրամայեաց սրով սպանանել զնա: Իսկ նորա լուեալ զվճիռն՝ զուարթ սրտիւ և կատարեալ մտօք ընթանայր առ մայրն իւր, և տայր ողջոյն նմա. նոյնպէս և առ ոսկերս քեռն իւրոյ Պիստեայ և ասէր. Բարեխօսեա վասն իմ, զի և ես եկից առ քեզ. և ընդ կրտսերն ասէր. Քոյր իմ Ագապի, փութա առ մեզ և եկ յօժարութեամբ, քանզի զյաւիտենական ճանապարհն ճանապարհորդեմք մեք. մի կասիր, լծակից մեր աղաւնեակ. քանզի որ կոչեաց զմեզ Աստուած՝ նոյն որ զօրացուցանէ փրկիչն մեր. և ասէ. Քրիստոս իմ, խաղաղութեամբ ընկալ զոգի աղախնոյ քո. և մայրն խնդալով ասէր. Դստրիկ իմ և աղիք իմ, և բարի յոյս իմ, բերկրելով զճանապարհդ քո ճանապարհորդեա. և յիշեա զիս առաջի Աստուծոյ: Եւ զայս ասացեալ մօրն՝ երանելի աղջիկն սրով կատարեցաւ:

Իսկ մօրն պատեալ զոսկերօքն՝ համբուրէր և ասէր. Երկու բարեխօսքն յառաջեցին ինձ առ Աստուած: Եւ տղայն ասէր. Ագապի, դուստրն իմ երրորդ, բարեմտեա, զօրացիր և դու, տեսանելով զյաւիտենական ճանապարհն. ահա տեսանեմ զերկուց դստերացն իմոց պսակս բոլորեալս. և քոյդ պսակին սկիզբն է բոլորելոյ. և ես բերկրիմ քև՝ զկատարեալ ընթացսըն իմ 'ի Քրիստոս ընթանալ: Եւ բռնաւորին կոչեցեալ զԱգապի՝ զկրտսեր աղջիկն, գգուելով՝ դուստրը իւր անուանէր. կամէր բանիւ պատրել զտղայն և զանմեղ աղաւնին Քրիստոսի: Իսկ սուրբն Ագապի ասէր. Ոչ գիտես, ով բռնաւոր, զի զնոյն միտս ունիմ և ես, որք այժմ կատարեցան, քանզի նոյն մայր ծնաւ զիս և զաստուածպաշտութեան օրէնս 'ի միասին խրատեցաք. և 'ի նոյն թագաւոր 'ի Քրիստոս 'ի միասին ապաւինեցաք: Իսկ բռնաւորին լուեալ զբանս զայսոսիկ, ոչ ողորմեցաւ աղջկանն արիւնարբուն, և ոչ գթացաւ 'ի տղայ անձնն. այլ որպէս առիւծ զի գտանէ կերակուր յանապատի, այնպէս կապէր զատամունս իւր 'ի վերայ նորա. և հրամայեաց մեքենայիւ անուով 'ի վերայ ձողոյ դնել զաղջիկն: Իսկ երանելին յերկինս աչուցեալ հայէր և աղօթէր: Յայնժամ հրամայեաց գաւազանաւորացն չարաչար տանջել զնա. և 'ի ձաղկելն զնա՝ ասէր. Ո՛վ բռնաւոր, ընդ վայր աշխատիս, 'ի զուր ջանաս. քանզի ոչ ազդեն ինձ տանջանքդ քո: Եւ իբրև փոխեցան յաղջիկն ի՛նն դաւազանաւորք և ոչ ազդեցին նմա, յայնժամ հրամայէր իջուցանել զնա 'ի փայտէն, և պատրաստել նմա հնոց. և այրեցեալ հնոցին մինչև յերիս աւուրս, և եղև իբրև պղինձ շողացեալ: Ասէ ցաղջիկն՝ որդին սատանայի Ադրիանոս. Միայն երկիր պագ մեծի աստուծոյն Արտեմեայ, և արձակեցից զքեզ: Եւ լցեալ շնորհօք Հոգւոյն սրբոյ աղջիկն՝ ասէ ցնա. Ա՛յ անմիտ և անզգամ, հի՞մ ընդ վայր զօղանջես, որ ոչդ ունիս զյոյս կենդանի. ոչինչ օգտիս զայդպիսիդ բարբառելով: Եւ բռնաւորն իբրև լուաւ՝ զայրացաւ, և հրամայեաց ընկենուլ զնա 'ի հնոցն. և իբրև ընկեցին զնա՝ վաղվաղակի շիջաւ բոցն, և ծաւալեցաւ շուրջ ցոլն, և զբազումս որ մօտ կային՝ խարշեաց: Իսկ սուրբ կոյսն Աստուծոյ փառաւորէր զԱստուած 'ի մէջ հնոցին և ասէր. Բարեբանեմ զքեզ, Տէր Աստուած իմ, որ առաքեցեր զՄիածին որդիդ քո 'ի փրկութիւն ազգի մարդկան. եկ և արդ 'ի փրկութիւն աղախնոյ քո, և ապրեցո զիս 'ի ձեռաց սատանայի, և 'ի հրոյս բարկութենէ, որ եսդ օրհնեալ յաւիտեանս. ամէն:

Եւ մերձեցեալ 'ի հնոցն՝ Ադրիանոսի, և լուեալ զօրհնութիւնս սուրբ կուսին, առաւել ևս բարկացաւ. և ելեալ ցոլ փոքրիկ 'ի հնոցէն՝ յարձակեցաւ 'ի վերայ կռապաշտին և խոցեաց զնա, և նուաղեցաւ անձն նորա. քանզի տեսանէր արս երիս յաղթահասակս, որոց էին երեսք իւրեանց իբրև զնշոյլս արեգական, և շրջէին ընդ սրբոյն Ագապեայ: Եւ ել աղախինն Քրիստոսի առանց ապականութեան 'ի հնոցէն. և տեսեալ զայն անօրէն թագաւորին, եթէ ոչ տիրեաց նմա հուրն՝ հրամայեաց շամփուր երկաթի ջեռուցանել և ծակոտել զնա. և նա առանց ահի համբերէր տանջանացն զոր ածէին 'ի վերայ նորա վասն Քրիստոսի. և զարհուրեալ թագաւորին 'ի ցասմանէ հրոյն որ եկն 'ի վերայ նորա՝ ետ հրաման սրով սատակել զնա:

Իսկ երանելի աղջիկն սկսաւ ասել. Գոհանամ ըզքէն, Տէր Յիսուս Քրիստոս, օրհնեմ և փառաւորեմ զանուն քո. զի և զիս արժանի արարեր քերցն իմոց հաւասարել, զորս ընտրեցեր և կոչեցեր. մաղթեմ զքեզ, Տէր, մինչև զմայրն իմ Սոփիա, զի զպտուղ որովայնի իւրոյ զմեզ երիս՝ մատոյց քեզ ողջակէզս ճշմարիտ քահանայապետիդ Քրիստոսի. որպէս և Աբրահամ մատոյց քեզ Աստուծոյ զոհ. և արդ տուր, Տէր, շնորհս աղախնոյ քում, մօր մերոյ Սոփիայ, զի խաղաղութեամբ թաղեսցէ զմեզ զերեսեան, և ապա հանգիցէ ընդ մեզ. և այնպէս երեք տղայքս մարբս մերով հանդերձ հանգիցուք յաւիտեան ժամանակս: Եւ մայրն ասէ ցնա. Երրորդ դստրիկ իմ Ագապի, բարեմիտ լեր, զի զքորսդ ճանապարհն գնացեալ երթաս. այս են ուխտք իմ, զի երիս հարսունս ընծայ մատուցի Քրիստոսի. դստրիկ իմ, մինչև զմայրս քո յարքայութեան երկնից. քանզի տեսանեմ և զքո պսակն բոլորեալ: Եւ ասացեալ զայս մօրն՝ վաղվաղակի երանելին Ագապի վախճանէր սրով. և փարեալ զնովաւ մօրն՝ զվախճանեալ աղջիկն 'ի Քրիստոս համբուրէր. և այնպէս զարդարեաց զմարմինս նոցա մեծապայծառ զարդու. և լծեաց կառս և եդ 'ի վերայ զերեսեան դստերսն. և ել իբրև մղոնով միով 'ի քաղաքէն, և թաղեաց զնոսա 'ի տեղւոջ ազնուի, և շինեաց 'ի վերայ նոցա տաճար առաքինութեան նոցա:

Ժողովեցան և մեծամեծ կանայք 'ի Հռովմայեցւոց հանդերձ մարբք նոցա. և իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ բերէին իւղս անուշունս, և արկանէին 'ի տեղին՝ ուր կային ոսկերք սուրբ կուսիցն. և ապա մտին 'ի Հռովմ օրհնելով զԱստուած: Եւ յետ երից աւուրց երթայր այնուհետև մայր կուսիցն լնուլ զյիշատակ պատերազմազգեաց դստերացն իւրոց. և ժողովեցան բազմութիւն արանց և կանանց. և իբրև չոգան 'ի գերեզմանն, դստրասէր մայրն Սոփիա հանգեաւ 'ի վերայ նշխարացն և ասէ. Կատարեալ դստերք իմ, բարեխօսեցէք վասն իմ առ Քրիստոս որ սիրեացն զձեզ, և ընկալարուք զիս բնակակից ձեզ յաւիտեանս ժամանակս: Եւ զայս ասացեալ նորա՝ ննջեաց և նա առ նոսա խաղաղութեամբ: Եւ ժողովեալ կանայքն որ ընդ նմա, թաղեցին զնա 'ի նմին գերեզմանի. և նոցա երթեալ առ Տէր 'ի միասին:

Եւ բռնաւորն Ադրիանոս խոցեալ 'ի հրոյն ցասմանէ, առաւել բարկացեալ՝ ընդ մէջն պատառեցաւ. քանզի բիբք աչացն նորա նեխեցան և մարմինք ոսկերացն տրորեցան, և ահն Տեառն երևելի լինէր. և զաղաղակ բարձեալ մեծաձայն՝ ասէր. Աստուած երից կուսիցն և մօրն նոցա Սոփիայ, փութով զհոգի իմ հան 'ի մարմնոյ աստի. քանզի գիտեմ եթէ վասն նոցա անցանեն ընդ իս այս անցք։

Վկայեցին տղայքն Քրիստոսի՝ Պիստիս, Ելպիս, Ագապէ և նոցուն մայրն Սոփիա՝ յառաջ քան զինն կաղանդացն յամսեանն հրոտից, որ օր մետասան էր ամսոյն, 'ի թագաւորութեան Ադրիանոսի. և ըստ մեզ Քրիստոսի թագաւորութեան. որում փառք և զօրութիւն, հանդերձ սուրբ Հոգւովն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Պատմութիւն վարուց Սրբոյն Ստեփանոսի և երեւումն և երեք ընկերաց նորա։

Ես մեղաւոր և յետին կրօնաւորս՝ հասեալ 'ի տիս մանկութեան և հմուտ եղեալ աստուածային պատուիրանաց, բազում անգամ կանխեալ 'ի տաճար սուրբ վկային սրբոյն Ստեփանոսի, և տեսանէի զի ոչ տօնէին զտօն նահատակութեան սրբոյն, այլ 'ի յիշատակի սրբոյ նախավկային տօնէին և զնորայն. հարցեալ իմ ընդ բազում գիտնականս և ընդ սուրբ վարդապետս, թէ գուցէ՞ ուրեք պատմութիւն սրբոյն, զի և զօր նահատակութեան նորա իմանայցեմք՝ թէ յորում աւուր կատարեցան, զի ձեռնամուխ լինիցիմ և գրիցեմ զպատմութիւն սրբոյն, զի ամ յամէ տօնիցեմք զյիշատակս նորա. և ոչ յումեքէ գտեալ պատասխանի։ Այլ մի ոմն ծանոյց ինձ՝ եթէ Յոյնք ունին զպատմութիւն նորա. և իմ կանխեալ եկի 'ի վանսն՝ որ կոչի Կլայ, և հարցեալ իմ մեծաւ քննութեամբ վասն պատմութեան նորա. իսկ նոքա ասեն ցիս. Առ մեզ ոչ գոյ, բայց եթէ 'ի սրբոյն Սիմէոնի վանսն։ Եւ իմ յուղի անկեալ գնացի 'ի վանսն, և հարցի դարձեալ զնոսա. և նոքա անգիտացան, և ասեն ցիս. Առ մեզ ոչ գոյ, բայց եթէ 'ի Կոստանդինուպօլիս։ Եւ իմ յոյժ տրտմեալ վասն յերկարութեան ճանապարհին, և յանցանել ամաց երկուց՝ եհաս ինձ ճանապարհ գնալ 'ի Կոստանդինուպօլիս։ Եւ իբրև հասի խաղաղութեամբ 'ի քաղաքն՝ ուրախացայ յոյժ, և սկսայ քննել թէ իցէ ուրեք պատուական և հաւատարիմ այր 'ի քաղաքիս, զի ծանեայց 'ի ձեռն նորա զճշմարտութիւնն: Եւ հանդիպեցաւ մի ումն 'ի քահանայից անուն Կալոյժան Նիկեական ուղղափառ հաւատով, և ասէ ցիս. Այր դու, զի՞ հարցանես վասն հաւատարիմ մարդոյ, և կամ զի՞ եկեալ ես այսր: Եւ ասեմ ցնա. Վասն իրիք ինչ խնդրոյ: Եւ առեալ տարաւ զիս յարկ տան իւրոյ և ասէ. Զի՞նչ անուն է քո: Եւ ասեմ. Գրիգոր է անուն իմ: Եւ ասէ. Պատմեա ինձ թէ զի՞նչ խնդրես: Եւ ես պատմեցի նմա զամենայն պատճառս: Եւ նա յոյժ ուրախացեալ՝ ասէ. Առ իս ագիր, մինչև աղօթիւք սրբոցն տացէ մեզ Տէր Աստուած զխնդրուածս մեր և ցուցցէ մեզ: Եւ կացեալ իմ անդ ամիսս վեց, և նորա յանձն առեալ աշխատութեամբ մեծաւ. և ապա աղօթիւք սրբոցն գտաւ զպատմութիւնս նոցա, և յոյժ խնդութիւն եղև 'ի միջի մերում: Եւ սկսաւ կարգաւ պատմել ինձ և թարգմանել, զի հմուտ էր այրն աստուածային պատուիրանացն:

Եւ արդ եղբարք ժողովեալք 'ի կատարել զտօն սրբոցն Ստեփանոսի և ընկերաց նորա, ամենեքեան ունկըն դիք պատմութեան և չարչարանաց սրբոցն. զի բարեխօսութեամբ նոցա ողորմեսցի Տէր Աստուած մեր ամենայն հաւատացելոց:

Ի ժամանակս Յուլիանոսի անօրինի՝ էր հալածումն մեծ քրիստոնէից, և զամենայն զոր և գտանէր զաստուածապաշտս՝ հարկեցուցանէր զոհել կռոցն և կամ մեռանել վասն անուանն Տեառն: Եւ էր այր մի 'ի քաղաքին Անտիոքայ՝ Ղազարոս անուն նորա, պատուական և մեծազգի յոյժ, հասեալ 'ի տիս մանկութեան, և 'ի ծածուկ ունէր զհաւատսն որ 'ի Քրիստոս. և յահէ անօրինացն փախստեայ եղեալ 'ի քաղաքն մեծ Կոկիսոն. զի կամէին զնա ըմբռնել և սպանանել վասն հաւատոցն որ 'ի Քրիստոս: Եւ կացեալ ամս երեք բարիոք կրօնիւք, և մանուկ գոլով՝ ամուսնացաւ յաշխարհի, և հանդիպեցաւ ամուսին նորա քրիստոնեայ և անուն կնոջն Մարիամ. և կէին երկոքեանն 'ի միասին բարի վարուք. և ոչ լինէր նոցա որդեակ. և խնդրեցին երկոքեանն յԱստուծոյ՝ զի տացէ նոցա որդի: Եւ 'ի ձեռն պահոց և աղօթից՝ ետ նոցա Տէր Աս֊

տուած զխնդրուածս նոցա, և յղացաւ կին նորա և ծնաւ որդի։ Իբրև եղև ութ աւուր՝ տարան զնա առ քահանայն Կոստանդին, զի հանապազօր մատուցանէր զպատարագն 'ի տաճար սուրբ Աստուածածնին, և հաղորդեցուցանէր զմանուկն և զքրիստոնեայսն՝ մարմնոյ և արեանն Տեառն։ Եւ մանուկն Ստեփանոս աճէր և զօրանայր լի իմաստութեամբ. և տուեալ զնա յուսումն, և նա զօրանայր շնորհօք սուրբ Հոգւոյն։ Եւ իբրև եղև ամաց հնգետասանից՝ կրթէր յաստուածային պատուիրանս, հետևող լինել գրոց սըրբոց։ Եւ յորդորէր զքրիստոնեայսն օր ըստ օրէ յաստուածպաշտութիւն։

Եւ եղև հիւանդանալ քահանային Կոստանդեայ. և կոչեցեալ առ ինքն զծառայն Աստուծոյ զՍտեփանոս և ասէ ցնա. Որդեակ, պինդ կաց 'ի հաւատսդ, և քաջալերեա զսակաւ զհօտդ, զի մի երկմտիցեն 'ի հաւատոց, մինչև տացէ Աստուած տեսուչ ժողովըրդեանդ։ Եւ եդեալ ձեռս 'ի վերայ նորա և ասէ. Տէր ընդ քեզ, ծառայ Աստուծոյ, և ընդ հաւատացեալ հօտդ. և դու, որդեակ, սակաւ արամբք յետ ոչ բազում աւուրց փախստեայ լինիցիս 'ի լեառնակողմդ. և կացցես անդ աւուրս սակաւս և մատնեսցեն զձեզ անօրինաց և ապա նահատակեսջիք։ Իսկ տեղի նահատակութեան ձերոյ եղիցի 'ի բժշկութիւն ամենայն ախտաժետաց, և անուն քո ելցէ ընդ ամենայն երեսս երկրի, և քև փառաւորեսցի Աստուած։ Եւ զայս ասացեալ՝ աւանդեաց զոգին։ Եւ սուրբն Ստեփանոս հանդերձ արամբք քրիստոնէիցն ամփոփեցին զմարմին քահանային, և իւղօք անուշիւք և խնկօք՝ պատեցին զօր հանգստեան նորա, և եդին զմարմին սրբոյն 'ի գերեզմանի։ Եւ եղև յոյժ տրտմութիւն ժողովըրդոցն ընդ մեռանել քահանային, բայց մխիթարէին 'ի ծառայէն Աստուծոյ 'ի Ստեփանոսէ, և հաստատէին նոքա 'ի հաւատս և զօրանային յոյժ։

Իսկ իբրև անցին աւուրք սակաւք, եղև հալածումն քրիստոնէից 'ի սահմանս Կոկիսոն քաղաքի, յաւուր յորում եկն Յուլիանոս 'ի Կեսարիա, յորժամ էր սուրբ հայրապետն Բարսիղիոս 'ի քաղաքին։ Եւ սպառնացեալ նմա և ժողովրդոցն, և ասէ ցնոսա.

Յորժամ դարձայց և ոչ հաւանիք կամաց իմոց՝ չարաչար մահուամբ մեռանիցիք։ Եւ առաքեաց զզօրս հանդերձ մեծամեծօք՝ խնդրել զքրիստոնեայս որ ընդ իշխանութեամբ նոցա էին, անխնայ կոտորել զամենեսեան, որք խոստովանեսցին զՔրիստոս. զի եթէ հաւանեսցին, ասէ, և ուրասցին զխաչելեալն և երկիր պագանիցեն աստուածոցն՝ պատուոյ արժանի արարէք. ապա թէ ոչ հաւանեսցին՝ 'ի սուր սուսերի մաշեսջիք։ Եւ ինքն չոգաւ 'ի Պարսս։

Իսկ եկեալ բդեաշխն Սոկրատէս 'ի Կոկիսոն Հայոց Մեծաց, և մտեալ 'ի քաղաքն մրմռեալ իբրև զառիւծ, և գոյն երեսաց նորա սևացեալ յոյժ։ Իսկ հաւատացեալքն սկսան դողալ յահէ անօրինին։ Եւ սուրբն Ստեփանոս իմացեալ զերկմտութիւն քրիստոնէիցն և զդողումն յահէ նորա, ժողովեալ զնոսա 'ի մի վայր՝ ասէ ցնոսա. Եղբարք, մի՛ թերահաւատեսցուք և մի՛ դողասցուք 'ի յանօրէն դատաւորէն, զի Աստուած փրկեսցէ զմեզ 'ի ձեռաց նորա, որպէս փրկեաց զառաջինսն 'ի նոցանէն, և նահատակեցան և պսակեցան 'ի Քրիստոսէ։ Արդ յարուցեալ, եղբարք, ելցուք 'ի քաղաքէս՝ որք կամիք զհետ Քրիստոսի ընթանալ, զի ամենեքեան ոչ էք կատարեալք, զի են 'ի ձեզ որ դեռ տղայք են, գուցէ պատիր բանիւք հաւանեցուսցէ 'ի ձէնջ, որպէս և յառաջինսն եղև, և վարատեսցէ զհօտս ընտիր։ Եւ նոքա ասեն. Տէր է մեր յոյս, և մեք յումմէ՞ երկիցուք. արդ կամք Տեառն մերոյ եղիցի։ Յայնժամ առեալ զնոսա սուրբն Ստեփանոս՝ գնաց 'ի տաճար սուրբ Աստուածածնին, և համբարձեալ զձեռս իւր յերկինս՝ ասէ. Տէր մեր և Աստուած, դու ես արարիչ մեր, զքեզ ծանեաք 'ի ձեռն սրբոց առաքելոցն, զի ոչ գոյ այլ Աստուած բայց 'ի քէն. որպէս փրկեցեր զառաջինսն ընտրեալսն 'ի ձեռաց անօրինացն, և կացուցեր զնոսա աշտարակ ամուր և պարիսպ հաւատացելոց քոց, զի և մեք հայելով 'ի նոսա՝ հաստատեսցուք 'ի քեզ ուղիղ հաւատով. բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնիս և աղօթիւք սրբոյ քահանային, ընկալ զաղաչանս ծառայից քոց՝ որք հաւատով կարդան առ քեզ, և առաջնորդեա մեզ 'ի ձեռն հրեշտակի քո, զի տարեալ հասուսցէ զմեզ 'ի նաւահանգիստն, և պահեսցէ զմեզ աներկիւղ 'ի հակառակամարտ և յանօրէն դատաւորէն. զի մի՛ օցտեալ 'ի բանսարկուէն՝ ելցուք արտաքս 'ի հօտէ քումմէ, Տէր Աստուած մեր. ողորմեաց մեզ, Տէր, ողորմեաց մեզ և փրկեա զմեզ. զի զքեզ փառաւորեսցուք, Երրորդութիւն սուրբ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Յայնժամ առեալ սուրբն Աստուծոյ զարմն որք գնացին ընդ նմա՝ անձինս երեսուն և երեք, և 'ի գիշերի գնացին 'ի քաղաքէն։ Իբրև կարի ինչ հեռի եղեն 'ի քաղաքէն, եհաս վախճան հօրն Ստեփանոսի, բարիոք ծերացեալ՝ ամբիծ վարուք և ճշմարիտ առաքինութեամբ՝ ամաց յիսուն և հնգից։ Իսկ ծառայքն Աստուծոյ ամփոփեցին զմարմին սրբոյն Ղազարու փութանակի 'ի գիշերի, և աղօթս արարին 'ի վերայ գերեզմանին, և նշանաւ սուրբ խաչին կնքեցին զյարկ բնակութեան նորա։ Եւ ինքեանք կանխեցին 'ի լեառնն և հասին 'ի քարանձաւ մի, զոր սրբոյն Բարսղի հայրապետին հաստատեալ էր եկեղեցի, և խաչ օրհնեալ յանուն անուան իւրոյ, և զեկեղեցին անուանեաց սուրբ Աստուածածին։ Եւ աղբիւր ջրոյ քաղցրահամ բղխեալ 'ի տեղւոջն՝ որ կայ մինչև ցայսօր, զոր 'ի Կեսարիոյ տեսանէր սուրբ հայրապետն սիւն հրոյ ցոլացեալ 'ի տեղւոջն, զոր հրաման առեալ 'ի Տեառնէ գնալ և հաստատել զուխտ եկեղեցեացն այնոցիկ։ Իսկ իբրև եկին 'ի տեղին յայն զոր յառաջն ասացաք, զի հրեշտակ Աստուծոյ ած զնոսա անդր, յայնժամ աղօթից սկիզբն արարեալ, անդադար ընդ ցայգ և ցերեկ, սաղմոսիւք և օրհնութեամբ և երգօք հոգևորօք օրհնել զԱստուած, և զովանային 'ի շնորհաց սուրբ Հոգւոյն. և էր կերակուր նոցա կանկար լերինն. և կացեալ անդ իբրև ամիս երիս։ Իսկ սուրբն Սոմնաս ելեալ յաւուր միում 'ի պատճառս սպասաւորութեան եղբարցն 'ի լերինն յետոյ 'ի հովտաձև տափարակն ժողովել 'ի կանկարոյն. և ահա հովիւ մի արածէր զհօտն 'ի լերինն, և տեսեալ զսուրբն Սոմնաս՝ վաղվաղակի եկն առ նա և ասէ ցնա. Ուստի՞ ես այր դու։ Եւ ասէ սուրբն. Ծառայ Աստուծոյ եմ ես, և եկեալ եմ տանել զկանջարս զայս 'ի պէտս եղբարց իմոց և քերց: Ասէ ցնա Հովլիւն. Եւ ո՞ւր բնակեալ էք: Ասէ սուրբն. Ի յայրի անդ յայնկոյս բնակեալ եմք, փախուցեալ 'ի Սոկրատէ դատաւորէն, և պաշտեմք զխաչելեալն Աստուած: Յայնժամ բարկութեամբ լցեալ Հովլիւն, կամեցեալ ըմբռնել զնա և սպանանել: Իսկ սուրբն Սոփիաս փախստեայ եղեալ փութանակի՝ գնաց առ ընկերսն և պատմեաց նոցա զՀովլուէն և զբանս զոր խօսեցաւ: Եւ տարեալ Հովլիւն զհօտսն յընկերսն, և ինքն փութանակի գնաց առ դատաւորն, նմանեալ Յուդայի մատնչի, մատնեաց զնոսա թէ կան 'ի յայրին դէմ յանդիման մեզ արքն այնոքիկ որ փախեան 'ի քաղաքէս: Իսկ դատաւորն լուեալ զբանս զայս, հրամայեաց կապել զանօրէն Հովլիւն երկաթի կապանօք, և ասէ ցնա. Գոնեա դու փախուցեր զնոսա 'ի քաղաքէս իմմէ. արդ փութանակի տարցես զգլխաւորսդ իմ առ նոսա, զի հասուսցեն զնոսա առ իս. ապա թէ ոչ՝ սրով սպանանեմ զքեզ: Ասէ ցդատաւորն. Ես տարայց զգլխաւորսդ քո առ նոսա:

Յայնժամ սուրբն Ստեփանոս առեալ զեղբարսն զամենեսեան, և զկուսանսն եօթանեքին, և մտեալ 'ի տաճար սուրբ Աստուածածնին, և առաջի սրբոյ նշանին եդեալ ծունր ամենեքեան և ասեն. Օրհնեալ ես Աստուած Ճշմարիտ, որ արժանի արարեր զմեզ նահատակել 'ի ձեռաց անօրինաց, զի կարող ես փըրկել զմեզ 'ի ձեռաց նոցա: Իսկ մեք, Տէր, անցաք զպատուիրանաւ քո, և փախեաք եկաք 'ի տեղիս յայս. կամք քո լիցին, Տէր Աստուած, զի պատրաստ եմք 'ի մեռանել վասն անուանդ քո. մի թողուր զմեզ Տէր, զգինս արեան քո, և փառաւորեսցուք զամենասուրբ զԵրրորդութիւնդ այժմ և յաւիտեանս. ամէն: Եւ իբրև կատարեցին զաղօթսն՝ ննջեցին սակաւիկ մի 'ի տրտմութենէն: Եւ առաքեաց Տէր զՀրեշտակ իւր առ նոսա, և ասէ ցնոսա. Մի երկնչիք, զի առաքեաց զիս Տէր յօգնականութիւն ձեզ, և ոչ կարասցէ յաղթել ձեզ թշնամին. զի նշխարք ոսկերաց ձերոց լիցի 'ի բժշկութիւն երկրիս այսորիկ, և անուն քաջութեան ձերոց ելցէ ընդ ամենայն երեսս երկրի: Եւ յանկարծակի զարթեան 'ի տեսլենէ հրեշտակին որ քաջալերէր զնոսա, և ուրախացան յոյժ, և դարձեալ սկսան կալ յաղօթս։

Իսկ անօրէն հովիւն գայր հասանէր հանդերձ զինուորօքն, և էր կապեալ ձեռս յետս և առաջնորդէր նոցա։ Իբրև եհաս առ նոսա, յանկարծակի ըմբռնեցին զհովիւն դևքն, և անդէն անկեալ սատակեցաւ. իսկ զինուորքն իբրև տեսին զիրսն, ահ մեծ անկաւ 'ի վերայ նոցա, և կային պակուցեալ։ Յայնժամ տեսեալ սրբոյն Ստեփանոսի զիրսն որ եղև և այլ սրբոցն, փառաւորեցին զԱստուած։ Ասէ սուրբն Ստեփանոս ցզինուորսն. Զի՞նչ խնդրէք և կամ վասն որո՞յ իրիք եկեալ էք։ Ասեն զինուորքն. Առաքեաց զմեզ իշխանն Սոկրատէս աստ, զի տանիցիմք զձեզ առ ինքն, զի հովիւն եկն և մատնեաց զձեզ. արդ եթէ կամ է ձեր՝ գնասցուք մինչև առ նա, ապա եթէ ոչ՝ սպանանէ զմեզ դատաւորն։ Ասէ սուրբն Ստեփանոս. Ոչ երկնչիմք գալ առ իշխանն ձեր, զի ահա Տէր յամօթ արար զթշնամիս մեր, և մեք պատրաստ եմք մեռանել վասն անուանն Տեառն։ Յայնժամ ասէ սուրբն Ստեփանոս ցեղբարս իւր. Եղբարք, արի՛ք երթիցուք, զի հասեալ է ժամ նահատակութեան մերոյ. զի որպէս կացաք 'ի կենցաղումս միաբան, կացցուք միաբան 'ի նահատակութեանս մերում, զի մի՛ կորուսցէ 'ի մէնջ բանսարկուն և խնդասցէ 'ի վերայ մեր։ Յայնժամ կրկնեցին ծունր առաջի սուրբ Աստուածածնին. և սկսան միաբան երգել զսաղմոսն ԻԲ. Տէր հովուեսցէ զիս։ Եւ կատարեալ զսաղմոսն, ասէ սուրբն Ստեփանոս. Տէր, առաջնորդեա մեզ և պահեա զմեզ՝ զի 'ի քեզ ապաւինեցաք։

Յայնժամ յուղի անկեալ եղբարցն հանդերձ զինուորօքն, հասին յամրոցին դղեկ՝ որ այժմ կոչի Կանչի։ Իսկ դատաւորն յառաջագոյն եկեալ էր 'ի դղեկին. յորժամ ետես զսուրբսն՝ մրմռեալ իբրև զառիւծ, հրամայեաց ածել զնոսա զառաջեաւ։ Իբրև ածին՝ ասէ դատաւորն. Յո՞ փախուցեալ կամիք զերծանել 'ի ձեռաց իմոց։ Պատասխանի ետ սուրբն Ստեփանոս և ասէ. Անօրէն և արիւնարբու գազան, մեք զտեսանելդ քո՝ մեզ ամօթ և նախատինս համարիմք, զի ծառայք եմք արարչին և ոչ պարտիմք հաղորդել ընդ անօրէնս, վասն այնորիկ փախեաք յանուանէ քումմէ: Դատաւորն ասէ. Զյամառութիւնդ 'ի բաց հան 'ի քէն և հաւանեա բանից իմոց. երդուեալ իմ յաստուածսն, զի մեծ պատուոյ արժանի արարից զքեզ և զարսդ որ ընդ քեզ են, և կացուցից զքեզ տէր և իշխան 'ի վերայ զօրաց իմոց: Սուրբն Ստեփանոս ասէ. Պարգևք քո ընդ քեզ լիցի 'ի կորուստ, զի ոչ կամիմք հաւանել կամաց քոց. զոր ինչ կամիս առնել՝ արա վաղվաղակի, զի պատրաստ եմք 'ի կապանս և 'ի բանտ և 'ի մահ վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Դատաւորն ասէ. Կախարդութեամբդ քո հաւանեցուցեալ ես զարսդ զայդոսիկ՝ որ շրջին ընդ քեզ. արդ ես խորտակեցից զզօրութիւն կախարդութեանդ քո:

Յայնժամ հրամայեաց դատաւորն կապել զնոսա ձեռս յետս, և հարկանել արջառաջղօք զորովայնս նոցա: Իբրև եկին զինուորքն, մխեցին զձեռս իւրեանց 'ի սուրբսն, և կապեցին զարսն. իսկ զկուսանսն և զմայրն Ստեփանոսի ոչ կապեցին, այլ արկին զնոսա 'ի բանտ. և զարսն սկսան հարկանել 'ի վեց ժամէաւուրն մինչև ցտասն ժամն: Իսկ սուրբն Ստեփանոս համբարձեալ զաչս իւր յերկինս հանդերձ ընկերօքն և ասեն զսաղմոսն. Որ բնակեալ ես յօգնութիւն բարձրելոյն. և դարձեալ. Աստուած, յօգնել մեզ նայեաց, և Տէր յընկերել մեզ փութա. և դարձո ըզնեղութիւնս մեր 'ի թշնամիս մեր, և ճշմարտութեամբ քով սատակեա զնոսա. զի դու, Տէր, ընդ մեզ ես, և ոչ յաղթեսցէ մեզ թշնամին մեր: Եւ զբաղում ժամս սաղմոսեալ՝ կատարեցին զաղօթսն: Իսկ պահապանքն զարհուրեալ, զի առ ոչինչ համարէին զնեղութիւնս տանջանացն, իբրև առաւօտ լինէր՝ գնացին զինուորքըն առ դատաւորն և ասեն. Առ ոչինչ համարեցան զայն որ ածաք 'ի վերայ նոցա զտանջանսն: Յայնժամ հրամայեաց դատաւորն բերել զնոսա զառաջեաւ: Իբրև ածին, ասէ ցնոսա. Ա՛յ չարք և աստուածոցն թշնամիք, մինչև յե՞րբ ներեցից ձեզ. արդ հաւանեցարուք կամաց իմոց և զոհեցէք աստուածոցն, զի մի՛ չար տանջանօք կորուսից զձեզ: Ասեն սուրբքն որպէս 'ի միոջէ բերանոյ. Մեք աստուածոցն քոց երկիր ոչ պագանեմք եւ ոչ կամաց քոց հաւանիմք, զի Տէր է մեր օգնական. ոչ երկնչիմք 'ի սպառնալեաց քոց, զի ահա մարմնոց մերոց ունիս իշխանութիւն, զոր ինչ կամիս առնել՝ արա վաղվաղակի։

Յայնժամ հրամայեաց անօրէնն կախել զնոսա եւ քերել երկաթի քերչօք. եւ այնչափ քերեցին զնոսա՝ մինչեւ ոռոգանէր արիւնն զանդամս նոցա եւ հոսէր մինչեւ յերկիր։ Իսկ սուրբն Ստեփանոս տեսեալ զմի ոմն յընկերացն դեռ եւս տղայ հասակաւ զի տագնապէր 'ի նեղութենէն՝ մինչեւ աւանդեաց զհոգին, եւ ասէ ցնա. Ե՛րթ, որդեակ, առ Տէրն մեր. զի տանուտէրն յորժամ ձայն առնէ որդւոց իւրոց, զպատուական կերակուրն յառաջ մատուցանէ. արդ դու պատուական գոլով գառն, անբիծ եւ անարատ գնասցես առ Տէր մեր խաղաղութեամբ։ Յայնժամ իբրեւ տեսին դահիճքն եթէ մեռաւ այրն այն՝ չոգան պատմեցին դատաւորին։ Իսկ դատաւորն բարկութեամբ լցեալ՝ հրամայեաց իջուցանել զնոսա, եւ զայրն մեռեալ ընկենուլ շանց։ Իբրեւ իջուցին զսուրբսն եւ ձեռնամուխ եղեալ 'ի մեռեալ այրն՝ արանց երկուց, կամեցան քարշել զնա եւ ընկենուլ գազանաց, եւ առ ժամայն կարկամեցան ձեռք նոցա, եւ պապանձեցան եւ ոչ կարէին խօսել։ Իսկ տեսեալ զիրսն որ եղեն զինուորացն՝ յահի եղեալ պատմեցին դատաւորին։ Ասէ մի ոմն յիշխանաց նորին. Եթէ ոչ սպանանես զկախարդսն, կորուսանեն զզօրս մեր. զհովիւն սպանին, եւ այժմ զերկուս պատուական արս կիսամեռ արարին։

Յայնժամ բարկութեամբ լցեալ դատաւորն՝ հրամայեաց ածել զնոսա զառաջեաւ։ Իսկ իբրեւ եկին, ասէ ցնոսա լի ցասմամբ. Կախարդութիւնդ ձեր յիմարեցոյց զձեզ. զհովիւն իմ սպանէք եւ ես անփոյթ արարի, զի գոնեա հաւանեսջիք. արդ եւ զերկու պատուական արս կիսամահ արարէք։ Երդուեալ իմ յաստուածն Ասկղեպիոն, թէ ոչ հաւանեսջիք կամաց իմոց եւ մոռանայք զյամառութիւնդ ձեր՝ չարաչար մահուամբ սատակեցից զձեզ. ապա եթէ հաւանեսջիք, 'ի բաց մոռանամ զիրսն զոր արարէք. միայն բանիւ ասացէք հաւատալ 'ի մեծ աստուածն Ասկղեպիոն, զի նովաւ կեայ երկիրս մեր եւ մեք խաղաղութեամբ։

Յառաջ մատուցեալ սուրբն Ստեփանոս՝ ասէ. Որդի սատանայի, զհովիւն քո դևքն սպանին, զոր և աստուածս անուանես, զի Ասկղեպիոն՝ դիւաց բնակութիւն Թարգմանի։ Արդ մեք անբանից անմտից դիւաց երկիր ոչ պագանեմք. Իսկ ընկերս մեր զոր կարծես մեռեալ, փոխեցաւ ՚ի մահուանէ ՚ի կեանս, զոր և Պաւղոս ասէ. Եթէ այսու կենօքս միայն յուսացեալ եմք ՚ի Քրիստոս՝ ողորմելի եմք. և դարձեալ, թէ՝ Որ ննջեցին ՚ի Քրիստոս՝ կորեա՞ն արդեօք։ Իսկ եղբայրս մեր յորդորեաց զմեզ ՚ի սէրն Քրիստոսի, և գնաց պատրաստեաց մեզ տեղի։ Սոկրատէս ասէ. Խելագարութիւնդ քո ոչ տայ իմանալ զինչ խօսիդ։ Ստեփանոս ասէ. Խելագար դու ես, որ արարածոց ՚ի մարդկանէ փայտս քանդակեալս և քարս կոփեալս՝ աստուածս անուանես զնոսա, զի ոչ կարեն փրկել զքեզ ՚ի յաւիտենական ՚ի հրոյն. զի հոգւոյդ աչս կուրացեալ է և ոչ տեսանես, այլ մարմնական պատուովդ զբօսանիս։ Սոկրատէս ասէ. Յառաջ քան զձեզ բազումք պաշտեցին զխաչելեալն և մեռան ՚ի թագաւորացն։ Ստեփանոս ասէ. Հակառակամարտ, նոքա ՚ի մահուանէ ՚ի կեանս փոխեցան և անթառամ պսակացն արժանի եղեն։ Սոկրատէս ասէ. Ես հասուցանեմ զքեզ անթառամ պսակացն։ Եւ հրամայեաց զգլուխս նոցա հարկանել դալար ջալոտիւք, մինչև տասն այր տկարացան ՚ի հարկանելն։ Իսկ սուրբն Ստեփանոս հանդերձ ընկերօքն համբարձեալ զձեռս իւրեանց յերկինս՝ ասեն. Օգնեա մեզ, Տէր Աստուած, ՚ի նեղութեանս մերում, զի վասն անուան քո հարկանեն զգլուխս մեր՝ ծաղր առնելով, և նախատեն զանուն քո, զի մեք ծառայքս քո զքեզ ծանեաք ՚ի ձեռն սրբոց առաքելոցն, զի ոչ գոյ այլ Աստուած բայց ՚ի քէն, Տէր։ Արդ մի՛ տար զանուն քո հայհոյել անօրինաց, այլ երևեցո զքանչելիս քո, զի ծանիցեն զքեզ միայն Ճշմարիտ Աստուած և փառաւորեսցեն հաւատացեալք զանուն սուրբ քո։

Եւ իբրև կատարեցին զաղօթսն, ահա յանկարծակի փայլեաց լոյս սաստիկ, մինչև ոչ երևեալ արեգականն. և էջ առ նոսա Տէր, և ասէ. Խաղաղութիւն ընդ ձեզ, սիրելիք իմ, զի ընդ ձեզ եմ յաւիտեան։

Եւ առժամայն բժշկեաց զնոսա և ինքն վերացաւ յերկինս։ Յայնժամ իբրև տեսին սուրբքն զքանչելիսն և զբժշկութիւն անձանց իւրեանց՝ ուրախացան յոյժ։ Իսկ դատաւորն և իշխանքն պակուցեալ զարմացան. և որ անդն կային հարան կուրութեամբ, և հաւատացին 'ի Տէր արք իբրև հարիւր յիսուն և հինգ. և ձայն բարձեալ ասեն. Եւ մեք պաշտեմք զԱստուածըն Ստեփանոսի։ Իսկ սուրբն Ստեփանոս եդեալ ձեռս 'ի վերայ նոցա, և բժշկեաց զնոսա։ Իսկ իբրև ետես դատաւորն զիրսն՝ տրտմեցաւ յոյժ։ Ասէ մի ոմն յիշխանաց նորին. Ասացի եթէ փութով սատակեա զնոսա, զի մի՛ կախարդութեամբ իւրեանց սպանցեն զմեզ. արդ զոր ասացից քեզ՝ արա. հրամայեա ածել զկուսանսն յառաջագոյն և սպանանել, և ապա զարսդ զայդոսիկ։

Եւ հրամայեաց ածել զկուսանսն զառաջեաւ։ Իբրև ածին՝ ասէ դատաւորն. Խնայեցի 'ի գեղեցկութիւնդ ձեր և ոչ տանջեցի զձեզ իբրև զընկերսն ձեր. արդ հաւանեցարուք կամաց իմոց և զոհեցէք աստուածոցըն, և ես երդմամբ արարից զձեզ տիկնայս իշխանաց մերոց, և բազում պատուոյ և մեծութեան արժանի արարից. ապա թէ ոչ՝ սրով սպանանեմ զձեզ։ Ասէ Մարիամ մայրն Ստեփանոսի. Ոչ են նուիրեալ կուսանքդ զանձինս իւրեանց երկրաւոր մեծութեանս կամ առն, այլ թագաւորին Քրիստոսի. արդ մի՛ պատիր բանիւ քո զօշաքաղեսցես և բարբանջեսցես, զի յուսացեալ եմք 'ի Տէր, և ոչ երկնչիմք 'ի սպառնալեաց քոց. և աղօթիւք որդեկին իմոյ և ընկերաց մերոց և եղբարցն օգնեսցէ մեզ Տէր, և փրկեսցէ զմեզ 'ի ձեռաց քոց։ Յայնժամ հրամայեաց դատաւորն դահճացն առնուլ տանել զնոսա 'ի բացեայ, և անդ սպանանել, զի լեցի մարմինք նոցա, ասէ, կերակուր գազանաց երկրի։ Իսկ ապա առեալ դահճացն փութանակի ընդ այգն ընդ առաւօտն զսուրբ կուսանսն հանդերձ Մարեմաւ, գնացին տանել 'ի տեղի նահատակութեանն։

Իսկ Մարիամ տեսեալ զի տանէին զկինքեանս 'ի նահատակել յառաջ քան զեղբարսն և զորդին իւր, սկսաւ արտասուել, և ասէ ցսուրբն Ստեփանոս բարձըր բարբառով, զի էր հեռագոյն 'ի նոցանէ. Որդեա՛կ Ստեփանոս, դու գիտես եթէ որպէս սնուցի զքեզ կրթել յաստուածպաշտութիւն, արդ պինդ կաց 'ի հաւատսդ, և քաջալերեա զեղբարսդ զի մի՛ ոք զարհուրեսցի 'ի տանջանաց, և մի՛ զանգիտեսցէ և երկմտիցէ, կամ 'ի սպառնալեաց դատաւորին երկընչիցի. զի տղայք են դեռ և ոչ ևս հասեալ 'ի տիս մանկութեան, արդ յառաջեսցին քան զձեզ 'ի նահատակութիւն և գնալ առ Տէրն մեր սրբութեամբ: Այլ վասն իմ և դստերաց իմոց աղօթեա, որդեակ իմ Ստեփանոս, զի խաղաղութեամբ անցցուք ընդ խաւարային իշխանութիւնսն, զերծանել 'ի խաւարային օդային դիւացն: Եւ ասէ սուրբն Ստեփանոս. Մարիամ, մայր իմ, գնա խաղաղութեամբ, Տէր ընդ քեզ և ընդ քորսդ իմ: Եւ ասէ յունարէն բարբառով. Մա՛յր իմ, մա՛յր, յառաջագոյն կուսանքդ ըմպեսցեն զբաժակ մահու և ապա դու, զի տղայք գոլով երկնչիցեն 'ի սրոյն տեսլենէն. և ես և եղբարքս իմ 'ի սմին ժամու 'ի սոյն աւուրս ժամանեսցուք առ ձեզ:

Եւ առեալ դահճացն զկուսանսն Մարիամաւ հանդերձ, տարեալ 'ի տեղի նահատակութեան, հանդէպ ձորակի միոյ առ ստորոտով լերինն. և կապեալ զձեռս յետս՝ սկսան յանխնայ սպանանել զնոսա: Եւ նոքա մի մի յառաջեալ առ դահիճսն 'ի զենումն, և կնքեցին զանձինս իւրեանց նշանաւ խաչին: Իսկ Մարիամ կայր յանդիման կուսանացն և նշանացի քաջալերէր զսուրբսն պինդ կալ 'ի հաւատսն և տեսանել զՔրիստոս: Եւ դահճացն յանխնայ կոտորեալ զկուսանսն, հասին առ Մարիամ՝ մերկացուցեալ զսուսերս իւրեանց: Եւ նա կայր ամբարձեալ զձեռս իւր յերկինս, զի ոչ էր կապեալ, այլ կայր մեկուսի և աղօթէր՝ ասելով. Օրհնեալ ես Թագաւոր անմահ, որ արժանի արարեր զորդեակքս իմ անարատ ըմպել զբաժակ մահու: Եւ մինչև էր կատարեալ զաղօթսն, մի ոմն 'ի դահճացն հարեալ զսուրն ընդ կուրծս նորա, և առժամայն աւանդեաց զհոգին սուրբն Մարիամ՝ բարի խոստովանութեամբ 'ի Հայր և յՈրդի և 'ի սուրբ Հոգին, յամսեանն աւգոստոս, որ օր մետասան էր, յաւուր ուրբաթու 'ի տասն ժամու: Եւ կայր սուրբ մարմինք նոցա անթաղ, և յառաջագոյն վկայեցելոյ Բագրատունեայ: Իսկ ապա առեալ նոր հաւատացելոցն զնշխարս սրբոյն Բագրատունեայ գաղտ 'ի գիշերի, տարեալ առ 'նշխարս սրբոց կուսանացն ամփոփեցին 'ի մի վայր, և անյայտ արարին զհանգիստ նոցա մինչև 'ի ժամանակս սակաւս:

Իսկ յետ սրբոցն կատարման՝ գնացին դահիճքն առ դատաւորն, և պատմեցին զիրսն զոր արարին. յայնժամ դատաւորն հրամայեաց դարձեալ ածել զսուրբսն զառաջեաւ: Իբրև ածին՝ ասէ դատաւորն. Մինչև յե՞րբ անսայցեմ ձեզ, զի կախարդութեամբդ ձեր դարձուցէք զժողովուրդս իմ 'ի ձեզ: Ասեն սուրբքն. Յաստուածպաշտութիւն դառնալ կախարդութիւն համարիս: Սոկրատէս ասէ. Հրաման առեալ եմ 'ի թագաւորացն զերիս և զչորս մեղուցեալսն թողուլ ձեզ, արդ հաւանեցարուք կամաց իմոց և զոհեցէք դիցըն, զի մի՛ չար եւս տանջանս ածից 'ի վերայ ձեր և ոչ կարասցէ աստուածն ձեր փրկել զձեզ 'ի ձեռաց իմոց: Ասէ սուրբն Ստեփանոս. Ո՛վ դատաւոր, զիա՞րդ խաբեալ ջանաս զծառայս Աստուծոյ. պատրաստ եմք 'ի տանջանս զոր ինչ ածես 'ի վերայ մեր, զի ահա մարմնոց մերոց ունիս իշխանութիւն, զոր ինչ կամիս առնել՝ արա վաղվաղակի: Յայնժամ դատաւորն հրամայեաց պատրաստել հուր սաստիկ, և ընկենուլ զնոսա 'ի հուրն: Իսկ զօրականքն արարին զհրամայեալսն, պատրաստեցին զհուրն սաստիկ յոյժ, և առեալ ըզսուրբսն տանել 'ի հուրն. իսկ ծառայքն Աստուծոյ սկսան երգել զօրհնութիւն Երից մանկանցն 'ի գնալ Ճանապարհին: Իբրև հասին յեզր հնոցին՝ յայնժամ զինուորքն արկին զնոսա 'ի հուրն՝ կապեալ ձեռս յետըս. իսկ սուրբքն կային 'ի մէջ հնոցին որպէս ընդ հովանեաւ, զի խորանաձև եղև բոցն 'ի վերայ նոցա: Յայնժամ սուրբն Ստեփանոս ամենեքումբք հանդերձ սկսաւ ասել. Օրհնեալ ես Թագաւոր անմահ, որ ցուցեր զսքանչելիս քո այսօր 'ի միջի մերում. գովեմք զքեզ, սքանչելիդ Աստուած, և փառաւորեմք զանուն քո 'ի մէջ հնոցիս: Իսկ զինուորքն տեսեալ զսքանչելիսն՝ զարմացան և երկեան երկիւղ մեծ. և թողեալ զսուրբսն 'ի մէջ հնոցին՝ գնացին փութով առ իշխանն իւրեանց և պատմեցին զոր տեսին: Ասէ դատաւորն. Եւ դեռ ևս կենդանի՞ են 'ի մէջ հրոյն: Ասեն զինուորքն. Խնդալով կան և փառաւորեն զաստուածն իւրեանց: Յայնժամ սրտմտեալ դատաւորն իբրև զառիւծ՝ ասէ ցդահիճսն. Փութով տարջիք 'ի հեղեղատն և սպանջիք զնոսա, զի մի՛ երևելով նոր պաշտօնէիցն որ հաւատացին կախարդութեան նոցա՝ սպանցեն զիս, զի զօրքն իմ ոչ են առ իս:

Իսկ դահիճքն գնացին գաղտ և հանին զնոսա 'ի հնոցէն, զի կարողութեամբն Աստուծոյ հրեշտակ Տեառն պահէր զնոսա, զի ամենևին մազ մի 'ի գլխոյ իւրեանց ոչ էր խարշատեալ[1]: Եւ տեսեալ դահիճքն՝ զարմացան. այլ 'ի յահէ դատաւորին երկնչէին յոյժ, և փութացուցանէին զսուրբսն տանել 'ի տեղի կատարմանն՝ կատարել զհրամանս դատաւորին: Իսկ մի ոմն 'ի դահճացն 'ի բաց ընկէց զկապանս նոցա, և երթային զճանապարհայն սուրբքն խնդութեամբ մեծաւ, սաղմոսէին և ասէին. Ի նեղութեան մերում մեք առ Տէր կարդացաք, Տէր փրկեաց զմեզ 'ի շրթանց նենգաւորաց և 'ի լեզուաց չարաց: Եւ կատարեալ զկանոնն՝ հասին 'ի տեղի կատարմանն, 'ի խորագոյն ձորակի միոջ, հանդէպ կուսանացն կատարելոյ հեռագոյն սակաւիկ մի: Իսկ դահիճքն փութացուցանէին զսուրբսն 'ի սպանումն. և սրբոցն կրկնեալ ծունր ամենեքեան միաբան՝ ասեն. Տէր յոյս մեր, ապաւէն և փրկիչ. Աստուած Ճշմարիտ, փառաւորեմք զմարդասիրութիւնդ քո, զի փրկեցեր զմեզ 'ի ձեռաց դատաւորին, և պահեցեր զմիաբանութիւնս մեր ամբողջ, զի ոչ ոք 'ի մէնջ երկմտեաց 'ի տանջանաց դատաւորին: Արդ, Տէր բարերար, ընկալ զաղաչանս ծառայից քոց. Տէր Աստուած, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին մօր քո և Կուսի, ընկալ զհոգիս ծառայից քոց, մարդասէր Տէր, զի փառաւորեսցի անուն քո յաւիտեան: Զայն եղև յերկնից և ասէ. Եկայք ծառայքդ Աստուծոյ, և հանգերուք ընդ այլ նահատակսն: Եւ յարձակեալ դահիճքն ՚ի վերայ սրբոցն՝ սկսան կոտորել: Իսկ սուրբն Ստեփանոս կայր մեկուսի, համբարձեալ զձեռս իւր յերկինս և աղօթէր: Բայց յորժամ ետես զեղբարսն զի կոտորէին դահիճքն անխնայք, ասէ. Զմանկունս տիօք յառաջագոյն կոտորեցէք: Իսկ դահիճքն հակառակեալք ընդ բանս սրբոյն՝ զծերսն յառաջ կոտորեցին: Իսկ ծառայն Աստուծոյ Ստեփանոս քաջալերէր զնոսա պինդ կալ սակաւիկ մի և հասանել ընկերաց նահատակացն, զի ասէր. Ահա երթամք ՚ի հանգիստն զոր պատրաստեաց Տէր ծառայից իւրոց: Եւ կոտորեցին զամենեսեան առ հասարակ և կայր Ստեփանոս միայն: Իբրև կատարեցին զսուրբսն, որոց անուանքն են այսոքիկ, զսուրբն Բագարատ և զՎեղարիոս, զԲասիլիոս, զՍիմէոն կեսարացի, և զԳրիգորիս, որ և նա էր յառաջագոյն հաւատացեալ ՚ի Տէր ՚ի քաղաքին Կոկիսոնի, և զերկու որդիս նորա զԱրմբատ և զՅոհաննէս. և զծերսն պատուական զՂևոնտէոս երիս որդւովքն, Դաւթիւ և Ստեփանոսիւ և Թադէոսիւ. և զծերսն պատուական և մեծազգի յԱնտիոքէ չորիւք որդւովքն, և զայլսն որոց անուանքն գրեալ են ՚ի դպրութիւն կենաց:

---

[1] Յօր. խարշամեալ:

Իսկ սուրբն Ստեփանոս կայր և արտասուալից աղօթէր. իբրև եկին առ նա դահիճքն՝ ասէ ցնոսա. Զի՞ յապաղէք, զի՞ կայք հիացեալ անօրէնութեամբ արբեալ, զի կուրացոյց սատանայ զաչս սրտից ձերոց. զի որ թուիդ ձեզ թէ մեռան իսկ, նոքա ՚ի մահուանէ ՚ի կեանս փոխեցան, և կան ՚ի հանգիստն որ ոչ անցանէ: Ասէն դահիճքն, զի էին թուով ութ. Մեք գիտեմք և ծանեաք յիշխանէն մերմէ զկախարդութիւնդ քո և զարանցդ՝ զոր սպանաք, արդ կամիս և զմե՞զ տալ սպանանել դատաւորին: Եւ ասէ սուրբն ցնոսա. Այսպէս է գրեալ. Որ ոչ կամիցի զօրհնութիւն Տեառն, հեռի եղիցի ՚ի նմանէ: Եւ ասէ դարձեալ. Ներեցէք սակաւիկ մի զի կացից յաղօթս. և անկեալ ՚ի վերայ երեսաց իւրոց՝ ասէ. Ո՛վ Ճշմարիտդ Աստուած, էութիւն անեղ, Երրորդութիւն սուրբ, զոր օրհնեն զքեզ հրեշտակաց դասք անլռելի ձայնիւ, և երկրպագիս յամենայն արարածոց խոստովանողաց զքեզ, և օրհնեն հանապազ զտէրութիւնդ քո փառաւորելով զանուն քո սուրբ։ Եւ ետուր պարիսպ ամրութեան հաւատացելոց զնշան սուրբ խաչի քո, զի կնքելով զանձինս՝ յամօթ լիցի հակառակորդն և ոչ կարասցէ յաղթել հաւատացելոց, յոր ապաւինեալ ծառայքս քո 'ի նշան սուրբ խաչի քո, զանձինս մեր 'ի մահ մատնեցաք վասն անուան քո սրբոյ։ Եւ արդ, Տէր, գոհանամք զքէն, որ պահեցեր զմեզ աներկբայ հաւատովք և մեռանել վասն անուան քո, Տէր. արդ ընկալ զբանաւոր պատարագս զոր մատուցի քեզ, և համարեա 'ի թիւ սրբոց քոց, և գրեա զանուն սոցա 'ի դպրութիւն կենաց, մարդասէր Տէր. և զիս ընկալ, Տէր, և խաղաղութեամբ անցո ընդ խաւարային իշխանութիւնսն, զի մի իշխեսցէ չար և պիղծ դեն մերձենալ յոգի իմ։ Աղաչեմ զսուրբ զանուն քո, Երրորդութիւն սուրբ, ընկալ զաղաչանս իմ, և զտեղի նահատակութեանս մերոյ արա բնակութիւն քրիստոնէից. և զնոր հաւատացեալ հօտն օրհնեա, և աճեցո զնոսա օր ըստ օրէ, զի բազմանայցեն և օրհնեսցեն զանուն քո, և զհակառակամարտ դատաւորն սատակեա, որպէս և զթագաւոր նորա սատակեցեր 'ի ձեռն Մերկիւռեայ վկային, աղօթելով սրբոյ հայրապետին Բարսղի, և կատարեցեր զխնդրուածս նորա, և ապրեցուցեր զհաւատացեալս անուանդ քո սրբոյ։ Եւ այժմ դարձեալ խնդրեմք 'ի քէն, մարդասէր Տէր, օրհնեա զհաւատացեալս անուանդ քո սրբոյ, և զտեղի նահատակութեանս մերոյ՝ արա բժշկութիւն ախտաժետաց. զի որք գայցեն յանուն մեր և աղաչեսցեն զքեզ 'ի տեղիս յայս՝ օգնեսցես նոցա. և եթէ ախտս ինչ ունիցին կամ ցաւս կամ զինչ և իցէ ցասումն, բժշկեսցես զնոսա և ապրեցուսցես, զի փառաւորեսցեն զանուն սուրբ քո. և զիս արժանի արա ըմպել զբաժակ մահու ուրախութեամբ, զի քեզ փառս մատուցից Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյդ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Զայն եղև յերկնից որ ասէր. Ե՛կ վկայ Քրիստոսի և հանգիր յուրախութիւնս արդարոց, և զոր խնդրեցեր 'ի Տեառնէ, եթէ ոք եկեսցէ 'ի տեղի նահատակութեան ձեր, զինչ և խնդրեսցէ՝ բարեխօսութեամբ ձեր տացի նոցա 'ի Տեառնէ։ Եւ նա ցնծացեալ Հոգւոյն սրբոյ, և փայլէր լոյս յերեսաց նորա։ Եւ ասէ ցդահիճսն՝ զի կայլին հեռագոյն դաղեալ [1], և զանձամբ եկեալ ոչ գիտելով թէ զինչ արասցեն։ Եւ ասէ սուրբն. Եկայք կատարեցէք զկամս հօրն ձերոյ սատանայի։ Եւ մի ոմն 'ի դահճացն անօրէն յոյժ եկեալ առ սուրբ վկայն. և նա խոնարհեցուցեալ զպարանոցն և աղօթէր 'ի սրտի իւրում. և նա մերկացուցեալ ըզսուրն՝ եհատ զպարանոց նորա։ Իսկ ձեռն դահճին մնաց կարկամեալ հանդերձ սրովն. և այս դիւի պղծոյ հարեալ 'ի նա, անդէն արիւնախառն լեարդն ընդ բերանն դարձաւ և սատակեցաւ։ Իսկ այլ ընկերք նորա փախստեայ եղեալ գնացին փութապէս առ իշխանն իւրեանց, պատմեցին զոր արարին և զսատակումն ընկերին իւրեանց։

Յայնժամ դատաւորն կոչեաց զխորհրդակիցս իւր և ասէ. Արդարև ասեմ ձեզ, զի զկախարդսն զայնոսիկ սպանի, արդ ուրախասցուք ուրախութիւն մեծ, և գնասցուք 'ի քաղաքս մերմէ, և ապա յետ սակաւ աւուրց դարձեալ գայցեմք և կորուսանիցեմք զարդզայդոսիկ որք հաւանեցան կախարդացն։ Իսկ իշխանք նորա ասեն ցնա. Եկայք վաղիւն զոհս մատուսցուք աստուածոցն որ փրկեաց զմեզ 'ի նոցանէ. և հաճոյ թուեցաւ բանն անօրինին։ Իբր այգն զառաւօտն մերկանայր, կամեցեալ իշխանն յառնել 'ի գահոյից իւրոց, և ահա յանկարծակի անկաւ վէմ մի մեծ 'ի վերայ նորա և սատակեաց զնա, ոչ գիտելով ուստի անկաւ վէմն։ Իսկ զօրք նորա հարեալ 'ի դիւաց մոլեգնէին։ Եւ մի ոմն յիշխանաց նորա զղջացեալ և եկեալ 'ի միտս իւր՝ ասէր. Այս ամենայն նեղութիւնս որ եկն 'ի վերայ զօրաց մերոց՝ վասն ծառայիցն Աստուծոյ եղև՝ զոր յանիրաւի կոտորեցաք։ Եւ առեալ իշխանին որում անուն էր Կաւատէ՝ զզինուորսն մոլեգնեալս՝ գնաց 'ի տեղի նահատակելոց վկայիցն, եդ ծունր ամենեքումբք հանդերձ, և ասեն. Ո՛վ սուրբ վկայք, հաւատամք յԱստուածն ձեր՝ զոր դուք պաշտէք. բարեխօսեցէք առ Տէր՝ զի թողցէ մեզ զյանցանս մեր զոր մեղաք ձեզ, և զցասումն զոր եկն 'ի վերայ մեր՝ բարձցէ 'ի մէնջ Տէր, զի զոր արարաքն ապաշխարեսցուք և դարձցուք առ Տէր: Իբրև զայս ասաց իշխանն, մոլեալքն 'ի դիւաց՝ սկսան զգաստանալ և միաբան ձայնիւ օրհնէին զԱստուած:

---

[1] Յօր. գաղեալ։

Իսկ մարմինք սուրբ վկայիցն կային անթաղ. և զորքն բժշկեալ՝ էին թուով իննսուն և հինգ այր, հանդերձ իշխանաւն. զոր ժողովեալ զնշխարս սրբոցն և զհողն ուր արիւն նոցա հեղեալ կայր՝ և փութանակի ամփոփեցին զամենեսեան: Իսկ քրիստոնեայքն յառաջագոյն հաւատացեալքն եկեալ առ իշխանն Կաւստէ, և տեսեալ զզինուորսն բժշկեալ՝ օրհնէին զԱստուած, որ 'ի ձեռն սրբոց վկայիցն եղև ժողովուրդ Քրիստոսի: Եւ ասեն ցիշխանն. Սկիզբն արասցուք շինել տաճար սուրբ վկայիցն, և դիցուք զնշխարս նոցա 'ի ներքոյ հիման տաճարին: Եւ սկսան հաւատացեալքն շինել զտաճարն, և եդին զմարմինս սուրբ վկայիցն 'ի ներքոյ խորանին, և զնշխարս սրբոյն Ստեփանոսի հանդէպ աղբերն՝ զոր բղխեաց, սակաւ մի 'ի պէտս բնակչացն և վասն բժշկութեան հիւանդաց, որ կայ մինչև ցայսօր: Իսկ իշխանն գնացեալ զինուորօքն 'ի տեղի նահատակութեան սուրբ կուսանացն, սկիզբն արարեալ տաճարի շինել 'ի տեղւոջն, ուր ամփոփեալ էին նշխարք սրբոցն, և անուանեցին զեկեղեցին Սուրբ Կաթուղիկէ: Իսկ այլ հաւատացեալքն շինեալ էին և նոքա զտաճար սուրբ վկայիցն և անուանեցին Սուրբ Ստեփանոս. և մի ոմն 'ի քրիստոնէիցն սպասաւորէր տաճարին: Իսկ իշխանն տիրացեալ տեղեացն այնոցիկ՝ հաստատէր և քաջալերէր զհաւատացեալսն, և օր ըստ օրէ աճէին և բազմանային. և զօր նահատակութեան նոցա ամ յամէ տօնէին, և փառաւորէին զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

Վկայաբանութիւն Սրբոյն Ստեփանոսի Հռովմայ հայրապետին և որք ընդ նմա վկայեցին։

Ի ժամանակին յայնմիկ առեալ զիշխանութիւնն Հռովմայեցւոց Վաղերիանոսի հանդերձ Գաղղոսիւ որդւովն իւրով, զառաջինն ոչինչ հակառակ զինքն քրիստոնէից ցուցանէր, այլ և կարի ևս սիրելի խորամանկութեամբ իւրով. ապա պատրեալ 'ի կախարդաց, ևս առաւել յիւրոց չարեացն զոր կեղծաւորեալ ունէր, սկսաւ յարուցանել հալածանս 'ի վերայ եկեղեցեաց Քրիստոսի, հալածել զարս սուրբս և զարդարս։ Նաև քրիստոնեայք որք ըմբռնեալք լինէին, զառաջինն պէսպէս խոստմունս առաջի արկանէին, և զկնի այնորիկ մեծամեծ սպառնալիս. և դարձեալ 'ի ձեռն գործոց՝ դառն տանջանօք տանջեալք լինէին։

Յայնժամ երանելին Ստեփանոս հայրապետն Հռովմայ, զորոյ և զձգնութիւնն պատմէ մերձ եկեալ բանս, որ ոչինչ նուազէր ըստ աթոռոյն օրինակի, նմանող եղեալ առաքինութեամբն և վկայութեամբն Պետրոսի գլխաւորի առաքելոցն. քանզի քսաներորդ երրորդ էր յառաքելոցն, յաջորդեալ յՂուկիոսէ[1], որ և զկնի սորա առնու զաթոռն երանելին Քսեստոս։ Ժողովեալ զամենայն եկեղեցի, ասէ. Եղբարք իմ, այս մի լիցի 'ի ձէնջ ծածկեալ, զի 'ի ձեռն շրթանց բռնաւորաց՝ նոյն ինքն բանսարկուն խօսի, և ածէ զքրիստոնեայս յանձողոպրելի տանջանս և պատիժս. և որք 'ի նոցանէ մեռացեալ լինին՝ օր ըստ օրէ յայտնէ նոցա. նաև մեծութիւն և փառք որով յաղթին բազումք 'ի թուլացելոց, զայս մանաւանդ նովաւ առաջի արկանեն։ Այլ դուք, ով սիրելիք իմ, մանաւանդ ըստ աւետարանական քարոզութեանն և հոգևոր վերստին ծննդեանն՝ որդիք, 'ի բաց թօթափեսցուք զերկրաւորս՝ յերկիր, և թեթևացեալք հոգւով՝ վերաբերեսցուք յարքայութիւնն երկնից։ Եւ մի երկիցուք 'ի մարմնական տանջանացս որ առ ժամանակ մի է, այլ յայնմանէ որ զհոգի և զմարմին տանջէ, որ յաւիտենականն է։

---

[1] Այն է Լուսիոս Ա։

Բողնոս քահանայ եղև բերան բազմութեանն. փոխանակ ամենեցուն ձայն բարձեալ ասէ. Մեք, ով Տէր, 'ի բաց լքեալ թողաք զազգս և զփառս և զմեծութիւն, և զամենայն որ ինչ աշխարհիս էր. և յայսմ հետէ Քրիստոսի զօրացուցանելով զմեզ, յօժարութեամբ հեղցուք զարիւնս մեր վասն անուան նորա, որ վասն մեր մեղաւորացս եհեղ զարիւնն իւր սուրբ. միայն քո սուրբ աղօթիւքդ և քրիստոսասէր վարդապետութեամբդ, մի դադարեր առ 'ի հաստատել զմեզ։ Եւ զայս ասացեալ, ամենայն դասք կղերիկոսացն աղաչեցեալք զքահանայապետն Աստուծոյ, զի և որք 'ի ժողովրդեանն անկատարք էին, որք ուսեալք էին զվարդապետութիւնն նորա խորհրդածութեամբն, և կատարմանն ևս արժանի լինիցին վերստին ծննդեամբն։ Եւ սուրբ քահանայապետն երագապէս առ վաղւին հրամայեաց ժողովել զամենեսեան, և կատարեաց զնուիրական սպասաւորութիւն սուրբ մկրտութեանն. լուսաւորեաց զնոսա հոգևորական ծննդեամբ սուրբ աւազանին։ Եւ զկնի մկրտութեանն հաւատարիմ բանիւ վարդապետութեանն հաստատեալ զնոսա, օրհնեաց զքրիստոնեայսն, յաւելեալ 'ի նոսա թիւս հարիւր և ութից։

Իսկ 'ի միւսում աւուրն քահանայապետն Աստուծոյ՝ և զոր էին մտանելոց ընդ ձեռնադրութեամբ, ձեռնադրեաց երիս քահանայս և եօթն սարկաւագունս, և այլ ևս որք անկան յայլ աստիճանս սպասաւորութեան նորա՝ արս վեշտասան։ Եւ զկնի այսորիկ բազումք 'ի Հելլենացւոցն որք անդ բնակեալք էին, և երախայացեալք 'ի բանս բարեպաշտութեան, մկրտեցան 'ի քահանայապետէն Աստուծոյ։ Յորոց այր մի Դեմարքոս իշխանութեամբ՝ որ Թարգմանի ժողովրդապետ, Նեմեսիոս անուն նորա, առաջի եկեալ դստերբ իւրով որում անուն էր Լուկիլլա, խնդրէին զբժշկութիւն և զլուսաւորութիւն սուրբ մկրտութեանն։ Իսկ քահանայապետն Աստուծոյ ասէ ցնա. Եթէ հաւատաս բոլորով սրտիւ քով յամենասուրբ Երրորդութիւնն, երեք անձինք, միով բնութեամբ և աստուածութեամբ դաւանեալ, և յետ այսորիկ զփրկական մարդեղութիւնն Քրիստոսի, ոչ առ աչօք և ոչ այլ ուստեք, այլ ճշմարտապէս 'ի մերմէ զանգուածոյս, յերկուց մի եղեալ, հաւասարակից Հօր և սուրբ Հոգւոյն, առնուս զոր կամիս։ Եւ նա իմաստնանայր պահել զնոյն դաւանութիւն, որպէս վարդապետեցաւ 'ի սուրբ քահանայապետէն։

Եւ դուստր նորա քանզի կոյր էր 'ի ծննդենէ, բաց ունելով զաչսն առանց լուսոյ. և յորժամ մերձ եղեն 'ի սուրբ աւազանն, և զխորհրդական զբանսն ասացին և լուսաւորեցան սուրբ մկրտութեամբն, որով զՆեմեսիոս և զդուստր նորա վերաբերեցին յաւազանէ անտի, յայնժամ դուստրն նորա բարձրագոյն ձայն արձակեալ իբրև զայր մարդ, ասէ. Ահա տեսանեմ այր մի փայլակնացայտ զի մերձեցաւ յաչս իմ, և յարփիական նշուլիցն որ շուրջ զնովաւ, ընձեռեաց ինձ զամենայն երևելիս տեսանել։ Իսկ քահանայապետն Աստուծոյ ինքն ձեռամբն իւրով ընկալաւ յաւազանէն, և կրկին զհայրական գութն հաստատէր 'ի նոսա։ Բազումք և այլք յաւուր յայնմիկ սուրբ մկրտութեանն արժանացան և թողութեան մեղաց. և էր այնուհետև անթիւ բազմութիւնք հաւատացելոցն։ Ապա ձեռնադրեաց երանելին զՆեմեսիոս սարկաւագ 'ի սպասաւորութիւն սուրբ եկեղեցւոյն։

Եւ քանզի երևելի և յայտնի էր այրն, ոչ եղև ծածկեալ 'ի զօրագլխաց անտի հաւատք նորա և մկրտութիւնն և վերատեսչութիւն սարկաւագութեանն, որք ծանուցանէին թագաւորին։ Յայնժամ կոչեցեալ թագաւորն զՈւղերիոս[1] և զՄաքսիմոս որ էին զօրագլուխք իշխանութեամբ, որք և զօրացեալք էին մոլորութեամբ կռոցն Արեսի: Եւ յորժամ եկին՝ հրամայեաց նոցա ըմբռնել զՆեմեսիոս. և նախ հարկանել զնա ապտակմամբ, և ապա ածել առաջի դատաւորական բեմին: Իսկ սուրբն Նեմեսիոս աստուածային շնորհօքն զօրացուցեալ զքրիստոնեայսն, և բաշխէր զինչս իւր ըստ իւրաքանչիւր պիտոյից: Եւ 'ի գիշերի միում յերթալն նորա ճանապարհաւն որ կոչի Ապպիա, և զսովորական ողորմութիւնն առ կարօտեալսն բաշխէր. մերձ եղև 'ի տաճար կռոցն, ետես զՈւղերիոս և զՄաքսիմոս, որք զոհս աղտեղութեան կռոցն մատուցանէին. և զօրացեալ աստուածային նախանձուն, խոնարհեցուցեալ ծունր առ բոլորեցունց Աստուածն, աղօթէր զի ամպարիշտքն անդ՝ ուր զյանդգնութիւն կռապաշտութեանն գործէին, տայցեն պատիժս ըստ անօրէնութեանն իւրեանց: Եւ մինչդեռ աղօթքն 'ի շրթունսն էին, մանաւանդ յերկինս քան թէ 'ի շրթունսն, առ ժամայն կալաւ զՄաքսիմոս դիւաց ապտակումն. զարկուցանէին զգետնի և լլկէին յոյժ. և անսուրբն առնոյր բերան և լեզու զայսոյ պղծոյ, գոչէր և ասէր, եթէ՝ Քրիստոնեայ ումն անուն Նեմեսիոս անցանէ արտաքոյ տաճարին, և աղօթիւք իւրովք կիզէ զիս. ժամանեցէք նմա մինչև հեռացեալ է. կալէք և ապտակեցէք զնա: Եւ առ ժամայն դիւաց սպասաւորքն ըմբռնեցին զնա, և ըստ դիւացն խրատու ապտակեցին: Եւ երևելի սարկաւագըն և վկայն Քրիստոսի կայր յապտակումն տանջանաց: Իսկ պիղծն Մաքսիմոս ըստ արժանի իւրոյ յանդըգնութեանն խեղդեցաւ յայսոյն պղծոյ, որում և զոհ իսկ մատուցանէր. աստէն ետ զվճիռ հատուցման պատուհասին ըստ սրբոյ սարկաւագին աղօթիցն, և 'ի հանդերձեալսն զանվախճան տանջանսն, ըստ իւրոց պաշտօնատարացն:

---

[1] Այսպէս 'ի բնագրին, այլ թուի լինել Վաղերիոս։

Եւ զկնի սատակման պղծոյն Մաքսիմոսի, զսուրբն Նեմեսիոս ածին 'ի պալատն առ Ուղերիանոս դատաւոր. զոր իբրև ետես, ասէ ցնա. Ընդէ՞ր արդեօք իմաստութիւնդ քո անզգուշալի եղև. և որ 'ի խորհըրդական ժողովարանին քան զամենեսեան ընտիր էիր, արդ զանմտութիւն ընկալար, և զաստուածոցն սէրն կորուսեր ատելութեամբդ զնոսա։ Զիա՞րդ յայդպիսի մեծ անօրէնութիւն և անմտութիւն անկար, թողուլ քեզ զաստուածսն՝ զոր 'ի խանձարրոցն պաշտեալ պատուէիր, և երթալ զհետ պաշտաման զոր ոչ էն ծանուցեալ առաջին հարքն քո։ Բայց արդ յայսմ հետէ, եթէ ոչ արագ դառնաս ուստի անկար, և սթափիս 'ի խելագարութենէդ, այսուհետև օրէնք դատաւորաց հասցէ 'ի վերայ քո, այն որ այդպիսի պաշտօնատարացդ է պատրաստեալ, զորս և զդատաստանս դու ինքնին քաջ գիտես։

Իսկ երանելին Նեմեսիոս զառաջինն ոչ ետ նմա պատասխանի. այլ նախ յորդահոս արտասուս հեղեալ, յորժամ յիշատակեցաւ առաջին մոլորութիւնն իւր և ծնողացն, որով նոքա 'ի կռապաշտութեանն վախճանեցան, և ապա արգելեալ զարտասուս իւր ասէ. Զայդ որով դու յառաջ բերես, ո՛վ դատաւոր, զառաջին զվարսն իմ և զծնողացն իմոց՝ որ 'ի կռապաշտութեանն վախճանեցան, և զինչ որ յանգիտութեանն մեղանչէի, որով զբազումս 'ի սրբոցն դատապարտեալ պատժէի. և այսու առաւել բորբոքիմ 'ի սէրն Քրիստոսի. քանզի գիտեմ թէ նա է քաւութիւն առաջին ամպարշտութեանն իմոյ։ Իսկ արդ եթէ զառաջին ամպարշտութիւնն այսքան ապաշաւեմ, ո՞րչափ ևս առաւել յորժամ զճշմարտութիւնս ընկալայ, զամենայն վատթարութիւն և զանաստուածութեանն խելագարութիւն իբրև մանգաղաւ 'ի բաց հատանեմ։ Դարձեալ այս քեզ յայտնի լիցի, զի չիք ինչ որ բաժանել կարիցեն զիս 'ի սիրոյն Քրիստոսի. ոչ մեծութիւնք, ոչ փառք, ոչ դատաւորաց սպառնալիք, ոչ գործիք տանջանարանաց. զոր համարձակութեամբ ասեմ վստահացեալ 'ի զօրութիւնն Քրիստոսի, թէ և ոչ զդուստրս իմ կարիցէ ոք մեկնել 'ի Քրիստոսէ, որովհետև մերկացաւ խաւար հոգւոյ և մարմնոյ վերստին ծննդեամբ սուրբ աւազանին, 'ի ձեռն քահանայապետին Աստուծոյ սրբոյն Ստեփանոսի։

Զայս իբրև լուեր բռնաւորն, անհնարին բարկութեամբ լի եղեալ՝ ասէ. Ոչ մոռացեալ եղև առ իս, թէպէտ և մարդասիրութեամբ բերի քեզ, որ սին կախարդութեամբդ զզօրագլխակիցն մեր նախ տանջեցեր, զարհուրական իմն ցաւօք ալկեցեր, և տարաժամ մահուամբ զկեանս նորա հալածեցեր: Եւ այժմ հակառակ մերոյ փրկութեանս գիտութիւն իմն հրահանգես, դժնդակագոյն ճառս յառաջ բերելով: Յայնժամ հրաման ետ զինչս նորա 'ի բաց ճողոպրել, և զդուստր նորա մատնել 'ի ձեռս անառակի ուրումն կնոջ և ամպարշտի:

Եւ ետ ածել զՍերեպիոն որ էր մատակարար տանն Նեմեսիոսի, և ետ զնա 'ի ձեռն առն՝ որում անուն էր Ոլիմպիոս, որ էր տրիբուն իշխանութեան նորա, զի քննեսցէ զնա հաւաստեաւ: Իսկ Ոլիմպիոս իբրև առ յինքն զՍերեպիոն, ասէ ցնա. Երկուս իրս առաջի եդեալ է քեզ 'ի հրամանէ դատաւորին, զոր կամիս կատարեա, նախ քան 'ի տանջանս մտանել. կամ զինչս տեառն քո զՆեմեսիոսի 'ի մէջ ած, և կամ զոհեա կռոցն: Պատասխանի ետ Սերեպիոն և ասէ. Զինչս տեառն իմոյ, ով դատաւոր, յառաջահաս Քրիստոս ընկալաւ, քանզի 'ի ձեռս աղքատաց բաշխեաց զամենայն ինչ տէրն իմ: Այլ զոհել փայտից և քարանց, աղօթս առնեմ զի մի և դու իսկ ինքն ածցես յայդ, և ոչ բնաւ այլ ոք որ ստեղծուած և պատկեր է Աստուծոյ:

Յայնժամ Ոլիմպիոս հրամայեաց սաստիկ հարկանել զնա բրօք ստուարօք, և քարշել 'ի վերայ երեսաց իւրոց և ածել 'ի գարշելի տաճարն Արեսի. և հրամայէր նմա խնկօք զոհս մատուցանել ոսկիապատ կըռոցն: Իսկ երանելի վկայն Քրիստոսի կացեալ յաղօթս՝ խնդրէր յԱստուծոյ ցուցանել զզօրութիւնն իւր առ 'ի կործանումն դիւական պատկերացն. և առժամայն անկեալ կործանեցան կուռքն. զոր տեսեալ Ոլիմպիոսի, 'ի հիացման եղեալ զարմանայր յոյժ ընդ զօրութիւնն Քրիստոսի: Եւ զվկայն Քրիստոսի Սերեպիոն տայր ցՏերտիւղոս, որ էր վերակացու տանն իւրոյ. և ինքն փութանակի գնացեալ 'ի տուն իւր, և պատմեաց զսքանչելիսն կնոջ իւրում՝ որում անուն էր Բերիա, և որդւոյ իւրում՝ որում անուն էր Թէոդուլոս. զորոց Աստուած եբաց զմիտս նոցա իմանալ զճըշմարիտն Աստուած: Եւ 'ի գիշերի կոչէն զսուրբն Սերեպիոն 'ի ներքսագոյն տուն մի առանձինն։ սկսան խոստովանել զանգիտութեամբ մոլորութիւնն իւրեանց, և 'ի զղջման եղեալ՝ լային դառնապէս, և յանձն առնուին ապաշխարել, միայն զի փրկութեան արժանասցին։ Եւ մտեալ ուր լցեալ կային կուռքն իւր զանազան և պէսպէս զարդուք զարդարեալ, և հանեալ արտաքս զամենեսեան, եդ առաջի Սերեպիոնի, և տէր ամենայն կենացն իւրոց զնա կացուցանէր։

Իսկ նա զփայտաշէնսն և զքարեղէնսն և զխեցեղէնսն հրամայէր Ոլիմպիոսի՝ իւր իսկ ձեռօքն խորտակել զնոսա, և զոսկեղէնսն և զարծաթեղէնսն հալել և մանրել և տալ աղքատաց. և այս արագ կատարեցաւ։ Եւ յորժամ կուռքն խորտակեցան մինչդեռ էին 'ի տանն, ձայն եղև յերկնից, լսելի լինէր՝ որ ասէր. Երանի է ձեզ, յայսմ հետէ 'ի ձեզ հանգիցէ հոգի իմ, և զկատարեալն ընդունիցիք զփրկութիւն վերըստին ծննդեամբն։ Զոր լուեալ Ոլեմպիոս հանդերձ ընտանեօք իւրովք, առաւել հաստատեցան 'ի հաւատս. և աղաչէին զՍերեպիոն զի արժանասցին սուրբ մկրտութեանն։ Իսկ Սերեպիոն ծանուցանէ զայս Նեմեսիոսի, և Նեմեսիոս մեծի Քահանայապետին Ստեփանոսի։ Եւ նա ուրախութեամբ լի եղեալ, առանց յապաղելոյ եկն 'ի տունն Ոլիմպիոսի, և տեսեալ ըզհաւատս նոցա և զփոյթն և զխորտակումն կռոցն, վաղվաղակի մկրտեաց զնոսա, և որդեգրեաց հօրն երկնաւորի։ Եւ ոչ եթէ զնոսա միայն, այլ և զամենեսեան որ 'ի տան նորա էին, որք արժանի եղեն լըսել զձայնն երկնաւոր որ հնչեաց 'ի տանն Ոլիմպիոսի՝ յառաջ քան զմկրտութիւնն։

Եւ յորժամ այս գործեցաւ, զկնի երից աւուրց համբաւ հասանէր վասն այս իրաց առ Ուղերիանոս դատաւոր, զոր ծանուցանէր Գաղղենոսի Թագաւորի, որդւոյ Վաղերիանոսի Թագաւորի։ Իսկ նա հրամայէր զերանելին Նեմեսիոս հանդերձ լուսաւորեալ դստերբըն իւրով սպանանել։ Իսկ յորժամ տարան զերանելին 'ի տեղի սպանման, 'ի մէջ երկուց Ճանապարհացն, որ կոչի Ապպիա Ճանապարհ և Լատոնի. և խորհուրդ առեալ՝ նախ զդուստր նորա կամեցան սպանանել, ասէին, եթէ՝ Յաղագս խանդաղատելոյ գթոյն խարչին աղխքն, թերևս յողոքանս դարձցի։ Իսկ երանելի վկայն զմահ դստերն իւրոյ ևս առաւել մխիթարութիւն վարկանէր։ Եւ յորժամ ետես զնա սպանեալ, ցնծայր ուրախութեամբ մեծաւ, գոչէր և ասէր. Ընկալ, Քրիստոս, զբանաւոր պատարագս՝ զոր յօժարութեամբ քեզ մատուցանեմ զառաջին պտուղս որովայնի իմոյ։ Ըստ նմին օրինակի և զնա սպանին 'ի նմին տեղւոջ։ Զոր լուեալ մեծի քահանայապետին Ստեփաննոսի, եկն 'ի գիշերի, և զսուրբ և զնուիրական մարմինս նոցա զսպեալ եդ 'ի պատշաճ տեղւոջ, զարժանաւոր օրհնութիւնս Աստուծոյ կատարէր 'ի վերայ նոցա, ըստ մարտիրոսական արժանաւորութեանն. և 'ի գալ առաւօտին գնայր 'ի տեղի իւր։

Իսկ առ վաղիւն հրաման տայր բռնաւորն զերանելին Սերեպիոն ածել առաջի իւր։ Յայնժամ դահիճքըն հրամանաւ դատաւորին կապեցին զնա երկաթի կապանօք՝ մենքենայ ինչ եդեալ 'ի պարանոցն. և այնպէս ածէին առաջի դատաւորական բեմին Ուղերիանոսի։ Երթայր զհետ բարեպաշտութեան վարդապետին իւրոյ և զինուորն Քրիստոսի Ոլիմպիոս, հանդերձ կնաւ իւրով Բերիայ, և որդւովն իւրեանց Թէոդուլոսիւ։

Եւ իբրև կացին առաջի, ասէ դատաւորն. Վասն էր 'ի փրկչական աստուածոցն մերոց ապստամբեցէք. և զայլ ոմն քան զնոսա յառաջ բերէք՝ երկիր պագանելով նմա։ Իսկ երանելին Սերեպիոն յառաջ մատուցեալ՝ ասէ. Մեք այդպէս, ով դատաւոր, ոչ գործեմք, այլ այնոքիկ որ իբրև զքեզդ են. որք թողեալ զմիոյ և զճշմարտի Աստուծոյ զպաշտօնս և զսպասաւորութիւնս, և դիւաց պղծոց և նոցին պատկերաց՝ որք 'ի փայտից և 'ի քարանց և 'ի խեցեղէն անօթոց կազմեալ են՝ երկիր պագանէք։ Իսկ մեք ոչ կարեմք սեղանակապուտ լինել մերոյ փրկութեանն, և զսըրբութիւնս մեր պղծութեամբ զոհից կռոցն ապականել. քանզի դուք ձեզէն եղէք սեղանակապուտք աստուածային օրինացն, որք թողեալ զճշմարիտն և զանսկիզբն և զմշտնջենաւորն Աստուած, առ ժամայն եղելոցդ և արագ կորստականացդ երկիր պագանէք. քանզի աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն։

Եւ քանզի Թագաւորն Գաղղենոս բարձրագոյն գահիւք նստէր յատենին, և 'ի ձեռն Ուղերիանոսի դատաւորի կատարէր զդատաստանն, դարձաւ 'ի յՈլիմպիոս և ասէ. Դու արդ որովհետև բազում անգամ հասեալ ես 'ի վերայ բարեմտութեանց աստուածոցն, որ և զբազումս առանց իմոց կամացս ածէիր 'ի պաշտօնս նոցա, այժմ ընդէ՞ր ոչ ճանաչես զնոսա։ Ոլիմպիոս ասէ. Ես վասն զի բազում պղծութեամբ և աղտեղութեամբ նոցա զոհէի անշնչոց, և պարտաւորէի և տանջէի զարս սուրբս և անմեղս, և պղծէի զոգիս իմ և զայնոցիկ որ ինձ լսէին, զայն քաջ գիտեմ. սորին աղագաւ հառաչանօք և արտասուօք պաղատիմ Աստուծոյ՝ զի լուասցէ և մաքրեսցէ զիս յառաջին աղտոյ մեղաց իմոց, որով դառնապէս անգիտութեամբն աղտեղացուցի զիս։ Եւ արդ որովհետև գիտացեալ եմ զճշմարիտն Աստուած և 'ի նմանէ ողորմութիւն գտի, յայսմ հետէ ո՞ր բան կամ զի՞նչ տանջանք կամ դառն մահ կարասցէ զիս մեկնել 'ի սիրոյ նորա, և դարձեալ յայնքան վիհս կորստեան անկանել։

Յայնժամ Թագաւորն մռնչեալ իբրև զգազան վայրենի, խորհուրդ առեալ ընդ Ուղերիանոսի, զվճիռ եհատ 'ի վերայ նոցա հրձիգ լինել. և արագ հրամանն կատարեցաւ։ Իսկ յորժամ անկան 'ի հուրն քաջ զինուորքն Քրիստոսի, Սերեպիոն, Ոլիմպիոս, Բերիա, Թէոդուլէ, սկսան փառաւորել զԱստուած՝ որ արժանի արար զնոսա կատարել զընթացս իւրեանց, և հասանել անթառամ պսակացն։ Եւ 'ի փառաբանելն իւրեանց այսպէս ասէին. Փառք քեզ զուգահաւասար Երրորդութիւն սուրբ, որ արժանի արարեր զմեզ բոլորապտուղ քեզ ընդունողիդ մատուցանել ողջակէզ բանական՝ հրով կատարել. արդ ընկալ զոգիս մեր 'ի հօտ անուշից։ Եւ զայս ասացեալ հատուցին զոգիսն։ Իսկ 'ի գալ գիշերին, երանելի քահանայապետն Աստուծոյ Ստեփանոս որ միշտ անքուն ակամբ հոգայր վասն հօտին Քրիստոսի, առեալ արս երկիւղածս 'ի ժառանգաւորաց եկեղեցւոյն, եբարձ զմարմինս բարեյաղթ վկայիցն գաղտաբար, և զօրինաւոր սրբաբանութիւնսն կատարեալ՝ թաղեաց զնոսա մերձ 'ի տեղի ատենին։

Յետ այսորիկ ապա համօրէն իսկ հալածումն շարժեցաւ 'ի վերայ քրիստոնէիցն, և խնդրեցին զՍտեփանոս զեպիսկոպոսն և զամենայն դասս կղերիկոսացն, և եթէ ով զեկուսցէ՝ ինչս բազումս խոստանային։ Եւ յետ ոչ բազում աւուրց ըմբռնեալք 'ի սուրբ կղերիկոսացն արս երկոտասան, որք սրով կատարեցան վկայական մահուամբ, պսակաւորեալք 'ի Քրիստոս, որոց անուանքն են այսոքիկ. Բոնոս, Փաւստոս, Մաբրոս, Պրոմիտիոս, Կամիսիոս, Յովհաննէս, Եքսուպերանտիոս, Կիւրելլիոս, Թէոդուլէոս, Բասիլլիոս, Բասոս, Կաւստոս։

Զսոցա զՃգնաւորական զմարմինս առեալ ոմն՝ որոյ անուն էր Տերտիւղոս՝ կատարեալ հաւատովք մեծավայելչաբար պատուով թաղեաց 'ի տեղին որ կոչի Ճանապարհ Լատինա։ Իսկ վկայասէրս այս Տերտիւղոս էր մատակարար տանն Ուլիմպիոսի, որ և ընդ նոսին լուսաւորեցաւ սուրբ մկրտութեամբն, և սպասաւորէր սուրբ վկայիցն։ Յետ սակաւ աւուրց ապա և ինքն հետևեցաւ նոցա, քանզի եպարքոս ոմն յեպարքոսական դասուցն կալեալ զվկայասէրն Տերտիւղոս, և տարեալ առաջի Ուղերիանոսի դատաւորի։ Զոր իբրև ետես բռնաւորն՝ և գդէմսն իւր այլայլեալ՝ ասէ ցնա. Զինչս Ուլիմպիոսի տեառն քում կամօք քո 'ի բաց տուր, առանց տանջանաց և չարաչար հալածանաց։ Տերտիւղոս ասէ. Եթէ զինչս տեառն իմոյ ստուգապէս խնդրես, երանի է քեզ եթէ կամիս զայն քեզ սեփհականացուցանել. քանզի այնպիսի գանձանակն եթէ ոչ ինքնին իւր ընձեռէ, ոչ կարէ յայլ ումեքէ առնուլ. քանզի նա յերկինս ունի զանկողոպտելի գանձն, զոր 'ի ձեռս աղքատաց բաշխեաց զինչս իւր, և 'ի ձեռն հրոյ զինքն պատարագ մատոյց Աստուծոյ։ Եւ արդ դու, ո՛վ դատաւոր, եթէ լուծանես զվիշտս տնանկաց, և փախչիցիս 'ի դիւաց գարշելի պաշտամանէն, առ ձեռն վաղվաղակի գտանիցես ըզգանձս տեառն իմոյ։

Եւս բարկացեալ Ուղերիանոս, հրամայեաց բրօք դալարօք հարկանել զնա սաստիկ յոյժ։ Իսկ նա առ ոչինչ համարելով զտանջանսն, մեծապէս ուրախութեամբ գոհանայր և փառաւորէր զԱստուած. և որչափ յաւելուին 'ի տանջանսն՝ և սա առաւել սրտապնդէր արիանալով 'ի բարեպաշտութիւնն: Իսկ աստուածամարտն և 'ի վերայ վիրացն ջահս լուցանէր: Իսկ երանելին այնչափ ջեռեալ 'ի սէրն Աստուծոյ, Հոգւով սրբով արիացեալ, մինչ զի և երեսք նորա ոչ այլայլեցան. մանաւանդ թէ բռնաւորն որ ոչինչ վիրաւորեալ՝ և սա առաւել տանջէր յորժամ տեսանէր զանփոփոխելի միտս նորա:

Ապա առաքէ զնա առ Սապրիկոս որ էր եպարքոս քաղաքին, զի 'ի ձեռն հնարից քննեսցէ զնա, որպէս զի 'ի ձեռն խոստմանց կամ տանջանաց զոհեսցէ կռոցն, և տացէ զինչս տեառն իւրոյ: Իսկ Սապրիկոս նստեալ 'ի բարձր բեմի, յանդիման ամենայն հրապարակին, հրամայէր առաջի իւր կացուցանել զերանելին Տէրտիւղոս: Եւ յորժամ եկաց առաջի նորա, սկսաւ հարցանել զանուն և զբախտ: Իսկ նա յանդիման ամենայն բազմութեանն պատասխանի ետ և ասէ. Եթէ զանուն իմ կամիս գիտել, քրիստոնեայ եմ. իսկ եթէ զբախտ, մեղաւոր ծառայ եմ ծառայից Աստուծոյ: Ասէ դարձեալ եպարքոսն. Ծառա՞յ ես եթէ ազատ: Ասէ երանելին. Ասացի միանգամ եթէ ծառայ եմ ծառայից Աստուծոյ. արդ եթէ զյառաջագոյն պատասխանին 'ի միտ ունիցիս, երկրորդ հարցումնդ ընդէ՞ր է. ապա եթէ զառաջինն 'ի միտ ոչ ունիցիս, զուր ուրեմն փութաս կեղծաւորել: Սապրիկոս ասէ. Զոհեա կռոցն, և հատո ինձ զինչս տեառն քո, և 'ի բաց վճարեա զքեզ 'ի տանջանաց, և փառաց և պատուոյ արժանաւոր լինիցիս: Իսկ երանելին քամահեաց զբանս նորա դևս կոչելով զպաշտամունս նոցա և մոլորեցուցիչս:

Յայնժամ եպարքոսն զայրացեալ՝ հրամայեաց քարամբք ջախջախել զբերան նորա: Իսկ նա առ ոչինչ համարելով և զայն ևս տանջանսն, այլ միայն Աստուծոյ գոհութիւն մատուցանէր, զի արժանի եղև վասն անուան նորա չարչարել: Եւ ապա հրամայեաց տարածել զնա 'ի վերայ փայտի, և զջիղս նորա ստուար ջալոտիւք ձաղկել: Իսկ քաջ վկայն Քրիստոսի և զայն ևս տանջանսն ծաղր արարեալ, և ոչ հայել անգամ զբռնաւորն արժանի առնէր: Իսկ Սապրիկոս իբրև ետես զինքն յաղթեալ յերանելւոյն, հրամանաւ Ուղերիանոսի դատաւորի՝ եհատ 'ի վերայ նորա վճիռ սրով սպանանել զնա. և առժամայն հատաւ գլուխ բարեյաղթ վկային Քրիստոսի Տերտիւղայ, յայնմ տեղւոջ ուր տէրն իւր երանելին Ոլիմպիոս իւրովքն կատարեցաւ 'ի Ճանապարհին Լատինա: Իսկ զմարմին նորա սուրբ քահանայապետն Աստուծոյ Ստեփանոս ըստ վկայական պատուին արժանաւոր թաղեաց, ոչ հեռագոյն յասացեալն գեղջէն՝ ուր և կատարեցաւ իսկ :

Յետ ոչ սակաւ աւուրց ըմբռնեցաւ և նոյն ինքն երանելին Ստեփանոս մեծ քահանայապետն Աստուծոյ, որ համանման գտեալ երանելւոյն Ստեփանոսի, անուանակրին իւրոյ, նախաշաւիղ լեալ բազմաց առ երկնային պսակն. և որոց առաջնորդ եղև՝ նոցին և բարիոք յուղարկաւոր, իբրև զանուշահոտ պատարագ Աստուծոյ մատուցանէր. ապա և ինքն հետևեաց զկնի հետոց նոցա:

Արդ իբրև ածաւ առաջի դատաւորական բեմին Ուղերիանոսի, և ընդ նմա այլ բազմութիւնք քահանայից և սարկաւագաց հանդերձ այլ սպասաւորօք եկեղեցւոյն, հայեցեալ 'ի նա բռնաւորն լի ցասմամբ, ասէ. Դո՞ւ ես Ստեփանոս որ շարժէիր զհռովմայեցւոց քաղաքս, և յաստուածոցն սպասաւորութենէն 'ի բաց խոտորեցուցանէիր զժողովուրդս բազումս: Պատասխանի ետ երանելի հայրապետն և ասէ. Ես, ով դատաւոր, ոչ միայն թէ չշարժեմ զհռովմայեցւոց քաղաքս, այլ և յարաժամ հաստատեմ. քանզի հանապազ պաղատանս մատուցանեմ, զշարժեալ խռովութիւնս դիւական ամպարշտաց բառնալ, և ճանաչել ամենեցուն զմիայն ճշմարիտն Աստուած, և զՈրդի նորա միածին, և զհոգին սուրբ համագոր Հօր և Որդւոյ: Եւ զայս դաւանութիւնս ոչ երբէք դադարեցի ամենեցուն յայտ յանդիմանս քարոզելոյ, և այլ ոչ եւս դադարեմ. և յայսմ խոստովանութիւն հաստատեալ, թէպէտ և բիւր մահս ածցես 'ի վերայ իմ, զամենայն առանց դժուարութեան ընդունիմ:

Յայնժամ աստուածամարտն Ուղերիանոս հրամայեաց զերանելին բռնութեամբ ածել 'ի գարշելի տաճար կռոցն, և անդ բռնադատել թերևս զոհեսցէ. ապա թէ ոչ հաւանեսցի՝ սրով բառնալ 'ի կենացս։ Իսկ իբրև մերձ եղև 'ի պատկերս կռոցն, ամբարձ զաչս իւր յերկինս, և 'ի լսելիս ամենեցուն աղօթէր այսպէս. Տէր Աստուած իմ, որ 'ի Քաղանէ զաշտարակն խախտեցեր, որք միաբանութեամբ ամբարտաւանեալք աստուածամարտս լինել խորհէին, զայն 'ի ձեռն խառնակման լեզուացն խափանեցեր, դու նոյն ինքն այժմ խափանեա զդիւական մոլորութիւն կռապաշտութեան սոցա, յայտնելով զամենազօր զօրութիւն քո կործանմամբ կռոցն, որք ոչ միայն խորհրդով ամբարտաւանութեամբ ընդդիմանան ամենազօրիդ, այլ և յայտնապէս աստուածամարտ լինին, փոխանակ արարչիդ՝ արարածոց երկիր պագանելով։ Արդ ամաչեցո զնոսա քոյին անքննելի իմաստութեամբդ, զի թերևս ծանիցեն զքեզ միայն ճշմարիտդ Աստուած։

Եւ մինչդեռ նա զայս աղօթէր, ձայն լինէր ահագին որոտմանց և թնդմունք սաստիկ շարժմամբ, և սարսափելի իմն փայլատակմունք հրացանութեամբ. և մեծ մասն տաճարի կռոցն շարժեալ կործանեցաւ հանդերձ դիւական պատկերօքն։ Իսկ զինուորքն զարհուրեալք յահագին շարժմանէն՝ թողեալ զնա 'ի բաց փախեան։

Յայնժամ բարեյաղթ վկայն Քրիստոսի սուրբ քահանայապետն՝ անցեալ գնայր 'ի վկայարան սրբոյն Լուկիոսի որ էր 'ի նմին քաղաքի։ Եւ ժողովեալ զամենայն քրիստոնեայսն որ էին 'ի քաղաքին, բարեպաշտութեամբ բանիւք մխիթարէր զնոսա, յուշ առնելով նոցա զտէրունական բանն. Մի՛ երկնչիք, ասէ, յայնցանէ որ զմարմին սպանանեն, և այլ աւելի ինչ ոչ կարեն առնել. այլ պարտ է յայնմանէ երկնչել՝ որ զհոգի և զմարմին կորուսանէ 'ի գեհենի։ Զայս և առաւել քան զայն խօսէր ընդ հօտն իւր, և անդէն 'ի տեղւոջն սկիզբն արարեալ կատարել զխորհրդական պատարագն, հանդերձ սպասաւորութեամբ սրբոց քահանայիցն և սարկաւագացն որ ընդ նմա էին. զի ոչ եթէ հոգելից վարդապետութեամբն միայն սրտապնդէր զաշակերտեալսն իւր, այլ և կենդանարար և կեցուցիչ և աշխարհագործ մարմնով և արեամբն Յիսուսի Քրիստոսի՝ սրբէր զանձն իւրաքանչիւրոցն և հաստատէր 'ի հաւատս։

Եւ յորժամ զպատարագն մատուցանէր, զինուորաց բազմաց եկեալ՝ շրջապատէին զտաճարն Աստուծոյ զինուք բազմօք և սուսերակուռ սպառազինօք. և այնչափ աղաղակս շուրջ եդեալ և զսուսերսն շողացուցանէին՝ մինչ համարել նոցա որ 'ի ներքս էին՝ թէ շարժի սրբութիւնս Աստուծոյ։ Իսկ երանելի քահանայապետն Աստուծոյ առ ոչինչ համարէր զձայնս աղաղակին, այլ բոլորով սրտիւ զսուրբ խորհուրդն կատարեալ, ճաշակէր ինքն և բաշխէր ամենայն քրիստոնէիցն 'ի մեղսաքաւիչ խորհրդոյն։

Եւ մինչդեռ չև ևս էր քաջ զխորհուրդն կատարեալ, խորտակէին զինուորքն զդրունս եկեղեցւոյն, և մտեալ 'ի ներքս սուսերաւ՝ բարձին զգլուխ նորա. և առ ետեղ խառնեցաւ վկայական արիւնն ընդ անապական արեանն Քրիստոսի։ Որ և հրաշալի իմն խորհուրդ անդ կատարեցաւ, և մեծաց բարեաց առհաւատչեայք. քանզի յայտնի ցուցաւ ամենեցուն՝ եթէ որք վասն անուանն Քրիստոսի չարչարանս և մահ ընդունին, ոչ միայն նման նմա լինելոց են, այլ և ընդ նմա միանալոց են, ըստ ինքեան իսկ Տեառն ձայնի, զոր ասէր առ Հայր 'ի ժամանակի կենարար չարչարանացն, թէ՝ Որպէս դու Հայր յիս, և ես 'ի քեզ, այսպէս և սոքա 'ի մեզ լիցեն։ Եւ յորժամ կատարեցաւ սուրբ այրն Աստուծոյ այսպիսի մահուամբ, թողեալ զինուորացն զայլ բազմութիւնն՝ 'ի բաց դրնացին, քանզի վասն նորա միայն ունէին հրաման սպանման։

Յայնժամ առեալ բազմութեանն զբարեյաղթ մարմին երանելւոյն, ողբերգական ձայնիւ լային զորբութիւնն իւրեանց. և արարեալ նմա դիր արժանաւոր ըստ վկայական պատուոյն Ղուկիոսի։ Եւ փոխանակ նորա կամօք ամենայն բազմութեանն և ընտրութեամբ Հոգւոյն սրբոյ ձեռնադրեցաւ յաթոռ հայրապետութեանն Հռովմայեցւոց սուրբն Քսեստոս, որ էր ճշմարտապէս արժանաւոր սրբոյն Ստեփանոսի վարդապետութեանն։

Այր ոմն երանելի Տարսիկոս անուն՝ գաղտաբար սպասաւորէր ճգնազգեաց մարմնոյ երանելւոյն Ստեփանոսի։ Եւ յետ սակաւ աւուրց անցանելոյ կատարման սրբոյն, խորհուրդ արարեալ կռապաշտիցն՝ կամէին 'ի բաց առնուլ զսուրբ մարմինն. և ըմբռնեալ զերանելին Տարսիկոս՝ նեղէին զնա ցուցանել նոցա. իսկ նա անարժան համարէր արկանել զպատուական մարգարիտն առաջի խոզիցն. և այնքան դժնդակ զնա արիւնարբու կռապաշտքն հարին բրօք և քարամբք ջախջախեցին, մինչև առժամայն 'ի ձեռս նոցա նուաղեալ աւանդեաց զհոգին 'ի Քրիստոս, որ և սքանչելիք իմն եղեն. զի թէպէտ և մեռաւ, սակայն իբրև զկենդանի պահապան եղև սրբոյն՝ ոչ տալով 'ի ձեռս անսրբոցն. քանզի ահագին արհաւիրք անկաւ 'ի վերայ անօրինացն. Թողեալ 'ի բաց գնացին։ Իսկ վկայասէրք ոմանք 'ի քրիստոնէիցն զճգնազգեաց մարմինն Տարսիկոսի առեալ սաղմոսիւք և օրհնութեամբ և երգովք հոգևորօք՝ թաղեցին յարժանաւոր տեղւոջ։

Արդ այսպէս վկայեաց երանելին Ստեփանոս քահանայական և մարտիրոսական արժանաւորութեամբն ճոխացեալ. որ ոչ թէ միայն զինքն արժանաւոր պատարագ մատոյց Աստուծոյ, այլ և 'ի ձեռն վարդապետական բանի զբազումս ընծայեաց Աստուծոյ 'ի կենդանութեանն իւրում և զկնի մահուանն. որ և զյիշատակս նորա յոր կատարման նորա տօնեն ամենայն բազմութիւնքն Հռովմայեցւոց. և առ նմին որք 'ի ձեռն նորա ընծայեցան 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Վառվառեայ և Յուլիայ։

Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ թագաւորեաց ամպարիշտ և անօրէնն Մաքսիմիանոս, և զօրանայր հալածումն քրիստոնէից. և առաքէր զօրագլուխս և դատաւորս ընդ ամենայն տեղիս տէրութեան իւրոյ, չարչարել և բառնալ 'ի միջոյ զկարգս և զկրօնս քրիստոնէից և բռնադատել զնոսա զոհել կռոցն։ Յայնժամ առաքեաց զոմն դատաւոր յարևելս, որում անուն էր Մարկիանոս, որ էր ազգաւ և կրօնիւք Հելլենացի, այր անաստուած միանգամայն և վայրենամիտ։ Եւ եկեալ նորա յաշխարհն արևելից յԻլիուպօլիս կոչեցեալ քաղաք, որ ասի Արեգական քաղաք, որ մերձ յԵւխայիտա է քաղաք քսան ասպարիզաւ[1]։ Եւ էր անդ այր մի բնակեալ որում անունն էր Դէոսկորոս, որ էր մեծատուն յոյժ և ազնուական և հեթանոս հաւատովն. և էր նորա դուստր մի միամօր և անուն նորա Վառվառ, և էր յոյժ գեղեցիկ և վայելուչ հասակաւ։ Եւ հրամայեաց հայրն նորա շինել աշտարակ նմա բարձր, և անդ հանեալ բնակեցոյց զնա, որպէս զի մի տեսցի նա յումեքէ։ Եւ ել համբաւ գեղոյ նորա ընդ երկիրն ընդ այն. և 'ի մեծամեծաց իշխանացն խնդրէին զնա 'ի հարսնութիւն յօրինաւոր ամուսնութիւն զաւակաց իւրեանց։

---

[1] Միւս օր. Որ յԵւխայիտա և 'ի Գիլիա գեօղն, որ հեռի է յԵւխայիտէ քան ասպարիզաւ։

Իսկ յաւուր միում ելեալ հայր նորա 'ի յաշտարակն տեսանել զդուստրն իւր, և ասէ ցնա. Որդեակ իմ Վառվառէ, ահաւասիկ պատրաստեալ է քեզ առագաստ հարսանեաց, տալ ինձ զքեզ 'ի տունս մեծատանց 'ի կնութիւն որդւոց իւրեանց. և արդ զի՞նչ խորհիս դու 'ի սրտի քում, ասա՛ ինձ համարձակ: Իսկ նորա խոժոռեալ ընդ բանս հօրն իւրոյ՝ միանգամայն յոյժ տրտմեալ եղև[1]. և հայեցեալ յերկինս՝ յոգւոց եհան և ասէ ցհայրն իւր. Ո՛վ հայր իմ, մի՛ աշխատ առներ զթշուառական անձն իմ տառապեալ, և մի՛ ստիպեր զիս անձամբ անձին դատ առնել, և զրկելով զիս 'ի քաղցր և յառանց զբաղման կենացս այս: Իսկ հայր նորա 'ի հիացման եղեւ, թողեալ զնա և իջանէր 'ի խոնարհ:

Եւ զհետ աւուրց՝ խորհեցաւ շինել մերձ 'ի յաշտարակն բաղանիս մի, և հրամայեաց հայր նորա փութացուցանել զարուեստաւորսն առ 'ի շինուած բաղանեացն. և կատարեալ զգործ շինուածոյն և յանձն առնէր զնոսա գործակալացն. և ինքն հեռացեալ գնաց 'ի տար աշխարհս, և անդ կացեալ ժամանակս բազումս: Իսկ 'ի յաւուր միում յարուցեալ Վառվառեայ իջեալ 'ի յաշտարակէ անտի և տեսանէր զշինուածս բաղանեացն, և նկատէր զպատուհանսն լուսարանացն[2], զի երկուս միայն էին արարեալ 'ի հիւսիսեան կողմն: Եւ ասէ ցնոսա սուրբն Վառվառ. Ո՛վ ճարտարապետք, ոչ էք հմուտ գործոյ շինուածոյդ. վասն զի երկու պատուհան միայն էք թողեալ: Եւ ասեն ճարտարապետքն. Ո՛վ տիկին, վասն զի զհրամանս հօրն քո կատարեմք: Ասէ ցնոսա աղախինն Քրիստոսի. Եղիցի միւս ևս այլ պատուհան հրամանաւ իմով. զի երեք եղիցին լուսարանք պատուհանացդ: Ասեն ցնա. Ահա հրամանաց քոց անսամք. այլ երկնչիմք 'ի ցասմանէ հօրն քո, գուցէ բարկանայցէ 'ի վերայ մեր և արձակիցէ զմեզ 'ի տանջանս, և ոչ ոք կարէ ճողոպրել զմեզ 'ի ձեռաց նորա: Ասէ ցնոսա երանելին. Զամենայն երկիւղ հալածական արարէք 'ի սրտից ձերոց, և ես հաւանեցուցից զհայր իմ ներել ձեզ։ Իսկ ճարտարապետքն վաղվաղակի կատարեցին զհրամանս նորա, և արարին երեք լուսարանս բաղանեացն։ Իսկ երանելին Վառվառ երթայր մերձ ՚ի մարմարիոն աւազանսն լուարանացն որ էր ՚ի կողմն արևելից. և ձեռօքն իւրովք նկարագրէր զդրոշմն սրբոյ նշանի խաչին Քրիստոսի. որպէս ՚ի կակուղ նիւթոյ կամ ՚ի վերայ մոմոյ տպաւորէին տիպք ձեռաց[1] նորա, և յայտնի երևէին մինչև ցայսօր ժամանակաց. և ՚ի զարմացումն և ՚ի զղջումն եկեալ տեսողացն. նոյնպէս և հետք ոտիցն երևէր ՚ի վերայ քարեղէն աւազանին, որ և մերձեցելոցն առողջութիւն շնորհէր, որպէս ՚ի Պրոբատիկէ աւազանին ՚ի Սելովմայ աղբիւրն։

---

[1] Միւս օր. միանգամայն և տրտմեցեալ:

[2] Միւս օր. լուսարանս պատուհանացն:

Իսկ երանելի կոյսն յարուցեալ եմուտ յապարանսն հօր իւրոյ. և տեսեալ անդ զաստուածս նորա զոր պաշտէր, և քամահեալ թքանէր յերեսս նոցա և ասէր. Նման լիցին նոցա որք արարին զսոսա և ամենեքեան որք յուսացեալ են ՚ի սոսա։ Եւ ելեալ ՚ի յաշտարակն իւր, և անդ կայր և առանձինն աղօթս մատուցանէր առ Աստուած. և խնդրելով ՚ի Տեառնէ զարքայութիւն ՚ի ձեռն հեղման արեանն իւրոյ։ Իսկ իբրև կատարեցաւ շինուած բաղանեացն, այն որ եղև նմա առիթ փրկութեան և աւազան վերստին ծննդեանն, և եկեալ ամպարիշտ հայր նորա՝ և մտեալ ՚ի բաղանիսն[2], և տեսեալ երիս լուսաւորս ՚ի նմա և ասէր ցարուեստաւորսն. Ընդէ՞ր ստունգանեցէք պատուիրանաց իմոց և արարէք զայսոսիկ։ Պատասխանի ետուն գործաւորքն և ասեն. Ոչ ՚ի յանձնահաճութենէ արարաք զայդոսիկ, այլ ՚ի հրամանաց սիրեցեալ զաւակին քո։ Յայնժամ կոչեաց զերանելին և ցասմամբ ասէ ցնա. Դո՞ւ ետուր հրաման արուեստաւորացս՝ երիս պատուհանս առնել բաղանեացս իմ։ Պատասխանի ետ հօրն և ասէ. Այո, ես հրամայեցի զայդ առնել, վասն զի երկուսն ոչ ունէր զանձնաւորութիւն[3] սրբոյ Երրորդութեանն. քանզի երեք լուսով լուսաւորի մարդ որ գալոց է յաշխարհս, և միով աստուածութեամբ ժառանգէ զկեանսն յաւիտենից. և զայս երիս լուսարանս վասն այնորիկ արարաք, յանուն Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն ետու յօրինել:

---

[1] Միւս օր. գիծք ձեռացն։

[2] Միւս օր. ՚ի լուսանալն . . . [illegible] երիս լուսարանս։

[3] Միւս օր. [illegible] [illegible]նաւորութիւն։

Յայնժամ ասէ ցնա հայրն իւր. Ո՛վ որդեակ, ոչ գիտեմ զոր ինչ ասես զառակաւոր զբանսդ զայսոսիկ. արդ ասա յայտնապէս, զի իմացեալ ծանեայց զասացեալսդ 'ի քէն: Պատասխանի ետ կոյսն և ասէ. Հայր և Որդի և Հոգի սուրբ, որպէս յառաջն ասացի քեզ, մի աստուածութիւն և երեք անձնաւորութիւն. Հայր անսկիզբն, Որդի սկզբնակից և ոչ արարած, ծնեալ 'ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս և քան զժամս և զժամանակս, և քան զսկիզբն ժամանակի. և ծնեալ 'ի կուսէ աստուածութեամբ և մարդկութեամբ, և խաչեալ կամաւորաբար վասն մերոյ փրկութեան. վասն որոյ և ես հանդերձեալ եմ վկայել վասն նորա. և Հոգին սուրբ մշտնջենաւոր և ճշմարիտ էակից և համագոյակից, որով և ծանեաք զսուրբ զերրորդութիւնն:

Զայս ամենայն իբրև լուաւ ամպարիշտ հայր նորա՝ բորբոքեալ չարաչար ցասմամբ՝ համբարձեալ զսուսերն իւր և առ ժամայն կամէր սպանանել զնա: Եւ մինչդեռ վերացուցեալ ունէր զձեռն, սկսաւ սուրբ աղախինն Քրիստոսի աղօթս մատուցանել առ Աստուած 'ի սրտին իւրում. և նոյնժամայն վէմն որ կայր հանդէպ բաղանեացն՝ պատառեցաւ խորանաձև 'ի յերկուս մասունս, և առեալ ժողովեաց զսուրբ վկայն 'ի ծոց իւր: Իսկ իբրև մեկնեցաւ հայրն նորա 'ի տեղւոջէն յայնմանէ, և ահա եղեալ լինէր երանելին 'ի տեղւոջէն յայնմանէ ողջանդամ և անարատ 'ի միջոյ վիմէն: Ո՛վ մեծ սքանչելեացս, և անագորուն մնաց սրտի հօրն նորա, որ ոչ անկաւ զղջումն 'ի սիրտ նորա՝ 'ի վերայ անպատում սքանչելեացն. վասն որոյ և գրեալ իսկ է, եթէ՝ Սիրտ անօրէնի ոչ մտանէ յերկիւղ Տեառն[1], և ոչ է Աստուած առաջի աչաց նորա:

Եւ սուրբն Վառվառէ եղեալ փախչէր յերեսաց հօրն իւրոյ: Իսկ հայրն իբրև զարիւնարբու գազան՝ եղեալ վարէր զհետ նորա. և ել 'ի լեառն և խնդրէր զերանելին Վառվառ. և ահա տեսանէր 'ի լերինն հովիւս երկուս զի արածէին զհօտս իւրեանց. և հարցանէր ցնոսա եթէ արդեօք տեսեալ իցէն զնա։ Իսկ միւսն 'ի նոցանէ կամեցաւ ստել վասն նորա զի մի 'ի բուռն անկցի սուրբն և սպանցի, և երդնոյր նմա եթէ ոչ ես գիտեմ զնա թէ ուր իցէ, և ոչ ես տեսեալ իցեմ զնա։ Իսկ ընկեր նորին ակնարկեալ և նշանացի սկսաւ ցուցանել նմա զաղախինն Քրիստոսի։ Զորս և անիծեալ սրբոյն՝ զանօրէն հովիւն զայն, և առժամայն մածեալ արձանացաւ հանդերձ ոչխարօքն, որպէս զկինն Ղովտայ. և կայ մինչև ցայսօր նովին կերպարանաւ, կամ քարացեալ 'ի նմին տեղւոջ 'ի ցոյց տեսողաց։ Իսկ ամպարիշտ և չարադև հայր նորա՝ խնդրեալ եգիտ զնա 'ի խորշ մի վիմի թագուցեալ, և բուռն հարեալ ապտակեաց զնա չարաչար հարուածովք. և կալեալ զհերաց նորա քարշէր մինչև 'ի դուռն բանտին. և արգելեաց զնա 'ի սենեակ մի և կնքեաց մատանեաւ իւրով, և պատուէր տայր սպառնալեօք պահապանացն զի մի զոք թողուլ մտանել 'ի բանտին և մի տալ զպէտս մարմնոյ իւրոյ. և ամենայն զգուշութեամբ պահել զնա, մինչ ինքն ազդ արասցէ դատաւորին Մարկիանոսի վասն նորա։

---

[1] Միւս օր. 'Ի սիրտ անօրէնին ոչ հասանէ երկիւղ Տեառն:

Եւ յետ աւուրց ինչ՝ հրաման առնու 'ի դատաւորէն ածել զնա զառաջեաւ. և առեալ ընդ ինքեան զզօրագլուխ մին[1] որ էր անօրէն և անաստուած. և հանեալ զսուրբ կոյսն 'ի բանտէն և մատնեաց 'ի ձեռս դատաւորին. և երդմնեցուցեալ զնոսա 'ի չաստուածսն իւրեանց և 'ի բախտ ինքնակալացն, զի դառն և անողորմ տանջանօք և չարաչար հարուածովք սպանցէ զնա։ Յայնժամ դատաւորն Մարկիանոս նստեալ յատենի 'ի վերայ բարձր բեմբի 'ի մէջ բազմամբոխ հրապարակի, և հայեցեալ և տեսեալ զնկարագիր պարկեշտ և գեղեցիկ կուսին Վառվառեայ, և ասէ ցնա. Ո՛վ ազնուական և վայելուչ 'ի կանայս, դուստր իմ պատուական, այսուհետև ոչ պիտոյ է քեզ զանազան հարցմանց՝ զի կարի յոյժ իմաստուն երևիս և

---

[1] Միւս օր. 'ի դասէ զօրագլխացն ծեր զմն։

հեզ և հանդարտ. և արդ կամիմ հարցանել ցքեզ, զի՞նչ կամիս ասա ինձ. արասցես զկամս ինքնակալին և զոհեսցես աստուածոցն, և պաշտել ընդ նոսա և վայելել 'ի փառս հայրենի աշխարհիս և դուստր թագաւորաց կոչիլ, եթէ զրկիլ 'ի քաղցր կենացս յայսցանէ և չարչարիլ իբրև զմահապարտս մեծամեծ տանջանօք, մոլորեալ և զհետ երթեալ Գալիլեացւոյն, և Աստուած խոստովանել զնա որ 'ի Հրէից չարչարեալ մեռաւ, զոր և ես նախատինս համարիմ թողուլ զանմահ աստուածսն և զհետ երթալ մեռելոյ ումեմն և մատնիլ 'ի դառն տանջանս որ մաշեն զգեղեցկութիւնս քո. և այն որ զանձն իւր ոչ կարաց փրկել՝ զիա՞րդ կարասցէ զքեզ ապրեցուցանել:

Պատասխանի ետ աղախինն Քրիստոսի և ասէ ցդատաւորն. Ես այսուհետև պատրաստեալ եմ զանձն իմ մատուցանել պատարագ Աստուծոյ կենդանւոյն յաւիտենից, այն որ արար զերկինս և զերկիր և որ 'ի նոսա արարածք իցեն. որ խոնարհեալ գթացաւ յարարածս իւր, և եղև մարդ ճշմարտապէս և զամենայն ինչ կրեաց առանց մեղաց. և 'ի խաչ ելեալ մարմնով սասանեցոյց զանդունդս դժոխոց, և կապեաց զիշխանն մահու հանդերձ խաւարային դևօքն. զոր դուք այժմ մոլորեալ էք 'ի նոցանէ վասն անգիտութեան ձերոյ և յիմարութեան, որ զնոսա աստուածս խոստովանիք. և զայն՝ որ շնորհեաց մեզ զանսպառ և զանանց բարութիւնս՝ հայհոյէք. բարի և կեանք աշխարհիս այսորիկ, քանզի և սա արարած է Աստուծոյ մեծին. և ոչ եթէ ես մահու ցանկացեալ եմ փախչելով յարարածոց նորա. բայց չար այն է[1] որ զհետ երթան պատրանաց չարին որսացեալք 'ի նորա կորուստն, և որք անառակ ցանկութեամբ և անաստուածութեամբ վարին, որ զանսպառ և զմշտնջենաւոր տանջանսն են ժառանգելոց՝ որ իբրև զձեզդ են, և չաստուածք ձեր ընդ ձեզ այրելոց են յանշէջ գեհենին: Այլ ես այնմ կենացն ցանկացեալ եմ, որոյ տէրութիւնն ոչ անցանէ և բարիքն ոչ հատանին. ես նմա երկիր պագանեմ և զնա փառաւորեմ, որ զայսպիսի փառս և զհանգիստ շնորհեաց մեզ։ Իսկ վասն աստուածոցդ քոց մարգարէն ասէ, եթէ՝ Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ են՝ ձեռագործք մարդկան. և, Աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն 'ի ներքոյ երկնից։

---

[1] Միւս օր. այնոցիկ է:

Յայնժամ բարկացեալ թագաւորն՝[1] հրամայեաց կապել զնա և արջառաջլօք հարկանել անխնայ, և մազեղինօք շփել զմարմինս նորա և զվէրսն, մինչև ամենայն մարմինն շաղախեցաւ յարենէն. և հրամայեաց 'ի բանտ արկանել զնա, և 'ի կոճեղս պնդել զոտս նորա, մինչև խորհեսցի թէ որով չարչարանօք սպանցէ զնա։ Եւ ահա 'ի մէջ գիշերին լոյս ծագեաց 'ի բանտին և փայլէր իբրև զճառագայթս արեգական, և լուսաւորեաց զխաւար գիշերոյն. և երևեալ Փրկիչն ասէ. Քաջալերեաց և զօրացիր, անպարտելի և սիրեցեալ վկայ իմ Վառվառիէ, զի նահատակութիւնդ քո բազում ուրախութիւն է հրեշտակաց 'ի յերկինս, և մարդկան 'ի յերկրի. և մի երկնչիր յայսմ հետէ 'ի սպառնալեաց բռնաւորիդ. քանզի ընդ քեզ եմ 'ի փրկել զքեզ յամենայն հարուածոց՝ որ գալոց է 'ի վերայ քո։ Եւ զայս ասացեալ Փրկիչն և կնքեալ զնա՝ վաղվաղակի ողջացեալ բժշկեցաւ վէրք մարմնոյ նորա. և ինքն հանդերձ հրեշտակօքն վերանայր յերկինս։ Իսկ սուրբ վկայն ուրախացեալ ցնծայր 'ի վերայ անպատում սքանչելեացն Աստուծոյ և խոստմանց Փրկչին։

Յայնժամ մի ոմն աստուածապաշտ և երկիւղած յԱստուծոյ, անուն նորա Յուլիանէ, որ զհետ շրջէր սրբոյն Վառվառեայ, և տեսանէր զհանդէս նահատակութեան նորա, և զամենայն սքանչելիսն որ լինէր 'ի ձեռս նորա, և ողջացեալ եղև 'ի վիրացն և 'ի չար հարուածոցն. և փառաւորէր զԱստուած 'ի վերայ անպատում սքանչելեացն. և յոյժ ցանկայր զջանս նահատակութեան կրել յանձն իւր վասն Քրիստոսի։

Եւ 'ի վաղիւն հրամայեաց դատաւորն առաջի իւր ածել զերանելի կոյսն. և հայեցեալ տեսանէր զվէրս մարմնոյ նորա ողջացեալ, և զինքն ուրախ և զուարթ

---

1. Միւս օր. դատաւորն։

յամենայնի։ Ասէ ցնա դատաւորն. Տեսե՞ր զխնամսն աստուածոցն 'ի վերայ քո, թէ որպէս բժշկեցին զվէրս քո, Վառվառիէ։ Պատասխանի ետ երանելին և ասէ ցնա. Ո՛վ դատաւոր, աստուածքն քո կոյրք են և համրք, և յոյժ անմտագոյն իբրև զքեզ. և ոչ երբէք զգան զցաւս մարդկան, և ոչ բարի կարեն առնել և ոչ չար. և մեք որ զգայութիւն ունիմք և ճանաչեմք զԱստուած՝ ոչ կարեմք թողուլ զլոյսն և ընթանալ առ խաւարն. հեռանալ յԱստուծոյ կենդանւոյ և պաշտել զմեռելոտի կուռսն։ Այլ եթէ դու զհետ գաս ճշմարտութեանն և հեռանաս 'ի մնոտի խաբէութենէդ, և ես քեզ ցուցանեմ զողջացուցիչն իմ, որ է Յիսուս Քրիստոս Աստուած իմ և Տէր փրկիչ աշխարհի, զոր դու ոչ տեսանես. վասն զի խաւարեալ են աչք հոգւոյդ 'ի խարդախութենէ[1] դիւաց, և 'ի մնոտի անցաւոր փառաց աշխարհիս։ Յայնժամ սրտմտեալ դատաւորն և իբրև զառիւծ կրճտեաց զատամունս իւր. հրամայեաց կախել զնա և քերել զկողս նորա, և հուր բորբոքեցուցանել 'ի ներքոյ նորա. և կապարեայ գնդաւ հարկանէին զգլուխ նորա։

Իսկ իբրև ետես երանելի աղախինն Քրիստոսի Յուլիանէ՝ կական բարձեալ և լայր դառնապէս, ողորմ արտասուօք և կոծելով զանձն։ Յայնժամ հարցանէր դատաւորն ցզինուորսն և ասէր. Ո՞վ արդեօք է կինդ այդ՝ որ այդպէս ջերմեռանդն արտասուօք լայ և ողբայ ձայնիւ մեծաւ վասն անօրինին Վառվառեայ։ Պատասխանի ետուն զինուորքն[2] և ասեն. Քրիստոնեայ է, և ահա ցաւակից լինելով դմա և վասն այնորիկ լայ և ողբայ աշխատաբար։ Յայնժամ դատաւորն ևս առաւել բարկացեալ և հրամայեաց կրկին կախել և քերել զնա, և 'ի ներքոյ որովայնին հուր բորբոքել։ Իսկ երանելին յերկինս համբարձեալ զաչս իւր՝ ասէ. Դու սրտագէտդ ես Աստուած իմ Յիսուս Քրիստոս, անստուեր լոյս՝ որ լուսաւորեցեր զարարածս աննուաղելի ճառագայթիւք, հայեաց 'ի տառապանս աղախնոյ քո, և տես զանձուկ փափագումն սրտի իմոյ, և մի՛ հեռի առներ զօգնականութիւն քո յինէն, Տէր և Աստուած իմ. այլ հաստատեա զոտս իմ[1] 'ի վերայ վիմի հաստատութեան հաւատոյ, և անսասանելի պահեա յորոգայթից թշնամւոյն, զի մի՛ վասն տկարութեան մարմնոյս զարհուրեալ զանգիտեցից 'ի վկայական[2] հանդիսի իմոյ մրցմանս։ Այլ զօրացո զիս քարոզել և խոստովանել զաստուածութիւնդ քո առաջի անաստուած հեթանոսացս և ոչ ամաչել, ըստ սաղմոսելոյ մարգարէին Դաւթի՝ որ ասէ. Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց և ոչ ամաչէի։

---

[1] Միւս օր. խորամանկութենէ։

[2] Միւս օր. յառաջաւորքն համ- դէրէջ զինուորքն . . . ողբայ աշխար- չէալ։

Յայնժամ հրամայեաց անօրէն դատաւորն սուսերահատ առնել զստինս նորա։ Եւ իբրև զայն արարին անօրէն դահիճքն՝ սուրբ կոյսն հայեցեալ յերկինս ասէր. Տէր իմ Յիսուս Քրիստոս, մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն և զհոգիդ քո սուրբ մի՛ հաներ յինէն։ Յայնժամ ուրախացեալ յոյժ երանելի կոյսն 'ի Հոգւոյն սրբոյ, և համբերեալ լինէր և այնմ տանջանացն։ Յայնժամ հրամայեաց դատաւորն զՅուլիանէ արկանել 'ի բանտն և պահել զգուշութեամբ։ Իսկ զսուրբն Վառվառէ մերկացուցանել հրամայէր խայտառակս, և ձաղանօք քարշէին և շրջեցուցանէին ընդ ամենայն գաւառն։ Իսկ երանելի վկայն Վառվառեայ հայեցեալ յերկինս և սկսաւ աղօթս մատուցանել առ Աստուած և ասէ. Տէր Աստուած, Հայր ամենակալ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որդւոյ քո, որ զգեցուցեր զերկինս ամպօք և զգեցար զլոյս որպէս զօթոց. դու լեր զգեցուցիչ անարժան ծառայի քո, և ծածկեա զմերկութիւն մարմնոյ իմոյ, զի վասն քո զնախատինս յանձն առի. և մի՛ առներ զիս նշաւակ թշնամեաց իմոց ամպարշտաց և մեղաւորաց։ Եւ իբրև կատարեաց զաղօթսն՝ յայնժամ երևեցաւ Փրկիչն մեր Քրիստոս քերովբէական կառօք, և առաքեաց զհրեշտակս իւր և ծածկեաց զնա լուսեղէն զգեստիւք. և համարձակութեամբ շրջէր երանելի կոյսն։ Եւ դարձեալ ածին զերանելի նահատակն առաջի դատաւորին 'ի յԱսկաղոնի[3] քաղաքի, և վճիռ ետ 'ի վերայ սրբոյ կուսին Վառվառեայ զի սրով հատցեն զգլուխ նորա, հանդերձ Յուլիանեաւ նահատակցաւ իւրով։

---

[1] Միւս օր. զոտքս իմ։
[2] Միւս օր. վկայարան։
[3] Միւս օր. յԱսկաղոն... վըճիռ... նախապատուեցաւ։

Յայնժամ սրտմտութեամբ և բարկութեամբ լցեալ անօրէն և ամպարիշտ հայրն նորա, և առեալ զսուրն Վառվառ 'ի դատաւորէն, և եհան զնա 'ի լեառն. և երթայր երանելին զհետ գազանացեալ հօրն իւրոյ յօժարութեամբ, զի փաղփաղակի զկատարումն առցէ և հասցէ անապառ և անթառամ պսակացն 'ի Քրիստոսէ։ Եւ մինչ երթայր երանելին Վառվառիէ՝ սկսաւ աղօթել առ Աստուած և ասէ. Նախայաւիտեան Բանդ Աստուած, անսկիզբն և անհասանելի լոյս, պատկեր սրբոյ քոյ, որ արարիչդ ես և տէր բոլորից. դու ձգեցեր զերկինս որպէս կամար, և զերկիր հաստատեցեր 'ի վերայ ջուրց, որ հրամայեցեր ցօղածին ամպոց տալ անձրև և արդարոց և մեղաւորաց, և զարեգակն ծագես 'ի վերայ չարեաց և բարեաց. որ գնաս 'ի վերայ թևոց հողմոց, և սանդարամետք անդընդոց սարսեն 'ի քէն։ Եւ ահա յայնժամ ձայն եղև յերկնից և ասէ. Եկ, ո՛վ Ազնաւոր անպարտելի և քաջ նահատակ, և հանգիր։ Եւ սուրբն ասէր. Ո՛վ Տէր, որ շրջիս 'ի վերայ ծովու իբրև յատակի. և դու, Տէր, սաստեցեր ալեաց նորա, և խորք դադարեցուցին զալիս իւրեանց, և հողմք լռեցուցին զձայնս իւրեանց. և ամենայն տարերքս հնազանդեալ կան կամաց քոց. Տէր իմ Յիսուս Քրիստոս, պարգևեա աղախնոյ քո զխնդրուածս իմ, և լուր Տէր Աստուած իմ, աղախնոյ քո. որպէս զի թէ ոք հաւատով կատարեսցէ զյիշատակս իմ, լուր, Տէր, խնդրուածոց նորա, և տուր շնորհ ոսկերաց իմոց. և կատարեա զհայցուածս նոցա, և փրկեա, Տէր, յամենայն նեղութեանց նոցա. 'ի սովոյ, 'ի սրոյ, 'ի հիւանդութենէ, 'ի ծաղկէ, 'ի տապաստէ և 'ի տարաժամ մահուանէ. և մի յիշեր, Տէր, զմեղս նոցա յաւուր արդար դատաստանաց քոց. այլ թո՛ղ, Տէր, զմեղս իւրեանց, և ընկալ զհոգի իմ խաղաղութեամբ։

Եւ ահա ձայն եղև յերկնից որ ասէր. Եկ, ո՛վ Ազգնազգեացդ և անպարտելի նահատակդ. և հանգիր յշտեմարանս արքայութեան իմոյ, հանդերձ Յուլիանեաւ սիրելեաւդ իմով. և ահա վասն որոյ խնդրե-

ցերդ՝ ամենայն եղիցի քեզ։ Եւ իբրեւ կատարեցաւ երկնային խոստմանցն բանքն, յայնժամ ամպարիշտ եւ անօրէն հայրն նորա յարուցեալ 'ի վերայ աղախնոյն Աստուծոյ սրբոյն Վառվառեայ, եւ սուսերաւ եհատ ըզգլուխ նորա. եւ կատարեցաւ բարի խոստովանութեամբ 'ի Քրիստոս։ Եւ մի ոմն 'ի զինուորացն եհատ զգլուխ Յուլիանեայ կուսին 'ի նմին տեղւոջն։ Եւ եղեւ ընդ իջանելն նոցա 'ի լեռնէն՝ հուր անկաւ յերկնից եւ այրեաց զդատաւորն եւ զամպարիշտ հայրն նորա, որ իբրեւ զփոշի անյայտ եղեն[1]։

Կատարեցան սուրբ վկայքն Քրիստոսի եւ քաջ նահատակքն Վառվառ եւ Յուլիանէ՝ յամսեանն 'ի դեկտեմբերի 'ի չորրորդում աւուրն։ Իսկ այր ոմն Վաղենտիանոս անուն՝ աստուածապաշտ եւ երկիւղած յԱստուծոյ, խնդրեաց 'ի փոխանակէ դատաւորին զնշխարս սրբոցն, եւ պատուական զգեստիւք պատուեաց զնոսա. եւ պատուով պահեաց, եւ թաղեաց մերձ յԻլիուպօլիս քաղաքի։ Եւ մինչեւ ցայսօր նշանագործեն նշխարք սրբոց վկայիցն, 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

[1] Միւս օր. որ եւ փոշին իսկ անյայտ եղեւ։

Վկայաբանութիւն Սրբոյ կուսին Վասիլուհեայ։

Աղէքսանդրոս դատաւոր Նիկոմիդիայ քաղաքի, մոլորեալ 'ի սնոտի կուռս, հրամայեաց զամենայն զքրիստոնեայս որք 'ի քաղաքին իցեն կամ 'ի գաւառին, առ հասարակ զարս և զկանայս կամ զոհել աստուածոցն և կամ չարաչար տանջանօք մեռանել։ Յայնժամ ընթացեալ դահիճքն ըստ հրամանի դատաւորին՝ ըմբռնեցին յեկեղեցւոջն 'ի նմին քաղաքի որոջ մի սուրբ, պարարտ հաւատովք, և յափշտակեալ իբրև զգայլս 'ի հօտէն Քրիստոսի, կացուցին առաջի դատաւորական բեմին Աղէքսանդրի։ Իսկ դատաւորն իբրև ետես զտղայութիւն տիոց նորա և զգեղեցկութիւն տեսլեանն և զհամեստութիւն կերպարանաց նորա՝ յայնժամ հարցանէր որ շուրջն կային, թէ քանիամեա՞ն իցէ. և իբրև ուսաւ եթէ իննամեան, այլ և կատարեալ է իմաստութեամբ աստուածային գրոց, յայնժամ սկսաւ ասել ցնա դատաւորն. Ասա, աղջիկ դու, զանուն քո և զբախտ, և զոհեա աստուածոցն յառաջ քան զապականել իմ չարաչար տանջանօք զգեղեցկութիւն հասակի քո։ Իսկ սրբուհին լցեալ իմաստութեամբ Հոգւոյն սրբոյ, կնքեալ զինքն նշանաւ սուրբ խաչին՝ ասէ. Զանուն իմ հարցանես, ո՛վ դատաւոր, և զբախտ. Վասիլուհիա կոչիմ 'ի ծնողաց իմոց, քրիստոնէութեամբ սնեալ, այլ և ծառայ Քրիստոսի և նմին հարսնացեալ, սպասեմ անապական զգեստուցն և անմահ փեսային և մշտընջենաւոր հարսանեացն. այլ և զոհել դիւաց ոչ կամիմ, թէպէտ և բիւր ազգի ազգի տանջանս ածես 'ի վերայ իմ. այս է համառօտ պատասխանի իմ, այլ ինչ առաւել քան զայս չես լսելոց։

Յայնժամ դատաւորն յուսահատեալ 'ի համարձակութեամբ վճռէ պատասխանւոյ երանելւոյն, հրամայեաց կախել զնա գլխիվայր, և անողորմ հարկանել ջալոտիւք, մինչև մերկացաւ ամենայն մարմինն նորա։ Իսկ երանելին այնչափ ջեռեալ 'ի սէրն Քրիստոսի և զօրացեալ շնորհօք սուրբ Հոգւոյն, առ այն տանջանսըն անգամ չզգունատեալ այլայլեաց. իսկ դատաւորն յորժամ ետես զտեսիլ երեսաց նորա՝ զի և ոչ կերպարանօք ինչ կրեաց զտանջանսն, հրամայեաց իջուցանել զնա և ծակել զպճղունս և զկարթ ոտից նորա, և արկանել 'ի ներքս շղթայս երկաթի, և դարձեալ կախաղանաւ վերացուցանել, և 'ի ներքոյ երեսաց նորա ծխել ծծումբ նաւթիւ խառնեալ, զի 'ի տապախառն բոցոյն և 'ի դժնդակութենէ հոտոյն հեղձեալ առժամայն մեռցի. և նա ոչ պակասեալ յօրհնաբանութեանց, և յայնմանէ ևս ապրեալ լինէր զօրութեամբն Աստուծոյ։ Իսկ դատաւորն յորժամ ետես զի և այն ևս տանջանարանքն յաղթեալ գտան՝ ամօթ համարեալ զպարտութիւնն իւր 'ի տհաս հասակէն, հրամայեաց հնոց բորբոքել և անդ արկանել զերանելին։ Եւ կացեալ 'ի տեղւոջ հնոցին սուրբ վկայն Քրիստոսի՝ համբարձ զաչս իւր· յերկինս այսպէս ասելով. Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ զամենայն ինչ ներգործես որպէս և կամիս, որ և յակնարկել ամենազօր հրամանիդ՝ բնութիւնք արարածոց փոփոխին, արարչիդ ընդդիմանալ ոչ կարեն. դու Տէր, արա առ իս զքաղցրութիւն կամաց քոց, փոփոխելով զբոց հրոյս 'ի ցօղ որպէս երբեմն առ երեք սուրբ մանկամբքն սքանչելագործեցեր. զի ծանիցեն ամենեքեան զքեզ ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր 'ի փրկութիւն աշխարհի՝ զՏէր մեր Յիսուս Քրիստոս և զՀոգիդ սուրբ որ 'ի քէն ելանէ և լնու զամենայն արարածս. Երրորդութիւն սուրբ, միով բնութեամբ երկրպագեալ։ Եւ մինչդեռ նա զայս աղօթս մատուցանէր՝ յանկարծակի հրաշագործեցաւ հուրն 'ի նմանութիւն առագաստի, և սուրբն 'ի մէջ նորա որպէս զոսկի հրացեալ, և իբրև զարեգակն պայծառացեալ երևէր ամենեցուն յայտ յանդիման։

Իսկ դատաւորն իբրև զայս սքանչելիս ետես՝ զարհուրեալ 'ի բաց գնաց, և առ վաղիւն հրամայէր գազանաց արկանել զնա։ Եւ իբրև ամենայն քաղաքն ժողովեցաւ 'ի տեղի հանդիսին ուր զգազանսն արձակէին, և կացուցեալ զսուրբն 'ի մէջ ատենին՝ գրգռեցին 'ի վերայ նորա երկուս առիւծս։ Իսկ երանելին իբրև ետես զգազանս զայրացեալ 'ի վերայ իւր, յիշեալ զԴանիէլ՝ լի արտասուօք յերկինս նայեցեալ, և զդաւթեան երգմն զեօթներորդ սաղմոսն յերգ արկեալ եղանակաւ ողբերգական ձայնիւ Աստուծոյ մատուցանէր. և 'ի կատարման սաղմոսին՝ աղօթս մատուցանէր և վասն դատաւորին, զի մի՛ մնասցէ մինչև 'ի սպառ 'ի վիհս կորստեան։ Եւ իբրև զայս աղօթս մատուցանէր՝ վաղվաղակի եկեալ գազանքն առաջի նորա իբրև զընտանիս փարէին զնովաւ։

Յայնժամ տեսեալ զայս ամենայն սքանչելիս դատաւորն Ալեքսանդրոս, և ազդեալ 'ի նմա ճառագայթ աստուածային լուսոյն 'ի ձեռն աղօթից սրբոյն, եբաց զխաւարեալ միտս նորա ընդունել զբանն կենաց. և առժամայն անկեալ առաջի սրբոյն՝ աղաչէր զի մի՛ զըրկեսցի 'ի ճշմարիտ հաւատոյն. իսկ սրբոյն առեալ ածէր զնա առ երանելի եպիսկոպոսն որ էր 'ի նմին քաղաքի, որոյ անուն Անտոնիոս։ Յայնժամ սուրբ հօտապետն լի եղև ուրախութեամբ վասն փրկութեան առնն, և ուսուցեալ նմա զխոստովանութիւն Երրորդութեանն և հաստատեալ 'ի հաւատս սուրբս՝ արժանի արար վերստին ծննդեանն յորդեգրութիւն Հօրն երկնաւորի. առժամայն խառնեցաւ 'ի հօտն Քրիստոսի, և կատարեցաւ բան գրոյն, եթէ՝ Գայլք և գառինք 'ի միասին ճարակեսցին։

Եւ բարձաւ հալածումն առ ժամանակ մի. և կացեալ Ալեքսանդրոս ժամանակ ինչ՝ փոխադրեալ եղև յաստեացս առ հանդերձեալսն, քրիստոնէութեամբ հանգեաւ 'ի Քրիստոս։ Իսկ երանելին Վասիլուհիա երթեալ արտաքոյ քաղաքին սակաւ ինչ քան զընակութիւնն, և գտեալ տեղի մի անապատ՝ յորում էր վէմ մի մեծ, և անդ առ վիմին զբնակութիւնն իւր առնէր. որ և աղբիւր անուշահամ աղօթիւք սրբոյն 'ի վիմէն ելանէր՝ որպէս առ Մովսիսիւն 'ի ձեռն գաւազանին. և կացեալ 'ի նմին տեղւոջ աւուրս ինչ՝ բարւոք կրօնաւորեալ, զընթացն իւր կատարեալ և զհաւատսն իւր պահեալ, օրինակ բարի եղեալ ամենայն հաւատացելոց ըստ իւրաքանչիւր հասակաց. աւանդեաց զոգին 'ի Քրիստոս, արժանի եղև անմահ փեսային և յարագուարձ հարսնարանին։ Եւ սրբոյ եպիսկոպոսին իմացեալ զկատարումն երանելւոյն ազդմամբ սուրբ Հոգւոյն, առեալ ընդ իւր զժառանգաւորսն եկեղեցւոյն հանդերձ բազմութեամբ քրիստոնէիցն որ էին 'ի քաղաքին՝ եկն 'ի տեղին, և մեծավայելչապէս պատիւ արարեալ սրբոյ վկային՝ եդին 'ի նմին տեղւոջ, մերձ առ վիմին ուստի աղբիւրն բղխեաց յառաջագոյն աղօթիւք նորին. որ մինչև ցայսօր բժշկութիւնք կատարին նովին ջրով և նշխարօք սըրբոյն՝ շնորհօք Քրիստոսի. ընդ որում Հօր և սուրբ Հոգւոյն վայել է փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոց Վարոսեանց։

Եւ եղև յաւուրս Մաքսիմիլիանոսի փեսայի Դիոկղետիանոսի, յամի հալածանաց մերոց, առաքեցաւ հրաման յամենայն երկիրն Եգիպտացւոց առ իշխանսն որք ըստ մայրաքաղաքացն էին, զոհել աստուածոցն և անպատիժս արձակել զզոհեալսն. իսկ զընդդիմակացս հրամանացն յետ բազում տանջանաց և խոշտանգանաց՝ սրով և հրով սպանանել։ Եւ յորժամ լինէր այս ամենայն, սուրբքն ընթանային 'ի նահատակութիւն երկնային կոչմանն, և բազմաց քերանաց և սաստիկ տանջանաց համբերեալ, և զկատարումն հռչակաւոր տօնի առեալ, և զարքայութիւնն երկնից ժառանգեալ։

Այր ոմն զօրական 'ի գնդէ[1] որ նստէր յԵգիպտոս, Վարոս անուն, պատուական 'ի զօրուն իբրև զմի ոք 'ի գլխաւորացն, 'ի տօհմէ ազատաց, երկիւղած 'ի Տեառնէ յամենայն սրտէ իւրմէ, յառնէր 'ի գիշերի գաղտագողի և երթայր անկանէր առաջի սրբոցն որ 'ի բանտին պահէին մեծաւ զգուշութեամբ, և արեամբ նոցա կնքէր զաչսն և զլանջսն[2]. յայտնի խոստովանելով զՔրիստոս երկնչէր՝ զի մի չարաչար կորիցէ, զի մահ ամօթալի որոշեալ էր 'ի վերայ գտելոցն յայնպիսի հաւատոն. յորոց ոմանք հրկէզ լինէին, և

---

1. Միւս օր. 'ի գնդին որ նստի։ 2. Միւս օր. զլանջս։

ոմանք ծովակուր, և այլք ազգի ազգի տանջանօք վտանէին[1]. քանզի մեծ և դժնդակ մառախուղ կայր 'ի վերայ մարդկանն, և խաւար և մէգ ունէր զհոգիս նոցա, զի մի՛ կարասցեն նկատել զօգտակարսն իւրեանց։ Եւ ըմբռնեալ զսուրբս ոմանս յանապատէ, որ 'ի բազում ժամանակաց փախուցեալք էին 'ի դաւաճանութենէ ամպարիշտ մարդկանն, պատմեցին իշխանին, եթէ վարդապետք քրիստոնէից հաւատոցըն ածան ձեռնակապօք և կան արտաքոյ։ Յայնժամ խնդալից եղեալ դատաւորն, հրամայեաց պահել զնոսա, և վաղիւ անդր ածել[2] զառաջեաւ, և պատրաստել տանջանարանս և փայտս։ Եւ դահճացն առեալ արգելին զնոսա 'ի ներքին բանտին, և զոտս նոցա 'ի կոճեղս պնդեցին։

Իսկ Վարոսի գիտացեալ եթէ 'ի մեծ վտանգի են ամենագով սուրբքն, ինչս ետ պահապանացն և մտեալ 'ի գիշերի ելոյծ զշղթայս նոցա, և զոտսն եհան 'ի կոճեղէն, և առաջի անկեալ երկիր եպագ. և աղաչելով զնոսա՝ հաւանեցոյց ճաշակել կերակուր, քանզի զաւուրս ութ մնացին անսուաղ։ Եւ ասէ ցնոսա. Աղաչեմ զձեզ, սուրբ վկայք և ծառայք Քրիստոսի, քանզի վաղիւն ունիք կատարել 'ի ձեռաց անօրէն մարդկանս այսորիկ. աղաչեցէք զփրկիչն Քրիստոս՝ զի տացէ ինձ մասն 'ի ժուժկալութենէ ձերում և 'ի համբերութենէ. քանզի այր զօրական եմ ես 'ի նշանաւոր գնդէ, և քրիստոնեայ և սրբոց ծառայ. այլ երկնչիմ խոստովանել՝ զի մի՛ չարաչար կորեայց, քանզի գիտեմ եթէ յորպիսի մահ մատնեցան՝ որք 'ի հաւատս յայս ըմբռնեցան. և աղօթս արարէք զի անցցէ ամպրոպ խռովութիւնս, զի երևեսցուք համարձակութեամբ որք 'ի Քրիստոսն հաւատացաք։ Ասեն ցնա սուրբքն. Ոչ ոք հնձեսցէ եթէ ոչ յանպրոպս սերմանեսցէ. և ոչ բարիոք կատարի եթէ երկչոտ ոք լիցի, և մանաւանդ զի Քրիստոս աղաղակէ. Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոք ոչ խոստովանեսցի զիս առաջի մարդկան, և ոչ ես խոստովանեցայց զնա[3] առաջի հօրն իմոյ որ յերկինս է. արդ եկ ընդ մեզ[1], քանզի այսպիսի ուղեկիցս ոչ գտանես երբեք։

---

[1] Միւս օր. վտանգէին։

[2] Միւս օր. տանել։

[3] Միւս օր. խոստովանեսցի յիս... խոստովանեցայց 'ի նա։

Եւ մինչդեռ նոքա զայս ասէին, մտին զինուորքն տանել զնոսա 'ի դատաստան, և տեսին զՎարոս զի համբուրէր զոտս նոցա և լայր, վասն որոյ հանդերձեալն էին չարչարիլ։ Եւ ասեն ցնա զինուորքն. Մոլիս այր դու. և ո՞չ երկնչիս թէ գուցէ պատմիցի դատաւորին և կամ մեծամեծացն՝ թէ ընդ նոսա էր և քրիստոնեայ է. և այնուհետև զաստիճան քո և զանձն քո չարաչար կորուսանես։ Ասէ Վարոս ցնոսա. Եղիցի ինձ քրիստոնեայ գտանիլ, և ընդ նոսա լինել հանապազ. այլ ո՞ ոք գուշակեսցէ, վասն զի դուք ամենեքեան ընկերք իմ էք և բարեկամք։ Ձգեն այնուհետև զսուրբսն զինուորքն շղթայիւք կապեալ զձեռս և զպարանոցս, և էին թուով վեց. քանզի յանապատին եօթն էին հրաժարեալք յաշխարհէ, և զերեսուն ամ ընդ գազանս և ընդ սողունս բնակեալք. և արդարև ըստ ասացելոյն՝ 'ի վերայ իժի և քարբի ելեալք[2], և կոխեալ զառիւծն և զվիշապն. այլ մի 'ի նոցանէ վախճանեցաւ յանապատին զընթացսն իւր կատարեալ և զհաւատսն պահեալ։ Եւ դատաւորն նստեալ հրապարակաւ յատենի, և ռամիկն և զինուորացն և այլ բազմութեանն պատեալ զնովաւ, հրամայեաց մերկացուցանել զնոսա, և առիգածեալս տանել զնոսա զառաջեաւ։

Եւ իբրև ածին, ասէ ցնոսա. Որո՞յ բախտի էք, և ո՞յր որդիք, և յորմէ՞ գաւառէ։ Ասեն ցնա սուրբքն. Գաւառ յերկրի չունիմք. ապա եթէ կամիս գիտել զքաղաքն մեր, հաւատա 'ի Քրիստոս, քանզի քաղաք քրիստոնէից յերկինս շինեալ է։ Եւ նա ասէ ցնոսա. Ուստի՞ էք և զի՞նչ անուանք ձեր, ասացէք. ապա եթէ ոչ, երդնում յաստուածսն ամենայն զի կենդանիս զձեզ դատիմ։ Ասեն ցնա սուրբքն. Ի սպառնալեաց քոց չերկնչիմք. և զինչ եմք՝ ասասցուք, եթէ օտարք և պանդուխտք որպէս ամենայն հարքն մեր։ Դատաւորն ասէ. Զմի խորհուրդ ունին վատամահքս այս. և արդ մերկացեալք տանջեսցին։ Եւ մինչդեռ 'ի տանջանսն էին, ասէ. Ո՞ւր է եօթներորդ ընկերն ձեր որ մանաւանդ խնդրելին է։ Եւ իբրև զայս ասաց, վաղվաղակի վազեաց 'ի ներքս յամբոխէն սուրբն Վարոս, և կացեալ 'ի միջի՝ ասէ. Նա կատարեցաւ և զիս կացոյց փոխանակ իւր ժառանգաւոր իւրոյ համբերութեանն. արդ եթէ պարտի ինչ նա, աւասիկ կամ պատրաստ ընդ նորա հատուցանել. քանզի զարկեալ պատիժս հարկացն ժառանգաւորքն հատուցանեն։

---

[1] Միւս օր. արդ եկ գնա ընդ մեզ յերկինս։

[2] Միւս օր. գնացեալ։

Եւ բարկացեալ դատաւորն՝ ասէ. Ո՞վ է դա։ Ասեն. Զինուոր է, այլ և մի յաւագաց։ Ասէ ցնոսա. Յորո՞ւմ գնդի կարգեալ է։ Ասեն ցնա. Ի Տիտանացւոցն։ Ասէ դատաւորն ցսուրբն. Ո՞ մոլորեցոյց զքեզ և հրապուրեաց կորուսանել զգունդն քո և զմեծամեծ ռոճիկսն քո, և կորնչել չարաչար։ Ասէ ցնա սուրբն Վարոս. Ի բազում ամաց կերակրիմ 'ի ռոճկացս յայսցանէ և ոչինչ օգտեցայ, այլ դարձեալ քաղցնուի յետ ուտելոյն. այլ այժմ գտի ռոճիկ յոյժ լաւագոյն քան զայն։ Դատաւորն ասէ. Զո՞ր։ Վարոս ասէ. Զհացն որ յերկնից էջ և ետ կեանս ամենայն մարդկան. և փոխանակ գինւոյ որ արբեցութիւն և շուայտութիւն գործէ, արիւնն Քրիստոսի՝[1] որ աղբիւր է կենաց, և անապականութիւն գործէ[2] որոց ճաշակենն զնա. և փոխանակ ապականացու մսոյ, ունիմ զմարմին անբիծ և անարատ գառին՝ որ եբարձ զմեղս աշխարհի։

Ասէ դատաւորն ցսուրբսն. Ո՞չ դուք էք որ հրապուրեցէք զդա գալ յայդ, և ահա կորուսիք զայդպիսի զօրական թագաւորին. երդնում յաստուածսն զի զգլուխ ձեր չարաչար կորուսանեմ։ Ասեն ցնա սուրբքն. Անմիտ, ո՞չ գիտես եթէ 'ի հրեշտակաց դասն[3] կարգեցաք զնա. և եթէ ուսար 'ի նմանէ զփրկական թօշակն զինուորութեան, անսա վայր մի և տեսանես[4] զքաջութիւն զօրականութեան նորա։ Ասէ ցնոսա դատաւորն. Զո՞ր զօրականութիւն. զտանջա՞նսն ահաւոր հերձուածողացն։ Ասէ ցնա. Զինչ քաջութիւն է քան զայն, եթէ մի ոք յաղթեսցէ քեզ իշխանիդ կորըստեան և ամենայն զօրականաց քոց, որ յետ սակաւ մի ապականելոց են։ Ասէ ցնոսա դատաւորն. Զմարմինս ձեր այժմ ապականեմ, եթէ ոչ անուանեալ[1] աստուածոցն երկիր պագանիցէք։ Սուրբքն ասեն. Աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին, կորիցեն յերեսաց երկրէ. վասն զի աստուածք հեթանոսաց դևք են, այլ Տէր զերկինս արար։ Վարոս ասաց. Զի՞ աշխատ առնես զսուրբսդ շատխօսութեամբ, անարժան խոստովանութեամբ. ահա ես կամ առաջի քո դատապարտեալ, արա զի՛նչ և կամիս։ Դատաւորն ասէ. Եւ իմ կամք այն են զի կորուսից զամենեսեան՝ որք ոչ պաշտեն զեգիպտացւոց աստուածսն. արդ խնայեցէք 'ի ձեզ, և բուժեցարուք 'ի պատրաստելոցն ձեզ չարեաց։ Վարոս ասաց. Որ 'ի քէնդ պատրաստեալ է մեզ, որպէս սարդիոստայն լուծանի. իսկ որ քեզն պատրաստեալ է և ամենայն տան քում, վախճան ոչ ունի։ Եւ բարկացեալ դատաւորն, հրամայեաց կախել զնա զփայտէ։ Եւ ասէ ցսուրբսն. Եթէ դուք ինձ յաղթեցէք, մոլորեցայց և ուրացայց զաստուածսն։ Ասեն ցնա. Առ այժմ փորձեա զուժդ 'ի միումդ որ առաջի կայ. եթէ դմա յաղթեսցես, հաւատա և գիտա թէ և զմեզ հերքեսցես։

---

[1] Միւս օր. բաժակ արեանն Քրիստոսի։

[2] Միւս օր. շնորհէ։

[3] Միւս օր. գունդն։

[4] Միւս օր. տեսցես։

Դատաւորն ասէ ցսուրբն Վարոս. Իմով գլխովս, զի չարեօքդ զոր չարչարիս՝ զգուշասցին այլ ևս զինուորք և ռամիկք չթողուլ զիւրեանց զաստուածս և երկիր պագանել՝ որում դուք երկիր պագանէք Քրիստոսի։ Վարոս ասաց. Նման լիջիր աստուածոցն քոց, դու և ամենայն յուսացեալքն 'ի նոսա, որք ոչ լսեն և ոչ խօսին, և ոչ տեսանեն և ոչ շարժին։ Եւ դատաւորն բարկացեալ, հրամայեաց իջուցանել զնա, և փոկովք և բրօք 'ի չորեցունց կողմանց ծեծել[2] զնա։ Վարոս ասաց ցսուրբսն. Օրհնեցէք զծառայս ձեր սուրբ հարք և աղօթս արարէք 'ի վերայ իմ, զի զօրացայց և շիջուցից զբարկութիւն ամպարշտիս, և զդառն տանջանս սորա լուծից։ Եւ սուրբքն զաչս 'ի վեր ամբարձին առ Տէր և ասեն. Օրհնեալ ես, Տէր, որ զանըմբերս պսակես պսակօք համբերութեան. զօրացո զծառայս 'ի պատերազմի նահատակութեանս ։ Եւ տանջեալ վկայն Քրիստոսի, ասէ ցսուրբսն. Մի՛ խռովիք, գիտեն սուրբ աղօթք ձեր, զի իբրև ասուի իջանելով 'ի վերայ իմ զգամ մանաւանդ քան ջալոտիցն ։

---

[1] Միւս օր. անիճեալ։

[2] Միւս օր. հարկանել։

Ասէ ցնա դատաւորն. Արդ զի՞նչ օգտեցար, ո՛յ թշուառական ։ Վարոս ասաց. Այնչափ օգտեցայ որչափ դու վնասեցար ։ Ասէ ցնա դատաւորն. Մոլորեցուցիչքդ այդ ուսուցին քեզ այդպէս խօսել ։ Վարոս ասաց. Ոչ երբէք մոլորեցուցիչք իւր փրկութեան գործեն. այլ վասն զի բարիք են և ճշմարիտք և աննախանձ երախտաւորք [1], 'ի գանձէ իւրեանց մատուցին զփրկութիւնս զայս. Այլ մոլորեցուցիչ և կախարդ դու ես, և ամենայն հաւանեալք քում անզգամութեանդ ։ Եւ բարկացեալ դատաւորն , հրամայեաց դարձեալ 'ի փայտն մատուցանել զնա ։ Եւ իբրև տեսին սուրբքն զկողս վկային 'ի բազում ժամս քերեալ, ասեն ցդատաւորն. Ո՛վ ամպարիշտ, զապառաժ քարինս ո՞չ արդեօք վատնէիր այդպէս քերելովդ [2] ։ Ասէ դատաւորն. Եկեսցէ Քրիստոսն ձեր և փրկեսցէ զդա ։ Ասէ ցնա Վարոս. Մի՛ լիցի ինձ փրկել յայսմ տանջանաց, այլ 'ի մշտնջենաւորականացն փրկեսցէ զիս ։ Եւ կըրճտեալ զատամունս իւր ամպարիշտն, հրամայեաց հարկանել զլեարդակողմն ։ Եւ ասէ. Հանէք զաղիս դորա առաջի դորա ։ Ասէ ցնա Վարոս. Որդի սատանայի և թշնամի ամենայն արդարութեան, զաղիս իմ ահա կարես հանել՝ այլ կապտել զհաւատս իմ ոչ կարես ։ Իբրև տեսին սուրբքն պատառեալ զորովայն նորա՝ լացին ։

Ասէ ցնոսա դատաւորն. Տեսանէք զի յաղթահարեցայք. ընդէ՞ր լայք և տրտմիք՝ եթէ արդարև անմահութիւն համարիք զմահն որ վասն Քրիստոսի ։ Ասեն սուրբքն . Վասն չարչարակցութեան լամք, հրաժարեալք 'ի գազանաբարոյ անմարդութենէ. ծիծաղիմք և տօնեմք՝ գիտացեալք թէ սակաւ տանջանօքս զյաւիտենական հանգիստն ժառանգեմք ։ Եւ դարձեալ ցասուցեալ դատաւորն, հրամայեաց զնոսա տանել 'ի

[1] Միւս օր. Երախտագործք ։

[2] Միւս օր. քանդելովդ ։

բանտ 'ի պահեստ տանջանաց, և զՎարոս տանջել մինչև անդէն 'ի փայտին մեռցի:

Եւ իբրև ետես զնոսա Վարոս քարշեալ շղթայիւքն, ասէ ցնոսա մեծաձայն. Ցանձն արարէք զիս Տեառն, սուրբ նահատակք Քրիստոսի, և վստահ լերուք եթէ ոչ ես տաց պատասխանի անաստուածիս այսմ և ոչ բան մի, և ոչ բացից զշրթունս իմ առ սա. այլ ահա երթամ առ Տէրն Քրիստոս, շնորհ ունելով ձեզ որ պատճառք եղերուք ինձ այնմ յաւիտենական կենացն: Եւ տանջեալ իբրև ժամս երիս, աւանդեաց[1] զոգին. և որք հարկանէինն՝ տակաւին տանջէին զնա, համարեալ թէ կենդանի ևս իցէ: Եւ իբրև տեսին դահիճքն թէ զլոկ մեռեալ մարմինն տանջեն, ասեն ցբռնաւորն, թէ՝ ի վաղուց հետէ մեռաւ, արդ ո՞ւր հրամայես դնել զմարմին նորա: Ասէ բռնաւորն. Իջուցէք և քարշեցէք արտաքոյ քաղաքին և ընկեցէք շանց: Եւ իջուցին զնա և քարշեցին արտաքոյ քաղաքին՝ ուր կայր գէշք անասնոց:

Իսկ կին ոմն Պաղեստինացի, որում անուն էր Կլէոպատրա, քրիստոսասէր և բարեպաշտ և երկիւղած 'ի Տեառնէ, հայէր ընդ սուրբսն 'ի նահատակութեանն և լայր դառնապէս: Եւ տեսեալ զնա 'ի տանջանսն, ծեծէր զկուրծս իւր, և երկնչէր խոստովանել՝ թէ քրիստոնեայ իցեմ: Չոգաւ 'ի գիշերի հանդերձ մանկամբք իւրովք և որդւովն որ էր երկոտասանամեայ. և գողացաւ զմարմին սրբոյն և տարաւ 'ի տուն իւր. և անդ օծեալ իւղօք անուշիւք և պատեալ պատուական հանդերձիւք, փորեաց ընդ մահճօք իւրովք և թաղեաց զսուրբն, և եկաց մնաց զբարի սպասաւորութիւնն կատարելով[2]:

Եւ յետ բազում ժամանակի իբրև դադարեաց հալածումն քրիստոնէից, խորհեցաւ 'ի գաւառն իւր երթալ[3]. և պատրաստեաց զամենայն ինչս: Եւ 'ի ձեռն երանելւոյ[4] ուրումն մատուցեալ առ իշխանն՝ ասէ. Այր իմ էր 'ի պատուական ազգէ զօրականաց, ժիր եղեալ 'ի պատերազմունս՝ մեռաւ, և աստ թաղեալ է վարկպարազի, և օրինաւոր թաղման չև ես պատահեալ: Արդ աղաչեմ զքո մեծութիւնդ, հրամայեա ինձ անվտանգ հանել զնա զի օրինօք թաղեցից: Եւ խոնարհեալ յաղաչանս կնոջն, հրամայեաց տալ նմա զխնդիրն, և վասն այնորիկ ինչս բազումս առեալ 'ի նմանէ:

---

[1] Միւս օր. արձակեաց:

[2] Միւս օր. հարկանելով:

[3] Միւս օր. դառնալ:

[4] Միւս օր. երանելւոյ ճարտարախօսի ասորոյն:

Իսկ կնոջն զայր իւր թողեալ անդէն յԵգիպտոս, և զսուրբն Վարոս հանեալ յերկրէն, և դարձեալ պայծառ հանդերձիւք զգեցուցեալ զնա, և խնկօք և իւղովք անուշիւք օծեալ, 'ի բոքի միում եդեալ և ասրս բազում ընդ նմա, և այնպէս եհան զնա յԵգիպտոսէ, զի մի՛ ոք յափշտակեսցէ 'ի նմանէ. քանզի սկսան այնուհետև քրիստոնեայք երևել, և զնշխարս սրբոցն խնդրել և գնել 'ի վանս, և զյիշատակս նոցա կատարել: Եւ եկեալ Կղէոպատրեայ 'ի գեօղն իւր, և եդ զնա 'ի գերեզմանի նախնեաց իւրոց որ էր մերձ 'ի Ճանապարհին. և ելանէր անդր հանապազ ընտանեօքն իւրովք հանդերձ մոմեղինօք [1] և խնկօք, ուսան և այլ արք և կանայք և ելանէին ընդ նմա: Եւ յետ սակաւ աւուրց յայտնի եղև որոց 'ի գաւառն բնակեալ էին, եթէ սուրբ ոմն կայ 'ի դրի՝ 'ի գեօղն որ է մերձ 'ի Թափոր. ուսան, և զհիւանդս իւրեանց և զնեղեալս բերէին անդր, և ամենեքեան բժշկէին՝ որք ունէին հիւանդութիւնս ինչ: Եւ տեսեալ Կղէոպատրեայ՝ եթէ նեղի բազմութիւնն որ գայր անդր, քանզի անձուկ էր տեղին, խորհեցաւ վաճառել զինչս իւր և կանգնել սրբոյն տաճար: Ունէր և որդի միածին, որոյ տուեալ ինչս բազումս, առաքեաց զինուորել 'ի դրան արքունի [2], և առաւել ես ծախեաց 'ի շինուած տաճարին:

Պատահեաց այնուհետև և գիր զինուորութեան 'ի թագաւորէն, զի տանեսցեն ընդ կնոջն. քանզի էր մեծատուն և 'ի նշանաւորաց առաջին: Եւ նա ասաց 'ի սրտի իւրում թէ միանգամայն 'ի կատարել տաճարիս՝ զգեցուցից զորդի իմ զպատմուճան իշխանութեանն, և ընդ իս բարձցէ զմահիճս սրբոյն, զգեցեալ զկերպ զինուորութեան: Եւ այնպէս բազում ինչս ծախեալ կնոջն, կանգնեաց զվկայարան սրբոյ տաճարին, և ամենայն զարդու զարդարեաց: Եւ կոչեաց զեպիսկոպոսն և զբազմութիւն վանականացն և այլոց ևս քրիստոնէից, և եհան զսուրբն 'ի տապանէն. և բերեալ մահիճս նորս՝ զարդարեաց անկողնօք և սուրբ պաստառակալօք, և մատոյց զորդին առ քահանայսն և օրհնեցին զնա. և մտեալ 'ի սենեակն իւր՝ առ զքղամիդն և զգօտի մանկանն, և եդ 'ի վերայ տապանի սրբոյն և առեալ ած նմա [1]:

---

[1] Միւս օր. Ճրագօք:

[2] Միւս օր. Թագաւորէն:

Եւ իբրև եկին և ժողովեցան ամբոխն ամենայն, եբարձ ինքն և մանուկ իւր զնշխարս սրբոյն և մուծին 'ի ներքս: Եւ այնչափ ժողովեցաւ բազմութիւն արանց և կանանց, մինչև բնակչաց տեղւոյն հոգալ թէ ուստի ունիցին ջուր բաւական եկելոցն: Եւ եղև տօն [2] 'ի հաւախօսէն մինչև ցինն ժամն. և իբրև եդին զնշխարս սրբոյն, ուղղեցին սեղան և մատուցին պատարագ. և միաբան աղօթս արարին 'ի վերայ Կլէոպատրեայ և որդւոյ նորա միածնի:

Եւ իբրև արձակեցին զժողովուրդն, անկաւ 'ի վերայ նշխարին ուր կայր սուրբ վկայն, աղաչէր և ասէր. Աղաչեմ զքեզ սուրբդ Աստուծոյ, վասն օգտի ինձ և մանկանս իմոյ, և որ օգուտն է ոգւոյս իմոյ և հաճոյ Աստուծոյ, աղաչեա զՏէր օգնել սմա փոխանակ զի պաշտեցի զքեզ յայսմ 'ի սատանայական խռովութեանցս: Եւ այժմ աղաչեա զՏէր Աստուած խաղաղութեամբ տալ մանկանս իմոյ առողջութիւն 'ի Քրիստոս, և շնորհս 'ի զինուորութեան իւրում առաջի Թագաւորին: Այո՛, աղաչեմ զքեզ յիշեա զիս, զի ոչ պատուեցի զոք առաւել քան զքեզ, ոչ զայր և ոչ զմանուկ և ոչ զինչս:

Եւ եղեալ անտի ետ ճաշ մեծապէս ամենայն բազմութեանն այնմ. պաշտէր ընդ նմա զժողովուրդն և որդին իւր ուրախութեամբ: Եւ նա պատուիրեալ որդւոյն իւրոյ զի մի ինչ ճաշակեսցէ մինչև յարիցեն բազմեալքն, ասացեալ եթէ 'ի նշխարաց ճաշակեմք ես և դու: Եւ իբրև յարեաւ ամբոխն, վաստակեցաւ

---

1. Միւս օր. զՓէշոյց նմա:

2. Միւս օր. պաշտմն:

մանուկն և կողմնեցաւ. և եկեալ մայրն յետ հանգուցանելոյ զսպասաւորսն, համբուրեաց զաչս մանկանն և ասէ. Վասն առողջութեանն քո, որդեակ, արարի զայդ ամենայն, և զի յուղարկեսցես զիս 'ի կեանս քո առ սուրբն այն: Արդ արի և ճաշակեա կերակուր զի անսուաղ ես և աշխատեալ: Եւ մանուկն հազիւ խօսեցաւ, քանզի այրէր բերան նորա 'ի ջերմութենէն. և մօրն անկեալ զմանկամբն, առ զնա 'ի գիրկս իւր և ասէ. Կենդանի է Տէր և աղօթք սրբոյն, և ոչ ես ճաշակեմ մինչև տեսից թէ զի՞նչ դիպեսցի[1] մանկանս, վասն զի ես պատուիրեցի նմա չճաշակել ինչ մինչև հանգիցեն ժողովեալքն: Եւ այնպէս կալեալ զմանուկն 'ի գիրկս իւր զգիշերն. և 'ի մէջ գիշերին արձակեաց զոգին: Եւ յարուցեալ եբարձ զմանուկն և մտեալ 'ի տաճարն ընկէց զնա առաջի սեղանոյն, աղաղակէր և ասէր. Ո՛հ հաւատացումն արդարոյս այսորիկ. ո՛հ, զո՛ր ընդ որոյ հատոյց ինձ հիքոյս: Տուր ինձ այսր զորդին իմ զոր և երկամբք սնուցի. տուր ինձ զմանուկն իմ միածին: Ո՛հ բռնութիւն արդարոյ, զոր հատոյց ինձ ընդ այնր զայս: Տո՛ւր ինձ զորդին, վասն որոյ զայս ամենայն արարի, զի կեցցէ և լինիցի մխիթար ինձ. տուր ինձ զորդն, ապա եթէ ոչ, գիտեա զի աստ բեկանեմ զգլուխ իմ մերձ 'ի քեզ: Աղաչեա զՏէրն քո տալ զմիածինն իմ, քանզի նա զբազմաժամանակեայ զմեռեալն յարոյց: Տուր ինձ զորդին իմ, ապա եթէ ոչ՝ տար և զիս առ նա: Եւ ամենայն ժողովուրդն լայր ընդ նմա. քանզի էր մանուկն գեղոյն ազնուական, և առաւել ես վասն երկիւղածին և քրիստոսասիրին այնորիկ լային, զի անարժան հատուցումն ընդ որոյ արարն՝ ընկալաւ: Եւ այնպէս արար զօրն ողջոյն լալով, և ամենայն քահանայքն և սովորական սիրելիքն ակնածէին մխիթարել զնա:

Եւ իբրև եղև մէջ գիշերի, խաղաղացաւ վայր մի, գիրկս արկեալ զմանկամբն, քանզի 'ի բազում լալոյն էր աշխատեալ, և զօրն ամենայն էր պահեալ: Եւ ահա երևեցաւ նմա սուրբն Վարոս և մանուկն 'ի ձեռին նորա, և երկոքեանն ունէին ընդ մէջ իւրեանց գօտի ոսկի, և քղամիդք նոցա սպիտակ իբրև զլոյս և շքեղք իբրև զաստեղս, և թագ 'ի գլուխ նոցա, և շուրջ ըզթագօքն աստեղք բոլորեալք: Եւ իբրև ետես, զարհուրեցաւ, երկիր եպագ. և բուռն հարեալ զոտից սրբոյն և միւս ևս ձեռամբն զոտից մանկանն, և յարոյց զնա սուրբն Վարոս և ասէ ցնա. Զի՞ աղաղակես զինէն, կին դու, իբրև թէ անիրաւութիւն ինչ արարի առ քեզ. և իբրև թէ փոխանակ քոյոց երախտեացն չար ինչ հատուցի[1] քեզ: Մի թէ մոռացա՞յ զոր արարերն ընդ իս 'ի ճանապարհին. ո՞չ հանապազ հոտոտէի 'ի խունկս քո. ո՞չ զգացի յորժամ ամփոփեցեր զիս յընկեցեալ ոսկերացն արտաքոյ քաղաքին, և թաղեցեր զիս[2] ընդ մահճօքն քո, և յորժամ եդեր զիս 'ի քրձին ասուի: Ո՞չ գիտացի յորժամ թաղեցեր զիս առ նախնիսն քո, զորս և աղատեցի զդատապարտեալսն 'ի մեղաց, շնորհս ունելով[3] քեզ. աղաչեցի զՏէր վասն քո տալ նոցա զթողութիւն: Ո՞չ գիտացի յորժամ հաներն զիս 'ի գերեզմանէն, և բարձեր 'ի մահիճսն, հանդերձ որդւովս քո. ո՞չ ես պահէի զշնորհսն զի մի՛ վնասեսցին 'ի չարէն. ո՞չ ես պաշտէի ընդ ձեզ զժողովսն, և անուամբ Տեառն օրհնեցի զպատրաստութիւն քո. ո՞չ դու աղաչեցեր զիս յորժամ եդեր 'ի սեղանն զի աղաչեցից զԱստուած վասն որդւոյ քո առնել ընդ նմա զհաճոյսն և խառնել զնա 'ի համար անդրանկաց երկնաւորաց. և ես աղաչեցի և արար մեզ զայս որպէս տեսանես իսկ. և այժմ եթէ կամիս ա՛ռ զդա: Եւ իսկոյն պատեցաւ զնովաւ մանուկըն և ասէ. Մի՛ տէր իմ և վարդապետ, մի՛ հաւանիր դմա տալ զիս անիրաւ աշխարհիս, որ լի է զրպարտութեամբ և ամպարշտութեամբ, յորմէ հազիւ բուժեցայ չշաղախելով 'ի պղծութիւն սորա. մի՛, հայր իմ, մի՛ 'ի բացեայ առներ զիս 'ի քէն և 'ի սրբոցն ընդ որս բնակեալ եմք: Եւ ցմայրն ասէ. Երթ գնա յինէն, կին դու. է՞ մայր որ նախանձի ընդ միածնին իւրում, և ձգէ զնա 'ի թագաւորութենէ յաղքատութիւն, և 'ի լուսոյ 'ի խաւար: Եւ ասէ ցնոսա կինն. Առէք և զիս ընդ ձեզ, զի և ես թագաւորեցից ընդ ձեզ. յաւելեալ ասէ ցսուրբն. Մի՛ վհատել [1] զիս 'ի միածնեդ իմմէ։ Ասէ ցնա սուրբ վկայն. Եթէ այդր ես, ընդ մեզ ես. և այժմ երթ խաղաղութեամբ և կատարեա յերկրի զյիշատակս մեր, և 'ի ժամանակի այց արասցուք քեզ, յորժամ կամեսցի Տէր. ահաւասիկ երթ խաղաղութեամբ։

---

[1] Այլս օր. զի՞նչ է դէպք այդ մանկանս իմոյ:

---

[1] Միւս օր. արարի քեզ:

[2] Միւս օր. թաքուցեր:

[3] Միւս օր. շնորհելով:

Եւ զարթուցեալ դողմամբ՝ պատմէր բազմութեանն զտեսիլն, և առեալ զգեստ սուրբ և իւղ անոյշ, զգեցոյց զորդին իւր և յանձն արար սրբոյն։ Եւ ամենայն սիրելի կանայքն աղաչէին զնա զի դիցէ ընդ նմա ըզզինուորութեան պատմուճան նորա. զի մի՛ տեսցես 'ի տան քում և խռովեսցի ոգի քո։ Իսկ նա ոչ առ յանձրն, և ասէր ցնոսա. Մնացէք վաղիւն առ իս, աղաչեմ զձեզ, քանզի առնեմ տօն մեծ, զի զինուորեցաւ որդին իմ 'ի զինուորութիւն հրեշտակաց։ Եւ արար ճաշ մեծ և պաշտէր զբազմեալսն ամենայն ուրախութեամբ և խնդութեամբ։ Եւ 'ի վաղիւ անդ յուղարկեալ զամբոխն, բնակեաց [2] 'ի վկայարանին, և անդ պաշտէր աղօթիւք զԱստուած, և երևէին նմա ըստ կիւրակէի կիւրակէի, փոփոխելով զփառս իւրեանց ևս պայծառագոյն։ Եւ յետ եօթն ամի՝ կատարեցաւ երանելին Կլէոպատրիա և եդաւ ընդ նոսա 'ի վկայարանին։ Ընդ որս տացէ և մեզ Տէր մասն, և ամենեցուն որք ժողովին 'ի յիշատակ նոցա, աղօթիւք և բարեխօսութեամբ ամենայն սրբոց, Քրիստոսի Աստուծոյ փառք յաւիտեանս. ամէն։

[1] Միւս օր. չարտպէր։

[2] Միւս օր. հրաժարէաց։

Վկայաբանութիւն Սրբոյ քահանայապետին Վլասայ։

Յօժարութեան հոգւոյ իմոյ հակառակ կայ մնաց իմոց տկարութիւն. և զտկարութեանս երկիւղ զօրացուցանէ իղձք փափաքանացս. յաղթէին 'ի միմեանց և յաղթէն և ոչ լքանին, այլ զօրաւիգն միմեանց յարմարին. տկարութիւնս զգենու զյօժարութիւն, և յօժարութիւնս յորդորեալ 'ի սիրոյդ ձերմէ՝ աղաչէ չպահանջել առաւել քան զկարն։ Արդ պատմեցից այսուհետև զքահանայապետին մերոյ և զմարտիրոսին Վլասայ զվկայութիւնն. եթէ որպէս վայելէ նմա՝ ոչ կարիցեմ յարմարել զյառաջեդեալ պատմութիւնս սրբոյն, մի՛ ոք պարսաւանս դիցէ իմոյ համարձակութեանս. քանզի յաղթեալ լինի 'ի յօժարութենէդ ձերմէ դանդաղութիւն մտացս. զի զյօժարութիւնս իմ զարթոյց և զծուլութիւնս իմ զօրացոյց այն՝ որ զքանքարաթաքոյցն տանջեաց չարաչար, և երկիւղն այնորիկ յորդորեաց զմիտս իմ առնել զկամս յօժարութեան իմոյ։ Արդ աղաչեմ զսէրդ ձեր, ունկնդիր լերուք պատմութեան վկայիս և քահանայապետիս Աստուծոյ։

Ընդ ժամանակ թագաւորութեան Լիկիանոսի ամպարշտի՝ զօրանայր կռապաշտութեանն մոլորութիւն. և արարածոց ձեռաց իւրեանց երկիր պագանէին մարդիկ. ծաղկէր և հաւատն քրիստոնէից և սաղարթաւորեալ զուարճանայր նահատակութեամբ վկայից. ընդ որս և երանելի վկայս և քաջ հովուապետս Վլասիրով՝ զամենայն ժամանակս կենաց իւրոյ երկնային կենցաղիւ քաղաքավարեալ, ըստ վկայութեան Յովբայ, այր արդար, ճշմարիտ աստուածապաշտ, անյիշաչար, մեկնեալ յամենայն գործոց չարեաց։ Տեսեալ զայսպիսի զյառաջադիմութիւն նորա և զամբիծ կեանըս բնակիչք Կապպադովկիացւոց և որք 'ի Սեբաստիա քաղաքի, կամեցան գալ նմա 'ի պատիւ եպիսկոպոսութեան։ Իսկ նա ոչ առնոյր յանձն, ասելով զինքն անարժան գոլ այնպիսի պատուոյ։ Սակայն հարկաւորեալ 'ի բնակչաց գաւառին, միանգամայն և ըստ տեսչութեանն Աստուծոյ համարեալ զշարժումն այնքան բազմութեան, յանձն առնու ակամայ։ Եւ ժողովեալ եպիսկոպոսաց բազմաց և քահանայից և կղերիկոսաց՝ վերակոչեն զնա յաթոռ քահանայապետութեան Սեբաստիոյ քաղաքի։ Լինէր այնուհետև քարոզ ճշմարտութեանն բանիւք և արդեամբք, լուսաւորէր զամենեսեան բանիւ աւետարանին կենաց, դարձուցանելով 'ի մոլորութենէ կռապաշտութեան 'ի ճշմարիտ աստուածգիտութիւն։

Ընդ այն ժամանակս Լիկիանոս յարուցանէր հալածանս քրիստոնէից. և առաքեալ 'ի քաղաքն Սեբաստիա՝ այր ժպիրհ և ապարասան, որում անուն էր Ագրիկողայոս։ Լուեալ այնուհետև հաւատացելոց զհամբաւ գալստեան նորա, դողեալք թաքչէին. ընդ որս և երանելի եպիսկոպոսն կատարելով զաւետարանական բանն, խոյս տուեալ 'ի քաղաքէն, երթեալ բնակէր 'ի լերինն Արգիասոյ՝ յայրի միում։ Եւ ժողովէին առ նա վայրենի կենդանիք. և թէ մի 'ի նոցանէ տկարանայր՝ իբրև հօտ բանաւոր մնայր յայրի. և եթէ ոչ դնէր ձեռն և առողջացուցանէր՝ ոչ մեկնէր յայրէ անտի։

Յաւուրսն յայնոսիկ հրամայեաց Ագրիկողայոս դատաւոր՝ որսալ վայրենի կենդանիս. և ելեալ որսորդացն գնացին 'ի լեառն՝ յորում թաքուցեալ էր սուրբ քահանայապետն. և տեսեալ զվայրի կենդանիս առաջի այրին՝ զհետ մտեալ եկին մինչև յայրն։ Եւ տեսին զսուրբն Վլաս, զի աղօթս մատուցանէր առ Աստուած. և դարձեալ 'ի քաղաքն՝ պատմեցին դատաւորին զոր ինչ տեսին։ Եւ հրամայեաց դատաւորն որսորդաց բազմաց՝ երթալ զկնի որսորդացն. զի որչափ և գտանիցեն քրիստոնեայք, մատուսցեն առաջի նորա։ Եւ նոցա երթեալ գտին զսուրբն՝ զի կայր յաղօթս։ Ասեն ցնա. Արի՛, եկ ընդ մեզ, զի կոչէ զքեզ դատաւորն։ Եւ նորա ուրախացեալ ընդ բանսն՝ ասէ. Եկայք որդիք իմ, երթիցուք 'ի միասին. քանզի 'ի գիշերիս յայսմիկ երեւեցաւ ինձ Տէր երիցս անգամ, և ասէ. Յարուցեալ մատո ինձ պատարագ ըստ օրինի քահանայապետութեան քո։ Եւ արդ, որդեակք իմ, բարիոք եկիք. Տէր Յիսուս Քրիստոս ընդ մեզ է։ Եւ 'ի գնալն նոցա առ դատաւորն՝ զբաղումս 'ի հեթանոսացն դարձուցանէր յաստուածածանօթութիւն։ Մատուցանէին առ նա հիւանդս և ախտաժէտս բազումս, և նա դնէր ձեռս 'ի վերայ նոցա և արձակէր առողջացեալս 'ի տունս իւրեանց, ոչ միայն զմարդիկ, այլ և զանասունս անգամ, զորս մատուցանէին առաջի նորա։ Դէպ եղև կնոջ միում, որ ունէր որդի միամօր, 'ի յուտելն մասն ինչ ձկան՝ կլանէր ոսկր 'ի ձկանէ անտի և լինէր անմռունչ. իսկ մայր մանկանն լուեալ վասն սրբոյն, մատուցեալ առ նա՝ ընկեց զմանուկն յոտս նորա. աղաղակէր արտասուօք և ասէր. Ողորմեաց որդւոյ իմոյ, ծառայ Յիսուսի Քրիստոսի, քանզի միամօր է ինձ։ Իսկ սրբոյն եդեալ զձեռն իւր 'ի վերայ փողից մանկանն, և համբարձեալ զաչս իւր յերկինս՝ ասէ. Որ ես բժիշկ այնոցիկ որ ճշմարտապէս կարդան առ քեզ, լուր աղաչանաց ծառայի քում, և անտեսանելի զօրութեամբ քո 'ի բաց կորզեա զվնասակար փուշն 'ի մանկանէ աստի։ Եւ յայսմ հետէ, եթէ 'ի տղայս, եթէ յերիտասարդս, եթէ յանասունս յայսպիսեաց ինչ անցք անցանիցէ և յիշեսցէ զանուն ծառայիս քո, արասցես նոցա բժշկութիւն վասն մեծի փառաց անուանդ քո։ Եւ իբրև կատարեաց զաղօթսն՝ առողջացաւ մանուկն, և ետ զնա ցմայր իւր. և հռչակ հարկանէր զվկայէն Աստուծոյ, ոչ միայն 'ի Սեբաստիա այլ և յամենայն Կապպադովկիա։

Եւ մինչդեռ 'ի ճանապարհի անդ էր, ահա կին մի աղքատ և այրի, ոչ այլ ինչ ունէր ստացուած, բայց միայն անասուն մի, զոր յափշտակեալ գայլոյ տանէր.

իսկ կինն մատուցեալ առ սուրբ վկայն՝ աղաչէր փրկել զանասունն 'ի գայլէ անտի։ Իսկ սուրբ վկայն Վլաս ժպտելով ասէ ցնա. Մի՛ տրտմիր, կին դու, հասցէ առ քեզ անասունն քո. և կինն ընթանայր զկնի գայլոյն. և ահա գայլն պահեալ զանասունն առանց վնասու՝ ետ զնա ցայրին։

Եւ եկն սուրբն եմուտ 'ի քաղաքն Սեբաստիա. և հրամայեաց Ագրիկողայոս դատաւորն արկանել զնա 'ի բանտ մինչև 'ի վաղիւն։ Եւ 'ի վաղիւն նստեալ յատենի՝ հրամայեաց ածել առաջի իւր զսուրբն Վլաս։ Եւ իբրև ածաւ առաջի նորա՝ սկսաւ օղոքանօք խօսել ընդ նմա դատաւորն և ասէ. Ուրախ լեր, Վլասիոս, բարեկամ աստուածոցն։ Եւ սուրբն ասէ. Ուրախ լեր և դու, դատաւոր հզօր. այլ մի՛ ասեր զնոսա աստուածս, զի դևք են և ոչ աստուած, այլ յաւիտենից հրոյն մատնին հանդերձ պաշտօնէիւք իւրեանց։ Եւ սրտմըտեալ դատաւորն՝ հրամայեաց դալար գաւազանօք հարկանել զնա. և իբրև հարին մինչև ցբազում ժամս, ասէ սուրբն ցդատաւորն. Լիրբ և անպատկառ շուն, կարծես փոխել զիս 'ի ձեռն տանջանաց քոց՝ 'ի խոստովանութենէ Աստուծոյ, այլ ոչ կարես. քանզի ունիմ, որ զօրացուցանէ զիս, զՅիսուս Քրիստոս զՈրդին Աստուծոյ կենդանւոյ։ Եւ իբրև ոչ կարաց հաւանեցուցանել զնա դատաւորն, հրամայեաց արկանել զնա 'ի բանտ։

Եւ զկնի երից աւուրց նստեալ 'ի վերայ բեմի, հրամայեաց ածել առաջի իւր զսուրբն Աստուծոյ. և իբրև ածին՝ ասէ ցնա. Վլասիէ, զոհե՞ս աստուածոցն եթէ կորնչիս չարաչար։ Սուրբն ասէ. Աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն. զի մահն այն՝ զոր դու ինձ սպառնաս, առիթ լինի ինձ կենացն յաւիտենականաց։ Եւ տեսեալ բռնաւորին զանփոփոխելի զհաւատս նորա՝ հրամայեաց կախել զնա ըզփայտէ, և երկաթի քերչօք քերել զնա յոյժ. և սուրբ վկայն ասէ ցդատաւորն. Ո՛վ անպարիշտ և անզգամ, համարիս հարուածս հասուցանել 'ի վերայ իմ, այլ ես ունիմ յիս զզօրացուցիչն իմ զՔրիստոս, և սպասեալ ակն ունիմ անանց բարեացն՝ զոր պատրաստեաց սիրելեաց իւրոց։ Եւ հրամայեաց դատաւորն իջուցանել զնա 'ի փայտէն և տանել 'ի բանտ։

Եւ մինչդեռ տանէին զսուրբսն, կանայք ոմանք երկիւղածք յԱստուծոյ՝ զհետ երթային սրբոյն, և արեամբն որ իջանէր 'ի նմանէ՝ օծանէին զանձինս իւրեանց. զոր իբրև տեսեալ դահիճքն՝ ըմբռնեալ զնոսա ածին առաջի դատաւորին և ասեն. Ո՛վ դատաւոր, և սոքա քրիստոնեայք են։ Եւ դատաւորն ասէ ցնոսա. Հնազանդեցարուք աստուածոցն և զոհեցէք զոհս նոցա։ Պատասխանի ետուն և ասեն. Եթէ կամիս զի զոհեսցուք աստուածոց քոց, երթիցուք մերձ 'ի ծովակն, և բերցես զաստուածսն քո անդ, և լուացեալ զերեսս մեր զոհեսցուք նոցա։ Եւ ուրախացեալ դատաւորն, հրամայեաց բերել զաստուածսն իւրեանց, ըստ խնդրոյ երանելի կանանցն՝ մերձ առ ծովակն. և նոցա առեալ զգարշելի դիսն՝ ընկեցին 'ի խորս ծովուն։ Եւ տեսեալ դատաւորին զոր ինչ եղեն, փոխեցաւ գոյն երեսաց նորա և կրճտէր զատամունս իւր և զայրանայր բարկութեամբ 'ի վերայ զինուորացն և ասէր. Ընդէ՞ր ոչ արգելէք զնոսա, զի մի՛ արկցեն զաստուածսն 'ի ծով։ Ասեն զինուորքն. Նենգութեամբ խօսեցան ընդ քեզ և պատրանօք ընկղմեցին զաստուածսն մեր։ Կանայքն ասեն. Աստուած որ 'ի զօրականաց պահի՝ չէ աստուած, քանզի Աստուած անչարչարելի է. այլ այդ զոր այժմ աստուածս կարդայք և 'ի փայտից և յոսկւոյ և 'ի քարէ ձևացեալ, նման նոցա եղիցին որք արարին զնոսա և ամենեքեան որք յուսան 'ի նոսա։ Եւ կատաղեալ դատաւորն, հրամայեաց հալել կապար և արկանել 'ի սան մեծ և կրտաւս փափուկս տարածանել 'ի միւս կողմն տանջարանին, և ասէ ցկանայսն. Ընտրեցէք ձեզ յերկոցունց այտի. կամ երկիր պագէք աստուածոցն և ապրեցուցէք զանձինս ձեր, և գնացէք 'ի վերայ փափուկ կտաւուցդ, ապա թէ ոչ՝ փորձիլ ունիք 'ի պատրաստեալ տանջանարանացս յայսցանէ։

Մի ոմն 'ի կանանցն ունէր մանկունս երկուս. և նոքա ասեն ցմայրն իւրեանց. Մի՛ թողուր զմեզ կորնչել 'ի վերայ երկրի, այլ որպէս յագեցուցեր քաղցր կաթամբ քո, յագեցո և զմեզ արքայութեամբն Աստուծոյ մերոյ։ Եւ վաղվաղակի հրամայեաց դատաւորն կախել զնոսա և քերել. և փայլատակէին մարմինչ նոցա իբրև զձիւն. և հրեշտակ յերկնից իջեալ՝ բժշկէր զնոսա. և ասէ ցնոսա. Մի՛ երկնչիք, բարի մշակն սկսանի հնձել, և իբրև կատարէ՝ առնու օրհնութեամբ զվարձս իւր, և ուրախութեամբ երթիցէ 'ի յարկս իւր. այսպէս և դուք ճգնեցարուք, զի ընկալջիք 'ի Փրկչէ մերմէ զկեանս յաւիտենականս։ Յայնժամ հրամայեաց դատաւորն արկանել 'ի հնոցն զերանելի կանայսն. և իբրև արկին՝ վաղվաղակի շիջաւ բորբոքումն հրոյն, և անվնաս ելին 'ի հնոցէ անտի։ Ասէ ցնոսա դատաւորն. Ի բաց ընկեցէք 'ի ձէնջ զկախարդութիւնդ զայդ և մատիք զոհեցէք աստուածոցըն։ Իսկ սուրբ կանայքն ասացին միաբան. Փառք քեզ Թագաւոր մեր Յիսուս Քրիստոս, որ հրաւիրեցեր զմեզ 'ի ճանապարհս բարութեանց քոց։ Եւ ասեն ցդատաւորն. Փութա կատարեա զոր ինչ խորհիս վասն մեր, քանզի մեք հրաւիրեալ եմք յարքայութիւնն երկնից։

Յայնժամ զայրացեալ դատաւորն՝ հրամայեաց սրով կոտորել զնոսա. և առեալ զնոսա դահճացն՝ տարան 'ի տեղի նահատակութեանն. իսկ սուրբքն աղաչեցին զնոսա, զի թոյլ տացեն առ վայր մի յաղօթս կալ. և իբրև թողացուցին՝ ծունր խոնարհեցուցեալ ասեն. Ո՞վ է Աստուած որպէս զԱստուած մեր, որ մեկնեաց զմեզ 'ի խաւարէ և կոչեաց 'ի փառս լուսոյ իւրոյ։ Վասն որոյ աղաչեմք զքեզ Աստուած մեր, դասաւորեա զմեզ ընդ առաջին վկային քո սրբոյն Թեկղի, ընդունելով զաղաչանս սրբոյ քահանայապետին քո և վկային, որ առաջնորդեաց մեզ 'ի նահատակութիւնս յայս։ Եւ տարածեալ զձեռս իւրեանց և համբարձեալ զաչս յերկինս, ասեն. Փառք քեզ, Քրիստոս Աստուած մեր, ընկալ զոգիս մեր պատարագ 'ի վերայ սրբոյ սեղանոյ քո։ Եւ մանկունքն ասեն ցմայրն. Պատրաստեալ են պսակքն ձեզ 'ի Տեառնէ, յանձն արա զմեզ քաջ նահատակին Վլասայ հօտապետին մերոյ։ Եւ անդէն եհատ դահիճն սրով զպարանոց երանելեացն, որք մատնեցին զանձինս իւրեանց ինքնակամ վասն յուսոյն զոր ունէին առ Քրիստոս։

Իսկ դատաւորն յերրորդ ժամու աւուրն նստաւ 'ի վերայ բեմի, և հրամայեաց ածել առաջի իւր զսուրբն

Վլաս և ասէ ցնա. Վլասիէ, այժմ զոհե՞ս կռոցն թէ ոչ: Ասէ ցնա սուրբն. Կոյր և յիմար, ո՞ է 'ի մարդկանէ որ ճանաչիցէ զԱստուած արարիչ և երկիր պագանիցէ կռոց անշնչոց: Դու խաւարեա՛լ քարանց և փայտից երկիր պագանիցես, և ես արարողին երկնի և երկրի. այլ ես 'ի սպառնալեաց քոց ոչ երկնչիմ, որպէս կամիս՝ այնպէս տանջեա զմեզ. զմարմինս միայն մատնես տանջանաց, այլ հոգւոյս իմոյ՝ արարողն միայն իշխէ: Դատաւորն ասէ. Ա՛ թշուառական, եթէ ընկեցից զքեզ 'ի խորս ծովու, զի՞նչ օգտեսցէ քեզ այն՝ որում երկիր պագանես և պաշտես: Սուրբն ասէ. Եւ դու այդպէս վարկանիս, յիմար, թէ երկրրպագելովդ քո գարշելեացն՝ կեցցես. վա՜յ քեզ, երիցս թշուառական և արիւնարբու գազան, զի ժառանգելոց ես զյաւիտենական հուրն. այլ ես այժմ ցուցից քեզ 'ի վերայ ջրոցս զզօրութիւն Աստուծոյն իմոյ՝ զոր պաշտեմ:

Յայնժամ իշխանն հրամայեաց ընկենուլ զնա 'ի ծով անդ. և նա յառաջեալ կնքեաց զջուրսն. և ջուրցն փոփոխեալ 'ի լոյծ բնութենէն՝ զպնդութիւն ընդունէր. և անցեալ կայր սուրբն 'ի վերայ ջրոցն իբրև 'ի վերայ երկրի: Եւ ասէ առ դահիճսն. Եթէ ունիք աստուածս՝ երևեցուցէք զզօրութիւնս նոցա, եկեսջիք և դուք աստ. և էին նոքա արք իբրև վաթսուն և ութ, և դիմեալ նոցա 'ի վերայ ջրոցն ընկղմեցան 'ի խորս ծովուն: Եւ հրեշտակ Աստուծոյ իջեալ եկաց առ սրբոյն և ասէ. Ուրախ լեր, քահանայապետ Աստուծոյ. եկ ել այտի, և ընկալ զպսակն զոր պատրաստեալ է քեզ յԱստուծոյ: Իսկ սուրբն Վլաս յարուցեալ երթայր 'ի վերայ ջրոցն. և ծագեալ լոյս յերեսաց նորա, մինչև սքանչանալ ամենայն տեսողացն: Եւ դատաւորն ասէ. Այդչափ լաւագո՞յն համարեցար մեռանել քան զոհել աստուածոցն: Սուրբն ասէ. Գիտեա՛, ո՜վ դատաւոր, զի ծառայ եմ սրբոյն Աստուծոյ, և գարշելեաց ոչ զոհեմ: Բարկացեալ դատաւորն գրեաց 'ի վերայ նորա վճիռ և ասէ. ԶՎլասիոս՝ որ զհրաման ինքնակալ թագաւորին արհամարհեաց և զաստուածսն անարգեաց, հրամայեմ սրով հատանել զգլուխ նորա հանդերձ այլ ևս երկու մանկամբքն:

Իսկ սուրբն Վլաս աղօթէր և ասէր· Տէր Աստուած իմ, որ ապրեցուցեր զիս 'ի մահուանէ կռապաշտութեան և փոխեցեր 'ի խաւարէ 'ի լոյս, յանգիտութենէ 'ի ճշմարիտ գիտութիւն· Տէր զօրութեանց, որ նստիս 'ի վերայ քերովբէից և բանաս զսահանս երկնից, որ ձգեցեր զաղեղն քո նշան յամպս, որ զսատանայ կործանեցեր և զզօրութիւն վիշապին խորտակեցեր, լուր աղաչանաց ծառայիս քո· և թէ ոք ըստ պատահման փուշ կամ ոսկր կլանիցէ, և կամ այլ ինչ յայսպիսեաց նեղութեանց դիպեսցի՝ մարդ կամ անասուն, և կարդասցեն յանուն իմ առաջի աստուածութեանդ՝ կատարեա զիւրաքանչիւր զխնդրուածս սրտից նոցա։ Եւ յաղօթել նորա զայս՝ էջ ամպ յերկնից և ծածկեաց զնա· և ասէ ցնա Փրկիչն· Զամենայն խնդրուածս քո կատարեմ, նահատակ իմ քաջ, և առաւել ևս քան զոր աղօթեցերդ՝ արարից և օրհնեցից զտունս ամենեցուն, որք զյիշատակս քո կատարեն· և զշտեմարանս նոցա լցուցից բարութեամբ վասն բարի խոստովանութեան քո որ յիս։ Եւ զայսոսիկ խօսեցեալ Փրկիչն՝ վերացաւ յերկինս։ Եւ դահիճն վաղվաղակի յառաջ մատուցեալ գլխատեաց զսուրբն Վլաս հանդերձ երկու մանկամբքն արտաքոյ քաղաքին, մերձ 'ի պարիսպն 'ի վերայ վիմի։ Եւ կին մի բարեպաշտ որում անուն էր Եղեսեաք, առեալ զնշխարս նոցա՝ եդ 'ի տեղւոջն յորում կատարեցան, յորում բժշկութիւնք բազումք լինին մինչև ցայսօր ժամանակի։

Կատարեցաւ սուրբ և ամենափառ վկայն Վլասիոս, քաջ հովուապետն յամսեանն փետրուարի մետասան, 'ի թագաւորութեան Լիկիանոսի ամպարշտի· մեզ թագաւորելոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Վկայաբանութիւն Սրբոյ Առաքելոյն Տիմոթէի ։

Սուրբ առաքեալն Տիմոթէոս էր 'ի քաղաքէն Լիւստրացւոց, որդի հօր հեթանոսի և մօր հրէի։ Եւ եղև 'ի քարոզելն Պօղոսի զաւետարանն կենաց 'ի քաղաքս հեթանոսաց, եկն Տիմոթէոս յարեցաւ 'ի նա, և հաւատաց 'ի Քրիստոս և մկրտեցաւ 'ի Պօղոսէ և աշակերտեցաւ նմա։ Եւ քանզի էր իմաստուն և հեզ և փոյթ 'ի բարեպաշտութիւնն Քրիստոսի, և եղև ուղեկից Պօղոսի յաւետարանն փրկութեան։ Եւ սիրեաց զնա Պօղոս ըստ անձինն իւրոյ, որպէս էր ըզգաստ և քրիստոսասէր. և ձեռնադրեաց զնա եպիսկոպոս Եփեսացւոց քաղաքին. և կացոյց զնա անդ վասն տեղւոյն բարեխառնութեանն, զի կազմութեամբ մարմնով հիւանդոտ էր և յոյժ առաքինի. վասն որոյ հոգայր[1] Պօղոս զնմանէ. և գրէր թուղթ առ նա խրատագիր հայրական գթով, և զկնի բազում պատուիրանի՝ զգուշանալ հրամայէր նմա վասն ստամոքսին սակաւ գինեակ խառնել. զի ներգևեալ էր 'ի բազում պահոցն և խաչակցեալ ընդ Քրիստոսի։

Բազում սքանչելագործութիւնս արար նա 'ի բազում գաւառս. և զբազումս լուսաւորեաց բանիւն կենաց, շինելով եկեղեցիս, և ձեռնադրեալ քահանայս, հանապազորդ յաւելլով 'ի պաշտօն Տեառն ժողովուրդ՝ անթիւ բազմութիւն. երկրորդ լուսաւորիչ տիեզերաց զկնի մեծին Պօղոսի գտաւ աշխարհի։

---

[1] Միւս օր. գոհանայր։

Իսկ իբրև մերձեցաւ ժամանակ մարտիրոսութեան նորա, եկն 'ի քաղաքն Եփեսոս յաւուրս անօրէն արքային Ներոնի. և մտեալ 'ի քաղաքն, տեսանէր ամբոխ բազում, զի տօն էր պղծութեան գարշելի կռոց նոցա. և ամենեքեան ժողովեալ էին, արք և կանայք պատրաստել զզոհն, և առնել զգարշելի գործն խառնակութեան 'ի պատիւ աստուածոցն. զի արք և կանայք ծածկէին զերեսս զի մի՛ տեսցեն զմիմեանս, և խառնակէին 'ի մէջ հրապարակին. զոր և զչար աւանդն զայն դեռ ևս ունին անիծեալ Մանիքեցիքն։

Իսկ իբրև ետես սուրբ առաքեալն Տիմոթէոս զնոսա յայնպիսի խառնակութեան գործսն, անցեալ ընդ մէջ փողոցին լի արտասուօք լինէր. աղաչէր զնոսա, մաղթէր 'ի բաց կալ նոցա յայնպիսի մոլորական խաբէութենէն։ Եւ նոցա զայն լուեալ՝ ամբոխն ամենայն յարձակեցան 'ի վերայ նորա. և բրօվք յանխնայ հարին զնա մինչև աւանդեաց զոգին։ Եւ բարձին զմարմին սրբոյն բազմութիւնք քրիստոնէիցն պատեալ սուրբ կտաւօք, և ջահիւք լուցելովք և բուրմամբ խնկոց եդեալ 'ի տապանի, բերեալ թաղեցին 'ի տեղւոջն որ կոչի Պիոն, յայնկոյս նաւահանգստին Ոտիոյ։

Իսկ 'ի դադարել հալածանացն, և 'ի հաստատել հաւատոյ քրիստոնէութեան, բարձեալ զսուրբ նշխարս սրբոյն տարան 'ի Կոստանդնուպօլիս, և եդին 'ի վկայարանն սուրբ առաքելոցն, յեկեղեցւոջն որ Սուրբ Առաքեալ անուանի, տօնելով զյիշատակ մարտիրոսութեան նորա 'ի յունուարի քսան և մի՝ մեծաւ տօնախմբութեամբ, 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյ Առաքելոյն Տիտոսի ։

Զենաս՝ զոր յիշատակէ Պօղոս 'ի թուղթս իւր, նա գրեաց զպատմութիւն վարուց սրբոյն Տիտոսի առաքելոյ, որ էր մի յեօթանասնից անտի։ Սա էր 'ի Կրետիսոյ կղզւոյն, յոյժ բարեբարոյ և մեծազգի, եղբօրորդի արքային Մինոսայ թագաւորին Կրետիսոյ. և էր ուսումնասէր յոյժ և ցանկայր ուսանել զիմաստասիրական գիրսն, զհելլենական դպրութիւն և զհանճար զՀոմերոսի և զՊղատոնեայ, և զնոցին նմանեաց իմաստասիրացն զստորոգութիւնս։

Եւ էր այնուհետև ամաց քսանից, և լուաւ ձայն յումեմնէ որ ասէր ցնա. Տի՛տոս, Տիտոս, պարտ է քեզ ելանել աստի և կեցուցանել զոգիդ քո, զի ոչինչ է օգուտ քեզ ուսանել զգիրս Հոմերոսի և Պղատոնեայ, զոր խորհեալդ ես։ Եւ նա 'ի զարմացման եղեալ, սկսաւ այնուհետև ընթեռնուլ զգիրս մարգարէականս։ Եւ առեալ զգիրս մարգարէին Եսայեայ, եբաց զայն տեղին յորում գրեալ էր. Նորոգեցարուք առ իս, կղզիք. և խփեալ զգիրսն, եղև առ նա շնորհք իմն աստուածային։ Եւ իսկոյն եղև լուր համբաւոյն Քրիստոսի առ թագաւորն Մինոս, և յամենայն կղզին Կրետիսոյ նշան սքանչելեացն զոր առնէր Քրիստոս յԵրուսաղէմ։ զարմանայր թագաւորն և ցանկայր տեսանել զՔրիստոս, որպէս Եդեսացւոց քաղաքին Աբգար թագաւորն։ Եւ խորհուրդ արարեալ ընդ իշխանս Կրետիսոյ, առաքեաց զեղբօրորդին իւր զՏիտոս յԵրուսաղէմ, և ընդ նմա սուրհանդակս և արս իմաստունս, տեսանել զՔրիստոս և զսքանչելիսն զոր առնէր, և դարձեալ պատմեսցեն նմա ստուգութեամբ զամենայն:

Եւ յորժամ գնաց Տիտոս յԵրուսաղէմ, ետես ըզՔրիստոս, և երկիր եպագ նմա, և ականատես եղև սքանչելեացն զոր առնէր Քրիստոս յԵրուսաղէմ. և գրեաց ստուգութեամբ առ Թագաւորն վասն Քրիստոսի, և առաքեաց զիշխանսն և զսուրհանդակսն 'ի ձեռն Թղթոյ 'ի հօրեղբայրն իւր, և ինքն մնաց անդէն յԵրուսաղէմ յարել յաշակերտսն Տեառն. և ականատես եղև չարչարանացն Քրիստոսի և խաչելութեանն և մահուն և թաղմանն և յարութեանն 'ի մեռելոց և համբարձմանն յերկինս: Եւ գալստեամբ սուրբ Հոգւոյն 'ի վերնատունն՝ ընդ սրբոց Առաքելոցն էր Տիտոս, և թուեցաւ 'ի թիւ եօթանասուն և երկու աշակերտացն Տեառն:

Իսկ 'ի հաւատալն Պօղոսի 'ի Քրիստոս 'ի կեսարիա Պաղեստինեցւոց, ձեռնադրեցին Առաքեալքն զՏիտոս եպիսկոպոս և առաքեցին զկնի Պօղոսի 'ի քարոզութիւն ընդհանուր տիեզերաց. որք երթեալ քարոզէին զՔրիստոս յամենայն քաղաքս և 'ի գաւառս սերմանէին զբանն կենաց. և բազում տանջանս և նեղութիւնս կրեալ՝ համբերեցին վասն անուան Տեառն Քրիստոսի, և լուսաւորէին մկրտութեամբ, բազում և անբաւ առնելով նշանս և արուեստս մեծամեծս. և այնու հաւանեցուցանէին հաւատալ 'ի Քրիստոս. և անթիւ բազմութիւն հաւատացելոց հանապազ նուիրէին Աստուծոյ:

Եւ երթեալ 'ի Կրիտիս կղզւոջ, կացոյց Պօղոս զՏիտոս եպիսկոպոս Գորտինա քաղաքին, իբրև ժառանգութիւն իմն հայրենի. և անտի ելեալ եկին յԱսիա և յԵփեսոս, մտին 'ի քաղաքն և սկսան քարոզել զաւետարանն փրկութեան, և բազում հիւանդաց դնէին ձեռս և կարդալով զանուն Տեառն Յիսուսի և առժամայն բժշկէին: Եւ ել համբաւ սքանչելեաց նոցա ընդ ամենայն գաւառն, և բազումք 'ի հրէից և 'ի հեթանոսաց անսային հաւատոյն, և հաւատացին 'ի ժամուն յայնմիկ ոգիք աւելի քան զերկոտասան հազար մարդ ընդ այր և ընդ կին և ընդ մանկունս, և մկրտեցան 'ի նմին աւուր։ Իսկ Պօղոս ըստ հրաւիրելոյ Հոգւոյն սրբոյ՝ դարձաւ անտի և եկն 'ի Հռովմ, և Տիտոս ոչ եթող զՊօղոս, 'ի սկզբան քարոզութեանն նորա մինչև ցկատարումն նորին. այլ հանապազ ընդ նմա ուղևորեալ բազում և մեծամեծ վշտօք, մինչև ընկալաւ Պօղոս զվճիռ մարտիրոսութեան 'ի Ներոնէ կայսերէ, սրով հատեալ զգլուխն 'ի Հռովմ քաղաքի, և շատ սգացեալ սրբոյն Տիտոսի որ մնաց 'ի սրբոյն Պօղոսէ։

Իբրև որբ մնալով դարձաւ բազում արտասուօք 'ի Հռովմէ, և եկն 'ի վիճակ իւր 'ի Կրետէս կղզի. և ընկալան զնա մեծաւ խնդութեամբ իբրև զիւրեանց ազգային, և 'ի գալստեան նորա տօն մեծ կատարեցին. և քանզի տակաւին հեթանոսք էին, զարդարեցին զտաճար կռոցն, և կոչեցին զՏիտոս 'ի տաճար կռոցն. և մտեալ 'ի տաճարն, սկսաւ աղօթել Եբրայեցւոց բարբառովն, և ասէ զսաղմոսս զայս. Աստուած մեր ողորմեա մեզ և օրհնեա զմեզ։ Եւ իբրև աղօթեաց այսպէս, 'ի կատարել զաղօթսն, արար զփրկական նշանն, և յանկարծակի Արտիմէ բագինն զարկաւ զգետնի և անդէն խորտակեցաւ։ Եւ տեսեալ ամենայն ժողովրդոցն նշան իմն սքանչելի 'ի վերայ սուրբ Առաքելոյն, և համարէին զնա Աստուած, և միաբան աղաղակէին ասելով. Մի է Աստուած որ այսօր երևեցաւ մեզ։

Իսկ նոցա սկսաւ քարոզել զՔրիստոս, և հաւատացին յաւուր յայնմիկ հոգիք իբրև հինգ հարիւր, և մկրտեալ լուսաւորեաց զնոսա սուրբ աւազանաւն, և ձեռնադրեաց 'ի նոցանէ երիցունս և սարկաւագունս, շինեաց եկեղեցիս, և կատարեաց 'ի նմա քահանայս և պաշտօնեայս, և ել գնաց յայլ տեղիս և 'ի քաղաքս։ Եւ էին 'ի Կրետէ ինն քաղաք 'ի կղզւոջն և գեօղս բազումս, և արար առ նոսա բազում սքանչելիս, քարոզելով զՔրիստոս և դարձոյց զնոսա յաստուածգիտութիւն։ Շինեաց եկեղեցիս և ձեռնադրեաց ինն եպիսկոպոս ինն քաղաքաց. 'ի Կնոսոս, յԵռապիտնի, 'ի Կիդոնիա, 'ի Քերոնիսոն, յԵլևթերոն, 'ի Լամբիս, 'ի Կիսամիա, 'ի Կամբանա, 'ի Գորտինա։ Եւ արար զԳորտինա մետրոպօլիս, որ թարգմանի մայրաքաղաք. և եղև առ նոսա ամս վեց, հաստատեաց զնոսա 'ի հաւատս ամենասուրբ Երրորդութեանն: Եւ բազում և այնչափ սքանչելիս արար անդ, օրինակ բարեաց լինէր ամենայն աշխարհին. քանզի էր առաքինի յոյժ և անինչ. և կերակուր նորա բանջար լոկ 'ի պարտիզէ, և ջուր լոկ ըմպելի:

Եւ եղեն աւուրք կենաց նորա այսչափ: Քսանամեայ էր յորժամ գնաց յԵրուսաղէմ յերկրպագութիւն Քրիստոսի, և եղև առ Քրիստոս ամ մի, և եղև հետևող Պօղոսի առաքելոյն 'ի քարոզութեանն ամս երեսուն և ութ, և 'ի Կրիտէ յաթոռն իւր ամս վեց. և երթեալ 'ի գաւառն իւր, եկաց ամս ինն: Եւ եղեն ամք կենաց նորա յաշխարհի զոր եկաց, ամս եօթանասուն և չորս, և զայսչափ ամս ձնչէր զմարմին իւր ազգի ազգի առաքինութեամբք: Եւ 'ի քնոյ ժամուն հանգչէր ոչ 'ի վերայ բարձի, այլ 'ի վերայ գետնոյ, խորգոյ և մոխրոյ:

Իսկ յորժամ հանդերձեալ էր փոխիլ առ Քրիստոս, ետես գունդս հրեշտակաց սրբոց որք իջին առ նա, և տունն լի եղև անուշահոտ խնկով, և ամպ լուսաւոր հովանի եղև 'ի վերայ նորա, և պայծառացան երեսք նորա և ժպտեցաւ, և յարուցեալ տարածեաց յերկինս զձեռս իւր, և ասէ այսպէս. Տէր իմ Յիսուս Քրիստոս, զհաւատս քո անշարժ պահեցի, և ժողովրդեանս քո անդրդուելի զգուշացայ. այսուհետև և դու, Տէր, անխախտելի հաստատեա և պահեա զժողովուրդս քո, և զհոգիս իմ յանձն առնեմ 'ի ձեռս քո. և յասելն զամէնն, աւանդեաց զհոգին առ Աստուած: Եւ բարձեալ զմարմին նորա, պատեցին մաքուր և սուրբ կտաւօք, և օծին իւղովք և անուշահոտ խնկօք: Եւ յորժամ տանէին 'ի թաղումն գերեզմանին, եղեն նշանք և սքանչելիք. որ ղօղեալ և թաքուցեալ կային բագինքն 'ի կղզւոջն՝ ամենեքեան անկեալ խորտակեցան. զոր տեսեալ ամենեքեան՝ առաւել հաստատէին 'ի հաւատս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Վկայաբանութիւն Սրբոյն Տրիփոնի ։

Էր Տրիփոն որդի հաւատացեալ հօր և մօր. և վախճանեալ հօր նորա, թողու զնա հանդերձ քերբ միով. և մայր նորա և քոյրն բարեպաշտութեամբ սնուցանէին զմանուկն, և նուիրէին Տեառն, և ուսուցանէին խրատու իմաստութեամբ, և շնորհքն Աստուծոյ էին 'ի վերայ մանկանն. և 'ի լնուլ ամաց երկոտասանից Տրիփոնի, և էր առ հասակակիցս իւր յուսումն բարեպաշտութեան, և յորդորէր զնոսա 'ի վարս Աստուծոյ։ Եւ եղև յանկարծակի մանկան մի 'ի նոցանէ չարաթոյն օձի խածանել, և 'ի դժնդակ հարելոյն պաշարեալ, և թուլացեալ լինէր իբրև զմեռեալ. և մանկանցն զաղաղակ բարձեալ, ժողովեցան բազում արք և կանայք և ծնօղք հարելոյն. և ողբս առեալ լային ծնօղքն, ընդ նոսին և այլ ժողովեալքն, և համարէին զնա մեռեալ։ Եւ իբրև ժամք երեք անցին, յանկարծակի խածեալն ձայնեաց առ Տրիփոն և ասէ. Օգնեա ինձ աղաչելով զԱստուած զի ապրեցայց. զի քեզ տուեալ շնորհք բժշկութեան յԱստուծոյ։ Ածէին զմանուկն Տրիփոն առ խածեալ մանուկն. և նա ամբարձեալ զաչս իւր յերկինս, և կնքեաց զհարեալն 'ի թունաւորէն և ասէ. Լուսատու տիեզերաց Քրիստոս, կեանք և փրկիչ ազգի մարդկան, բժշկեա զվիրաւորեալս յանուն քո սուրբ. զի կարող ես յամենայնի հզօր զօրութեամբ քո, Տէր Աստուած իմ։ Եւ իսկոյն յարեաւ մանուկն և փառաւորէր ընդ նմա զԱստուած. նոյնպէս և ամենայն ժողովուրդն. և զարմացեալք սիրեցին զնա որպէս զծառայ Աստուծոյ. և նա ոչ որպէս զմանուկ մեծամտէր, այլ Աստուծոյ տայր զփառսն. և ինքն 'ի խորհուրդս արդարութեան խոկայր, և 'ի գործս արդարութեան միշտ մրցէր և կեայր յաղօթս:

Այր մի Ճանապարհորդեալ անցանէր առ նովաւ, նստեալ 'ի վերայ գրաստու. ասէ Տրիփոնիոս. Եկից զհետ քո, այր դու, ուր և Աստուած հրամայեսցէ: Եւ նա ասէ. Եկ, բարի է ուղեակ. զի ետես զշնորհսն Աստուծոյ երևեալ 'ի վերայ նորա. և աղաչեաց զնա և եհան 'ի գրաստ, և ինքն զհետ նորա. հարցանէր նա զօգտակարն, և լսէր նա զբանն Ճշմարտութեան. և զարմանայր, եթէ զիա՞րդ մանուկ գոլով և կատարեալ բանս բարբառի: Եւ տեսանէր զհրեշտակ մանկանն որ առեալ հրաման 'ի Տեառնէ պահել զՏրիփոն, և զարհուրեցաւ. և սուրբն Աստուծոյ քաջալերէր զնա բանիւք իմաստութեան. նա և դեռ աղաղակէին զկնի նորա և ասէին. Ցո՞վ երթաս, Տրիփոն, հալածիչ մեր և քարոզ սրբութեան: Իսկ նա ոչինչ առ նոսա պատասխանէր: Եւ ասէր Ճանապարհորդն. Սուրբ Աստուծոյ, եղէց քեզ ծառայ և սպասաւոր, զի արժանի եղէց ողորմութեան Տեառն: Եւ նա ասէ. Ծառայ Քրիստոսի ես, սպասաւորեա նորա սրբութեամբ և արդարութեամբ և կեցցես: Եւ եկեալ յօթևան 'ի պանդոկի մի, և էր պանդոկապետն հիւանդ 'ի սաստիկ ջերման տագնապեալ. և աղաչեաց ընկերն իւր զի ապրեցուսցէ զհիւանդն: Եւ սուրբն կնքեալ զայրն նշանաւ խաչին Քրիստոսի, և ասէր. Արի՛ կաց վաղվաղակի յանուն Տեառն Աստուծոյ. և վաղվաղակի յարեաւ և պաշտէր զնոսա, և ետ առաջի նոցա սեղան, և ուրախ եղև առողջացեալն 'ի ձեռն սրբոյն, և հանդերձ ընտանեօքն փառաւորէր զԱստուած:

Եւ յարուցեալ առաւօտուն գնացին 'ի Կեսարիա, հանապազորդ սաղմոսիւք և օրհնութեամբ և աղօթիւք: Եւ մինչդեռ երթային զճանապարհայն՝ գազան մի վայրենի 'ի դիւաց զայրացեալ, գայր ընդդէմ նոցա, որպէս թէ 'ի կորուսանել զնոսա: Իսկ սուրբն Տրիփոն ոչինչ յաղօթիցն սխալէր. և արհամարհէր զչար գազանն։ Իսկ ընկեր նորա զարհուրեցաւ, և ճիչեաց առ սուրբն և ասէ. Ապրեցո զիս։ Եւ սուրբն ասէ. Քաջալերեա և մի երկնչիր, զի Տէր ընդ մեզ է։ Եւ ամբարձ զձեռս իւր 'ի վեր և ասէ. Տէր Աստուած ամենակալ, ձգեա զպահպանական աջ քո, և հալածեա զերկիւղ դիւական 'ի ծառայէս քումմէ. չար դևքն նկուն լիցին յահաւոր անուանէդ քումմէ, յորմէ դողան ամենայն արարածք. զօրացո զսա 'ի կամս ողորմութեան քո, և մերժեա զխռովեցուցիչն, զի զքեզ փառաւորեսցէ՝ աներկիւղ յամենաչար հոգւոյն։ Եւ զայս ասացեալ, զարհուրեալն քաջալերեցաւ և փառաւորէր զԱստուած աներկիւղ համարձակութեամբ։ Եւ սուրբն ընդդէմ գազանին կնքեալ՝ ասէր. Դարձիր 'ի տեղի քո ուստի եկիր, և որք առաքեցինն զքեզ՝ նկուն լիցին. և իսկոյն փախստական լինէր։ Եւ գնացին 'ի Կեսարիա. և իբրև մտին 'ի քաղաքն, ել ընդ առաջ նորա դիւահար մի, աղաղակեաց առ Տրիփոն և ասէ. Փրկեա զիս, ծառայդ Աստուծոյ, 'ի պաշարմանէ թշնամւոյն՝ որ լլկէ զիս։ Իսկ սուրբն Աստուծոյ յարտասուս եղեալ, յոգւոց հանեալ և ասէ. Ճառագայթ փառաց և պատկեր բարերարին Աստուծոյ, անշիջանելի լոյս իրաւանց և արդարութեան, ահեղ և փառաւորեալ անուն քո, Քրիստոս, հալածեսցէ զայս չար 'ի ստեղծուածոյս քո. զի որբեալ 'ի չարէն, զարարողդ օրհնեսցէ, զի դու կարող և հզօր ես յամենայնի։ Եւ նոյնժամայն լլկեալ սաստկապէս զայրն, ել 'ի նմանէ որպէս փոթորկեալ հողմ ուժգին յոյժ, չքոտեցաւ յանապատն կոյս։ Եւ զերծեալ այրն յայսոյն չարէ՝ փառաւորէր զԱստուած. և գնաց 'ի տուն իւր ուրախութեամբ, և այլ ոչ ևս ետես զչարն յինքեան։

Այլ և այր ոմն նշանաւոր վտանգեալ 'ի դիւէ, իբրև լուաւ զայն՝ եկն առ սուրբն Աստուծոյ Տրիփոն, աղաչէր զնա զի արասցէ նմա ողորմութիւն, և փըրկեսցէ զնա յայսոյն չարէ. և ասէ Տրիփոն. Ողորմեսցի քեզ լողն վտանգելոց. և կալեալ զձեռանէ նորա, շարժեաց զնա դևն. և ասէ սուրբն. Քեզ ասեմ, այս չար անիրաւութեան, երկե՛ր յահաւորէն Աստուծոյ և ել 'ի սմանէ. և այլ մի ևս դառնաս յայս բնակութիւն։ Եւ վտանգեալ զայրն՝ որպէս ծուխ թանձրացեալ 'ի հողմոյ պակասեաց. և այրն զգաստացեալ՝ յարուցեալ փառաւորէր զԱստուած ընդ սրբոյն Տրիփոնեայ։

Իսկ Ուղկիոս դատաւոր 'ի քաղաքին լուեալ զայս, առաքեաց արս հաւատարիմս ածել զնա, որպէս զի տեսցէ զսուրբն Աստուծոյ. և ել ընդ առաջ նորա առ դուրս իւր և ասէ ցնա. Բարի եկիր, ծառայ Աստուծոյ բարձրելոյ։ Պատասխանի ետ սուրբն Աստուծոյ և ասէ. Աստուած բարձրեալն լուսաւորեսցէ ըզմիտս քո առ օգտակարագոյնսն անձին քո։ Ասէ ցնա դատաւորն. Մանուկ գոլով՝ որպէս զայդպիսի շնորհս յԱստուծոյ ստացեալ ունիս, որպէս զկատարեալ այր հոգւով և ճշմարտութեամբ լցեալ յԱստուծոյ շնորհացն։ Ասէ ցնա սուրբն Տրիփոն. Ամենայն արարածոց Տէրն՝ ոչ ըստ արժանաւորութեան իմոյ, այլ ըստ ողորմութեանն իւրոյ գթացաւ յիս, և այցելութիւն արար ինձ, որպէս զի զէմն խափանեսցէ, զի մի պարծեսցի կարողն մարմնով և գիտութեամբն իւրով առաջի սոցա. զի նա է գիտութիւն և զօրութիւն Աստուծոյ կամացն. և որով կամի՝ հալածէ զդևս և զցաւս 'ի մարդկանէ, և զախտ գիջութեան և զազգամունս չար խորհրդոց որ ապականեն 'ի 'ի գործ ապականութեան պէսպէս և զանազանս որ ընկղմեն զմարդիկ 'ի խորս ապականութեան չարեաց. զի ըստ Աստուծոյ եղեալ մանուկն՝ իմաստնագոյն է քան զծերսն, և տկարն Աստուծոյ՝ զօրաւոր է քան զզօրաւորս երկրի։ Արդ և դու, հաւատա յամենակալն Աստուած և ստացիր 'ի նմանէ զբարերարութեան շնորհս, զի 'ի ձեռն հաւատոյ և արդարութեան վարուց ժառանգեսցես զարքայութիւնն երկնից, և զանապական բարիսն՝ որ կայ պահի հաւատացելոց սրբոց և արդարոց, անհամեմատ լուսաւորութիւն և պայծառութիւն 'ի Քրիստոս Յիսուս։ Եւ ասէ դատաւորն. Աղօթեա վասն իմ, զի որպէս ասացերդ՝ եղիցի։

Իսկ սուրբն Տրիփոն օրհնէր զԱստուած և ասէր. Իմանալի զօրութիւն, լուսաւորեա զսա լուսով աստուածգիտութեանն, վերանձգելով 'ի խաւարէ 'ի լոյս, որ լուսաւոր առնես զառ 'ի քեզ հաւատացեալս, զի լուսով քո տեսանելով զլոյս աստուածգիտութեան՝ փառաւորեսցէ զքեզ, Ճշմարիտդ Աստուած։ Եւ յայնմ հետէ սրբեալ 'ի մեղաց ահիւն Աստուծոյ, կայր և մնայր 'ի հաւատս ուղիղս, և 'ի յոյս բարեպաշտութեան վարս։ Իսկ այր ոմն 'ի նմին քաղաքէ ունէր դուստր մի, և եղ առ սուրբն Աստուծոյ, աղաչէր զնա զի եկեալ փրկեսցէ զնա յայսոյն չարէ։ Եւ խոնարհեալ սրբոյն յաղաչանս առնն, եկն զկնի նորա 'ի տունն· և իբրև ետես զվտանգեալն, յարտասուս եղեալ հառաչանօք կարդաց առ Աստուած և ասէ· Բաշխող բարեաց և ողորմած Տէր, հայեաս յարարածըս քո յըմբռնելոյ օտարի 'ի չար հոգւոյն· և արա զգութ մարդասէր շնորհաց քոց· հալածեա զայս չար 'ի ստեղծուածոյս քո, և նկուն լիցի· և սուրբ անուն քո փառաւորեսցի 'ի քոյոց արարածոց· զի դու ես փառաց և պատուոյ արժանի Տէր։ Եւ զայս ասացեալ, նշանաւ խաչին Քրիստոսի կնքեալ զաղջիկն՝ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, և առժամայն սրբեցաւ, և փառաւորէր զԱստուած ամենայն տամբ իւրով, գոհանալով և օրհնելով զԱստուած։

Յետ այսորիկ ածին առ նա հիւանդ մի ջրգողեալ, որ զբազում ինչս էր ծախեալ և ոչինչ օգտեալ· և աղաչէր զսուրբն զի աղօթս արարեալ բժշկեսցէ զնա յանուն Տեառն։ Եւ գթացեալ 'ի վերայ նորա արտասուեաց· և հառաչանօք կարդաց զանուն Տեառն, և յուշ առնէր զբժշկութիւնսն, յորժամ յերկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ, զի գթասցի 'ի վերայ ախտացելոյն և տացէ առողջութիւն ըստ մեծի ողորմութեան իւրում· որ եղև իսկ աղօթիւք և բարեխօսութեամբ սրբոյն· և գոհանալով օրհնէր զԱստուած։ Եւ այնպէս երանելին հանապազորդ աղօթիւք և պահօք անդուլութեամբ, և ամենայն արդար կրօնիւք խոկայր յօրէնս Տեառն 'ի տուէ և 'ի գիշերի· և սաստիկ մարտ էր դիւացն ընդ սուրբն· այլ շնորհօքն Տեառն յաղթէր դիւացն մարտիցն։ Եւ ապա գայր առ նա կին մի կոյր և կարկամեալ յայսոց չարեաց բազմաց· զոր տեսեալ սրբոյն՝ զարհուրեցաւ և ասէ· Ո՞վ ես դու, և ուստի՞ գաս։ Ասէ կինն· Ես եմ այսոց ընդունարան. ածեալ յանապատէ եկեալ՝ կամ առաջի քո։ Իսկ սուրբն ասէ. Ընդէ՞ր եկիր այսր։ Եւ նա ասէ. Գիտացի զզօրութիւն Աստուծոյ շնորհացն որ 'ի քեզ։ Եւ սուրբն Աստուծոյ ելաց դառնապէս 'ի վերայ թշուառացելոյն. և յաղօթս եկաց արտասուօք առ Տէր 'ի բազում ժամս. և դևքն վտանգեալ յաղօթից սրբոյն, այլ և այլ ձայնս արձակէին զարհուրականս։ Իսկ սուրբն Աստուծոյ ասաց. Յանուն Տեառն զօրութեանց հալածեալք 'ի դմանէ, այլ մի ևս լիցի ձեզ իշխանութիւն դառնալ յայս բնակութիւն ձեր։ Իսկ այսքն աղաղակէին շփոթեալք յահէ Տեառն ամենակալին։ Աղաղակաւ ասէին ցսուրբն. Որ հալածեցեր զմեզ աղօթիւք քովք երթամք 'ի Հռովմ, զի և անդ գայցես ակամայ։ Եւ կնքեալ զզգայարան կընոջն նշանաւ խաչին Քրիստոսի զոր ունէր ընդ իւր, և եղև զգաստացեալ 'ի դիւացն և առողջացեալ 'ի ցաւոցն։ Եւ տեսեալ զայս ամենեցուն՝ փառաւոր առնէին զԱստուած զպարգևողն բարեաց 'ի ձեռն սրբոյն։ Իսկ դիւացն երթեալ 'ի Հռովմ, բնակեցան առ կնոջ ուրեմն պատուաւորի 'ի քաղաքի, որում անուն էր Պրոկղ. և 'ի սաստիկ տանջել դիւացն՝ կնոջն ոչ ուստեք մխիթարութիւն գտանէր։ Բայց զաղաղակ բարձեալ դիւացն, ասէին. Եթէ ոչ գայցէ Տրիփոն աստ, ոչ ելանեմք. և բազում հարցաքննութեամբ խուզէին, մինչև եկեալ գտին զնա 'ի Կեսարիա. և տարան զնա 'ի Հռովմ մեծաւ փութով։ Եւ իբրև եմուտ 'ի տուն վշտացելոյն, զաղաղակ բարձին դևքն և ասեն. Եկիր և աստ հալածել զմեզ։ Եւ ասէ սուրբն. Յանուն Տեառն զօրութեանց՝ որ զօրացոյցն զիս 'ի վերայ ձեր, անզօր եղեալ հալածեսջիք 'ի խաւարն արտաքին՝ որ պատրաստեալ է ըստ չարութեան ձերոյ յամենեցունց փրկչէն։ Եւ անդէն սրբեցաւ կինն յայսոց պղծոց և փառաւոր առնէր զԱստուած, և ետ զնա ցայր իւր. և բազումս խօսեցաւ վասն հաւատոց և արդարութեան. և օրհնեալ զնոսա, դառնայր 'ի գեօղն Սամուսա, յորս և բժշկութիւնաբեր նովաւ Աստուած. որ մինչև ցայսօր պատմի զօրութիւն շնորհացն որ տուաւ նմա յԱստուծոյ՝ 'ի վերայ դիւաց յաղթութիւն, պարգևք որ 'ի Հայր և յՈրդի և 'ի սուրբ Հոգւոյն. որում փառք յաւիտեանս, ամէն։

Ընդ ժամանակս ընդ այնոսիկ, թագաւորեաց 'ի Հռովմ Գորդիանոս. սա բարեպաշտ եղեալ, և էր սորա դուստր մի համանուն, և վարժեալ զնա փիլիսոփայական իմաստութեամբ, էր իմաստուն և գեղեցիկ յոյժ. և յոլովք 'ի թագաւորական զարմից խնդրէին զնա կին։ Եւ մինչդեռ խորհէին, եղև այս չար 'ի դուստր թագաւորին, և նա աղաղակէր և կարդայր զանուն Տրիփոնի և ասէր. Օգնեա ինձ աղօթիւք քովք, սուրբդ Աստուծոյ։ Եւ թագաւորն և թագուհին ահաբեկեալք խուզէին թէ ո՞վ իցէ Տրիփոնն։ Եւ բազում խուզիւ և քննութեամբ եկեալ գտանէին զնա 'ի Սամուսա գեօղն, մերձ 'ի լիճն արածելով սագս, որ ցուցեալ եղև թէ նա է։ Եւ հարցեալ թէ դո՞ւ ես Տրիփոնն, և ասէ. Ես եմ. զի 'ի Տեառնէ ազդեալ էր երթալ ընդ նոսա և մի՛ յապաղել։ Եւ բռնութեամբ հանէին զնա յերիվարն, և փութացուցանէին ըստ հրամանի թագաւորին, և զպատճառս երթալոյն ծանուցանէին նմա. և նա 'ի ճանապարհին ոչ դադարէր յաղաչել զԱստուած զի բժշկեսցի դուստր թագաւորին նախ քան զմտանելն նորա առ նա. որ եղև իսկ հայցուածք սրբոյն։ Զի իբրև եհաս լուր գալստեան սրբոյն Տրիփոնի 'ի լսելիս թագաւորին և թագուհւոյն և դստերն, աղաղակեցին դևք չփոթեալք և ասեն. Արի՛ք ելցուք 'ի յաղջկանէ յայսմանէ, զի գայ Տրիփոն հանել զմեզ 'ի բնակութենէս և հալածէ զմեզ ուր չէ մեր կայք։ Եւ անդէն ըլկեալ զաղջիկն, ելին 'ի նմանէ որպէս հողմ սաստիկ առաջի ամենեցուն, և առողջացաւ աղջիկն։ Եւ յետ երից աւուրց եկն Տրիփոն. և հաւատաց թագաւորն թէ աղօթիւք սրբոյն արար Տէր բժշկութիւն դստեր նորա. և մեծարեաց զսուրբն թագաւորն առաջի ամենայն մեծամեծաց իւրոց և ասէ. Սուրբդ Աստուծոյ, հաւատամ թէ 'ի ձեռն քո այցելութիւն արար Տէր դստերն իմոյ։ Բայց աղաչեմ զքեզ, սուրբդ Աստուծոյ, զի ցուցցես մեզ զդևն որ չարչարէր զդուստրն իմ։ Եւ նորա խնդրեալ ժամ 'ի թագաւորէն աւուրս եօթն զի յաղօթս կացցէ առ Տէր, և աղաչանք թագաւորին կատարեսցին։ Եւ պահեալ զշաբաթն և կացեալ յա ղօթս զտիւ և զգիշեր արտասուօք և պնդ հաւատովք, և տուան նմա 'ի Տեառնէ զոր խնդրեացն։ Եւ կոչեցաւ առ թագաւորն մեծաւ պատուով. և դարձեալ աղաչեաց զնոյնս։ Եւ ասէ սուրբն. Քեզ ասեմ այս չար, զինչ և ով իցես՝ երևեսցիս որք աստ կայք։ Եւ նոյնժամայն եկն որ իշխանն էր այլոց դիւացն, և որք մտեալ էին 'ի դուստր թագաւորին, կերպարանեալ որպէս զշուն և հրեղէն աչս ունելով, և զգլուխն ընդ գետինն քարշելով։

Ասէ սուրբն ցդևսն. Ա՛յ ամենաչար դև, յո՞ր սակս մտեր յաղջիկդ չարչարել զդա։ Ասէ դևն. Հայրն իմ առաքեաց զիս հանդերձ ընկերօքս չարչարել զդա, և ապականել զգեղեցկութիւն դորա։ Ասէ սուրբն. Եւ ո՞վ է հայրն ձեր։ Ասէ դևն. Սատանայ, հակառակ բարւոյ, և չարին յորդորիչ, որ յափշտակէ զխորհուրդս բարեպաշտութեան 'ի մարդկանէ, զաստուածսիրութիւն, զարդարութիւն. և տնկէ զխորհուրդս անաստուածութեան և անօրէնութեան և հայհոյութեան, զորս և Պետրոս և Պօղոս քարոզեցին 'ի քաղաքիս յայսմիկ և ընդ ամենայն տիեզերս, հանդերձ այլ առաքելովք. զհաւատս և զարդարութեան վարս արհամարհանօք արհամարհեալ ուսուցէ մեզ. ոչ միայն խորհրդովք պատրել զմարդիկ, այլ և գործովք չարեօք, զհաւանեալսն մոլորեցուցանէ բազմաստուածութեամբն, երդմնահարութեամբն, սպանութեամբ, արբեցութեամբ, բամբասանօք, բարկութեամբ, մախանօք, ստութեամբ, ագահութեամբ, ամբարտաւանութեամբ։ Եւ զի՞ ևս պարտ է ինձ ասել զամենայն չարաբարութիւնս մեր և հօրն մերոյ. զի գիրք ձեր զամենայն պատմեն ձեզ զչարութիւն մեր՝ խորհրդով և բանիւ և գործով, զոր 'ի ձեռն մարդկան կատարեմք, հեշտութեամբ քարշել յարդարութենէ 'ի մեղս։ Զայս ակամայ ասացի քեզ կշտամբեալ 'ի հրեշտակէ Աստուծոյ. զի հայրն մեր չարի արարիչ է, և մեք արբանեակք չարին։ Բայց առ արդարս որք սիրեցին զԱստուած, անզօրք առ միտս նոցա լինիմք. այլ առ խորհեալսն 'ի կամս մեր և առ ցանկութիւնս երկրաւորաց՝ զօրանամք. ահա ասացի քեզ զայս ոչ 'ի կամաց, այլ ակամայ զճշմարիտն ասացի, զի ոչ բնաւին առ մեզ ճշմարտութիւն քարոզի, այլ ստութիւն, զի կարասցուք որսալ զմարդիկ 'ի կորստեան վիհն և յանշէջ հուրն, որ պատրաստեալ է հօրն մերոյ և մեզ, որպէս ասաց Քրիստոս։

Եւ զայս լուեալ թագաւորին և մեծամեծացն, զարմացեալ հիացմամբ փառաւորէին զԱստուած. և բազումք 'ի լողացն հաւատացին յԱստուած, և հաւատացեալքն առաւել հաստատեցան 'ի հաւատս։ Եւ ասէ սուրբն ցդևն. Երթ յետս, հակառակորդ ճշմարտութեանն, թէպէտ ակամայ ասացեր. և անդէն չքոտեցաւ այսն չար 'ի միջոյ նոցա։ Եւ թագաւորն մեծարեաց զերանելի այրն Աստուծոյ, և ետ նմա ինչս բազումս, ոսկի և արծաթ. և նա ոչ կամէր առնուլ. և բռնադատեալ զնա մինչև ամաչէր, և առեալ բաշխէր զնա կարօտելոց. և ինքն կանխէր յաղօթս զցայգ և զցերեկ. և գաղտագնաց եղեալ եկն 'ի տեղի իւր։

Եւ յետ այսորիկ մեռաւ թագաւորն Գորդիանոս, և թագաւորեաց Փիլիպպոս այր ամպարիշտ և թշնամի արդարութեան և Աստուծոյ ճշմարտի. և մոլեալ 'ի կռոցն պաշտամունս և զոհս. յարոյց հալածանս 'ի վերայ քրիստոնէից, և հրաման ետ յամենայն գաւառս և 'ի գեօղս, որք ոչ պաշտեն զկուռս, չարաչար տանջանօք վախճանեսցին։ Եւ ամենեցուն ամպարշտացն ընկալեալ զհրամանն, խոշտանգէին և նեղէին զհաւատացեալսն, զի հնազանդեսցին կորստական հրամանի թագաւորին։ Ծանուցեալ եպարքոսին վասն երանելւոյն Տրիփոնի զհաւատս նորա, և զսրբութիւն վարուց նորա, և զսքանչելեացն զոր 'ի ձեռն նորա ցուցանէր Տէր, և առաքեաց զինուորս ածել զսուրբն յատեան։ Եւ զի ոչ էր պարտ թաքչել լուսաւոր անձինն 'ի խաւարի, և ըմբռնեալ զինուորացն զսուրբն Տրիփոն, ածին յատեան եպարքոսին, որպէս զմահապարտ ոք։ Ասէ ցնա եպարքոսն. Զի՞նչ անուն է քո, և որո՞յ բախտի ես։ Ասէ երանելին Տրիփոն. Անուն իմ և հաւատք շնորհեալ՝ քրիստոնեայ, այլ և յազատ ազգէ եթէ քեզ թուեսցի ինչ մեծ։ Ասէ եպարքոսն. Եւ ո՞չ լուար զհրամանս թագաւորին որ յաղագս քրիստոնէից. որ հրով և սրով և այլ եւ դառն տանջանօք տանջել: Ասէ երանելին. Եթէ արժամ ինչ մահու գործեալ է իմ, ոչ հրաժարիմ 'ի մեռանելոյ: Ասէ եպարքոսն. Զդաստացեալ զոհեա աստուածոցն և պաշտեա զնոսա որպէս և մեք. և սիրելի լինիցիս թագաւորին և մեծամեծաց նորա:

Ասէ սուրբն Տրիփոն. Հաստատեալ եմ 'ի ճշմարիտ հաւատն որ 'ի Հայր, և յՈրդի և 'ի սուրբ Հոգին. անշարժ մնամ 'ի խոստովանութիւնս յայսմիկ: Ասէ եպարքոսն. Նախ քան զչարչարանս ընդունել՝ հաւանեա ասացելոցս և զոհեա: Սուրբն Տրիփոն ասէ. Զամենայն չարչարանս զորս ածելոց ես 'ի վերայ իմ՝ յօժարութեամբ ընդունիմ վասն սիրոյն Աստուծոյ: Զայս լուեալ եպարքոսին՝ հրամայեաց կախել զսուրբն 'ի վերայ հրոյ. և այնպէս եկաց կախեալ զօրն ամենայն, և առ Աստուած աղօթս մատուցանէր: Եւ տեսեալ բռնաւորին զժուժկալութիւն սրբոյն, հրամայեաց զմարմին նորա սրով խոցոտել: Իսկ սուրբն զխորհուրդս իւր առ Աստուած հաստատուն պահէր: Եւ իբրև ժամք երեք անցանէին 'ի չար և 'ի դառն տանջանսն, ասէ բռնաւորն ցերանելին. Եթէ արդարև զղջացա՞ր 'ի մեծամտութենէդ յայդմանէ, զի ոչ ոք կարէ կեալ ընդդէմ թագաւորական հրամանի: Ասէ սուրբն. Երկնաւոր հրամանացն բազումք ընդդիմացեալք չարաչար հրամանացն յաղթեցին, և առին զպսակն անապական յանմահ թագաւորէն. վասն որոյ և ես յուսացեալ եմ 'ի զօրութիւն անմահին, հաւատամ յաղթել քում բռնութեանդ և թագաւորին, և խորհրդակցին ձերոյ սատանայի. և ոչ պաշտեմ զկուռս և ոչ պաշտօնատար լինիմ դիւաց, որ յորդորէ զիշխան աշխարհիս գործել զհաճոյսն իւր զլցեալսն ամենայն անիրաւութեամբ, զի յաւիտենական տանջանացն ժառանգորդս արասցէ որ պատրաստեցաւ նմա, և հնազանդելոց նմա յարդար դատաւորէն:

Զայս լուեալ բռնաւորին, հրամայեաց տանել զնա 'ի դաշտ մի ցրտային, զի էր ձմեռն խիստ և ձիւն յոյժ. ընկեցին զնա անդ. և հրամայեաց բազում զինուորաց ձիընթաց առնել 'ի վերայ նորա և կոխել զնա: Եւ իբրև բազում ժամք անցանէին վտանգիցն 'ի վերայ սրբոյն, կարդաց սուրբն առ Տէր և ասէ. Տէր, մի՛ համարիր սոցա զայս մեղս, զի ոչ գիտեն զի՛նչ գործեն։

Ասէ ցնա բռնաւորն. Եթէ ոչ զգաստացար յայդպիսի մտաց, և ես յաւելլից չարչարանս և ապա բարձից 'ի քաղցր կենացս։ Ասէ սուրբն Տրիփոն. Ես շնորհօքն Քրիստոսի զգաստացեալ էի և եմ իսկ, զի բազում չարչարանօք բազմասցին ինձ պարգևք 'ի յաւիտենական Թագաւորէն։ Եւ հրամայեաց բռնաւորն տանել զնա 'ի բանտ, թողացուցեալ առ վայր մի թերևս դարձցի և հաւանեսցի բռնաւորին կամաց. և յետ աւուրց ինչ հրամայեաց ածել զսուրբն յատեան։ Ասէ դատաւորն. Վարժեցար դու և քեզ ներումն ժամանակի զոր թողացուցի 'ի տանջանացդ։ Ասէ սուրբն Տրիփոն. Խրատեալ և վարժեալ էի 'ի մանկութենէ իմմէ, և արհամարհեցի զկուռս, և սիրեցի զԱստուած որ արար զերկինս և զերկիր, և որ 'ի նոսա արարածք իցեն, զնա օրհնեմ և փառաւորեմ և երկիր պագանեմ, և 'ի պատուիրանս նորա կամ յոյժ, զի որ ուրանայ՝ ուրացեալ լիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ որ յերկինս են։ Եւս բարկացեալ բռնաւորն, հրամայեաց բերել բևեռս երկաթիս և ցցել յոտս նորա. և այնպէս ընդ փողոց քաղաքին ընթացուցանէին 'ի վերայ ձեանն զօրն ամենայն, և ոչ այնպէս վտանգեալ լինէր, այլ կայր մեծաւ ուժով 'ի հաւատս հաստատուն, առնուլ զկեանսն յաւիտենից։ Եւ բռնաւորն զարմացեալ ընդ ժուժկալութիւն սրբոյն, և այլ ազգ տանջանս զմտաւ ածէր։ Հրամայեաց հարկանել զնա գաւազանօք արանց տասանց, և ոչ այնպէս խոնարհէր արդարն 'ի կամս բռնաւորին։ Եւ հրամայեաց այրել ջահիւք զկողս նորա, և յոլովից հաւատացելոց տեսեալ զսուրբն լուսով պայծառացեալ, և գերազանցեալ գեղեցկութեամբ զարդարեալ, և տային օրհնութիւն Աստուծոյ, և ամբարձեալ զձեռս իւր յերկինս սուրբն Աստուծոյ և ասէ. Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, մի՛ զօրասցի 'ի վերայ իմ չարն գործակցօք չարչարել զիս, և խոտորել 'ի քո կամացդ. այլ արժանաւորեա զիս մտանել 'ի թիւ ընտրելոց քոց հօտից՝ շնորհելով զանապական պսակն, զոր խոստացար ծառայից քոց սրբոց՝ յաւուրն յետնումն: Ասէ բռնաւորն ցսուրբն. Զի՞նչ ունիս ասել, կամ զի՞նչ 'ի մտի եդեր առնել որ այդպէս պնդեցար 'ի կամաւոր չարչարանս և 'ի մահ: Ասէ սուրբն Տրիփոն. Բազում անգամ լուար յինէն եթէ կենդանի է Աստուած որ յերկինս է. զնա միայն պաշտեմ, և երկիւղ իմ 'ի նմանէ և ոչ յայլ ումեքէ: Զայս լուեալ բռնաւորին և գիտացեալ զանշարժ միտս նորա, եհատ 'ի վերայ սրբոյն վճիռ մահու, և հրապարակախօս եղեալ՝ ասէր. ԶՏրիփոն փռիւգիացի, որ հրամանաւ կայսեր վասն քրիստոնէութեան բազում չարչարեալ և ոչ հաւանեալ հրամանաց ինքնակալին, զոր հրամայէ արքունական դատաստանն սրով սպանանել:

Եւ իբրև ածին զսուրբն 'ի տեղի կատարմանն, ամբարձ զձեռս, եկաց յաղօթս առ Տէր և ասէ. Գոհանամ զքէն, Տէր ամենակալ, որ առաջնորդեցեր ինձ 'ի մանկութենէ իմմէ գնալ 'ի ճանապարհս արդարութեան և առնել զկամս քո բարիս, և ետուր շնորհս 'ի վերայ դիւաց հալածել զնոսա 'ի ծառայից քոց և յաղախնաց, և յաղթող երևելի ցուցեր զծառայս քո առ պատերազմունս նոցա. և նկուն արարեր զնոսա և յամօթ ամենայն ուրեք: Արդ յետ կատարման իմոյ կեցցէ և մնասցէ շնորհս ողորմութեան առ վտանգեալսն յայսոսն, 'ի հաւատացեալս որ յիշեն զանուն ծառայի քո Տրիփոնի. և արժանի արարեր զիս վասն անուանդ քո չարչարել և մեռանել. ընկալ 'ի թիւ սրբոց քոց վկայիցն, որոց փառաւորեալ են մահ առաջի քոյոյ տէրութեանդ. զի ընդ նոսա արժանաւորեցայց փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

Եւ ասացեալ զամէնն, վաղվաղակի հատին զգլուխ երանելւոյն Տրիփոնի սրով. և այսպէս աւանդեաց զհոգին 'ի փառս Աստուծոյ: Եւ եղև այս 'ի Նիկիա, և եղբարք որք էին անդ գողացան զնշխարս սրբոյն և եդին 'ի տապանի. և յուղարկեցին նաւաւ 'ի գեօղն՝ որ և իսկ ասացեալ էր յառաջագոյն:

Այսպէս կատարեցաւ սուրբն Տրիփոն յերկուսն փետրուարի ամսոյ, հռչակաւոր և անուանի վկայութեամբ· յորում տեղւոջ բազում այսահարաց լինէր բժշկութիւն ։ Ընդ որս և, ամենայն հաւատացելոց 'ի ձեռն սրբոյն Տրիփոնի աղօթիցն առնէ այցելութիւն Տէր· զի զփառաւորիչս իւր փառաւորէ, աստ և 'ի հանդերձելումն· զի նմա վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից· ամէն ։

Վկայաբանութիւն Սրբոյն փեբրոնեայ կուսին։

Եւ եղև 'ի ժամանակս Դիոկղետիանոսի կայսեր, Անթիմոս ոմն եպարքոս անկեալ դնէր 'ի հիւանդութեան. կոչեաց առ ինքն զՍիղուիանոս զեղբայր իւր, և ասէ ցնա. Ես աւասիկ 'ի մարդկային իրաց աստի վճարեալ եմ. զԼիւսիմաքոս զորդի իմ 'ի ձեռս քո թողում, և որպէս խօսեցաք դմա զդուստր Պորփիրայ՝ փութացիր յետ իմոյ վախճանիս զհարսանիս դոցա կատարել։ Զայսոսիկ հրաման տուեալ՝ յետ երից աւուրց վախճանեցաւ։

Իսկ Դիոկղետիանոս կոչեալ առ ինքն զԼիւսիմաքոս զորդին Անթիմայ, և զՍիղուիանոս զնորին հօրեղբայր, ասէ ցԼիւսիմաքոս. Ես, երիտասարդ դու, յիշելով զսէր հօր քո՝ խորհեցայ յետ վախճանի նորա յաթոռ նորա հանել զքեզ. այլ համբաւ ինձ եհաս 'ի լսելիս իմ որպէս թէ ուրախ լինիս դու ընդ կրօնս քրիստոնէից, և վասն այնորիկ յապաղեցի։ Արդ այժմիկ խորհիմ առաքել զքեզ յարևելս, որպէս զի լուծցես զկրօնս քրիստոնէից. և յորժամ դարձցիս առ մեզ՝ յառաւելագոյն աթոռն հանից զքեզ, որպէս զի վարեսցես զեպարքութիւնդ։

Զայս լուեալ ոչ իշխեաց տալ պատասխանի։ Իսկ Սիղուիանոս անկեալ յոտս թագաւորին՝ աղաչէր ասելով. Աղաչեմ զքեզ ներել սակաւ ինչ աւուրս, զի կատարեցից զհարսանիս դորա։ Իսկ թագաւորն ասէ ցնա. Երթիցէք նախ յարևելս և զքրիստոնէից լուծջիք զկարգն, և յորժամ դարձջիք՝ արժան է և ինձ փոյթ յանձին ունել վասն հարսանեաց Լիւսիմաքոսի։ Զայս լուեալ նոցա 'ի Թագաւորէն՝ ոչ իշխեցին տալ պատասխանի. այնուհետև զճանապարհորդութիւն յարևելս առնէին։

Իսկ Լիւսիմաքոս առեալ ընդ իւր զՊաւիմոն կոմս՝ զիւր քեռորդին, և եդ զնա 'ի վերայ զօրացն. և ժամանեալ նոցա յարևելս 'ի գաւառն Պալմորացւոց[1], և զօրս ըմբռնէին խոստովանելով զինքեանս քրիստոնեայս, զոմանս հրոյ տային և զոմանս սրով կոտորէին։

Իսկ անօրէնն Միղուիանոս զմարմինս նոցա շանց կերակուրս տայր ընկենուլ. բազում երկիւղ և դողումն ունէր զկողմանս արևելից վասն խստին և անօրինին Միղուիանոսի։ Իսկ 'ի գիշերի միում կոչեաց Լիւսիմաքոս զկոմսն Պաւիմոն և ասէ ցնա. Դու գիտես զի հայրն իմ հեթանոս վախճանեցաւ. սակայն մայրն իմ քրիստոնեայ էր, և փոյթ յանձին կալեալ զի արասցէ զիս քրիստոնեայ, այլ վասն ահի Թագաւորին և իմոյ հօրն, զայս առնել ոչ իշխեաց։ Եւ արդ ունիմ զնորա պատուէր, մի՛ զոք 'ի քրիստոնէից ծախել, այլ բարեկամ եւս Քրիստոսի հարկաւորէր զիս լինել. և տեսանեմ զի որ 'ի բուռն անկանին քրիստոնեայք՝ անողորմ ծախին 'ի ժանտէ Միղուիանոսէ. և արդ կամիմ զի որ 'ի բուռն անկանին քրիստոնեայք՝ լռելեայն արձակեսցիս։

Զայս լուեալ Պաւիմոնի ոչ տայր զոք ըմբռնել, նա և 'ի վանորեայսն զեկուցանէր զի փախիցեն։ Եւ 'ի շըրջել նոցա 'ի տեղիսն յայնոսիկ, խորհէին հասանել 'ի քաղաքն Սաբա[2] որ մերձ յԱսորեստան է. էր 'ի քաղաքին յայնմիկ վանք մի կուսանաց, յորում բնակեալ էին բազմութիւնք ճգնաւորաց։ Սոցա առաջնորդ որ կարգեալ էր Բրիոնէ անուն, որ աշակերտեալ էր Պղատոնէի. սա որ յառաջ քան զնա սարկաւագուհի եղեալ էր. քանզի այս էր կանոն Պղատոնի. սա զի յաւուր ուրբաթու ոչ տայր թոյլ գործել ինչ, այլ ամենեցուն ժողովել յեկեղեցին յաղօթս. և յորժամ զկանոնն կատարէին, զաստուածային գիրսն առեալ Պղատոնի, ընթեռնոյր յականջս քերցն՝ մինչև յերրորդ ժամն. իսկ յերրորդ ժամէն 'ի ձեռն Բրիովնի տայր զգիրսն, և նա ընթեռնոյր մինչև յերեկոյն: Վասն զի Բրիովնեայ էին երկու աղջկունք որ սնեալ էին ընդ նմա, անուն միոյն Պրոկղա, և երկրորդի Փեբրոնիա. և էր Պրոկղա ամաց քսան և հնգից, իսկ Փեբրոնիա քսանից. և Փեբրոնիա եղբօրորդի էր Բրիովնեայ. և ինքն գեղեցիկ յոյժ երեսօք, որպէս զի անհնարին էր զայնպիսի նկարագրութիւն և զչափ հասակի ումեք ունել: Բազում աշխատութիւն յանձին ունէր Բրիովնիա, թէ որպէս կարասցէ ապրեցուցանել զՓեբրոնիա. վասն զի ամենայն քերցն ժամէ 'ի ժամ տայր ճաշակել, իսկ Փեբրոնիա զերկուս աւուրս պահել և ապա ճաշակել. Նա և իւր իսկ տեսեալ զայնպիսի կազմութիւն մարմնոյ իւրոյ՝ ոչ հաց և ոչ ջուր յագ ոչ ընդունէր. բայց բազրոնակ մի հրամայեաց առնել երից կանգնոց զերկայնութիւն նորա, և թզաւ և կիսաւ զլայնութիւնն. յորոյ վերայ 'ի ժամ քնոյն զմարմինն իւր հանգուցանէր. վասն զի յոյժ ուսումնասէր եղեալ էր: Իսկ յաւուր ուրբաթուն 'ի միասին ժողովէին յաղօթանոցն. հրամայեաց Բրիովնիա Փեբրոնիայ ընթեռնուլ զաստուածեղէն գիրս յականջս քերցն. քանզի 'ի բարի ազգէ կանայք ժողովեալ էին յեկեղեցւոջն յաւուր ուրբաթու. և զառն մարդոյ ձև ոչ գիտաց Փեբրոնիա թէ որպէս իցէ: Տարածեալ լինէր այնուհետև վարդապետութիւն նորա 'ի քաղաքին:

---

[1] Յոր. Պաղմորացւոց. և է քաղաքն Պալմիւրա կամ Արմաւենեաց քաղաք յանապատին Ասորւոց։

[2] Բնագիրն յոյն ունի Սիրապօլիս կամ Սիրա քաղաք. այլք գրեն Նիսիբիս որ է Մծբին, և հաւանելի է այսմ։

Զայս լուեալ Երեայ կնոջ եպարքոսին՝ աստուածային ցանկութեամբ տոչորէր, թէ որպէս կարասցէ տեսանել զուրբ կոյսն Փեբրոնիա: Եւ Երիա էր հեթանոս, չև եկեալ 'ի մկրտութիւն: Յարուցեալ այնուհետև գայր 'ի վանս անդր, և ասէ ցդռնապանն. Ազդ արա վասն իմ Բրիովնեայ. և լուեալ Բրիովնեայ ել առ նա. և տեսեալ Երեայ զԲրիովնիա, անկեալ երկիր պագանէր նմա և ասէր. Երդմնեցուցանեմ զքեզ յԱստուած որ արար զերկինս և զերկիր. մի՛ արհամարհէր զիս զպիղծս և զանօրէնս և զանսուրբս, որ մինչև ցայժմ խաղալիկ դիւաց և 'ի կռապաշտութեան էի. մի՛ զրկէր զիս 'ի վարդապետութենէն և 'ի տեսլենէն սրբոյն Փեբրոնեայ: Փրկեցէք զիս յաստի յընդունայնութենէս և 'ի պղծութենէ կռապաշտութեանս, քանզի հարկաւորեն զիս ծնողք իմ երկրորդանգամ ամուսնանալ. բաւական է ինձ առաջին ժամանակն անգիտութեան: Զայս ասելով և արտասուօքն թանայր զոտս Բրիոնեայ. 'ի բազում գութ և 'ի վըշտակցութիւն ածէր զԲրիոնիա: Ասէ Բրիոնիա. Գիտէ Աստուած, տիկին իմ, զի երկեմեան էր յորժամ ընկալայ 'ի ձեռս իմ զՓեբրոնիա, և ունի ինն և տասն ամ. ոչ զառն մարդոյ պատկեր տեսեալ, և ոչ զաշխարհականի ձև գիտացեալ. իսկ արդ վասն փափաքանացդ քո զոր ունիս առ Աստուած և առ նա, մուծից զքեզ առ նա զգեցեալ զգեստ որպէս զիս: Առեալ Բրիոնեայ զՆրիա, եմոյծ առ Փեբրոնիա. և տեսեալ Փեբրոնեայ զկրօնաւորական ձևն, անկաւ յոտս նորա համբուրելով, կարծէր թէ 'ի նոյն ձևոյ իցէ օտար ոք. և ողջոյն տուեալ միմեանց՝ հրամայեաց Բրիոնիա երկոցունց նստել, և զգիրսն ընթեռնուլ սրբոյն Փեբրոնեայ. և այնչափ 'ի զղջումն եկեալ Նրիայ՝ որ ոչ ձանձրանայր 'ի լսելոյ և ոչ աշխատէր ինչ. մինչ զի ամենայն ատակն սրսկեալ լինէր յարտասուացն:

Իսկ յորժամ առաւօտ լինէր՝ հազիւ լուեցուցանէր զՆրիա իջանել. յայնժամ ողջոյն տուեալ Նրիայ իջանէր յեկեղեցւոյ անտի. և երթեալ առ ծնողսն իւր հաւանեցուցանէր զնոսա հրաժարել 'ի հայրենի աւանդութեանցն և դառնալ յԱստուած ճշմարիտ: Իսկ սուրբն Փեբրոնիա հարցանէր ցԹումայիս. Ո՞վ էր օտար քոյրն այն որ այնպէս զեղոյր արտասուօք, որպէս զի ոչ երբէք լուեալ էր նորա զաստուածային գիրս: Ասէ Թումայիս. Ո՞չ գիտացեր թէ ով է: Ասէ Փեբրոնիա. Ուստի՞ գիտէի, զի որպէս օտար քոյր տեսի զնա: Իսկ Թումայիս ասէ ցնա. Այդ Նրիա կին եպարքոսին էր: Ասէ Փեբրոնիա. Ընդէ՞ր խաբելով մոլորեցուցէք զիս, ես տգիտութեամբ իբրև ընդ քեռ խօսեցայ ընդ նմա: Ասէ Թումայիս. Տիկինն մեր հրամայեաց այսպիսի պատմուճանօք մտանել առ քեզ։ Եւ եղեւ հիւանդանալ նմա մերձ ՚ի մահ. իսկ Եթերիա ոչ մեկնէր ՚ի նմանէ, մինչեւ փարատեաց ՚ի նմանէ հիւանդութիւնն։

Եւ եղեւ համբաւ ՚ի քաղաքին եթէ Սիղուիանոս եւ Լիւսիմաքոս հանդերձեալ են մտանել ՚ի քաղաքն, զի տանջեսցեն զքրիստոնեայսն։ Այնուհետեւ որ ՚ի քաղաքին էին քրիստոնեայք փախեան եւ թողին զիւրաքանչիւր տեղիս։ Ուստի եւ եպիսկոպոս քաղաքին փախուցեալ թաքչէր. ուսեալ այնուհետեւ զիրսն քերցն որ ՚ի վանքն էին, մատուցեալ առ Բրիոնիա ասեն ցնա. Զի՞նչ գործեսցուք, քանզի վայրենի գազանքն այն ժամանեցին ՚ի քաղաքս մեր. եւ ամենեքեան փախեան յաղագս սպառնալեաց բռնաւորին։ Ասէ Բրիոնիա. Զի՞նչ կամիք զի արարից ձեզ։ Ասեն ցնա. Հրամայեա զի փախիցուք սակաւ ժամանակս, զի ապրեցուսցուք զանձինս մեր։ Ասէ Բրիոնիա. Չեւ ըզպատերազմ տեսեալ՝ փախչել խորհիք. չեւ ՚ի մարտ մտեալ՝ պարտեցարուք. մի՛, որդեակք իմ. հաստատուն կացէք վասն նորա՝ որ վասն մեր մեռաւ, որպէս զի եւ ընդ նմին կեցցուք։ Եւ զայս լուեալ քերցն՝ լռեալ դադարեցին։ Իսկ ՚ի վաղիւն, մի ոմն ՚ի քերցն որում անուն էր Եթերիա, ասէ. Գիտեմ ես զի վասն Փեբրոնեայ ոչ թողու մեզ ելանել աստի մեծ տիկինն մեր։ Քանզի կամի զամենեսեան վասն նորա կորուսանել. բայց ես մտից եւ խօսեցայց վասն ձեր որ ինչ պարտ է։ Ապա լուեալ ոմանց զայս՝ հաւատացին բանիցն Եթերայի։ Իսկ ոմանք ընդդէմ կային ըստգտանելոյ զմտածութիւն նորա՝ բազումք եղեն. ամենեցուն միաբանեալ մատուցեալ առ սարկաւագուհին տեսանել թէ զի՞նչ խորհեսցի։ Եւ ՚ի մտանելն նոցա առ նա յառաջագոյն ծանուցեալ զխորհուրդն Եթերիայ, ասէ. Զի՞նչ կամիս, քոյր Եթերիա։ Եւ նա ասէ. Եկաք առ քեզ զի հրամայեսցես մեզ փախչել եւ թաքչել. քանզի ոչ եթէ լաւագոյն եմք մեք քան զուխտաւորս եւ զնոյն ինքն զեպիսկոպոսն. պարտ է քեզ եւ զայս ածել զմտաւ, եթէ են ՚ի մեզ նորահասակ աղջկունք, գուցէ յափշտակեալ ՚ի զօրացն՝ անկցին ՚ի փորձութիւն ապականութեան, եւ զվարս ճգնութեանն կորուսանեն. կամ տանջանաց ոչ կարեն համբերել՝ ինոցին պաշտօնեայք դիւաց. արդ եթէ կամեսցիս ապրեցուցանել զմեզ, առցուք ընդ մեզ և զտիկինն մեր զՓեբրոնիա և գնասցուք աստի։ Զայս լուեալ Փեբրոնեայ, ասէ. Կենդանի է Քրիստոսն՝ որում եսն հարսնացայ և զոգիս իմ աւանդեցի, ոչ ելից աստի, այլ աստէն մեռայց, և թաղեցայց 'ի նմին տեղւոջ։ Ասէ Բրիոյնիա ցԻթերիա. Դու գիտես որում վաճառակուրդ եղեր. անպարտ եմ ես։

Յայնժամ ամենայն քորքն հրաժարեալք 'ի Բրիոյնայէ և 'ի Փեբրոնայէ՝ բազում ողբովք բաղխէին ըզկուրծս իւրեանց, և ելեալ անտի գնացին։ Իսկ Պրոկլիա որ էր սննդակից Փեբրոնիայ, գոչելով ասէր. Աղօթս արա, տիկին իմ և քոյր։ Իսկ նա կալեալ զձեռանէ նորա ոչ տայր նմա թոյլ ելանել. ասէր ցնա. Երկի՛ր յԱստուծոյ, տիկին իմ Պրոկլիա. և դու մնա առ մեզ, զի դեռ ես հիւանդ եմ. գուցէ պատահեսցէ ինձ մահ, և ոչ ոք է որ 'ի գերեզման մուծանէ զիս։ Ասէ ցնա Պրոկլիա. Հրամայեցեր քոյր իմ, ոչ թողից զքեզ։ Իբրև երեկոյ եղև, ելեալ Պրոկլիայ արտաքս՝ աներևոյթ եղև։ Եւ տեսեալ Բրիոյնեայ զմերկութիւն վանիցն, եմուտ յաղօթանոցն, և ընկեցեալ զինքն 'ի գետին դառնապէս կական բարձեալ ողբայր։ Իսկ Թովմայիս որ երկրորդ էր Բրիոյնիայի, մերձ 'ի նա նստէր և աղաչէր. Հանդարտեա, տիկին մայր իմ, զի կարող է Աստուած ընդ փորձութեանն և զելսն արագ հասուցանել. ո՞վ հաւատաց 'ի Տէր և յամօթ եղև։ Իսկ Բրիոյնիա ասէ ցԹումայիս. Այո՛, տիկին իմ, գիտեմ զի այդպէս է, բայց ո՞ւր թաքուցից զՓեբրոնիա. կամ որո՞վ աչօք տեսից զդա յորժամ 'ի բարբարոսացդ ըմբռնեսցի։ Թումայիս ասէ. Մոռացա՞ր զառ յինէն ասացեալսն, եթէ որ կարողն է 'ի մեռելոց յարուցանել, նոյն ինքն զՓեբրոնիա զօրացուսցէ։ Եւ այնպէս եկեալ մերձ 'ի բադրոնն՝ յորոյ վերայ անկեալ դնէր Փեբրոնիա, հայեցեալ 'ի նա Փեբրոնիա ասէ ցԹումայիս. Աղաչեմ զքեզ, մայր իմ, վասն է՞ր այդպէս դառնապէս լալումդ մեծի տիկնոջդ իմում. ապա և ինքն Թովմայիս արտասուելով ասէր. Որդեակ իմ Փեբրոնիա, վասն քո հեծէ և ողբայ տիկինս մեր. վասն զի հանդերձեալ է գալ չարիք 'ի բռնաւորաց անտի. զի դեռ ես մատաղագոյն ես դու և զուարթատեսիլ, յաղագս այսորիկ տառապի և ողբայ։ Ասէ սուրբն Փեբրոնիա. Աղաչեմ զձեզ աղօթս արարէք 'ի վերայ աղախնոյ ձերոյ, քանզի կարող է Աստուած զօրացուցանել զիս, և շնորհել ինձ համբերութիւն։ Ասէ Թումայիս. Դուստր իմ Փեբրոնիա, ահաւասիկ ժամանակ նահատակութեան հասեալ է, և ըմբռնեսցուք մեք 'ի զօրաց աստի. գիտեմ զի զմեզ իբրև զանցեալ ժամանակօք՝ արագ ծախեն բռնաւորքն։ Իսկ քեզ խնամ տանին, զի նորահասակ ես և գեղեցիկ տեսլեամբ։ Արդ եթէ ըմբռնեսցուք մեք, և յանկարծ փաղաքշելի բանիւք աղաչեն զքեզ՝ մի հաւանեսցիս նոցա. քանզի չիք պատուականագոյն քան զկուսութիւն. բազում վարձք և մեծամեծ հատուցմունք. վասն զի անմահ Փեսայն կուսութեան՝ անմահութիւն պարգևէ որք նմայն հաւանին. արդ փութասջիր զնա տեսանել։ Զայս լուեալ Փեբրոնեայ ևս քան զևս հաստատէր ընդդէմ սատանայի։ Պատասխանի տուեալ ասէ ցԹումայիս. Բարիոք առնես զի զօրացուցանես զիս զաղախին քո. բայց ես եթէ յօժարէի փախչել 'ի ջանէ նահատակութեան՝ ընդ քերցն էի փախուցեալ և յանքոյթ տեղի թագուցեալ. այլ զի նմա փափաքիմ որում զոգիս յանձն արարի, և առ նա իսկ անձկացեալ եմ, միայն թէ արժանի զիս իւր ցուցցէ։

Զայս լուեալ Բրիո՛նիա, սկսաւ խօսել և ասէ. Տես, որդեակ իմ, թէ ո՛րպէս եկիր զհետ վարդապետութեան իմոյ. յիշեա զի դու եղեր վարդապետ այլոց, յիշեա զի որպէս ընկալայ զքեզ 'ի դայեկէն 'ի ձեռս իմ, զի երկու ամք էին քո, և ցայժմ այր ոչ ետես զպատկեր քո։ Զայս ամենայն խօսելով նորա և աւելի քան զայն, անցուցանէին և զայն ևս գիշեր յաղօթս Աստուծոյ։

Իսկ 'ի վաղիւն իբրև առաւօտն լինէր, խռովութիւն և շշուկ և աղաղակ 'ի քաղաքն լնոյր, 'ի մտանելն Սիղուիանոսի և Լիւսիմաքոսի՝ զբազում քրիստոնեայս ըմբռնեալ զօրացն, 'ի բանտ արկանէին և 'ի կապանս մատնէին։ Իսկ ոմանք 'ի հեթանոսացն մատուցեալք առ Սիղուիանոս, զեկուցին վասն վանացն այնորիկ։ Իսկ նորա լուեալ՝ առաքէ զօրականս մեծա փութով։ Յայնժամ զօրաց պատեալ զվանքն՝ առին 'ի ձեռս տապարս և սատիրս և սատուրս, հերձուին զդուրս վանացն. և 'ի ներքս մտեալ բուռն հարեալ զԲրիոջնայի կալան զնա. իսկ ոմանք սպանանել կամէին զնա։ Եւ տեսեալ սրբոյն Փեբրոնեայ զեկեալ հասեալ բարկութիւնն, ընկեց զինքն 'ի գետին 'ի բադրոնէ անտի յոտս զօրացն և ասէ. Երդմնեցուցանեմ զձեզ յԱստուածն երկնի և երկրի, զիս յառաջ սպանէք, և մի տեսից զմահ տիկնոջ իմոյ։

Յայնժամ հասեալ 'ի տեղին կոմսն Պռիմոն և տեսեալ զիրսն, զայրացաւ 'ի վերայ զօրացն. հրամայեաց արտաքս հանել 'ի վանացն։ Ասէ ցԲրիոջնիա. Ո՞ւր են որ բնակեալ են ընդ քեզ։ Ասէ Բրիոջնիա. Վասն ահիդ ձեր ամենեքեան թողին և փախեան։ Ասէ Պռիմոն. Երանի թէ և ձեր էլք փախուցեալ. ասեմ ձեզ զի ահա ունիս ներումն յինէն, ելէք և փախիք։ Իսկ նորա առեալ զզօրս իւր ել 'ի վանացն, ոչ պահապանս կացոյց և ոչ խռովեցոյց զնոսա։

Յայնժամ առնու Պռիմոն զԼիւսիմաքոս առանձինն և պատմեաց նմա, թէ ճշմարտութեամբ չոգայ 'ի վանսն և ոչ զոք գտի՝ քանզի փախուցեալ էին, բայց երկու պառաւունք, և մի նորահասակ աղջիկ մի։ Բայց չքնաղ իրս ունիմ պատմել քեզ, տէր իմ. քանզի տեսի աղջիկ մի՝ զի յորմէ հետէ ծնեալ եմ մինչև ցայժմ ոչ է իմ տեսեալ. գիտեն աստուածքն, զի լոկ միայն տեսի զնա զի անկեալ դնէր 'ի վերայ բադրոնի միոյ, և զարհուրեցաւ սիրտ իմ. այս միայն եթէ բայց միայն յաղքատութենէն արժանի է նա տեառնդ իմում կնութեան։ Ասէ Լիւսիմաքոս. Ես պատուէր ունիմ չհեղուլ զարիւն քրիստոնէից. և զիա՞րդ մարթացից նենգութիւն գործել ընդ քրիստոնեայսն. ոչ այդպէս, տէր իմ, այլ աղաչեմ հանցես զնոսա 'ի վանացն որպէս զի մի անկցին 'ի ձեռս անօրինին Սիղուիանոսի։ Իսկ մի ոմն 'ի չար զօրացն ընթացեալ առ Սիղուիանոս, ասէ. Գտաք զոմն նորահասակ աղջիկ մի, յոյժ ահագին գեղեցկութեամբ. և վասն նորա խօսի ընդ Լիւսիմաքոս կոմսն Պռիմոն։ Զայս լուեալ Սիղուիանոս լի եղև բարկութեամբ. և առաքեաց 'ի վանսն պահապանս, և հրամայեաց քարոզել 'ի քադաքին, եթէ վաղիւ հրապարակաւ դատաստան է։ Զայս լուեալ բազմութեանն՝ ժողովեցին 'ի տեսանել զնահատակութիւն սրբոյն Փեբրոնեայ։

Իբրեւ առաւօտն ծագէր՝ գային զօրականքն 'ի վանսըն. իբրեւ մտին 'ի ներքս, ձեռն արկին եւ ձգեցին զՓեբրոնիա 'ի բազրոնէ անտի, եւ շղթայիւք կապեցին զնա, եւ անուր երկաթի արկին 'ի պարանոց նորա, եւ հանին զնա 'ի վանիցն։ Իսկ Բրիոջնիա եւ Թովմայիս խառնեալ զձեռս իւրեանց ընդ Փեբրոնեայ, գոչէին դառնապէս, աղաչէին զզօրականսն ներել Փեբրոնայի, զի խօսեսցին ընդ նմա։ Իսկ Բրիոջնիա եւ Թովմայիս աղաչելով ասէին, զի ինքեանք երթիցեն ընդ նմա 'ի նահատակութիւն, զի մի՛ յորժամ միայն երթիցէ՝ զարհուրեալ երկիցէ։ Ասեն զօրքն. Չհրամայեաց մեզ զայլ ոք տանել բայց 'ի Փեբրոնայէ։ Սկըսան այնուհետեւ Բրիոջնիա եւ Թովմայիս հաստատել զՓեբրոնիա. Ահաւասիկ երթաս 'ի նահատակութիւն, եւ հրեշտակային զօրքն պատրաստ ունին զքո յաղթութեան պսակն. տես, մի՛ սարսափեսցիս 'ի տանջանացն, զի մի՛ լինիցիս այպն սատանայի. մի՛ ողորմեսցիս այս մարմնոյս որ լուծանելոց է. եւ արդ աւասիկ կամ ես 'ի վանս ողբալով, մինչեւ լուայց համբաւ ինչ զքէն կամ բարոյ ինչ կամ խոտան։ Իսկ ո՛ տայր ինձ աւետիք, եթէ Փեբրոնիա մատնեաց զինքն 'ի տանջանս, եւ կամ թէ Փեբրոնիա կատարեցաւ 'ի Քրիստոս։

Ասէ Փեբրոնիա. Հաւատա, մայր իմ, որպէս ոչ երբէք անցի զպատուիրանաւ քով, եւ ոչ այժմ ինչ անցանեմ, արդ թող զի երթայց։ Ասէ ցնա Թովմայիս. Կենդանի է Տէր, որդեակ իմ, զի եւ ես զգեցեալ ըզգեստ աշխարհականի՝ եկից եւ տեսից զնահատակութիւն քո։ Ասէ ցնա Փեբրոնիա. Աղաչեմ զքեզ, մայր իմ, տուր օրհնութիւն ելից իմոց, եւ արարէք ինձ աղօթս եւ թողէք զիս երթալ։ Իսկ Բրիոջնիա ձգելով զձեռս իւր յերկինս՝ գոչելով ասէր. Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ երեւեցար աղախնոյ քում Թեկղի՝ 'ի կերպարանս առաքելոյն Պաւղոսի, յայտնեսջիր եւ տառապելոյս այսորիկ։ Զայս ասացեալ արձակեաց։

Յայնժամ զինուորքն առեալ ելին 'ի վանիցն։ Իսկ

Թովմայիս զգեցեալ զգեստ աշխարհականի երթայր 'ի տեսարանն։ Լուեալ Ներեայ կնոջ եպարքոսին թէ Փեբրոնիա հաւատաւոր յատեան ածաւ, յարուցեալ գոչէր 'ի ձայն մեծ, մինչև հիանալ ծնողաց իւրոց և հարցանել թէ զի՞նչ դիպեցաւ քեզ։ Ասէ ցնոսա. Զքոյրն իմ զՓեբրոնիա յատեան մատուցին։ Դատափետ լինէր իբրև զքրիստոնեայ, և բազում սփոփանս ընդունէր 'ի ծնողաց իւրոց, զի դադարեսցէ յողբալոյն. նա ևս առաւել աղաչէր ասելով. Թողէք զիս՝ լացից 'ի վերայ քեռն իմոյ։ Զայս ասելով նորա և ըզծնողսն յորդորէր յարտասուս, և հաւանեցուցեալ զծնողսն իւր՝ որպէս զի երթիցէ 'ի տեսարանն. և երթեալ Ներեայ գտանէր զԹովմայիս, և ծանուցեալ զիրեարս՝ արտասուօք թանային։ Բազումք ժողովէին, իշխանք և դատաւորք։ Եւ յառաջեալ իշխանն նստաւ և Լիւսիմաքոսն. և հրամայեցին ածել զՓեբրոնիա, և նորա մտեալ՝ ունելով կապեալ զձեռս իւր։ Իբրև ածին զսուրբն 'ի մէջ, հրամայեաց իշխանն լռել ամբոխին. և ասէ ցԼիւսիմաքոսն. Տուր հարցումն նմա, և ընկալ պատասխանի 'ի նմանէ ։ Ասէ Լիւսիմաքոս ցՓեբրոնիա. Ասա ինձ, աղջիկ, որո՞յ բախտի ես, ծառա՞յ ես եթէ ազատ։ Ասէ. Աղախին եմ։ Ասէ Լիւսիմաքոս. Ո՞յր աղախին կոչիս։ Ասէ Փեբրոնիա. Քրիստոսի։ Ասէ Լիւսիմաքոս. Զի՞նչ անուն է քո։ Ասէ սուրբն. Քրիստոնեայ։ Ասէ Լիւսիմաքոս. Զանուն քո կամիմ ուսանել։ Ասէ սուրբն. Ասացի թէ քրիստոնեայ եմ, իսկ եթէ զմարմնաւոր անուն իմ կամիս ուսանել՝ Փեբրոնիա կոչեաց զիս տիկինն իմ։

Յայնժամ իշխանն լռեցոյց զԼիւսիմաքոս, և ինքն սկսաւ հարցանել և ասէ. Գիտեն աստուածքն, Փեբրոնիա, զի ոչ կամէի հարցանել զքեզ. այլ տեսեալ զհեզութիւն քո հանդերձ գեղեցկութեամբդ և երևելի յօրինուածովդ, որով պարտեցաւ մեծ զայրացումն՝ զոր ունէի 'ի վերայ քո. բայց հայեցեալ 'ի գեղեցկութիւն քո՝ այն ամենայն 'ի բաց շիջաւ։ Եւ արդ լուր ինձ, դուստր իմ. գիտեն աստուածքն, զի բազում ընչից և ստացուածոց տէարս զքեզ կացուցից. խօսեալ եմ կին տեառն իմոյ Լիւսիմաքոսի, բայց սակայն լուծից զվճիռ հաստատութեանն զոր եդի ընդ դստերն Տրոփոնեայ, և ընդ քեզ հաստատեցից զդաշինսն, և եղիցիս դու կին Լիւսիմաքոսի, զոր այժմ տեսանես զսա նստեալ ընդ աջմէ. և սա ինքն զեղեալ է գեղեցկութեամբ իբրև զքեզ։ Եւ արդ լուր ինձ, և արարից զքեզ փառաւոր 'ի վերայ երկրի, և մի՛ ինչ զքեզ զարհուրեցուսցէ թէ աղքատ ես. քանզի կին իմ ոչ ունի դուստր և ոչ որդի, այլ յայտ է եթէ զամենայն ինչս իմ քեզ շնորհեցից. և զայն առեալ փոխանակ վարձանաց՝ տացես Լիւսիմաքոսի. և ես եղէց քեզ հայր, և երանիցեն քեզ ամենայն կանայք. յայնժամ բերկրեսցի և Դիոկղետիանոս թագաւորն մեր, և պարգևեսցէ քեզ բազում բարութիւնս, և խոստասցի հանել 'ի մեծագոյն պատիւ իշխանութեան զԼիւսիմաքոս այր քո։ Ահա զամենայն ինչ լուար, տուր ինձ պատասխանի որ աստուածոցն հաճոյ է և զիմ սիրտս ուրախ առնէ. իսկ եթէ չհաւանեսցիս՝ առնեմ խրատ, գիտեն աստուածքն, զի ոչ կարես կեալ մինչև ցերիս ժամս։

Ետ պատասխանի սուրբն Փեբրոնիա և ասէ. Ո՛վ դատաւոր, առագաստ ունիմ ես յերկինս անձեռագործ, որոյ հարսանիքն ոչ անցանեն. իսկ վարձանք թագաւորականք և փեսայ ունիմ անմահ. վասն որոյ և ընդ մահկանացուի զուգիլ ոչ կամիմ։ Արդ, ո՛վ դատաւոր, մի՛ ինչ աշխատ լինիր, զի ոչ փաղաքշելովդ օգտիս ինչ, և ոչ սպառնալեօքդ երկեցուցանես զիս։ Զայս լուեալ դատաւորն՝ բարկացաւ. և հրամայեաց պատառել զզգեստ նորա և ցնցոտուն արկանել. և լի խայտառակութեամբ առաջի ամենեցուն կացուցանէր. որպէս զի ամենեցուն տեսեալ զանարգանս դորա, եղկելի քան զամենայն ոք զդա համարեսցի, փոխանակ զի ինքն կամեցաւ անկանել յերևելի փառացն զոր ես խոստացայ նմա։ Իսկ զինուորացն լուեալ՝ 'ի նմին ժամու ծուէնս ծուէնս պատառէին զզգեստիկ նորա, և ցնցոտուն գտեալ՝ զայն առիգած հարեալ, մերկ առաջի ամենեցուն կացուցանէին։

Յայնժամ ասէ իշխանն. Զի՞նչ ասես, Փեբրոնիա, տեսանե՞ս յորպիսի բարութեանց զրկեցար և որպիսի՞ անարգութեանց հասեր։ Ետ պատասխանի Փեբրոնիա և ասէ. Թէպէտ և զամենայն զզգեստ իմ մերկացուցէք, ոչինչ նշաւակութիւն համարիմ ինձ. վասն զի մի է արարիչ արուաց և իգաց. վասն զի ես ոչ 'ի հանդերձից ունիմ մերկանալ միայն, այլ և հրոյ և սրոյ և տանջանաց ակն ունիմ։ Սիղուիանոս ասէ. Անամօթ և ամենայն անպատուութեան արժանի, գիտեմ զի զուարձացեալ ես 'ի գեղեցկութիւն մարմնոյ քո, և ոչ զգաս զմերկութիւն մարմնոյ ամօթոյ քո։ Ասէ սուրբըն. Գիտէ Քրիստոս՝ զի ոչ հայեցայ և տեսի զգեղ և զպատկեր առն մինչև ցայսօր. իսկ այժմ մինչ 'ի ձեռս քո մատնեցայ՝ անամօ՞թ գտայ. բայց ասա ինձ, ո՜վ յիմար և անպգամ դատաւոր, յողիմպիական մրցարանին, միթէ հանդե՞րձ զգեցեալ իջանեն 'ի մարտն, զի դիւրաւ ըմբռնեսցին. ո՞չ ապաքէն մերկ կատարեն զպատերազմն մինչև յաղթեն։ Իսկ ես որ հրոյ և տանջանաց ակն ունիմ, զիա՞րդ հանդերձիւ իջանեմ յայսպիսի մարտ. ո՞չ ապաքէն մերկ ընդունիմ զհարուածս մարմնոյս՝ մինչև յաղթեցից հօրն քում սատանայի ։

Ապա հրաման տայր Սիղուիանոս չորից զինուորաց պրկել զնա, և 'ի ներքոյ նորա ջահ հրոյ մատուցանել, և դալար բրօք զկողս նորա հարկանել։ Իբրև բազում ժամս տանջեցին զնա, անձրևամման յերկոցունց կողմանցն յերկիր հոսէին. և ներքին կողմն հրով այրեցեալ լինէր 'ի սաստկութենէ հրոյն, քանզի ձիթով արծարծէին զհուրն։ Իբրև այնպէս բազում ժամս դառնապէս տանջէին զսուրբ կոյսն, միաբան գոչեալ ամբոխին՝ զդատաւորն աղաչէին, ասելով. Ո՛վ մարդասէր դատաւոր, խնայեա 'ի մանկահաս աղջիկդ, և 'ի տոկ հրամայեա տանջել, թէպէտ և ոչ հաւանի հրամանի քում։ Եւ իբրև ետես դատաւորն զմարմին նորա պատառ պատառ արիւնաթաթախ յերկիր անկեալ՝ յայնժամ հրամայէր դահճացն դադարել 'ի տանջելոյ զսուրբն, քանզի կարծէր վախճանել 'ի կենացն։ Իսկ Թովմայիս տեսեալ զայնպիսի աղէտս ձըգնութեանն՝ ներգևելով վհատէր և անկանէր առ ոտս Երեայ տիկնոջն։ Իսկ Երիա իբրև զայն ետես՝ ձայն արձակեալ գոչէր ասելով. Վա՜յ ինձ, տիկին իմ Փեբրոնիա, վա՜յ ինձ հօգևոր մնուցիչ իմ. քանզի յայսմ հետէ զրկեալ գտանիմ 'ի հօգևոր վարդապետութենեղ. և ոչ ես միայն, այլ և Թովմայիս մնուցիչ քո վհատեալ 'ի քոյոց տանջանացդ՝ անկեալ դնի մերձ 'ի վախճան:

Իբրև լուաւ Փեբրոնիա զձայն Նրեայ տիկնոջն, աղաչէր զզինուորսն՝ բերել սակաւ մի ջուր և հարկանել ընդ երեսս նորա. իսկ նոքա կատարէին զխնդիրն. իբրև հարին զջուրն ընդ երեսս նորա՝ զօրացեալ ոգի առնոյր, սկսաւ աղաչել զզինուորքն ցուցանել նմա զՆրիա: Իսկ դատաւորն հրամայեաց յարուցանել յոտն, զի պատասխանի տացէ նմա: Ասէ դատաւորն. Զի՞նչ ասես, Փեբրոնիա. ո՞րպէս թուեցաւ քեզ առաջին մրցումնդ պատերազմիդ: Ասէ սուրբն. Ուսար և 'ի միտ առեր յառաջինն իսկ 'ի պատերազմիս՝ եթէ անպարտելի եմ, և զտանջանս քո արհամարհեցի:

Զայս լուեալ դատաւորին՝ հրամայեաց զՓեբրոնիա զփայտէն կախել. և երկաթի քերչաւ զկողս նորա քերել, և հուր սաստիկ 'ի ներքոյ նորա մատուցանել, որպէս զի ոսկերք նորա լուցեալ այրեսցին: Առեալ դահճացն զքերիչսն և այնպէս ուժգին քերեցին, զի որպէս զառաջինն պատառ պատառ հատեալ յերկիր ընկենուին. իսկոյն զհուրն բորբոքեալ բերեալ մատուցանէին 'ի կողմն: Իսկ սուրբն Փեբրոնիա ամբարձ զաչս իւր յերկինս և ասէ. Եկ, Տէր, ինձ յօգնութիւն, և մի՛ անտես առներ զաղախին քո 'ի ժամուս յայսմիկ: Զայս ասացեալ՝ լռեաց, քանզի դեռ ևս տոչորէր 'ի սաստկութենէ հրոյն. բազումք զարհուրեցան և 'ի բաց փախեան 'ի տեսարանէն ըստգտանելով զանհամբոյր և զանողորմ բարս Սիղուիանոսի անօրէն իշխանին: Նա մինչդեռ կայր կախեալ զփայտէ սուրբ կոյսն, դարձեալ հարցանէր. իբրև ոչ ինչ կարէր տալ պատասխանի, ապա հրամայեաց իջուցանել և կապել զցցոյ միոյ. և հրամայէ կոչել բժիշկ, և ասէ ցնա. Անիծեալ և Թշուառական պիղծս այս ոչ կամեցաւ յատենի տալ ինձ պատասխանի, վասն այդորիկ հատցի լեզու դորա և անկցի 'ի հուր. և սուրբն իւրովի իսկ հանեալ մատուցանէր զլեզուն, և աղաչէր զբժիշկն զի արագ հատցէ: Իսկ Հիպասպիստէս բժիշկն իբրև մերձեցաւ առ նա, ամենայն բազմութիւնն երդմնեցուցանէին զնա 'ի փրկութիւն աստուածոցն մի զայն առնել։ Իսկ երիցս նզովեալ և ամենապիղծն հրամայեաց ատամնախիլ առնել, և բժիշկն զգործիսն ՚ի ձեռն առեալ՝ սկսաւ խլել զատամունսն նորա. իբրև խլեաց եօթն և տասն ատամն, յայնժամ սաստիկ հոսումն արեանն յերկիր իջանէր ՚ի բերանոյն. ապա հրամայէր զի դադարեսցի ՚ի խլելոյն։

Իսկ սուրբն նքողեալ նուաղէր յարեան հոսմանէն. զայն տեսեալ բժշկին՝ դեղ մատուցանէր դադարել արեանն։ Սկսաւ հարցանել Սիղուիանոս ցսուրբ կոյսն. Գոնեա այժմ հաւանեա ինձ և խոստովանեա զաստուածսն։ Ասէ սուրբն. Նզովեալ լիջիր երեքթշուառեան և անիծեալ ծեր. զի խափանեալ զոտս իմ ՚ի ճանապարհաց իմոց, և ոչ տաս երթալ առ փեսայն իմ. քանզի միայն այն որ հաճեալն է ընդ իս։ Ասէ Սիղուիանոս. Առ փոքր մի հրով այրեմ զքեզ, զի գիտեմ դեռ զոյժ մանկութեան և զհամարձակութիւն անամօթութեան ունիս։ Իսկ սուրբն Փեբրոնիա ոչ կարացեալ տալ պատասխանի ՚ի սաստիկ տանջանացն՝ ՚ի մեծ ցասումն ածէր զդատաւորն։

Յայնժամ հրաման տայր անօրէնն բժշկին, և ասէ. Զանամօթիդ զստինսդ հատեալ ՚ի գետին ընկեսջիր։ Իսկ բժիշկն առեալ զսուրն՝ կամէր մերձենալ ՚ի սուրբ աղջիկն. և անդէն վաղվաղակի բազմութիւնն զդատաւորն աղաչէին և ասէին. Ո՛վ դատաւոր, ներեա տղայ աղջկանդ, և մի ածեր ՚ի վերայ դորա այնպիսի հարուածս։ Եւ դատաւորն ցասուցեալ ՚ի վերայ բժշկին. Կտրեա արագ, ո՛վ թշուառական և ՚ի սիրոյ աստուածոցն օտար։ Իբրև սկսաւ կտրել, սուրբ աղջիկն գոչեաց ձայնիւ յերկինս և ասէ. Տէր իմ Յիսուս, տես զհակառակութիւն բռնութեանս այսորիկ, որպէս զի եկեսցէ ոգի իմ առ քեզ։ Իբրև հատան երկոքին անդամքն ՚ի մարմնոյն, հրամայեաց հուր մատուցանել. և ՚ի բազում ժամս բորբոքելոյ զհուրն, խորովեալ լինէր որովայն նորա առ հասարակ։ Զայն տեսեալ բազմութեանն՝ գնացին յոլովք ՚ի տեսարանէն ասելով. Դիոկղետիանոս նզովեալ լիցի և աստուածք նորա։

Իսկ Թովմայիս և Երիա առաքեցին ՚ի վանս առ Բրիոնիա՝ պատմել որ ինչ անցին ընդ Փեբրոնիա. և հասեալ համբաւն[1] 'ի վանսն՝ գոչեաց արտասուօք և ասէ. Յաղագս այսորիկ առաքեաց զիս տիկինն իմ Երիա և Թովմայիս՝ աղաչելով զսրբութիւնդ քո, որպէս զի մի լքցին ձեռք քո 'ի տարածելդ ընդ երկինս առ Աստուած, զի մեծ չարչարանք եկին 'ի վերայ դստերն քո Փեբրոնիայի: Իսկ նորա ընկալեալ զայնպիսի աւետիս՝ կարդաց առ Աստուած և ասէ. Տէր Աստուած, ժամանեա յօգնականութիւն աղախնոյ քում Փեբրոնեայ: Եւ ընկենոյր զինքն 'ի գետին, ողբալով ասէր. Բրա՛, բրա՛, Փեբրոնիա, ո՞ւր ես: Եւ տարածեալ զձեռս իւր յերկինս, ասէ. Տէր Աստուած իմ Յիսուս Քրիստոս, նայեա և տես զտառապանս և զնեղութիւնս աղախնոյ քո Փեբրոնեայ, և արագ ժամանեա յօգնականութիւն. և այց արա 'ի նեղութեան անձին նորա, որպէս զի տեսից զկատարումն նորա 'ի դասս սրբոց քոց վկայիցն, Տէր:

Եւ հրամայեաց դատաւորն լուծանել զՓեբրոնիա 'ի դժնդակ կախաղանից ցցոյն. և 'ի բազում տկարութենէ ուժոյն անկեալ 'ի վերայ երեսաց երկրի: Յայնժամ կոմսն Պռիմոն ասէ ցԼիւսիմաքոս. Ընդէ՞ր է կորուստ աղջկանս այս: Ասէ Լիւսիմաքոս. Թողացո՛ ինձ, տէր իմ. զի վասն բազմաց աշխատի դա, որպէս և ես լուէի բազում անգամ 'ի մօրէն իմմէ. ո՞չ ապաքէն իմ իշխանութիւն էր կեցուցանել զդա, այլ թո՛ղ զդա մրցել, 'ի բազմաց փրկութիւն ջանայ: Յայնժամ Երիա յառաջ կացեալ՝ ասէ ցդատաւորն. Ո՛վ օտարացեալդ 'ի մարդկային բնութենէ. ո՞չ շատացար առաջին չարչարանօքդ որով տանջեցեր զտըղայ աղջիկս զայս, կամ ո՞չ յիշեցեր զչար ծնունդ քո. ո՞չ ապաքէն կաթնաբուխ անդամօքս այսոքիւք մնար, և ապա 'ի չափ հասեր. իսկ ես զարմացեալ եմ՝ զի ոչ ինչ կարաց ածել զքեզ 'ի զղջումն, անողորմ և անգութ. և արդ մի խնայեսցէ 'ի քեզ երկնաւոր թագաւորն: Եւ բռնաւորն լի ցասմամբ արձակէր 'ի վերայ Երեայ տիկնոջ, և հրամայեաց իջուցանել յատեանն: Իսկ նորա մեծաւ խնդութեամբ իջեալ 'ի տեսարանն՝ ասելով այսպէս. Աստուած Փեբրոնեայ, ընկալ զիս զհեթանոսս և զտառապեալս: Եւ յիջանել նորա 'ի տեսարանն, բարեկամք Սիզուխանոսի ասեն ցնա. Մի՛ իջցէ Երիա յատեանս, գուցէ բազումք մարտիրոսասցին, և առ հասարակ 'ի կորուստ մատնի քաղաքս և գաւառս. և ոչ հրամայեաց իջանել: Ի ձայն մեծ աղաղակէր և ասէր. Լուր ինձ, Երիա. կենդանի են աստուածքն, զի բազում չարչարանաց լինիս առիթ Փեբրոնեայ: Եւ հրամայէր հատանել զերկուս ձեռսն և զաջոյ ոտն սրբոյն. և այնպէս չարչարեալ, ոչինչ կարաց ազդել սրբոյն: Իսկ ապա սուրբն բովանդակ մարմնովն 'ի դողումն եղեալ. և յորժամ հանդերձեալ մերձ էր 'ի պակասել, աղաչէր զդահիճսն որպէս զի 'ի բաց հատցեն զամենայն անդամս մարմնոյ նորա: Իսկ դատաւորն տեսեալ զյօժարութիւնն՝ լի ցասմամբ ասէր. Կտրեա 'ի բաց և զահեակ ոտն դորա:

---

[1] Բնագիրն ասէ աղջկէն կամ աղախնէն, քանզի աղջիկ մի էր զոր առաքեցին առ Բրիոնիա:

Յայնժամ յարուցեալ Լիսիմաքոս ասէ ցնա. Զինչ ես կամիս անցուցանել ընդ տառապեալդ ընդ այդ, ահա ժամ է ճաշոյ: Սիզուխանոս ասէ. Կենդանի են աստուածքն, ոչ թողից զնա կենդանի, այլ աստէն մնացից մինչև վճարեսցէ զոգին: Յայնժամ հրամայեաց բառնալ զգլուխ սրբոյն. և զինուորացն կալեալ զգիսոյ գլխոյ նորա, և եդեալ զսուրն 'ի վերայ փողիցն՝ իբրև զոչխար, այնպէս փողոտեցին: Եւ իշխանքն գնացին 'ի ճաշս իւրեանց. և բազմութեան յարձակեալ 'ի վերայ՝ կամէին յափշտակել զմարմին սրբոյ վկային: Իսկ Լիսիմաքոս հրամայեաց զօրացն պահել զմարմինն: Յարուցեալ Սիզուխանոսի ճեմելով գնայր 'ի գաւթի ապարանիցն. զի և 'ի բազում տրտմութեան էր: Ի նմին ժամու յանկարծակի մինչդեռ ճեմելովն գնայր, հայեցեալ յերկինս և բազում ժամս պշուցեալ 'ի հիացման, մեծ իմն և սքանչելի ինչ նշան տեսեալ, որպէս զցուլ մեծ 'ի խայտալոյ[1] 'ի բաց հերձեալ զգլուխ նորա, որպէս զի բաղխեալ 'ի միում սեան ուրուք, այնպէս հերձեալ տեսանէր զգլուխն. և այնպէս անկեալ յերկիր ձայն արձակեալ գոչէր. և ապա եհան զգառնացեալ ոգին:

---

[1] Բնագիրն ասէ՝ բառաչելով:

Բազում խռովութիւն և աղաղակ եղև 'ի ժամուն յայնմիկ: Լուեալ Լիւսիմաքոս զձայն ամբոխին, հարցանէր թէ զի՞նչ իցէ. իսկ նոքա պատմէին զոր ինչ եղեն: Լիւսիմաքոս իբրև լուաւ, 'ի բազում ժամ շարժեալ զգլուխն կայր հիացեալ. ասէ ցայնոսիկ որ շուրջն կային. Մեծ է Աստուածն քրիստոնէից, մեծ է Աստուածն, և օրհնեալ է Աստուածն Փեբրոնեայ: Եւ հրամայեաց 'ի թաղումն հանել զանօրէնն Սիղուիանոս: Կոչեաց զկոմսն Պռիմոն և ասէ ցնա. Երդմնեցուցանեմ զքեզ 'ի Ճշմարիտ Աստուածն քրիստոնէից, հրամայեա առնել տապանակ փայտեղէն. և առաքեա յամենայն կողմանս քաղաքս, զի որ կամիցին գալ 'ի թաղումն սրբոյն՝ աներկիւղ իցեն. և այնպէս բարձցեն զսուրբ մարմինն և տարցեն 'ի վանս իւր. զի մի 'ի բազմութենէդ յափշտակեսցէ ոք 'ի սուրբ մարմնոյն, կամ ատամ յատամանցն. նա և անսուրբ անասուն մի լիզեսցէ զսուրբ արիւն նորա որ հեղեալն է վասն Քրիստոսի. այլ եթէ հնար է զհող երկրին քերեալ տարցես 'ի վանսն ընդ սուրբ նշխարսն: Յայնժամ հրամայեաց զօրացն բառնալ զմարմին սրբոյն. իսկ ինքն կոմսն Պռիմոն առեալ զգլուխ սրբոյն և զձեռսն և զոտսն, և զոր ինչ միանգամ հատեալ էր 'ի սուրբ մարմնոյն, և զայն առեալ յիւր պատուական քղամիդն ժողովէր:

Յայնժամ ընթանայր բազմութիւնն 'ի տեղի վկայութեանն, պատեալ զկոմսիւն, զի հատանել ինչ կարասցեն 'ի պատանացն. և 'ի մեծ նեղութեան եղեալ կոմսն՝ հազիւ զերծանէր 'ի բռնութենէ ամբոխին. և ոչ զոք թողին 'ի վանսն, բայց զԹովմայիս և և զԵրիա: Իսկ իբրև տեսանէր տիկինն Բրիոնիա պատառ պատառ հատեալ զմարմին սրբոյն, 'ի վհատութիւն թմբրութեան անկեալ՝ կայր անշունչ 'ի բազում ժամս. ապա եկեալ յինքն Բրիոնիա՝ անկանէր 'ի վերայ նշխարաց սրբոյն և ասէր. Այսօր վճարեցար 'ի տեսլենէ մօր քո, Փեբրոնիա. արդ ո՞վ ընթերցցի զաստուածաշունչ գիրս յականջս քերց քոց. ո՞ր ձեռք շօշափեսցեն զգիրս զոր դու շօշափէիր: Եւ զայս ասելով ողբայր 'ի վերայ Փեբրոնիայի: Ի նմին ժամու հասին քորքն որ եղեալ էին 'ի վանացն՝ հանդերձ Եթեըրայր. և անկեալ 'ի վերայ մարմնոյն Փեբրոնեայ՝ ողջային և ասէին. Թող համբուրեցից զոտս քո՝ որ կոխեցին զգլուխ օձին. համբուրեցից զվէրս մարմնոյ քո, որով բժշկեցան վէրք հոգւոյս. պսակեցից ծաղկեղէն պսակօք զսուրբ գլուխդ, որով պսակեցեր զազգըս մեր բարւոք նահատակութեամբդ: Ապա գայր մերձենայր իններորդ ժամ աւուրն. ասէ Բրիոյնիա. Ահա ժամ աղօթից է. եկ կեցցուք յաղօթս: Սկսաւ ասորի խօսիւք հրաման տալ Փեբրոնեայ և ասէ. Բրա՛, բրա՛, բրա՛, եթա տաղիաս աւթայ, թակումիտի, տիղիթա, կումիաւթայ. Որդեակ իմ Փեբրոնիա[1]: Յայնժամ ասէ Թովմայիս. Որդեակ իմ Փեբրոնիա, ոչ երբէք անցար զպատուիրանաւ մեծի տիկնոջդ իմոյ, այժմ ե՞ր ոչ տաս պատասխանի. և բազում արտասուս հեղոյր նա: Յայնժամ լուացեալ զսուրբ մարմինն և եդին 'ի վերայ բադրոնի միոյ. և պատեալ յօրինէին զհատեալ անդամսն. ապա հրամայեաց բանալ զդուրս վանացն՝ զի մտցէ բազմութիւնն, և տեսեալ զսքանչելիսն փառաւոր առնէին զԱստուած. իսկ մեծամեծ կանայքն ողբային զմերժումն 'ի վարդապետութենէ սրբոյն:

Իսկ Լիւսիմաքոս կոչեաց զկոմսն Պրիմոն և ասէ ցնա. Ես, տէր իմ, զհայրենի մոլորութիւնն թողում, և անկանիմ առաջի Քրիստոսի և հաւատամ 'ի նա: Ասէ Պրիմոն. Եւ ես նոյնպէս կամիմ. Նզովեալ Դիոկղետիանոս և թագաւորութիւն նորա. մերձենամ առ Քրիստոս և հաւատամ 'ի նա: Իբրև առաւօտ լինէր՝ բերին զտապան սրբոյն, և մեծաւ պատուով դնէին յարժանաւոր տեղւոջ. դնէին և 'ի նա զհատեալ անդամսն. իսկ զատամունսն զոր թափեցին՝ դնէին 'ի վերայ լանջացն. իսկ ժողովուրդն իւղս և խունկս բերէին և ընուէին զտապանն։ Յայնժամ մատուցեալ եպիսկոպոսն, աղաչէր որպէս զի թոյլ տացէ նմա տանել զնշխարսն. և ոչ հաւանէր ամբոխն։ Եւ կացեալ Բրիոփնեայ 'ի բարձր տեղւոջ և ասէ. Աղաչեմ զձեզ, տեարք իմ, թողէք երթալ հանգչել 'ի սուրբ տեղիս իւրում. և թոյլ ետուն։

---

[1] Պակասէ կէս բանին. Ո՞ր [illegible], [illegible], [illegible]: Ասորերէնն գրեալ էր յօրինակի մերում փոխանակ. [illegible], [illegible], [illegible], [illegible]. զոր յոյնն գրէ. [illegible] [illegible]. [illegible] [illegible], [illegible]. և լատինն, teliothà, coume, talitha, coumethà. Իսկ ստոյգ ըստ Ասորւոց ձայնի, որպէս 'ի գիտնոց նոցին տեղեկացաք, այսպէս է. [illegible], [illegible], [illegible]. [illegible], [illegible], [illegible], [illegible] [illegible]. այսինքն է բառ առ բառ, Որդեակ, որդեակ, որդեակ. Էկ. անմեղո՛ւկ, արի, գառնիկ, արի և էկ:

Բազումք 'ի հեթանոսաց հաւատացին և մկրտեցան 'ի Քրիստոս. մկրտեցաւ և Լիսիմաքոս և կոմսն Պռիմոն, և հրաժարեալք յաշխարհէ՝ գնացին զհետ Մարկիւղոսի, որ էր գլուխ ամենայն վանականաց. սոյնպէս և Երիա հանդերձ ընտանեօքն հաւատացեալ մկրտեցան 'ի Տէր։ Յայնժամ աղաչէր զԲրիոփնիա՝ Երիա և ասէր. Ընկալ զիս զաղախին քո 'ի տեղի Փեբրոնեայ տիկնոջն իմոյ, և ես քեզ սպասաւորեմ որպէս և նմա։ Առնոյր այնուհետև զզարդ իւր և առնէր 'ի զարդ տապանին Փեբրոնեայ։ Եւ յաւուր յիշատակի նորա ամենայն կանայք վանականք անդր ժողովէին. քանզի յաւուր յիշատակի նորա մինչդեռ յաղօթս կային հասարակ գիշերի, տեսանէին զսուրբն զի կայր յեկեղեցւոջն 'ի սովորական տեղւոջն իւրում, մինչև զաղօթսն կատարէին. և մեծ ահ լինէր 'ի ժամուն յայնմիկ. և ոչ ոք իշխէր մերձենալ 'ի նա, զի յառաջնում տարւոջ երևման նորա տեսեալ ամենայն քերցն, ահ և դողումն ունէր զամենեսին։ Իսկ Բրիոփնիա տեսեալ և 'ի ձայն բարձր գոչէր, և ընթացեալ՝ կամէր բուռն հարկանել, և արկանել գիրկս և համբուրել զսուրբն. իսկ նա աներևոյթ լինէր։ Ապա այնուհետև յորժամ երևէր, ոչ ոք իշխէր մերձենալ 'ի նա, այլ արտասուօք լնուին, և ուրախութիւն մեծ լինէր յորժամ տեսանէին զայնպիսի տեսիլն։

Իսկ եպիսկոպոս քաղաքին տաճար զարմանալի շինէր յանուն սրբոյն. կոչէր զեպիսկոպոսունսն որ շուրջ զիւրեաւն էին, և մեծապէս ընդունելութիւն առնէին, և կատարէին նոքօք զհսկումն գիշերոյն 'ի յիշատակի սրբոյն, յունիս ամսոյ որ օր քսան և հինգ էր։ Իբրև այգ լինէր, յարուցեալ եպիսկոպոսքն գնացին 'ի վանսն, զի զյիշատակ սրբոյն կատարեսցեն ըստ սովորութեանն. և բազմութեանն լուցեալ ճրագունըս և մոմեղէնս։ Իսկ եպիսկոպոսացն մտեալ կային յաղօթս, և նստան յեկեղեցւոջն, և սկսան ասել այսպէս. Զերկրաւոր կարգաւորութիւն վարուց ընկալեալ քո, և արդ՝ քանզի արժանաւորապէս ճգնաւոր մարտիրոսի գովութիւն ասել չէք ոք բաւական, բայց միայն լուռ լինել. և արդ որպէս առ մերձակայ քոյր՝ աղաչեմք զքեզ, զի և դու ընդ մեզ պատուեսցես զսուրբ վկայս, զի տարեալ զսա բնակեցուսցուք 'ի վկայարանին յանուն դորա: Իբրև զայս լուէին քոյրքն ամենայն, ուժգին գոչմամբ անկանէին յոտս եպիսկոպոսացն՝ ասելով. Ողորմեցարուք մեզ տառապելոցս, և մի՛ զրկէք զմեզ 'ի պատուական մարմնոյդ և յընտիր մարգարտէդ՝ զոր շնորհեաց մեզ Քրիստոս: Խօսել սկսաւ եպիսկոպոսն ընդ Բրիոնեայ և ասէ. Լո՛ւր ինձ, քոյր իմ, 'ի փառս և 'ի գովեստ սուրբ վկային շինեցի զյարկն Աստուծոյ, այս վեց ամ է յորմէ աշխատեցայ շինել, մի՛ առներ զիս անպտուղ: Պատասխանի ետ Բրիոնիա և ասէ. Եթէ կամք սրբոյ մարտիրոսին այդ եղև, ես ո՛վ եմ որ կարեմ արգելուլ. արդ մտեալ առէք և երթայք խաղաղութեամբ:

Յայնժամ մտին եպիսկոպոսքն 'ի սենեակն՝ ուր կային նշխարքն, և զսովորական աղօթսն մատուցին. և իբրև կամեցան շարժել զտապանն, փողփողակի ձայն սաստիկ որոտման յանդնդոց լինէր. և բազմութեանն յերկիւղ անկեալ յահէ անտի: Դարձեալ եպիսկոպոսքն մերձենային 'ի տապան սրբոյն, և շարժումն մեծ լինէր, կարծելով թէ պատառեսցի երկիրն: Եւ յայնժամ գիտացին եպիսկոպոսքն եթէ ոչ կամի սուրբ վկայն մեկնիլ 'ի վանիցն: Ասեն ցԲրիոնիա, թէ՝ Ոչ կամի մեկնել 'ի վանից, 'ի մի հատեալ անդամոց դորա տացես մեզ, և զայն առեալ տարցուք: Իսկ Բրիոնիա բացեալ զտապանն, և տեսանէր զի իբրև զճառագայթք փայլէին 'ի սուրբ նշխարացն: Յայնժամ մեծաւ երկիւղիւ ձգեալ զձեռնն Բրիոնիա, և բուռն հարկանէր զձեռանէ սրբոյն, կամելով տալ եպիսկոպոսին. և նոյնժամայն կալեալ եղև ձեռն նորա 'ի տապանակին. սկսաւ խօսել Բրիոնիա համարձակ արտասուօք. Աղաչեմ զքեզ, որդեակ իմ Փեբրոնիէ, մի՛ բարկանար 'ի վերայ մօր քո, և մի՛ խայտառակեր զծերութիւն մօր քո: Եւ ապա առեալ զձեռնն յինքն ամբողջ, և առեալ ատամն մի տայր եպիսկոպոսին :

Իսկ եպիսկոպոսացն առեալ զսուրբ նշխարսն յոսկի շարի, հանդերձ ուրախութեամբ դառնային 'ի քաղաքն. և բազմութիւնն առաջի երթային սաղմոսիւք և օրհնութեամբ: Եւ յորժամ հասին 'ի վկայարանն, եդեալ եպիսկոպոսացն 'ի բարձր տեղւոջ աշտիճանաց բեմբին, նշանակելով ժողովրդեան. 'ի նմին ժամու՝ կոյրք բանային, կաղք գնային և բազում ախտաժէտք բժշկէին, փառաւորելով զամենասուրբ զԵրրորդութիւնն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն[1] :

---

[1] Ի յոյն օրինակս և 'ի հին լատին թարգմանութեան գտանի այլ ևս բան իբր կէս էջ, և յաւարտն ասի, յետ երկուց ամաց վախճանեալ Բրիէնեայ և յաջորդեալ Թովմայիսայ. և սա ինքնին գրէ զգեղեցիկ վկայաբանութիւնս այս, հարցեալ, որպէս ասէ, և զԼիւսիմաքոս՝ զիւրաց որոց չէրն ականատես: Իսկ նահատակութիւն Փեբրոնեայ համարի եղեալ յամի Տեառն 304, յորում և սուրբ Յուղիտա վկայեաց 'ի Կեսարիա:

Վկայաբանութիւն Սրբոյ Վկային Փիթէոնի.

Յեօթն հարիւր և յիսուն և ինն ամի թուին Հոռոմոց, յորժամ երկերիւր քսան և չորք ամք էին թագաւորութեանն Պարսից, յիններորդի ամի թագաւորութեանն Իզդիկերտի արքայի Պարսից, այր ոմն մեծատուն և մոգ յազգէն Պարսից, ունէր երկու որդիս, և ուսուցանէր նոցա զմոգութիւն հայրենատուր։ Իսկ 'ի սիրտ միոյն որ կոչէր Յազտինոս՝ ծագեաց շնորհն Աստուծոյ, և թողեալ զմոգութիւն հօրն՝ չոգաւ յեկեղեցի գեօղջն այնմիկ յորում բնակէին, և խնդրեաց զաստուածային մկրտութիւնն։ Իսկ նոքա 'ի հօրէ նորա երկեան՝ զնա մկրտել. և նորա թողեալ զտուն հօրն՝ գնացեալ յօտարութիւն յերկրին Կերմիոյ, մերձ 'ի քաղաքն Սալուխ՝ զոր Սղաք կոչեմք, 'ի վանս մի որ կոչէր Պեթ Սաւհրաէ, յորում էր առաջնորդ սուրբ հայրն Յովհաննէս. և անդ ընկալաւ զաստուածային մկրտութիւնն. և ուսաւ և զսաղմոսարանն և զսուրբ գիրս և զկարգս Ճգնութեան պահոց և աղօթից։

Եւ իբրև կատարեցաւ 'ի հաւատոն քրիստոսական, դարձաւ յերկիրն իւր և 'ի գեօղն. և եգիտ մեռեալ զհայրն իւր, և աշակերտեաց զեղբայրն իւր 'ի հաւատսն Քրիստոսի, և զորդի եղբօրն իւր որ կոչէր Փիթէոն. զորս իբրև մկրտեաց զնոսա, զգեցոյց Փիթէոնի զսքեմ կրօնաւորութեան, և կրթէր զնա յամենայն բարիս։ Իսկ Փիթէոն էր մանուկ մաքուր և զօրացեալ յամենայն ճգնաւորական վարս՝ շնորհօքն Աստուծոյ, որ և փայլէր նա յերկրին Պերշիփարա. զի ընկալաւ շնորհս նշանաց յԱստուծոյ, և հռչակեցաւ ՚ի բազումս։ Որով և յոլովք գային առ նոսա՝ որ նեղեալքն էին ՚ի զանազան ախտից, և բժշկէին. և բազումք ՚ի մոգուց անտի ՚ի ձեռն սքանչելագործութեան նոցա դառնային ՚ի հաւատսն Քրիստոսի։

Եւ յետ բազում ամաց ճգնութեան՝ փոխեցաւ ՚ի Քրիստոս երանելին Յազտինոս ՚ի մին օգոստոս ամսոյ։ Իսկ Փիթէոն բնակելով ՚ի խցի վարդապետին իւրոյ՝ նովին ճգնութեամբն և սքանչելի գործովք զօրանայր ՚ի բժշկել և ՚ի դարձուցանել զբազումս ՚ի մոլորութենէ. մինչ զի և զոմն մոգպետ՝ որ երևելի էր ՚ի մեծամեծսն Պարսից, զդուստրն նորա որ լի էր բորոտութեամբ և էր այսահարեալ, բժշկելով ՚ի դիւէն և ՚ի բորոտութենէն՝ և հաւատաց ՚ի Քրիստոս. զորոյ զհաւատոցն ծանուցեալ թագաւորն Պարսից, ստիպեաց զնա դառնալ վերստին ՚ի մոգութիւն, նոյնպէս և զդուստրն իւր։ Որք իբրև անշրջելի մտօք խոստովանեցան զՔրիստոս՝ ընդ բազում տանջանօք արկեալ զնոսա, և եսպան ընդ այլոց մարտիրոսաց սրբոց։ Իսկ դատաւորն որ եսպան զնոսա, ծանուցեալ եթէ ՚ի ձեռն Փիթէոնի դարձան նոքա ՚ի քրիստոնէութիւն, կոչեալ զբազում մոգս՝ խորհեցաւ, և գաղտ ՚ի բազմութենէ քրիստոնէիցն՝ որք վասն սքանչելի գործոցն կախեալ կային զորքոյն, առաքեաց ըմբռնել զնա և բերել։ Իսկ իբրև գնացին առաքեալ խնդրակքն ՚ի դուռն խցկանն՝ յորում սուրբն ճգնէր, երանելին զմիջօրէին աղօթսն կատարէր. և նոքա զարհուրեալք ոչ իշխեցին մտանել ՚ի ներքս։ Իսկ իբրև կատարեաց զաղօթսն, ելեալ արտաքս խոնարհութեամբ երկիր եպագ նոցա և ասէր. Տեարք իմ, եկայք զովացիք վասն տապոյս ՚ի շքի աստ. և զոր ինչ կամիք՝ աւասիկ է ՚ի ձեռս ձեր։ Եւ նոքա ասեն. Ոչ ողոքիմք ՚ի հեզաբարբառ բանից քոց, այլ եկաք տանել զքեզ առ մոգպետն մեծ՝ երկաթի կապանօք, վասն զի հակառակ ուսուցանես դենիս մերոյ. և սուրբն ինքնակամ ետ զանձն իւր ՚ի ձեռս նոցա։ Յայնժամ որ վերակացուն էր նոցա՝ որում կոչէր Նիհուրմիզդ, հրամայեաց միում 'ի դահճաց կապել զնա շղթայիւքն. և իբրև արկին շղթայսն զանձամբ սրբոյն՝ արձակեցան և անկան յերկիր: Իսկ Նիհուրմիզդն հրամայեաց բերել այլ ևս շղթայս երկուս զօրաւորս, և արկանել զմին յոտս նորա և զմիւսն 'ի ձեռսն. և իբրև արկին՝ առժամայն մասն մասն բաժանեալ ամենայն օղակքն և քակտեցան 'ի միմեանց: Իսկ արքն զարմացեալ ասեն. Կամ կախարդութեամբ առնէ զայս և կամ զօրութեամբն Աստուծոյ. և բերեալ պարան մի ստուարագոյն 'ի մազից խոզից, և չորս արք սկսան կապել զնա պնդագոյն յոյժ. և եղև որոտումն մեծ 'ի վերայ արանցն, և հարեալ եարկ զնոսա յերկիր իբրև զմեռեալս՝ իբրև ժամս երիս. և սուրբն մերձեցեալ՝ յարոյց զնոսա. իսկ զմի ոմն՝ որ առաւել հայհոյէր զսուրբըս և կախարդութեամբ ասէր լինել զամենայն եղեալ սքանչելիսն, նախ հարեալ կայծակն հրոյ վառեաց զնա և այրէր: Յայնժամ ամենեքեան նոքա զաղաղակ բարձեալ ասեն. Ճշմարիտ նա միայն է Աստուած զոր դու քարոզես. և այրն զոր այրէր կայծակըն՝ աղաղակէր հաւատալով և ողորմութիւն խնդրելով. և սուրբն զհուրն շիջոյց և զվէրս այրմանն ողջացոյց. և առեալ զցուպն իւր՝ գնաց առաջի նոցա առ մոգպետն: Եւ իբրև մերձ եղեն, առ շղթայսն իւրովի և արկ զինքեամբ, զի մի՛ բարկասցի արանցն մոգպետըն, և այնպէս եմուտ առ մոգպետն:

Ասէ ցնա մոգպետն. Դո՞ւ ես Փիթէոն՝ գլուխն Նազովրեցւոցն կախարդութեան: Ասէ ցնա սուրբն. Կախարդութիւն՝ մանաւանդ ձերդ է ուսումն, որ հեռացեալ էք 'ի գիտութենէն Աստուծոյ, այլ մերս վարդապետութիւն՝ է գիտութիւն Աստուծոյ և առաջնորդութիւն ճանապարհին կենաց: Եւ բարկացեալ դատաւորն՝ ձգեաց զձեռնն իւր 'ի ծայր շղթայիցն որով պահեալ էր սուրբն, և քարշեաց յինքն. և առժամայն հատան կապանքն 'ի պարանոցէ սրբոյն ընդ երկուս. և ծայր շղթայիցն զոր 'ի ձեռինն ունէր՝ եղև իբրև զշանթ հրոյ. և նա թօթափեալ զհուրն 'ի ձեռանէն՝ աղաղակեաց. Ո՜հ, զի՞նչ է այս, տեսանէք ճշմարտապէս աներկբայ զկախարդութիւն սորա. և ետ տանել զսուրբն 'ի բանտ և փակել անդէն: Իսկ 'ի մէջ գիշերին մինչդեռ ծունր եդեալ սուրբն և յաղօթս կայր, յանկարծակի եղև ձայն մեծի որոտման, մինչ զի զարթեալ ամենայն բանտեալքն, և տեսին զի ամենեքեան արձակեալք էին 'ի կապանաց, և դուռն բանտին բացեալ էր. յայնժամ զարմացան յոյժ և աղաղակեցին և ասեն. Մեծ է Աստուածն քո, Փիթէոն, և նա միայն է Աստուած: Իսկ բանտապետն զարթուցեալ ետես զայն, և կարծեաց եթէ փախուցեալ էին բանտեալքն, և կամէր զիւրովի երթալ: Իսկ սուրբն ձայնեաց առ նա և ասէ. Մի՛ ինչ երկնչիր, զի աստ եմք ամենեքեան. եկ, փակեա զդրունս բանտի քո:

Իսկ այգուն լուեալ մոգպետն զամենայն եղեալսն՝ բարկացաւ յոյժ խստասրտութեամբ, և ածեալ ըզսուրբն առաջի՝ հարցափորձեաց բանիւ ընդ երկար. և իբրև անշարժ եգիտ զնա 'ի հաստատութիւն հաւատոցն Քրիստոսի, հրամայեաց կապել զնա և արկանել 'ի խորս գետոյն մեծի՝ որ մերձն կայր: Իսկ իբրև արկին զսուրբն 'ի գետն, ջուրքն որ 'ի վերուստ գային՝ ընդ կրունկն դարձան, և դիզացեալք իբրև զպարիսպ՝ մինչև 'ի վեր կառուցեալ կանգնեցան. և որք 'ի ներքոյ էին վտակք գետոյն՝ 'ի յատակս երկրի իջեալք և կլեալք եղեն. մինչ զի ցամաքեցաւ ամենևին իսկ տեղին ուր սուրբն արկաւ: Իսկ բազմութիւն ժողովելոցն՝ որք 'ի վերոյ կացեալ տեսանէին զահաւոր սքանչելիսն, երկիւղիւ մեծաւ ըմբռնեալք և զարհուրեալք աղաղակէին և ասէին, եթէ՝ Մեծ է Աստուածն քրիստոնէից, որ 'ի ձեռն հրեշտակի իւրոյ զջուրս գետոյս 'ի բաց արար 'ի ծառայէն իւրմէ Փիթէոնէ: Եւ 'ի յայս հռչակ համբաւոյ բազումք ժողովեցան անդէն, և տեսեալ զմեծ զսքանչելիսն զԱստուծոյ՝ յոլովք հաւատացին 'ի նոցանէ 'ի Քրիստոս: Իսկ մոգպետն լուեալ զհրաշալի նշանն որ եղև՝ խստացեալ սրտիւ տրտմեցաւ յոյժ, և տոչորէր բարկութեամբ յանձին՝ զամօթի հարեալ, և ետ հանել զսուրբն անտի: Յայնժամ ջուրք գետոյն՝ յելանել սրբոյն՝ արձակեալք մեծաձայն գոչմամբ երթային ընդ նոյն գնացսն իւրեանց: Իսկ մոգպետն կախարդութիւն ասէր լինել զամենայն, վասն որոյ և փայտ բազում ժողովեալ կուտեաց, և հուր մեծ վառեալ՝

ետ արտաքոյ գեօղջն 'ի կողմն Հիւսիսոյ, մինչ զի 'ի սաստկութենէ հրոյն արտաքս փախչել 'ի տանց ամենայն գեղջէիցն. և նա կապեալ զսուրբն՝ ետ արկանել 'ի մէջ բոցոյն։ Յայնժամ սաստկագոյն ճայթմամբ հուրն բարձրացեալ 'ի վերայ գլխոյ սրբոյն՝ խորանաձև կայր զնովաւ որպէս զառագաստ, իբրև ժամս չորս. և որպէս զլոյս արեգական ոչինչ վնասէր նմա։ Իսկ սուրբն սաղմոսելով 'ի ձայն մեծ օրհնէր զԱստուած, յիշելով զմեծամեծս նորա և զնախնի սքանչելագործութիւնսն՝ որ 'ի դարս դարս առ արդարսն առաջինս եղեալս, և զոր առ երիս մանկունսն 'ի Հնոցին Բաբելոնի արար։ Իսկ սաստկութիւն հրոյն ցոլացեալ և ոստեալ յայս և յայն կողմանէ՝ զբազումս 'ի հեթանոսացն այրէր, փախստական առնէր։ Յայնժամ Նիհուրմիզդն՝ որ նախ գնացեալ եբեր զսուրբն այլօք ևս զօրականօքն, տեսեալ զսքանչելսն հաստատապէս՝ հաւատացին 'ի Քրիստոս, և ասէին ցմոգպետն. Եթէ ոչ է գործ առնս այսորիկ կախարդութիւն, վասն զի ծառայեցուցանէ զհուրդ՝ զոր աստուածորդի Պարսից համարիք։ Բայց մոգպետն 'ի նմին խստութեան կացեալ՝ 'ի դիւաց ասէր զամենայն եղեալսն լինել։ Իսկ բազմութիւնն քրթմնջէին ընդ միմեանս, և համարէին եթէ յերկիւղէ թագաւորին պատճառս կարկատէ մոգպետն եղելոյն, և ասեն. Տեսանե՞ս զի հուրդ արտաքոյ ցոլացեալ կիզու զմեզ. գոնէ հրամայեա նմա ելանել արտաքս՝ զի դարձցի հուրն 'ի տեղի իւր, որպէս և տեսաք զի ջուր գետոյն եղև՝ յելանելն նորա անտի։ Իսկ նա բազում բանս հայհոյութեան խօսէր զսրբոյն և զՔրիստոսէ։ Յայնժամ սուրբն ել ամբողջ 'ի հնոցէն, և փառաւորէր զԱստուած. և հուրն անդէն մարեաւ 'ի տեղի իւր։ Իսկ մոգպետն առաւել մոլեալ՝ ետ ունել զսուրբն և արկանել 'ի կապանս և 'ի բանտ. և զկնի սակաւ աւուրց եհաս նմա երթալ յայլ քաղաք. և պատուէր ետ բանտապանին ոչ տալ սրբոյն կերակուր ինչ կամ ըմպելի՝ մինչև ինքն յետս դարձցի։ Եւ այնպէս մնաց սուրբն անկերակուր 'ի բանտին զամիս երկու և զվեց օր՝ մինչև դարձաւ մոգպետն 'ի Ճանապարհէն, և ոչ մեռաւ սուրբն. այլ հրեշտակ Աստուծոյ կերակրէր զնա. որով և ձայն միշտ սաղմոսերգութեան նորա լսելի լինէր։ Իսկ մոգպետն իբրև եհարց և լուաւ զորքոյն եթէ տակաւին կենդանի է՝ զարմացաւ յոյժ. և 'ի միւսում աւուրն կոչեաց զՆիհորմիզդն և ասէ. Առեալ տարցես զկախարդն Փիթէոն 'ի տեղի բնակութեան իւրոյ՝ ուստի բերէր, և անդ հատցես զգլուխ նորա։ Իսկ նա ոչ առյանձն առնել զայն։ Իսկ մոգպետն ծանեաւ զի հաւատացեալ էր Նիհորմիզդն 'ի Քրիստոս. և էառ զպատիւ իշխանութեան նորա և զայլոց՝ որք 'ի ձեռն սքանչելեաց սրբոյն մերձեցան առ Ճշմարտութիւնն, և ետ 'ի կապանս արկանել զնոսա. և ինքն ընդ այլոյ ումեմն մոգի՝ որ եկեալ էր 'ի Թագաւորէն, առեալ տարաւ զսուրբն 'ի տեղի նահատակութեանն. և անդ բազում ողոքանօք և սպառնալեօք ջանայր որոշել զերանելին 'ի խոստովանութենէն Քրիստոսի։ Իսկ երանելի նահատակն Քրիստոսի իբրև աներկիւղ համարձակութեամբ դաւանէր զՔրիստոսի աստուածութիւնն, զնա միայն գոլ Ճշմարիտ Աստուած, և անարգէր զպաշտօն հրապաշտիցն և զամենայն մոլորութիւն Պարսից. հրամայեաց մոգպետն դահճացն, և մատուցեալ սրով 'ի սուրբն՝ նախ հատին զունկն և զռնգունսն նորա, և արկին յերկիր. և սուրբն անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց յերկիր՝ գոհանալով զԱստուծոյ. և առեալ զհատուածս անդամոց իւրոց համբուրէր և ասէր. Գոհանամ զքէն, Տէր, որ արժանաւորեցեր ընդունել պատարագ յանդամոց իմոց. աղաչեմ զքեզ, սովաւ քաւեա զյանցանս իմ և հաշտեաց ընդ հօտս դառանց քոց։ Եւ 'ի միւսում աւուրն առաւել հարկանելով՝ ստիպէին զնա առնել զհրամանս Թագաւորին և դառնալ 'ի մոգութիւն։ Իսկ սուրբն ոչինչ լսէր նոցա, այլ զՔրիստոս վկայէր. և հատին զերկուս ձեռս նորա, և կախեցին 'ի ծառ մի ընդդէմ աչաց սրբոյն. և նա նոյնպէս գոհանայր զԱստուծոյ։ Եւ դարձեալ թողին զնա յայնմ աւուր զի առաւել մորմոքեսցի ցաւօք հատելոցն, և զի թերևս հաւանեսցի նոցա։ Եւ 'ի միւսում աւուրն հատին զերկուս բազուկսն 'ի թիկանցն, և սուրբն ասէր. Փառք քեզ, Տէր, որ արժանաւորեցեր զմեղաւորս զիս՝ բառնալ զլուծ քո 'ի թիկունս իմ. թեթև է լուծ քո, Փրկիչ, և երանի որ բառնայ և ընթանայ ընդ Ճանապարհս քո ուղիղ։ Իսկ 'ի չորրորդում աւուրն դարձեալ հատին զերկուս սրունս սրբոյն 'ի ծնգացն. և սուրբն սաղմոսէր՝ ասելով. Ոտք իմ կացցեն յուղղութիւն. յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ, Քրիստոս Յիսուս, որում կրկնի ծունր, և ամենայն լեզու խոստովան լինի՝ զի Տէր ես դու 'ի փառս Աստուծոյ Հօր։ Եւ յաւուրն հինգերորդի հատին զայլ ևս մնացեալ անդամս սըրբոյն. և զորս կտրէին յանդամոց նորա՝ կախէին զծառոյն ընդդէմ նորա. և սուրբն զօրութեամբն Աստուծոյ տոկայր դեռ ևս. և յոգւոջ կալով՝ օրհնէր զԱստուած, և ոչ դադարէր յաղօթից և 'ի գոհաբանութենէ անուանն Քրիստոսի։ Իսկ 'ի վեցերորդում աւուրն եկին դարձեալ հատանել զգլուխ սրբոյն. և նա սկսաւ աղօթել և ասէ. Լուր Աստուած աղօթից իմոց, և նայեաց 'ի խնդրուածս իմ, և ընկալ զանարժան ծառայս քո ողորմութեամբ. և որք անուամբ իմով աղաչեսցեն զքեզ՝ փրկեա զնոսա յամենայն հարուածոց չարեաց և 'ի յանկարծահաս պատուհասից. այլ և որք 'ի չար այսոց չարչարին, և յանուն ծառայի քո կարդան առ քեզ՝ ազատեա զնոսա զօրութեամբ քով, խնայեա յամենեսեան ողորմութեամբ քով։ Եւ ձայն եկն յերկնից առ սուրբն որ ասէր. Լսելի եղեն ամենայն խնդրուածք քո, և դու ե՛կ ուրախութեամբ առ իս, բարի և հաւատարիմ ծառայ իմ։ Իսկ իբրև կատարեաց սուրբն զաղօթսն, եկեալ դահճապետն եբարձ սրովն զգլուխ սրբոյն. և կախեցին զնա 'ի գլուխ լերինն առ 'ի յերկիւղ բազմութեան հաւատացելոցն՝ որ ժողովեալ էին անդ. և մեծապէս ըղգուշացեալ մարմնոյն՝ պահէին, զի մի՛ ոք առցէ զնա 'ի թաղումն. և նստեալ գոլով շուրջ զտեղեաւն արք իբրև հարիւր և յիսուն՝ զաւուրս տասն. և ապա թողեալք՝ գնացին 'ի տեղիս իւրեանց։

Իսկ կղերիկոսք ոմանք՝ որդիք գերութեան, հանդերձ բազմութեամբ հաւատացելոցն եկեալ լապտերօվք և խնկովք՝ ժողովեցին զամենայն հատեալ անդամս սրբոյն առ մարմնովն, և թաղեցին 'ի ստորոտ լերինն, 'ի տեղին՝ որ նախ կատարեցան այլք ոմանք որ յառաջագոյն աշակերտեալք նմա հաւատացին 'ի

Քրիստոս և մարտիրոսացան ։ Իսկ Նիհուրմիզդն և վաթսուն և երկու այլ ևս արք 'ի մոգուց անտի՝ որք հաւատացին 'ի Քրիստոս սքանչելագործութեամբ սրբոյն, մկրտեալ կրօնաւորեցան և առաքինական վաստակօք փոխեցան 'ի Քրիստոս, պսակեալք 'ի նմանէ ։

Կատարեցաւ մեծ և մեծ մարտիրոսն և պայծառ վարդապետն ճշմարտութեան, երանելի և ամենաժուժկալ կրօնաւորն և ճգնաւոր վկայն սուրբն Փիթէոն, զոր Մար Փիթէոն կոչեն, յամսեանն որ յետի Թշրին կոչեն 'ի քսան և հինգն, յաւուր չորեքշաբաթի ։ Բայց եղաւ և միւս ևս յիշատակ չարչարանաց նորա 'ի սեպտեմբերի ամսոյ յեօթներորդում աւուրն, 'ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեան ։

Վկայաբանութիւն Սրբոյն Փիլիկտիմոնի, և թագաւորին Գորգիանոսի և կնոջ նորա Անատոլեայ և Թէոդուլեայ և այլոց սրբոց [1]։

Ի ժամանակս հալածմանցն՝ յորժամ սատանայ զուարձացեալ քքուէր հրամանաւ իւրոց պաշտօնէից, էր խռովութիւն մեծ, բռնութիւն և յափշտակութիւն տարապարտ։ Ուստի և Գորգիանոս թագաւոր Խլու քաղաքի՝ հաւասարէր սատանայի, և մրմռեալ յարուցանէր հալածանս մեծ 'ի վերայ քրիստոնէից, և հրաման տայր հալածել զնոսա. և ածեալ զոմն անուն Փիլիկտիմոն, զոր և ասաց իսկ, կարծեմ վասն քո եթէ զաստուածն քրիստոնէից պաշտես դու. այլ 'ի բաց կալ 'ի զուր խորհրդոց քոց, ուսիր և տեղեկացիր որ 'ի բազում աստուածս մեծ և փառաւոր հզօր և մարդասէր՝ Ապողոնն է, և զինչ և այլ ես ասեմ, և միանգամայն և փրկիչ է ամենայն աշխարհի. արդ խորհեաց դու զօգուտն քո, այր դու, հաւանեաց գալ յերկրպագութիւն մեծին Ապողոնի։ Իսկ սուրբն Փիլիկտիմոն խրատեալ օրինօքն Աստուծոյ և զբազմաբար առաքինութիւն ցուցանէր, մանաւանդ թէ ցուցեալ իսկ էր։ Նա տեսեալ յինքեան զդրոշմ Քրիստոսի, բարբառեցաւ առ թագաւորն և ասէ.

---

[1] Քանզի զսուրբ Փիլիկտիմոնն՝ որ յեկեղեցիս մեր տօնի յետ ութօրէից Սուրբ Խաչի, և ըստ Յայսմաւուրաց յ՚2 դեկտեմբ. որպէս և ըստ Յունաց և Լատինաց 'ի 29 Նոյեմբ., ցարդ ոչ ունէաք վկայաբանութիւն երկարապատում, և նորագիւտս այս օտարոտի իմն թուի, և իբրև աւանդ հնութեան՝ կարգեցաք 'ի շարս այլոցն, զհաւատ և զքննութիւն թողեալ 'ի փորձ գիտութեան և ժամանակի։

Լուր, ով Թագաւոր, թէպէտ կալեալ ածայ մինչև յատեանս, ոչ ճարտարաբանութեամբ ինչ ասեմ քեզ, այլ անշարժ մտաց գիտացեալ զօգտակարն՝ տեղեկացուցանեմ քեզ զԱստուած ուսեալ բազմաժառանգ է [1], մոլորեալ և զբազումս մոլորեցուցանէ 'ի նորոգմանէ, գեղգեղեալ արհամարհի ասաց լինել նշանի. իսկ եթէ ոչ հաւանիս ինձ, երթիցուք 'ի միասին յանուանեալ տաճարն Ապողոնի, և ցուցանեմ քեզ զանօրէն և զաւաչօք տեսիլն և զբազում տկարութիւն կռոցն։

Զայս լուեալ Թագաւորին, ոչ ինչ զայրանայր պատանեկին, այլ ասէր ցնա. Երթիցուք 'ի միասին, և ցուցից քեզ զհզօրագոյն և զանյաղթ զշնորհսն Ապողոնի։ Եւ յերթալն՝ գնաց ընդ նոսա և բազմութիւնն, տեսանել թէ զի՞նչ ասիցէ քրիստոնեայն ընդ Ապողոնի։

Եւ հասեալ Թագաւորին 'ի տաճար կռոցն՝ ասէ ցվկայն. Տեսանե՞ս որպիսի նկարու զանազան կազմեալ շինուածքս, սրահք կճայատակք, սիւնք և խոյակք ոսկեզօծք, և ամենայն գործ երաժշտական է։ Արդ եթէ տաճարս այս այսպէս գեղեցիկ է տեսանելով, յայտ է թէ աստուծոյս Ապողոնի պարտ է երկիր պագանել։ Զայս ասացեալ Թագաւորին՝ հրամայեաց զօրականացն բանալ զդուրս մեհենին։ Իբրև բացին, ասէ Թագաւորն ցվկայն. Տեսանե՞ս զփառաւորութիւնս որով պաճուճեալ իսկ է Ապողոն և գեղեցիկ զարդարեալ։ Եւ մինչ դեռ ևս խօսէր Թագաւորն՝ եմուտ վկայն Քրիստոսի 'ի տաճար կռոցն տեսանել զԱպողոն զանուանեալն թէ իցէ Աստուած. և պատասխանի տուեալ ասէ ցԹագաւորն. Ա՞յս է՝ զորմէ ասէիրն, թէ սորա է հաստատեալ զամենայն երկիր և ունի 'ի կարգի իւրում՝ հրամանաւ սաստից իւրոց։ Իսկ Թագաւորն ասէ ցսուրբն. Ոչ միայն զերկիր՝ այլ և զերկինս և զերկիր դա է որ եցոյց հանդերձ ամենայն զարդուք իւրեանց, և ամենայնի յայտնապէս մատակարար է։ Եւ զի՞նչ իցէ մարդ առանց դորա, եթէ ոչ ունի օգնական զդա, և ոչ մի ինչ պատճառ բարեյաղթ կարէ կենաց ունել։ Սուրբն Փիլիկտիմոն ասէ ցթագաւորն. Թող մինչև խօսեցայց և ես ընդ նմա։ Իսկ թագաւորն ասէ ցսուրբն. Որպէս կամիս՝ սիրաբանեա ընդ նմա, խօսեաց ընդ նմա համարձակ։ Սուրբն Փիլիկտիմոն ասէ. Քեզ ասեմ, Ապողոնի, զմէ՞ ոչ գնաս 'ի վայելուչ տեղւոջս՝ վասն ողջութեան կենաց որ 'ի քեզդ են ապաւինեալ. քանզի և թագաւորն և ամենայն հրապարակն հեթանոսաց՝ զքեզ կոչեն աստուած, և քեզ ոչ ինչ փոյթ է վասն կորստեան և առողջութեան նոցա։ Զայս ասացեալ սրբոյն, դարձաւ 'ի թագաւորն և ասէ. Ահա ոչ խօսի և ոչ ունի տալ պատասխանի աստուածդ քո, ո՛վ թագաւոր. արդ գոնեա դու պատմեա ինձ, ո՛վ թագաւոր, ընդէ՞ր մածեալ է փոշին 'ի վերայ գլխոյն Ապողոնի։ Թագաւորն ասէ. Վասն զի անդադար աշխատի վասն փրկութեան ամենայն աշխարհի. անտի մածեալ է փոշիդ 'ի վերայ գլխոյ դորա։ Սուրբ վկայն ասէ. Ո՞ւր են լուծք եզանցն. և կամ թէ գրաստս վարիցէ, ո՞ւր են էշք դորա. այլ ասիցես արտունձ է, և ո՞ւր է մանգաղ դորա. իսկ եթէ հացարար է կամ խոհակեր իցէ, և ո՞ւր իցեն հացքն և պաճուճանք խորտկացն՝ զոր դորայն իցէ կազմեալ. այլ գիտեմ եթէ յօդական է այս, թագաւոր, սուտ և ընդ վայր կարծիք։ Ասա ինձ՝ և ո՞ւր է զօրութիւն և կամ յո՞յր պարսպեալ է, վասն զի ասացեր ինձ, ո՛վ թագաւոր, թէ յառաւել աշխատութենէ մածեալ ունի փոշին զգլուխ դորա. յորմէ՞ վաստակոց՝ ասա ինձ, զի տեսեալ զայն՝ գովեցից զդա։ Թագաւորն ասէ. Սմա փրկութիւն աշխարհի է։ Սուրբն Փիլիկտիմոն ասէ. Ո՞ւր է փողն կամ ձայնն հնչման նորա, և կամ ո՞ւր են բանք բերանոյ նորա գրեալ առ յօգուտ ինչ ձեզ՝ որոյ անուանեալդ է աստուած։ Այլ գիտեմ զի մոլորեալ ես այդօքիւք, ո՛վ թագաւոր. հրամայեա բերել ջուր և դաստառակ, և լուա զԱպողոնի, և մաքրեա դաստառակաւ, զի մի՛ այլ ևս փոշի 'ի վերայ գլխոյ նորա կայցէ, զի թերևս այնպէս զգաստասցի. մի՛ մոլորիր, ո՛վ թագաւոր, որպէս և յառաջ ասացի քեզ, այլ տուր ինձ հրաման և ես արկանեմ 'ի վայր զԱպողոնի՝ զկարծեալն աստուած ձեր, և ցուցանեմ քեզ զի ոչ ցամնու և ոչ բարկանայ և ոչ ակնարկէ և ոչ տեսանէ, ոչ փայլատակէ և ոչ որոտայ, ոչ սոսկայ և ոչ սարսափէ, ոչ գղրդի և ոչ ընկղմի, ոչ իբրև զԱստուած բարկանայ, այլ իբրև զպղինձ ցրուեալ կործանի։ Իսկ Թագաւորն լուեալ զայս՝ ասէ ցսուրբ վկայն Քրիստոսի. Թէ այսպիսի զօրութիւն և իշխանութիւն է քո, և այդպէս քաջալերեալ և յուսացեալ ես յԱստուածն քո, արա զդա 'ի վայր։ Իսկ սուրբ վկայն Քրիստոսի հրամայեաց բերել պարանս, և արկեալ զպարանոցաւն Ապողոնի՝ և ձգեալ ընկեաց զնա 'ի վերայ յատակին. և իբրև անկաւ՝ քակտեցան ամենայն յօդուածքն 'ի միմեանց. և զարհուրեալ Թագաւորին՝ 'ի բաց վազեաց 'ի տեղւոջէն, զի մի՛ պատառք պղնձոյն ոստուցեալ վիրաւորեսցեն զնա։ Եւ յելանել նոցա 'ի մեհենէ կռոցն՝ կալաւ Թագաւորն զձեռանէ սրբոյն և գնաց։ Իբրև եհաս յապարանսն՝ հրամայեաց կոչել զԱնատոլիա զկին իւր և զՍեբաստիանոս զորդի իւր և զԹէոդոսիա զդուստր իւր և զկուսակալս և զմեծամեծս և զզօրավարս և զպետս և զիշխանս՝ որք էին ընդ Թագաւորութեամբ իւրով։

---

[1] Յօր. եղծեալ և վերագրեալ. Թուի բազմաժամանակ է։

Եբաց զբերան իւր Գորգիանոս Թագաւոր և սկսաւ բարբառել նոցա զտուեալ նմա բանն 'ի Տեառնէ և ասէ. Լուարուք, ո՛վ յիմարք և երկմիտք, և ծաներուք զեղեալսն, զի կարծեցեալ կենդանի աստուածն Ապողոնի՝ իբրև զոչինչ կորեաւ. որ սպառնայրն՝ սպառեցաւ, որ ձգէրն առ ինքն զազգս ամենայն՝ դուզնաքեայ չուանաւ անկեալ կործանեցաւ, և որ անկեալն էր՝ ոչ զօրանայր, որոյ բերան իւր բաց էր և ոչ խօսէր. զի՞նչ և այլ ինչ ես ասեմ, եթէ ոչ ունէաք արուեստագէտս՝ և ոչ աստուածս ես ստանայաք. և եթէ էաք անարուեստ ամենեքեան և ոչ ունէաք շատութիւն ոսկւոյ՝ արդեօք և անաստուածք իսկ էաք։ Զայս ասեմ իսկ, զոր և դուք ամենեքեան քաջ գիտէք, ո՞չ ապաքէն յայսմհետէ երևեցաւ մոլորութիւն մեր՝ յորժամ մեռաւ Ադոնիա որդի Քասնթու Թագաւորին։ Այնչափ առաւել սուգ հասեալ 'ի վերայ՝ որպէս զի ոչ կամէր համբերել վշտացն, առաւել յանձկոյ որդւոյ իւրոյ մեռելոյ. և նեղեալ յոյժ, գործեաց պատկեր նման որդւոյն իւրոյ Ադոնիայ. զոր և տայր իսկ՝ որ միանգամ էին ընդ իշխանութեամբ իւրոյ թագաւորութեանն՝ խորհուրդ, որպէս թէ դնել ունէր զպատկեր մանկանն, և այնպէս իբրև զԱստուած կարծեցեալ լինէր։ Ահա տեսէք զանձուկ հօր առ որդի, որ արար սկիզբն ցուցանելոյ զկռապաշտութիւն. զի զամենեսեան լկտեցուցեալ մոլորեցուցանէր։ Այս ձեզ գիտութիւն լիցի, եթէ էր թշնամի Քսանթոս որդւոյն իւրոյ մեռելոյ, և ոչ մեք ունէաք արդեօք զնկարագիր որդւոյն իւրոյ կանգնեալ պատկերին։ Ահա ասացի ձեզ զգործոյն դժոխոց և զգործօղէն կորստեան։ Գիտութիւն լիցի ձեզ այսուհետև, եղբարք իմ, զի յայսմհետէ ոչ ես կամ՚ի մոլորութեանդ յայդմիկ, վասն զի քրիստոնեայ եմ և ողկոյզ հասուն Ճշմարիտ այգւոյն, և բղխէ սիրտ իմ. և բազումօրինակ է բանս օգտեցուցանել զարժանիսն. ես այժմիկ ՚ի ժամէս յայսմանէ զգինի և զցքի նուիրայն ոչ ըմպեմ՝ զի զօրացայց ուղիղ ՚ի կարգս ապաշխարութեան։ Զայս ասացեալ թագաւորին, պատասխանի ետ Սեբաստիանոս և ասէ. Ո՛ հայր, ընդդէմ ասել քեզ ոչ է բարի, և հակառակել ոչ ես է ժամ. բայց սակայն ասեմ քեզ զլինելոցն՝ հաստատուն բանիւք. ցաւօք լցեր զսիրտ իմ. ոչ որպէս դու կարծես՝ եթէ իբրև զմանուկ զայրանամ, այլ իբրև զառիւծ մռմռիմ։ Վասն է՞ր մատնեցեր զմեծ աստուածն Ապողոնի՝ Փիլիկտիմոնի, ասացելոյն զինքենէ եթէ քրիստոնեայ եմ. և արդ ամենայն քաղաքս հեծէ վասն նորա, և բիւրապատիկ մեղադրութիւնս դրէ ՚ի վերայ քո, և ամբաստանեն զքէն. բայց ասա մեզ քրիստոնեայ զքեզ կոչելով՝ այսուհետև ոչ կարես ունել զթագաւորութիւնդ։

Եւ մինչդեռ նա խօսէր, սկսաւ հակառակաբանել ընդ նմա Թէոդոսիա քոյր նորա և ասէ. Ասեմ քեզ, Սեբաստիանոս եղբայր իմ, մի՛ թշուառանար և մի՛ մոլորիր, և մի՛ ցանկար պատուի և պսակի և թագաւորութեանս հօրս մերոյ, զոր խոստեալ անարգեաց վասն Քրիստոսի թագաւորին երկնաւորի. և զսուտ աստուածն Ապողոնի համդերձ իւրովքն ձենձերահոտ զոհիւքն՝ ուրացեալ անարգեաց, և զսուրբն Փիլիկտիմոն Ճշմարիտ ծառայն Քրիստոսի՝ սիրեաց. զի արժանաւոր լիցի անուշահոտ պարգևաց Հոգւոյն սրբոյ 'ի ձեռն տիրասէր վկային։ Եւ արդ ո՞չ է քեզ ամօթ հայրատեաց և մայրատեաց և քոյրատեաց լինել. այլ քեզ կորուստ և մեզ Թշնամանք և փղձկանք, նեղութիւն և տառապանք՝ խոտորելդ քո 'ի կենսատու Թագաւորէն մերմէ Քրիստոսէ։ Ոչ է քեզ պարտ առաջի Թագաւորի, և մանաւանդ հօր մերոյ՝ այդչափ յանդըգնաբար բարբառել։ Դու ես որ յարուցանես զամբոխդ և խռոխտաս Թագաւորել, և վասն այնորիկ կուրացուցեալ քեզէն զաչս մտացդ՝ ոչ տեսանես զկորուստ քո, այլ ժխտեալ ստահակս բարբառիս. մինթէ երկնագո՞յն իցես քան զհայրդ քո. ո՞չ ապաքէն դորա ծնեալ է զքեզ՝ վարժելոյն ընդ բազում հրահանգս, առաւել 'ի գիտութիւն ծանուցեալ գիտաց զպատճառսն, և եպագ երկիր Քրիստոսի երկնաւոր Թագաւորին։ Դու որպէս խոյս տաս 'ի խորտակելն Ապողոնի, և մեք պաշտեմք զՔրիստոս՝ որ խորտակեաց զմահ։ Արդ Ապողոնն դուզնաքեայ չուանով ձգեալ մանրեցաւ և եղև իբրև զաւազ, ուստի՞ դա Աստուած կոչի. մի՛ այսուհետև մոլորեցուսցէ զքեզ սատանայ անմռունչ կռօքն, որ ոչ են աստուածք։

Զայս ասացեալ Թէոդոսիա ցեղբայր իւր, ասէ ցնոսա մայրն իւրեանց. Լռեցէք, որդեակք, և մի՛ դառնանայք և մի՛ ինչ ամբոխէք. Աստուած սրբոյն Փիլիկտիմոնի՝ որ կոչեաց զհայրն ձեր, նա գիտէ զինչ գործել պարտ է նմա։ Եւ 'ի խօսելն զայս ընդ որդիս իւր՝ մատեաւ առ այր իւր և ասէ ցնա. Թագաւոր Գորգիանոս, մարմին իմ, բնակակից իմ, տէր իմ, որ մնուցեր և զուարճացուցեր զիս զամենայն աւուրս կենաց իմոց մինչև ցայսօր. ծաղկեալ խնդացո և զմեր ոգիս, և ժուժկալեալ համբերեա առաջակայիցն վասն սիրոյն Քրիստոսի. և լուր զոր ասեմքս՝ ես և Թէոդոսիա, տէր մեր և առաջնորդ նորոց կենաց մերոց, որ պարգևեցաւ մեզ 'ի ձեռն սրբոյն Փիլիկտիմոնի, այսինքն է աստուածածանօթութիւնս մեր։ Գիտութիւն լիցի քաջութեանդ քում, քանզի 'ի Քրիստոս յորժամ հաւատացաքն՝ ոչ միայն բերանով օրինադրեալ պատմի, այլ 'ի տեսանօղ սրտից հաւատարմացեալ լինի. մի՛ բանիւք միայն ճարտարել, այլ գործովք գոյից։ Քանզի աստուածային հաւատոյն խորհուրդ ոչ միայն հաւատալն 'ի Քրիստոս, այլ և չարչարանս ևս կրել վասն նորա. արդ որպէս տեսանեմ՝ չար զաւակ է Սեբաստիանոս և ոչ են բարի հայեացք նորա ընդ մեզ. կարծեմ իսկ՝ եթէ և մեռանել ունիմք 'ի նմանէ. Ցարիցեն, ասէ, որդիք 'ի վերայ հարց ծնողաց իւրեանց և սպանանիցեն զնոսա, այլ և 'ի քոյրս իւր ձեռն արկեալ՝ մեօք հանդերձ սպանանէ զոսա։ Արդ դու, տէր իմ, ո՞ւմ մնաս. որովհետև զՔրիստոս զգեցոյց քեզ սուրբն Փիլիկտիմոն։ Ի բաց մերկեա 'ի քէն զծիրանիսդ, և բարձ զպսակդ 'ի գլխոյ քումմէ, քանզի պատրաստ է սատանայ զինել զորդի քո որպէս տեսանեմ։ Եւ իբրև լուաւ զայս թագաւորն 'ի քրիստոսասէր ամուսնոյ իւրոյ, վաղվաղակի 'ի բաց մերկացաւ զթագաւորական պատմուճանն յինքենէ, և վերացոյց զպսակն 'ի գլխոյ իւրմէ։ Եւ ասէ ցորդին իւր. Զի՞ հեղգաս, որդեակ, առ զամենայն 'ի ձեռաց իմոց, քանզի պարտ է քեզ թագաւորել որպէս տեսանեմ։ Ասէ ցնա Սեբաստիանոս. Ո՛ հայր, զի թէպէտ և ես բարեյաղթ, ընդէ՞ր առնես զայդ և ձրիւ լեցուցանես զսիրտ իմ։ Գորգիանոս թագաւորն ասէ. Դադարեա, որում փափաքէիրդ՝ տուաւ քեզ։ Յայնժամ համարձակեցան՝ որ շուրջն կային հանդերձ ամենայն քաղաքաւն, աղաղակեցին և ասեն. Եթէ քրիստոնեայ ես, ոչ ես կարես այսուհետև թագաւորել 'ի վերայ մեր, վասն զի զԱպողոնին մանրեցեր, զփրկիչն մեր կործանեցեր, զտէրն մեր սպաներ, զաստուածն մեր փշրեցեր, և զիա՞րդ յայսմհետէ թագաւորես 'ի վերայ մեր։ Եւ մինչդեռ աղաղակէին, ասէ ցնոսա թագաւորն. Զի՞ էք ամբոխեալ. ես ինձէն իսկ կամօք 'ի բաց եդի զապականացու պատիւ թագաւորութեանդ. դիք զայդ 'ի վերայ գլխոյ որդւոյ իմոյ և յինէն 'ի բաց գնացէք։ Եւ յարձակեցաւ մի 'ի զինուորացն՝ որում անուն էր Բասոս, և առ 'ի ձեռաց թագաւորին զծիրանին և զթագն, և ասէ. Սեբաստիանոսի վայել է թագաւորութիւնս։ Յայնժամ եղեալ խորհուրդ մեծամեծացն հանդերձ ամենայն բազմութեամբ քաղաքին, պսակեցին զՍեբաստիանոս զորդի նորա, և թագաւորեաց 'ի վերայ նոցա։

Եւ իբրեւ Թագաւորեաց՝ հրամայեաց փշրել և մանրել զԱպողոնն և վերստին նորոգել: Եւ իբրեւ անցին աւուրք եօթն՝ նստաւ յաթոռ թագաւորութեան իւրոյ, և հրամայեաց կացուցանել յատենի զսուրբն Փիլիկտիմոն։ Ասէ ցնա Թագաւորն. Ի քեզ ցուցանեմ զառաջին տանջանսն. ասա ինձ, երկիցս անիծեալդ, զիա՞րդ քաջալերեցար արկանել չուան 'ի պարանոցն Ապողոնի և ձգեալ կործանեցեր զնա, և արարեր թշնամանս թագաւորութեան մերոյ։ Եւ արդ կարծես եթէ ապրելո՞ց իցես 'ի տանջանացն զոր պատրաստեալ եմ ածել 'ի վերայ քո. այլ հաւանեաց ինձ եթէ գոնեա կամիս 'ի մարմնաւորիս վայելել 'ի կեանս յայսոսիկ, վասն զի տեսանեմ զքեզ մանուկ և վայելուչ կերպարանօք. երթ և զոհեա աստուածոցն, զի տեսեալ զքեզ ծնողացն իմոց և քեռն՝ զնոյն արասցեն և կեցցեն։ Իսկ սուրբն Փիլիկտիմոն ասէ. Որք ծնանն զքեզ, նոքա վերստին եղեն ծնողք յազատութիւն աստուածային և սուրբ Հոգւոյն հրամանաւ. այլ քեզ վայել է հասկ ազազուն և տարաժամ պտուղ, և վարեալդ յարբանեկութիւն սատանայի։ Զայս լուեալ Թագաւորն՝ զկծէր իբրեւ զգազան բեկանող և մեղանչող, և այնպէս անողորմ հրամայեաց ձաղկել զնա խիստ գաւազանօք։ Իսկ Աստուծոյ եկեալ 'ի յօգնականութիւն իւրոյ ծառային՝ զանց առնէին գաւազանքն զսրբովն։ Եւ 'ի տանջելն զինուորացն զարդարն՝ զմիմեանց կառափունս հարկանէին, և ճակատեալ մի 'ի գաւազանացն եհաս յերեսս Թագաւորին, և 'ի բաց խլեաց զմի ական նորա։ Եւ իբրեւ կուրացաւ Թագաւորն՝ ասէ ցդահիճսն որք տանջէին զսուրբ վկայն Աստուծոյ. Աղաչեմ զքեզ, Տէր, մի բարկանար ինձ, այլ բեր զձեռն քո 'ի վերայ վիրաւորեալ ականս իմոյ, և պարգեւեա ինձ վերստին զկորուսեալ յինէն զլոյսն. գիտեմ իսկ՝ զի վասն քո պատահեաց ինձ վտանգս այս։ Իսկ վկայն Աստուծոյ պատասխանի ետ և ասէ ցնա. Զփշրեալն Ապողոնն և զվերստին նորոգեալն 'ի քէն՝ կոչեա, եթէ կարող է՝ կեցուսցէ զքեզ և լուսաւորեսցէ զակն քո։ Ասէ ցնա Թագաւորն. Ոչ երբեք բացին աստուածք զաչս կուրաց։ Փիլիկտիմոն ասէ. Եւ եթէ ոչ օգնեն քեզ, ընդէ՞ր ծաինես զընծայս քո, և պաշտես զնոսա իբրև զարարչարըս: Եւ յետ այսորիկ տեսեալ սուրբ վկայն զտարակոյս Թագաւորին՝ մերձեցաւ յակն նորա և բժշկեաց զնա: Եւ իբրև բժշկեցաւ բռնաւորն՝ ասէ. Գոհանամ զքէն, Ապողոնի աստուածդ իմ, վասն զի դու շնորհեցեր ինձ զլոյսդ իմ: Զայս ասաց, հրամայեաց կապել զսուրբն Փիլիկտիմոն և տանել 'ի բանտ: Եւ իբրև հանին արտաքս զսուրբ վկայն Աստուծոյ, հրամայեաց ածել զհայրն և զմայրն և զքոյրն: Եւ 'ի մտանելն նոցա յապարանսն՝ յոտն եկաց Սեբաստիանոս և ասէ ցհայրն իւր. Նիստ, հայր: Գորգիանոս Թագաւոր ասէ. Նիստ դու, որդեակ, վասն զի Թագաւոր ես. իսկ մեք անարգեալք և աղքատք վասն Քրիստոսի: Սեբաստիանոս ասէ. Ես նստիմ առանց պատկառանաց, և դուք զոհեցէք առանց տրտմութեան աստուածոյն, և մի՛ հարկէք զիս անարգել զծերութիւնդ ձեր: Թէոդոսիա ասէ. Զծերութիւն ծնողաց անարգե՞ս, ո՛ Թշուառացեալդ, կամ ո՞չ գիտես զի բարկութիւն Տեառն ոչ յամէ. զայդ ո՞չ գիտես զի սատանայ զքեզ իւր զինուորեցոյց և կացոյց Թագաւոր. բայց սակայն յիշեա զի 'ի դոցանէ ես ծնեալ, և ընդէ՞ր գտար չար զաւակ, այլ մի՛ լիցի քեզ բարի, սատանայ, և դու ես արդեօք մի՛ կոչեսցիս զաւակ այդպիսի ծնողաց: Սեբաստիանոս ասէ, եթէ՝ ծնողքդ ծերացեալ են և մոլորին, իսկ դու վասն զի մանուկ ես և այդպիսի զարմանալի գեղ և սքանչելի հասակ, զորոյ և պատմել իսկ դժուարին է մարդոյ, զոր տուեալ է քեզ 'ի դիցն, ընդէ՞ր ոչ զոհես աստուածոցն և Թագաւորես: Թէոդոսիա ասէ. Միթէ ո՞չ գուցէ իմ գաւազան՝ հարկանել զԹիկունս այնորիկ որում ոչ է պարտ կեալ: Եւ զայս ասացեալ՝ ընթացաւ վաղվաղակի և բուռն եհար զնմանէ, և կտրեաց զպսակն 'ի վերայ գլխոյ նորա, և պատառեաց զծիրանիս նորա. և այնպէս զօրացաւ 'ի վերայ նորա, որպէս ոք յարանց, որոյ եդեալ զափ իւր 'ի վերայ մարախոյ և ճմլիցէ զնա: Պատասխանի ետ մի ոմն 'ի զօրականացն որ կոչէր Բասոս և ասէ. Լուր, տիկին Թէոդոսիա, ոչ է պարտ քեզ հարկանել զհայր Թագաւոր: Իսկ նա ասէ ցնա. Բիւրադեւ սատանայասէր, շուն մեռեալ ընդվայրահաջ, և դո՛ւ հաջես։ Եւ ընթացեալ մերձեցաւ 'ի նա և ասէ. Եւ դու ընդ հեթանոսս և ընդ այլազգիս գիտես պատերազմել. այլ առ քրիստոնեայս ոչ գոյ քեզ զօրութիւն, ա՛յ սատանայ և արբանեակ չարի։ Եւ զայս ասացեալ՝ ա՛ռ քար և յարձակեցաւ 'ի վերայ նորա, և եհար զերեսն և փշրեաց զատամունսն շրթամբն հանդերձ, և այնպէս առուս արեան հոսեցոյց 'ի նմանէ։ Իսկ 'ի վաղւին նստեալ յատենի Սեբաստիանոս, և լցեալ բարկութեամբ և սրտմտութեամբ կրճտէր զատամունսն իւր. և հրամայեաց ածել զերանելին Թէոդոսիա։ Իսկ նա յարուցեալ գնաց ծիծաղելով՝ քաջալերեալ 'ի Քրիստոս. և մտեալ 'ի ներքս՝ ասէ ցեղբայր իւր. Ա՛յ վատթար վատ արանց, զի՞ է զի կոչեցեր զիս. ահաւադիկ մօտ եմ՝ զի՞նչ կամիս։ Սեբաստիանոս ասէ. Վասն երեկեան յանցանաց քոյ լուեմ, իսկ վասն յառաջակայիցն ոչ լուեմ քեզ. երթ և զոհեա աստուածոցն, զի մի՛ պատահեսցիս չար տանջանացն՝ զոր ածեմ 'ի վերայ քո։ Թէոդոսիա ասէ. Ցասումդ քո նման է ցամուք տերևոյ որ անկանի 'ի ծառոյ, և սպառնալիք քո մրջմանց առժամայն անցելոց. Երդուեալ 'ի Տէրն իմ Յիսուս Քրիստոս՝ որ խաչեալ 'ի Պիղատոսէ Պոնտացւոյ և վկայեաց զբարւոք վկայութիւնն, ոչ զոհեմ կռոց. առ այս՝ մարտիր ընդ իմ որպէս և կամիս. ոչ ուրուք իւրովք ձեռօք է առնել վրէժխնդրութիւն, այլ վրէժխնդիր Աստուած է, և օգնական՝ Քրիստոս։ Իսկ Սեբաստիանոս արտասուեաց, և ասէ ցքոյրն իւր. Զի՞նչ եղև քեզ, տիկին, զի զայդպիսի գեղ կորուսանել կամիս։ Սուրբն Թէոդոսիա ասէ. Այդպիսի են պատճառք կուրութեանդ քո որ 'ի գեղ և 'ի հասակ հայիս, քանզի գեղ 'ի դոյզն ինչ ախտէ թարշամեալ ապականի, իսկ զհասակ՝ ծերութիւն կարկամեցուցանէ. Մարդոյ, ասէ, իբրև զխոտոյ են աւուրք իւր. և այս եթէ ունիցի յինքեան զՔրիստոս. իսկ եթէ ոչ ունիցի յինքեան զՔրիստոս, սարդարոյն է թուուցեալ 'ի հողմոյ։

Սեբաստիանոս ասէ. Սարդարոյն պատառեալ 'ի կենաց, թոյնք քարբի, յարձակիս 'ի վերայ իմ. ո՞չ գիտես զի խնայեմ 'ի քեզ։ Սուրբն Թէոդոսիա ասէ.

կենդանւոյն մեռեալ, արա զի՛նչ և կամիս։ Յայնժամ Սեբաստիանոս հրամայեաց արկանել գայլ 'ի բերան նորա, զի արգելցէ զբանս ճշմարտութեան՝ որ բղխէին 'ի բերանոյ նորա. և եդեալ գայլ 'ի բերան վկային, և հրամայեաց տանել 'ի բանտ։ Տեսանէր սուրբն յաջմէ կողմանէ զհրեշտակ Աստուծոյ՝ մօտ կացեալ առնմա, և ասէ ցնա. Մի՛ երկնչիր, աղախին Քրիստոսի, քանզի առաքեցայ ես ծածկել և պահել և օգնել քեզ։ Զի՛նչ հաճոյ է քեզ, առնո՞ւմ 'ի քէն զկառագոյժդ և դնեմ եղջօրն քում։ Եւ ասացեալ զայս հրեշտակին՝ եղոյծ վաղվաղակի զերանելին, և առեալ զկառագոյժըն հար 'ի բերան Թագաւորին և եբարձ զնա յօդս առանց մենքենայից արուեստի մարդոյ։ Եւ իբրև կախեալ լինէր բռնաւորն և տանջեալ, ասէ ցքոյրն իւր. Տիկին Թէոդոսիա, լոյս աչաց իմոց, օգնեա ինձ, շնորհեա ինձ, և լոյծ՝ որ 'ի բարկութենէս եմ կապեալ։ Յայնժամ սուրբ աղախինն Աստուծոյ բազմապատիկ աղօթս առաքէր առ Աստուած, և խանդաղատագին արտասուօք հայցէր և ասէր.

Աստուած՝ որ արարիչդ ես երկնից և երկրի, հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ոչ թողեր զաղախին քո, այլ այց արարեր ողորմութեամբ և փըրկեցեր զիս 'ի դառն տանջանաց։ Լուր խնդրուածոց աղախնոյ քո, և ցոյց զմարդասիրութիւն քում 'ի մոլորեալ եղբայրս, և իջո 'ի չար տանջանաց կախաղանի, զի ծանիցէ թէ դու միայն ես ճշմարիտ Աստուած։ Եւ զայս ասացեալ սրբոյն, յըմբռնեալ 'ի բարկութենէ կախաղանին 'ի բաց արձակեաց զեղբայր նորա՝ հրեշտակն, որ կախեաց զնա զօդոյ հրամանաւն Աստուծոյ։ Եւ իբրև արձակեցաւ Թագաւորն, եղև ահ մեծ 'ի վերայ ժողովրդոցն որ շուրջն կային. աղաղակէին և ասէին. Մեծ է Աստուածն Փիլիկտիմոնի և Թէոդոսեայ, որ եցոյց մեզ զիւրոյ աստուածութեանն զանձս։ Այժմ ծանեաք և գիտացաք զի դու միայն ես Աստուած և ոչ գոյ այլ ոք Աստուած բաց 'ի քէն, որ արձակեցեր զկապեալս, և զաեկեալս բժշկեցեր։ Եւ էին որք հաւատացին 'ի Քրիստոս՝ եօթանասուն հազար և վեց հարիւր։ Իսկ իբրև ետես Թագաւորն զբազմութիւն հաւատացելոցն՝ տրտմեցաւ, և դառն սպառնալեօք խոստացեալ ասէ ցքոյրն իւր. Երդուեալ յաստուածսն ամենեսեան՝ ազգի ազգի և անողորմ տանջանօք ծախեմ զքեզ, եթէ ոչ զոհես Ապողոնի։ Սուրբն Թէոդոսիա ասէ. Ոչ ծանեար որ կապեացն զքեզ և արձակեաց, վասն այնորիկ այդպիսի բարբառիս։ Սեբաստիանոս ասէ. Որ կապեացն զիս՝ սատանայ էր, իսկ որ արձակեացն՝ Ապողոնն աստուածն իմ։ Սուրբն Թէոդոսիա իբրև լուաւ զդառն և զուրացողական զբանսն 'ի բերանոյ եղբօր իւրոյ, անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց և լայր դառնապէս. և Թափէին առուք արտասուաց յաչացն, և ընոյր զափսն և ցանէր ընդ երկինս։ Եւ դնէր զբազուկսն 'ի վերայ միմեանց և առնէր զնմանութիւն սուրբ խաչին, և ասէր. Աստուած իմ և Տէր իմ, բարձ միւսանգամ զչարահնար մենքենայս սատանայի յօդս, և իջուցէ զդա աստուած իւր Ապողոն, զի ծանիցէ զքեզ միայն Ճշմարիտ Աստուած։ Եւ մինչդեռ զայս ասէր սուրբն Թէոդոսիա, կախեցաւ թագաւորն զօդոյ. և մինչդեռ կայր 'ի կախաղանին՝ սկսաւ գոչել առ սուրբն և ասէ. Տիկին իմ քոյր, զայս ես օգնեա ինձ՝ զի մի կորեայց յուրացութեանս։ Պատասխանի ետ սուրբ աղախինն Քրիստոսի և ասէ. Զայս ես անգամ եկեալ Ապողոնի ապրեցուսցէ զքեզ։ Թագաւորն ասէ. Ճշմարտեալ գիտեմ, տիկին իմ Թէոդոսիա, զի մեծ կորուստ պահի ինձ՝ Ապողոն. եթէ այս անգամ ես լուծանես զիս, կործանել ունիմ ոչ միայն զԱպողոն զթշնամին քո, այլ և զամենայն աստուածսըն զԱրեգ քաղաքի կորուսանեմ։ Իսկ սուրբ վըկայն Քրիստոսի զհրեշտակական խորհուրդն առնոյր, և ոչ պահէր ոխս կորուսանել զնա. այլ հնարէր ածել զնա յաստուածածանօթութիւն՝ զկորուսեալն 'ի սատանայէ։ Եբաց զբերան իւր սուրբն, սկսաւ աղօթել և ասել. Տէր Աստուած զօրութեանց, որ ընտրեցեր զճշմարտութիւն և ատեցեր զստութիւն. որ յայտնեցեր զգիտութիւն աստուածպաշտութեան, և զանգիտութիւն կործանեցեր. որ զՄիածին որդիդ քո առաքեցեր, և բազում քաղցրութիւն սերմանեցեր. Յիսուս Քրիստոս, որ զսուրբ խաչդ քո ծագեցեր և զխաւարեալ աշխարհս լուսաւորեցեր. Նայեա

Տէր, յաղախին քո և տես, զի իբրև զմանուկ երկուցեալ՝ առ քեզ եմ փախուցեալ. արա քաւութիւն մեղաց իմոց, և կեցո զթագաւորս 'ի վտանգէս՝ յորոյ տանջի: Եւ մինչդեռ մատուցանէր զաղօթսն սուրբն Թէոդոսիա, արձակեալ լինէր թագաւորն և ապրեալ 'ի տանջանացն՝ յորում էր, և ասէր. Մեծ աստուածըն իմ Ապողոնն, որ արար մեծ ողորմութիւն և եհան զիս 'ի մեծ վտանգէս յայսմանէ: Եւ զայս ասացեալ նորա, պատասխանի ետ սուրբն Թէոդոսիա և ասէ. Ո՛ չար սատանայ, մինչև ցե՞րբ պարապեցուցանես 'ի չարութիւն զմիտ թագաւորիս: Յայնժամ ասէ Սեբաստիանոս ցսպասաւորսն իւր. Ի բաց տարայք յինէն զթշուառացեալդ, և արկէք զդա 'ի բանտ:

Եւ իբրև տարան զսուրբն Թէոդոսիա 'ի բանտ, հրամայեաց զի ածցեն շղթայիւք զԳորգիանոս և զԱնատոլիա կին նորա, զծնօղս թագաւորին. և կացուցեալ 'ի մէջ ատենին, ասէ ցնոսա թագաւորն. Լուարուք որ ոչդ էք յագեալ տանջանօք 'ի բանտին, մի թէ կամիցի՞ք ևս չարագոյն կտտանաց պատահել: Զայս գիտասջիք, զի ոչ խնայելոց եմ 'ի մարմինս ձեր, այլ կորացուցեալ բեկանեմ զծերութիւնդ ձեր. և առ սակաւ սակաւ 'ի բաց խլեմ զաչս ձեր և ցուցանեմ չար վախճան անձանց ձերոց: Ասէ ցնա Անատոլի մայր իւր. Քաջ առնես զայդ, որդեակ իմ Սեբաստիանոս, այդ է վարձ ծնօղաց, սոյդ իսկ հատուցեր չար փոխանակ ընդ բարւոյ. արդարև իսկ հայրասպան և մայրափողոտ եղեր: Միթէ ո՞չ կարեմ առ Քրիստոս Տէրն իմ, և բառնալ զքեզ 'ի կէս աւուրց կենցաղոյս: Թագաւորն ասէ. Զոհեցէք աստուածոցն, և պատուեմ զհասուն և զվայելուչ ալիս ձեր: Անատոլիա ասէ, մայր թագաւորին. Ո՛ բազմաչար, ո՛ դառն կորստեան, ո՛ վատ, ո՛ անբոյս երկրի պտուղ, ո՛ բարի ծնօղաց չար զաւակ. ո՞չ երբէք գգուէի զքեզ 'ի գիրկս իմ, և զսպէի զքեզ 'ի գոգ իմ. արդ ո՞ յափշտակեաց զքեզ յինէն, ո՛ որդի. ո՛ լքումն գթոյ, ծերութեան անարգիչ, ո՛ խնդիրք մօր առ կորուստ որդւոյ. ո՞չ է բաւական քեզ զի մոլորեալ ես 'ի կենդանի Աստուծոյն մերմէ և ոչ ծանեար զնա, շռայլեալ ցանկութեամբդ շուայտեալ որկորստութեամբդ քո. այլ և զծնօղս քարշես ատենիւ և առնես հարցուած 'ի վերայ նոցա. գիտեա, որդեակ, զի առժամայն զղջանալոց ես։ Եւ իբրև լուաւ զայս ամենայն 'ի մօրէն իւրմէ, սկսաւ արտասուել Թագաւորն և ասէ. Ա՛յ դըժոխք, բա՛ց զբերան քո և կուլ զիս կենդանւոյն յորովայն քո. զմէ՞ իսկ ծագէ արեգակն 'ի տուընջեան և կամ լոյս լուսնին 'ի գիշերի. և ընդէ՞ր է ինձ բարեբաստութիւն 'ի մարդկանէ զցերեկ, և բազմութիւն աստեղաց առ 'ի հայել ինձ 'ի գիշերի. և կամ ընդէ՞ր պատահեցին ինձ ծունկք մանկաբարձոյն, և ընդէ՞ր աճեաց երկարս ինձ, և եհաս մանկութիւն յերիտասարդութիւն։ Իսկ յի՞նչ ոչ ծնաւ ընդ իմ չար պատուհասն, այլ ես միայն եղէ ծնեալ պատրաստ անիծից. զի Թէ էր ծանուցեալ հօր և մօր իմոյ, եթէ այսպիսի վարք պատահէին ինձ՝ արդեօք տարաժամ իսկ կորուսանէին զիս։ Մայր իմ և տիկին իմ 'ի պարկեշտ ամուսնութենէ և 'ի բարի սերմէ ծնաւ զիս. և եղէ ծնեալ գայլ ապականիչ ծերութեանդ ձերոյ։ Ո՛ ջան ծնօղաց եղեալ անօգուտ, և ընդունայն համարեալ վաստակ դայեկաց։

Մինչդեռ ես խօսէր Թագաւորն, մատուցեալ սատանայ խօսէր յունկն և ասէր. Իմ զօրական ես, քաջ մարտիր։ Եւ եբարձ 'ի նմանէ զգութ ծնօղացն, և կուրացուցեալ զաչս մտացն՝ զի մի՛ հայեսցի 'ի գրեալսն որ ասէ. Պատուեա զհայր քո և զմայր, զի քեզ բարի լինիցի, հանդերձ այլօքն։

Միւս անգամ լցեալ խաւարաւ խրատուին սատանայի, ասէ ցհայր իւր Գորգիանոս, որ կոչեցաւ 'ի Մկրտութենէն Գրիգորիոս. Քեզ ասեմ, ծերդ, նախ քան զտանջելդ իմ զմարմինդ քո, հաւանեաց և կարդա զԱպողոնն աստուածս, որ մինչև ցերեկ պատուեալ էր 'ի քէն։

Գրիգորիոս հայր Թագաւորին ասէ. Քաջալերեաց, որդեակ, եթէ զոր երէկն պատուեցի մինչև ցայսօր, Թէ էին մեղքն իմ իբրև զաւազ ծովու մինչև ցայժմ, այսօր ապաշխարութեամբ իմով ամենայն ծաղիկ գործեցան։

Եւ մինչդեռ ես ամպարիշտն հարցաքննութիւն առնէր 'ի վերայ ծնօղացն իւրոց, և ահա իշավայրի մի *առաքեալ 'ի Տեառնէ՝ իջանէր 'ի լերանց 'ի կայանից իւրոց. և հասեալ 'ի մէջ քաղաքին՝ զտեղի առնոյր առանձին, և բարբառեալ 'ի ձայն մեծ ասէր. Ո՛ յիմարք որդիք մարդկան, ո՞չ գիտէք եթէ յԱդամայ 'ի միջէ մարդոյ և 'ի նորուն կնոջէ Եւայէ եղեալ էք ամենեքեան դուք, վասն որոյ և լցէք իսկ զամենայն աշխարհ. և որչափ և լցէք իսկ զաշխարհ երկրածին մարդկաւ, ետ Աստուած միտս և գիտութիւն ամենայն արուեստից, որպէս զի մի՛ եղեալք դատարկանձունք մարդիկ և կեցցեն 'ի վերայ երկրի: Լուր, ո՛վ թագաւոր, քանզի առ քեզ է բանս իմ, ո՛ չար արուեստաւոր և այդչափ դառնացեալ առ ծնօղս քո, ո՞չ երբէք լուար յաստուածաշունչ գրոց՝ որ լուսաւորեն զոգիս և սրբեն զմիտս լսողացն օգտակար խրատուն. և ո՞չ զայս ընթերցեալ իցէ արդեօք՝ որ ասէ, թէ՝ Օրհնութիւն հօր հաստատէ զտուն որդւոյ, և անէծք մօր բրեն 'ի հիմանէ. ո՛ թշուառացեալ Սեբաստիանոս, արքանեակ սատանայի:*

Զայս խօսեալ իշավայրւոյն ընդ որդւոյն որ ունէր յատենի զծնօղսն իւր, դարձաւ 'ի բազմութիւնն և ասէ. Ձեզ ասեմ՝ որ շուրջդ կայք, մի՛ մոլորիք և դուք զմոլորութիւն նորա, և մի՛ նմանէք չարութեան օձին. քանզի այնպէս գայ, և իբրև զիժ՝ սպանողաթոյնս խրատս մատուցանէ. եթէ հաւատասջիք նմա՝ ընդ նմին էք և դուք կորնչելոց: Արդ դի՛ք զյոյս ձեր 'ի Տէր Յիսուս Քրիստոս, և 'ի միտ առէք զի իբրև զանասունս վարիք, վասն այնորիկ և յանասնոց խրատիք, որովք և հաւասարեալ էք անասնոց անմտից, եթէ նմանիցէք այդոցիկ որ կռոցն մատուցանեն զոհս. իսկ որք հաւատան եթէ Յիսուս Քրիստոս է թագաւոր յաւիտենից, նման են լուսաւոր աստեղաց երկնից: Յայսոսիկ հաւատացէք 'ի Հայր և յՈրդի և 'ի Հոգին սուրբ, և կեցցէք՝ ուղղեալ զսիրտս ձեր:

Զայս ասացեալ իշավայրւոյն հրամանաւ Աստուծոյ: Եւ իբրև լուաւ զայս թագաւորն Սեբաստիանոս՝ զարհուրեցաւ ուժգին, և ամենեքեան որ ոչ սակաւ աղաղակէին, և հաւատացին 'ի Քրիստոս եօթանասուն հազար, գոչէին և ասէին. Մեծ է Աստուածն քրիստոնէից, և ոչ գոյ այլ Աստուած, բայց միայն Յիսուս

Քրիստոս։ Եւ 'ի հաւատալն նոցա՝ դադարեաց և Թագաւորն 'ի դատելոյ զծնօղսն իւր աւուրս ինն, ոչ ևս հարցանել զնոսա. գնաց և իշավայրին ըստ հրամանին Աստուծոյ 'ի տեղի իւր՝ ուստի եկեալն է։ Եւ յետ կատարելոյ աւուրց իններորդի, ազդեաց սատանայ 'ի սիրտ Թագաւորին՝ նստել յատենի և առնել հարցուած առ ծնօղսն իւր։

Եւ պատասխանի տուեալ ասէ ցհայրն. Զոհեա աստուածոցն, ո՛ հայր, երդուեալ յԱսկղեպաս՝ ոչ խնայեմ 'ի ծերութիւնդ ձեր։ Գրիգորիոս ասէ. Որդեակ, պարտ է մեզ 'ի քէն կատարել, քանզի ոչ եթէ զոր դուդ կամիս՝ զայն առնես, այլ գործակիցն քո սատանայ ձեռնարկէ յայդ։ Սեբաստիանոս ասէ. Ո՛ հայր, թուի թէ խուլ իցես, ո՞չ ասացի քեզ, երթ զոհեա աստուածոցն և կեաց։ Երդուեալ յաստուածոցն ամենայն՝ ոչ ևս խնայեմ 'ի քեզ. քանզի ասաց սատանայ՝ եթէ բարձ զդոսա 'ի կենաց։ Եւ սրտմտեալ Թագաւորն, ասէ ցնա Գրիգորիոս հայր նորա. Երթիցուք 'ի տաճարն Ապողոնի, ես հայրս քո և Անատոլիա մայր քո։ Ի խնդութեն մեծ եղեալ Թագաւորն՝ գնաց և ինքն իսկ ընդ նոսա 'ի մեհեանն Ապողոնի. և մտեալ 'ի տուն կռոցն՝ յորում վերստին նորոգեալ էր զԱպողոն, եբաց զբերան իւր հայր Թագաւորին և ասէ. Քեզ ասեմ, Ապողոն, Փիլիկտիմոն վկայն Քրիստոսի կործանեաց զքեզ և դարձեալ վերստին նորոգեցար 'ի Սեբաստիանոսէ. արդ զի՞նչ ունիս ցուցանել՝ զի գիտասցուք եթէ դու ես աստուած։ Իսկ սուրբն Անատոլիա ասէ. Երևի եթէ պղինձ է և ղօղանջող ծնծղայք։ Սուրբն Գրիգորիոս ասէ. Ո՞չ խօսիս, Ապողոն։ Սուրբն Անատոլիա ասէ. Յիմարեալ է, և վասն այնորիկ ոչ կարէ խօսել։ Սուրբն Գրիգորիոս ասէ. Սա է գայթակղութիւն աշխարհի։ Սուրբն Անատոլի ասէ. Քրիստոս է փրկիչ ամենայն արարածոց։ Սուրբն Գրիգորիոս ասէ. Ցոյց մեզ զԹագաւորութիւնդ քո՝ զոր ստացեալ ունիս, ո՛ յիմարեալդ Ապողոն։ Սուրբն Անատոլիա ասէ. Դա է տեսանակ գեհենի հրոյն՝ այնոցիկ որ մոլորին 'ի ճշմարտութենէ Քրիստոսի։ Սուրբն Գրիգորիոս ասէ. Ստուերին է տունս, ո՛վ Ապողոն, եկ ել ընդ մեզ և ջեռիր 'ի նշողից արեգական։ Սուրբն Անատոլի ասէ. Մի՛ զարթուցաներ զդա, 'ի ստուերիդ իսկ կամի մնալ՝ վասն զի ոչ ինչ է։ Սուրբն Գրիգորիոս ասէ. Զո՞մ պաշտես, որդեակ իմ Սեբաստիանոս. տես աւադիկ քանիցս անգամ ծաղր եղեալ Ապողոնն՝ ոչ ցասնու և ոչ բարկանայ, վասն զի ոչ գոյ 'ի դմա շունչ կենդանի։ Եւ մինչդեռ խօսէր սուրբն Գրիգորիոս, երանելին Անատոլիա ել արտաքս 'ի տանէ կռոցն. և առեալ քարինս թաքոյց ընդ ձորձովն և եմուտ անդրէն 'ի տուն կռոցըն, և ձգեաց զքարինսն և ընկէց զԱպողոնն 'ի գետին. և յանկանել պատկերին՝ ձգեաց զկնի իւր և զսիւնն՝ ընդ որ վարսեալն էր։ Այս եղև ըստ հրամանին Աստուծոյ, զի որ յառաջն էին հաւատացեալ՝ առաւել ևս զօրասցին 'ի հաւատոն։ Եւ յանկանել պատկերի կռոցն հանդերձ սեամբն ընդ որ հաստատեալն էր՝ պատառեաց թագաւորն զպատմուճանն իւր և գնաց յարքունիսն, և նստաւ յատենի, և հրամայեաց կացուցանել առաջի զծնօղսն. և 'ի գնալ սրբոցն, ասէ թագաւորն. Զմեծ աստուածն զԱպողոն միւսանգամ կարեմ նորոգել, այլ զձեզ վասն այդպիսի յանդգնութեանդ խեղդամահ արարեալ ծախեցից։

Սուրբն Գրիգոր ասէ. Ընկեր, յոր եկեալդ ես՝ արա զհրամայեալսն քեզ 'ի սատանայէ։ Յայնժամ զայրացեալ թագաւորն՝ յոտն եկաց յաթոռոյ, և բուռն եհար զմօրուացն Գրիգորի, անողորմ և անգութ եղեալ փետէր զալիս նորա։ Տեսեալ զայն սուրբն Անատոլիա՝ ասէ. Ընդէ՞ր գործես զայդ, չար որդեակ, զմ՞ այդպէս չարչարես զծերութիւն հօրդ քո. խանդաղատին 'ի քեզ աղիք իմ, և ոչ գիտեմ զինչ գործեմ. արա զոր ինչ կամիս, քանզի ոչ թողու զքեզ սատանայ եթէ ոչ մեղիցես։ Եւ իբրև ասաց զայս ամենայն սուրբն Անատոլիա, յայնժամ հրամայեաց թագաւորն սպասաւորացն իւրոց գալ, և ասէ. Հանէք զդոսա արտաքս քան զքաղաքս և սպանէք սրով և բարձէք 'ի կենացս։ Ասեն ցնա սպասաւորքն. Ո՛ թագաւոր, ոչ ևս պարտ է առնել քեզ զայդ, և ոչ մեզ արժան է ձեռն արկանել 'ի դոսա. վասն զի թագաւորք են և ծնօղք քո։ Եւ խռովեալ յոյժ թագաւորն՝ ասէ ցսպասաւորսն իւր. Երդուեալ յաստուածսն ամենայն, եթէ ոչ բառնայք զդոսա՝ չարաչար տանջանօք կորուսանեմ զձեզ:

Եւ սպասաւորքն ասեն ցնա. Բարձ 'ի մէնջ զգլուխս մեր, յագեալ եմք կենօքս, վասն զի տեսաք զծնօղս 'ի ծննդոց իւրեանց սպանեալս, և զայս թագաւորազունս:

Սեբաստիանոս ասէ. Բերէք ինձ սուսեր. և իբրև բերին՝ առ 'ի ձեռն զսուրն, և մրմռեալ իբրև զգիշակեր գազան վայրագացեալ՝ գլխատեաց նախ զսպասաւորսն, որք ոչ արկին ձեռս 'ի ծնօղսն նորա՝ սպանանել զնոսա, և ապա սպան զհայր իւր և զմայր: Եւ զայս արար իւրովք իսկ ձեռօքն արտաքոյ քաղաքին. ցուցանէր ահ մեծ սպասաւորաց իւրոց և ամենեցուն որ շուրջն կային: Եւ այսպէս կատարեցան սուրբ վկայքն Քրիստոսի:

Եւ 'ի վաղիւն նստեալ յատենի, հրամայեաց ածել զսուրբն Թէոդոսիա զքոյր իւր: Եւ իբրև եկն յատեանն՝ յառաջ քան զհարցանել թագաւորին՝ ասէ սուրբն Թէոդոսիա. Ահա այս հնգետասան օր է իմ 'ի բանտին լեալ և կերակրեալ 'ի սուրբ աղաւնոյն Աստուծոյ, և նշանակեալ ծանուցաւ ինձ 'ի հրեշտակէ որպէս սպաներ զհայր իմ և զմայր. ահաւասիկ ես մօտ եմ, բարձ յինէն զգլուխ իմ:

Զայս իբրև լուաւ թագաւորն՝ ասէ ցնա. Երդուեալ յաստուածսն ամենեսեան, ոչ տամ քեզ՝ որում ցանկաս, այլ առ սակաւ սակաւ չարչարեալ տանջանօք ծախեմ զքեզ. երթ զոհեա աստուածոցն, այ չարագլուխ թշուառացեալդ:

Սուրբն Թէոդոսիա ասէ. Ով եղեալդ արժանի օրհնութեան ծնօղացն, ո՛ որդի գեհենի, ո՛ մասն խաւարի, ո՛ ժառանգ դժոխոց, ո՛ զէն սատանայի, ո՛ թշնամի, արա զոր և կամիս, ըստ հրամանի չար վարդապետին քո սատանայի:

Իբրև լուաւ զայս չար բռնաւորն, կրճտէր զատամունսն, և ասէ ցսպասաւորսն իւր. Ի բաց ընկեցէք զձորձն 'ի գլխոյ նորա, և ոլորեցէք զհերս նորա, և կացցէ կախեալ մինչև ցերեկոյ: Եւ երկուցեալ սպասաւորացն, թէ որպէս առաջինքն մեռան վասն ոչ կատարելոյ զհրամանն թագաւորին՝ սատակեցիմք և մեք, վերացուցին 'ի նմանէ զարկանելի գլխոյ նորա, և այնպէս բուռն հարկանէին զնմանէ. և վտանգեալ սաստիկ տանջանօք զսուրբն. իսկ նա լուրջ երեսօք և բազմապատիկ գոհանալով զՏեառնէ՝ համբերէր տանջանացն։ Եւ ձգեալ դահճացն զհերացն սրբոյն Թէոդոսեայ՝ զի բարձցեն 'ի կախաղանն, ըստ հրամանի չար բռնաւորին. և լուծան ձեռք դահճացն և մնացին 'ի կախ զհերաց սրբոյն։ Իսկ իբրև ետես Թագաւորն զեղեալսն՝ զարմացաւ յոյժ և ասէ ցքոյրն իւր. Լուր ինձ, տիկին իմ Թէոդոսիա, ոչ առ շողոքորթութիւնս ինչ ասեմ քեզ, եթէ կարես բժշկել զկռճատեալ զսպասաւորս իմ՝ արձակեմ զքեզ։

Սուրբն Թէոդոսիա ասէ. Հաւատամ 'ի Քրիստոս՝ որ բժիշկն է հոգւոց և մարմնոց, զի ոչ գոյ տկարութիւն առ 'ի բանէ նորա, և ոչ որք խնդրեն 'ի նմանէ արժանապէս. արդ ոչ վասն քո և ոչ վասն խոստմանցդ, զոր ասացեր՝ թէ արձակեմ զքեզ, բժշկեմ զկըրճատեալ զձեռս սպասաւորացն քոց, այլ վասն զի արտասուք նոցա բարեխօսեն նոցա, և ես ոչ կարեմ արգելուլ զգութ իմ 'ի նոցանէ, վասն մեծագութ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ զայս ասացեալ սրբոյն՝ մերձեցաւ առ այնոսիկ որոց կրճատեալ էին մատունք իւրեանց, և ասէ. Տէր Աստուած, բժշկեա զնա. և բժշկեցան վաղվաղակի։ Իսկ 'ի բժշկել զնոսա սրբոյն, դադարեաց և բռնաւորն յառնելոյ հարցուած և 'ի տանջելոյ զերանելին Թէոդոսիա։

Եւ էր 'ի քաղաքին կին մի որ ունէր երկուս որդիս երկուորեակս։ Յարուցեալ ընդ առաւօտն եգիտ զնոսա մեռեալ 'ի մահիճսն, և աղխտանայր յոյժ։ Իսկ իբրև յիշէր զսուրբն Թէոդոսիա՝ ընթացեալ անկանէր առ ոտս նորա և ասէր. Տիկին աշխարհի, օգնեա ինձ՝ որ ունիս զՔրիստոս. էին իմ երկու մանկունք երկուորեակք. ննջեցուցի զնոսա երեկոյ 'ի մի մահիճս, և յարեայ ընդ առաւօտն և գտի զնոսա մեռեալս. եթէ է ինչ հնար՝ օգնեա ինձ, քանզի ոչ ուստեք ունիմ յոյս փրկութեան, եթէ ոչ նոքա իցեն տեսուչք և յանձանձիչք տառապելութեանս իմոյ։

Պատասխանի ետ սուրբն Թէոդոսիա և ասէ ցկինն.

Զի՞նչ կարեմ առնել քեզ, քոյր, բանտարկեալ եմ աւասիկ՝ որպէս և տեսանես իսկ, և ուր կամիմ երթալ՝ ոչ կարեմ։ երթ բողոքեա առ Թագաւորն. եթէ թողու զիս գալ՝ գամ ընդ քեզ։ Ասէ ցնա կինն. Տիկին Թէոդոսիա, և դո՞ւ ընդ մահապարտս պահիս։ Ասէ ցնա երանելին. Այսպէս է, մահապարտ եմ վասն Քրիստոսի, զի արդարացայց նովաւ յաւուր յայնմիկ՝ յորում բանք սպառին և գործք Թագաւորեն։ Իբրև լուաւ զայս կինն՝ գնաց 'ի նմանէ. և երթեալ առ Թագաւորն ճչէր և ասէր. Ողորմեաց ինձ, տէր իմ և Թագաւոր։ Եւ նա ասէ ցնա. Զի՞նչ կամիս զի արարից քեզ։ Եւ կինն ասէ ցնա. Երկու որդիս ունէի երկուորեակ՝ որ վարձէին ինձ օր ըստ օրէ զհացիկն իմ։ Երէկ երեկունն 'ի մի մահիճս ննջեցուցի զնոսա, վասն զի այրի եմ և տառապեալ. և չոգայ ընդ առաւօտն զարթուցանել զնոսա, և ոչ ետուն ինձ պատասխանի. և մերձեցայ 'ի մահիճսն և գտի զնոսա մեռեալս. վասն այսորիկ աղաչեմ՝ զի եկեսցէ Թէոդոսիա քոյր քո և զարթուսցէ զնոսա։

Պատասխանի ետ Թագաւորն և ասէ. Եթէ իցէ նմա հնար առնել զայդ՝ եկեսցէ և զարթուսցէ զորդիսն քո. բայց եկեսցեն և պահապանքն զկնի, զի մի փախիցէ։ Եւ գնաց կինն առ սուրբ Թէոդոսիա և ասէ. Գտի շնորհս 'ի Թագաւորէն, տիկին. եկ 'ի տունն իմ յառաջ քան զհոտել որդւոցն իմոց։ Եւ գնաց զկնի նորա սուրբն Թէոդոսիա և ինն այր որ պահէին զնա։ Իբրև եմուտ 'ի տունն՝ յորում անկեալ կային մեռեալքն, և մերձեցաւ 'ի մահիճսն, և եբաց զբերան իւր, սկսաւ յաղօթս կալ և ասել.

Յայտնեսցին փառք քո, Տէր, և ծանիցեն զօրութիւնք քո և սքանչելիք, Աստուած իմ. քանզի քո է, Տէր, սիրել և կեցուցանել զայնոսիկ՝ որ կարդան սուրբ զանունդ քո։ Դու միայն ես Աստուած՝ որ արարեր զերկինս և զերկիր, զծով, և զամենայն որ 'ի նոսա։ Դու ես հայր որբոց և այրեաց տեսուչ, քաղցելոց հոգեբարձու։ Դու ես, Տէր, ճանապարհ և ճշմարտութիւն, իմաստութիւն և փրկութիւն, կեանք և պարծանք։ Որ մեծդ ես և ահաւոր Յիսուս Քրիստոս, ճշմարիտ զօրութիւն, անջաղջախ գաւազան, հանապաշտաբուղխ աղբիւր։ Լուր ինձ աղախնոյ քում, Աստուած իմ, որպէս լուար աղօթիցն Յուդթայ և կորուսեր զՀողեփառնէս, և լուար Թեկղի և կեցուցեր զնա 'ի կիզմանէ հրոյն. որ լուար ամենայն սրբոց առաքելոց և մարգարէից, և 'ի ձեռն ամենեցուն պարգևեցեր զփրկութիւն կենաց մարդկան. և այժմ դու Տէր, նոյն ինքն ես, և ոչ երբէք նուազեալ է զօրութիւն քո, Քրիստոս. որ յարուցիչդ ես մեռելոց, լուր աղօթից աղախնոյ քում, և յարո զմեռեալս զայսոսիկ։ Հայեաց Տէր 'ի կինս յայս, զի միայն է և այրի, որպէս զի առեալ սորա 'ի քէն զորդիս կենդանի՝ գոհասցի զքէն զտուողէդ կենաց. և ամենեքեան երկիցեն եթէ դու միայն ես Աստուած և չիք այլ ոք բայց 'ի քէն։

Եւ իբրև կատարեաց զաղօթսն սուրբն Թէոդոսիա, կանգնեցան և նստան երկոքին մանկունքն, և յարուցեալ գնացին զկնի մօրն իւրեանց, և ասէին. Փառաւորեմք զքեզ, Քրիստոս, զպարգևատուդ ամենայն տիեզերաց։ Եւ անկեալ առ ոտս սրբոյն Թէոդոսեայ՝ հաւատային 'ի Քրիստոս. հաւատաց իսկ և մայր նոցա, և ինն բանտապահքն որ տուեալ էին ընդ սրբոյն Թէոդոսեայ, որք օրհնէին և ասէին. Գոհանամք զքէն, Տէր, որ արժանի արարեր զմեզ զմեղաւորքս, և պարգևեցեր մեզ զկեանս և զլոյս յարութեանդ քո։ Եւ 'ի հաւատալ նոցա՝ հրամայեաց Սեբաստիանոս ածել զկինն՝ որոյ կենդանացան որդիքն։ Իսկ իբրև եկն կինն՝ ասէ ցնա Սեբաստիանոս. Զի՞ եղև քեզ, կին դու, յարո՞յց զորդիսն քո քոյրն իմ։

Ասէ ցնա կինն. Այո, յարոյց. Քրիստոս յարոյց զնոսա 'ի ձեռն Թէոդոսեայ քեռ քո և ետ ցիս. և 'ի վերստին կենդանանալ նոցա՝ կենդանացայ և ես վերստին. վասն զի ծանեայ և ես զՔրիստոս՝ զճշմարիտ թագաւորն երկնից և երկրի։ Եւ զայս գիտեա, ով թագաւոր, զի ես հանդերձ որդւովքն վերստին տուեցելովքն 'ի Քրիստոսէ և ինն բանտապահքն՝ քրիստոնեայք եմք։

Զայս լուեալ թագաւորին՝ ասէ ցկինն. Որ յարոյց զնոսա՝ Ապողոնն աստուածն է։ Պատասխանի ետ կինն և ասէ ցնա. Ոչ, մի՛ ստեր, թագաւոր. քանզի Ապողոմն երկիցս փշրեցաւ և դարձեալ նորոգեցեր զնա· փշրեալն յայլմէ՝ ոչ զոք կարէ յարուցանել։ Թագաւորն ասէ. Մի՞ համարիր զնա իբրև զառաջինն, վասն զի երիցս նորոգեալ է, ոչ ևս այսուհետև տկարանայ։ Պատասխանի ետ կինն և ասէ. կենդանի է Քրիստոս յոր հաւատացին, զի միւսանգամ փշրելոց է զօրութեամբն Քրիստոսի։ Բարկացեալ յոյժ թագաւորին՝ հրամայեաց կոչել զբանտապահսն և զորդիս կնոջ այրւոյն։ Եւ իբրև ածին՝ ասէ ցնոսա բռնաւորն. Քաջ գիտեմ զի քրիստոնեայք էք։ Պատասխանի ետ մի ոմն 'ի բանտապահացն՝ որում անուն էր Դիոս, և ասէ. Մի՞ յանցանէր, թագաւոր, զի մեք ոչ միայն քրիստոնեայք եմք, այլ միանգամայն և քրիստոսազգեացք. և այս քեզ գիտութիւն լիցի, զի գտեալքս աստուածուսոյցք՝ ատեամք զդևս, և վախճանեալքս բարեաւ՝ փոխիմք առ այն որ ասացն. Եկայք առ իս ամենայն աշխատեալք և վաստակեալք, և ոյք ունիք զբեռինս ծանունս և ես հանգուցանեմ զձեզ։ Թագաւորն ասէ. Ես ասեմ ձեզ, զոհեցէք աստուածոցն և կեցջիք։ Դիոս ասէ. Ոչ զոհեմ դիւաց։ Ռուսինէ մայր յարուցելոցն ասէ. Ամենեքին իսկ թագաւորս դև է, և հրամայէ այլ դիւաց զոհել։ Եւ մատուցեալ յառաջ՝ ասէ ցթագաւորն. Ո՛ հայրասպան և մայրափողոտ և քոյրատանջ. մի քոյր գտեալ էր քո և զնա հարկանել ոչ ամաչէիր, այլ քաջալերեալ ձեռնարկէիր 'ի նա. ո՞չ ապաքէն պայծառ և վայելուչ էր գեղով և հաւասարէր արեգականս. և զի՞ պիտոյ է և շատ ես ինչ ասել քեզ. միանգամայն իսկ՝ որպէս է տեսանել՝ դու ես հնոյն որ ուտէ զմարմինս մեռելոց։

Իսկ իբրև լուաւ զայս թագաւորն՝ սրտմտեաց յոյժ և վազեաց յաթոռոյն և կամեցաւ հարկանել զնա ոտամբն։ Եւ 'ի ձգել նորա զաջ ոտնն, լուծաւ ծընկաւն հետ և ոտն։ Կայր անկեալ առ պարսպին և ողբայր ցաւագինս սրտիւ՝ զի ըմբռնեցաւ 'ի մեծ հարուածոյն։ Իբրև լուաւ սուրբն Թէոդոսիա քոյր թագաւորին և ասէ. Սրտմտեցաւ յոյժ թագաւորն և ասէ. Կոչեցէք առ իս վաղվաղակի զքոյրն իմ։ Իսկ իբրև եկն երանելին Թէոդոսիա՝ եմուտ առ թագաւորն և ետես զնա զի 'ի վերայ ոտինն կայր անկեալ 'ի վերայ յատակին. և զամենեսեան որ էին յարքունիսն՝ զի կային շուրջ զնովաւ և լային: Իբրև ետես սուրբն Թէոդոսիա՝ արտասուեաց, ոչ վասն վիրացն՝ յորոց 'ի մահն էր մատնիլ, այլ վասն մոլորութեան կորստեան հոգւոյն եղբօրն իւրոյ, և ասէ ցնա. Չի՞ է քեզ, եղբայր իմ, ընդէ՞ր ես մոլորեալ 'ի Քրիստոսէ և 'ի կենարարէն բոլորեցունց. եթէ էր Ապողոնն աստուած՝ գոնեա միանգամայն օգնեալ էր քեզ. այլ վասն այնորիկ եթող զքեզ խլել և ապականել, զի ծանիցես զՔրիստոս՝ զմիայն ճշմարիտ Աստուած: Իսկ նա գոչէր և ասէր. Փափաքելի տիկին իմ, ցանկալի քոյր իմ, փրկութիւն առաքեա ինձ յԱստուծոյ քումմէ, և բժշկեա զիս, զի մեռանիմ առասիկ. ողջացո զտանջեալս 'ի չարաչար վիրացս, վասն զի իբրև զստուեր 'ի խուսափել իմում կորնչիմ. արդ գիտացի եթէ ոչ ինչ է մարդ, նոյնպէս և կեանս այս՝ վասն զի անցաւորք են. ժամանեցին ինձ անէծք հօրն և արտասուք մօրն, և իրաւունք նոցա սպանին զիս. այսպիսի վիրօք չարչարեցի՝ որ տրտմեցուցանէ զհայր իւր կամ զմայր: Երկիցս փշրեցին զԱպողոնն, և ես վերստին հրամայեցի կազմել զնա ճարտարաց՝ բազում ոսկւով և արծաթով. զի՞րդ և ոչ միանգամ եկն յօգնականութիւն ինձ. զի թէ էր ևս ստոյգ աստուած նա՝ ընդէ՞ր ոչ օգնէր ինձ: Հաւատամ 'ի Քրիստոս, քոյր իմ Թէոդոսիա, միայն բժշկեա զիս նովաւ:

Իսկ սուրբն Թէոդոսիա առնոյր զոտն և դնէր 'ի վերայ վիրին և պատշաճէր առ միմեանս զօղսն ծնկին, և կացեալ յաղօթս՝ բժշկեաց զնա. և նոյնժամայն իբրև ողջացաւ բռնաւորն՝ ասէ. Զքեզ միայն պաշտեմ զաստուածդ իմ զԱպողոնն, վասն զի յարուցեր զիս, վրէժխնդրութիւն թշնամեաց իմոց: Եւ զայս ասացեալ նստաւ յատենի: Եւ հրամայեաց կացուցանել զՌուսինէ և զորդիսն նորա առաջի իւր, և զինն բանտապահսն: Եւ իբրև եկին՝ ասէ ցնոսա թագաւորն. Զոհեցէք աստուածոցն երից թշուառացեալքդ: Ռուսինիա ասէ. Ո՞չ ամաչես երբէք թշուառացեալդ և սատակեալդ, միանգամ ասացաք քեզ եթէ քրիստոնեայ եմք և ոչ զոհեմք դիւաց:

Բարկացեալ թագաւորն և հրամայեաց կոտորել

զնոսա։ Եւ այսպէս կատարեցին զճշմարիտ վկայութիւնն 'ի Քրիստոս։ Իսկ 'ի վաղիւն նստեալ յատենի՝ հրամայեաց ածել զքոյրն իւր Թէոդոսիա, և ասէ. Անդամ իմ, քոյր իմ, մի՛ այլ ևս զկծեցուցաներ զիս։

Պատասխանի ետ սուրբն և ասէ. Բնաւ իսկ ո՛չ երկընչիս 'ի Քրիստոսէ, և ոչ յիշես զերիկեան բարիսն՝ զոր արար քեզ։ Ո՞չ ապաքէն խորտակեալ կայիր 'ի վերայ յատակի տան քո, և գթացեալ 'ի քեզ ոչ անտեսեաց, այլ մարդասիրեալ յարոյց զքեզ։ Թագաւորն ասէ. Որ յարոյցն զիս՝ Ապողոնն էր, և յարոյց զիս սիրողութեամբ իւրով։ Սուրբն Թէոդոսիա ասէ. Եթէ այդպիսի զօրութիւն է Ապողոնի, երթամ 'ի տաճարն Ապողոնի և փորձեմ զնա։ Թագաւորն ասէ. Ոչ թողում զքեզ երթալ առ Ապողոն, քանզի Փիլիկտիմոն չոգաւ առ նա, որպէս թէ զոհեսցէ ամենայն կամօք իւրովք, ընկէց և փշրեաց զնա 'ի վերայ յատակի տաճարին, զոր և դարձեալ նորոգեցի զնա։ Յետ այսորիկ չոգան հայր իմ և մայրն իմ նոյնպիսի բանիւք՝ եթէ ամենայն կամօք զոհեմք մեծի աստուծոյն Ապողոնի, և քարամբ մանրեցին զնա և արարին իբրև զաւազ. և դարձեալ միւսանգամ կռեալ և կազմեալ և կանգնեալ զնա ահագին և գեղեցկահայեաց. և այժմ դու կամիս երթալ և զնոյն անցս անցուցանես ընդ նա. ոչ հաւատամ քեզ, մի երթար։ Սուրբն Թէոդոսիա ասէ. Ոչ է այդպէս, եղբայր իմ Սեբաստիանոս, քաւ լիցի ինձ նենգութեամբ մտանել առաջի Ապողոնի սիրելի աստուծոյն քո. քաջ գիտեմ՝ զի երիցս աշխատեցար և ամենայն իրօք կազմեցեր զնա քան զառաջինն, և կամիմ տեսանել զնա, զի արարից 'ի նա գովութիւն որչափ է բաւականութիւն մտաց իմոց։

Թագաւորն ասէ. Եթէ և այդպէս լաւագոյն իմացար վասն նորա՝ երթիցուք։ Եւ իբրև հասին 'ի մեհեանն, ասէ ցթագաւորն. Արդարև իսկ լաւագոյն կազմեալ էք զԱպողոն. բայց սակայն աջ ձեռնն կարճագոյն է քան զահեակն, և զճակատն տգեղագոյն է արարեալ արուեստագիտացն քան զարժանն. անկատար է և գլուխ դորա, և փոքրագոյն է հասակն. այդպիսի իսկ պարտ է գործել զդա. առ սակաւ սակաւ կորուսանել 'ի հասակէ և յանդամոց դորա, քանզի անունդ իսկ Ապողոնն՝ կորուստ թարգմանի։ Բայց սակայն ասա ինձ, թագաւոր, քանի՞ ինչ ետուր վարձ արուեստագիտացն։ Թագաւորն ասէ. Հարիւր և երեքտասան դահեկան ետու։ Սուրբն Թէոդոսիա ասէ. Ո՛հ, ծանր գնոյ գնեցեր զաստուածդ քո։ Թագաւորն ասէ. Վասն զի դա է փրկութիւն ամենայն աշխարհի, ոչ ինչ են ծանր գինքն։ Սուրբն Թէոդոսիա ասէ. Հրամայէ կոչել զարուեստագէտսն՝ որոց արարեալ է զԱպողոնն։ Եւ հրամայեաց վաղվաղակի ածել զնոսա։ Եւ իբրև եկին ճարտարքն, ասէ ցնոսա սուրբն Թէոդոսիա. Այդչափ ոսկի առեալ՝ ընդէ՞ր այդպէս տգեղ դրօշեցէք զԱպողոնն։ Պատասխանի ետուն ճարտարքն՝ որոց արարեալ էր զԱպողոնն և ասեն. Տիկին Թէոդոսիա, որչափ էր զօրութիւն արուեստից, այդչափ կարացաք գեղեցկացուցանել զԱպողոնն։

Սուրբն Թէոդոսիա ասէ. Զայս միայն հարցանեմ զձեզ առաջի թագաւորին, ասացէք ինձ զարդարն, զի դուք ձեզէն պարտիք գիտել որչափ սիրէ զիս թագաւորն, նոյնպէս և ես երբէք ոչ ատեցի զնա. վասն որոյ և ձեզ առաւել ես պարտ է զարդարն ասել. դուք և աստուածս այս՝ ո՞ր յառաջ եղեալ է։ Պատասխանի ետուն և ասեն. Մեք յառաջ եմք ծընեալ, իսկ դոքա յետոյ 'ի մէնջ արարեալ։ Սուրբն Թէոդոսիա ասէ. Նախածինն եղեալսն՝ յայտ է եթէ հզօր է քան զայն որ յետոյն է արարեալ։ Ասացէք և առ այս. Ո՞ յումմէ՞ հայցէ զփրկութիւն։ Արուեստագէտքն ասեն. Այս յայտ է ամենեցուն, եթէ որ յետոյն է արարեալ՝ կարօտ է օգնութեան յայնմանէ՝ որ յառաջն է ծնեալ։ Սուրբն Թէոդոսիա ասէ. Զդոյն ասեմ և ես. քանզի Ապողոնն յետոյ է արարեալ և կարօտ է ձերում օգնականութեան. զի թէ ոչ էր ձեր ստեղծեալ զնա՝ ոչ ինչ էր, և դարձեալ եթէ ոչ հաստատէք և դնէք՝ անկեալ կործանի, և այդ այդպիսւոյդ արդեօք ակնկալութիւն ինչ բարւոյ իցէ. քաւ լիցի։ Արուեստագէտքն ասեն. Ուստ մեզ զբանդ, տիկին Թէոդոսիա։ Սուրբն Թէոդոսիա ասէ. Կամի՞ք լինել գործակիցք և հաւատակիցք իմ։ Եւ նոքա ասեն. Եթէ ոչ ունէաք՝ և ոչ հարցուածոյդ իսկ պէտս ունէաք։ Սուրբն Թէոդոսիա ասէ. Ապա ուրեմն յետոյ եղեալն յառաջ ծնելոյն ունի զառողջութիւն. այսպէս ասեմ զի և Ապողոնն վասն զի յետոյ է արարեալ՝ կարօտ է 'ի ձէնջ առողջութեամբ։ Ստեղեքիոս պատկերագործ ասէ. Այդպէս է, տիկին Թէոդոսիա։ Իսկ Սեբաստիանոս ցասեաւ և ասէ. Երդուեալ ամենայն իշխանութեամբ Ապողոնի, ոչ կարէք սպուժել զատեանս իմ։ Եւ զայս ասացեալ գնաց յապարանսն իւր։ Եւ 'ի վաղիւն նստեալ յատենի՝ հրամայեաց ածել զերեսեանն զաստուածատեղծսն. և իբրև ածին զնոսա՝ ասէ թագաւորն. Ասացէք ինձ, ծնունդք իժից, միաբանեալ էք ընդ մոգութիւն քեռն իմոյ և հաւանեալ Քրիստոսի։ Ստեղեքիոս ասէ. Քոյր քո՝ լուսաւորութիւն է. այլ աստուածախօս կոյսն Թէոդոսիա՝ հեռի է 'ի քէն, որպէս արևելք յարևմտից հեռի են, այսչափ հեռի էք 'ի միմեանց. և զի՞ խնդրես դու հաւասարութիւն ընդ հոգւոյ արդարոյն. զի՞նչ հաւասարութիւն է լուսոյ ընդ խաւարի, և կամ զի՞նչ միաբանութիւն տաճարի Աստուծոյ ընդ մեհեանս, զանկուռսըն կուռք կոչես, այլ լուր 'ի մէնջ. 'ի բաց թողաք և մեք զեղծեալ կուռսդ քո զոր աստուածդ ասես, և հաւատացաք 'ի Քրիստոս 'ի կենդանին յաւիտենից։ Եւ թագաւորն ասէ ցդահիճսն. Հանէք զդոսա արտաքս, և սրով մաշեցէք զդոսա. և այնպէս կատարեցան սուրբ վկայքն Քրիստոսի։ Իսկ 'ի վաղիւն ասէ թագաւորն ցքոյրն իւր. Զոհեա աստուածոցն։ Սուրբըն Թէոդոսիա ասէ. Շողոքորթող իմն թուիս ինձ, այր դու։

Սեբաստիանոս ասէ. Սպանանեմ զքեզ, քոյր իմ, եթէ ոչ զոհես Ապողոնի։ Եւ մինչդեռ խօսէր թագաւորն զայս՝ եմուտ շուն մի յապարանսն և անկաւ առ ոտս սրբոյն Թէոդոսեայ, աղաչէր և ասէր. Ո՛ մեծ յիշատակաց կոյսդ, քաջապէս մարտուցեալ պատերազմիս զչարեօք մարտ պատերազմիս. հեղեալ է լոյս հաւատոյդ զամենեքումբք իբրև զարեգական. և զանազանեալ են բանք բերանոյդ 'ի լսելիս ամենեցունց. երանի՜ որոց վայելեսցեն աչօք 'ի լոյս քո և ականջօք 'ի բանսդ, և երանի որք տեսանեն զքեզ այժմ, որպէս պարտ է տեսանել զճառագայթս արեգական, զճշմարիտ վկայդ Քրիստոսի՝ մարտնչել ընդ չարասէր արբանեակդ սատանայի, ընդ Սեբաստիանոսի եղբօր քոյ. մի՛ ինչ զարհուրիր, սուրբ կոյսդ, պարտ է քեզ կրել բազում չարչարանս զի պսակեսցիս։ Զայս իբրև լուաւ Աթանագինէս՝ երկրորդ Թագաւորին՝ արտասուեաց և ասէ ցԹագաւորն. Զգայուն է անբանդ, և անզգայ ես դու Թագաւորդ իմանալեօքդ և տեսանելեօքդ։

Խռովեցաւ յոյժ Թագաւորն և հրամայեաց սպանանել զշունն, նոյնպէս և զԱթանագինէս զերկրորդն իւր՝ հրամայեաց գլխատել. և նովին սպառնալեօք ասէ Թագաւորն ցքոյրն իւր. Զոհեա աստուածոցն, Թէոդոսիա, և մի՛ դառնամահ լինիր 'ի ձեռաց իմոց։ Սուրբն Թէոդոսիա ասէ. Արա զոր կամիսդ։ Յայնժամ հրամայեաց Թագաւորն՝ ընկենուլ զնա գազանաց. և իբրև առին գնացին զսուրբն Թէոդոսիա, գնացին զհետ նորա բազմութիւն արանց և կանանց և մանկտւոյ՝ տեսանել զմահ սրբոյն։ Չոգաւ և ինքն իսկ Թագաւորն, և հրամայեաց արձակել նմա առիւծս երկուս. և իբրև ելին վայրենի գազանքն և յարձակեցան 'ի վերայ և հասին 'ի սուրբն, անկան առ ոտս նորա. եբաց մի յառիւծոյն զբերան իւր և սկսաւ բարբառել մարդկօրէն բանս և ասէ. Քեզ ասեմ, բանաւոր Սեբաստիանոս, դու ես երկիր ապառաժ, որ բերես փուշ և տատասկ և զամենայն անպիտան բոյս, անմիտ, անհիւթ, ընդվայրագործ, անսուրբ, աննուէր, անգութ, հակառակօղ, հաւատատեաց. զարմացեալ եմ զմիտդ պատմեցից զվէրսն որ պատահելոց են քեզ. ամենայն մարմինդ քո վիրաւորեալ է։ Արդարքն խօսեցան և ոչ հաւատացեր. բարբառեցաւ իշավայրին և ոչ իմացար, շուն խօսեցաւ և ոչ ծանեար. առիւծ որ եմ ես իսկ՝ խրատեմ զքեզ և ոչ հայիս յիս. զի՞նչ առաւել այլ ես ունիմ ասել քեզ. զհայրն և զմայրն քո սպաներ և ոչ փոխեցար 'ի չարութենէդ. դարձեալ և քեռն ես ոչ ողորմեցար Թշուառացեալդ, այլ մատնեցեր զնա գազանաց։ Արդ և զայս ես ո՞չ տեսանիցես որպիսի՛ սաստիւ ընդունի երկրպագութիւն յանբան անասնոցս գազանաց. իսկ արդ զինչ ասեմ, արգելեալ եմ 'ի սրբոյս. արդ եղանէի ընդ կճեայ աշտիճանոդ և բերէի զքեզ 'ի վայր և պատառէի զոլորվայնոդ և 'ի բաց ցնդէի զաղխոդ 'ի քեզ անողորմապէս, որպէս և 'ի քեզ ոչ գտաւ ողորմութիւն խնայել 'ի քոյրս քո։ Եւ դարձաւ 'ի բազմութիւնն և ասէ ցնոսա. Լուարուք ժողովուրդք՝ որ կայք զինե, յաղագս իշավայրւոյն եօթն հազար հաւատացին, և վասն իմ ոչ ոք գոչէ առ Տէր, վասն բարբառոյ անբան գազանացս. խօսեցարուք բանաւոր կենդանիքդ։ Եւ հաւատացին 'ի Տէր յաւուր յայնմիկ եօթանասուն հազար, որ աղաղակէին և ասէին. Փառք քեզ, Յիսուս Քրիստոս, դու ես Աստուած միայն, և ոչ գոյ այլ ոք բայց 'ի քէն։ Պատասխանի ետ Սեբաստիանոս թագաւոր և ասէ. Քեզ ասեմ, Թէոդոսիա, մոգեցեր զառիւծոդ և խոսորեցուցեր զժողովուրդսդ զայդոսիկ։ Արդ այսուհետև եկ, ել այտի և 'ի բաց գնա յինէն։ Եւ սուրբն մերձեցաւ 'ի նա։ Յարձակեցաւ թագաւորն ինքնին, իւրովք ձեռօքն բուռն եհար զսրբոյն և եհատ զգլուխ նորա. և այսպէս կատարեցաւ սուրբն Թէոդոսիա վկայն Քրիստոսի։ Եւ 'ի վաղիւն նստեալ յատենի՝ հրամայեաց ածել զսուրբ Փիլիկտիմոն առաջի իւր։ Եւ իբրև ածին զնա, ասէ սուրբ վկայն Քրիստոսի. Տեսանե՞ս, ահա ես եկեալ եմ։ Թագաւորն Սեբաստիանոս ասէ. Դու ես սուրն ապականիչ որ մուծեր զայթակղութիւն 'ի քաղաքս մեր. դու սպաներ զհայրն իմ և զմայր իմ և զքոյր՝ սատակող հրապուրանօք բանից քոց, թշնամիդ Ապողոնի, և սիրելի մոլորին Քրիստոսի։ Լուր այժմ զոր ասեմս, և զոհեա Ապողոնի. քանզի այս չորրորդ անգամ նորոգեալ է զնա։ Սուրբն Փիլիկտիմոն ասէ. Ինձ չէ օրէն թշնամանել զայր թագաւոր, այլ թէ էիր և կամէիր, կատարէի արդեօք. այլ զի ոչ կամիմ, ոչ կարեմ. այլ մեծապատիւ և հզօր և փառաւորեալ և օրհնաւոր և անապական և յաւիտենական բանիւ բարբառիմ առ քեզ. տուր ինձ այժմ մանուկ մի երեմնօրեայ զի հարցից։ Եւ իբրև ածին զմանուկն հանդերձ մարբն իւրով, ասէ ցկինն՝ սուրբն Փիլիկտիմոն. Թող զմանուկդ, կին դու։ Ասէ. Տէր, զիա՞րդ

Թողում զերեկի ծնեալս։ Սուրբն Փիլիկտիմոն ասէ. Թող զդա և կացցէ հաստատուն. և եդ կինն զմանուկն 'ի գետնի։ Եւ իբրև եկաց մանուկն 'ի վերայ ոտից իւրոց՝ զարմացան ամենեքեան որ անդն էին. և ինքն իսկ Թագաւորն և մայր մանկանն կայր զարմացեալ, և էր 'ի խնդութիւն մեծ. իսկ սուրբն Փիլիկտիմոն գոհանայր զԱստուծոյ. և 'ի սքանչանալն ամենեցուն՝ ասէ ցկինն սուրբն Փիլիկտիմոն. Զի՞նչ կոչի անուն որդւոյ քո։ Ասէ ցնա կինն. Տէր, երիկեան մանկիկ է մատաղիկ, արդ զի՞նչ կոչէի զանուն դորա. և դարձեալ օրէնս ունիմք՝ յետ երից ամսոց դնել անուն, իսկ սա երեսնօրեայ է, զիա՞րդ կարեմ քան ըզժամանակն ինչ առնել։

Սուրբն Փիլիկտիմոն ասէ. Յայսմհետէ կոչեսցի անուն մանկանդ Փիլիկտիմոն։ Եւ ասէ սուրբ վկայն Քրիստոսի ցմանուկն. Քեզ ասեմ, որդեակ, երթա՛ս առ Ապողոնն աստուածն հեթանոսաց թէ առաքեմ զքեզ։ Եւ վաղվաղակի ընթացաւ մանուկն և եկաց առաջի սրբոյն. և սկսաւ խօսել ճարտարապէս մատամբքն և ասէ. Տէր իմ Փիլիկտիմոն, հրամայեցեր, ես երթամ առ Ապողոնն աստուածն հեթանոսաց։ Եւ իբրև խօսեցաւ մանուկն՝ առաւել ևս զարմացան ամենեքեան։ Յայնժամ Փիլիկտիմոն գրեաց 'ի վերայ փոքրիկ տախտակի, ետ ցմանուկն և ասէ ցնա. Երթ կոչեա այսր զԱպողոնն. և պատճէն գրոյն էր այսպիսի. Ի Փիլիկտիմոնէ՝ Ապողոնին։ Միանգամ ընկալեալ զգիրդ 'ի ձեռանէ մանկանդ՝ վաղվաղակի աստ եկեսցես։

Իբրև գնաց մանուկն և եհաս 'ի մեհեանն Ապողոնին, զտեղի առ և հրամայեաց կոչել զերիցագոյնն 'ի դռնապանացն և ասէ. Բացէք ինձ զդուռն մեհենիդ, վասն զի առաքեալ եմ առ Ապողոնն, և գրով ունիմ ասել ցնա զհրաման տեառն իմոյ Փիլիկտիմոնի որ առաքեացն զիս։ Եւ տեսեալ դռնապանացն զմանուկն սխրացեալ՝ պապանձեցան. և թոյլ ետուն նմա մտանել 'ի տուն կռոցն։ Եւ իբրև եհաս մանուկն յանդրին Ապողոնին, ասէ ցԱպողոնն. Ընկալ զգիրս զոր ետ բերել առ քեզ Փիլիկտիմոն ծառայն Քրիստոսի 'ի ձեռն իմ, ըստ հրամանին Աստուծոյ։ Եւ վաղվաղակի ձգեաց զձեռն իւր անդրէն և առ զգրեալ տախտակն 'ի ձեռաց մանկանն. և իբրև ընթերցաւ զգրեալսն՝ շարժեցաւ ինքնին և գնաց զկնի մանկանն։ Եւ իբրև եհաս յապարանս թագաւորին, ետես զթագաւորն զի նստէր, և բազմութիւն շուրջ զնովաւ, և զսուրբն Փիլիկտիմոն առընթեր ատենին։ Ասէ Ապողոնն ցսուրբն Փիլիկտիմոն. Աղաչեմ զքեզ, տէր իմ, զի՞նչ պէտս կոչեցեր զիս այսր։ Սուրբն Փիլիկտիմոն ասէ. Բարձ զթագաւորդ և 'ի վերայ ծնգաց քոց կըրեա զդա ընդ երկու։ Ընթացաւ վաղվաղակի անդրէն և բուռն եհար զթագաւորէն, և կորեաց յերկուս 'ի վերայ ծնգաց իւրոց և ընկէց 'ի մէջ ատենին։ Եւ իբրև զայս արար, ասէ ցսուրբն. կամի՞ս զի ջաղխեցից զամենեսեան որ ժողովեալ են 'ի մոլորութիւն ինև։ Սուրբն Փիլիկտիմոն ասէ. Մի՛ ինչ ումեք վնասեր, անիծեալդ Ապողոնն, վասն զի պարտ է դոցա լինել ժողովուրդ Տեառն։ Եւ մինչ դեռ ևս խօսէր սուրբն Փիլիկտիմոն, սկսան աղաղակել ոմանք 'ի բազմութենէն իբրև եօթն հազար և ասեն. Մեծ ես Աստուածդ քրիստոնէից, մի՛ տար զմեզ 'ի սպանութիւն, Տէր Աստուած մեր. վաղվաղակի առաքեա առ մեզ զողորմութիւն քո և փրկեա զմեզ 'ի մոլորութենէս յայսմանէ։ Եւ 'ի հաւատալ նոցա 'ի Տէր՝ անց իբրև ժամ մի։ Ասեն ցմիմեանս ոմանք 'ի հեթանոսաց. Զիա՞րդ անկեալ կան հատուածք թագաւորին. եթէ էր, և մօտ էր սուրբն Թէոդոսիա՝ յարուցանէր զնա. ինքն ընդ ինքեան մարտեաւ և սպան զկենդանարարն իւր. զի թէպէտ և բազում անգամ տանջեաց զնա, սակայն ողորմէր և գթայր յայդպիսի վտանգս մահու վասն հարազատութեան եղբօրն։ Իսկ սուրբն Փիլիկտիմոն ստրջացեալ 'ի հոգին, դարձաւ 'ի հատուած թագաւորին, և կայր յաղօթս։ Եւ իբրև կատարեաց զաղօթսն, յարոյց զթագաւորն. և կենդանացեալ թագաւորին և տեսանէ զԱպողոնն գեր 'ի վերոյ իւր, որպէս յորժամ սպանն զնա։ Զարհուրեալ յոյժ՝ մերձեցաւ 'ի սուրբն, և բուռն հարեալ ունէր զմիջս նորա։ Իսկ սուրբն Փիլիկտիմոն հրաման ետ և ասէ ցթագաւորն. Քեզ ասեմ, թագաւորդ, որպէս արար ընդ քեզ Ապողոնդ քո, արա և դու ընդ նմա նմին նման։ Եւ քաջալերեալ յինքեան Թագաւորն ըստ հրամանի սրբոյն՝ եբարձ 'ի բազուկս իւր, և խորտակեաց 'ի վերայ ծնգաց իւրոց, և ա՛ռ քարինս և մանրեաց իբրև զաւազ։ Եւ ասէ Սեբաստիանոս. Տէր Փիլիկտիմոն, մի թէ և այլ կարիցէ՞ չարչարել զիս։ Սուրբըն Փիլիկտիմոն ասէ. Ոչ ինչ կարէ վնասել քեզ, մի՛ երկնչիր 'ի նմանէ. ո՞չ տեսանես զդա զի 'ի վերոյ պղինձ է և 'ի ներքոյ ունայն է փոր դորա։ Եւ իբրև փշրեաց զնա Թագաւորն՝ ասէ. Աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն. վասն զի ամենայն կուռք հեթանոսաց ոսկի են և արծաթ, ձեռագործք որդւոց մարդկան, և 'ի ժամանակին առնելոյ քննութիւն 'ի վերայ նոցա՝ կորիցեն. և դարձեալ, եթէ՝ Մի՛ երկիր պագանիցես աստուածոցն օտարաց։ Իբրև զայս ասաց, ա՛ռ ինքնին զպսակն պատուի 12 Թագաւորութեանն և ընկէց 'ի գետինն, և պատառեաց զծիրանիսն և 'ի բաց ընկէց, և ասէ. Երանի է քրիստոնէից՝ որոց զՔրիստոս զգեցեալ են զյաւիտենական լոյսն. և եղկելի են հեթանոսք խաւարազգեացք՝ հանդերձ ծիրանեօքն և ոսկի պսակօքն իւրեանց։

Իբրև զայս ասաց՝ ետ փառս Աստուծոյ, և ասէ ցուրբըն Փիլիկտիմոն. Տէր, ահա և ես քրիստոնեայ եմ, եթէ հաշտեսցի ընդ իս Տէր Յիսուս Քրիստոս, բարեխօսութեամբ ծնօղացն իմոց որք հաճոյ եղեն նմա, ընդ նոսին և քեռն իմոյ Թէոդոսեայ որ հաւասարեաց ընդ նոսա և սիրեաց զՔրիստոս։ Պատասխանի ետ սուրբըն Փիլիկտիմոն և ասէ. Եթէ յամենայն սրտէ քումմէ հաւատաս 'ի Տէր Յիսուս Քրիստոս, շնորհէ քեզ Տէր զամենայն մեղս քո։ Սեբաստիանոս ասէ. Եթէ զղջացի Տէր 'ի վերայ չարեացն զոր արարի, գիտեմ զի ապրիմ, վասն որոյ և հաւատացիր ինձ, երդուեալ 'ի Քրիստոս Թագաւորն երկնի և երկրի, զի քրիստոնեայ եմ։ Յաւել ևս խօսել և ասէ. Աղաչեմ զքեզ, Տէր, տուր ինձ զքրիստոսեան մկրտութիւնն, զի թէ առից զտէրունական կնիքն, ոչ ևս ունի սատանայ պատասխանել ինձ, և ոչ մարտնչել ընդ իս, զի մի՛ յառաջ ևս այլ ածեսցին մեղք իմ. այլ վասն արարեալ մեղացն ես գիտեմ զի որդեսէր էին ծնողքն իմ, նոյնպէս և եղբայրասէր տիկինն Թէոդոսիա քոյրն իմ, որ և յառաջ իսկ արտասուեաց վասն իմ. Նա կարող է աղաչել զբարեգութն Քրիստոս՝ զի շնորհեսցէ ինձ զմեղս իմ: Իբրև ասաց զայս ամենայն, մկրտեաց զնա սուրբն Փիլիկտիմոն, վասն որոյ տուաւ նմա շնորհք յԱստուծոյ 'ի ձեռն ապաշխարութեան. և իբրև մկրտեցաւ, կոչեցաւ անուն նորա Մարիանոս Թագաւոր: Եւ եհատ խորխորատ արտաքոյ քաղաքին մինչև 'ի պարանոցն, և էջ ինքն 'ի ներքս 'ի ջուրն. և հրամայեաց ածել զհանեալ հողն 'ի վերայ՝ պարանոցաւն չափ. և եդեալ ուխտ մինչև աւուրս յիսուն խոստովանել և ապաշխարել զմեծամեծ չարիսն զոր արարեալ էր, և զմահ ծնողացն:

Եւ 'ի հաւատալ Թագաւորին՝ էր խաղաղութիւն մեծ 'ի քաղաքին յաւուրսն յայնոսիկ: Եւ մինչդեռ էր ծածկեալ ընդ հողովն 'ի գբին՝ յաւուրս ապաշխարութեանն, 'ի գիշերի միում իջին առ նա արջք երկու յորջից իւրեանց, և հպիլ 'ի նա ոչ իշխէին և ոչ մերձենալ յերեսս նորա, այլ կամէին կտրել զձեռս նորա. և հասեալ 'ի գուբն գազանաբար և 'ի բաց հանէին զհողն ուսովքն չափ, և կտրեցին զձեռս նորա 'ի նմանէ: Եւ նա ասէ ցգազանսն. Եթէ առաքեաց Տէր ծախել զմարմինս իմ՝ ես պատրաստ եմ: Եւ մինչդեռ նա խօսէր ընդ գազանսն՝ յարձակեցան 'ի վերայ նորա և կտրեցին զձեռսն: Եւ ասէ. Գոհանամ զքէն Քրիստոս, որ արժանի արարեր զիս զմեղաւորս խրատել և ոչ մահապարտել. խրատելով խրատեաց զիս Տէր և 'ի մահ ոչ մատնեաց: Հայեցաւ 'ի ձեռսն և ասէ. Ուսարուք, ձեռք, մի՛ ևս հեղուլ զարիւն զհօր և զմօր և զքեռ, քանզի յայդպիսի յանդգնութեան կտրեալ էք: Եւ դարձեալ յիշէր զանօրէնութիւն և զմեղսն զոր արարեալ էր առ ծնողսն իւր և ասէր. Վա՜յ Թշուառացելոյս. արդեօք բանայցէ՞ երկիր զբերան իւր և միանգամայն իսկ կլանիցէ զժանդացեալս 'ի վերայ երկրի. և երանի՛ իբրև հատան յինէն ձեռքս միայն այսուհետև, եթէ ոչ՝ ամենևին իսկ կորնչէի:

Եւ մինչդեռ խօսէր զայս, քուն զարմանալի անկանէր 'ի վերայ նորա. և երևէր նմա քոյրն իւր 'ի տեսլեանն Թէոդոսիա, և ասէր ցնա. Երանելի ես դու յարս, զի ծանեար դու զմեծ Թագաւորն Քրիստոս, և ահա շնորհեցան քեզ մեղք քո. եղբայր իմ Մարիանոս, խնդացուցեր զմեզ, դասեալ ես դու ընդ մարտիրոսս. քաջալերեաց այսուհետև. ոչ դադարեմք ես և մայրն քո և հայրն՝ աղաչել զՔրիստոս վասն քո, զի ողորմեսցի քեզ և թողցէ զմեղս քո. զարթիր և տես զձեռս քո ողջ իբրև զառաջինն. և եկ հաս մեզ յետ եօթն աւուր, անուամբ Տեառն մերոյ Յիսուսի։

Զարթուցեալ 'ի քնոյն Թագաւորն Մարիանոս, օրհնէր և փառաւորէր զՔրիստոս զտուիչն կենաց։ Եւ 'ի կատարել աւուրն երկրորդի՝ Թագաւորեաց Կուբրիկլիոս, և նստեալ յատենի՝ ասէր. Քրիստոնեայ եղեր, Սեբաստիանոս։ Եւ Սեբաստիանոս ասէ. Մի՛ ողղանջեր զխօսելդ, քանզի Մարիանոս կոչիմ, որ Թարգմանի մասն բարի՝ զոր ետ ինձ Տէր։ Կուբրիկլիոս ասէ. Որպէս դու ոչ խնայեցեր 'ի ծնօղսն քո, նոյնպէս և ես ոչ խնայեմ 'ի քեզ, զոհեա աստուածոցն և կեաց։ Մարիանոս ասաց. ԶԱպողոնն ես ջախջախեցի, և որո՞ւմ աստուծոյ հրամայես զոհել։ Կուբրիկլիոս ասէ. Նորոգեցաւ վերստին Ապողոնն, լաւագոյն քան զառաջինն։ Մարիանոս ասէ. Երթիցուք 'ի տաճարն Ապողոնին, և տեսցուք զզարմանալի զգործսդ զորմէ ասեսդ։ Կուբրիկլիոս ասէ. Եկ և տես. և գնաց ընդ նմա։ Եւ իբրև մտին 'ի տաճար կռոցն, Մարիանոս ասէ ցԱպողոն. Որչափ աշխատիմք մեզոյն իսկ վասն ողջութեան մերոյ, և դու բազում անգամ վասն ծեծելոյդ զքեզ քարամբ՝ աւելագոյն ես աշխատեալ ես. քանզի շատ անգամ փշրեցար և նորոգեցար. և ես վասն զի 'ի բարի արմատոյ եմ, այսինքն է քրիստոսասէր ծնօղաց որդի, և ահաւասիկ հասեալ կամ զօրութեամբն Քրիստոսի սատակել զքեզ։

Եւ իբրև զայս ասաց, ունէր 'ի ձեռին իւրում պատրաստական Թմբաքար[1] մի, և ընկեց զԱպողոնն 'ի վերայ յատակի տան կռոցն, և մանրեաց զնա, և եղև իբրև զոչինչ։ Եւ եկաց յաղօթս և ասէ. Գոհանամ զքէն, Տէր, որ մեղաւորաց քաջալերել ուսուցեր, և ետուր ժամանակ կարդալ առ քեզ. առ քեզ կարդամ, Ճշմարիտ Թագաւորդ, և աղաչեմ զքեզ, Տէր, որ զանարժանս զիս կամեցար կեցուցանել վասն սուրբ և փառաւորեալ անուանդ քո։ Խնայեա յիս, Աստուած, և լուր ինձ՝ որ աղաչեմս առ քեզ, և պարգևեա ինձ զխնդրուածս զայս. բաց, Տէր, զբերան երկրի և ընկղմեա զմեհեանս զայս, զի մի ևս նորոգեսցի Ապողոնի 'ի տեղւոջս յայսմիկ։ Եւ 'ի մատուցանել նորա զաղօթս զայս, եբաց երկիր զբերան իւր և եկուլ զմեհեանն հրապարակաւն որ շուրջ զիւրեաւ։ Եւ 'ի լինել մեծի շարժմանն և յընկլուզանել մեհենին յերկիր, եղև ահ մեծ 'ի վերայ մարդկանն որ 'ի տեղւոջն էին, և հաւատացին 'ի Քրիստոս երեք հազարիւր ոգի յարանց և կանանց և 'ի մանկտւոյ։

---

[1] Թերևս ումբաքար։

Եւ իբրև գիտաց Թագաւորն Կուբրիկկիոս, կրճտէր զատամունս իւր. քանզի յետ անցանելոյ ահաւորացն՝ դրդռեաց զնա սատանայ. և նստեալ 'ի Թագաւորական աթոռն՝ սկսաւ հարցանել զերանելին Մարիանոս. և իբրև հարցեալ լինէր երանելին՝ ասէ ցԹագաւորն. Կամիս եթէ կամ յաղօթս առ Տէր Աստուած իմ, և վարսեմ զքեզ հանդերձ Թագիւդ և ամենայն ապարանօքդ յանդունդս երկրի, որպէս և արարի զմեհեանս աստուածոյն քոց։ Իբրև լուաւ զայս Թագաւորն, մռնչեալ յոյժ՝ ասէ ցխորհրդականս իւր գաղտ. Զայրս զայս եթէ ոչ սպանանէք վաղվաղակի՝ սուզանէ զմեզ յերկիր։ Եւ նոքա ասեն. Տէր Թագաւոր, արա զոր կամիսդ։ Յայնժամ հրամայեաց զնա սրով սպանանել վաղվաղակի. և առեալ զնա դահճացն՝ հանին արտաքոյ քաղաքին, և յանկարծակի գլխատեցին զնա, յասել երանելւոյն զաղօթս զայս. Ընկալ, Տէր, խաղաղութեամբ զոգի իմ, և անցո զիս ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս խաւարիս այսորիկ, և կացո զիս առ հօրն և մօրն և քեռն իմոյ, զի քեզ վայելէն փառք, այժմ և յաւիտեանս. ամէն։

Եւ յետ կատարման երանելւոյն Մարիանոսի, նստաւ Թագաւորն յատենին և հրամայեաց ածել զերեմնօրեայ մանուկն հանդերձ մարբն իւրով. և իբրև եկն կինն առաջի Թագաւորին, ունէր և զմանուկն 'ի գիրկս իւր։ Ասէ Թագաւորն. Զինչ կոչի անուն մանկանդ քո. Եւ նա ասէ. Մարիանոս կոչիմ։ Կուբրիկկիոս ասէ.

վասն է՞ր այդպէս չար ծնունդ ծնար, որ յառաջ քան զաճումն հասակի իւրոյ գնայ և շրջի. այլ և թուղթս 'ի մոգէն Փիլլիկտիմոնէ տանէր առ Ապողոնն աստուածըն մեր, և շարժեալ խռովեցոյց զնա։

Մարիանոս ասէ. Այդ իսկ են սքանչելիք, զի 'ի մատաղեայ և յերեմնօրեայ մանկանդ ծաղր եղեալ աստուածն ձեր. և ևս մեծ այս է, զի երկիւղիւ լսեն որոց առաքենն առ նոսա։ Այլ ես, ո՛վ թագաւոր, զարմանալի որդի ծնայ, որով և ծանեայ իսկ զճշմարտութիւնն Աստուծոյ. ես փոխանակ որդեկիդ իմոյ, և ինքն է ողկոյզ հասուն և անթառամ։

Զայս իբրև ասաց կինն, ասէ ցնա Կուբրիկիոս. Զօհեա մեծի աստուծոյն Արտեմեայ, ո՛վ կին դու, միթէ և նա ո՞չ իցէ բամբիշ ամենայն տիեզերաց։ Երանելին Մարիանոս ասէ. Արտեմիս այժմ զգացի զայրութիւն իւր, վասն զի մեռաւ Ապողոնն այր իւր. և ոչ այսչափ միայն, այլ և 'ի սանդարամետէն իսկ անկեալ կորեաւ. թուի ինձ՝ եթէ էր և գոյր իւր զօրութիւն՝ զայրն իւր ոչ կորուսանէր Արտեմիս աստուածըն ձեր։ Եւ սրտմտեալ թագաւորն, հրամայեաց սպանանել զնա և զորդին իւր։

Եւ յետ այնորիկ նստեալ յատենի, հրամայեաց ածել առաջի իւր զսուրբ վկայն Աստուծոյ զՓիլլիկտիմոն։ Իբրև եկն երանելին՝ հարցեալ լինէր 'ի թագաւորէն. և ահա գոյժ մեծ եղեալ և աղաղակ 'ի քաղաքին, դադարեաց թագաւորն 'ի հարցանելոյ զսուրբն. և սկսաւ հարցանել վասն ամբոխին եթէ զի՞նչ իցէ։ Յառաջ մատեաւ պատանի մի, և սկսաւ պատմել զեղեալսն և ասէ. Տէր թագաւոր, տուն կործանեցաւ 'ի քաղաքին, և կալաւ զայրն և զկինն իւր հանդերձ ինն որդւով և հեղձան ամենեքեան ընդ հողովն, վասն այսորիկ եղև գոյժս այս 'ի քաղաքիս։ Եւ յաւել ևս պատանին և ասէ. Տէր թագաւոր, արձակեա զքրիստոնեայդ զայդ, վասն զի դա կարող է յարուցանել զնոսա։ Եւ ասէ թագաւորն. Քեզ ասեմ, Փիլլիկտիմոն, երթ և արա որ ձեզն հաճոյ իցէ։ Եւ գնաց սուրբն Փիլլիկտիմոն 'ի տեղին ուր կործանեալ էր տունն 'ի վերայ բնակչացն իւրոց. եբաց զբերան իւր, սկսաւ կալ յաղօթս և ասէ. Տէր

Աստուած ամենակալ, որ ստեղծեր զմարդն ըստ պատկերի քում և ըստ նմանութեան քում. որ զամենայն ինչ 'ի չգոյէ 'ի գոյ ածեր, որ հերձեր զանդունդս և փշրեցեր զնիգս աղամանդեայս, լուր ինձ Աստուած. վասն զի դու ես Աստուած որ կարդամ առ քեզ ճըշմարտութեամբ. և այժմ կանգնեա զկործանումն տանս այսմիկ, և յարո զմեռեալս զայսոսիկ. ուղղեա զամենայն ինչ զեկեալ տանս, և ծանիցեն ամենեքեան թէ դու միայն ես Աստուած որ կարող ես օգնել և կեցուցանել: Եւ մինչ դեռ ևս մատուցանէր զաղօթսն՝ մերձ առ տունն որ կործանեալն էր, երևեցան գունդք հրեշտակաց, և վաղվաղակի կանգնեցաւ տունն, և յարեան մեռեալքն. և ամենայն կահ տանն նորոգեցաւ իբրև զառաջինն: Եւ 'ի լինել այսպիսի սքանչելեաց՝ օգնութեամբ աստուածային զօրութեանն, հաւատացին 'ի Քրիստոս 'ի քաղաքին յայնմիկ վեց հազար արք և կանայք: Եւ յետ այսորիկ Կուբրիկիոս կոչեաց զսուրբն Փիլիկտիմոն և ասէ ցնա. Զայդ տեսաք զի յարուցեր զմեռեալսն, լեր այսուհետև և սիրելի Արտեմեայ աստուծոյն. և ունի զքեզ խաղաղութիւն, և կեաց 'ի քաղաքիս մերում մեծաւ պատուով:

Պատասխանի ետ սուրբն Փիլիկտիմոն և ասէ ցնա. Մի եղիցի քեզ բարի, ո՛վ սատանայ և օտարացեալ 'ի ճշմարտութենէ. խցցին աչք քո, վասն զի ոչ ետուր փառս Տեառն Աստուծոյ՝ որ յարոյց զմեռեալսն և կանգնեաց զկործանեալ տունն մեծ, և կացոյց ողջ անօթոյքն որ 'ի նմա: Զայս իբրև ասաց սուրբ վկայն Քրիստոսի, կացին աչք թագաւորին. և իբրև այսպէս վտանգեալ լինէր թագաւորն՝ հրաման ետ կոչել զսուրբն առաջի իւր և ասէ ցնա. Այր դու, ծառայ Աստուծոյ, աղաչեմ զքեզ, տուր ինձ զլոյս աչացս իմոց, և հաւատամ յԱստուածն քո զոր դու պաշտես:

Եւ 'ի կալ յաղօթս սրբոյն, սկսաւ տեսանել թագաւորն Կուբրիկիոս. և իբրև բացան աչք բռնաւորին, ասէ ցսուրբն Փիլիկտիմոն. Երդուեալ իմ յամենայն աստուածսն, ոչ այլ ևս ունիս կեալ 'ի ձեռաց իմոց: Եւ հրամայեաց վաղվաղակի գլխատել զնա սրով: Իբրև հանին արտաքս քան զքաղաքն, ասեն ցնա դահիճքն· Ձգեա յառաջ զպարանոց քո։ Եւ սուրբն վաղվաղակի մատոյց նոցա զպարանոց իւր· և վերացուցեալ դահճացն զսուսերս իւրեանց 'ի վերայ սրբոյն, և մնացին այնպէս ձգեալ զձեռս իւրեանց, և ոչ կարէին բառնալ 'ի նմանէ զգլուխ նորա· վասն զի հրեշտակն 'ի բաց դարձոյց զսուրն զեկեալ 'ի վերայ պարանոցի սրբոյն։ Յայնժամ ասէ ցնոսա սուրբն Փիլիկտիմոն· Անսացէք ինձ, եղբարք, ժամ մի, և կացից յաղօթս։ — Հրամայեցեր տէր, աղօթեա որպէս և կամիս։

Յայնժամ եբաց զբերան իւր սուրբ վկայն Քրիստոսի և ասէ· Գոհանամ զքէն, Աստուած, որ արժանի արարեր զիս հասանել մինչև 'ի ժամս յայս· հաստատել 'ի հաւատս, Տէր Աստուած իմ, զանձինս՝ որք են և հաւատացին 'ի քեզ· և այժմ ընկալ, Տէր Քրիստոս, խաղաղութեամբ զոգի իմ։ Եւ 'ի մատուցանել սրբոյն զաղօթս զայս՝ յափշտակեցաւ յերկինս հոգի սրբոյն· և կացին սխրացեալք դահիճքն, միանգամայն և զարմացեալք, եթէ որպէս արագ արագ և առանց վէրս առնլոյ 'ի մարմինն՝ վերացաւ յերկինս հոգի սրբոյն։ Եւ երթեալ պատմեցին Թագաւորին վասն սքանչելի կատարման սրբոյն· և լուեալ Թագաւորին՝ զարմացաւ յոյժ ընդ ոչն առնլոյ վէրս 'ի մարմին իւր· և ևս առաւել բազումք հաւատացին 'ի Տէր, և խնդրեցին 'ի Թագաւորէն զսուրբ և զպատուական նշխարս վկային Քրիստոսի։ Եւ իբրև աղաչեալ լինէր Թագաւորն բազում բարեխօսիւք, հրամայեաց նոցա զի բարձցեն զնշխարս սրբոյն։ Յայնժամ հաւատացեալքն 'ի Տէր՝ բացին զշիրիմ մի, որ էր կնքեալ զգուշութեամբ, յորում կային նշխարք վկային Քրիստոսի՝ Գրիգորի Թագաւորի Իլու քաղաքի, և Անատոլեայ կնոջ նորա, և Թէոդոսեայ դստեր նորա· և այսպէս պատուական իւղովք օծեալք՝ եդին 'ի միասին զգուշութեամբ մեծաւ 'ի միում պահարանի, և շինեցին վկայարան անուամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի· և ըստ յայտնութեան սուրբ Հոգւոյն՝ եդին զսուրբ վկայն Քրիստոսի, յորոյ ընդ ամենայն երկիր տուան նշխարք սրբոցն, բարեխօս վասն մեր առաջի Տեառն։

Գործեցաւ այս յեօթներորդի ամի Գորգիանու թագաւորի և վկայի Քրիստոսի։ Փոխեցաւ սուրբն Գրիգորիոս 'ի թագաւորութենէն յարքայութիւն Աստուծոյ, և Անատոլիա կին նորա, որ օր հնգետասան էր յունուար ամսոյ՝ որ է Արաց, յաւուր ուրբաթու, 'ի չորրորդ ժամու։ Իսկ սուրբն Թէոդոսիա կատարեցաւ որ օր երկոտասան էր փետրուարի ամսոյ՝ որ է Մեհեկան, յաւուր կիւրակէի, յերրորդ ժամու։ Սեբաստիանոս եղբայր Թէոդոսեայ 'ի բաց կացեալ 'ի թագաւորութենէն, կատարեցաւ որ օր եօթըն էր ապրիլի ամսոյ՝ որ է Ահեկանի, յաւուր չորեքշաբաթւոջ, 'ի հինգերորդ ժամու։ Զկնի բոլորեցունց կատարեցաւ սուրբն Փիլիկտիմոն, որ օր եօթն էր մայիսի ամսոյ՝ որ է Մարերի, յաւուր շաբաթու 'ի լուսանալ աւուրն սուրբ Յարութեան։

Գրեցի ես Աղեքսանդրոս, դիւանադպիր Գորգիանու թագաւորի, ըստ բազում փափագման լնուլ զկարօտութիւն իմ, անուամբ Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն, յաւիտեանս. ամէն։

Հաւատացին արք և կանայք 'ի ձեռն սրբոյն Փիլիկտիմոնի 'ի Տէր, երկերիւր և իննսուն հազար. և այլ ևս անուանք հնգետասան, որ օրհնէին զԱստուած և բարեբանէին զՔրիստոս՝ զտուիչն կենաց. որում փառք և իշխանութիւն, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Փիլիմոնի փորողի, որ թարգմանի Գլուխ գուսանաց՝ և Ապողղոսի գրակարդացի և Արիանոսի դատաւորին և այլոցն։

Յամին երկրորդի Դիոկղետիանոսի կայսեր, Արիանոս դատաւոր Հնդկաց, հրամայեաց հրովարտակ առնել ընդ ամենայն քաղաքս և ասէ. Ուր և գտանիցէք զամենայն աստուածապաշտ զոք՝ կապեցէք և արկէք 'ի տուն չարչարելոցն, մինչև եկեսցէ առ իս։ Եւ իբրև ածին առաջի նորա զնահատակսն՝ ասէ ցնոսա. Զոհեցէք աստուածոցն իմոց, եթէ ոչ՝ չարաչար մեռանելոց էք։ Իսկ նահատակքն ասեն. Տեսէք, եղբարք, մի ուրասցուք զկենդանի Աստուածն, զի մի և նա զմեզ ուրասցի. և մի երկիցուք 'ի չարչարանացս յայսցանէ. գիտասցուք որպէս և Տէրն ինքնին ասաց. Երկիցուք յայնմանէ որ կարող է զհոգի և զմարմին արկանել 'ի գեհենի։ Եւ զմիմեանս զօրացուցանէին բանիւքս այսոքիւք. և ժողովեալ էին 'ի մի վայր, և էին ոգիք իբրու երեսուն և եօթն։

Մի ոմն 'ի նոցանէ՝ զի անուն էր նորա Ապողղոս, իբրև ետես զչարչարանս նոցա՝ երկեաւ յոյժ. և կայր մօտ առ նոսա այր մի, զի անուն էր նորա Փիլիմոն, որ ուրախ առնէր զԱրիանոս դատաւոր։ Կարդաց զնա Ապողղոս և ասէ. Ե՛կ, տամ քեզ չորս դահեկանս, և զոհեա դու ընդ իմ։ Ասէ ցնա Փիլիմոն. Տուր ինձ ըզհանդերձս քո և կատարեմ ընդ քո զզոհդ. և ետ նմա զհանդերձս իւր։ Եւ պատեաց Փիլիմոն զերեսս իւր և եմուտ առ դատաւորն. և իբրև ետես դատաւորն՝ ասէ. Ո՞վ է սա։ Ետաքսիս ասէ. Արդեօք 'ի քրիստոնէից անտի որ իցէ. և ասէ ցթարգմանն. Ասա ցդա՝ զի երթիցէ և զոհիցէ աստուածոցն, և անհոգ առնի 'ի տանջանաց անտի։ Յայնժամ Փիլիմոն լցեալ Հոգւով սրբով՝ ասէ. Ոչ զոհեմ, քանզի քրիստոնեայ եմ։ Դատաւորն ասէ. Տեսե՞ր զտանջանսդ զի հասին Ասկղաս և Ղեոնիդէս զի ոչ լուան ինձ։

Փիլիմոն ասէ. Որքան համբերէին տանջանաց՝ ըղպատկս իւրեանց բոլորեցին՝ զի քեզ յաղթեցին. այսպէս և ես. ո՞ արդեօք ոչ յօժարեսցի գալ 'ի կոչս յայս, վասն պատարագելոյն Ասկղեայ որպէս և նայն եկաց, տարւոյ 'ի տարի 'ի մէջ գետոյն՝ որ պատրաստեցաւ մեզ տօնս ուրախութեան։ Արիանոս ասէ. Զոհեա և ապրիս։ Փիլիմոն ասէ. Ոչ գոյ փրկութիւն 'ի զոհելոյ։ Իսկ դատաւորն ասէ. Աղէ կարդացէք զՓիլիմոն գուսանապետ, զի զուարթացուսցէ զքրիստոնեայս զայս, զի զոհեսցէ և մի՛ չարաչար մեռցի։ Շրջեցան ընդ ամենայն տեղիս և ոչ գտին զՓիլիմոն։ Եւ հրամայեաց դատաւորն կոչել զեղբայր Փիլիմոնի զԹէոտիխաս, և ասէ ցնա. Ո՞ւր է եղբայրն քո։ Պատասխանի ետ Թէոտիխաս և ասէ. Սա է որ առաջի քո կայ։ Եւ հրամայեաց զերեսս նորա բանալ։

Ծիծաղեցաւ և ասէ. Ո՛վ Փիլիմոն, քանի՛ բազում սիրելի էիր իմ, ընդէ՞ր զայս արարեր ինձ. լաւ էր ինձ եթէ մի 'ի դստերաց իմոց էր մեռեալ, քան քեզ յինէն հեռանալ։ Փիլիմոն ասէ. Զոր կամիդ արա այսուհետև. քանզի ծագեցին առ իս շնորհքն Աստուծոյ։ Արիանոս ասէ. Քեզ արեւուն Հռովմ քաղաքին, զճշմարիտն ասա ինձ. սուտի՞դ ասես եթէ քրիստոնեայ եմ, եթէ 'ի բանս նոցա ասես։ Փիլիմոն ասէ. Դու երդմնեցուցանես զիս յարեւն Հռովմայեցւոց. ես քեզ հաւանութեամբ զճշմարիտն ասեմ. Քրիստոսիւ, ոչ եթէ լեզուաւ ասեմ, այլ յամենայն սրտէ թէ քրիստոնեայ եմ։

Յայնժամ բարկացեալ դատաւորին՝ ասէ ցբազմութիւնն. Զի՞նչ կամիք, վաղվաղակի բարձի՞ց զսա 'ի միջոյ, թէ երկայնամիտ լինիմ 'ի սա։ Եւ բազմութիւնն սկսան ասել. Մի՛ կորուսանես զուրախարարն քաղաքիս։ Յայնժամ դատաւորն ասէ. Տեսանե՞ս Փիլիմոն զի ամենայն քաղաքս կամին զքեզ, և տրտմեալ են վասն քո, այժմ զոհեա աստուածոյն զի զուարթացուսցես զամենայն ժողովս։ Պատասխանի ետ Փիլիմոն և ասէ. Երկրաւոր ժողովս թշնամի են երկնաւոր շնորհացն, և վասն այսորիկ և ես թշնամի եմ երկրաւորիս, զի կցորդ եղէց երկնաւորին։ Դատաւորն ասէ. Զայս քեզ ողորմիմ, զի ոչ է 'ի համարի վկայութիւն քո, քանզի ոչ ունիս զմկրտութիւն քրիստոնէից. լուեալ է իմ թէ յառաջ մկրտին՝ և ապա հաւատան յԱստուած նոցա։

Լուեալ զայս Փիլիմոնի և կայր առաջի բազմութեանն, և ասէ ցնոսա. Աղաչեմ զձեզ, եթէ իցէ ոք 'ի ձեզ քրիստոնեայ՝ եկեսցէ մկրտեսցէ զիս։ Եւ քանզի ամենեքեան պակուցեալ էին յահէ դատաւորին. և դատաւորն ասէ. Տեսանե՞ս Փիլիմոն, զի ոչ ոք իշխէ արհամարհել զիս։ Իսկ Փիլիմոն սկսաւ արտասուել և ասել. Աստուած իմ Յիսուս Քրիստոս, մի ընդ վայր հարկաներ զիս, այլ ցոյց ինձ զլոյս ճշմարտութեան քո, զի մկրտեցայց և ես որպէս և ամենեքեան։ Զայս ասացեալ նորա առաջի ամենեցուն, եկն ամպ մի հովանի եղև 'ի վերայ նորա՝ և ցօղեաց 'ի նմանէ և մկրտեցաւ։

Եւ ասէ Փիլիմոն. Ո՛վ որք երկերուքդ մկրտել զիս, ահա Տէր Յիսուս էջ մկրտեաց զիս. այժմ փութա՛ Արիանոս, արա զի՛նչ և կամիս։ Իսկ դատաւորն ասէ. Փիլիմոն, զի՛նչ տեսեր, զի՞ այդչափ մոլեգնիս, յիշեա զի մօտ են տօնք. և թէ տեսանեն որդիք քո զայլ ոք 'ի թէատրոնի քո՝ հեծեն և յոգւոց հանեն և ողբան զքեզ։ Լուեալ զայս Փիլիմոնի և լայր ողբայր և ասէր. Տէր Աստուած իմ, մի թողուր զյիշատակ թերահաւատութեան իմոյ յերկրի, այլ որպէս լուար ինձ յամպոյն ջուրց՝ որ մկրտեաց զիս, և այժմ լուր ինձ և իջո հուր յերկնից և այրեսցէ զօրինակն իմ և զփողն 'ի ձեռս Ապողոնիայի. զի մի երբէք տեսցեն ցնոսա և ասասցեն, եթէ ահա օրինակն Փիլիմոնի արուեստագիտի։ Եւ էջ հուր յերկնից և այրեաց զօրինակն Ապողոնիայի։ Եւ իբրև տեսին զայն՝ սքանչացան, և ընթացեալ Թէոփնաս եղբայր Փիլիմոնի և ասէ ցդատաւորն. Ոչ են յանցանք եղբօր իմոյ՝ այլ Ապողոնի, քանզի նա ետ նմա զհանդերձս իւր։

Եւ հրամայեաց դատաւորն ածել զԱպողղոս գրակարդաց: Իբրև ածին զնա, ասէ ցնա դատաւորն. Ամենաչար, զի՞նչ է ամբաստանութիւնդ քո զմէնջ. ընդէ՞ր ետուր զհանդերձն քո Փիլիմոնի և տրտմեցուցեր զքաղաքս, և դարձուցեր զսիրտ նորա 'ի մոլորութիւն. եթէ դու երկնչէիր յինէն՝ քեզ պարտ էր ինձ յայտնել զխորհուրդն. բայց այժմ՝ աղէ դու զոհեա, և նա իբրև զքոյն տեսանիցէ՝ զոհէ. եթէ ոչ՝ ամենեքեան հասարակ ունիք մեռանել: Ապողղոս գրակարդաց ասաց. Զայս գիտասջիր, եթէ մեղայ, մեղայ, այլ կարծեմ եթէ յանցանքս իմ բարեաց գործոց առաջնորդ եղեն նմա, և ածին զնա 'ի գիտութիւն ճշմարտութեան:

Յայնժամ հրամայեաց դատաւորն տախտապար արկանել զնա և գան հարկանել. և մինչդեռ հարկանէին՝ սկսան քաղաքացիքն աղաղակել և ասել. Ի բաց կաց 'ի Փիլիմոնէ, և մի՛ մեղանչեր դմա: Եւ դատաւորն ասէ. Տեսե՞ր, Փիլիմոն, քանի՞ գութ ունին քաղաքացիքս առ քեզ. և եթէ տեսանիցեն զքեզ 'ի դառն չարչարանս, զի՞նչ ես առնիցեն ընդ իս. արդ խորհուրդ մի ասեմ քեզ, մի՛ կարծեր եթէ ոչ սիրեմ զքեզ, և եթէ կամիս գիտել և հաւատալ՝ այսպէս է. երթ զոհեա զի դադարեսցեն որ սրտմտեալ են վասն քո, զի ամենեքեան երթամք առ աստուածսն մեր:

Ասէ Փիլիմոն. Ես այսուհետև հրաժարեալ եմ 'ի ճաշոյ աստուածոց ձերոց, և հրաւիրեալ եմ յընթրիս երկնաւորին: Եւ դարձաւ և ասէ ցբազմութիւնն. Դուք ընդէ՞ր տրտմեցարուք 'ի հարկանելն զիս. երբեմն ուրախ լինէիք ընդ բանս իմ, այժմ ընդէ՞ր տրտմեցարուք, զի հրեշտակք ուրախ են և ցնծան. այժմ հաւատացէք ինձ՝ զի քրիստոնեայ եմ և ոչ զոհեմ աստուածոցդ ձերոց:

Յայնժամ հրամայեաց դատաւորն զջիղս ոտից նորա հատանել և արկանել չուան, և քարշել ընդ ամենայն քաղաքն. և արարեալ այսպէս՝ ածին առ դատաւորն: Ասէ ցնա դատաւորն. Տեսէ՞ք զսկիզբն տանջանացդ ձերոց. ընդէ՞ր ոչ փրկէ զձեզ 'ի չարչարանաց այտի՝ յոր յուսացեալ էք. այժմ զոհեցէք զի մի՛ չարաչար մեռանիցիք, և ոչ ոք կարէ փրկել զձեզ 'ի ձեռաց իմոց։ Պատասխանի ետ Փիլիմոն և ասէ. Շատ է քեզ այսուհետև. յամենայն 'ի տանջանս քո՛ լինի ինձ Տէր Յիսուս իմ իբրև զպարիսպ ադամանդեայ, և փրկէ զիս յամենայն մեքենայից քոց։ Եւ լուեալ զայս դատաւորին՝ բարկացաւ յոյժ. և հրամայեաց զնա կախել զպարսպին զոստոյն, և նետաձիգ առնել 'ի մարմինն Փիլիմոնի, յոտից մինչև ցգլուխն. և ասէ. Տեսանեմ թէ փրկէ՞ զքեզ Յիսուսն քո 'ի ձեռաց իմոց։

Իսկ երանելին Փիլիմոն կախեալ՝ սկսաւ ասել այսպէս. Ե՛կ, Յիսուս, որ անօգնականից օգնական ես, և ցոյց այսմ անյոյս դատաւորին, զի ոչ կարասցէ սանանել այնոցիկ՝ որ 'ի քեզ են յուսացեալ։ Եւ թափեցան նետք նորա և 'ի նա ոչ մերձեցան, և 'ի գետին ոչ անկան, այլ 'ի յանդգն մնացին ցցեալ։ Եւ յայտնեցաւ դատաւորին այս և ասէ. Արդեօք կենդանի՞ իցէ այրն։ Ասեն ցնա. Կենդանի է և խօսի մեծամեծս։ Յայնժամ դատաւորն եկն 'ի տեղին, և համբարձ զաչս իւր 'ի վեր զի տեսցէ թէ արդարև կենդանի է. և անդէն արձակեալ նետ մի 'ի հողմոյ անտի և հարեալ զակն նորա զաջոյ և անդէն կուրացոյց զնա. և հրամայեաց ածել զնա և ասէ. Փիլիմոն, ուստի՞ եղև քեզ այդ կախարդութիւն, ոչ յամեցուցից զքեզ ընդ նոսա. բայց ահա 'ի պատճառս քո կուրացաւ ակն իմ, այժմ աղաչեմ զքեզ՝ բժշկեա զիս, հաւատամ թէ կարող ես բժշկել՝ թէ կամիս։

Ասէ ցնա Փիլիմոն. Եթէ աղաչեմ այժմ առ Աստուած իմ, ասես եթէ կախարդութեամբ արար զայս. այլ յորժամ ելանեմ 'ի մարմնոյ աստի, եկեսցես 'ի տեղին ուր դնեն զիս, և առցես հող և դիցես 'ի վերայ աչաց քոց և բժշկեսցիս։ Լուեալ զայս դատաւորին՝ հրամայեաց գլխատել զՓիլիմոն և զԱպողղոս։ Եւ առին զմարմինս նոցա և բերին ուր կայր մարմինն Ասկղեայ. և իբրև թաղեցին, երթեալ յետ երից աւուրց դատաւորին՝ ուր կայր մարմինք նոցա, և առ հող սակաւ մի և եդ 'ի վերայ ակինն, և ասէ. Յանուն Յիսուսի՝ վասն որոյ սոքա վկայեցան՝ դնեմ զհողս զայս 'ի վերայ աչաց իմոց և բժշկեցայց. զի ոչ գոյ այլ Աստուած բայց 'ի քէն, Յիսուս։ Եւ զայս ասացեալ՝ անդէն վաղվաղակի ողջացաւ. եղև ուրախալից և ասէ. Եւ ես քրիստոնեայ եմ և ծառայ Յիսուսի Քրիստոսի։

Եւ հրամայեաց բերել ծիրանիս և խուղս անուշունս, և պատեաց զմարմինս նոցա, և թաղեաց 'ի միասին զՓիլիմոն և զԱպողղոս գրակարդաց և զԱսկղաս։ Եւ հաւատաց նա յԱստուած, և հրամայեաց արձակել զամենայն քրիստոնեայսն։ Եհաս համբաւ առ Դիոկղետիանոս թագաւոր և ասեն, թէ՝ Արիանոս դատաւոր Հնդկաց՝ քրիստոնեայ եղև, և ոչ ևս զոհէ աստուածոցն։ Յայնժամ Դիոկղետիանոս առաքեաց հրեշտակս կարդալ զնա առ ինքն։ Եւ իբրև չոգան հրեշտակքն առ նա, ետ նոցա կաշառս դահեկանս և ասէ. Շնորհեցէք ինձ երթալ և խօսել ընդ եղբարսըն իմ. և թողին նմա երթալ ժամ մի։ Եւ չոգաւ առ մարմինն Փիլիմոնի և ասէ. Ողջոյն ձեզ, որ մերձաւոր 'ի լոյս էք, օրհնեմ զձեզ, աղաչեցէք զՓրկիչըն մեր Յիսուս Քրիստոս վասն մեր, զի և ես զվկայութիւնս իմ կատարեցից։ Զայս նորա ասացեալ՝ սկսաւ մարմինն Փիլիմոնի խօսել 'ի տապանէն. Ահա յառաջ քան զթագաւորելդ քո ծանեաւ զքեզ Յիսուս. զի արժանի եղիցիս պսակին՝ զոր տալոցն է քեզ և մեզ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, և մեծ զօրութիւնք կատարին քև։ Ջանացիր և վաստակեա, զի ահա աթոռ քո պատրաստեալ է յերկինս, և զպսակն քո Միքայէլ ունի 'ի ձեռինն, զի պսակեսցէ զքեզ 'ի գալստեան Փրկչին մերոյ։ Եւ ասէ ցնա. Երթ ընդ հրեշտակսդ։ Եւ խնդրեցին վասն նորա յԱստուծոյ, զի և նոքա եղիցին մերձաւոր գիտութեանն Քրիստոսի. զայս ասացին ննջեցեալ մարմինք վկայիցն։

Կային զարմացեալ չորք հրեշտակքն. իսկ Արիանոս ցնծայր և ուրախ էր 'ի հաւատսն. և եմուտ 'ի տուն իւր հանդերձ հրեշտակօքն, և ընտրեաց եօթն այր 'ի ծառայից իւրոց, և ասէ ցնոսա. Եկայք ընդ իս մինչև յԱղէքսանդր քաղաք, և մնացէք անդր վասն մարմնոյ իմոյ, զի անդ ունիմ կատարել զվկայութիւնս իմ. եթէ հրամայէ ինձ անկանել 'ի գուբ կամ ընկղմել 'ի ծով, եկայք դուք 'ի վեց ժամու և գտանիցէք զմարմինս իմ, և տարայք դիք առ Փիլիմոնի վկայի։

Զայս ասացեալ նորա՝ չոգաւ առ Թագաւորն։ Իբրեւ ետես զնա Թագաւորն՝ ասէ. Ողջ եկիր Արիանոս, որ գիրգդ էիր Աղեքսանդր քաղաքի։ Պատասխանի տուեալ Արիանոսի եւ ասէ. Ողջ ես եւ դու, տէր իմ, որ առաջնորդես ինձ 'ի կեանսն յաւիտենից։ Եւ հրամայեաց նմա Թագաւորն՝ ընդ ինքեան երթալ 'ի բաղանիսն. եւ պաշտօնէից կռոցն հրամայեաց լուցանել զղամբարս իւրեանց 'ի դուրս բաղանեացն. եւ հրամայեաց բերել զԱպողոնն զմեծ աստուածն իւր՝ զի աղաչեսցեն զնա զոհել զդատաւորն Հնդկաց, յելանելն նորա 'ի բաղանեաց անտի։ Եւ ասէ ցնա Թագաւորն. Զոհեա մեծի աստուածոյն Ապողոնի յառաջ քան զմեր ընթրել։

Պատասխանի ետ Արիանոս եւ ասէ. Մեծ սքանչելիս տեսի, Թագաւոր, վասն վկայիցն Քրիստոսի, եւ ոչ կարեմ թողուլ զՓրկիչն մեր։ Եւ բարկացեալ Դիոկղետիանոսի՝ հրամայեաց զօրականին յերեկորեայ երթալ 'ի Թէատրոն անդր. եւ հրամայեաց փորել ըզգետինն խոր յոյժ. եւ արարին որպէս եւ հրամայեաց նոցա։ Եւ իբրեւ առաւօտ եղեւ՝ չոգաւ Թագաւորն 'ի տեղին, եւ հրամայեաց եւ ածին զԱրիանոս դատաւոր. եւ հրամայեաց զծառայսն՝ կապել զոտս նորա եւ ըզձեռս նորա պղնձի շղթայիւք, եւ արկանել զնա 'ի խորխորատն եւ թաղել։ Եւ հրամայեաց արկանել զաթոռ իւր 'ի վերայ նորա եւ նստաւ։ Եւ ասէ ցզօրականսն. Աղէ՛ խաղ ինչ խաղացէք եւ տեսանեմք այսուհետեւ գա՞յ Յիսուսն փրկել զդա 'ի ձեռաց իմոց։ Եւ իբրեւ կատարեցին զխաղն՝ գնաց յապարանս իւր։ Եւ իբրեւ եղեւ Թագաւորն 'ի քուն, ետես զշղթայսն լուծեալ 'ի ձեռաց նորա եւ յոտից նորա. եւ մինչդեռ Դիոկղետիանոս 'ի դողման կայր՝ ետես զԱրիանոս դատաւոր եւ խռովեցաւ յոյժ, եւ ասէ. Եթէ 'ի պալատէ աստի ոք յարեաւ 'ի վերայ իմ։ Ասէ Արիանոս ցԹագաւորն. Մի՛ երկնչիր, ոչ ոք յարեաւ 'ի վերայ քո, ես եմ Արիանոս զոր արկեր 'ի խորխորատն, եւ ասէիր եթէ տեսանեմ եթէ կեցուցանէ զդա Յիսուսն՝ եթէ ոչ։ Ահա եկն Փրկիչն մեր յոր յուսացաք, եւ եհան զիս 'ի գբոյ անտի, եւ ելոյծ զկապանս իմ եւ հանգոյց զիս 'ի տառապանաց։ Լուեալ զայս Թագաւորէն և բարկացեալ յոյժ և կայր զարմացեալ և ասէ. Ոչ ոք տեսեալ երբէք զայսպիսի մոգութիւն: Եւ հրամայեաց բերել քուրձս և լնուլ աւազով և թաղել 'ի ներքս զնա: Յայնժամ սկսան աղաղակել չորք զօրականքն և ասեն ցԹագաւորն. Եւ մեք քրիստոնեայք եմ և ծառայք Աստուծոյ, զի՞նչ մեղաւ քեզ ծառայդ Աստուծոյ: Ասէ ցնոսա Թագաւորն. Վասն զի կախարդ է: Ասեն ցնա. Ոչ է կախարդ, այլ ծառայ Յիսուսի Քրիստոսի. Նշանս յաղթութեան եցոյց մեզ, զի ամենայն մարդ եթէ մեռանի 'ի ներքոյ լերանց՝ կարող է Աստուած յարուցանել զնա. որպէս և մեք զի զմարմինս մեր տացուք 'ի մահ Արիանոսի, զի ընդ նմա յարիցուք:

Բարկացաւ Թագաւորն յոյժ և ասէ. Զառանցեալք, զոր խնդրէքդ՝ այժմ շնորհեմ ձեզ. յառաջ սիրելի էիք իմ. բայց այժմ զիա՞րդ ատեցէք զիս, և զմահն Արիանոսի ընկալարուք, դուք գիտէք: Պատասխանի ետ աստուածաբախտն և ասէ, քանզի նա էր մեծ 'ի նոսա. Կարող է Աստուած՝ առ որ դիմեցաքն, ապրեցուցանել զմեզ յամենայն չար խորհրդոց. քանզի Քրիստոսի շնորհքն՝ մեզ կեանքեն. յայնժամ Դիոկղետիանոս կայր հիացեալ: Ասէ Արիանոս դատաւոր ցԴիոկղետիանոս. Մի՛ խափաներ զմեզ, քանզի ծարաւի եմք մեք երթալ յաղբիւրն մեր: Եւ հրամայեաց և զնոսա արկանել 'ի քուրձս աւազախառն և ընկենուլ 'ի ծով: Եւ յընկենուլ անդր՝ պատահեաց դելփին ձուկն մի և եկուլ զքուրձն: Եւ ծառայք Արիանոսի իբրև տեսին՝ սկսան ասել. Տէրն ասէր, եթէ զիս միայն գտանէք. արդ ահա սոքա չորք են ընդ Արիանոսի, արդեօք ո՞չ իցէ նա:

Յայնժամ դելփինն սկսաւ խօսել իբրև զմարդ, եթէ՝ Արիանոս դատաւոր է և չորք զօրականքն ընդ նմա. քանզի շնորհք Աստուծոյ ծագեաց 'ի վերայ տեառն ձերոյ, և չորս զինուորս առ 'ի կեանս յաւիտենից, և պսակեսցին 'ի միասին և փառաւորեսցին: Եկայք առէք զսոսա հանդերձ քրձօքս, և տարայք դիք ընդ Փիլիմոնի և ընդ Ասկղայ և ընդ Ապողղոսի գրակարդացի: Երանի տեղւոյն այնմիկ որ ընդունի զմարմինս սուրբ վկայիցն, և երանի որ ընթեռնուն և եկեսցեն ՚ի գիտութիւն ճշմարտութեան և ծանիցեն զի գլուխ է գուսանաց և մեղաւորաց, և ընտրեաց զնա Աստուած։ Եւ զայս ասացեալ ձկանն՝ մեկնեցաւ ՚ի նոցանէ։

Եւ նոքա առին զմարմինս սրբոյն հանդերձ քրձօքն և մտին ՚ի նաւ. և նաւեցին զերիս տիւս և զերիս գիշերս. և ամենեքեան ննջեցին ՚ի նաւ անդր։ Եւ ղեկավարն մինչդեռ ննջէր՝ ձայն եղև առ նա և ասէ երկիցս անգամ. Թէոդիտոն, այս ինքն է տեղի՝ ուր դնելոց էք զմեզ։ Եւ յարեաւ ղեկավարն և ուրախ եղև ընդ սքանչելիսն զոր ետես, և փառաւորէր զԱստուած։ Եւ երթեալ ՚ի քաղաք անդր՝ պատմէր քաղաքացւոցն. և ելեալ ընդ առաջ հանդերձ ոստովք և պսակօք, և տարան ՚ի տեղին՝ ուր կայր մարմին սրբոյն Փիլիմոնի և Ասկղայ և Ապողղոնի, և եդին անդ։ Եւ փառաւոր առնէին զՏէր մեր Յիսուս Քրիստոս, զի նմա վայելէն փառք և պատիւ ընդ Հօր և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Պատմութիւն վարուց Սրբոյն փոկասու եպիսկոպոսի։

Ընդ ժամանակս բարեկարգութեանն յեօթներորդի հինգերորդի հաւատոյն հաստատութեան, Պանփիլոս ոմն պոնտացի՝ բարեգործ և քրիստոնեայ, և ունէր կին առաւել ևս բարեգործ. և էր այրն նաւագործ և նաւապետ և հմուտ ամենայն նաւարկութեան գնացից։ Եւ ոչ գոյր նոցա որդեակ. ուստիւք և աղօթիւք խնդրէին 'ի Տեառնէ Աստուծոյ տալ նոցա որդիս՝ 'ի սփոփանս իւրեանց կենացն։ Եւ լուաւ Աստուած աղօթից նոցա, և յղացաւ կին նորա Մարիամ, և ծնաւ որդի յաւուր ծննդեանն Քրիստոսի. և ուրախ եղեն զի մեծ արար Տէր զառնելն իւր ընդ նոսա. և տուաւ աղօթից նոցա պտուղ որդի։ Եւ ասէ հայր նորա. Սա հանգուցէ զմեզ, ոչ միայն 'ի զբօսանաց կենցաղավարութենէս, այլ և 'ի մեղաց ապրեցուցէ զմեզ, և յորդորեսցէ յաստուածգիտութեան հրահանգս։ Եւ յութերորդ աւուրն տան նմա զքրիստոսական կնիքն և անուանեն զնա Փոկաս. և սնուցանէին զնա առաւել երկիւղիւ՝ քան որ ինչ 'ի տղայութեանն յարմարի կերակուր և ըմպելի։

Եւ իբրև եղև նմա հինգ ամ՝ ետուն զնա յուսումն գրոց սրբոց, և ուսանէր և իմաստնանայր առաւել քան զհասակակիցս իւր. և 'ի պահս պնդութեան զինքըն կրթէր, և յամենայն վարս բարեգործութեան տարրանայր, և հանապազորդ աղօթէր 'ի տուէ և 'ի գիշերի։ Եւ հայր և մայր նորա զարմացեալ կային ընդ յառաջադիմութիւն մանկանն օր ըստ օրէ 'ի լաւագոյնսն, և գոհանային զՏեառնէ 'ի լաւագոյնսն կրթութեան մանկանն, 'ի շնորհաց սուրբ Հոգւոյն առաջնորդել յարդարութիւնսն։

Եւ իբրև եղեն ամք տասն, խորհէին ծնօղք նորա զի զնաւարկութեան արուեստ ուսցի։ Եւ եղև ձմերել նաւու միոյ աղեքսանդրացի 'ի Պոնտոս. և իբրև եհաս գարունն՝ կամեցան գնալ, և ժողովէր բազմութիւն յոյժ զի արկցեն զնաւն 'ի ծով։ Եւ էին արք հազար և եօթն հարիւր, որք շուրջ առեալ ըմբռնեցին հրամանաւ նաւապետին, որում անուն էր Թէոն, կամեցան ընկենուլ զնաւն 'ի ծովն. և անդէն լծարան նաւուն խորտակեցաւ։ Եւ երիտասարդք երեք ընկրկեալք 'ի բազմութենէն՝ վախճանեցան. և սաստիկ խռովութիւն լինէր ամենայն բազմութեանն. և 'ի տրտմութենէն նաւապետին նիրհեալ՝ տեսանէր զոմն զի ասէր. Թէոն, Թէոն, արի կաց այր դու, և մուտ 'ի քաղաքն, և խնդրեա զՓոկաս զորդին Պանփիլեայ և Մարիամու, զի նա եկեալ փրկեսցէ զձեզ 'ի վտանգիցդ՝ զոր բանսարկուն ածեալ 'ի վերայ բազմութեանդ՝ որք 'ի նաւիդ էք։ Եւ նոյնժամայն յարուցեալ ընթացաւ 'ի քաղաքն. աղաղակեաց 'ի ձայն մեծ և ասէ. Ողորմեցարուք մեզ, ով արք քաղաքիս, և ցուցէք զմանուկն Փոկաս՝ որդի Պանփիլեայ և Մարիամու։ Եւ ժողովեցան առ նա քաղաքն ամենայն, և պատմեաց նոցա զեղեալսն, և զտեսիլն որ երևեցաւ. և ասէ ցնոսա. Աղաչեմ զամենեսեան լինել մեզ առիթ փրկութեան։ Եւ ստուգեալ զհայր մանկանն և զմայր՝ ածեն զմանուկն Փոկաս 'ի ժողովն։ Եւ տեսեալ նաւապետն զմանուկն Փոկաս՝ յերևմանէն ծանեաւ թէ ըստ տեսլեանն նա է. և անկաւ առ ոտս նորա արտասուօք և ասէ. Ծառայ Աստուծոյ բարձրելոյն՝ թագաւորին անմահի, մի դանդաղիր գալ առ մեզ և փրկել զմեզ 'ի վտանգաւոր վշտացն՝ որ պատահեցաւ մեզ 'ի բանսարկուին չարութենէ. և դարձեալ պատմեաց նմա զտեսիլն և զոր ինչ եղեն։ Իսկ սուրբ մանուկն Փոկաս յօժարութեամբ երթայր զհետ առնն։ Եւ իբրև մերձ եղև 'ի նաւն՝ ճչեաց դեն և ասէ. Փոկաս, ծառայ Աստուծոյ, զի՞ գաս հալածել զիս 'ի նաւէս՝ որ հանդերձեալս էի կորուսանել զսոսա. զայս ոչ 'ի կամաց՝ այլ 'ի հրեշտակաց խոշտանգեալ ասաց: Եւ լուեալ բազմութեանն՝ սքանչացան. և ահիւ ըմբռնեալ՝ աղաղակէին առ սուրբն Աստուծոյ Փոկաս և ասէին. Փրկեա զմեզ 'ի խարդախութենէ չարիս՝ որ այսպէս խոստովանի ակամայ զկորուստն մեր: Իսկ սուրբն Աստուծոյ քաջալերէր զնոսա մի զարհուրել 'ի խարդախութենէ չարին: Եւ ասէ առ դեն. Քրիստոս որդի Աստուծոյ, որ ելոյծ զզօրութիւն քո՝ կամաւոր խաչելութեամբն իւրով, հալածեսցէ զքեզ յանապատն՝ որ ոչ կարես մեղանչել ազգի մարդկան: Իսկ չար դեն շարժէր զնաւն որպէս թօթափելով 'ի ծով անդր զմարդիկն և որ ինչ 'ի նաւին էր. և զահի հարեալ բազմութեանն՝ աղաղակեցին առ սուրբն Աստուծոյ միաբան և ասացին. Օգնեա մեզ, զի կորնչիմք ահաւասիկ 'ի վտանգէս՝ որ յարոյց 'ի վերայ մեր: Եւ նա քաջալերէր զնոսա և ասէր, մի երկնչել 'ի չարէն. և եդեալ ծունր՝ կայր յաղօթս և ասէր արտասուօք առ Աստուած.

Թագաւոր արդար և բարերար, որ խորտակեցեր զգլուխ վիշապին 'ի վերայ ջուրցն, և զըմբռնեալս 'ի նմանէ կորզեցեր 'ի կեանս, և ետուր զօրութիւն քոյ ծառայից՝ լուծանել զնորա խարդախութիւն և զզօրութիւն, և այժմ արա զգութ մարդասիրութեան քո առ ծառայս քո, և զչարն գործակցօք իւրովք նկուն արա, և ապրեցո զսոսա 'ի բռնութենէ չարին, զի փառաւորեսցի անուն քո սուրբ 'ի քոյոց արարածոց. զի դու ես փառաց և պատուոյ արժանի. և քեզ փառք յաւիտեանս: Եւ ասացեալ բազմութեանն զամէնն. սաստեաց այսոյն, և անդէն վաղվաղակի որպէս փոթորկեալ հողմ սաստիկ՝ չքոտեցաւ 'ի միջոյ, և եղև խաղաղութիւն մեծ 'ի ծովուն և 'ի նաւին: Եւ ապրէին ամենեքեան և փառաւոր առնէին զԱստուած ամենակալ. և նա խրատէր զնոսա երկիւղիւն Աստուծոյ՝ 'ի հաւատս և 'ի սէր և 'ի յոյս կենացն յաւիտենից, և մի երկնչել 'ի դիւաց. զի ոչ զօրեն հաւատացելոց մերձաւորաց Քրիստոսի, թէպէտ և 'ի կերպս կերպս լինել զարհուրեցուցանեն զպարզամիտսըն՝ որք ոչ գիտեն զնորա դաւաճանութիւնն: Եւ այլ ևս բազում խօսեցաւ ընդ նոսա յաղագս Քրիստոսի զօրութեանն, և դիւացն առաջօք երևութից, և յուղարկեաց զնոսա խաղաղութեամբ ուր երթալոցն էին. և ինքն դարձաւ ՚ի տուն իւր առ ծնօղսն իւր։ Եւ տեսեալ՝ խնդութեամբ բերկրեալ գոհանային զԱստուծոյ ՚ի վերայ անպատում շնորհացն զոր Տէր եցոյց նոցա ՚ի վերայ մանկանն։ Եւ ել հռչակ զնմանէ ընդ ամենայն երկիրն Պոնտոսի. և որ ընդ ծովն նաւէին՝ պատմէին զայս ամենայն։ Եւ եղև նաւու մի կառացեալ ՚ի ծովուն ՚ի մէջ վիմաց և ծփեալ ՚ի սաստիկ ալեաց որ մերձ էր յԱմասիա, աղաղակեցին առ Աստուած։ Եւ տեսին քաղաքացիքն զի մերձ էր ՚ի խորտակել, և ազդ արարին սրբոյն Փոկասու. և նա վաղվաղակի անդր հասանէ յեզր ծովուն. և ելեալ ՚ի կուրն երկու արամբք՝ փութանակի հասանէր ՚ի նաւն. և մերձեալ՝ կայր յաղօթս հանդերձ արտասուօք առ Աստուած, զի փրկեսցէ զնաւակոծեալսն և դադարեցուցանէ զալիսն, և ապրեցուսցէ զվտանգեալսըն. և անդէն խաղաղանայր ծովն։ Եւ երիտասարդ մի զոր ունէր այս չար, աղաղակեաց ՚ի ձայն մեծ և հնչեաց ծովն և ասէ. Զի՞ եկիր այսր, Փոկաս, հալածիչ դիւաց, գիտեմք զքեզ ո՛վ ես դու որ առեր իշխանութիւն ՚ի Քրիստոսէ՝ նաւաց և նաւավարաց և ծովու, փրկել յորոգայթից մեր՝ յանուն նորա։ Եւ սուրբն Աստուծոյ սաստեաց այսոյն, և վաղվաղակի որպէս ծուխ պակասեալ եղև ՚ի ծովէն և ՚ի նաւէն։ Եւ եղև խնդութիւն մեծ որք ՚ի նաւին էին. և քարշեալ ընկեցին զնաւն ՚ի ծովն, և յուղարկեաց զնոսա ուր երթալոցն էին։ Եւ մատուցին նմա ոսկի, և նա ոչ առնոյր յանձն. և աղաչեցին զնա զի առցէ և տացէ աղքատաց. և ետուն նմա հարիւր դահեկան։ Եւ դարձաւ ՚ի քաղաքն Ամասիա և բաշխեաց զայն կարօտելոց։ Եւ որպէս զանմարմին ՚ի մարմնի վարս ստացեալ ունէր, հանապազորդ աղօթիւք և պահօք և ուսմամբ աստուածայնոց գրոց զօրանայր. և բազում հիւանդաց և այսահարաց եղև բժշկութեան առիթ, յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի։ Եւ այնպէս հռչակեցաւ անուն նորա ընդ ամենայն երկիրն. և երանէին զծնօղսն նորա արք և կանայք, մեծամեծք և տնանկք։

Եւ դէպ եղև նաւու միոյ գալ 'ի Պոնտոս, և ծըփեալ յալեաց ծովուն 'ի բազում աւուրս, և ոչ ևս կարացին 'ի նաւահանգիստն հասանել ուրեք. և աղաչեցին առ Աստուած, և բարեխօս առ Տէր զսուրբն Աստուծոյ զՓոկաս ունէին։ Եւ ազդումն լինէր սըրբոյն Փոկասու 'ի վերին տեսչութենէն, վտանգք և ծփանք արանցն և նաւին յալեացն։ Եւ հասանէր ազդեցութեամբ Տեառն 'ի ծովեզրն, և ըստ բարի պատահման գտանէ նաւակ մի պատրաստական փոքրիկ 'ի ծովեզերն, հանդերձ երեք արամբք. և ըստ յաջողելոյն Աստուծոյ եհաս առ նոսա, և աղաղակեաց առ Տէր, և եկաց յաղօթս ամենեքումբք հանդերձ և ասաց այսպէս.

Տէր Աստուած ամենակալ, որ ետուր զօրութիւն ծառայի քո 'ի վերայ ծովու՝ ապրեցուցանել յանուն քո զնաւապետս և զնաւակոծեալս, զի դու ես տէր ծովու և ցամաքի. որ և 'ի ձեռն ծառայի քո Մովսէսի հերձեր զծովն կարմիր և անցուցեր զժողովուրդն Իսրայէլ, և զթշնամին նոցա զՓարաւոն հանդերձ զօրօքն իւրովք ընկղմեցեր. որ և զՅովնան ապրեցուցեր՝ զանկեալն 'ի ծով 'ի խռովութենէ քումմէ և կլեալ կիտին։ Որ և 'ի ձեռն սրբոյն Գրիգորի Սքանչելագործի զծովն ցամաքեցուցեր, և արարեր խաղաղութիւն երկուց եղբարց բարբարոսաց, զերկիրն վիճակաւ տրւեալ՝ առաւել քան զառաջինն շահիւք մեծարեալ, 'ի փառս և 'ի պատիւ քեզ։ Եւ այժմ արա 'ի ձեռն ծառայիս քո զփրկութիւն վտանգելոցս՝ յանուն քո, որով կեան առ հասարակ արդարք և մեղաւորք, զի քո են արարածք. և քեզ գոհութիւն և փառս մատուցանեն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Եւ ասացեալ ամենեցուն զամէնն. և դադարեաց ծովն 'ի խռովութենէ իւրմէ. և յուղարկէր զնաւորդսն հանդերձ խնդութեամբ՝ 'ի փառս և 'ի գովութիւն Արարչին։ Եւ դառնայր 'ի տեղի իւր առ ծնօղսն իւր. և օրհնէր նոքօք հանապազ զՏէր մեր Յիսուս Քրիստոս։ Եւ լնոյր քան ամ Փոկասու, և առաւել'ի յառաջադէմն նկրտէր. և այլ ևս բազմաց նաւակոծելոց լինէր նաւահանգիստ խաղաղութեան յանուն Տեառն։ Եւ նա ոչ հպարտանայր յաղագս այսպիսի շնորհի տուելոյ նմա 'ի վերուստ, այլ էր խոնարհ սըրտիւ և հեզ բարուք, և առ կարօտեալս բարեգործ, աստուածասէր և եղբայրասէր, անվեհեր 'ի բարեպաշտութեան ջանս. անյագ ցանկութեամբ յաստուածային վարսն, հանապազորդ աղօթիւք և պահօք պնդութեամբ. ոչ 'ի գովութիւնս զուարճանայր, այլ Աստուծոյ զփառսն մատուցանէր մաքուր սրտիւ, մաքուր և ամենայն զգայարանօք: Եւ ոչինչ ոչ նուազէր 'ի բարի գործոց, այլ օր ըստ օրէ յաւելուածովքըն լինէր. և ոչ 'ի կենդանութեանն միայն էր ալէկոծելոց փրկիչ, այլ և յետ վախճանի տուեալ նմա պարգև յԱստուծոյ որք վտանգին 'ի ծովու. բարեխօսութեամբ նորա որք կարդան առ Տէր՝ գտցեն զփըրկութիւն անձանց: Եւ յառաքինութեան վարս երևելի և սքանչելագործ էր 'ի տղայութենէ մինչև ցվախճան, և հռչակաւոր առ ամենեսեան, առ հաւատացեալսն և առ անհաւատսն:

Եւ յետ քսան ամի՝ կոչեցաւ 'ի սարկաւագութիւն, և առաւել ևս յորդորէր 'ի բարեպաշտութեան ջանս. և ապա յետ երեսուն ամի՝ 'ի քահանայութիւն. ևս առաւելոյր և առատանայր 'ի բարեգործութիւնս ամենայն: Եւ յետ երեսուն և երից ամաց յեպիսկոպոսութիւն կոչեցաւ: Ի սարկաւագութիւն ոչ բռնազբօսելով էանց ընդ ամենայն աստիճանսն, այլ 'ի սըրբոցն բռնադատեալ եղև 'ի կոչումն սարկաւագութեան և քահանայութեան և եպիսկոպոսութեան. և զկրօնաւորութեան զվարսն ընդ ամենեսեան խառնեալ՝ արդարև վերին կոչմանն որ 'ի Քրիստոս՝ խորհէր: Եւ ըստ Ճշմարտութեան աւետարանին հովուէր զժողովուրդն Տեառն. ուշ եդեալ 'ի յառաջադէմն խորհելով, և գործով միշտ լինէր. ոչ յումեքէ 'ի հակառակացն դրդուեալ, այլ հոգւով վայելչութեամբ՝ անսասանելի հանապազ կեայր 'ի պատուիրանս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. որում փառք յամենայն սըրբոց յաւիտեանս. ամէն:

Պատմութիւն վարուց Սրբոյն Փոկասու եպիսկոպոսի:

Քանզի բազում անգամ 'ի գալստենէ Փրկչին Յիսուսի Քրիստոսի գթասիրի և մարդասիրի և իմաստնոյ և հզօրի և բժշկի և հովուի և վարդապետի և Տեառն և Աստուծոյ, զհռչակաւոր և զանձառ, ըզսուրբ և զանարատ խորհուրդն կալեալ քրիստոնէից, և կնքեալ 'ի ձեռն բազում և մեծամեծ նեղութեանց և պահոց և հալածանաց և փախստեան և համբերութեան, և անարգութեան և փառաց, և չարչարանաց և փրկութեան. և բազում անգամ սուրբք և անարատ և հաւասար հրեշտակաց առաքեալք՝ չարչարեալք վասն անուանն և փառաւորեալ խորհրդեանն, ետուն մեզ օրինակ զՔրիստոսի չարչարանքն, և զիւրեանց զանպարտ և զանխոտոր հաւատոցն: Կարեւոր համարեցաւ և մեզ ամենեցուն և ամենայն ումեք՝ զանբիծ և զգեղեցիկ և զփառաւոր կրօնաւորութիւն երանելեաց վկայիցն և յիշատակարան՝ 'ի ձեռն գրոյս այս նշանակել ձեզ, եղբարք, որ բնակեալդ էք 'ի Պոնտոս և 'ի Բիւթանիա և 'ի Պամփիղադոնիա և 'ի Միւսիա և 'ի Գաղատիա և 'ի Կապպադովկիա և 'ի Հայս. զի նմանողք եղեալք նոցա նահատակութեանցըն՝ և մեք նախանձաւոր լիցուք: Քանզի յիշելով զնոցա չարչարանսն, որ հրով և սրով և խաչիւ և գազանօք և հեղձամղձուկ լինելով 'ի ջրակոյտս, և քերանօք և պէսպէս տանջանօք և զանազան խոշտանգանօք. զի և մեք խրատիմք յառաջադէմն նկրտիլ, և մեծամեծ բարեաց բաժանորդ լինել մեզ ակն ունիմք 'ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որում փառք յաւիտեանս. ամէն:

Յոյժ և առաւել յայտնի և երևելի քաջութիւն և համբերութիւն երանելւոյն Փոկասու, որ ոչ միայն 'ի ձեռն հրոյ և տանջանաց, այլ մինչդեռ էր յաշխարհական կեանս, գեղեցիկ և անարատ կրօնաւորութիւն կրօնաւորեցաւ, միշտ առաջի աչացն ունելով զՓրկիչն Յիսուս Քրիստոս. զի եթէ էր հնար այնչափ երկայն պատմութիւնս 'ի յիշատակարանս կարգել զնմանէ, զիա՞րդ արդեօք մեծ սոսկումն չլինէր լսողաց:

Եւ արդ էր կրօնաւորութիւն սրբոյն Փոկայ այսպիսի. Մինչդեռ յաստիս մանկութեանն էր, ոչ պատրեցաւ 'ի ծանր և յապականիչ օձէն. այլ սուրբ և անբիծ աղաւնին Տեառն՝ 'ի տղայութենէն լծաբարձ և բարեպաշտօն և առ ամենեսեան երևելի՝ որոց 'ի կեանս աշխարհիս. որք աղքատ էին՝ օգնական և ձեռնտու լինէր. մեծատանց խրատող և յորդորիչ 'ի գեղեցիկն և յօգտակարն. և միանգամայն ասելով, որ միանգամ բարեպաշտութեամբ՝ ընդ ամենեսեան ամենայն ինչ եղև: Այլ և զհանդէս ճգնութեան նորա ոչ ոք 'ի մարդկանէ ըստ արժանեացն պատմել կարասցէ. սակայն և մեք խուն մի նշանակեսցուք ձերում աստուածպաշտութեանդ:

Ի ժամանակս Տրայիանոսի թագաւորութեանն, բազմաց յափշտակեալ 'ի քրիստոնէից երամէն յաղագս զոհից մոլեկան կռոցն, ապա և այնմ երանելւոյ 'ի խնդիր լինէին իբրև ական պատուականի, զոր կորուսեալ ստացողին՝ կոչէ զբարեկամս իւր և զազգականս զի խնդրեալ գտանիցէ: Նոյնպէս և մեծ խուզիւ զհովիւն հետազօտէին աստուածամարտքն. քանզի էր արդար և սուրբ և ճշմարիտ հովիւն բանաւոր հօտին Տեառն. և ըմբռնեալ զերանելին ածին յատեան:

Ափրիկանոս եպարքոս ասաց. Ա՞յդ է Փոկասն որ ասէ չլինել աստուածս, և ոչ զինքնակալն Տրայիանոս համարի աստուած: Արդ ասա ինձ, ո՞չ ամենայն պատերազմունք ընդ ձեռամբ նորա ընկրկեցան. արդ ո՞վ այլ ոք իցէ աստուած: Իսկ Փոկաս լուռ կայր: Ափրիկանոս ասաց. Զի՞նչ ասես առ այդ, չտա՞ս պատասխանի, եթէ ո՛չ գիտես յո՛վ եկիր: Փոկաս ասաց. Եթէ վասն Աստուծոյ իմոյն ասես որ յերկինս է՝ բարիոք է, ապա եթէ վասն մարդոյ ասես եթէ աստուած է, ամենեւին մի՛ ակն ունիր յինէն լսել ինչ: Աֆրիկանոս ասաց. Ինքնակալքն չե՞ն աստուածք: Փոկաս ասաց. Այդ միայն չէ՞ շատ Տրայիանոսի՝ զի թագաւոր անուանի, այլ դու և զանզուգական անուն դնես նմա:

Աֆրիկանոս ասաց. Չքև զի՞ գան քրիստոնեայքդ՞ իբրև պաստուծով: Փոկաս ասաց. Քա՛ւ լիցի և զմըտաւ անգամ ումեք ածել զայդ, քանզի մարդիկ որ յարեան թաթաւեալ և ընդ մահու գրաւեալ և ընդ մեղս զանկեալ, և պարտականք համար տալոյ ընդ կենացս և ընդ աստի գործոցս և ընդ կրօնիցս, և ընդ դատաստանաւ աներևութին Աստուծոյ վարեալք, զիա՞րդ կարեն զայնպիսի ահաւոր անուն բաւական կրել: Աֆրիկանոս ասաց. Զիա՞րդ վասն քո համբաւն մինչև ցինքնակալն եհաս:

Փոկաս ասաց. Ոչ իբրև զԱստուծոյ՝ այլ իբրև ըզմարդոյ Աստուծոյ. քանզի յոյժ աննման եմ առաքելոյն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի կրօնաւորութեանն: Ուստի և զայս զոր տեսանես զիս անարժան եղեալ եպիսկոպոս, ոչ իբրև զԱստուած որպէս դուդ կարծես, այլ իբրև զհովիւ բանաւոր հօտին Տեառն պատուեն զիս: Արդ և դուդ զի զիշխանութիւնդ հաւատացար 'ի Տեառնէ՝ այնու աղագաւ Աստուա՞ծ անուանել: Աֆրիկանոս ասաց. Բազում քողոստիկոսաց[1] պէտք են աստ՝ զի կարասցեն վիճել ընդ քեզ:

Փոկաս ասաց. Եթէ զընաւէն զաշխարհիս քողոստիկոս 'ի մի վայր ժողովես, ոչ գտցեն արժանի պատասխանի տալոյ միում ումեք 'ի Տեառն աշակերտաց: Աֆրիկանոս ասաց. Այնպիսի՞ վարդապետութեան ուշ ունիս խաչեցելոյն: Փոկաս ասաց. Առաւել յայդըմ տես զնորա անհամեմատ իմաստութիւնն. զի թէ ոչ էր քան զամենայն իմաստութեան առաւելութիւնն, մանաւանդ թէ ամենայն իմաստունք 'ի նմանէ առին, ոչ արժեօք էր գրեալ, թէ՝ Որ տայ իմաստութիւն իմաստնոց. և դարձեալ, թէ՝ Որ ըմբռնէ զիմաստունս ՚ի խորագիտութեան իւրեանց. և դարձեալ՝ Կորուսից զիմաստութիւն իմաստնոց, և զհանճար հանճարեղաց պախարակեցից. գիտիցե՞ս արդեօք զոր ասեմ։ Ափրիկանոս ասաց. Մի թէ վասն օրինա՞ց և խնդրոց իրիք առաքեցայ խօսել ընդ քեզ, այլ վասն հաւանութեան հրամանաց թագաւորացն։

---

[1] Իմա Scolasticus;

Փոկաս ասաց. Ես միոյ աներևութին Աստուծոյ ասեմ, և ոչ հաւանեցուցանեմ զքեզ, և դու վասն մարդոյ ինձ նմանւոյ ասելով՝ որ այսօր է և վաղիւն մեռանի, և երանի թէ բարեաւ և ոչ չարեաւ, կարասցե՞ս արդեօք հաւանեցուցանել զիս։ Ափրիկանոս ասաց. Զայդպիսի բազմարուեստ և բազմապաճոյճ բանս ընկեա, և իմաստացիր ՚ի ճշմարիտ կեանս քո, զի մի հարկիցես զիս ՚ի ձեռն բազում տանջանաց հաւանեցուցանել զքեզ։ Փոկաս ասաց. Յաղնիւ ընթրիս կոչեցեալ՝ ոչ հրաժարեմ. և այս զի ահա ժամք քաջ անցեալ են։ Ափրիկանոս ասաց. Մանաւանդ այդու փիլիսոփայութեամբ, քանզի վասն այդմ ողորմիմ քեզ։ Փոկաս ասաց. Եթէ ողորմէիր՝ արդ ՚ի կալ իմում առաջի քո՝ վաղվաղակի առնէիր զոր ինչ առնելոց ես. այլ զի գիտասցես զի թէ ոչ մեռանիմ՝ կեալ ոչ կարեմ։ Ափրիկանոս ասաց. Սպանողք և կախարդք՝ ոչ են արժանի զարև կրելոյ, կեալ աղաչէն. և քո այդպիսի իմաստութիւն ՚ի փոխելութիւն զառածեալ, և յիմարութիւն վատահ եղեալ մեռանել կամիս։ Արեգակամբ, զի կարծեմ թէ քան զԱրիստոտելէս փիլիսոփայագոյն իցես։ Փոկաս ասաց. Փիլիսոփայել չառնեմ արժանի. այլ քրիստոսասէր կամիմ լինել. քանզի զնա Աստուած իմ և թագաւոր իմ ճանաչեմ. քանզի Արիստոտելի փիլիսոփայութիւնն մնոտի և պատիր ուսոյց. իսկ Քրիստոս աստուածխօսութիւն և կրօնաւորութիւն, և իմաստութիւն և ժուժկալութիւն, և անմահութիւն վարդապետեաց, որոց հաւատան ՚ի մի Աստուած շնորհեաց։ Ափրիկանոս ասաց. Յայտ արարեր զքոյին շաղփաղփանս բարբանջանաց ընդ խաչեալն հայելով։

Փոկաս ասաց. Զի՞նչ է որ դայթակղեցուցանէ զքեզ. քանզի գրեալ է. Հրէից դայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն. բայց մեզ հաւատացելոցս՝ Քրիստոս Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն։ Ափրիկանոս ասաց. Զի՞նչ աստուած խաչեալ։ Փոկաս ասաց. Իսկ ե՞ն աստուածք արուականք և իգականք և քարեղէնք ձեռագործք. այլ զՔրիստոսի ճանապարհն յամպարիշտ մարմնաւորաց հետազօտել ոչ ոք կարէ։ Ափրիկանոս ասաց. Սթափեաց 'ի փոխելութենէդ, զուարթացիր և տես զերկինս, զարեգակն և զլուսին և զարուսեակն, և զայլոց աստեղաց բազմութիւն, զորս թողուլ կամիս և մեռանել։ Փոկաս ասաց. Զծիր երկրի և զջահ արեգական, և զլոլորութիւն լուսնին և զգիրս աստեղաց տեսանես, և զսոցա արարիչն ոչ տեսանես Աստուած, և ոչ զմտաւ ածես։ Քանզի ոչ եթէ արեգակն երբէք զլուսինն արար, և ոչ լուսին՝ զաստեղս. այլ այս ամենայն երևոյթ՝ բանիւ Աստուծոյ եղեալ են։ Ափրիկանոս ասաց. Արդ դարձեալ զերկին և որ 'ի նմա՝ յայլմէ ասես եղեալ նոցա, և ոչ հնազանդիս։ Փոկաս ասաց. Քա՛ւ լիցի ինձ զտարերս աստուած կոչել։ Ափրիկանոս ասաց. Ցո՛յց ինձ զաստուածն քո, ես զինքնակալն հաւանեցուցանեմ։ Փոկաս ասաց. Յառաջագոյն ասացի քեզ վասն աներևութին Աստուծոյ. քանզի Աստուած որ 'ի վերայ երկնից նստի, զիա՞րդ մարդոյ երևել կարասցէ. ապա եթէ կամիս զԱստուած ճանաչել, անսա ինձ և ուսուցից քեզ։ Տեսանես ապաքէն զերկինս, զարեգակն և զլուսին, զաստեղս և զամպս, այլ ոչ եթէ յորժամ կամին ծագեն, այլ յորժամ հրաման առնուն։ Ամպք ոչ եթէ յորժամ կամին ժողովին 'ի միախուռն՝ լցեալ ջրով, այլ յորժամ կառավարին հրամանաւ Տեառն։ Լինի ամառն՝ ոչ եթէ յորժամ կամի, այլ յորժամ կարծի։ Ծով ոչ եթէ յորժամ կամի՝ խաղաղանայ կամ ալէկոծի, այլ յորժամ վճիռ ընդունի 'ի Տեառնէ։ Մարդ ոչ եթէ յորժամ կամի՝ առողջանայ, այլ յորժամ ստեղծիչն հրամայէ. զգազանս՝ ոչ եթէ յորժամ կամիս՝ որսաս, այլ յորժամ 'ի ձեռն քո տայցի։ Պատերազմի ազգաց ոչ եթէ յորժամ կամի թագաւորն՝ յաղթէ, այլ յորժամ Տէրն պաշտպանեսցէ։ Թագաւոր ոչ եթէ յորժամ կամի՝ թագաւորէ, այլ յորժամ Տէր տացէ զօրութիւն թագաւորելոյ։ Զայն Աստուած պարտ է գիտել և փառաւորել, և նմա երկիր պագանել, որ ասացն. Ես սպանանեմ և ես կեցուցանեմ։

Ափրիկանոս ասաց. Արդ ո՞վ է 'ի վերայ այդր ամենայնի իշխան, աստուա՞ծն խաչեալ զոր ասացեր։ Փոկաս ասաց. Զիա՞րդ զչարչարանս նորա լուար՝ և զզօրութիւն յարութեան նորա ոչ նկատես. ուստի՞ իցէ քեզ այդ՝ զխաչեալն խոստովանել, և այդ մեծ է։ Ապա եթէ կամիս ճանաչել, առ 'ի ձեռն զաստուածաշունչ գիրս, և ծանիր զարարիչն քո և զինքնակալն քո. և յայնժամ գիտասցես եթէ է Աստուած Հայր, և նորուն որդի Յիսուս Քրիստոս, խաչեալ և թաղեալ, և յարուցեալ և յերկինս վերացեալ և ընդ աջմէ Հօր նստեալ։ Ափրիկանոս ասաց. Զշատ ուսմանէդ քումմէ լուայ, որպէս կարծեմ՝ Դեմոսթենէս թէ կարաց այդքան ուսանել։ Այլ այսուհետև հաւանեա ինձ և զոհեա, զի մի՛ հարկիցես զիս բազում տանջանօք և հրով վատնել զքեզ. զի ոչ գիտես եթէ աւելի քան զհինգ հարիւր արանց կան աստ և յայլ նահանգէ՝ զոր դու հրապուրես չզոհել աստուածոցն։ Փոկաս ասաց. Եւ որչափ առաւելագոյն իցէ, որպէս դուդ ասացեր, մեռանել ինձ՝ քան աշխարհի ամենայնի վասն իմոյ անօրէնութեանն կորնչել։ Այլ հրճուելով մատչիմ 'ի հրատն. զի մի՛ վասն վիրի դժուարի ամենայն հօտն վարատեսցի. քանզի այսպիսի պատուէր ընկալայ 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։ Ափրիկանոս ասաց. Ես վասն քո տխատիմ յոյժ, և ողորմիմ իբրև հանճարեղի և երևելւոյ առն, և դու հակառակել ընդ իս և խաղս առնել փորձիս։ Փոկաս ասաց. Տրտմելովդ քո կորուսանես զիս. քանզի զամենայն զտանջանս քո որով սպառնաս՝ արհամարհեալ եմ, այլ ես թքալից առնեմ. այնուհետև զոր ինչ կամիս առնել՝ արա. զի ոչ բանից իմոց տիրեսցես և ոչ խորհրդոց. քանզի ընդականութիւն Տեառն իմ առ իս է, և դաւանութիւն, քան զբիւրուց Դեմոսթենաց քոց արուեստագոյն։ Ափրիկանոս ասաց. Եթէ էիր զառանցեալ՝ ասէի եթէ գագաշխս. և եթէ էիր տնանկ՝ ասէի թէ վասն այնորիկ կամի մեռանել։ Փոկաս ասաց. Ցամենայն աշխարհակիր մեծութենէս և յընչից և 'ի ստացուածոց զերծայց՝ զի զմիայն մարգարիտն ստացայց, զոր ոչ դու և ոչ ինքնակալն քո շորթել կարէք։ Արդ եթէ հաճոյ է քեզ տանջել զիս վասն չզոհելոյ պղծոցն՝ ահաւասիկ կամ, որպէս պարտ է քեզ՝ տանջեա։ Ափրիկանոս ասաց. Սրբոց և անարատից աստուածոցն զոհեմք, և դու պիղծս կոչես։ Փոկաս ասաց. Ոչ միայն պիղծ, այլ և ամբարհաւաճք և կախարդք և չնացողք և տաճարակողոպուտք և դեւք և որ անշունչք են. և ոչ նոքա ասեն այլ ես աստուած՝ բայց 'ի միոջէն, որ 'ի վերայ ամենայնի և Աստուած ամենակալ. որում փառք և պատիւ առաքչին 'ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յաւիտեանս յաւիտենից։

Եւ բազմութեան եղբարց որ անդ կային՝ ասացեալ զամէնն, յանկարծակի հնչիւն եղեւ 'ի ձայն բազմութեան ջուրց և սասանումն մեծ, մինչև յահէն անկեալ Ափրիկանոսի և կիսամահ դնէր 'ի գետնի անմռունչ, և ամենայն որ շուրջ զնովաւ կային զօրքն՝ զոր տեսաք, որոց կամեցաւ Տէր ցուցանել։ Քանզի յորոց ծագեալ լոյս սաստիկ երկնից տասնպատիկ առաւել քան զարեգակն, և երեւեցան հրեշտակք երկու 'ի վերայ հրեղէն երիվարաց, և երկիւղ և դողումն յոյժ զմեօք անկեալ, և ամենեքեան 'ի միասին անշունչ կացաք։ Եւ նոցա ողջագուրեալ յերանելւոյն Փոկայ՝ անդրէն յերկինս վերացան. և յետ կէս ժամու եղելոյ, ընթացեալ Տիրինտինա կին Ափրիկանոսի՝ հերարձակ, հինգ որդւովքն և ամենայն սպասաւորօքն անկանէին առաջի երանելւոյն Փոկայի. և ժտէր մեծաւ պաղատանօք զի շնորհեսցէ նմա զայր իւր, և յանձին ունելով հաւատալ ամենայն տամբ իւրով, զոր արար իսկ։ Յայնժամ երանելին Փոկաս կոչեաց զամենայն զունդն եկեղեցւոյն, աղօթս առնէր վասն առն փրկութեան։ Իսկ նորա չքնաղական ակնկալեալ մարդապուր փրծեալ, չոգաւ պատմեաց Տրայիանոսի զանհամեմատ զօրութիւնն Քրիստոսի, և զմեծ յոյսն քրիստոնէից։

Եւ Տրայիանոս կոչեաց զՓոկաս՝ ասէ ցնա. Դո՞ւ ես Փոկաս, որ ոչ գիտացեր զինքնակալ զօրութիւնն. ընդէ՞ր ոչ հաւանիս հրամանաց մերոց. յո՞վ պանծացեալ ես, կամ զո՞ր աստուած պաշտես։ Բայց սակայն համարիմ թէ այդպիսի հռետորք ոչ պիտոյանան խրատու. այլ քեւ խորհել զարժանն, եւ մի՛ ստունգանել. զի եթէ ոչ 'ի միտս քո լիցիս եւ զմեծարանս քո պահեսցես, գիտել ունիս թէ ո՛վ է Տրայիանոս եւ ո՛վ է զոր դու պաշտես։ Փոկաս ասաց. Եթէ պա՛րտ իցէ խօսել ինչ առաջի քո, թագաւոր, եւ այնպէս ապա յառաջիկայ մրցմունս ընթանալ։ Տրայիանոս ասաց. Այո՛, պարտ է քեզ խօսել եւ մանաւանդ զօգտակարն։ Փոկաս ասաց. Իշխանութիւն թագաւորութեանդ քո, ո՛վ Տրայիանէ, յԱստուծոյ տուեալ են քեզ, պարտ էր թէ եւ ճանուցեալ էիր զպարգեւատուն։ Տրայիանոս ասաց. Իմ թագաւորութիւնս 'ի բազմաստուածոցն տուեալ է ինձ՝ որոց պարտ է զոհել։ Արդ պարտ է փրկչաց մերոց զպարտոյ պատիւն մասնաւորել, վասն որոյ եւ պարտիմք իսկ զոհել վասն մերոյ փրկութեան։ Փոկաս ասաց. Իրաւունք են, ո՛վ թագաւոր, Աստուծոյ ամենակալի զոհել եւ նորուն հրամանացն անսալ, այլ սակայն եւ իշխանութեան հնազանդել պարտ է, ոչ յամպարշտութիւն՝ այլ 'ի բարեպաշտութիւն։ Տրայիանոս ասաց. Փիլիսոփայե՞լ կոչեցար այսր եթէ զոհել։ Փոկաս ասաց. Ո՞ւմ ունիս զոհել՝ կամ որո՞ց աստուածոց։ Տրայիանոս ասաց. Ասկղեպայ։ Փոկաս ասաց. Ո՞ւր է աստուածն քո, ցոյց ինձ զի տեսից։ Եւ երթեալ նոցա 'ի մեհեանս կռոցն, ասաց Տրայիանոս. Ահա աստուածք որ զամենայն պահեն։ Փոկաս ասաց. Քեզ ասեմ, ո՛վ քարեղէն, կամի՞ս ուտել, կամի՞ս ըմպել, կամի՞ս զգենուլ, կամի՞ս հոտոտել, պիտո՞յ են քեզ զոհք։ Ահա դատարկ կան աստուածք քո. 'ի կանգուն կան եւ ոչ նստին. բերանաբաց կան եւ ոչ խօսին. աղաչեմք եւ ոչ լսեն. աչք նոցա ոչ տեսանեն, ձեռք նոցա ոչ ընդունին զոհս. կամի՞ս թէ կործանեմ զմի 'ի նոցանէ, եւ ոչ կարեն փոխարէն առնել առնելոյն, ոչ տրտմի եւ ոչ կոչէ զինքնակալդ յօգնականութիւն, եւ եթէ կոչեսցէ՝ աստուած անկարօտ լինի. աստուած որ մարդկամբ խնդրէ զիւր վրէժն՝ զիա՞րդ զմարդիկ փրկեսցէ։ Ահա թագաւոր, տես զանարգ պաշտօնդ ձեր։ Տրայիանոս ասաց. Հիացուցեր զմեզ բանիւք քոյովք. ո՞չ նաւորդ էիր և զՊիտիդոն պաշտէիր։ Փոկաս ասաց. Ես ոչ նաւորդ միայն այլ և նաւապետ յամենեցունց Տեառնէն առաջնորդեալ՝ զպատշաճ պարտ զոհս մատուցանեմ։ Տրայիանոս ասաց. Գիտասցուք և մեք թէ ո՞ւմ կամիցիս զոհել։ Փոկաս ասաց. Ոչ կարես գիտել, քանզի գրեալ է. Բա, մի՛ ընկենուցուք զմարգարիտս ձեր առաջի խոզաց։ Տրայիանոս ասաց. Արդ մեք խո՞զ եմք՝ որպէս դուդ ասես։ Փոկաս ասաց. Երանի թէ անբան անասունք էիք, զի ոչ անկանէիք ընդ դատաստանօք՝ զքարինսդ պաշտելով, զոր անասունք ոչ մի ինչ փոյթ ունին։ Արդ ասա ինձ, ո՞ լաւ է, դո՞ւ՝ որ ունիս զայդչափ զօրութիւն, եթէ նոքա՝ որ ոչ տան պատասխանի առ ասացեալսդ։ Տրայիանոս ասաց. Զփայտէ հրամայեմք կախել զքեզ, և տեսցուք զի՞նչ օգնէ քեզ մնոտի փիլիսոփայութիւնդ։ Փոկաս ասաց. Ես եթէ զփայտէ կախեցայց՝ 'ի վերոյ քան զամենայն լերինս և զօդս ընդ Տեառն եղէց. և դու աստուածովքն քո 'ի դժոխս 'ի խաւարն արտաքին եղիցիս, և յայնժամ գիտասցես եթէ Աստուածն երկնաւոր հզօր է։

Եւ քերեալ զմարմին նորա յամենայն կողմանց՝ ոչ ուրանայր, և ոչ բարբառ ոք լսէր 'ի բերանոյ նորա. բայց միայն շրթունքն իւր շարժէին 'ի խնդրուածս։ Եւ կատարեալ նորա զաղօթսն և առաքեալ զամէնն, հնչիւն եղև յերկնից, ձայն՝ որ ասէ. Քաջալերեաց, Փոկաս, զի ես ընդ քեզ եմ. ահա պատրաստեալ է քեզ տեղի 'ի դրախտն ընդ սուրբ հայրապետսն, և ընդ ոչ ուրացողսն զիս և զհայր իմ. և Տրայիանոս երթիցէ 'ի տեղին ուր հրամայեցեր, առ ընդունել նմա զտանջանս յաւիտենականս։ Յայնժամ զահի հարեալ Տրայիանոս՝ ասաց իջուցանել զնա, և հրամայեաց չորից զինուորաց պահել զնա։ Եւ նոցա առեալ տարան զնա 'ի բաղանսն և մեծաւ զգուշութեամբ պնդեալ 'ի կոճեղն։

Իսկ սուրբն օրհնէր և փառաւորէր զԱստուած. և նոքա փակեալ զդուրսն՝ պահէին արտաքոյ կողմանէ զբանտն։ Եւ զմէջ գիշերաւն կայր յաղօթս երանելին այսպէս. Յիսուս, որդի Աստուծոյ Քրիստոս Տէր, որոյ անուն սուրբ է, տէր հրեշտակաց և ամենայն անուան անուանելոյ. Հովիւ բանաւոր ոչխարաց, պահեա ըզհօտս քո անխախուտ, հալածեա զգայլն բազմոտանի, զմոլորեցուցիչ և զյափշտակողն. մի՛ տացես նմա տեղի 'ի քո վաստակն. մի՛ ապականեսցէ կինճն զքո որթն քրիստոսատունկ. մի՛ պղծեսցէ զսրբութիւն քո, որպէս Նաբուգոդոնոսորն. մի՛ բծեսցէ զանբիծ աղաւնին քո՝ օձն բազմաբիծ. մի՛ արատեսցէ զծառայս քո՝ ամենաբիծ հարաւայնոյն. այլ պահեա զքո այգին՝ զոր տնկեաց ամենազօր աջ քո. մի՛ թող տացես կործանել խաչին քում, զոր մեծաւ և պատուական արեամբ քո ստացար. մի՛ տացես քակումն տապանի քում, որում քեզէն եղեր նաւապետ և առաջնորդ: Գոհանամ և փառաւորեմ զՀայր քո և զքեզ, զի արժանի արասցես զիս այսօր ընթրել առ քեզ, քանզի անբիծ եկից յառագաստ քո. մի՛ արտաքոյ մերժես զիս այսօր 'ի գալս իմ առ քեզ. պահեա զհոգի իմ՝ իբրև զՀայր, իբրև զԱստուած, իբրև զՏէր, իբրև զհովիւ, զի մի՛ չնչեսցէ 'ի վերայ իմ վիշապն, և ոտք նորա մի՛ կաքաւեսցեն 'ի վերայ իմ: Քանզի ոչ ոսկւով և արծաթով հաւանեցոյց զիս կորուսանել զպատուական մարգարիտն. այլ ահա զամենայն լքեալ թողի, զի զքեզ միայն զյոյժ պատուականդ ստացայց, զբազմագութ, զլուսաւոր Տէրդ: Մերձեցո զիս առ Հայր քո. մո՛յծ զիս ընդ նեղ դուռնն 'ի տաճարն թագաւորական. և քեզ փառք և Հօր քում և Հոգւոյդ սրբոյ:

Եւ ասացեալ նորա զամէնն՝ բացաւ բանտն, և ջահ լուցաւ յամրոցին: Զայն տեսեալ զինուորացն՝ 'ի ներքս վազեցին, և անկեալ առ ոտս նորա խնդրէին զլուացումն աւազանին: Իսկ երանելւոյ եպիսկոպոսին առեալ զարսն՝ երթայր մինչև յեզր ծովուն արտաքոյ քաղաքին, և ետ նոցա զառ 'ի Քրիստոս կնիքն, որոց և Տէրն զինքն երևեցոյց: Երթեալ և արարեալ զամենայն օրէնն՝ մտաք միւսանգամ 'ի բանտն: Եւ ընդ առաւօտանալն՝ ամենայն բազմութիւն քաղաքին 'ի հրապարակին ժողովեցան, ակն ունելով նահատակութեան երանելւոյն Փոկասու: Եւ կոչեցեալ զնա յատեան՝ Տրայիանոս, ասաց. Զոհեա Պիսիդոնի: Փոկաս ասաց. Ես դիւաց ոչ զոհեմ: Տրայիանոս ասաց. Ատուածքն դևք են, և մեք իսկ․ արդ, ասա, այլ ո՞վ է աստուած։ Փոկաս ասաց․ Որ քեզ զիշխանութիւնդ ետ․ զի անբան անասունք էք և ոչ գիտէք զբարերարն Աստուած։ Տրայիանոս ասաց․ Իսկ զոհեա Աստուծոյն քում։ Փոկաս ասաց․ Աստուածն իմ ոչ իմիք կարօտ է, բայց միայն աղօթից և պահոց և սրտից սրբոց․ քանզի ամենայն եղեալք՝ նորա արարածք են․ Նա տայ ամենայնի շունչ՝ որոց ենս, և որոց հանդերձեալ են լինել։ Տրայիանոս ասաց․ Այժմ սկսար փիլիսոփայել, զոհեա աստուածոցն, քանզի խաչեալ աստուած չիք։ Փոկաս ասաց․ Լուար զձայն խաչելոյն և զարհուրեցար․ եթէ շարժեսցի 'ի վերայ քո, ո՞վ կարասցէ ընդդիմանալ նմա․ զի սպառնացումն նորա հալէ զլերինս, և սրտմտութիւն նորա ցամաքեցուցանէ զծով։ Տրայիանոս ասաց․ Ոչ գիտես ընդ ում խօսիս, կամ ընդ ում բանս ունիս։ Փոկաս ասաց․ Վասն զի գիտեմ ընդ ում ունիմ, այնր աղագաւ ոչ զոհեմ․ այլ ինչ աւելի չես լսելոց յինէն, արա զոր ինչ կամիս․ այլ զայս խոստովանիմ քեզ զի քրիստոնեայ եմ։ Տրայիանոս ասաց․ Բաղանիք վասն քո այրին, և ահա ջեռնու աւազանն․ այս երեք աւուրք են զոր ոչ ոք եբաց, անդ հրամայեմ ընկենուլ զքեզ։ Եւ Փոկաս զտերունական կնիքն արարեալ յինքեան՝ եմուտ 'ի լուանալին․ և այն էր իբրև զպղինձ շողացեալ 'ի հրատից փայլարձակ։ Եւ կացեալ երանելւոյն 'ի միջոցի անդ՝ սկսաւ օրհնել զԱստուած և ասել․ Գոհանամ զքէն, Տէր, Տէր, զի արժանի արարեր զիս վասն քոյոյ անուանդ՝ տանջանաց, և բանտից և կապանաց և փորձութեանց բազմաց։ Եւ արդ, Տէր իմ, առաքեա զհրեշտակ քո և փրկեա զիս 'ի ձեռաց Տրայիանոսի, զի մի երբեք ասասցէ թշնամին թէ ուր է աստուած նոցա։ Եւ կատարեալ նորա զաղօթսն, և ասացեալ զամէնն՝ հատոյց զհոգին 'ի մտանել արեգականն։

Ցայնժամ Տրայիանոս հրամայեաց բանալ զբաղանիսն, և մտեալ 'ի ներքս՝ եգիտ զնշխարս մարմնոյ սրբոյն Փոկայի իբրև զվարդ անուշահոտ, և իբրև զսառն պնդեալ և իբրև զիւղ անոյշ և պատուական։ Եւ բաղանիքն այնպէս էին զով՝ իբրև թէ ամենևին չէր ջեռուցեալ։ Տեսեալ Տրայիանոսի զմարմին երանելոյն Փոկայի, և մտախոհ եղեալ ընդ այնպիսի համբերական հաւատմն, աղաղակեաց և ասէ ցզինուորսն որ ընդ իւրն էին. Ճշմարտիւ չիք այլ աստուած բայց 'ի միոջէն միայն որ յերկինսն է։ Եւ յահի և 'ի դողման եղեալ ել 'ի բաղանեացն. և երևեալ նմա Փոկաս առաջի դրացն՝ ասէ ցբռնաւորն Տրայիանոս. Երթ 'ի պատրաստեալ տեղին քո, յայն յանհնարին անդունդսն. քանզի ինձ բացաւ դրախտն փափկութեան, և քեզ բացաւ վիհն կորստեան և կռոցն քոց։ Այլ չիք քեզ ժամանակ ներելոյ՝ բայց միայն զերիս աւուրս. զի բազում արիւն արդար հեղեր 'ի կեանս քո։ Եւ երթեալ Տրայիանոս 'ի յարքունիսն զարհուրագին, և էր 'ի մեծ վտանգ՝ սաստիկ ջերմամբ նեղեալ, և անկեալ յախտի պատգարակն՝ որդնալից եղեալ սատակեցաւ։

Զայսպիսի վարուց ուղղութիւն և զմեծ քաջութիւն նահատակութեան նախ եցոյց երանելին Փոկաս 'ի Պոնտոս, որ պատմի մինչև ցայսօր։ Նաւապետ նաւավարաց և հովիւ բարի ամենայն աշխարհաց եղեալ, որոյ ճշմարիտ է վկայութիւնն փառաւորեալ։ Համբաւի 'ի կողմանս Հայոց և Պոնտացւոց և Պամփլագոնացւոց. այր առաքելական երևեալ մեզ, իբրև 'ի միոյ ուրուք յերամէ սրբոցն. առեալ զնշան յաղթութեան, և զառհաւատչեայ կենացն հանդերձելոցն զխոստումն 'ի Տեառնէ Աստուծոյ. որում փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյ կնոջն Փոտինեայ։

Սրբուհի կինն Սամարացի՝ յորմէ Քրիստոս ջուր խնդրեաց, յորժամ նստէր 'ի վերայ աղբերն Յակոբայ, և բազում խօսէր ընդ նմա, և ոչ գարշէր 'ի ստեղծուածոյ ձեռաց իւրոց. զի վասն այնորիկ խոնարհեցոյց զերկինս և էջ՝ զի զանարգեալ անօթն 'ի պատիւ փոխարկեսցէ. և յառաջ քան զառաքեալսն առաքելուհի առաքէր զնա 'ի քաղաքն քարոզել զգալուստն Քրիստոսի. որ և բազումք հաւատացին 'ի Քրիստոս՝ վասն բանի կնոջն քարոզելոյ. զոր պատմէ կարգաւ 'ի սուրբ աւետարանին։ Իսկ նորա հաւատացեալ 'ի Քրիստոս, հետևող առաքելոցն լինէր. և երթեալ 'ի Կարթագինէ քաղաքն Ափրիկոյ, և մկրտեցաւ 'ի սրբոց առաքելոցն, և անուանեցաւ Լուսաւորինն. որ լուսաւորեաց զբազումս, քարոզելով ամենեցուն զՔրիստոսի աստուածութիւնն, դարձուցանելով 'ի կռոցն մոլորութենէ յաստուածգիտութիւն ճըշմարտութեան։ Եւ գնացեալ եկն յԵրուսաղէմ, 'ի սպասաւորութիւն տէրունական սուրբ գերեզմանին, զի առցէ զվարձս վաստակոց Իւղաբերից սուրբ կանանցն։ Եւ անդ լուեալ զսուրբ առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, և զայլ առաքելոցն զքրտնախոնջ աշխատութիւնն, լաւ համարեցաւ չարչարել ընդ նոսա վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. և եկեալ աշակերտեցաւ Պետրոսի և Պօղոսի, և եղև հետևող նոցա 'ի քարոզութիւն սուրբ աւետարանին.

և ոչ թէ հրապարակախօս լինէր՝ որպէս զառաքեալսն, այլ 'ի տունս տունս մտանէր և բժշկէր զհիւանդս և զամենայն ախտաժէտս յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի. զդևս հալածէր, և յանդիմանէր զկռոցն տկարութիւնն, և հաւանեցուցանէր զդիւրադարձ կանայսն և նոքօք զարսն իւրեանց, և առեալ տանէր առ սուրբ առաքեալսն, և մկրտէր զամենեսեան լուսաւորելով 'ի շնորհս Հոգւոյն սրբոյ: Գնացեալ զկնի առաքելոցն և 'ի Հռովմ քաղաքն. և անդ ևս մեծաւ քաջութեամբ ուսուցանէր ամենեցուն, դառնալ 'ի կռոցն մոլորութենէ և հաւատալ 'ի Քրիստոս: Եւ ել լուր համբաւոյ նորա 'ի լսելիս Ներոնի անօրէն թագաւորին, և առաքեաց զօրական զի գըտցեն զնա: Եւ կալեալ զերանելին Փոտինա, և կացուցին առաջի Ներոնի արքային. և նա սկսաւ հարցափորձել զնա բազում բանիւք, ուրանալ զՔրիստոս, և ոչ շրջել զկնի սուրբ առաքելոցն: Իսկ սուրբն յուսացեալ յԱստուած և յաղօթսն Պետրոսի և Պօղոսի, աստուածիմաստ բանիւք յանդիմանէր զամպարշտութիւն թագաւորին. ոչ ողոքանացն ակն ածէր, և ոչ 'ի սպառնալեացն զարհուրէր. մինչև յոյժ բարկացեալ թագաւորն՝ արկ զնա ընդ դառն և անհնարին տանջանօք, և քերանօք կախել զփայտէն, արկին 'ի հնոց հրոյ. և նա աղաղակէր սրտագոչ ձայնիւն առ սուրբ առաքեալսն Պետրոս և Պօղոս, աղօթիւք օգնել նմա, որպէս երանելւոյն Թեկղեայ, որ ոչ մերձենայր 'ի նա հուրն և ոչ ժանիք գազանաց. քանզի պահպանէր նմա բազուկն այն որ 'ի խաչին տարածեցաւ. և աղօթիւք սրբոյն Պօղոսի նոյն շնորհք սուրբ Հոգւոյն հովանի լինէր սրբոյն Փոտինայ. քանզի արբուցին նմա դեղս մահաբեր երեք անգամ, և կապար հալեալ արկին 'ի բերան նորա, և մոխիր հնոցի քացախով շաղախեալ արկին ընդ քիթս նորա, և հրացեալ շամփրով այրեցին և խորովեցին զմարմին նորա, և ապա փորեցին զաչս երանելւոյն. և նա կայր կենդանի, և զինչ հարցանէին տայր պատասխանի. և հրաման ետ թագաւորն տանել զնա 'ի բանտ խոր և խաւարին, ուր էին օձք և թիւնաւոր սողունք, որ վասն մահապարտաց շինեալ էր: Եւ երևեալ նմա Տէր հանդերձ Պետրոսիւ և Պօղոսիւ, և եդին ձեռս, լուսաւորեցին զաչս նորա, և բժշկեցին զվէրս ոսկերաց նորա. և իբրև ետես՝ ծանեաւ զՏէր, և անկեալ յոտս նորա և ասէ. Ողորմեա, Տէր, աղախնոյս քո, և յիշեա զսակաւ աշխատութիւնս՝ որ համբերի վասն անուանդ քում սրբոյ, և տուր շնորհս անուան իմոյ, զի որք ցաւագնեալ լինին յաչաց, և աղաչեսցեն զքեզ իմով բարեխօսութեամբ, օգնեսցես և բժշկեսցես զաչս նոցա լուսաւորելով. բազմագութ Տէր, քաւեա և թող զյանցանս իմ, և յիշեա զիս, Տէր, յարքայութեան քում։

Եւ ասէ Տէր. Զամենայն զոր խնդրեցեր՝ եղիցի քեզ. նոյնպէս և սուրբ առաքեալքն բանիւք մխիթարական սփոփեցին զնա. և դիւրացաւ բանտն, և գնացին 'ի նմանէ։ Եկաց երանելին 'ի բանտին զերիս ամս, յետ այնչափ չարչարանաց. և համբեր քաղցոյ և ծարաւոյ և ցրտոյ և ժահահոտ բանտին. և յետ երից ամաց հանգեաւ 'ի Քրիստոս։ Իսկ յետ կատարման սուրբ առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, և 'ի մեռանել անօրինին Ներոնի, ծաղկեաց հաւատս քրիստոնէութեան, և շինեցան եկեղեցիք յանուն սրբոցն. հանին և զնշխարս սրբոյն Փոտինայ, և եդին 'ի սուրբ և 'ի պատուական տեղւոջն, և լինի բժշկութիւն աչաց և լուսաւորութիւն, բարեխօսութեամբ սրբոյն. և փառք Քրիստոսի յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոց քառասուն վկայիցն ։

Ընդ ժամանակս Լիկիանէ թագաւորի՝ էր հալածումն քրիստոնէից. և զամենեսեան որ բարեպաշտութեամբ կէին ’ի Քրիստոս, հարկէին զոհել կռոցն. այլ և քրիստոնեայք որ էին ’ի զօրուն՝ բռնադատէին զոհել։ Եւ եղև ’ի դատաւորութեան Ագրիկողայոսի, որ էր այր ժանտ և ապարասան և փոյթ յարբանեկութիւն սատանայի, էին զինուորք ոմանք ’ի Գամրաց գաւառէն, ’ի գնդի միում՝ որ կէին բարեպաշտութեամբ ըստ Աստուծոյ, թուով քառասուն, առաքինիք և յաղթողք ’ի պատերազմունս. որոց անուանք են այսոքիկ. Դոմետիանոս, Կիւրղոս[1], Վաղէս, Եւտիքոս, Եւնուկիոս, Վաղենտիանոս, Փղաւիդոս[2], Մարոգդոս, Սիսինիոս[3], Ղևոնդիոս, Մելիտոս, Սևերիանոս, Փիլիկտիմոն, Անտիոս, Երակղիոս, Ագդեկիոս, Կիւրիոն, Աէտիոս, Աղեքսանդրոս, Ակակիոս, Վաղերիոս, Նիկողայոս, Եւտիքոս, Յովհաննէս, Լիքիանոս, Գուդիոն, Լիւսիմաքոս, Գաղիտոս, Կղաւդիոս, Կանդիտոս, Եղիոս, Սարկեդոն, Դոմնաս, Դիգիանոս[4], Աթանասիոս, Սուգղոս[5], Արիսկոս[6], Թէոփիլոս, Մելիտոս, Անգղէոս ։

---

[1] Երկ. օր. Կիւրեղիոս։

[2] Երկ. օր. Փղաւիոս։

[3] Երկ. օր. Սիսինիոս.. Մէղինտիոս.. Փիլոկտիմոն. Անգէոս.. Եկդիկիոս.. Վաղերիանոս. Եւտիքիոս.. Բիբիանոս. Գորգոնիոս. Կղաւդիոս. Եղիաս. Սակերդոն. Դոմնինոս։

[4] Մի օր. Գորգիանոս։ Միւս օր. Գորփիանոս։

[5] Երկ. օր. ունին Թէոդուլոս։

[6] Երկ. օր. Պրիսկոս... Մելիտոն, Ագղէոս։

Սոքա ամենեքեան ըմբռնեալ էին 'ի ձեռս դատաւորին, և ստիպէին զոհել դիւաց։ Սկսաւ այնուհետև և դատաւորն խօսել ընդ նոսա և ասել. Զհանդէս միաբանութեան ձերոյ ցուցեալ 'ի պատերազմունս, զյաղթութիւն երկուց կողմանց ընծայեցուցէք[1], արդ ցուցէք և այժմ զմիաբանութիւնդ ձեր, և հաւանեցարուք օրինաց թագաւորին, և զոհեցէք աստուածոցն յառաջ քան զտանջանսն։ Ետուն պատասխանի սուրբքն և ասեն. Զի եթէ վասն մահկանացու թագաւորին պատերազմեալ յաղթեցաք, որպէս և դու իսկ վկայես, ո՞րչափ ևս առաւել վասն անմահին՝ ձգնեալք յաղթեսցուք քում չարահնար խորհրդոցդ։ Դատաւորն ասէ. Մի յերկուց առաջի կայ ձեր, կամ զոհեցէք աստուածոցն և յառաջանալ ձեզ 'ի պարգևս և 'ի պատիւս. ապա թէ ոչ հաւանիք՝ բառնալ 'ի կենաց։ Սուրբքն ասեն. Զօգտակարն մեր Աստուած հոգասցէ։ Դատաւորն ասէ. Մի՛ շատախօսիք, այլ վաղիւն եկեալ զոհեցէք աստուածոցն։ Եւ հրամայեաց տանել զնոսա 'ի բանտ։

Եւ մտեալ սրբոցն 'ի բանտ՝ խոնարհեցուցին ծունր, և կացին յաղօթս և ասեն. Զերծո՛ զմեզ, Տէր, յորոգայթից և 'ի գայթակղութենէ՝ որ գործեն զանօրէնութիւն։ Իբրև երեկոյ եղև՝ սկսան երգել զսաղմոսս զայս. Բնակեալն յօգնութիւն բարձրելոյն՝ ընդ հովանեաւ Աստուծոյ յերկինս հանգիցէ։ Ասա Տեառն՝ ընդունելի իմ ես դու. Աստուած ապաւէն իմ և ես յուսամ 'ի նա. զի նա փրկեսցէ զմեզ յորոգայթից որսողաց։ Եւ կատարեալ զաղօթսն և ասացեալ զամէնն. և դարձեալ կացին յաղօթս մինչև 'ի մէջ գիշերին, բայց առաջնորդէր նոցա յաղօթսն սուրբն Կիւրիոն, իսկ 'ի պատասխանիսն[2] սուրբքն Կանդիդոս և Դոմնոս։ Յայնժամ երևեալ Փրկիչն ասաց. Բարւոք է յօժարութիւնդ ձեր. բայց որ համբերեսցէ իսպառ՝ կեցցէ։ Եւ ամենեցուն լեալ 'ի մեծի երկիւղի, և անքուն լինէին մինչև ցառաւօտն։ Իսկ դատաւորն կոչեալ զսիրելիս իւր, հրամայեաց ածել զսուրբսն յատեան։ Իբրև եկին՝ ասէ ցնոսա դատաւորն. Զոր խօսելոցս եմ ընդ ձեզ, ոչ առ շնորհուկս ինչ առնելոյ[1] ասեմ, այլ որպէս էն իսկ. զի որ միանգամ զինուորք ընդ ինքնակալ թագաւորին են՝ չեն իբրև զձեզ հանճարեղք, և ոչ այդպէս գեղեցիկք, և ոչ դոյնպէս սիրեցեալք 'ի մէնջ։ Արդ մի՛ զսէրն յատելութիւն դարձուցանէք, քանզի 'ի ձեր ձեռն է ատելն և սիրելն։ Սուրբն Կանդիտոս ասաց. Ըստ բարուց քոց եդաւ քեզ անուն Ագրիկողայոս, քանզի վայրենի փաղաքշոտ ես։ Դատաւորն ասէ. Զասացի՞ եթէ 'ի ձեր ձեռն է ատելն և սիրելն։ Կանդիտոս ասաց. Եթէ 'ի մեր ձեռս է սիրելն և ատելն՝ զքեզ ատեմք և զԱստուած մեր սիրեմք. բայց դու, օտարացեալդ յԱստուծոյ, մի՛ ակն ունիր սիրելոյ 'ի մէնջ՝ անսուրբ, ծածկեալ 'ի խաւարի, վայրենի անուն։ Իբրև լուաւ զայս բանաւորն՝ մոլեալ իբրև զգազան, հրամայեաց կապել և 'ի քարշ տանել 'ի բանտն։ Ասէ Կիւրիոն. Զառեր իշխանութիւն դատել[2] զմեզ, այլ հարցանել։ Յայնժամ երկուցեալ դատաւորն, արձակ հրամայեաց տանել զնոսա 'ի բանտ, պատուէր տուեալ Ագղեայ բանտապետի զգուշութեամբ պահել զնոսա. քանզի անսայր գալստեան դքսին։ Իսկ սուրբքն զտիւ և զգիշեր ուսանէին 'ի սրբոյն Կիւրիոնէ. քանզի ասէր ցնոսա. Եթէ ըստ մատակարարութեան Աստուծոյ ընկերք եղեաք յայսմիկ 'ի ժամանակեայ զինուորութեանս, արդ մի՛ անջատեսցուք 'ի միմեանց. այլ որպէս կացաք համաշունչք և միախորհուրդք, նոյնպէս փութասցուք հաճոյ լինել Աստուծոյ անմահին։ Եւ իբրև անցին աւուրք եօթն, մինչդեռ 'ի բանտին էին, եկն դուքսն 'ի Կեսարիա, և մտեալ 'ի Սեբաստիա՝ նստաւ յատենի հանդերձ դատաւորաւն, յաւուր ութերորդի, և ետ ածել զսուրբսն։ Խրատէր զնոսա սուրբն Կիւրիոն և ասէր. Եղբարք իմ, մի՛ երկիցուք. ո՞չ ապաքէն մինչ 'ի ճակատուն լինէաք, կարդայաք առ Աստուած և օգնէր մեզ և յաղթէաք։ Յիշեցէք յորժամ անդ խառնեցաք 'ի մեծ պատերազմին, և փախեան ամենայն ընկերակիցքն մեր, և մեք միայն քառասունքս մնացաք 'ի մէջ թշնամեաց. և հանդերձ արտասուօք կարդացաք առ Աստուած, և ետ մեզ զօրութիւն, մինչ զոմանս 'ի նոցանէ սպանաք, և զոմանս փախստական արարաք, և 'ի մէնջ մի ոք վրիպեցաւ յանհնարին բազմութեանն: Իսկ արդ երեք են որ մարտնչին ընդ մեզ. դուքսն և դատաւորն և սատանայ. և ընդ բնաւ մի, և այն աներևոյթ. և արդ մինն քառասնից յաղթիցէ՞. մի՛ եղբարք, աղաչեմ զձեզ, այլ կարդասցուք որպէս երէկն և այժմ առ Աստուած. և ոչ մերժեսցի 'ի մեզ տանջանքն և լլկանք: Ո՞չ յամենայն ժամ մինչ դիմէաք 'ի պատերազմ՝ ասէաք ըզսաղմոսս զայս. Աստուած, յանուան քում կեցո զիս, և 'ի զօրութեան քում իրաւ արա ինձ. Աստուած, լուր աղօթից իմոց, ունկն դիր բանից բերանոյ իմոյ. և արդ զնոյն սաղմոս ասասցուք: Եւ ամենեքեան ժողովեցան 'ի տեսիլ սրբոցն:

---

[1] Այլ օր. Երկուց գնդիցն ընծայեցէք։

[2] Այլ օր. 'ի պատասխանատուութեանն։

---

[1] Այլ օր. ոչ եթէ շնորհաւուկս ինչ առնելով ասեմ... 'ի ձեր ձեռն է։

[2] Այլ օր. տանջել։

Եւ իբրև կացին առաջի դքսին և դատաւորին, հայեցեալ 'ի նոսա դուքսն՝ ասէ. Սոքա կամին եթէ բռնադատեսցին, զի առաւել ևս պատուոյ արժանի եղիցին. այո՛, ընկալջիք յինէն մեծամեծ պարգևս և պատիւս առաւել քան զայլս. արդ՝ մի յերկուցս առաջի կայ ձեզ այսուհետև, կամ զոհել աստուածոցն և պսակաց մեծաց և պատուոյ արժանի լինել, և եթէ ոչ հաւանիք՝ բառնալ տանջանօք 'ի կենացս: Ասէ սուրբն Կանդիդոս [1]. Առաջնորդ խաւարի և անօրէնութեան վարդապետ, ձեռնամուխ լեր առնել զայդ, և տեսջիր դքոյին պատուհասն: Եւ կրճտեալ դատաւորին՝ ասէ ցդահիճն. Ո՛վ ամենաչար սպասաւորք, ընդէ՞ր ոչ առնէք վաղվաղակի զոր հրամայեմք ձեզ: Եւ առեալ սպասաւորացն քարինս՝ ձգէին 'ի վերայ սրբոցն, զիրեարս ծեծէին: Իսկ երանելեացն տեսեալ զեղեալս՝ քաջալերեցան. և դուքսն զեղեալ ցասմամբ, առ վիրդ մի՝ զի հարցէ զոք 'ի սրբոցն, և ընկէց 'ի վերայ երեսաց դատաւորին և ջարդեաց զերեսս նորա: Ասէ սուրբն Կիւրիոն. Մարտուցեալքս ընդ մեզ թշնամիքս մեր, սոքա խափանեցան և անկան. արդարև սուրք նոցա մտցեն 'ի սիրտս նոցա, և աղեղունք նոցա փշրեսցին։ Այս է դատաւորն. Երդուեալ յաստուածսն ամենայն, կախարդութիւն իմն հնարեցան [1]։ Սուրբն Դոմնաս ասէ. Աստուածով երդուեալ, Աստուած մեր հնարեցաւ, զի զլիրբ երեսս որ խօսի զԱստուծոյ անիրաւութիւն՝ անարգութեամբ լցոյց։ Զզգաս խորային և խաւարային սատանայ, ստարացեալ 'ի ճշմարտութենէ և բաշխիչ գայթակղութեանց. դու Ագրիկողայոս գլուխ ես սատանայի, և Լուսիա դուքսդ որ ընդ քեզ նստի, և երկոքին դուք գլուխ էք սատանայի. արդ եթէ ոչ հաւանեցոյց զձեզ սկիզբն առաջնոյ նշանիդ, ձեռնամուխ լերուք յերկրորդն։ Ասեն դահիճքն ցսուրբսն. Ա՛յ ափշեալք, և ամենայն երկայնմտութեան աստուածոց թշնամիք, ընդէ՞ր ոչ զոհէք։ Այս է սուրբն Կիւրիոն. Մեք միայնոյ Աստուծոյ ընծայեալ եմք, 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի և սրբոյ Հոգւոյն [2], կատարել զյօժարութիւն ընթացից ճգնութեան մերոյ, առ 'ի յընդունել մեզ զանապական պսակն, և յաղթել ձերում չարարուեստ խորհրդեանդ։ Յայնժամ հրամայեաց դուքսն տանել զնոսա 'ի բանտն, որպէս զի խորհեսցի ինչ վասն նոցա։ Եւ մտեալ սրբոցն 'ի բանտն, սկսաւ սուրբ Կիւրիոն համդերձ նոքօք ասել. Առ քեզ համբարձի զաչս իմ որ բնակեալդ ես յերկինս. ահա որպէս աչք ծառայի 'ի ձեռն Տեառն իւրոյ, որպէս աչք աղախնոյ 'ի ձեռն տիկնոջ իւրոյ, այնպէս են աչք մեր առ քեզ, Տէր Աստուած մեր, մինչև ողորմեսցիս 'ի վերայ մեր։ Եւ նոյնպէս կարգաւ զսաղմոսն ասէին և կային յաղօթս։ Եւ 'ի մէջ գիշերին ձայն եղև առ նոսա, և երևեալ Փրկիչն ասէ. Որ հաւատայ յիս՝ թէպէտ և մեռանի՝ կեցցէ. քաջալերեցարուք և մի՛ երկնչիք 'ի տանջանաց նոցա, զի առժամայն են. համբերեցէք փոքր մի, և օրինօք ճգնեցարուք զի և պսակիցէք։ Անցուցանէին և զայն ևս գիշեր ցնծութեամբ 'ի համարձակութենէն Քրիստոսի։ Եւ իբրև եղև առաւօտ

---

[1] Երկ. օր. Կիւրիոն:

---

[1] Այլ օր. համարեցան։

[2] Երկ. օր. մեք միայնոյ Աստուծոյ ծառայեմք, և նմա մատուցանեմք զոհ անարատ 'ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և Հոգւոյն սրբոյ։

'ի վաղուեան աւուրն՝ հրամայեցին ածել զնոսա 'ի բանտէն. և կացեալք սուրբքն առաջի բռնաւորացն՝ ասեն. Զի՞նչ կամիք առնել՝ արարէք վաղվաղակի. և երևեալ սատանայի ունելով յաջոյ ձեռինն սուսեր, և 'ի ձախոյն վիշապ, ասէ յունկն Ագրիկողայոսի. Իմ ես, քաջ մարտիր. և հրամայեաց դատաւորն կապել զնոսա, և արկանել տռուռնս 'ի պարանոցսն, և ածել զամենեսեան միահամուռ 'ի լիճն. քանզի էր 'ի Սեբաստիա լիճ մի որ ունէր ջուր բազում յոյժ, և 'ի ժամանակին յայնմիկ յորժամ վկայեցին սուրբքն՝ էր պարզ և ցուրտ սաստիկ: Եւ ածեալ կացուցին զնոսա 'ի մէջ լճին մերկս. և էր ժամն ձմեռնային և օդն դառնաշունչ. քանզի քաջ ընդ երեկս էր օրն, և կացուցին զնոքօք պահապանս 'ի զինուորաց և զբանտապանն[1]. և էր մօտ 'ի լիճն բաղանիք մի զոր ջեռուցին, որպէս զի թէ ոք կամեսցի զանց առնել՝ անկցի 'ի բաղանիսն :

Եւ յառաջին պահու գիշերոյն՝ պնդէին ձուլելով 'ի սառամանեաց անտի սուրբքն. և 'ի պրկել պաղոյն՝ մարմինքն պատառէին: Իսկ մի ոմն 'ի սրբոց քառասնիցն, իբրև ոչ կարաց ժուժկալել, փախստեայ անկաւ 'ի բաղանիսն, և հասեալ 'ի ջերմութիւնն՝ իսկոյն եհան զոգին[2]. և սուրբքն իբրև տեսին զանժուժկալութիւն նորա, ասէին մեծաձայն իբրև 'ի միոջէ բերանոյ. Մի՛ 'ի գետս բարկացիս մեզ, Տէր, կամ 'ի գետս սրտմտութիւն քո, կամ 'ի ծովու դիմեցումն քո: Քանզի որ 'ի մէնջ վարատեցաւ՝ իբրև զջուր հեղաւ, և ցրուեցան ամենայն ոսկերք նորա. բայց մեք ոչ մեկնեսցուք 'ի քէն՝ մինչև կեցուսցես զմեզ, և մեք կարդասցուք զանուն քո՝ զոր օրհնեն ամենայն խորք, հուր և կարկուտ, ձիւն և սառն, հողմ և մրրիկ՝ որ առնեն զբան քո: Որ գնաս 'ի վերայ ծովու՝ իբրև յատակի, և 'ի մրրկել ձեռին նորա՝ ազդեցութեամբ ձեռին քո ցածուցանես: Եւ արդ դու նոյն ես Տէր՝ որ լուար աղօթիցն Յակովբայ փախուցելոյն 'ի սպառնալեացն Եսաւայ. որ ընդ Յովսեփայ վաճառեցար և կեցուցեր զնա։ Որ լուար Մովսեսի տալով նշանս 'ի փարաւոն և 'ի զօրս իւր, հերձանելով զծովն կարմիր, և առաջնորդելով յանապատ՝ ժողովրդեան քում։ Որ լուար սրբոց քոց առաքելոց, լուր և մեզ, Տէր, զի մի ընկղմեսցէ զմեզ պտոյտք ջուրց. և մի ընկլուզցէ զմեզ խորք՝ զի աղքատացաք մեք յոյժ. օգնեա մեզ, Աստուած փրկիչ մեր, վասն անուան քում. զի կացաք 'ի խորութեան ծովուս, և ներկան մարմինք մեր յարեանց մերոց։ Թեթևացո, Տէր, զծանրութիւն և ըզդառնութիւն օդոյս, Տէր Աստուած մեր, և ծանիցեն ամենեքեան՝ թէ առ քեզ աղաղակեցաք և կեցաք։

---

[1] Այլ օր. զբանտապետն Ագղէոս :

[2] Այլ օր. և հասեալ անդ, 'ի ջերմութենէն խոյոյն եհան զոգին :

Եւ յերրորդ ժամու գիշերոյն, արև ծագեաց զնոքօք ջերմ իբրև յամարայնի, լուծաւ պաղն և եղև ջուրն ջերմ։ Իսկ պահապանքն ամենայն խոր 'ի քուն էին, բայց միայն բանտապանն արթուն էր և ունկն դնէր աղօթից նոցա, և զմտաւ ածէր եթէ զիա՞րդ որ ապաւինեցաւ 'ի բաղանիսն՝ 'ի ջերմութենէն իսկոյն լուծաւ, և սոքա կենդանի են։ Եւ ետես լոյս զնոքօք, հայեցաւ յերկինս նկատել թէ ուստի լոյսն իցէ. և ետես պսակս որ իջանէր 'ի վերայ սրբոցն թուով երեսուն և ինն. ապա մտախորհ լինէր յինքեան եթէ քառասունք են սոքա, զիա՞րդ մին պսակն պակասէ. և գիտաց եթէ որ փախեաւ 'ի բաղանիսն՝ չթուեցաւ 'ի քառասունս։ Յայնժամ զարթոյց զպահապանսն որ ընդ իւրն էին, և ընկէց զհանդերձսն իւր 'ի նոսա, և վազեաց 'ի լիճն, աղաղակելով թէ և ես քրիստոնեայ եմ. և սկսաւ ասել. Տէր Աստուած, հաւատամ 'ի քեզ՝ յոր սոքա հաւատացին. ընդ սոսա համարեա և զիս, և արժանի արա փորձութեան, զի և ես ընտիր գտայց։ Իսկ սատանայ 'ի պարտութիւն մատնեալ, և կերպարանեալ զինքն իբրև զմարդ, խիղըս զծնկով արկեալ՝ ասէր առաջի ամենեցուն. Վա՜յ ինձ, զի յաղթեցայ 'ի սրբոց արանցս, և եղէ ծաղր ամենեցուն. չունէի՞ համաշունչ արբանեակս, այլ ոչ արդեօք պարտեալ լինէի։ Բայց արդ շրջեցից զսիրտս իշխանաց 'ի միասին, և այրեցից զնշխարս սրբոցն, և ընկեցից 'ի գետ. և զայս արարից զի մի գտցին մնացուած ոսկերաց սոցա։ Իսկ սուրբն Կիւրիոն ասէ. Ո՛վ է աստուած մեծ՝ որպէս զԱստուած մեր. կամ ո՛վ է աստուած բայց յԱստուծոյ մերմէ։ Դու ես Աստուած որ առնես զքանչելիս միայն. զի զհակառակորդն 'ի մեր կողմն արարեր, և զպակասութիւն չորրորդ տասինն լցուցեր, և զատամնայ յամօթ արարեր։ Եւ սկսաւ ասել զսաղմոսս զայս. Կեցո զիս, Աստուած, զի պակասեաց սուրբ։ Եւ իբրև եղև առաւօտ, եկին ամպարիշտ բռնաւորքն [1], և տեսեալ զբանտապանն ևս ընդ նոսա, հարցանէին ցզինուորսն եթէ զի՞նչ տեսեալ գործեաց զայն։ Ասեն զինուորքն. Մեք 'ի քնոյն ընդարմացեալք էաք, բայց նա զգիշերս ամենայն արթուն էր. և յանկարծակի զարթոյց զմեզ 'ի քնոյն, և տեսաք լոյս սաստիկ զնոքօք. իսկ նա վաղվաղակի ընկեց զհանդերձս իւր 'ի մեզ, և վազեաց 'ի ներքս առ նոսա, աղաղակելով՝ թէ և ես քրիստոնեայ եմ։ Իսկ բռնաւորացն լցեալ ցասմամբ՝ հրամայեցին քարշել զնոսա 'ի լճէն [2], և բրօք զբարձս նոցա ջարդել։ Իսկ մայր միոյ ուրումն 'ի նոցանէ՝ էր ցանկորդեալ առ նոսա, քանզի էր որդի նորա մանկագոյն քան զամենեսին. երկնչէր թէ գուցէ վատասրտիցէ, յար 'ի նա պշուցեալ հայէր, և կարկառեալ 'ի նա զձեռս իւր՝ ասէր. Քաղցրիկ որդեակ, սակաւիկ մի համբերեա զի կատարեալ լինիցիս. մի երկնչիր, ահա հասեալ է Քրիստոս յօգնականութիւն քեզ։ Եւ սուրբքն խորտակեալք 'ի ջաղոտիցն՝ աւանդեցին զհոգիսն, և ասեն. Ոգիք մեր ապրեցան որպէս ճնճղուկ յորոգայթէ որսողաց. որոգայթ նոցա փշրեցաւ և մեք ապրեցաք. օգնութիւն է մեզ յանուանէ Տեառն՝ որ արար զերկինս և զերկիր։ Եւ ասացեալ միաբան զամէնն՝ աւանդեցին զոգիսն։ Բայց պատանին Մելիտոն որ մխիթարէր 'ի մօրէն՝ դեռ ևս յոգւոջ էր. և հրամայեցին բռնաւորքն ածել սայլս և եդին զմարմինս նոցա 'ի վերայ սայլիցն, բերէին յեզր գետոյն. և թողեալ անդէն զպատանին՝ կարծէին թէ ապրեսցի։ Եւ մօրն տեսեալ զնա միայն մնացեալ, 'ի բաց դնէր զկանացի տկարութիւն, և առեալ առն միտս և ոյժ՝ բարձեալ զորդին իւր յուսն, և առաքինաբար երթայր զհետ սայլիցն։ Իսկ պատանին մինչդեռ յուս մօրն էր՝ ա-

---

[1] Այլ օր. դատաւորքն։

[2] Այլ օր. 'ի լճեղն։

ւանդեաց զհոգին ցնծալով, և բերեալ զնա մօրն՝ ընկեց 'ի վերայ սայլիցն, և սպասաւորացն լուցեալ հուր՝ այրեցին զոսկերս սրբոցն։ Յայնժամ խորհուրդ արարին ընդ միմեանս բռնաւորքն և ասեն. Զնշխարս զայսոսիկ եթէ այսպէս թողուցումք՝ առնուն զսոսա քրիստոնեայք և լի առնեն զաշխարհս։ Ապա քերեցին և մաքրեցին զոսկերս սրբոցն և ընկեցին 'ի գետն. և ժողովեցան նշխարք սրբոցն ընդ դարիւ միով, և ոչ մի 'ի նոցանէ կորոյս գետն։ Իսկ յետ երկուց աւուրց[1] յայտնեցաւ եպիսկոպոսի քաղաքին, եթէ՝ Են 'ի պահեստի նշխարք մեր յայս նիշ տեղւոջ. արդ էկ 'ի գիշերի և հան զմեզ 'ի գետոյս։ Եւ առեալ ընդ իւր եպիսկոպոսն ուխտաւորս յեկեղեցւոյն՝ արս երկիւղածս, եկն եկաց յեզր գետոյն։ Եւ ահա փայլէին նշխարք սրբոցն 'ի ներքոյ ջրոյն իբրև լուսաւորք. և եթէ ուրեք ևս մնացեալ լինէր 'ի նշխարաց սրբոցն՝ 'ի ճաճանչ լուսոյն երևէր։ Եւ իբրև ժողովեցին զնշխարս սրբոցն՝ դարձան 'ի քաղաքն մեծաւ ցնծութեամբ։

Եւ արդ սոքա այսպէս կատարեալք 'ի նահատակութեան իւրեանց՝ փայլեն որպէս լուսաւորք աշխարհի. յԱստուած հաւատացեալք և 'ի Քրիստոս դաւանեալք և 'ի սուրբ Հոգւոյն զօրացեալք, փառաւորեցան ընդ Քրիստոսի. և յիշատակ բարի թողին 'ի փրկութիւն ամենայն հաւատացելոց, 'ի Հայրն, յՈրդի և 'ի Հոգին սուրբ. որում փառք յաւիտեանս. ամէն։

---

[1] Այլ օր. Երից աւուրց։

Վկայաբանութիւն Սրբոյն Քսենոփոնի և Մարիամու կնոջ նորա, և երկու որդւոց նոցա Յովհաննու և Արկադիոսի։

Էր ոմն Սինկղիտոս և անուն նորա Քսենոփոն, և էր մեծատուն յոյժ և փոյթ 'ի պատուիրանն Աստուծոյ։ Եւ էին նորա երկու որդիք, զորս բազում աշխատութեամբ խրատէր՝ կամեցեալ իւրոյն առաքինութեանցն հասուցանել և ժառանգորդ ամենայն ընչից իւրոց կացուցանել։ Առաքեաց զնոսա 'ի Վէրիտոն քաղաք՝ ուսանել զօրէնս և զպատուիրանս, զի մի՛ մնասցեն յանգիտութեան. և իբրև հասին անդ՝ զամենայն զկարօտեալսն որ էին 'ի քաղաքի անդ՝ կերակրէին, զփոքունս և զմեծամեծս, մանաւանդ զօտարս և զանընակս. և ելանէր յոյժ առաքինութեան նոցա համբաւ ընդ ամենայն աշխարհն։

Դէպ եղև 'ի միում[1] աւուրցն հիւանդանալ հօրն, և գրէ առ նոսա մայրն իւրեանց թուղթ, փութով հասանել մինչչև վախճանեալ հօր նոցա։ Եւ լուեալ զհիւանդութիւն հօրն իւրեանց՝ վաղվաղակի անդր հասանէին։ Եւ սկսաւ հայրն խրատել զնոսա այսպէս. Որդեակք իմ, ես այսուհետև հրաժարեմ յայսմ աշխարհէ 'ի հանդերձեալսն. և դուք ձեզէն իսկ գիտէք՝ թէ ո՛րպէս վարեցայ յաշխարհիս, և ո՛րպէս յամենեցունց զսէր և զպատիւ ընկալայ, ոչ եթէ ընչիւք բազմօք, այլ հեզութեամբ և խոնարհութեամբ։ Ոչ զոք երբէք անգոսնեցի, ոչ զոք տրտմեցուցի, ոչ զոք բամբասեցի. ոչ ընդ ումեք նախանձեցայ, ոչ ումեք բարկացայ, ոչ հեռացայ յեկեղեցւոյ զցայգ և զցերեկ, և ոչ երբէք խափանեցի զաղօթս իմ. ոչ արարի զանց զաղքատօք, ոչ ցանկացայ գեղջ օտարի, և ոչ ծանեայ զկին բաց 'ի ծնօղէդ ձերմէ, այլ և ոչ զդա՝ յորմէ հետէ ծնաւ զձեզ. նոյնպէս և դուք, որդեակք, այսպէս եղերուք, զի օրհնեսցէ զձեզ Աստուած և երկայնակեացս արասցէ։ Զորբս ընկալարուք, այրեաց ապաւէն լերուք, դատապարտելոց օգնական լերուք, զգրկեալսն փրկեցէք, զխաղաղութեան զհետ երթայք, զսուրբս ընկալարուք, մանաւանդ. որ յանապատս և 'ի լերինս և յայրս և 'ի ծերպս բնակեալ են՝ առաւել յիշատակեցէք։ Վանականաց յառաջագոյն տեսողք լերուք. պատուեցէք զդասս միայնակեցաց, վասն զի աղօթիւք նոցա բազում բարութիւնք պարգևին աշխարհի։ Գիտէք, որդեակք իմ, զի ոչ երբէք պակասեաց 'ի տանէ և 'ի սեղանոյ իմոյ կրօնաւոր. այլ և յաղօթից և 'ի ժողովրդանոցաց մի հեռանայք, և զպատուիրանաւ ծնօղիդ ձերոյ մի երբէք անցանէք, զհրամանս դորա կատարեցէք երկիւղիւ։ Զայս ամենայն արարէք, զի արժանի լինիցիք զՔրիստոս տեսանել. և Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ։

---

[1] Յօր. 'ի միում։

Եւ լուեալ զայս Յովհաննու և Արկադիոսի՝ սկսան ողբալով ասել. Ո՛վ ամենաբարի հայր մեր, մի թողուր զմեզ տարաժամ. այլ աղաչեա զԱստուած զի սակաւիկ մի կեցցես, և կատարելապէս զխորհուրդս քո հաստատեսցես 'ի մեզ։ Եւ հայրն արտասուելով ասէ ցնոսա, եթէ՝ Յորմէհետէ այց արար ինձ Աստուած և անկեալ դնիմ 'ի մահիճս յայս, զայս աղաչէի զԱստուած. և 'ի գիշերիս յայսմիկ զհասարակաց խնդրուածս շնորհեաց ինձ Աստուած, և յաւել ևս 'ի ժամանակս կենաց իմոց։ Եւ լուեալ զայս մանկանցն՝ ուրախանային և գոհանային զՏեառնէ։ Եւ իբրև ողջացաւ հայրն, ասէ ցնոսա. Որդեակք, երթայք 'ի Վռիտոն քաղաք, կատարեցէք զուսումն ձեր, և փութով դարձարուք՝ զի ամուսնութեան հասանիցէք։ Եւ արկեալ զնոսա 'ի նաւ՝ յուղարկեաց։ Եւ իբրև մեկնեցան 'ի ցամաքէն, շնչեաց հողմ սաստիկ յոյժ, և մերձ էր Նաւն յընկղմել. և իջուցեալ զառագաստն՝ այնպէս ալէկոծէին: Յայնժամ մանկունքն զամենայն սուրբսն յօգնականութիւն կոչէին. և արտասուեալ՝ առ Աստուած կարդային այսպէս.

Բարեգութ Տէր մեր, մի՛ անտես առներ զստեղծուածս քո. այլ վասն բազմագութ մարդասիրութեան քո՝ տուր մեզ օգնականութիւն 'ի նեղութեանս, և փրկեա զմեզ 'ի վտանգէս յայսմանէ. զի մեք արժանի եղիցուք առնել զկամս քո, Տէր, և գտանել զողորմութիւն 'ի քէն: Յիշեա, Տէր, զվաստակս ծնողաց մերոց, և մի՛ հաներ զմեզ 'ի կէս աւուրց մերոց:

Իսկ Նաւն յալեացն առեալ՝ և տագնապէր. և նաւավարացն տեսեալ զտագնապն՝ խնդրէին փախչել. և մտեալ 'ի կուրն պատճառանօք որպէս թէ յօգնականութիւն հասանիցեն Նաւին՝ փախեան: Եւ մնացին մանկունքն 'ի Նաւ անդր հանդերձ ծառայիւքն իւրեանց: Եւ տեսեալ զամենեւին կորուստն, զձեռս զձեռօք արկեալ՝ մեծաւ հառաչանօք աղաղակէին. Ողջո՛յն քեզ, հայր աստուածասէր և բարեպաշտ. ողջո՛յն քեզ, մայր աստուածասէր և հաւատարիմ աղախին Քրիստոսի. ողջո՛յն ձեզ սիրելիք, ողջո՛յն ձեզ ծառայք և աղախնայք. ողջո՛յն քեզ, եղբայր. ո՞ւր են խրատք ծնողացն մերոց, ո՞ւր են պատուիրանաց գիտութիւնք, ո՞ւր և իմաստասիրական ուսմունքն, ո՞ւր և վաստակք հարցն մերոց, ո՞ւր և աղօթք միայնակեցացն. ամենայն յոչ ինչ համարեցան, ամենայն սնոտի եղև, վասն զի մեղք մեր հեռացուցին զմեզ յարդարոյն բարեպաշտութենէ:

Ասէ Արկադիոս ցՅովհաննէս. Արդեօք ո՞չ գտաւ մի ոք արժանաւոր յամենեցունց որք մտանէին 'ի յարկս ծնողաց մերոց, զի 'ի ձեռն աղօթից նոցա փրկէր զմեզ Աստուած: Պատասխանի ետ Յովհաննէս և ասէ ցնա. Այո՛ եղբայր, ամենեքեան են արժանաւոր, բայց միայն մեք անարժանք 'ի կենաց աշխարհիս. այլ միթէ և զայս բարի համարեցաւ Աստուած մեզ: Եւ անկեալ զմիմեամբք ողբալով՝ զմիմեանս համբուրէին ասելով. Ողջո՛յն քեզ, սիրելի եղբայր:

Եւ յետ այսորիկ Նաւն 'ի բռնութենէ ալեացն

յերկուս հերձաւ, և բուռն հարեալ իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ ոմն 'ի տախտակ և ոմն յայլ ինչ փայտ նաւին. և 'ի շնորհացն Աստուծոյ առաջնորդեալ՝ հան զնոսա 'ի սահմանս Տիւրոսի. իսկ Արկադիոս 'ի Տերրապիագա և Յովհաննէս 'ի Տաբթելա։ Եւ Յովհաննէս ածէր զմտաւ եթէ ո՞ւր մարթայցիս երթալ, քանզի մերկ եմ և ամաչեմ 'ի տեսողացն. հայր իմ երանէր միշտ զվարս միայնակեցացն, և արդ բարիոք է՝ կամացն Աստուծոյ խոնարհութեամբ և աղքատութեամբ ծառայել քան մեծութեամբ։ Վասն այսորիկ ոչ լուաւ Աստուած աղօթից մերոց 'ի նաւի անդ, և ոչ ինչ համարեցաւ զկեանս մեր. զի թէպէտ և մեք ոչ ինչ իմանալով հայցեմք զօգուտն 'ի Տեառնէ, սակայն բարեգութն Աստուած ոչ լսէր աղօթից մերոց, այլ զօգտակարսն հոգւոց մերոց կատարէր. արդ երթայց 'ի վանս և անդ լռեցից։ Եւ գոհացեալ զՏեառնէ յաղագս փրկութեան իւրոյ՝ ասէ. Տէր, որ փրկեցեր զիս 'ի վտանգէս յայսմանէ, փրկեա և զծառայն քո զեղբայրն իմ, և արժանի արա միայնակեցութեան։ Եւ ել 'ի սահմանսն յայնոսիկ, և գտանէ արգելավանս մի, յորում բնակեալ էին բազումք միայնակեացք։ Եւ բախեալ զդուրսն՝ եբաց նմա դռնապանն. և տեսեալ զնա մերկ՝ ընկալաւ զնա զուարթութեամբ և ասէ. Բարիոք ած զքեզ Աստուած այսր, որդեակ. և բերեալ հանդերձ զգեցոյց նմա և եդ առաջի նորա սեղան։ Եւ իբրև ուրախացան, ասէ ցնա միայնակեացն. Ուստի՞ իցես որդեակ։ Եւ նա ասէ ցնա. Օտար եմ և աղքատ, և մտեալ 'ի նաւ երթայի 'ի գործ իմ, ընկղմեցաւ նաւն, և ես աղօթիւք հօրն իմոյ փրկեցայ, և ընկեցայ 'ի սահմանս յայս։ Եւ լուեալ զայս միայնակեցին՝ ետ փառս Աստուծոյ, և ասէ ցնա. Ո՞ւր կամիս երթալ։ Ասէ ցնա Յովհաննէս. Եթէ կամք են Աստուծոյ և զանց առնէ զմեղօք իմովք և արժանի լինիմ առնուլ զլուծ նորա՝ կամիմ միայնակեաց լինել։ Ասէ ցնա միայնակեացն. Բարիոք է յօժարութիւնդ քո, որդեակ։ Ասէ Յովհաննէս. Աղաչեմ զքեզ, հայր, կարե՞մ աստ լռել։ Ասէ միայնակեացն. Գիտացուցից զայս վանականին, և որ ինչ կամք են Աստուծոյ՝ այնպէս եղիցի։ Եկաց սակաւ մի և պատմեաց վանականին զամենայն։ Ասէ ցնա աբասրն. Ած զնա այսր։ Եկն Յովհաննէս անկաւ առաջի նորա։ Սկսաւ աբասն խօսել ցնա բանս փրկութեան, և զամենայն վարս միայնակեցութեան պատմեաց նմա, և ասէ. Օրհնեալ է Աստուած ծնողաց քոց՝ որ փըրկեաց զքեզ 'ի նաւէ անտի. և արարեալ զնշան խաչին՝ հրամայեաց փոքրել զհերս նորա։ Եւ լռեաց նա անդ պահօք և աղօթիւք և տքնութեամբ. և հոգայր վասն եղբօրն իւրոյ, քանզի համարէր զնա մեռեալ։

Իսկ եղբայր նորա Արկադիոս ելեալ 'ի ցամաքն անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց, հայցէր 'ի Տեառնէ ասելով. Աստուած ծնողաց իմոց, գոհանամ զքէն, որ փրկեցեր զիս յանհնարին ալեաց ծովուն. և որպէս փրկեցեր զիս փրկեա և զծառայն քո զեղբայրն իմ, զի մի՛ ընկղմեսցեն զնա անդունդք խորոց, և մի՛ ընկղմեսցեն զնա պտոյտք ջուրց. այլ արա զիս արժանի տեսանել զնա։ Եւ զայս ամենայն նորա ասացեալ, գնաց 'ի տեղի մի, խնդրեաց հաց և եկեր և սակաւ մի զօրացաւ։ Եւ մտեալ յեկեղեցին՝ եկաց յաղօթս և ննջեաց 'ի վերայ աթոռոյն. և ետես 'ի տեսլեանն զեղբայրն իւր զՅովհաննէս, զի ասէր ցնա. Եղբայր իմ Արկադիէ, զի՞ լաս վասն իմ, ահա ես կենդանի եմ, մի՛ ինչ հոգաս վասն իմ։

Եւ յարուցեալ 'ի քնոյ անտի՝ ուրախացաւ և գոհացաւ զԱստուծոյ, և ասէ ցմիտս իւր. Զի՞նչ արարից. դարձայց անդրէն առ հայրն իմ. բայց յաղագս ոչ լինելոյ ընդ իս եղբօրն իմոյ՝ տրտմութիւն յոյժ լինի ծնողաց իմոց. թէ ասեմ յուսումն է, մնոտի է. արդ զի՞նչ արարից ոչ գիտեմ։ Հայր իմ յամենայն ժամ երանէր՝ թէ մեծ է պատիւ միայնակեցաց և մերձ առ Աստուած վարս նոցա, և 'ի միւսանգամ գալստեանն առաւել փառաւորագոյն. և արդ զի՞նչ ածից զմտաւ։ Եւ կացեալ յաղօթս՝ գնաց 'ի կողմանս Երուսաղէմի։ Եւ իբրև եղև անդր՝ շրջէր ընդ եկեղեցիսն ընդ որ Տէրն մեր Յիսուս Քրիստոս չարչարեցաւ. և մինչդեռ երթայրն զճանապարհն՝ պատահեցաւ նմա ծեր ոմն, և ընթացեալ անկաւ առաջի նորա և ասէ. Աղօթեա վասն իմ, հայր. վասն զի 'ի բազում տրտմութեան եմ։ Եւ ասէ ծերն. Մի՛ տրտմիր, հայր քո և մայր քո կենդանի են և եղբայր քո, և ամենեքեան որ ընդ քեզ էին 'ի նաւին՝ բազում աշխատութեամբ փրկեցան· այլ և ծառայքն որ ընդ քեզ էին 'ի նաւին՝ միայնակեացք են, և եղբայրն քո· լուաւ Աստուած աղօթից քոց, տեսցես զնա աչօք քո և ապա 'ի կենացս փոխեսցիս։

Եւ լուեալ զամենայն Արկադիոսի, անկաւ առ ոտս ծերոյն, պաղատէր և ասէր· Աղաչեմ զքեզ, հայր սուրբ, ահաւասիկ Աստուած ոչ ծածկեաց 'ի քէն զվարս իմ, այլ զամենայն յայտնեաց քեզ· և արդ մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց, այլ որպէս կամիս՝ կեցո զտառապեալ անձն իմ, և արա զիս միայնակեաց։ Ասէ ծերն· Օրհնեալ եղիցի անուն Տեառն, որդեակ, եկ զկնի իմ։ Եւ տարաւ զնա 'ի վանսն Սուկա, ետ նմա զխրձիթն իւր զառաջին՝ յորում բնակեալ էր ծերն ամս յիսուն և երեք· ուսոյց նմա զամենայն վարս միայնակեցութեան, եդեալ նմա կարգաւորութիւն· և ինքն գնաց յանապատն, ասէ· Յետ երից աւուրց գամ առ քեզ։ Իսկ Արկադիոս առեալ զկարգաւորութիւն ծերոյն՝ փութապէս կատարէր զհրամայեալսն։

Եւ հաւատարիմ ծառայն Քրիստոսի Քսենոփոն ոչ գիտէր զպատահումն որդեկաց իւրոց· առաքէ 'ի Վռիտոն քաղաքն առ նոսա։ Եւ եկեալ պատանին 'ի Վռիտոն՝ քննէր զքաղաքացիսն· և ոչ գտեալ, ասէ ցմիտս իւր· Ապաքէն յԱթէնս երթեալ լիցին։ Գնացին ընդ պողոտայն մինչև յԱթէնս· և մինչդեռ երթայր՝ եկն 'ի պանդոկի մի· և տեսեալ զմի 'ի ծառայից ընկերաց իւրոց որ զգեցեալ էր զգեստ միայնակեցի և երթայր յԵրուսաղէմ, կոչեաց զնա առ ինքն և ասէ ցնա· Վասն անուանն Տեառն, ասա ինձ, ո՞չ դու ես ծառայակիցն իմ։ Եւ նա ասէ· Այո։ Ասէ· Ո՞ւր են տեարքն մեր։ Եւ նորա արտասուեալ ասէ ցնա· Ի ծովու անդ ընկղմեցան, և ես միայն ապրեցայ և լաւագոյն համարեցայ զվարս միայնակեցութեան՝ քան եթէ դառնալ առ տէրն մեր և լինել հրեշտակ չար, և տրտմութիւն հասուցանել նոցա և ծառայակցաց իմոց։ Եւ լուեալ զայս պատանւոյն՝ սկսաւ ձեռօքն կոծել զկուրծս իւր, և մեծաւ հառաչանօք ողբայր զտեարսն իւր, ասելով. Վա՜յ ինձ, բարի տեարք իմ. ո՞ պատմեսցէ մեծագութ հօրն ձերոյ զմահս ձեր, ո՞ աչք բաւական է տեսանել զնորա տրտմութիւնն, ո՞ ժառանգեսցէ զինչս նորա, ո՞ նմանիցէ բարի բարուց նորա, ո՞ զտարսն ընդունի, ո՞ պատրաստէ սեղան աղքատաց, ո՞ զկաղանաւորսն արձակեսցէ, ո՞ հիւանդաց զպէտս պատրաստէ, ո՞ զսուրբ զեկեղեցիսն զարդարեսցէ, ո՞ արթնութեամբ եւ աշխատութեամբ զԱստուած փառաւորեսցէ: Վա՜յ ինձ, բարի տեարք իմ. պակասեաց լոյս իմ, շիջաւ ճրագ իմ. ամենեքեան մեծապէս ողբացէք զիս, քանզի հանգիստն մեր էանց, պաղատանքն մեր դադարեաց, ուրախութիւն մեր էանց, գանձն մեր գողացաւ: Վա՜յ ինձ, բարի տեարք իմ, ո՞ զծառայակիցս իմ զարդարեսցէ, ո՞ վանականացս պէտս պատրաստեսցէ. ամենայն էանց եւ յոչ ինչ համարեցաւ: Եւ զինչ արարից՝ ոչ գիտեմ. եթէ դարձայց առ տէրն իմ, ո՞վ կարասցէ պատմել եթէ որդիքն քո 'ի ծովուն վախճանեցան. կամ ո՞ կարէ լսել զարտասուս մօրն, ո՞ր լսելիք կարող լինի լսել զողբումն ծառայիցն, եւ զսիրելեացն զհեծութիւն ո՞ դադարեցուսցէ: Զայս ամենայն ողբալով ասէր: Իսկ որ էին 'ի տեղւոջն՝ աղաչէին զնա լռել եւ երթալ պատմել նոցա, եւ ասէին. Գուցէ եթէ ոչ երթաս՝ բարկանայցեն քեզ տեարքն քո եւ ջնջեսցիս 'ի կենաց: Եւ հաւանեալ նորա՝ դարձաւ առ նոսա. եւ մտեալ 'ի տունն՝ նստաւ տրտմեալ:

Յայնժամ լուաւ տիկինն զգալ պատանւոյն, հրամայեաց կոչել զնա առ ինքն եւ ասէ. Զիա՞րդ կան որդեակքն իմ: Եւ նա ասէ. Բարիոք: Եւ իբրեւ խնդրեաց զթուղթն՝ ասէ ցնա. Ի ճանապարհին կորուսի. եւ սկըսաւ խռովել սիրտ նորա: Ասէ ցնա. Երկիւղիւն Աստուծոյ, ասա ինձ զճշմարիտն: Յայնժամ հոգւոց հանեալ պատանւոյն՝ ասէ ցտիկինն. Վա՜յ ինձ, տիկին իմ, զի լոյսն քո 'ի ծովուն շիջաւ: Եւ լուեալ կնոջն՝ ետ փառս Աստուծոյ, եւ ասէ ցպատանին. Մի՛ ումեք ասես որ ինչ եղեւ. Տէր ետ եւ Տէր էառ. եղիցի անուն Տեառն օրհնեալ յաւիտեանս:

Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ եկն տէրն Քսենոփոն 'ի պալատէն, եւ բազում սպասաւորք գային առաջի եւ զկնի նորա. յուղարկեաց զնոսա, և մտեալ 'ի տուն իւր փոխեաց զհանդերձն, բազմեցաւ և կամէր ճաշակել, քանզի յամենայն օր յիններորդ ժամուն ճաշակէր։ Եւ մինչդեռ կայր բազմեալ՝ ասէ ցնա կինն իւր. Տէր, գիտացե՞ր զգալ պատանւոյն զոր 'ի Վախտոն առաքեցեր։ Եւ իբրև լուաւ զգալ պատանւոյն՝ ետ փառս Աստուծոյ, և ասէ. Ո՞ւր է պատանին։ Ասէ ցնա կինն իւր. Հիւանդ անկեալ դնի։ Ասէ ցնա տէրն Քսենոփոն. Բերցի թուղթ մանկանցն։ Ասէ ցնա կինն. Թոյլ տուր նախ զի կերիցուք հաց, և վաղիւն տեսանես զի ունի ինչ ասել քեզ։ Եւ նորա դարձեալ ասէ. Բեր այսուհետև զթուղթն, զի գիտացից թէ որպէս են որդեակքն մեր, և 'ի վաղիւն ինքն եկեսցէ և ասասցէ զպատուիրեալսն։

Իսկ մայրն ոչ կարաց ժուժել վասն գթոյ աղեացն, արտասուելով ոչ կարաց տալ պատասխանի. և տեսեալ զնա զի լայր, ասէ ցնա. Միթէ արդեօք հիւանդացեա՞լ են որդեակքն մեր։ Եւ նա ասէ. Ոչ են հիւանդացեալ, տէր, այլ զմարդարիտն քո 'ի ծովու անդ կորուսեր։ Եւ նորա յոգւոց հանեալ՝ ետ փառս Աստուծոյ և ասէ. Տէր ետ և Տէր էառ, որպէս հաճոյ Տեառն թուեցաւ՝ այնպէս եղիցի. և եղիցի անուն Տեառն օրհնեալ յաւիտեանս։ Ո՛վ կին, մի՛ տրտմիր, քանզի ոչ թողացուցանէ Տէր այսպիսի լինել, և ոչ տրտմեցուցանէ զծերութիւն իմ. քանզի ոչ երբէք անցի զպատուիրանաւն նորա, յորմէհետէ եկի 'ի չափ հասակի։ Արդ եկ տքնեսցուք 'ի գիշերիս յայսմիկ, և Տէր յայտնեսցէ մեզ զպատահումն որդեկաց մերոց. և կային յաղօթս առ Աստուած զամենայն գիշերն բազում արտասուօք և հառաչմամբ։ Եւ իբրև առաւօտ եղև՝ անկան 'ի վերայ քրձի և ննջեցին, և տեսանէին 'ի տեսլեան զերկու որդիսն իւրեանց՝ զի կային առաջի Քրիստոսի. Յովհաննէս ունէր 'ի գլուխ իւր պսակ պատուական յոյժ. իսկ Արկադիոս պսակ աստղանման ունէր, և խաչ 'ի ձեռին իւրում. և յարուցեալ պատմեցին միմեանց զտեսիլն։ Եւ ասէ Քսենոփոն ցՄարիամ. Որդեակքն մեր մեծ պատուոյ արժանի են, և գիտեա զի յԵրուսաղէմ են, և յոյս ունիմք 'ի Տէր Աստուած՝ զի հանդիպիմք նոցա։ Եւ յարուցեալ առին ինչս բազումս և գնացին։ Իբրև անդ շրջեցան ընդ ամենայն եկեղեցիս՝ խնդրէին զնոսա և ոչ գտանէին. և գտեալ զմի 'ի ծառայից իրոց՝ որ զգեցեալ էր զգեստ միայնակեցի, համբուրեաց զնա և անկաւ առ ոտսն նորա. և նա դարձեալ անկաւ առաջի նորա և աղաչէր զնա՝ մի այնպէս խոնարհել նմա։

Ասէ ցնա տէրն Քսենոփոն. Ոչ եթէ քեզ մատուցանեմ զերկրպագութիւնդ, այլ զգեստիդ զոր ունիս, քանզի սրբոց առաքելոցն է. մի տրտմիր, այլ ասա՝ ո՞ւր են որդիքն մեր։ Պատասխանի ետ և ասէ. Ոչ գիտեմ. բայց յընկղմել նաւուն իւրաքանչիւր ոք անձին իրում յօգնականութիւն փութայր. եթէ վախճանեցան և եթէ կենդանի են՝ Աստուած միայն գիտէ։ Եւ նոցա թողեալ զնա՝ գնացին 'ի կողմանս Յորդանանու, զի տայցեն և անդ յընչից իւրեանց։ Եւ մինչդեռ երթային, դէպ եղէն ծերոյն որ ընկալեալ էր զԱրկադիոս 'ի միայնակեցութիւն։ Եւ անկեալ առ ոտս նորա՝ աղաչէին զնա զի արասցէ 'ի վերայ նոցա աղօթս։ Եւ իբրև կատարեաց զաղօթսն, ասէ ծերն ցՔսենոփոն. Ո՞վ ստիպեաց զքեզ և զՄարիամ գալ 'ի կողմանս Երուսաղեմի։ Եւ նա ասէ. Ոչ ոք, բայց միայն որդեկաց մերոց վտանգն։ Եւ ասէ ծերն. Մի տրտմիք, քանզի որդեակքն ձեր կենդանի են. այլ և 'ի տեսլեանն յայտնեաց ձեզ Աստուած զփառս նոցա. գնացէք կատարեցէք զուխտս ձեր, և 'ի դառնալն ձեր տեսանէք զորդեակսն ձեր։ Եւ աղօթս արարեալ յուղարկեաց զնոսա։ Եւ եկեալ ծերոյն 'ի սուրբ Յարութիւնն՝ աղօթս արար և նստաւ. և ահա գայր Յովհաննէս կալ յաղօթս. և իբրև ետես զծերն, անկաւ առաջի նորա։ Եւ ծերն աղօթս արարեալ յարոյց զնա. և ասէ ցՅովհաննէս. Ահաւասիկ հայր և մայր քո խնդրեն զքեզ, և դու եկիր այսր 'ի խնդիր վասն եղբօրն քո։ Ասէ Յովհաննէս ընդ ծերն. Վասն անուան Տեառն ասա ինձ, ո՞ւր է եղբայրն իմ, վասն զի յոյժ տրտում եմ վասն նորա մինչև ցայժմ. զհաւաստեաւն ոչ երբէք գիտացի զկենդանութիւն նորա, բայց միայն լուայ 'ի բերանոյ քումմէ։

Եւ ահա գայր Արկադիոս, և էր տկարացեալ յոյժ, մինչև լոյս աչաց իւրոց պակասեալ էր 'ի բազում ճգնութենէն. և կացեալ յաղօթս՝ ետես զծերն, անկաւ առաջի նորա և ասէ. Հայր, այս երեք ամք են զի թողեր զագարակն, և ոչ եկիր 'ի տեսանել զնա, բազում փուշք ելին 'ի նա: Եւ ասէ ցնա. Որդեակ, հանապազ անցանէի ընդ նա, և ակն ունէի չբուսանելոյ 'ի նա փուշ, այլ ողկոյզ բարի և ցորեան պարարտ, յորմէ կերակրի Թագաւորն Թագաւորաց և ուրախանայ: Եւ յայտնեաց նմա ծերն վասն եղբօրն:

Ասէ ծերն ցՅովհաննէս. Յորմէ՞ աշխարհէ ես, որդեակ: Նա պատասխանի ետ և ասէ. Հայր, օտար եմ և աղքատ, և հայցեմ 'ի Տեառնէ զողորմութիւն և 'ի սուրբ աղօթից քոց: Ասէ ծերն. Այո՛, զայդ և ես գիտեմ. այլ պատմեա ինձ զազգէ քումմէ և զքաղաքէն՝ յորում դու ես սնեալ. և այնպէս փառաւորեաց զԱստուած: Եւ սկսաւ Յովհաննէս պատմել մի ըստ միոջէ: Եւ յորժամ պատմեաց յաղագս նաւակոծութեանն՝ թէ եղբայր ունէի և անուն նորա Արկադիոս. և իբրև լուաւ Արկադիոս, ոչ հանդուրժեաց վասն աղետական գթոյ եղբօրն. ասէ ցծերն. Արդարութեամբ ասեմ, հայր սուրբ, սա է եղբայրն իմ: Ասէ ծերն. Եւ ես գիտէի, բայց յաղագս որոյ լռեցի, զի դուք ձեզէն ճանաչէիք զմիմեանս: Եւ խնդրէին 'ի ծերոյն՝ զի արասցէ 'ի վերայ նոցա աղօթս. և գոհանային զՏեառնէ՝ որ արժանի արար տեսանել զմիմեանս այսպիսի զգեստիւ, և անկան առաջի ծերոյն:

Եւ յետ երկուց աւուրց գայր ծերն, և ունէր ընդ իւր զեղբարսն զերկոսեան: Եւ ահա եկին ծնօղք նոցա 'ի Գողգոթա, և ետուն անդ գանձս բազումս 'ի գերեզմանն Տեառն: Եւ իբրև ելին՝ տեսին զծերն, և ծանուցեալ զնա անկան առ ոտս նորա. և արարեալ 'ի վերայ նոցա աղօթս՝ յարոյց զնոսա: Եւ ասեն ցնա. Վասն անուան Տեառն, ցոյց մեզ զորդեակսն մեր, որպէս ասացեր մեզ: Եւ նոքա կային առաջի նորա, բայց պատուէր առեալ 'ի ծերոյն ոչ բարբառել: Իսկ ծնօղքն ամենևին ոչ ծանեան զնոսա, քանզի ապականեալ էր գեղ նոցա 'ի բազում ճգնութենէն: Ասէ ցնոսա ծերն. Գնացէք պատրաստեցէք կերակուր աղնիւ, զի եկից աշակերտօքս իմովք, և ապա տարայց զձեզ առ որդեակսն ձեր: Եւ նոքա լի եղեն ուրախութեամբ, որ արժանի արար զնոսա ծերն այնպիսի հրամանի. և փութապէս գնացին պատրաստեցին կերակուր: Եւ ասէ ծերն ցեղբարսն. Պարկեշտացարուք: Եւ ասեն. Որպէս կամիս, այնպէս արասցուք: Ասէ ծերն. Եկայք, որդեակք իմ, գնասցուք առ նոսա, քանզի այս ոչ վնասէ ձեզ, զի որքան ես աշխատիք, չափոյ աշխատութեան հօր և մօր ոչ կարէք հասանել. և այսպիսի առն և կնոջ խօսել՝ մեծ օգտակարանօք: Զայս ասացեալ գնացին: Եւ իբրև բազմեցան, ասեն ցծերն. Հայր սուրբ, ո՞րպէս են որդեակքն մեր: Եւ ասէ ծերն. Բարիոք, և փութան կատարեալք լինել: Եւ ասեն ծնօղքն. Տէր Աստուած օգնեսցէ նոցա, և արժանի արասցէ մշակ այգւոյն իւրոյ, և զմեզ փրկեսցէ 'ի հրոյն յաւիտենից: Ասէ ծերն ցԱրկադիոս. Որդեակ, պատմեա ինձ յորմէ՞ քաղաքէ ես, և ո՞յք են ծնօղքն քո, կամ ո՞ւր մնար: Եւ ասէ տէրն Քսենոփոն. Արդարութեամբ ասեմ, հայր սուրբ, բարի աշակերտք ունիս, քանզի սիրտ իմ յօժարութեամբ սիրեաց զնոսա, ամենևին հաճոյ թուեցան ինձ, զի տեսանեմ զդոսա արժանաւորս Աստուծոյ: Արդ աղաչեմ զքեզ, հայր սուրբ, զի և որդեակքն մեր այսպիսիք լինիցին կատարեալք: Ասէ Արկադիոս ընդ ծերն. Ես 'ի Բիւզանդիոն քաղաքէ եմ, որդի մեծի և փառաւորի 'ի թագաւորի պալատէ, հօր բարեպաշտի և մօր ազնուատոհմի[1]. ունէի և այլ եղբայր և սնուցին զմեզ ծնօղքն մեր, ուսուցին զմեզ բարւոք և փոյթ 'ի պատուիրանս Աստուծոյ. ուսուցին մեզ զամենայն հելլենական և զհռովմէական դպրութիւն, և զինուորեցին զմեզ ըստ արքայական պատուոյ, և առաքեցին զմեզ 'ի Վերիտոն քաղաք ուսանել զօրէնս: Եւ մինչդեռ երթայաք՝ ընկղմեցաւ նաւն, և ըստ կամացն Աստուծոյ անկաք 'ի կողմանս այս: Եւ մինչդեռ պատմէր նա, ոչ հանդուրժեցին ծնօղքն նորա. յարուցեալ գիրկս արկանէին զպարանոցաւ նոցա, և ողբալով ասէին. Սոքա են որդեակքն մեր. և արդ, հայր սուրբ, արի՛ք տացուք փառս Աստուծոյ, և արասցուք աղօթս զի արժանի արասցէ զմեզ Տէր Աստուած ողորմութեան իւրոյ. և արարեալ աղօթս, ծերոյն տուեալ փառս Աստուծոյ: Եւ աղաչեցին զծերն զի փոքրեսցէ զհերս նոցա և տացէ զսուրբ ըզգեստն: Իսկ ծերոյն աղօթս արարեալ, ըստ կարգաւորութեան փոքրեաց զհերս նոցա. պատուիրեաց նոցա զի մի՛ ևս տեսանել զմիմեանս: Եւ եղբարցն հրաժարեալ գնացին զհետ ծերոյն, և անդ կատարեցան և արժանի եղեն շնորհի բժշկութեան:

---

[1] Յօր. Արտաքսնէ:

Եւ հայրն նոցա արձակեաց և վաճառեաց զինչս իւր և ետ աղքատաց, և ազատեաց զծառայս իւր և ետ նոցա յընչից իւրոց: Իսկ մայրն 'ի կուսանոցն գնացեալ, բարի և առաքինասէր վարուք կացեալ՝ բազում բժշկութիւն առնէր. զկոյրս լուսաւորէր, զդևս հանէր. և այսպէս փոխեցաւ 'ի Քրիստոս:

Իսկ տէրն Քսենոփոն զգեցաւ քուրձ և գնաց յանապատն, կացեալ անդ զժամանակս իւր, արժանի եղև յառաջգիտութեան մեծի խորհրդոյն. և այնպէս փոխեցաւ 'ի կենացս:

Զայս պատուիրեմ ձեզ, եղբարք, զի գիտասջիք, թէ որպէս բարի և առաքինի վարուք զկեանս իւրեանց անցուցին. ոչ թողացուցանէ Տէր Աստուած կորնչել, այլ զօգտակարսն հոգւոց նոցա կատարէ 'ի ձեռն փորձութեանց և տրտմութեանց. և որպէս սոցա եցոյց զմարդասիրութիւն իւր, զի կեցցեն որք փափագին 'ի նա, և զխոստացեալ պարգևսն ժառանգեսցեն: Եւ մեք այսուհետև մի՛ յապաղեսցուք զժամանակս ապաշխարութեան, արկանելով 'ի սիրտս մեր զերկիւղն Աստուծոյ. և փութասցուք հասանել յաւիտենական կենացն, 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր. որում փառք յաւիտեանս. ամէն:

Վկայաբանութիւն Սրբոյն Քրիստափորի.

Յամս թագաւորութեանն Յուլիանոսի և դատաւորութեանն Դեկոսի՝ էր հալածումն մեծ քրիստոնէից, և հայհոյէր անունն Տեառն, և նեղէին զքրիստոնեայս ամենայն ուրեք։ Եւ էր այր մի Շանագլուխ, գտեալ զնա կոմսի մի 'ի պատերազմի, և ած զնա առ թագաւորն և զինուորեցոյց զնա ընդ զօրս իւր. որոյ անունն էր Մարգարիտ։ Եւ տեսեալ զգործս ամպարշտութեանն՝ խռովէր, և շարժեալ սիրտ նորա 'ի շնորհաց սուրբ Հոգւոյն՝ աղաչէր զԱստուած լինել ձեռնտու և օգնական յամենայնի, զի համարձակեսցի խօսել զբանն կենաց նովին բարբառով և լեզուաւ, և ոչ էր տեղեակ լեզուին։ Եւ շնորհեալ նմա 'ի վերին զօրութենէն՝ հաւատոյ հաստատութիւն և գիտութիւն ճշմարիտ բանի և հաղորդութիւն սիրոյն Աստուծոյ և ցանկութիւն որ առ Աստուած. և զօրացեալ փառաւորէր զԱստուած։ Եւ տեսեալ զի չարչարէին զքրիստոնեայսն զինուորք դատաւորին, ասէ ցնոսա. Ո՛հ, պաշտօնեայք ամպարշտութեան և ըմբռնեալք 'ի ձեռն սատանայի, դուք զերկիւղածսն Աստուծոյ ընդ ձեզ կամիք կորուսանել։ Եւ զարհուրեցուցանէր զնոսա ահաւոր բանիւ և տեսլեամբ. որք երթեալ պատմեցին դատաւորին զառնն վրէժխնդրութիւն 'ի վերայ քրիստոնէիցն. միանգամայն զի և զՔրիստոս փառաւորէր և զաստուածսն արհամարհէր և զհրամանս թագաւորացն։ Վասն այսորիկ, ասեն, ծանուցաք քեզ, զի որպէս հաճոյ թուի քեզ՝ արասցես։

Յայնժամ առաքեաց զօրականս երկերիւր զի բերցեն զնա։ Եւ նոցա գնացեալ՝ ածէին զնա յատեանն, զի ստուգագոյնս գիտասցէ վասն նորա։ Իսկ երանելին երթեալ 'ի տուն Աստուծոյ՝ կայր առաջի բեմին, և զայս առանձին աղօթս մատուցանէր. Գոհանամ զքէն, Տէր, վասն մեծի շնորհացդ զոր շնորհեցեր ինձ ճանաչել զքեզ և առնել զկամս քո։ Եւ այժմ մի թողուր զիս 'ի քումմէ օգնականութենէդ, այլ առաջնորդեա ինձ 'ի խորհուրդս կամաց քոց ըստ հաճութեան քում, զի բարձրասցի անուն քո և փառաւորեսցի. զի դու միայն ես պատուի և փառաց արժանի։ Եւ բազում արտասուս հեղոյր առաջի բեմին պաղատելով։

Եւ անդէն վաղվաղակի հասին զինուորքն մինչդեռ յաղօթս էր, և կալեալ զնա տանել յատեանն հանդերձ կապանօք, և պատմեցին նմա զբանս թագաւորին։ Եւ ասէ երանելին. Քրիստոս արձակեաց զիս 'ի կապանաց սատանայի և յամենայն պատրանաց նորա, և առաջնորդեաց ինձ 'ի խաւարէ 'ի լոյս, յանաստուածութենէ յաստուածգիտութիւն ճշմարիտ։ Խնդութեամբ ընդունիմ զկապանս և զչարչարանս և զմահ վասն Քրիստոսի, զի նա վասն իմ կրեաց զայս ամենայն կամաւորութեամբ, որ տէրն է երկնի և երկրի. և որք ծանեան զնա և հաւատացին, զամենեսեան լուսաւորէ և կոչէ յիւր արքայութիւնն. և եթէ դուք կամիք, բաց է դուռն ողորմութեանն և ընդունի զձեզ։ Եւ զահի հարան յերևմանէն՝ զոր Տէր եցոյց նոցա. և եբաց զմիտս նոցա ընդունել ըզբանն կենաց՝ զոր քարոզեաց երանելին յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի։ Եւ այլ բազում ևս խօսեցաւ երանելին. և հաւատացին արքն այնոքիկ յամենասուրբ Երրորդութիւն, որք առաքեցան 'ի թագաւորէն։ Իսկ երանելին սկսաւ գոհանալ զՏեառնէ, և ասէր զսաղմոսս զայս. Աստ օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն զՏէր, որք եկիք 'ի տուն Տեառն, 'ի գաւիթս Աստուծոյ մերոյ. համբարձէք զձեռս ձեր 'ի սրբութիւն և օրհնեցէք զՏէր։

Եւ կատարեալ զսաղմոսն, և կացեալ յաղօթս հանդերձ նոքօք՝ գոհանայր զՏեառնէ։ Ապա կոչեաց զերեց տեղւոյն այնորիկ, որում անուն էր Պետրոս, զի մկրտեսցէ զնոսա հանդերձ նովաւ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Իբրև մկրտեաց՝ անուանեաց զերանելին Քրիստափոր, որ յառաջն կոչէր Մարգարիտ, և յանձն արար շնորհացն Քրիստոսի։ Իսկ երանելին Քրիստափոր մխիթարէր զնորահաւատսն և ասէր. Որդեակք իմ, զորս 'ի Քրիստոս աւետարանաւըն ծնայ, ում ետուք զանձինս ձեր 'ի զինուորութիւնս. հաստատուն կացէք յամենայն գործս արդարութեան, զի հաճոյ եղեալք Քրիստոսի յուսոյն մերոյ՝ ժառանգեսջիք զյաւիտենական փառսն։ Եւ միաբան պատասխանի տուեալ ասեն. Ընդ քեզ եմք 'ի կեալ և 'ի մեռանել. զոր ինչ կամիս արա։ Ասէ ցնոսա. Արիք, երթիցուք միաբան յատեանն, և կապանօք տարջիք զիս, որպէս հրամայեաց ձեզ դատաւորն։ Եւ նոքա ոչ կամէին։ Ապա երանելին հաւանեցոյց զնոսա քաղցր բանիւք իւրովք. և նոքա հաւանեալ տարան զնա կապանօք առաջի դատաւորին. և էր ահաւոր տեսլեամբ 'ի ձեռն շնորհացն Քրիստոսի։

Ապա հարցանէր դատաւորն, թէ՝ Վասն էր վրէժխնդիր լինիս քրիստոնէիցն և զաստուածսն արհամարհես և զհրամանս թագաւորացն. և եթէ՝ զինչ անուն է քո և կամ յորմէ՞ ազգէ ես, ասա ինձ ստոյգ։ Պատասխանի ետ սուրբն և ասէ. Զազգն իմ կերպարանքս ցուցանէ, և անուանեցայ մկրտութեամբ Քրիստափոր, այսինքն քրիստոսազգեաց, զի զՔրիստոս զգեցեալ՝ մերկացայ 'ի խաւարէ կռապաշտութեանն, և զաստուածսն ձեռագործս արհամարհեմ և զհրամանս թագաւորաց. և միայն երկնաւոր և անմահ թագաւորին երկիր պագանեմ և փառաւորեմ։ Ասէ դատաւորն. Մի՛ այդպէս յանդուգն բարբանջեր, այլ հաւանեա զոհել, և պարգևս մեծամեծս ընդունիցիս 'ի թագաւորէն և պատիւ։ Ապա թէ ոչ կամիցիս լսել, ազգի ազգի տանջանօք նեղեմ զքեզ՝ մինչև անդէն մեռցիս, և ոչ կարասցէ փրկել զքեզ Քրիստոս 'ի ձեռաց իմոց։ Ասէ սուրբն Քրիստափոր. Ոչ իշխանութիւնդ քո պիտոյ է ինձ և ոչ պատիւ և ոչ պարգևք՝ զոր խոստանաս, և ոչ 'ի տանջանաց քոց երկեայց և ոչ 'ի մահուանէ զոր ածելոց ես 'ի վերայ իմ. զի յուսացեալ եմ յԱստուած փրկիչ իմ, որ կարողն է անշարժ պահել զիս 'ի ճշմարիտ խոստովանութեանս. և զայս գիտա՝ զի դիւաց ես ոչ զոհեմ. զոր ինչ առնելոց ես արա վաղվաղակի։

Յայնժամ հրամայեաց դատաւորն զսուրբն Քրիստափոր կախել և քերել։ Իբրև այսպէս յերկար տանջեցաւ՝ ամենևին ոչ խոտորեցաւ 'ի բանս Թագաւորին, այլ միայն գոհանայր և օրհնէր զԱստուած մինչև զարմանալ դատաւորին, զի առ ոչ ինչ համարէր զտանջանս. ապա խորհէր թէ զինչ արասցէ։ Եւ այր մի մատուցեալ ասէ ցդատաւորն. կոչեսցին կանայք պոռնիկք և արգելցին 'ի տան ուրեք նոքօք, և այնպէս պահեսցի։ Եւ հաճոյ թուեցաւ դատաւորին, և հրամայեաց կոչել զարդարեալ. և խրատէր զնոսա զի կերպարանօք պոռնկութեան լուծցեն 'ի զգաստութենէն, զի այնպէս հաւանեսցի։ Իբրև տարան 'ի տունն ընդ սուրբն Աստուծոյ և զպոռնիկսն զկնի, յայնժամ յարուցեալ սուրբն՝ կայր յաղօթս առ Տէր, և խնդրէր զդարձ պոռնկացն և հեղոյր արտասուս առաջի Քրիստոսի վասն նոցա փրկութեան և թողութեան մեղաց. զի քո են արարածք, ասէ, և քեզ լիցին երկրպագուք սրբեալք 'ի մեղաց՝ հաւատով և մկրտութեամբ 'ի փառս Աստուծոյ։ Եւ յետ աղօթիցն՝ քարոզեաց նոցա զՔրիստոս. և վաղվաղակի հաւանեցան յաղդմանէ Աստուծոյ 'ի ձեռն աղօթից սրբոյն. և հաւատացին յԱստուած, և խոստովան եղեն զմեղս իւրեանց, և յանձն առին զսրբութիւն, և մեռանել վասն Քրիստոսի, միայն թէ ընկալցի Աստուածն ողորմած։

Եւ անդէն եհաս հրաման դատաւորին կոչել յատեան՝ թէ հաւանեցուցէ՞ք զայրդ 'ի կամս ձեր և 'ի փառս աստուածոցն։ Ասեն ցնա. Ոչ դա 'ի մերս, այլ մեք դովաւ ծանեաք զՔրիստոս, և զկուռս արհամարհեմք, և զգաստացաք 'ի սրբութիւն, և յայսմհետէ Աստուծոյ փառս հատուսցուք։ Բարկացեալ դատաւորն՝ հրամայեաց կախել զնոսա և տանջել յերկար մինչև անդէն մեռցին։ Իսկ սուրբն յաղօթս կայր առ Աստուած վասն նոցա՝ խնդրել զշնորհս մարդասիրութեանն Քրիստոսի և զհամբերութիւն տանջանացն։ Ապա աւանդեցին զոգիս բարի խոստովանութեամբ 'ի Քրիստոս, սրբեալք 'ի մեղաց շնորհօքն Քրիստոսի, 'ի ձեռն հեղման արեան իւրեանց, որոց անուանք էին միումն Կալլինիկիա և միւսումն Ակիւլինիա, և հրամայէր այրել զերանելիսն:

Ցետ այսորիկ ետ ածել զսուրբն Քրիստափոր առաջի իւր և ասէ. Զարամիտ և չարարուեստ, մինչև յե՞րբ կաս յամառութեան և ոչ հաւանիս հրամանի թագաւորին, 'ի փառս աստուածոցն: Ասէ սուրբն. Ես հրամանի Աստուծոյ իմոյ հնազանդեալ եմ՝ արարչին ամենեցուն, և նմա միայնոյ մատուցանեմ զփառս, այժմ և յաւիտեանս: Որոց ասացեալ զամենն՝ արանց երկերիւրից որք յառաջ հաւատացին 'ի Քրիստոս, խոստովանեցան զինքեանս քրիստոնեայս առաջի դատաւորին, յորոց վերայ սուր եդեալ կոտորեցին: Որոց ասացեալ և նոցա զայս. Փառք քեզ, Քրիստոս, որ արժանի արարեր զմեզ մեռանել վասն անուանդ քո մեծի, և այժմ ընկալ զմեզ յանուն քո 'ի հոտ անուշից:

Իսկ զերանելին Քրիստափոր 'ի դառնագոյն տանջանս հրամայեաց արկանել. զի մի՛, ասէ, արագ լիցի դմա ընդ այլսն վախճան իբրև սակաւամեղի: Եւ հրամայեաց բերել ձիւթ և ձէթ և արկանել 'ի սան մի պղնձի, և հրամայեաց եռացուցանել և կացուցանել զնահատակն յեռանդանն. և ապրեալ լինէր 'ի վերին զօրութենէն: Իբրև տեսին զքանչելիսն, բազումք հաւատացին, և բռնաւորն յամօթ լինէր գործակցաւն իւրով սատանայիւ: Եւ բարկացեալ բռնաւորն 'ի վերայ այնոցիկ որք հաւատացին, հրամայէր սրով բառնալ 'ի կենացս և այրել զմարմինս նոցա: Ապա հրամայէր քար կապել ընդ սուրբն Քրիստափոր և քարշել յերկար. սակայն և այնպէս ոչ մեռաւ, այլ կայր մեծաւ ուժով շնորհիւն Տեառն, և գոհանայր զԱստուծոյ: Եւ զարմանայր բռնաւորն ընդ ժուժկալեն նորա՝ թէ զիա՞րդ ոչ մեռաւ վաղվաղակի: Եւ ասէ ցսուրբն. Զի՞նչ եդեր 'ի մտի, թէ արդ չհաւանեսցիս որ յայդպիսի տանջանս մատնեցար, և Քրիստոսն քո քեզ ոչ օգնեաց՝ յոր յուսացեալ էիր զերծանել նովաւ: Ասէ սուրբն Քրիստափոր. Ծանիր զամպարշտութիւն քո և զյաղթութիւնն Քրիստոսի, զի ոչ կարացեր զիս հաւանեցուցանել տանջանօքդ քո՝ զոր ածեր ՚ի վերայ իմ, զի զօրութեամբն Քրիստոսի մարտեայ և յաղթեցի, և փութամ ելանել ՚ի մարմնոյս և մտանել առ Աստուած ընդ այնոսիկ՝ որք փոխեցան առ Աստուած Տէր մեր Յիսուս Քրիստոս ՚ի ձեռն քո։

Իբրև ետես բռնաւորն զհաստատուն միտս սրբոյն և զինքն յաղթահարեալ, զմտաւ ածէր սրով բառնալ զերանելին փութով ՚ի կենացս, զի մի և այլք ևս նովաւ հաւատասցեն ՚ի Քրիստոս, և արհամարհեսցեն զնորա պաշտամունքն. ապա հրաման տայր գլխատել զսուրբն Քրիստափոր։ Իբրև տարան ՚ի տեղի կատարմանն, աղաչեաց ներել սակաւիկ մի՝ զի յաղօթս կացցէ. և խոնարհեցուցեալ ծունր հանդերձ արտասուօք, ասէր այսպէս. Տէր Աստուած իմ, յիշեա զիս որ վասն անուան քո մեռանիմ. և ընկալ զիս ընդ այնոսիկ՝ որոց փառաւորեալ են մահք իւրեանց առաջի քո. որ փրկեցեր զիս յամենայն նեղութենէ չարչարանաց, և զատելիս իմ յամօթ արարեր. և զյոյս իմ որ ՚ի քեզ՝ հաստատուն պահեցեր։ Եւ ես զի՞նչ տաց տրիտուր Տեառն ընդ ամենայնի զոր ետ ինձ. այլ զբաժակ մահու ընկալայց և զանուն Տեառն կարդացից, և խոստովան եղէց քեզ վասն ողորմութեան և ճշմարտութեան քո։ Յիսուս, յոյս իմ և կեանք և փառք, տուր շնորհս հանգստեան իմոյ վասն փառաւորեալ անուանդ քո. զի որք յիշեսցեն զչարչարանս իմ որ վասն մեծի անուանդ քո, և մերձեսցին ՚ի նշխարս ոսկերաց իմոց, որք նեղեալ իցեն ՚ի պէսպէս ցաւս և ՚ի տանջանս, եղիցի բժշկութիւն մարդոյ և անասնոյ, դիւաց հալածումն, մեղաց լուծումն, հիւանդաց առողջութիւն, պատերազմաց հաւատացելոց զօրաւիգն յաղթութեան, և ամենայն կենդանեաց որ տուան ՚ի պէտս մարդկան՝ բժշկութիւն, բուսոց և տնկոց աճումն և պահպանութիւն ՚ի վերայ եկելոց բարկութեանց ՚ի հրամանէ քումմէ. զի դու ես որ հարկանես և դարձեալ բժշկես ողորմութեամբ քով որպէս և կամիս. որ արարիչդ ես ամենայն արարածոց, և զիս ընկալ ընդ արժանաւորսդ քո ՚ի յարկսդ յաւիտենից, յորմէ փախուցեալ են մեղք, և արդարութեամբ հանգուցեալ ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր.

ընդ որս և ես հանգեայց, և արժանի եղէց փառաւորել զամենասուրբ զԵրրորդութիւնդ. այժմ և յաւիտեանս յաւիտենից:

Եւ եղև որոտումն և ձայն՝ որ ասէր. Ե՛կ, զինուորդ Քրիստոսի, 'ի տեղին զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց, և վայելեսցես զանպատում բարիսն ընդ զինուորակիցս քո յաւիտեան: Էին 'ի տեղւոջ սպանմանն 'ի հաւատացելոց արք հաւատարիմք, որոց լուեալ պատմեցին զայս ամենայն: Եւ անդէն վաղվաղակի հատաւ գլուխ երանելւոյն սրով, յամսեանն Մեհեկի, որ օր հինգ էր ամսոյն:

Եւ լուեալ եպիսկոպոսին Աթանասի 'ի քաղաքէն Տալիա[1], որ է սահմանակից Պարսից, եկն յԱնտիոք, և ետ երեք հարիւր դահեկան որք պահէին զոսկերս սրբոյն, և տարեալ 'ի քաղաք իւր՝ շինեաց վկայարանս, և եդ անդ զնշխարս սրբոյ վկային մեծաւ պատուով: Ցորում տեղւոջ բազում բժշկութիւնք լինէին բարեխօսութեամբ սրբոյ վկային: Եւ տօնախմբեցին զօր յիշատակի նորա ամ յամէ 'ի փառս և 'ի գովութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս:

---

[1] Այլ օր. Իտալիա:

Վկայաբանութիւն Սրբոյ Կուսին Քրիստինէի որ վկայեաց 'ի Տիւրացւոց քաղաքին։

Էր ոմն զօրավար Ուրբանոս անուն, և կնոջ իւրում Անիկորու՝ 'ի քաղաքին Տիւրացւոց, և երևելիք աշխարհի և Թագաւորաց, և առ ամենայն իշխանս մեծամեծս։ Եւ էր նորա դուստր մի որ 'ի տղայութենէ սիրեաց զքրիստոնէութիւն. և շնորհս տուան նմա յԱստուծոյ և անուանեցաւ Քրիստինիա, 'ի ձեռն լուսաւոր աւազանին՝ զոր ընկալաւ 'ի ծածուկ 'ի սրբոց, և աշակերտեցաւ աւետարանին Քրիստոսի. Նուիրեաց զինքն Աստուծոյ, պահել զկուսութիւնն իւր. և էր գեղեցիկ յոյժ։ Եւ եղեւ նորա ամք երկոտասան՝ շինեաց հայր նորա Ուրբանոս աշտարակ բարձր, և տեղի պատրաստական յաշտարակին իւր, և աղախնացն երկոտասանիցն, և աստուածս ոսկեղէնս, զի պաշտեսցէ զնոսա, և մի երևեսցի մարդկան՝ պատուելով զկուսութիւնն։ Իսկ կոյսն սուրբ՝ պաշտօն մատուցանէր Աստուծոյ և արհամարհէր զկուռսն, և աղաչէր զԱստուած 'ի տուէ և 'ի գիշերի, զի փրկեսցէ զնա յաշխարհէ աստի չարէ. զի էր սիրտ նորա տագնապեալ վասն կռոցն մոլորութեան պաշտաման հօր և մօր իւրոյ։

Ասեն աղախնայքն. Տիկին մեր, զիա՞րդ ոչ պաշտես զաստուածսն հօր և մօր քո, այլ զայլ ոմն խոստովանիս Աստուած՝ զոր ոչ գիտեմք. գուցէ գիտասցէ հայրն քո և կորուսցէ զքեզ և զմեզ։ Եւ ասէ ցնոսա.

Ընդէ՞ր մոլորեալ էք 'ի մնոտիսն՝ որ 'ի ձեռաց մարդկան արարան, որ ոչ բարի ումեք կարեն առնել և ոչ չար։ Ես զկենդանի Աստուածն պաշտեմ՝ որ արար զերկինս և զերկիր և որ 'ի նոսա արարածք իցեն՝ երևելիք և աներևոյթք, որ տայ զկենդանութիւն ստեղծուածոց իւրոց միշտ. այլ զկուռս անմռունչս ոչ կալայ ասել աստուածս, և մի՛ լիցի այլ ասել կամ ունել։ Եւ պատմեցին զայս ամենայն աղախնայքն հօրն նորա. և մտեալ հայրն ասէ ցդուստր իւր. Զի՞նչ է այս զոր լըսեմս 'ի քէն, պաշտել զաստուած օտար, զոր ոչ թագաւորք մեր և ոչ մեք պաշտեմք։ Եւ ասէ երանելին, իմաստութեան շնորհացն առաջնորդեալ. Ի մարգարէութենէ գիտեմք պաշտել զանմահն Աստուած, որ և մահկանացուացս անմահութիւն շնորհէ, և արդարոց և սրբոց շնորհէ զկեանսն յաւիտենից 'ի յայտնութեանն իւրում և յարքայութեան. և ես այսմ հաւատացեալ՝ ցանկամ ժառանգորդ լինել սրբոց, և փախչել 'ի բարկութենէ և յանվախճան տանջանացն՝ զոր պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա, և ամպարշտաց և ամենայն մարդկան մեղաւորաց, որ իբրև զքեզդ իցեն ամպարիշտ և առ ճշմարտութիւնն անհանճար։ Զայս լուեալ հայրն՝ բարկացաւ 'ի վերայ նորա սպառնալեօք, չար անցս անցուցանել ընդ նա՝ եթէ ոչ դարձցի յայնպիսի խորհրդոց. բայց առ ժամայն տեղի տուեալ բարկութեան՝ յուսայր հաւանել նմա ըստ մոլորութեան խրատուն իւրոյ զոր տայր։

Եւ իբրև գիտաց եթէ գնաց հայրն նորա, յարուցեալ երանելի աղջիկն և զկուռսն մանրեաց, զոսկին և զարծաթն ետ աղքատաց, և փառաւորեաց զԱստուած 'ի վերայ եղելոցն. և ոչ դադարէր յաղօթից զցայգ և զցերեկ, և պահօք զինքն պնդէր, և առ ամենայն բարի գործս անվեհեր փութով զինքն հաստատէր հոգևոր սիրով։ Եւ յետ աւուրց՝ լուաւ զայս հայրն նորա, և եկն առ նա. և հրամայեաց հարկանել զերանելին սաստիկ յոյժ, և կապեալ երկաթի կապանօք զոտս և զձեռս, և տանել յաշտարակէն 'ի բանտն. համարէր պաշտօն մատուցանել աստուածոցըն՝ զդստերն իւրոյ զմահ։ Եւ յետ աւուրց՝ հրամայեաց ածել զառաջեաւ և ասէ ցնա. Վասն զի ոչ կամեցար պաշտել զաստուածսն մեր՝ վասն այդորիկ հատուցաւ քեզ պատիժդ. արդ եթէ զգաստանաս և պաշտես՝ քաւիչ քեզ լինին, և ես առաւել մեծարեցից զքեզ մեծարանօք և գթով: Եւ ասէ երանելին. Ես ոչ լինիմ պաշտօնատար դիւաց և նոցին բագնաց, այլ պաշտեմ զկենդանին Աստուած, որ զօրացոյց զիս 'ի համբերութեանս: Բայց դու օտարացեալդ յԱստուծոյ, և անողորմ առ ծնունդս քո, որ զՃշմարիտն Աստուած քարոզեցի քեզ և ոչ լուար, մի ակն ունել ապրել 'ի բարկութենէն՝ որ գալոցն է 'ի վերայ քո: Եւ բարկացեալ 'ի վերայ նորա հայրն, հրամայեաց քերել զնա երկաթի քերչօք և 'ի վերայ կայծականց ընկենուլ զսուրբն: Իսկ նա զօրացեալ յԱստուծոյ՝ կարդաց առ Տէր և ասէ. Հայր երկնաւոր, տուր ինձ ժուժկալութիւն[1] անդութեան՝ համբերել չարչարանաց որ վասն քո կրեմ զայս վտանգ, զի ծանիցեն ամենեքեան եթէ դու ես Աստուած որ փրկես զյուսացեալս և զապաւինեալս 'ի քեզ. Հայր որդւոյ և անդորրիչ նեղելոյս, և մխիթարիչ անօգնականիս, որ 'ի տղայութենէ առաջնորդեցեր ինձ 'ի ճշմարտութեան քում, զի կատարեցից զընթացս իմ 'ի հաճոյս քո. զի 'ի քո փառս կատարի ամենայն ինչ այժմ և յաւիտեան: Եւ զայս ասացեալ՝ զօրացեալ լինէր 'ի Հոգւոյն սրբոյ, և զինչ հարցանէին՝ վաղվաղակի տայր պատասխանի:

Զայս տեսեալ հօրն նորա՝ զարմացեալ և հիացեալ կայր, և հրամայեաց տանել զնա 'ի բանտ. և անդ մխիթարեալ լինէր 'ի վերին զօրութենէն շնորհօքն Քրիստոսի: Եւ 'ի գիշերին յայնմիկ եհար հրեշտակ Աստուծոյ զհայրն նորա, և սատակեցաւ ամպարիշտն, զի ոչ ետ փառս Աստուծոյ: Եւ փոխանակեաց զտեղի նորա Դիոս հալածիչ քրիստոնէից, և ծանուցին նմա վասն երանելւոյն Քրիստինէի, և վասն չարչարանաց նորա՝ զոր եած 'ի վերայ հայրն իւր: Եւ հրամայեաց Դիոս ածել զսուրբն առաջի իւր և ասէ. Դուստր մեծաց, որ յաղագս աստուածոցն սիրոյ չարչարեալ եղեր 'ի հօրէն քումմէ, դարձո այժմ զկամս քո 'ի պաշտօն աստուածոցն, և փառաւորեցից զքեզ ամենայն մեծութեամբ. ապա եթէ յամառեալ կայցես՝ ածից 'ի վերայ քո դառն տանջանս. և եթէ հայրն քո ոչ խնայեաց 'ի քեզ վասն աստուածոցն, գիտացիր և զիմըս՝ եթէ որքան սաստկանայ 'ի վերայ քո չար տանջանք։

---

[1] Յօր. ժուժկալութիւն:

Ասէ երանելի կոյսն. Ո՛վ ամպարիշտ և անիրաւ օտարացեալդ յԱստուծոյ. վասն որոյ ողոքես զիս և պատիւ և մեծութիւն խոստանաս, և դարձեալ ըսպառնաս չարաչար տանջանօք, զի յերկոցունց հրապուրեսցես զիս 'ի պաշտօն աստուածոցն. չեմ լսելոց հրամանաց քոց կորստականաց, այլ հաւանեալ եմ պահել զաւանդն իմ զոր ընկալայ 'ի Տեառնէ իմմէ Յիսուսէ Քրիստոսէ, և ոչ թողուլ զնա որ յամենայն ժամ ընդունի զշնորհն, որով զամենայն վտանգաւորսըն փրկէ. և ես յուսացեալ եմ 'ի Քրիստոս փրկել զիս 'ի տանջանացդ՝ որով սպառնաս ինձ. և քեզ արագահաս մահուամբ վճարել 'ի կենացս, զհետ ամպարիշտ հօրն իմոյ, որ ոչ ետ փառս Աստուծոյ. ըստ նմին օրինակի և դու կորիցես։ Եւ հրամայեաց Դիոս զինուորացն հարկանել զսուրբն. և տանջեցին զնա ըստ հրամանին, և ստիպէին ասելով. Յանձն առ զպաշտօն աստուածոցն և զերծիր։ Եւ սուրբն ասէ. Ո՞ւր են աստուածքն, ցուցէք ինձ։ Զայս լուեալ՝ հաւանեալ համարեցան, և առեալ տարան զնա 'ի տաճարն Ապողոնի. և Դիոս զհետ։

Եւ իբրև եմուտ 'ի տաճարն սուրբ կոյսն հանդերձ Դիոսիւ և ամենայն բազմութեամբն, հայեցաւ յերկինս և ասէ. Տէր Աստուած, հայեաց յերկնից 'ի սրբութենէ քումմէ, և տես զմոլորութիւն անօրինաց և ամպարշտաց, որք զքո սուրբ անունդ՝ դիւաց պատկերաց կարդան. և դու անսա՞ս, Տէր, և լռե՞ս, և անտե՞ս առնես զհայհոյութիւն անաստուածիցս. բարձ, Տէր ամենակալ, զպատկերս զայս 'ի միջոյ, և մանրեա և ցրուեա զսա, որպէս հողմով զփոշի որ հոսէ 'ի վերայ երկրի. զի աստուածք որ պատրեն զմարդիկ և զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն. զի դու ես Աստուած և կարող յամենայնի։

Եւ զայս ասացեալ սրբոյն՝ անկաւ պատկերն առաջի ամենեցուն, և եղև մանր իբրև զփոշի, և յուժգին հողմոյ ցրուեցան. և քարոզն իմն աղաղակէր և ասէր. Կախարդութիւն ինչ հնարեցաւ:

Եւ առ ահի թագաւորացն վասն խորտակելոյ պատկերին՝ հրամայեաց հրով այրել զսուրբ կոյսն. և իբրև կազմեցաւ հնոցն՝ ընկեցին զսուրբն 'ի ներքս, և նա ամբարձեալ զձեռս իւր 'ի մէջ հնոցին՝ կայր յաղօթս և ասէր. Քրիստոս, որդի Աստուծոյ, որ իջեր 'ի մէջ հնոցին և փրկեցեր զերիս մանկունսն 'ի հրոյն, արա և աղախնոյ քում ողորմութիւն. զի ծանիցեն ամենեքեան՝ եթէ դու ես փրկիչ արարածոց քոց: Եւ ասացեալ զամէնն, հաւատացին յԱստուած արանց իբրև երից հազարաց, և փառաւորեցին զանուն նորա 'ի վերայ անպատում սքանչելեացն՝ զոր եցոյց 'ի ձեռն սրբոյ կուսին. զի հուրն շիջանէր և ոչ ինչ վնասեալ սրբոյն: Եւ զարհուրեցաւ Դիոս, և սրտմտեալ բարկացաւ սիրտ նորա, և ետ տանել զսուրբն 'ի բանտ և զգուշութեամբ պահել, և ոչ գիտէր զինչ արասցէ: Եւ 'ի գիշերին յայնմիկ զարհուրեալ Դիոս՝ սատակեցաւ ըստ յառաջ ասացելոյ սուրբ կուսին, զի ոչ ետ փառս Աստուծոյ:

Եւ յետ աւուրց բազմաց եկն դատաւոր 'ի քաղաքն 'ի թագաւորէն. և էր երանելին 'ի բանտին և ծանուցին դատաւորին: Եւ հրամայեաց և ածին զսուրբն յատեան, և խօսեցաւ պէսպէս ողոքանօք և խոստմամբ՝ փառք և մեծութիւն և այլ որ ինչ յաշխարհի: Իսկ սուրբն Աստուծոյ պատասխանի առնէր և ասէր. Զինչ կարիցես փոխանակ անանցանելի կենացն և փառացն և մեծութեանցն զանցաւորս համեմատել. զի այս կեանքս որպէս երազք են, և ունայնութիւնք ունայնութեանց՝ ասաց իմաստունն. և զարմանամ թէ ո՞րպէս մոլորեալ էք 'ի պաշտօն կռոցն, զի ամենայն կուռք հեթանոսաց ոչինչ են և յոչինչ համարեցան ճշմարտին Աստուծոյ, որ արար զերկինս և զերկիր. բայց դուք խաւարեալք առ լոյսն ճշմարտութեանն, և ոչ իմանայք պաշտել զարարիչն Աստուած, այլ և զքրիստոնեայս հրապուրէք. ոչ խաբիմք 'ի խոստմունս ձեր, այլ Աստուծով կեցցուք և վասն սուրբ անուան նորա մեռցուք։ Եւ բարկացեալ դատաւորն՝ սպառնայր, սրտմտէր և ասէր. Զի՞նչ ես դու որ կախարդութեամբդ քո հերքեցեր զամենեսեան՝ որք զքեզ 'ի պաշտօն աստուածոցն յորդորէին։ Սուրբն ասէ. Ես եմ մարդ և 'ի մարդկանէ ծնեալ, և Քրիստոսի նուիրեալ զկուսութիւնս իմ, և պաշտեմ զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին. զի Հայր ամենակալ սիրեաց զիս, և Որդին միածին առաջնորդեաց ինձ յարդարութիւն, և Հոգին սուրբ զօրացոյց զիս 'ի ժուժկալութիւնս. և այժմ ընդ իս է շնորհք Հոգւոյն սրբոյ, և նովաւ կեամ և շարժիմ, և ամենայնի յաղթեմ. այլ ես ոչ խաբիմ յողոքանս քո, և ոչ երկնչիմ 'ի սպառնալեաց քոց, զի փութամ ելանել 'ի մարմնոյս և մտանել առ Աստուած։ Եւ իբրև գիտաց դատաւորն Յուլիանոս զանփոփոխ միտս նորա՝ եհատ 'ի վերայ նորա վճիռ մահու. և իբրև տարան 'ի տեղի սպանման զսուրբ կոյսն՝ ամբարձ զձեռս իւր յերկինս, յաղօթս եկաց առ Տէր, և ասէ.

Հոգիդ ճշմարտութեան, նորոգօղ անձին իմոյ, մի՛ ընկենուր զիս 'ի շնորհաց քոց, այլ կատարեա զընթացս իմ 'ի հաճոյս կամաց քոց՝ ճշմարիտ խոստովանութեամբ. արդ փոխանակ այսր ամենայնի հեղցի արիւն իմ 'ի հաճոյս կամաց քոց՝ պատարագ 'ի հոտ անուշից։ Այսպէս արագապէս փոխեցայց յաշխարհէս առ քեզ՝ յօթեվանս սրբոյն. զի ընդ ամենայն սուրբս՝ 'ի կուսանացն դասս՝ զյաղթական օրհնութիւնսն հատուցից քեզ յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Եւ ձայն 'ի վերուստ լսելի լինէր առ սուրբ կոյսն, որ ասէր. Անարատ և անբիծ կոյս, որ բարիոք յաղթեցեր չար բռնաւորացն չարչարանօք և ժուժկալութեամբ, արդ պատրաստեալ է քեզ անանց ուրախութիւն և անսպառ բարիքն և անթառամ պսակն, զոր վայելեսցես յաւիտեանս յաւիտենից։ Եւ անդէն հարին երկու տիգաւորք զսիրտն, ըստ հրամանի բռնաւորին. և այնպէս կատարեցաւ սուրբ կոյսն Քրիստոնիա։ Եւ եկն ոմն յազգէ նորա, հաւատացեալ յԱստուած 'ի ձեռն սրբոյն, առ զսուրբ մարմին նորա, և պատեաց պատուական հանդերձիւք, և օծ իւղով անուշիւ, և անուշահոտ խնկօք եդ 'ի տապանի. և շինեաց վայելուչ վկայարան, և եդ անդ զնշխարս երանելւոյն. յորում տեղւոջ բժշկութիւնք բազում լինին մինչև ցայսօր ժամանակի։ Կատարեցաւ սուրբ կոյսն Քրիստոնեա յամսեանն Նաւասարդի, 'ի թագաւորութեան Ադրիանոսի. 'ի փառս ամենասուրբ Երրորդութեան, որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Այլ վկայաբանութիւն Սրբոյ Կուսին Քրիստոնէի։

Ի ժամանակս Թագաւորութեան Տրայիանոսի, էր այր ոմն անուն Ուրբանոս, և կնոջ նորա Նիկի. և էր նոցա դուստր մի գեղեցիկ և վայելուչ, զօրացեալ 'ի յոյսն Աստուծոյ, ամաց իբրև տասն և ինն ամնոց։ Եւ ինքն Ուրբանոս էր մեծատուն յոյժ և իշխան բազում աշխարհաց, և կին նորա 'ի Թագաւորական ազգէ, և զնա միայն ունէին միամօր։ Եւ արար հայր նորա աշտարակ մի բարձր, և տարաւ եհան զդուստրն իւր յաշտարակն, և երկոտասան աղջկունս ընդ նմա։ Եւ արար պատկերս ոսկեղէնս և արծաթեղէնս և եդ զնոսա յաշտարակի անդ, զի երկիր պագցէ դուստր նորա, և մի իջցէ տեսանել 'ի մարդկանէ, զի բազումք ցանկային տեսանել զնա, և յուսով մեծատանց որդիք խնդրէին փեսայանալ նմա։ Իսկ հայր նորա ոչ ումեք հաստատեաց զդաշինս, այլ ասէր, եթէ՝ Բարւոք է նմա այնպէս կուսութեամբ կեալ և պաշտել զաստուածսն։ Իսկ կոյսն յաւուր միում առեալ զբուրուառն՝ կամէր արկանել խունկ կռոցն Ուրբանոսի. և 'ի խղճմտութեան եղեալ, տարեալ եդ 'ի պատուհանին, և հայէր ընդ արևելս և տեսանէր զզարդ երկնից, զլուսին և զաստեղս, և յոգւոց հանեալ 'ի միտս իւր ասէ. Ոչ մատուցից խունկս կռոցն Ուրբանոսի մինչև ցեօթն օր։ Եւ դարձեալ զմտաւ ածէր զպարկեշտ վարս քրիստոնէից և զչարչարանս սրբոցն և զհամբերութիւն նոցա, և ասէր. Աստուած քրիստոնէից, դու ես Աստուած իմ, որ արարիչդ ես երկնի և երկրի և որ 'ի նոսա արարածք իցեն. յայտնեա ինձ զանուն քո՝ զի մի՛ պաշտեցից զկուռս անմռունչս հօրն իմոյ։

Զայս ասէր և բազում արտասուս հեղոյր։ Եւ 'ի գիշերի միում երևեալ նմա Փրկիչն՝ ասէ. Քաջալերեա, Քրիստոնէ, և մի՛ երկնչիր, զի ես ընդ քեզ եմ և ոչ թողից զքեզ, և դու համբերութեամբ ստացիր զոգիդ քո։ Իբրև այգ եղև, յարուցեալ նստաւ 'ի նոյն 'ի պատուհանին և խորհէր կործանել զկուռս հօրն իւրոյ, քանզի նենգ ակամբ հայէր 'ի նոսա։ Եւ ասեն աղախնեայքն նորա. Տիկին մեր, աւուրք են զի ոչ ընկալան զոհս աստուածքն, գուցէ բարկասցին 'ի վերայ մեր և կորնչիմք։ Ասէ ցնոսա Քրիստոնէ. Զի՞նչ խօսիք, մոլարք, վասն կռոց անշնչոց, որ ոչ չար կարեն առնել և ոչ բարի, յայսմհետէ չէ ինձ պիտոյ ինչ վասն նոցա, այլ մատուցից խունկս և զոհս Տեառն Աստուծոյ իմոյ որ արար զերկինս և զերկիր և որ 'ի նոսա արարածք իցեն։ Եւ անկեալ յոտս նորա աղախնեայքն՝ ասեն. Մի՛, տիկին մեր, մի՛ զպատկեր թագաւորական արհամարհեր. արդ զիա՞րդ մոլորեցար և զաստուածսն օտար պաշտես. և եթէ լսէ հայր քո, ունի կործանել զքեզ և զմեզ։

Եւ մինչդեռ նոքա զայս խօսէին, եկն եմուտ Ուրբանոս հայր նորա, և տեսեալ զդուստր իւր՝ ուրախ եղև, և մատուցեալ երկիր եպագ աստուածոցն և զոհեաց նոցա, և եկեալ նստաւ։ Եւ մատուցեալ աղախնեայքն՝ ասեն. Աղաչեմք զքեզ տէր մեր, զի ահա դուստրն քո աւուրք են որ ոչ զոհս և ոչ խունկս մատուցանէ աստուածոցն։ Եւ նա կոչեաց զդուստրն առ ինքն՝ ասէ. Մի՛, տիկին իմ, մի՛ դուստր իմ Քրիստոնէ, զի՞նչ համբաւեն զքէն, և կամ զի՞նչ մոլութիւն յարեցաւ 'ի քեզ, զի թողեր զողորմած աստուածսն և զզոհս նոցա, և պաշտես զմի մարդ հալածեալ 'ի քաղաքէ 'ի քաղաք, և յետ այնորիկ խաչեալ, որ ոչ կարաց օգնել իւր. ո՞չ գիտես եթէ քանիցս խնդրեցաք յաստուածոցն զի շնորհեսցիս մեզ։

Ասէ երանելին. Մի՛ կոչեր զիս դուստր քեզ, այլ ասա զիս դուստր երկնաւորին Աստուծոյ։ Եւ նորա համարեալ եթէ վասն աստուածոցն ասաց, ուրախ եղեալ չոգաւ 'ի տուն իւր։ Իսկ Քրիստոնէ մտեալ ուր կուռքն էին, կարդաց զանուն Աստուծոյ, զօրացեալ 'ի վերայ նոցա, և մատուցեալ փշրեաց զնոսա՝ զոսկեղէնս և զարծաթեղէնսն, և տայր կարօտելոց։

Յետ սակաւ աւուրց եկեալ հայրն նորա երկիր պագանել կռոցն. և իբրև ետես զնոսա կործանեալս, սրտմտեալ բարկութեամբ հար զերեսս և զգարշապարս նորա. ապա մերկացուցեալ գաւազանեաց զնա։ Իսկ նորա աղօթեալ 'ի սրտին իւրում՝ ասէր. Աստուած, որ ոչ թողեր զիս 'ի կռոցն մոլորութիւն, ողորմեա ինձ զի 'ի քեզ ապաւինեցաւ անձն իմ։ Ապա սկսաւ խօսել և ասել ցնա նախատանօք. Ուրբանոս, ոչ ամաչես և ոչ 'ի միտ առնուս, զի կուռքն քո ոչ իւրեանց կարեն օգնել և ոչ քեզ, և ոչ բարի կարեն առնել և ոչ չար։ Իսկ նա իբրև լսէր զայն՝ յոյժ նեղեցաւ, և ապշեալ պակուցաւ 'ի մտաց իւրոց, զի 'ի դստերէն իւրմէ թշնամանեցաւ. և ետ արկանել 'ի պարանոց նորա անուր երկաթի և 'ի ձեռս նորա շղթայս, և եդ արկանել զնա 'ի բանտ. և ինքն գնաց 'ի տուն իւր տրտում և տխուր վասն աղջկանն, և վասն կռոցն կործանմանն. և անկեալ դնէր 'ի մահիճս իւր կիսամահ։

Հարցանէր կին նորա ցծառայսն և ասէր. Զի՞ է զի տրտում է տէրդ մեր. իսկ նոքա պատմեցին նմա զիրսն։ Յայնժամ իբրև լուաւ՝ պատառեաց զպատմուճանն իւր, և լալով կոծէր զինքն, արկանէր մոխիր զգլխովն և այնպէս երթայր 'ի բանտն առ դուստրն իւր, և անկեալ 'ի վայր ասէր. Որդեակ իմ և դստրիկ և միամօր իմ, ողորմեա թշուառացեալ մօր քո և ընկալ զաղաչանս թախանձանաց իմոց, զի մերձ եմ 'ի մահ վասն գթոյ աղեաց իմոց. յիշեա զի ծնայ զքեզ, խնդրելով զքեզ յաստուածոցն՝ շնորհել մեզ ես և հայր քո։ Եւ հանեալ զստինսն առաջի՝ ասէր. Յիշեա զկաթն և զսնունդն որով սնուցի զքեզ, և մի՛ անարգեր զծերութիւն իմ, յիշեա զի ես սնուցի զքեզ. զիարդ մոլորեցար և զայլ աստուած պաշտես զոր մեք ոչ պաշտեմք, և տրտմեցուցանես զիս և զհայր քո և զբարերար աստուածսն անարգես. մի՛ որդեակ իմ, մի՛, աղաչեմ զքեզ։

Յայնժամ ասէ երանելին. Զիա՞րդ կարդաս զիս դուստր քո. մի՛թէ յազգի քում կոչեցեա՞լ է անուն Քրիստոնէ: Եւ նա ասէ. Ոչ: Ասէ երանելին. Ո՞չ գիտես զի զորոյ զանուն ունիմ, նա է իմ մայր և հայր, և նմա նուիրեցի զիս. և նա վառեաց զիս 'ի զէն արդարութեան և յաղթութեան, զի յաղթեցից այնմ որ 'ի ձեզ զօրանայ 'ի կամարարսդ իւր, և նովաւ խորտակեցից զկուռսդ ձեր՝ զոր պաշտէք յանմտութեան ձերոյ. և դուք եթէ կամիք կեալ, դարձարուք 'ի կռոց անտի և ծաներուք զայն որ եկն 'ի խնդիր մոլորեալ ազգին, զոր մոլորեցոյց կամակոր վիշապն 'ի կուռս անմռունչս, պաշտել զարարածս և ոչ զարարիչն Աստուած, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն:

Եւ լուեալ զայս ամենայն մօրն, յարուցեալ գնաց 'ի տուն իւր լի տրտմութեամբ և պատմեաց առն իւրում զամենայն ինչ՝ զոր լուաւ 'ի նմանէն: Ասէ Ուրբանոս. Լաւ է ինձ սպանանել զնա տանջանօք քան նախատ լինել 'ի մարդկանէ: Եւ ընդ այգն ետ ածել զնա յատեանն, և ամենայն քաղաքն ժողովեալ էր 'ի տեսանել զնա՝ քանզի էր կապեալ: Իբրև ածին, ասէ ցնա Ուրբանոս. Քրիստոնէ, լուր ինձ իբրև հօր քո և զոհեա աստուածոցն, ապա թէ ոչ՝ ոչ ես կոչեմ զքեզ դուստր իմ, այլ ածեմ 'ի վերայ քո տանջանս մեծամեծս: Ասէ ցնա երանելին. Մեծ շնորհս առնես ինձ՝ եթէ ոչ կոչես զիս դուստր քո, քանզի չես արժանի կոչել իմ հայր, անկեալդ 'ի կուռսդ անմռունչս՝ որ ոչինչ են: Եւ բարկացեալ Ուրբանոս՝ հրամայեաց մերկացուցանել և հարկանել զնա, մինչև յոգնեցան՝ որք հարկանէին զնա: Իսկ սուրբն գոհանայր զՏեառնէ, և զօրանայր 'ի շնորհաց Հոգւոյն սրբոյ:

Խօսել սկսաւ և ասէ. Հնացեալ աւուրբք չարութեան, ոչ զգաս և ոչ 'ի միտ առնուս զզօրութիւն Քրիստոսի. ահաւասիկ դահիճքդ յոգնեցան. արդ հրամայեա՝ այլ արս հզօրագոյնս գալ, զի այսպիսի տանջանօք ծանիցես զզօրութիւն Աստուծոյ իմոյ: Եւ բարկացեալ Ուրբանոսի, հրամայեաց կապել զնա և երկաթի քերչօք քերել. և այնպէս անողորմ քերէին և յերկիր ընկենուին զմարմին նորա. և առեալ 'ի քերանաց մարմնոյն, ընկէց յերեսս հօրն և ասէ. Ցանկացար ուտել զմարմին իմ, արդ աւասիկ կայ առաջի աչաց քոց, առ և կեր զամօթ կապանաց քոց։ Ասէ Ուրբանոս. Զոհեա բարերար աստուածոցն և կեաց. ապա թէ ոչ զոհես, ածեմ 'ի վերայ քո առաւել տանջանս քան զայս, և ոչ կարէ փրկել զքեզ աստուածն քո՝ զոր դու պաշտես։

Ասէ երանելին. Ո՛վ քան զամենայն մարդիկ հեք և թշուառական, ո՞չ գիտես զի որդին Աստուծոյ լոյս եկն յաշխարհս, զի լուսաւորեսցէ զամենեսեան, եկն յերկիր զի փրկեսցէ զազգս մարդկան 'ի ծառայութենէ բանսարկուին. այժմ կարող է կեցուցանել զիս ըստ մեծի անուան իւրոյ, զի յաղթեցից հօրն քո սատանայի՝ որ զօրացեալ է 'ի քեզ։ Իսկ անօրէնն ոչ կարաց ժուժկալել թշնամանացն, հրամայեաց բերել անիւ մի ժանեօք և ետ կապել զնա ընդ անուոյն, և 'ի ներքոյ հուր արկանել և ձիւթ և ճարպ և ծծումբ 'ի վերայ սրսկել հրոյն, որպէս զի արագ սպանցէ, զի մի՛ նախատեսցի 'ի նմանէ։ Եւ շրջեալ անուոյն առ հասարակ ջաղջախէր զոսկերս անհաւատիցն, և ելանէր հուրն և սպանանէր զբազումս 'ի կռապաշտիցն։ Յայնժամ երանելին համբարձեալ զձայն իւր և ասէ. Աղաչեմ զքեզ, Տէր իմ Յիսուս Քրիստոս, մի՛ անտես առնէր զիս 'ի տառապանս իմ; այլ ձգեա զհզօր ձեռն քո և շիջո զհուրս զայս, 'ի պարծանս հաւատացելոց քոց և յամօթ անհաւատից։

Եւ զայս իբրև ասաց, ելանէր հուրն և սպանանէր զբազումս 'ի կռապաշտիցն։ Եւ սուրբն էր հանգուցեալ 'ի վերայ անուոյն, որպէս 'ի գահոյս կազմեալս։ Իբրև տեսին հաւատացեալքն՝ տային օրհնութիւն Աստուծոյ։ Եւ հրամայեաց իջուցանել զնա յանուոյն և ասէ ցնա. Ասա ինձ, ո՞վ ուսոյց քեզ զկախարդութիւնդ զայդ. այլ ոչ կարես ապրել 'ի ձեռաց իմոց, զի դառն նեղութեամբ կոտամահ առնեմ զքեզ, և առից զվրէժ աստուածոցն՝ յօտարացեալդ 'ի սիրոյ նոցա։ Ասէ երանելին. Ասացի քեզ եթէ հայր իմ Քրիստոս է՝ որ ուսոյց ինձ զամենայն արդարութիւն. նա է ճանապարհ մոլորելոց և անդորրիչ նեղելոց և համբերութիւն տանջելոց վասն անուան նորա։ Նա է որ ուսոյց ինձ արհամարհել զկուռս ձեր, և դու մեռցիս 'ի կորուստ դատապարտեալ, որ ոչ ծանեար զճշմարտութիւնն, ատելի Աստուծոյ։

Զայս իբրև լուաւ, յիմարեցաւ 'ի խորհուրդս իւր և ետ տանել զնա 'ի բանտ։ Իսկ երանելին մտեալ 'ի բանտն, կայր յաղօթս և ասէր այսպէս. Գոհանամ զքէն, Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ արժանի արարեր զիս չարչարել վասն անուանդ քո մեծի և ահաւորի։ Եւ 'ի գիշերին յայնմիկ եկն հրեշտակն և եբեր նմա ճաշ փրկութեան, և եդեալ ձեռն 'ի վերայ վիրացն՝ բժշկեաց զնա։ Իսկ Քրիստոնէ ասէ. Գոհանամ զքէն, Տէր իմ Յիսուս Քրիստոս, զի ոչ անտես արարեր զիս զապաւինեալս 'ի քեզ, մարդասէր. այլ առաքեցեր ինձ հաց 'ի բարձրութենէդ քումմէ 'ի ձեռն հրեշտակի քո. և ես զինչ տաց տրիտուր քեզ, բայց ահաւասիկ պատրաստ եմ 'ի մեռանել վասն անուան քում։ Եւ 'ի մէջ գիշերին առաքեաց հայր նորա արս հինգ զօրաւորս, և հրամայեաց արկանել 'ի պարանոց նորա երկանաքար և տանել ընկենուլ զնա 'ի ծով։ Եւ իբրև ընկեցին, վաղվաղակի ընկալաւ զնա հրեշտակն և եհան զնա 'ի ցամաքն. և սկսաւ երանելին գոհանալ զԱստուծոյ և ասել. Օրհնեալ ես ամենազօրդ Աստուած, որ ոչ երբէք հեռանաս յերկիւղածաց քոց. արդ հրամայեա ինձ, Տէր, յաւուրս յայսմիկ վերստին ծնանել, զի սրբեցայց յամենայն աղտեղութեանց հոգւոյ և մարմնոյ։

Եւ յանկարծակի եկն ամպ մի լուսաւոր և մկրտեաց զնա. ձայն եղև առ նա և ասէ. Ես եմ Յիսուս Քրիստոս, ընդ քեզ եմ 'ի փրկել զքեզ, զի կատարեցեր զընթացս քո նեղութեամբ, յոր խոստովան եղեր և կոչեցեր զիս հայր քեզ և յաղթեցեր թշնամւոյն քո։ Եւ իբրև այդ եղև, եկն ոմն և պատմեաց հօրն նորա վասն նորա, եթէ ահաւասիկ կեայ դուստրն քո։ Եւ իբրև լուաւ՝ հրամայեաց ածել զնա։ Եւ իբրև ածին, ասէ ցնա. Չարիմաց և դըժուարամեռ, զիարդ կախարդեցեր զջուրս ծովուն։ Եւ Քրիստոնէ ասէ. Չարացեալ սիրտ և կուրացեալ 'ի սիրոյն Քրիստոսի, ո՞չ գիտես եթէ զօրութիւն

Աստուծոյ է՝ որ առնէ զսքանչելիսդ, և ես առի զկնիքն Քրիստոսի և վերստին ծնայ 'ի Ճշմարիտ հօրէն իմմէ Յիսուսէ Քրիստոսէ. և դու ոչ կարես ապրել 'ի բարկութենէն՝ որ գալոցն է 'ի վերայ ամպարշտացդ որ իբրև զքեզդ իցեն. և դու արագամահ վճարեսցիս, զի հասեալ է 'ի վերայ քո չարիք, և երթաս 'ի խաւարն արտաքին ընդ հօր քո սատանայի, որ ոչ ծանեար զՃշմարտութիւնն: Իսկ Ուրբանոս բարկացեալ՝ հրամայեաց տանել 'ի բանտ, որպէս զի վաղիւն սպանցէ զնա սրով: Եւ 'ի նոյն գիշերի տանջեալ 'ի հրեշտակաց, հանեալ զդառնացեալ ոգին Ուրբանոսի:

Եւ յետ սակաւ աւուրց եկն այլ դատաւոր փոխանակ Ուրբանոսի՝ որում անուն էր Դիոս, և նա ևս փոյթ էր յարբանեկութիւն սատանայի և 'ի պաշտօն կռոցն. և զգացուցին նմա վասն Քրիստոնէի, զի գրեալ իսկ էին զամենայն իրս տանջանացն: Եւ իբրև ընթերցաւ դատաւորն՝ ասէ. Առ այսքան տանջանս ո՞չ հնազանդեցոյց զնա զոհել: Եւ ասեն. Ոչ: Եւ հրամայեաց ածել զնա յատեան: Եւ իբրև ածին զնա զառաջեաւ, տեսին զերեսս նորա զուարթ և պայծառ. կոչեաց մօտ առ ինքն և ասէ. Աղջիկ դու, ազատ ես և 'ի թագաւորական ազգէ, և բազում նեղութեան համբերեալ, որպէս լուայ 'ի սպասաւորացս: Արդ դարձ առ աստուածսն որ տիրեն երկնի և երկրի և կեցցես. ապա եթէ ոչ լսես ինձ, երդուեալ իմ յաստուածսն, ծանր և դառն պատրաստեմ քեզ տանջանս, և ոչ կարէ փրկել զքեզ Աստուածն քո զոր պաշտես:

Ասէ երանելին. Զար բարուք քովք զքեզ մխիթարես. իսկ աղախնոյ Քրիստոսի ոչ կարես յաղթել և զարհուրեցուցանել, ոչ դու և ոչ թագաւորն քո. և ոչ ես թողից զՏէր Աստուած իմ, որ յամենայն ժամ մերձ է առ երկիւղածս իւր, և ոչ թողու զնոսա յամենայն նեղութիւնս նոցա, այլ փրկէ և յամօթ առնէ զհակառակորդն: Սրտմտեալ դատաւորն, հրամայեաց բրօք հարկանել զնա: Ասէ երանելին. Անամօթ դատաւոր, չամաչես փոքր տանջանս մատուցանել ինձ, մեծամեծս խոստովանելով քո. եթէ դու ա՛յլ խստագոյն տանջանս ածես 'ի վերայ իմ, ո՛չ գիտես զի որքան առաւելուն չարչարանքս՝ այնքան առաւելուն պսակքն. քանզի հաւատամ 'ի Փրկիչն իմ Քրիստոս, զի և զքեզ յամօթ արասցէ որպէս զգործակիցն քո Ուրբանոս։ Դատաւորն ասէ. Յանձն առնում քեզ իբրև դստեր իմոյ, ընդունիմ 'ի քէն զանարգանքդ քո ողորմելով տղայութեանդ քո, դարձ առ աստուածսն որ տիրեն երկրի։

Ասէ երանելին. Զի՞նչ անուն է քո. Դատաւորն ասէ. Զանուն իմ կամիս ուսանել, Դիոս է անուն իմ։ Սուրբն ասէ. Յիրաւի կոչեցեր Դիոս, զի կռոց կուրից, խլից և անշնչից տացես զանունդ ։ Եւ բարկացեալ դատաւորն, հրամայեաց բերել սալս երկաթիս և ջեռուցանել սաստիկս և դնել 'ի ներքոյ ոտից նորա։ Եւ արարին սպասաւորքն այնպէս։ Իսկ սուրբն Քրիստոնէ ամբարձ զաչս յերկինս, ասէ. Օրհնեմ զքեզ և փառաւորեմ զանուն քո, Տէր իմ, որ արժանի արարեր զիս դարձեալ չարչարիլ վասն քո։ Եւ հուրն ոչ մերձենայր 'ի նա զօրութեամբն Քրիստոսի։

Ասէ ցնա դատաւորն. Տեսանե՞ս զի ոչ մերձենայ 'ի քեզ հուրդ, զի աստուածքն ոչ կամին զմահ քո։ Ասէ երանելին. Անօրէն և ամպարիշտ որդի սատանայի և արբանեակ դժոխոց, որ զզօրութիւնն Քրիստոսի պղծոցդ համարիս. բայց ես յուսամ յԱստուած որ տանի զքեզ 'ի խաւարն արտաքին՝ ուր գործակիցն քո է Ուրբանոս ։ Եւ բարկացեալ Դիոս՝ ասէ. Կակղագոյն բանքս զքեզ համարձակագոյնս արարին. և հրամայեաց գերծուլ զգլուխ նորա և շրջեցուցանել ընդ քաղաքն մերկ ։ Ասէ երանելին. Գոհանամ զքէն, Տէր իմ Յիսուս Քրիստոս, զի արժանի արարեր զիս 'ի ժամուս յայսմիկ ճանաչել յամենեցունց, զի ամենեքին գիտացին զիս՝ եթէ քո աղախին եմ։ Քանզի տեսիլ եղև ամենեցունց. և եղեալ ցոյց ամենեցունց՝ եղաւ 'ի բանտի։ Իբրև այգ եղև, ետ ածել զնա 'ի տաճարն Ապողոնի։ Իբրև եկն, ասէ դատաւորն. Քրիստոնէ, զոհեա Ապողոնի և այլոց աստուածոցն, որք բազում անգամ սիրեցին զքեզ 'ի թշնամանելն զնոսա։ Իսկ սրբոյն տարածեալ զձեռս իւր յերկինս՝ ասէ. Տէր Աստուած արարիչ ամենայն արարածոց, որ արարեր և ունիս քո խնամովդ և շարժին բանիւ հրամանաւ քով. և այժմ լուր աղաչանաց աղախնոյ քում, և արա սոցա ելանել 'ի տաճարէս յայսմանէ: Եւ ապա դարձեալ 'ի կուռսն՝ ասէ. Անշունչք և անմռունչք, ելէք 'ի տաճարէս: Եւ վաղվաղակի բախեցան և ելին արտաքս: Եւ իբրև ետես դատաւորն՝ ասէ. Տեսանե՞ս, զի մեծամեծ աստուածքն քաւիչ են քեզ, և լսեն հրամանի քում. նոքա փրկութեան քո ցանկան և մարդասիրեն առ քեզ, և վասն այնորիկ ելին արտաքս. տեսանե՞ս զմեծ իրսդ՝ զոր առնեն վասն քո:

Քրիստոնէ ասէ. Անօթ խաւարեալ, ոչ իմանաս զմեծամեծս Աստուծոյ, որ արար առ իս տառապեալ աղախնոյս իւր, այլ 'ի սատանայական գործս դարձուցանես, ատելի Աստուծոյ: Եւ դարձեալ սկսաւ ասել այսպէս. Տէր Յիսուս Քրիստոս, ըստ բազում գթութեան քո զոր ցուցեր առ իս, և զանմահ գթութիւն քո հեղեալ առ ազգս մարդկան, ո՛ բաւականացի պատմել: Արդ հրամայեա խորտակել զարշելի կռոցն և լինել մանր իբրև զաւազ, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած: Եւ վաղվաղակի անկեալ փշրեցան և եղեն իբրև զփոշի: Զայս իբրև տեսին բազումք՝ հաւատացին, որք և ասացին. Աստուած սրբոյն Քրիստոնէի՝ օգնեա մեզ, և մի՛ թողուր 'ի խաւար անգիտութեան զմեզ, որ մոլորեալ պաշտեաք զԱպողոնն, որ ոչ երբէք իւր կարաց օգնել. այլ առաքեա 'ի մեզ զլոյս աստուածութեան քո, զի դու ես փառաց և պատուի արժանի, և քեզ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ որք հաւատացին՝ էին երեք հազար ոգիք. և երկեաւ դատաւորն յոյժ վասն այնորիկ զի անկեալ կործանեցաւ պատկերն Ապողոնի. զի ասէր եթէ լուիցէ թագաւորն և չարիւ կորուսցէ զնա. և բեկաւ սիրտ նորա և մեռաւ. Իսկ որք 'ի կռապաշտիցն էին զինուորք, պահէին զսուրբն զգուշութեամբ 'ի բանտին. մինչև եկն այլ դատաւոր, որ կոչէր Յուլիանոս, և նստաւ յաթոռ դատաւորութեան: Զգացուցին նմա զինուորքն վասն սրբոյն Քրիստոնէի. իբրև լուաւ զգործս կուսին, հրամայեաց ածել զնա զառաջեաւ:

Իբրեւ եկն, ասէ դատաւորն. Բազում գործ գործեցեր դու կախարդութեամբ քով, այլ ինձ ոչ կարես յաղթել. այլ մա՛տ զոհեա փաղփաղակի աստուածոցն, և զերծիր յառաջիկայ տանջանացն, զի ոչ կարէ օգնել քեզ աստուածն քո, զոր դուն պաշտես և հանել 'ի ձեռաց իմոց։ Իսկ երանելին մեծաւ համարձակութեամբ ասէ. Զարամիտ և չարախորհուրդ մշակ սատանայի և թշնամի արդարութեան, ոչ երկնչիմ 'ի սպառնալեաց քոց, որդի սատանայի և պաշտօնեայ դիւաց։

Իսկ Յուլիանոս մրմռեալ իբրեւ զչար գազան, հրամայեաց վառել հնոց մի սաստիկ յոյժ և արկանել զնա 'ի ներքս, և ծեփել զդուրս նորա զեօթն օր։ Իսկ երանելին մտեալ 'ի ներքս 'ի հուրն, և անդէն շիջաւ հուրն զօրութեամբն Քրիստոսի, և օրհնէր զԱստուած հանդերձ հրեշտակօք. և ձայն մեծ լսելի լինէր 'ի հնոցն օրհնութեան. և լուեալ պահապանացն՝ երկեան յոյժ, և եկեալ պատմեցին դատաւորին և ասեն, եթէ՝ Ձայն հնչման լուաք 'ի հնոցին։ Իսկ նա իբրեւ լուաւ, փութանակի եկն 'ի հնոցն 'ի դուրսն՝ հանդերձ բազում զօրականօք. և ետ բանալ զդուրս հնոցին. և ելեալ սրբոյն արտաքս իբրեւ 'ի բաղանեաց, քրտնեալ և պայծառ երեսօք իբրեւ զոսկի 'ի բովս լուսաւորեալ։

Իբրեւ ետես դատաւորն, զայրացեալ ասէ ցնա. Զամենայն ընութիւնս կախարդեցեր կախարդութեամբ քով։ Արդ ասա ինձ զկախարդութիւնդ քո, ապա թէ ոչ՝ դառն տանջանաց մատնեմ զքեզ՝ զոր ոչ կարես կախարդել։ Ասէ երանելին. Բարւոք կոչեցեալ է անուն քո Յուլիանոս, վասն զի Յուլիանոս գայլ թարգմանի. նոյնպէս և միտք քո և բարք. բայց ոչ կարեն խաբել զիս և պատրել։ Յայնժամ հրամայեաց անօրէնն կոչել թովիչ մի, զի արկցէ նմա իժս երկուս և քարբս երկուս և այլ օձս եղջերաւորս երկուս։ Իբրեւ եկին, ասէ Յուլիանոս ցսուրբն. Զամենայն զընութիւնս կախարդեցեր հմայիւք քո. միթէ և զգազանս զայս կարե՞ս կախարդել։ Քրիստոնէ ասէ. Հաւատամ 'ի Փրկիչն իմ Քրիստոս՝ որ յամենայն ժամ օգնեաց ինձ, և այժմ 'ի սողնոցս յայսցանէ փրկեսցէ զիս։ Եւ հրամայեաց արձակել զսողունսն. և ընթացեալ սողնոյն՝ անկանէին յոտս սրբոյն Քրիստոնէի։ Եւ ցասուցեալ դատաւորին, ասէ ցթովլիչսն. Թովլեցէք զգազանսն զի սպանցեն զնա սաստիկ յոյժ։

Յանկարծակի յարձակեցան 'ի վերայ թովլչին գազանքն և սպանին զնա. և էին գազանքն 'ի ծառայութիւն սրբոյն, և ոչ ոք իշխէր մերձենալ առնուլ զնա։ Իսկ երանելին ասէ. Գոհանամ զքէն, Տէր իմ Յիսուս Քրիստոս, զի արժանի արարեր զիս և 'ի սողնոցս յայսցանէ ճանաչիլ, և սոքա զտանջանս իմ վճարեն։ Ապա ասէ ցնոսա. Ձեզ ասեմ, սողունք, յանուն Յիսուսի Քրիստոսի, երթայք 'ի տեղիս ձեր և մի ումեք վնաս առնէք. և վաղվաղակի գնացին յիւրաքանչիւր տեղիս. և ինքն գնացեալ առ թովլիչն և համբարձեալ զձեռս իւր յերկինս՝ ասէ. Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ առաքեցեր զՄիածին որդիդ քո 'ի փրկութիւն ազգի մարդկան, որ եկեալ մարմնացաւ 'ի սրբոյ Կուսէն, բժշկելով զամենայն ախտս ոգւոց և մարմնոց՝ զորս ինքեամբ և զոր 'ի ձեռս աշակերտացն, բազմաց յարութիւն շնորհեցեր. և այժմ Տէր Աստուած, լուր աղաչանաց աղախնոյ քո և յարո զմեռեալս զայս, որպէս զի փառաւորեսցի անուն քո առաջի ժողովրդեանս այսորիկ։ Եւ բուռն հարեալ զմեռելոյն՝ ասէ. Յանուն Յիսուսի Քրիստոսի, արի կանգնեաց, այր դու. և անդէն յարեաւ վաղվաղակի մեռեալն և եկաց 'ի վերայ ոտից իւրոց ողջ. և անկեալ յոտս սրբոյն՝ ասէ. Օրհնեալ ես դու 'ի կանայս, զի 'ի ձեռն քո յարոյց զիս Քրիստոս 'ի մեռելոց. վասն որոյ ես հաւատամ 'ի նա, և օրհնեմ զանուն նորա առաջի ատելեաց նորա։

Բարկացեալ դատաւորն, ասէ ցնա. Ցայտ արարեր զկախարդութիւն քո ընդ ամենայն երկիր. շատ է քեզ այսուհետև, դա՛րձ առ աստուածսն, որ այդչափ ներեցին քեզ՝ ողորմելով տղայութեանդ քո։ Ասէ երանելին. Ո՛ անմիտ սիրտ ծուլացեալ և միտք չիջեալ, որ ոչ իմանաս զմեծամեծս Աստուծոյ, որ զքարինս կակղագոյնս առնէ. իսկ դու խաւարեալ, որ ոչ 'ի միտ առեր զզօրութիւն Աստուծոյ՝ զոր եցոյց

՚ի ձեռն աղախնոյ իւրոյ, այլ և դիւաց պղծոց համարեցար։ Յայնժամ հրաման ետ անօրէնն կտրել զերկուս ոտինս երանելւոյ կուսին։ Եւ իբրև հատին, ընդ արեանն կաթն բղխեաց։ Ասէ երանելին. Գոհանամ զքէն, երկնաւոր Թագաւոր, որ արժանի արարեր զիս չարչարել վասն անուանդ քո սրբոյ։ Ասէ դատաւորն. Յայսմ հետէ ոչ ինչ օգտիս ՚ի քոց աղօթիցդ, թէ ոչ զոհես աստուածոցն. ապա հրաման ետ տանել ՚ի բանտ։ Յայնժամ երթային ամենայն ազատաց կանայք, տեսանել զերանելի կոյսն, քանզի տեսանէին զչարչարանսն և զարմանային ընդ համբերութիւն նորա. և բազումք հաւատացին ՚ի Տէր Յիսուս Քրիստոս արք և կանայք։

Եւ ընդ այգն ընդ առաւօտն ետ ածել զերանելին յատեանն, և ասէ ցնա. Զարիմաց և չարամեռ և ամենայն անարգանաց արժանի. այժմ մերձեալ է ժամանակ հանել զքեզ ՚ի կենացս, դարձիր առ աստուածսն և զոհեա նոցա, զի մի կորիցես, այլ ընկալցիս պարգևս ՚ի Թագաւորէն և ՚ի մէնջ։

Ասէ երանելին. Պարգևք քո ընդ քեզ լիցին ՚ի կորուստ, որդի սատանայի. զի ոչ գոյ քեզ փրկութիւն, և քո իսկ յոյսդ հատեալ է ՚ի կենաց։ Իսկ անօրէնն ոչ կարաց հանդուրժել անարգանացն, ետ հրաման հատանել զլեզու նորա։ Եւ իբրև հատին, առաջի ամենեցուն սկսաւ պայծառ ձայնիւ օրհնել զԱստուած և ասէ. Տէր իմ Յիսուս Քրիստոս երկնաւոր Թագաւոր, որ ոչ հեռանաս երբէք յերկիւղածաց քոց. որ պահեցեր զիս բարերարութեամբ քո, այժմ ընկալ զոգի իմ ընդ կամարարսդ անուանդ քո յարկսն յաւիտենից։

Ձայն եղև յերկնից և ասէ. Եկ, հանգիր յանդորրտում ՚ի կեանս, զոր կազմեցեր քոյին աշխատութեամբդ և ցաւոցդ զոր համբերեցեր. մոռասցիս զտանջանսդ մարմնոյդ, և ՚ի լոյս անստուեր հանգիր ընդ նահատակակիցս քո։ Եւ առեալ զհատուած լեզուին, ընկէց յերեսս դատաւորին, և հար զաջոյ ակն նորա, կուրացոյց, և ասէ. Յուլիանոս, բնակիչ խաւարի, ցանկացար ուտել զմարմին իմ և հատեր զփառաբանիչս Աստուծոյ. վասն այնորիկ և զլոյսդ քո կուրացուսցէ 'ի քէն, զի փառաբանիչ Աստուծոյ եկն և խաւարեցոյց զքեզ։ Եւ բարկացեալ Յուլիանոս՝ հրամայեաց փութով սպանանել զնա։ Եւ մատուցեալ երկու տիգաւորք, մին խոցեաց զկողն նորա. և այնպէս աւանդեաց երանելին զոգին իւր 'ի ձեռն հրեշտակաց բարի խոստովանութեամբ, 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր։ Եւ առեալ զմարմին նորա, եդին յաշտարակին՝ ուր էր զառաջինն։

Կատարեցաւ սուրբն Քրիստոնէ յամսեանն Նաւասարդի, որ օր եօթն էր, բարի խոստովանութեամբ, 'ի փառս և 'ի գովեստ ամենասուրբ Երրորդութեանն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴԻ ՀԱՏՈՐՈՅՆ

ՅԱՆԿ

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԵԱՆՑ Ի ՀԱՏՈՐԻՍ

Վկայաբանութիւն Սրբոյն Մամասայ 1
Այլ վկայաբանութիւն Սրբոյն Մամասայ 6
Վկայաբանութիւն Սրբոյն Մարկոսի Արեթուսայ եպիսկոպոսին, և Կիւրղի սարկաւագին և որք ընդ նոսա վկայեցին 9
Պատմութիւն վարուց Երանելւոյն Մարութայի 17
Վկայաբանութիւն Սրբոյն Մելէսի եպիսկոպոսի 33
» Սրբոյն Մեւբինոսի քահանայի . . . . 38 Eusebius
» Սուրբ և Ճգնազգեաց վկային Քրիստոսի Մերկուրիոսի 47
» Սրբոյն Մինասայ Եգիպտացւոյ. . . . 57
» Սրբոյն Մինասայ, Երմոգինեայ և Գրաբոսի 64
» Սրբոյն Մովկիմայ քահանայի 74
» Սրբոյն Յակովբայ Մծբնայ հայրապետին . 83
» Սրբոյն Յակովկայ 108
» Սրբոյն Յիզտիբուզտեայ 124
Պատմութիւն վարուց Սրբոյն Յովհաննու Ոսկեբերան Վարդապետին 131
Վկայաբանութիւն Սրբոյ Կուսին Յուլիանեայ 140
Պատմութիւն վարուց Սրբոյն Նիկողայոսի 165
Վկայաբանութիւն Սրբոյն Պանդալէոնի և Երմողեայ քահանայի և Երմոգրատեայ 189
» Սուրբ և փառաւորեալ վկայուհւոյն Պարասկեւեայ 202
» Սրբոյն Պետրոսի Աղեքսանդրու Հայրապետի 218
» Սրբոյն Պղատոնի 228
» Սրբոյն Պօղիկարպոսի, եպիսկոպոսի Զմիւռնացւոց քաղաքի 233
» Սրբոյն Պօղիքտոսի 239

Վկայաբանութիւն Սրբոյն Ռոմանոսի և Մանկանն խոստովանողի և Հիւսիքոսի զինուորին . . . 255
» Սրբոյն Սահակայ և Յովսեփայ 266
» Սրբոյն Սարգսի և Բագոսի 272
» Սրբոյն Սարգսի զօրավարի և որդւոյ նորա Մարտիրոսի 280
» Սրբոյն Սեւերիանոսի 300
» Սրբոյն Սոփիայ և երից դստերաց նորա՝ Պիստիսի, Ելպիսի և Ագապիայ . . 310
Պատմութիւն վարուց Սրբոյն Ստեփանոսի և երեսուն և երեք ընկերաց նորա 322
Վկայաբանութիւն Սրբոյն Ստեփանոսի Հռովմայ հայրապետին և որք ընդ նմա վկայեցին . . 340
» Սրբոյն Վառվառեայ և Յուլիանեայ . . 355
» Սրբոյ Կուսին Վասիլուհեայ 366
» Սրբոց Վարոսեանց 370
» Սրբոյ քահանայապետին Վլասայ . . 382
» Սրբոյ Առաքելոյն Տիմոթէի 390
» Սրբոյ Առաքելոյն Տիտոսի 392
» Սրբոյն Տրիփոնի 396
» Սրբոյն Փեբրոնեայ կուսին 409
» Սրբոյ Վկային Փիլթէոնի 430
» Սրբոյն Փիլիկտիմոնի, և Թագաւորին Գորգիանոսի և կնոջ նորա Անատոլեայ և Թէոդոսեայ և այլոց սրբոց 438
» Սրբոյն Փիլիմոնի Փողողի, որ Թարգմանի Գլուխ գուսանաց, և Ապողոսի գրակարդացի և Արիանոսի դատաւորին և այլոցն 476
Պատմութիւն վարուց Սրբոյն Փոկասու եպիսկոպոսի . . 485
» » » » . . . 499
Վկայաբանութիւն Սրբոյ կնոջն Փոտինայ 503
» Սրբոց Քառասուն վկայիցն 506
» Սրբոյն Քսենոփոնի և Մարիամու կնոջ նորա, և երկու որդւոց նոցա Յովհաննու և Արկադիոսի 515
» Սրբոյն Քրիստափորի 527
» Սրբոյ կուսին Քրիստոնէի՝ որ վկայեաց ի Տիւրացւոց քաղաքին 534
Այլ վկայաբանութիւն Սրբոյ կուսին Քրիստոնէի . . . 541

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ
ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ Տ՟Ն ՆԵՐՍԵՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՅ
ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՏԱՐՍՈՆԻ ԿԻԼԻԿԵՑՒՈՅ

ՏՊԱԳՐԵԱԼ

ՅԱՄԻ Տ՟Ն 1842 ԵՒ ՀԱՅՈՑ ՌՄՂԱ

'Ի Պատրիարգութեան Ս՟բ Եր՟մ Տ՟ն Զաքարիայ
Արք Եպիսկոպոսի ։

Եւ 'ի Պատրիարգութեան Թագաւորեալ Քաղաքին
Կոստանդնուպօլսոյ, Ա՟ծարեալ Տ՟ն Ա՟ծատրոյ
Արք Եպիսկոպոսի ։

Արդեամբ Սրբոյ Աթոռոյս հաւատարիմ Միաբանի, Ընծայեցի Սարկաւագ Յովսեփայ
աղջնեան. 'ի յիշատակ պանծալի անուան Վարդապետին իւրոյ. 'ի Ք՟ս հանգուցելոյ՝
Աւագ Լուսարար Մկրտիչ Արք Եպիսկոպոսին.

'Ի ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄ

'Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ ԵՐԶԱՆԻԿ ԱՌԱՔԵԼՈՑ

3064